# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

II ԱՍՏԻՃԱՆԻ II ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

(ՈՒՍՄԱՆ VI ՏԱՐԻ)

ԿԱԶՄԵՑ ՅԵ. ՉԱՐԵՆՑ

891.99(082)
Գ-97

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ. 1928

891.99(082)
Գ - 87

13 APR 2011

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

II ԱՍՏԻՃԱՆԻ II ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

(ՈՒՍՄԱՆ VI ՏԱՐԻ)

ԿԱԶՄԵՑ ՅԵ. ՉԱՐԵՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ. 1928

2 2 MAR 2013

62470

Հր. № 842 Գլավլիտ 1102 (բ) Տիրաժ 5000
Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում.
Պատվեր № 243

## I. ՆՈՐ ԿԵՆՑԱՂԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
5081-86

# ԱԼԱԶԱՆ

## ԴԱՍԱԼԻՔԸ

(Կոճատված)

### 1.

Կիսաքաղ արտի ծայրին նստել է ցորենի դեզը։

Շուրջը՝ փխրուն սև հող է։

Հողի չերեսին, սանդերքի ատամների պես ցցվել են նոր քաղած ցորենի դեղին ցողունները։

Միապաղաղ անապատում մեկ-մեկ չերևացող ուղտերի լաչնատերև արմավենիների նման, արտի դեղին տարածության մեջ նշմարվում են չերկնչնակի փշոտ թփերը, որոնք գիտավորյալ կերպով դուրս են թողնված մանգաղի բերանից։

Փխրուն հողի չերեսին, ցողունների մեջ, կամ հողում թաղված քարերի վրայով, աշխույժ խլրտում են հողագույն մողեսները և փոքրիկ իսկ խշշոցից՝ տասնյակ տեղերից թռչկոտել են սկսում կանաչավուն կիտուռները։

Երբ արևը քիչ թեքվել է սկսում դեպի դիմացի ցորնագույն սարը և դեպի կողքին սարերի մի շերտ փռում, քաղվոր Արտոն գետին է գցում մանգաղը, հնամաշ արխալուղի փեշերով սրբում ճակատի քրտինքը և ինքն իրեն կամաց խոսելով՝ դեպի մոտ է գալիս հանգստանալու։

Գլխին՝ կարկատած մոխրագույն կեպի չե, որի առջևի մասում նա լրագրի մի կտոր է ամրացրել արևի շեշտակի ու կիզիչ ճառագայթներից դեմքը պաշտպանելու համար։

Երկու կողմերից, լավաշների նման, կեպու վրա բացվել են նրա նոսր ու մեծ ականջները։

Քթից ներքև, վերի շրթունքների վրա, պպզում են վոսկեգույն աղվամազերը։ Նման աղվամազերի չերկու փունջել նրա ծնոտի չերկու կողմերում.

Արխալուղի քանդած կոճակների տակից յերևում է նրա քրտնած ու վոսպնագույն կուրծքը։

Արտոն մենակ է քաղում իրենց արտը։

Նրա հայրն արդեն բանից ընկել է։ Ինքն էլ վոր վաթսուն տարեկան դառնա ու այդ վաթսունից հիսունը չարաչար աշխատանքի մեջ մխսի՝ նրա որին կընկնի։

Մայրն էլ՝ յերերվելով հազիվ հաց ու թան բերի քաղվոր վորդուն։

Իսկ տանն էլ, դրանցից զատ ուրիշ վոչ վոք չկա։

Նստում է Արտոն դեզատակի շվաքում ու ինքն իրան միտք անում։

— «Ես էլ կյա՛նք ա, ես էլ ապրո՛ւստ ա։ Առավոտից ընչանք իրիկուն արուն-քրտինք թափի, արևի տակ տապակվի ու մի քասա թանով փոր կշտացրա։ Յանի ես դիփն ո՞ւմ համար, ընչի՞ համար, ինչս ա մնացել ես շոգ ու անջուր չոլում։ Ես էլ հալբաթ կոմսոմոլի կյանք ա եղե՜։ Թքած ըսենց կոմսոմոլի կյանքին։ Թե պտի էլի ըսենց չարչարվեյի, յանի էլ խի կոմսոմոլ գրվեցի։ Չե՜, իմս քաղաքն ա, ինչքան ուզում են ղըղըռան էդ պառավն ու հալիվորը... Քաղաքի ու ըստեղի կյանքն էլ հալբաթ մեկ են... Գնա քեզ համար միքանի սհաթ ծառայի ու ընդուց դենը դուրս արի բուլվար, պրաժեկտոր ու քեֆդ արամիշ արա...»։

Դեզատակին նա յերկար էր մտածում ու խոսում ինքն իրեն, ապա մտքի թևերով քաղաք փոխադրվում, հազար տեսակ պաշտոնի մտնում։ «Ես մեկը լավ չի, փողը քիչ են տալիս... Էն մինը վոնց վոր ավելի լավն ա... Էն մեկելը դհա լավն ա... Ես ինչ լավ կյանք ա, ես ինչ լավ ապրուստ»։ Ռոճիկը՝ շա՛տ, սենյակը՝ լա՛վ, «քաղքըվարի»։ Ամեն որ՝ թատրո՛ն, կինո՛։ Ինքն էլ իրանց գյուղի վարժապետիցն ավելի «բան փահմող» ու «գիտուն»...—«Ուխա՜յ, կյանքն էլ գալթի ես ա»,—մտածում էր Արտոն ու նորից սթափվում դեզի շվաքում։

Յերկար էր միտք անում Արտոն այսպես, ու յերբ «յերանելի» մտքերի շարանը կտրվում կամ վերջանում էր, վոնց վոր յերազում, մի սև ոձ դարձած, նրան էր մոտենում ու կարծես ձեռներին էր ուզում փաթաթվել մանգաղը։

Ելի յեր մտածում նա, ապա պապակած կոկորդը թրջում դեզատակին թեք ընկած կժի տաք ջրովը, վեր կենում տեղից և դանդաղ, դագաղի յետևից գնացող հուղարկավորի պես, գլխիկոր ու մտազբաղ, որորվում դեպի արտն ու մանգաղը։



* * *

Նման որերից մեկն էր։

Միալար սվվոցով բանում էր կեռ մանգաղը։

Հասկերն որորում եյին վոսկեգույն, կոր գլխիկները և գետին փռվում ամբողջ հասակով։

Քաղում է Արտոն, ինքն էլ չի իմանում արտումն է թե՞ քաղաքում...։

Հասկերի վոսկի գլխիկների միջից—քաղաքն է փռվել նրա դեմ իր ուղիղ փողոցներով և սև, քարաշեն տներով։

... Քաղաքը... տները... պրաժեկտոր... թատրոն... պաշտոններ...

Քաղում է Արտոն, «յերանավետ» մտքերին հանձնված։

Աչքերով՝ անմիջականորեն արտն ու մանգաղն է տեսնում, բայց մտքի աչքերով՝ սլանում հեռուներն ու հեռուները...։

Բայց մանգաղը դավաճանեց նրան։ Ցորնի փնջի հետ նա քերեց Արտոյի ձեռքը, կարմիր տաք հեղուկով ներկելով դեղին ցողուններն ու գորշ հողը։

* * *

— Յես էլ հանդ գնացողը չեմ. բոլ ա, հոգիս կերաք, ես էլ ապրո՞ւստ ա, ես էլ կյա՞նք ա, թքած ըսենց կյանքին։ Յես ձեզ ասում եմ թող արեք քաղաք գնամ, փող աշխատեմ, ղարկեմ ձեզ ու դուք թեք ընկեք, աղավարի կերեք. համա դուք մի կողի ընկած, մի բաշ ձեր եշն եք քշում։ Ձեռս էլ վրեն տվի, բոլ ա, էլ ի՞նչ եք ուզում։ Հո չե՞ք ուզում, վոր ջանդակս էլ արտում շուն ու գիլի փայ դառնա...։

— Ա՜յ բալա, փորձանք ա, պատահում ա, ցավն ու փորձանքը մարդկանց համար ա ստեղծած, հո սար ու չոլի համար չի՞—հաստ ձայնով վրա բերեց Արո ապին, թաղբեհի հատիկները չխչխկացնելով։

Ապու մեծ մոթալը մինչև ականջներն է իջել։

Թավ հոնքերը՝ հավի բացված թևերի յեն նմանվում, վորոնց ներքևում, ցանցառ արտևանունքների տակից, խաղողի ճկլված հատիկների նման, յերևում են նրա ջրակալած բիբերը։

Յերբ ապին դողդոջ ձեռներով բռնած խմում է թանը, բեխերը փռվում ու ծփում են նրա յերեսին, վոնց մամուռը՝ ջրի յերեսին։ Թանի քասան յետ տանելուց հետո, նա բերանն է քաշում թաց բեխերը և ախորժակով ծծում։

— Յա՛, բալա՛, հաց աշխատելը, քյուլֆաթ պահելը գիտաս թե

— Բարաջողում, Գարսևան աղա, — կամացուկ ու վախկոտ տոնով կմկմաց Արո ապին, և յեկեղեցու պատի տակին վողորմություն խնդրողի նման, կուչ յեկավ դռան յետև։

— Աստծու բարին, հ՞ը, խեր ըլի, ի՞նչ կա, — մռմռաց Գարսևան աղեն խանչալների նման կեռ բեխերի տակից, և հարցական հայացքը դեպի նա վոլորեց։

— Խերը՝ խեր ա, Գարսևան աղա, խեր չելած, դհա ի՞նչ կարող ա ըլել։

— Հ՛ը, սաս, բանն ընչո՞ւմն ա...

— Աղա ջան, ելի քո նոքարն եմ, քո վոտի տակի հողն եմ... Քուլաշս հանդումն ա մնացել, բեջարող չկա։ Տղես փախել ա, ասըմ են քաղաք ա գնացել։ Հմի մաթալ եմ մնացել. հույսս մենակ քո վրեն ա, բալի մի իլլաջ անես։

— Բա՛... փուչ ժառանգն ել ըտենց կլինի, բերնին մի արշին լեզու ունի, վոր խոսացնես ել — «կուլակ ես» կասի, հերն ել հո կուլակ չէ՞ր, խի եդ որին գցեց։ Ե՛հ... աշխարքը քանդվել ա, ել վո՞նչ մենծն են ճնաչում, վո՞նչ պուճուրը... Աստվածն ա, վոր համբերում ա, յես ըլեյի, չեյի համբերի... Նստի՛, նստի՛, Արո ապեր, նստի՛, հալբաթ մի ճար կանենք — վրա բերեց Գարսևան աղեն միրուքը շոյելով։

Թշվառությունն ու անզորությունն եր մարմնացել Արո ապու աչքերում։ Որորելով ծեր գլուխը, նա անխոս կուչ յեկավ թախտի մի ծայրին։

— Հախն ել ի՞նչ ա, կստանաս, Գարսևան աղա, — լռությունը խզեց ապին։

— Հախս վո՞րն ա, մի լավություն ա, կանենք ելի՛, յես քո ամագը չեմ մոռացել։ Դու յես, վոր հեչ չես հիշում, հեչ տունս ել չես գալիս, լայեղ ել չես անում հետս խոսաս։ Ըտենց ա, բա՛, հմի մենծ մարդ ես դառել, ժողովներ ես գնում, ո՞վ ա իմանում ընդիաբենք ընչեր ես խոսում իմ մասին։ Գյուղխորհուրդ ընտրելիս ել արածս լավությունները մոքիցդ ընկնում են և ինձ թողած, գող ու անամոթ բատրակներին ես մատ տնկում։ Վո՞նց ա, խի՞ չես քո ընտրած բատրակների կշտին գնում, թող ոգնեն է՛... բա՛, ըսենց բաներ կան, Արո ապեր։

— Դրուստ ես ասում, աղա ջան, ըստուց դենն ել ղալաթ եմ արել։ Համա դու մեր գործիցը խոսա, մի իլլաջ արա, արևիդ ղուրբան։

— Արո ապեր, հմի հո գիտաս ինչ վախտ ա, կալի լավ ժամանակն ա, հմի հերն ընկի իր տղին տավար չի տալիս, համա յես՝ հոժարությամբ իմ վրեն եմ վե կալնում քուլաշդ կրելն ու ծեծելը... Համա, պայմանով, վոր մասուլը կիսենք։



Մտածեց Արո ապին, յերկար մտածեց, մտքում հաշվեց, չափեց, ձևեց ու դժկամությամբ վրա բերեց.

— Թող քո խոսքն ըլի, Գարսևան աղա...

— Եդ ել վոր անում եմ, քեզ համար ա, յես քու ղուլլուղը չեմ մոռացել, թե ուրիշն ըներ, իրեք փայն ել վոր տար, ռազի չեյի լինի, — համոզիչ տոնով ծոր տվեց Գարսևան աղեն։

— Ապրեն վորդիքդ, աղա ջան...։

— Բա՛, յես ել խո քո կոնսոմոլ տղի պես անշիդյար չեմ. Խե՜ղճ մարդ...։

— Ե՛ է՛ է՛ հ...

— Ապեր, ասըմ եմ արի մի ուրիշ բազար ել անենք. յես գիտամ, դու ել արտդ բեջարողը չես, վոչ մալ ունես, վոչ ել աշխատող ձեռք. տղեդ ել զաթի քաղաքից յետ եկողը չի, փուչ ըլնի ըտենց բեդովլաթ ժառանգը հա... Ասըմ եմ արի, հողդ ել ինձ տուր իջարով ու դու հեռու կաղնի քեզ համար, յես վարեմ, ցանեմ ու մասուլն ուղարկեմ տունդ, մի բան, վոր հմի հողս քիչ ա և մալ-տավար ել ունեմ, փառք Աստծու...։

— Եդ ել լավ ես ասում, աղա ջան, համա... պայմանն ինչ ա...

— Դու գիտաս, վոր յես քեզ ուրիշի վոտի չեմ տանի, յես քու ամագդ չեմ մոռացել, քեզանից մի բան ել պակաս կը վեկալնեմ։ Խալխը, ինքն երկուսն ա վե կալնում, մեկը տիրոջը տալիս, համա յես խղճով բան կը բռնեմ, կեսը ինձ, կեսը՝ քեզ։ Սերմը կառնենք կիսովի, հողը քեզանից, մալն ու աշխատանքն ել՝ ինձանից։

— Դըժար ա, աղա ջան, դըժար, — կամաց ձայնով վրա բերեց Արո ապին, հաստ բեխերի տակից։

— Դու գիտաս, յես հլա քեզ պակաս ասի, կարող ա ինքդ ես ուզում բեջարել հողդ, գնա բեջարի, յես ավելի ուրախ կը լինեմ, — խոսակցությանը մտերմական շեշտ տալով, շարունակեց Գարսևան աղեն։

Նա գիտեր, թե ո՞ւր ե ուղղում իր սլաքները։

Մի ձեռքը քունքին՝ յերկա՛ր միտք արեց Արո ապին և իր մահավճռի ստորագրողի դառնությամբ ու անզորությամբ՝ վրա բերեց.

— Լա՛վ, աղա ջան, եդ ել քո խոսքն ըլնի... համա... պայմանը յե՞փ կապենք։

— Պայմանս վո՞րն ա, իմ խոսքը քեզ պայման։ Բա ամոթ չի՞ գլխիս գդակին ու ես բեխերի համար... Մենք մեր մեջ հաշիվը կը թամզենք, թե չե, դրսում ամեն մի շուն-շանգալ պտի իմանա ու մեջը խառնվի...։

Նա ամուր բռնելով Արո ապու ձեռքը մի քանի անգամ թափ տվեց ու խորամանկ ժպիտով վրա բերեց.

— Խեր տեսնաս, Արո ապեր...

— Խեր տեսնաս...

Ողու բաժակները հաստատեցին պայմանը և Արո ապին իր նեցուկ-ձեռնափայտին հենվելով, համրաքայլ հեռացավ իր «բարերարի» տնից։

3.

Այնտեղ, ուր իրար խաչաձևում և անկյուններ են կազմում քաղաքի յերկու բանուկ փողոցները, հենց այդ անկյուններից մեկի մի հարկանի տան մեջ, տեղավորված ե Կոմյերիտմիության գավառային կոմիտեն։

Նրա մեջտեղի մեծ սենյակը, ուր իրար դեմ-դեմի դրված են միքանի սեղաններ՝ նոր բացված կոոպերատիվի նման, միշտ լի յե հաճախորդներով։

Սենյակում բացվող դեմի դռանը, յերկարավուն ու սպիտակ ներկված թիթեղի վրա, կարմիր տառերով փայլում ե.—

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ներսում, թեք դրված սեղանի մոտ, գլուխը թղթի կույտի վրա ծռած, քրքրում, կարդում, մտածում, վերցնում գրիչը, քիչ մտածում էլի, ու ապա թղթի մի անկյունին, ծուռ կերպով ինչ վոր բաներ ե մակագրում մի յերիտասարդ։

Նրա բարակ քիթն ավելի յե դուրս ցցվել վոսկրոտ այտերից։

Ներս ընկած աչքի խոռոչներում փայլում են սև ու շարժուն բիբերը, վորոնք ավելի յեն վառվում, յերբ նա ջղայնանում ե։

Իսկ այդ հաճախ ե պատահում։

Գալիս են, ամեն որ նույն մարդիկ, նույն խոսակցությունները և նույն պահանջները։

— Հընկեր քարտուղա՛ր, գործազուրկ մեռանք է...։

— Ընկեր քարտուղա՛ր, սենյակս փուլ յեկավ, դուրսն եմ մնացել։

— Ինձ աշխատանքից կրճատեցին։

— Յեղբորս դպրոց չեն ընդունում։

Յեվ այսպես անվերջ։

Շատերը խոսք չեն հասկանում, համառում են ու «Ընկեր քարտուղարի» աչքերի սպիտակում լողացող ածուխի կտորները վառվել են սկսում։

Արտոն էլ պատվավոր տեղ ե բռնել նրա հաճախորդների շարքում։

Գալիս ե։ Կամացուկ բացում դուռը, դեռ դռան մոտից հանում կարկատած կեպին, ավելի ցցում մեծ ականջները, խոնարհաբար



բարևում ու անխոս, պահակի նման ձեռները կողքերին, կանգնում ե սեղանի մի կողմը։

— Դեռ դու եստե՞ղ ես, դեռ գյուղ չգնացի՞ր։

— Ախր գյուղ գնալով բան չի դառնա, հընկեր քարտուղար, մի գործ տուր ապրենք ու քո երեսից մարդ դառնանք... ըսենց անգործ մեռանք է...—կամացուկ թոթովում ե նա, ավելի շեշտելով «հընկեր» բառը։

— Յես քեզ վաղուց եմ ասել, վոր գործ չունենք, թո՛ղ, գյուղ գնա տնտեսությանդ մեջ աշխատիր։

— Բա վո՞նց պտի ըլնի մեր ճարը, բա մենք հեչ քաղաքում չպտի ապրենք, բա մենք չպտի՞ լուսավորվենք, հա՛ ըսենց մութ ու խավա՞ր պտի մնանք... ես ա ձեր «իրեսներս դըա գյուղ» լոզունգը։

— Հիմի վո՞նց անենք քեզ հետ, յես քեզ ենքան ասի՝ թո՛ղ գյուղ գնա ու գյուղյերիտդպրոցումն էլ սովորի, բայց դու լսեղ չես անում։ Թե «յերեսներս դեպի գյուղ» ասելով հասկանանք, վոր գյուղի բոլոր յերիտասարդներին քաղաք բերենք ու պաշտոնների դնենք, բա գյուղումն էլ ո՞վ պիտի կռվի կուլակի դեմ, էլ ո՞վ պիտի տարածի կուսակցության ու խորհրդային իշխանության գաղափարները։

— Հը՛մ,—վրա բերեց Արտոն։ Պատասխան գտնելը դժվար եր։

Ամեն որ եր գալիս նա, ամեն որ գանգատվում ու ամեն որ գլխիկոր հեռանում...։

* * *

Յերկու ամիս շուռ եր յեկել արդեն։

Արտոն դեռ անգործ թափառում եր քաղաքում։ Ինքն եր հիմա մտածում իր գլխի ճարը տեսնել, վորովհետև քարտուղարն էլի նույն մերժողական պատասխանն եր տալիս։

Նա ինքն եր ամբողջ որը շրջում հիմնարկից-հիմնարկ ու գործ փնտռում։

Հիմնարկությունները միշտ միևնույն մերժողական պատասխանն են տալիս, իսկ քարտուղարն էլ՝ «մի կողի ընկած», ստիպում ե, թե գյուղ գնա։

Ի՞նչ անի Արտոն։ Թողնի գյո՞ւղ գնա։ Ինչպես գնա։ Իսկ իր հեռանկարները։ Զե՞ վոր գյուղում բոլորը կը ծիծաղեն, յերեսովանք կանեն։ «Խնքոտ Խաչոն» ու «չոփուր Սարոն» կսկսեն ձեռք առնել «քաղքցի» Արտոյին։

4.

Դռնից ներս մտնելիս, հետ-հետ քաշված սեղանները ճամփա յեն բացում դեպի տրեստի նախագահի առանձնասենյակը։

Հասարակ ու չոր աթոռի առաջ չոքած նույնքան հասարակ սեղանը գրասեղան է հիշեցնում այնքանով, վորքանով նրա մի ծայրում ընկել է մի փոքրիկ թանաքաման, մածուցիկ ու բավական պինդ հեղուկը մեջը լերդացած։ Իսկ դա չել հիշեցնում է, վոր թանաքամանում մի ժամանակ թանաք է լցված յեղել, բայց անցել է ժամանակ, թանաքը կամաց-կամաց շոգիացել է, փոշին իջել, նստել նրա մեջ և հետզհետե մերել այն, պնդացրել։ Թանաքամանից քիչ հեռու, խռովածի նման, պոչը քաշել ու ընկել է գրչակոթը, վորի ծայրի յերկու մասերն իրար վրա հեծած, կարծես սպառնում են այլես վոչինչ չանել, յեթե դեպի իրանց ցուցադրվող անտարբեր վերաբերմունքը չփոխվի։

Առանձնասենյակի խորքում, բարձր դարակի գլխին, փոշու գորշ ու թափանցիկ քողով ծածկված, ընկել է Լենինի կիսանդրին, միքանի «գործ»-երով ու գրքերով շրջապատված։

Սակայն բոլորովին փույթ չի Սանթրոսյանին, թե թանաքը մերվել է, թե գրչակոթը ծայրը ծայրին հեծցրած գործադուլ է արել, կամ թե Լենինի կիսանդրին փոշոտել է։

Առաջինների կարիքը նա հազվադեպ է զգում, իսկ Լենինն էլ՝ իր սրտումն է քանդակված, վոչ թե այդ գաճի մեջ։

Յերբ նրան հարկավոր է լինում ներկայացրած գրության վրա մակագրել—«բաց թողնալ» կամ «ունթունել», վերցնում է գրչակոթը, բութ մատի յեղունգի վրա փորձում մի կերպ ուղղել նրա խռոված ծայրերը, թաթախում մածուցիկ հեղուկի մեջ, ապա՝ բթամատի ու ցուցամատի յեղունգների ծայրերով մաքրում ծայրից կախված մազն ու լերդացած փոշին, և հաստ ու անհամաչափ գծերով խազմզում է հեղինակավոր մակագրությունը։ Իսկ յեթե այս արարողությունը շատ ձգձգվի, կամ գրչակոթը համառորեն պնդի իր «գործադուլի» վրա, ծայրերը չմիացնելով, նա ջղայնությամբ դեն է շպրտում «քու տիրոջ հերն էլ անիծած» ուղերձով, գրպանից հանում բթածայր քիմիական մատիտը, լեզվով ու շրթունքներով թրջում, բերանում թողնելով անհաճելի համը, և մակագրումն ավարտում։

Սանթրոսյանը գրչի կամ մատիտի կարիքն զգում է յերբ մակագրումներ է անում, իսկ յեթե դրանք էլ հնարավոր լինեյին անել մտավոր կերպով, ապա ընթերցողը նրա սեղանի վրա վոչ բորբոսնած թանաքաման կգտներ և վոչ էլ «գործադուլավոր գրիչ»։

Իր ամբողջ հաշիվները նա մտքումն է անում և մատների օգնությամբ։

Սանթրոսյանը վաթսունին մոտ է։ Կարճահասակ, կլոր դեմքով։

Հին բանվոր է, կոփված բանվորական շարժումների ու մի շարք հայտնի գործադուլների մեջ։



Նրա աչքերում՝ խորամանկությունն է ամբարված, իսկ սրածայր կարճ մորուքից՝ կախվել է առաքինությունը։

Տարիներն ակոսներ են շարել ճակատին ու հղկել, վառվող փայլ են տվել գանգին։

* * *

Արտոն արդեն յերրորդ անգամն է, ինչ Սանթրոսյանի գրասենյակն է գալիս։

Նա Սանթրոսյանից ավելի պնդերես դուրս յեկավ. այնքան գնաց յեկավ, այնքան մերժում ու նախատինք ստացավ բայց չընկճվեց, և գուցե նրա այդ պնդերեսությունն ու անդրդվելիությունը Սանթրոսյանին համոզեցին, վոր այդ գյուղացի յերիտասարդից լավ բանվոր դուրս կգա։

Դրա համար էլ մի որ նա Արտոյի ներկայացրած դիմումի վրա մակագրեց.—

«Ունթունել»։

Ապա գրասենյակի դուռը փակելով, ըստ սովորականի սկսեց նրա «փեշը քաշել» (խրատել հասկացիր, ընթերցող, ըստ Սանթրոսյանի բառարանի)։

— Խելքը գլխիդ հավաքի, բան սովորի։ Օրինակի համա ձեր կոմսոմոլները շատ են սիրում «ըստ եութան», «ըստ կարգի» խոսալ, նրանց աչք չտաս, գլուխդ քաշ արա ու քեզ համա աշխատի։ Վորակավորվիր, վորակավորվիր։

«Փեշը քաշելու» արարողությունն ավարտվելուց հետո, Արտոն ուրախ ուրախ վերցրեց հեղինակավոր մակագրությամբ զրոշմված իր դիմումը և գլխաբաց, ականջները դուրս ցցած խորին շնորհակալությամբ ու յերախտագիտությամբ շոյելով Սանթրոսյանի սիրտը՝ դեպի գործարան շտապեց, ուր նրա առաջ բացվեց մի նոր աշխարհ։

## 5.

Ինչպես միքանի որ գնացքով ճանապարհորդող ուղևորը վերջին որը, յերբ նպատակադրած քաղաքին է մոտենում, սկսում է անհամբեր ներս ու դուրս անել, պատուհանից նայել, նստել, նորից կանգնել, և ինչպես ժամանակը ծանր ու դանդաղ է սահում նրա համար, այդպես էլ Արտոյի համար այդ որը մեծ դժվարությամբ անցավ գործարանում։

Կարծես ոտարության մեջ ընկած լիներ նա։

Շրջապատում ամեն ինչ չփոթ է, խորթ ու ոտար։

Մեծ մտավախությամբ եր նայում նա հսկայական մեքենաներին, վորոնք ելեկտրական կոճակի մի փոքրիկ հպումից՝ մինչալ

էյին սկսում ու սպառնում, կարծես, կտոր-կտոր անել մոտ չեկողին։

«Վո՛նց ել ուսկ են անում, վո՛նց ել չեն վախում դրա վրին կաղնողները»—մտածում էր Արտոն նույն մտավախությամբ։

Սակայն նրանք վոչ միայն Արտոյի նման չէյին զարզանդում, այլ մինչև անգամ մեքենայի ռիթմի հետ յերգեր ել էյին յերգում։

«Զե՛, Արտո՛, ես մեկը քո բանը չի, թե հանդում մանգաղը ձեռքիդ վրա պրծներ, մի քիչ տեղը պիտի պլոկեր, համա թե եդ անաստված մաշինը վրա պրծավ, կորա՛ր, մեծ բրդուջն՝ ականջդ ա թողալու»...

Յերկրորդ ու յերրորդ որերն ել ծանր անցան։

Արտոն անհամբեր միշտ անցնում էր գործարանի գրասենյակի առջևով և աչքի ծոթով, թաքուն, ժամացույցին էր նայում, թե՝ քանի՞ ժամ կա դեռ, կամ յե՞րբ կգա «շաբաշի» ժամանակը։

Ժամերը ծանր են սահում։ Վարպետ Նիկողոսն ել Արտոյի դուրը չի գալիս։ Պոչավոր ակնոցների տակից, աչքերը չռած, նա անդադար մտիկ է տալիս թե ո՞ւր է գնում, կամ ինչ է անում Արտոն։

«Ես ինչ գերություն ա, ախպե՛ր,—մտածում էր Արտոն,—թամամ վոր գերություն... ընենց ա վարավուրդ անում, ընենց ա թամաշ անում, վոր չես ել կարա տեղիցդ ժաժ գալ, թո՛ւհ, ես ինչ թարս մարդի ռաստ եկանք...»։

Վարպետը կամաց-կամաց նրան «լծել» սկսեց։ Թե առաջին որերը թողնում էր, վոր Արտոն ման գա գործարանում, մեքենաները դիտի, ուսումնասիրի, իսկ հիմա արդեն գործի դրեց նրան։

Արտոն ծանրություններ է փոխադրում, մեքենաներ մաքրում, յուղում, պտուտակները սրբում։

Բայց ելի ժամացույցը չի մոռացել։

Գրեթե ժամը մի անգամ, կամաց նա սողում է գրասենյակի դռան առաջով ու աչքի ծոթով տնտղում ժամացույցի սլաքները։

— «Հա՛յ, կոտրվե՛ք դուք, հեչ տեղից ել ժաժ չեն գալիս»—մտածում է նա, յերբ նրա կարծած յերեքի փոխարեն ժամացույցը մի ժամ էր միայն առաջ գնացել։

Ժամերը ծանր են սահում, գործը դժվար է, իսկ վարպետ Նիկողոսն ել՝ հեչ Արտոյի դուրը չի գալիս։

* * *

Արտոյի ընդունվելուց մի ամիս էր անցել, յերբ առավոտյան Սանթրոսյանը մոտեցավ վարպետ Նիկողոսին, բարևեց ու—

— Հ՞ը, վո՛նց ա սրա բանը—վրա բերեց, մատնացույց անելով Արտոյին—մի բան դուրս գալի՞ս ա, թե չե...

Վարպետը գլխով բացասական նշան տվեց։



Սանթրոսյանն աչքերը կկոցելով սկսեց վոտից մինչև գլուխ զննել Արտոյին, կարծես առաջին անգամն էր տեսնում, և նոր էր գործի ընդունում, ապա մի կողմ տանելով վարպետ Նիկողոսին, ականջին փսփսաց.—

— Թե կտեսնաս բանի պետք չի, պոչը խուզիր տալ-տուր։

Հետո մոտենալով Արտոյին, պատի մոտ տարավ ու սկսեց.

— Ծիտը խաբար ա բերել, վոր շատ ես անգալութին անում։ Խելքդ գլխիդ հավաքի, փեշակ սովորի, որինակի համա անգալների պոչը շուտ ա խուզվում... Վերջը կփոշմանես, հա՛...։

Թե վարպետի ակնոցների տակից չռած աչքերը և թե տրեստի նախագահի խրատը վրդովեցրին Արտոյին։ Ամբողջ օրը նա այդ մասին էր մտածում։

— «Ես ինչ կյանք ա, ախպե՛ր, ես ինչ օրենք ա, քանի՞ խազեյին, քանի՞ խոսացող կա գլխիդ։ Չես իմանում վորին լսես, յա վորի՞ն ջուղաբ տաս։ Ընենց ել բանվորական իշխանություն կլի, վոր մի բանվորի գլխին քառասուն խազեյին կա կաղնած...»։

Այդ մտքերը, Սանթրոսյանի սպառնալիքը, գործի դժվարությունը, ժամանակի դանդաղ սահելը, վարպետ Նիկողոսի խոժոռ ու անզուրեկան նայվածքը Արտոյին անչափ ջղայնացրել ու վրդովեցրել էյին և նա մեքենան սրբելիս մի քիչ անզգուշությունից, մի քիչ ել վրդովմունքից շուռ տվեց 2 փթանոց բենզինի ամանը և բենզինը շաղ տվեց գետնովը։

Ինչպե՜ս գազազեց վարպետ Նիկողոսը։

Կարծես դարանակալ թշնամին սպանել էր նրա վորդուն, կամ թե հովազն էր հարձակվում իր զոհի վրա։

Պոչավոր ակնոցների տակից նրա աչքերը հրդեհվում և ասես դուրս էյին ուզում պրծնել ակնակապիճներից, իսկ կնճռոտ ճակատին քանդակվել էյին մանկան մատների հաստությամբ կապույտ յերակները։

— ... Կորի՛ր աչքիս առաջից... արո՜ւնդ թող թափեր եդ բենզինի տեղը... լակոտ... Արտոն լուռ ու սփրթնած կծկվել էր պատի տակ և ջղայնությամբ կրծում էր յեղունգները։

«Փարձանք ա, պատահում ա, ցավն ու փորձանքը մարդկանց համար ա ստեղծած, հո սար ու չոլի համար չի՞...»—այդպես էր ասում ապին, այդպես ել մտածում էր Արտոն, բայց ասել չէր համարձակվում։ Նրա շրթունքներն ու ծնոտը դողում էյին և բառերը՝ խորտակվում կոկորդում։

Կոնֆլիկտը տխուր վերջացավ։

Հաջորդ որը բանվորները «Տեղկոմի հայտարարություններ» մակագրությունը կրող տախտակի վրա կարդացին՝

**ՔԱՂՎԱԾՔ**

**Տ... Գործարանի տեղկոմի յեվ արտադրական հանձնաժողովի միացյալ ժողովի, վոր կայացավ 1924 թվի մարտի 5-ի № 7 արձանագրություն**

| ԼՍԵՑԻՆ | ՎՈՐՈՇԵՑԻՆ |
|---|---|
| 2. Մինասյան Արտոյի հարցը, վորը գործին վերաբերվում ա շատ անփութ և անբարեխղճական և այսոր ուշադրություն չդարձնելով, թափեց յերկու փութ բենզինը: (Ձեկ. վարպ. Նիկողոս) | 2. Զգուշացնել Մանասյան Արտոյին, գործին վերաբերվել բարեխղճական և անել նկատողություն բենզինի համար ու խիստ հանդիմանություն և վերջին անգամ զգուշացնել նրան (Միաձայն) |

Ժողովի Նախագահ՝ (**Վարոսյան Կ.**)

Քարտուղար՝ (**Արշակյան Լ.**)

Իսկականի հետ ճիշտ է:

Տեղկոմի քարտուղար՝ (Ստորագրություն)

6

Գառնան ծիլ ու ծաղկի, ծիծեռնակի ու արտույտի հետ գյուղ մտավ առաջին տրակտորը:

Հսկայական գոմշի նման փնչալով ու ծանրաշարժ նա օրորվեց նեղլիկ փողոցներով և կանգ առավ գյուղի հրապարակում:

Ինչպես «մարալ» գոմշին կամ «ջեյրան» յեզանը «խամից հանելիս», յերբ դրան շեմքում ձու յե խփում նրա ճակատին, կամ վզից կախում «թալիսմայի» կապույտ յեռանկյունին, այնպես էլ նոր ու յերկաթե գոմշի տերերը զարդարել եյին նրա կուրծքն ու ճակատը՝ իրանց «թալիսմա»-ներով: Կարմիր ժապավեններ եյին կապել նրա կրծքին և աջևից ցցել հաղթական կարմիր դրոշակը:

— Տրախտորի մաշի՜ն...

— Տրախտորի մաշինն եկա՜վ...

— Ուռա՜, ուռա՜, տրախտորի մաշինն եկա՜վ...

— «Տրախտորի մաշինը» շարժվեց գյուղի հրապարակից ու հասարակության լայն օղակով շրջապատված դուրս յեկավ բաց դաշտը, առաջինը՝ քաղաքացիական կռվում ընկած Ալեքի այրու՝ Հեղնարի արտը վարելու:

Կոմյերիտականների քեֆին քեֆ չեր հասնում:

Գարնանը հանդ դուրս յեկող մորուկների նման նրանք ուրախ թռչկոտում եյին տրակտորի շուրջը:



Ապա իրար մոտ գալիս, թև-թևի գցում, և զվարթ կերպով սկսում եյին յերգել.

Գնաս բարով, չգաս տարով,
Պարոն Խատիսով,
Ես աշխարհը մերն ա հիմա,
Մերն էլ կմնա:

---

Հանդում միտինգ յեղավ:

Վարկային ընկերության նախագահը բացատրեց գյուղի չքավորներին հասցրած իրենց առաջին օգնության մասին: Ապա կանգ առավ վարկային ընկերության, արտելների և կոոպերացիայի դերի ու նշանակության վրա:

Բոլորն էլ վողջունեցին «տրախտորի մաշինի» մուտքը՝ Գյուղխորհրդի նախագահը, Կոմյերիտմիության բջիջի քարտուղարը, Բատրակկոմը, ուսուցիչը, կին պատգամավորուհին:

Յեվ յերբ «Ֆ ո ր ձ ո ն ը» շափ-շափելով առաջին ակոսաշար ժապավենը գցեց գորշ հողի յերեսին,—ջահելները բարձրաձայն «ուռա՜» կանչեցին, հասակավորներն ուրախությունից հեհռալ սկսեցին, կանայք խաչ հանեցին յերեսներին և յերկու կաթիլ արցունք հանդարտորեն վար իջավ Սրո ապու այտերին:

Գարսևան աղեն հանդ դուրս չեկավ այդ որը:

Զարչի Զալոյի դուքանի առաջ նստած, նրանք յերկար զրուցում եյին:

— Զտես շան վորդիներ, մի երկաթի կտոր են տեհել ու վրնց են վրա տվել... «ուռա՜», հա՜ «ուռա՜», զահլաներս տարան, եյի՜...

— Ե՜հ, ի՜նչ ես սրտիդ նեղություն տալիս, Գարսևա՛ն աղա, եդ մաշինը դրանց բան անողը չի՛, մի անձրև վրա տվեց թե չէ, տեհար ժանգոտվեց ու խարաբա դառավ...:

— Յես եդ վաղուց գիտամ, ջա՛նմ, համա ես շան վորդքանց լոպազությունը չի քաշվում:

— Համբերի՛ հլա, Գարսևան աղա՛, համբերի՛... Աստծու արքայությունը համբերողինն ա ..

* * *

Այդ Գառնանը Գարսևան աղեն վարեց Սրո ապու արտը:

Վարեց, բայց ցանել չկարողացավ:

Գյուղխորհուրդը քանդեց ապօրինի կերպով կնքված պայմանը և արտը հանձնեց իր իսկական տիրոջը:

Փոկը նրան սերմացու տվեց և կոմյերիտմիության բջիջը միաձայն վորոշեց, Գարսևան աղի «ջ դ ր ո ւ», շաբաթօրյակների միջոցով ցանել, քաղել ու կալսել վարած արտը:

Гос. Библиотека ... Арм.ССР им. А. Мясникяна ... ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



5081-Ж

Այս անգամ Գարսևան աղեն չեկավ Արո ապու տուն։

— Լա՛վ ոյին բերիր գլխիս, այ հալիվոր... Հողդ վարել ավիր ու արխային տանդ վեր ընկար... Մի գյուղխորհուրդ ելա չես գընում, գործի չեռևից ընկնես, ինձ թողել ես մեջտեղ ու ղըրաղ քաշվել։ Կարող ա արխային ես, վոր եդ լոպազ լակոտները արտդ պտի բեջարեն։ Հայ հո՛գս Նրանց գլխին... Մեկն էլ դրանցից քո հարազատ տղեն էր, ելի՛, տեհա՞նք... Լա՛վ կբեջարեն, մաշալլա՜հ... բեջարելուն խոսք չկա...։

— Ցես ինչ անեմ, Գարսևան աղա, յես հլա են վախտը քեզ ասի, թե պայման կապենք, բանը զակոնով բռնենք, համա դու քո ասածն արիր, հիմի վոր զակոնը թող չի անում, յես ինչ կարամ անեմ...։

— Հմի զակոնով ես խոսում, հա՞... Հմի ձենդ տաք տեղիցն ա գալիս։ Սերմացու յեն տվել հարիֆին, ընդուր զակոնը միտն ա ընկել։ Բա են վախտը խի՞ չէր զակոնի փեշիցը բռնում, վոր յեկել վոտներս էլիր ընկել թե— «աղա՛ ջան, քուլաշս կրող չկա, ծեծող չկա»։

—Գարսևան աղա, են վախտը ճար ու ճանապարհ չեյի իմանում, տեր ու տիրական չունեյի, համա հիմի...։

— Հիմի տիրականներդ շատացել են, հա՞... են խնքոտներն էլ տեր են կաղնել... Հլա մի թող իրենց տանը քոմագ ընեն, յետո քեզ տերություն անեն։ Դու յել են խելքին ես, վոր նրանք պտի քեզ օգնե՞ն... Դրուստ ա ասած, թե վոր խելք ունենայիր, էլ խի՞ աղքատ կլինեյիր։ Թամամ դրուստ ա...։

Ապա ինքն իրան քննադատելով.—

— Ասա՛, ա՛յ Գարսևան, էլ մարդ չկա՞ր, վոր եկար ես ցնդած հալիվորի հետ գործ բռնեցիր, եսքան տարի աղքատից ո՞վ ա խեր տեհել, վոր դու տենաս...։

— Զակոնը չի թող անում, աղա՛ ջան, զակոնը,—նորից կրկնել սկսեց իր խոսքերն Արո ապին։

— Զակոնը չի՞ թող անում, հա՞, ձենդ կտրի մունդռիկ շան վորդի, վոր դու ուզենաս, գլուխ ցավացնես, զակոնը շատ լավ թող կանի, համա դու քո եշ խելքով ուրիշ բաներ ես մտածում... Բոփա՛կ հալիվոր...։

Գարսևան աղեն ելի տաքացավ, բորբոքվեց, ապա թքելով ապու շեմքին, դուռը պինդ վրա խփեց ու հեռացավ։

7.

Վարպետը՝ վարպետ է, բայց բոլոր վարպետներն էլ միատեսակ չեն լինում։ Նրանք կարող են հասարակայնորեն անհրաժեշտ



բանվորական վորոշ ժամանակվա ընթացքում, միատեսակ գործիքներով, միևնույն քանակությամբ արտադրել, բայց բնավորությամբ, վարվելակերպով, նրանք բոլորովին միատեսակ լինել չեն կարող։

Որինակ վարպետ Նիկողոսն ու վարպետ Ղևոնդը։ Ի՞նչ նմանություն սրանց մեջ։

Առաջինը յերկաթի նման մարդ է, կարուկ բնավորությամբ։ Մի թերություն կամ հանցանք ունեցար թե չէ, իսկույն յերսովդ է խփելու, ինչպես խարազան։ Մի անգամ պռշավոր ՚ակնոցների տակից յերեսիդ նայեց, բավական է, իսկույն կհասկանա բնավորությունդ, կճանաչի քեզ։

Այդ բնավորության համար էլ նա կոմբջիջի սիրելին է դարձել և բանվորներից շատերի խոր ակնածանքի առարկան։ Սանթրոսյանը նրանցից է մեկ-մեկ խորհուրդներ հարցնում, իսկ կոմյերիտականները «պապաշա» յեն կանչում նրան։

Մի որ նա Արտոյին դառնալով--

— Ա՛յ, երեսիդ եմ ասում, անգալ ես, յես անգալներին չեմ սիրում։ Խելքդ գլխիդ հավաքի, բան սովորի՛, թե չէ յես ժամանակ չունեմ հաստագլուխների բերնում բան քամելու։ Եսքան վախտ ա, ինչ եստեղ ես, հեչ բան չես փահմում, բա դու յերբ պտի բան սովորես։

Ինչքան էլ բանվորները սիրեն վարպետին, ինչքան էլ Սանթրոսյանը նրանից խորհուրդներ հարցնի և ինչքան էլ կոմյերիտականները նրան «պապաշա» կանչեն, բայց և այնպես նա Արտոյի դուրը չի գալիս։

Արտոյի աչքում նա վոնց վոր մի հրեշ լինի, վորը պատրաստ է կտոր-կտոր անելու իրեն։

Նա այնպես է նայում վարպետին, վոնց վոխերիմ մի թշնամու։

Բայց բոլորովին այլ է վարպետ Ղևոնդը։

Յերբ գնահատու կոնֆլիկտային հանձնաժողովում դրված էր Արմենակ Սարինյանի կատեգորիան բարձրացնելու հարցը, նա ձայն խնդրեց և սկսեց.—

— Եդ ընկերը հեչ բանի պետք չի, ախպեր, ինչ անում ես՝ բերնը բան չի մտնի, որորինակ, ասում ես վալյոկը լվա, նա վրնտն ա հոլորում, կամ թե ասում ես բենզին բեր, նա գնում պահեստապետի հետ գ յ ա լ ա ջ ի յէ բռնվում։ Զորորինակ նրա կըշտին աշխատող Հայրապետը, ափսոս չի՛, նրան իրեք կատեգորի յէլ վոր ավել տաք կորած չի։ Հալա թողեք դրա կատեգորեն մնա հի-

նը։ Զորօրինակ յեթե նա մի երկու ամսից հետո խասյաթը փոխեց, սրտով կպավ գործին, են վախտը մի կատեգորի կավելացնենք։ Թե չե, զորօրինակ յեթե նրա կատեգորեն ավելացնենք, են լավ աշխատողի ձեռքն ել կթուլանա..։

Մյուս օրը, յերբ Արմենակ Սարինյանը որպես իր ավագ վարպետի, նրան դիմեց՝ կատեգորիայի մասին յեղած վորոշումն իմանալու համար, նա սկսեց.

— Բա՛ղդ չունես, ողո՛ւլ, ենքան խոսեցի, ճար չեղավ, չավելացրին։ Յես ել գիտեմ, զորօրինակ յեթե Հայրապետը 7 ստանա, դու խի պիտի չստանաս։ Զորօրինակ դու յել են գործն ես անում, ինչ նա յա անում։ Սանթրոսյանը չի ուզում, Սանթրոսյանը։ Դըժվարությունն ել դրա մեջն ա, թե չե զորօրինակ յես ինչքան ել ուզենամ, յեթե Սանթրոսյանի սրտովը չեղավ՝ բան չի դառնա։

Արտոն ել վարպետ Ղևոնդին եր սիրում։ Նա ինչքան եր յերանի տալիս, վոր վարպետ Նիկողոսի փոխարեն՝ վարպետ Ղևոնդը լինի իրենց բաժանմունքի ավագը։

* * *

Ինչքան ել վարպետ Նիկողոսն «անխղճորեն» դաղի, ինչքան ել «հոգեառ» լինի Արտոյի համար, բայց և այնպես նա ունի կարեկիցներ ու ցավակցողներ իր վշտերին։

Մի փոքրիկ շրջան ե այդ։

Իրար մոտ, իրար ձուլված, իրար ցավերով ապրող։

Մեկը՝ Կարոն ե։

Կարոն կուսակցական ե։

Քանի անգամ ե նա փորձել կոմյերիտմիության մեջ մտնել, բայց չի հաջողվել։

Քարտուղարից վերցրել ե անկետաները։ Լրացրել։ Ծոխացրած կերպով, «հեղափոխական անցյալի» վորոշ շաղախով գրել կենսագրությունը, կցել դիմումին. դիմում տալու րոպեյին, ինչ վոր մտքեր բռնել են նրա ձեռքը.—

«Յանի ո՞վ ա իմանում, ես իշխանությունը հաստատ մնալու յա՞, թե վոչ։ Կարող ա փոխվեց։ Լավ, վոր կոմսոմոլիստ չլինեմ, ինչ կը կորցնեմ… խառնակ տարի յե, ախպե՛ր, ինչ գործ ունեմ առանց ցավալ գլուխս ավետարանի տակ դնել…

Մտածում եր Կարոն, հարցնում մի քանի անկուսակցականների կարծիքը և վորոշում հանում—«քիչ ել սպասենք, տեսնենք ինչ դուրս կգա…»և դիմումն ու կենսագրությունը պահում թղերթի մեջ՝ մի որից չե մի որ ոգտագործելու համար։

Մի անգամ ել նա բոլոր ձևականությունները կատարել և պատրաստվում եր դիմումը քարտուղարին հանձնել, յերբ իմացավ, վոր Անգլիայի և ԽՍՀՄ հարաբերությունները բարդացել են, վորը հղի յեր մինչև իսկ պատերազմի վտանգով։

— «Ինչ դիմում տալու վախտ ե, յեղբա՛յր,—մտածեց նա և դիմումը նորից տուն վերադարձրեց։ Յերեկոյան յերկար միտք արեց, ապա վերջնականապես կայուն վորոշում հանելով, պատռեց դիմումը և վորոշեց «վոչ սրանց խերին խառնվել, վոչ ել շառին»։

Արտոյի յերկրորդ ընկերը կոմյերիտական Արամն եր։

Գործարանում աշխատանքը վերջանալուց անմիջապես հետո, Արամը տուն եր վազում, հանում աշխատանքային մրոտ ու մաշված շորերը, մաքուր վերնաշապկի վրայից կապում ոձիքն ու փողկապը, լավ արթուկած շալվարից հետո հագնում փայլուն կոշիկները, մի քանի արծաթյա մոնոգրամներով զարդարված ձեռնափայտը վերցնում և սվսվացնելով դուրս գալիս զբոսնելու։

Քաղդպրոցի հետ Արամը բոլորովին մտերմություն չունի։ Ատում ե նույնիսկ այդ դպրոցը։

— «Յես բանվոր մարդ եմ, իմ ինչ գործն ա, թե Մարքսը վոր թվին ա ծնվել, կամ Լենինը վոր քաղաքներն ա ման յեկել։ Եդ բոլորը թող ինտելիգենտները սովորեն, վոր կարողանան կոմսոմոլի, կամ կուսակցության մեջ մտնել…։ Մի թող կռիվ լինի, տեսնենք յես լավ կը կռվեմ, թե եդ Մարքսն ու Լենինը անգիր անողները…» —այսպես եր մտածում և հուսադրում իրեն Արամը։

Իսկ յերբ դիսցիպլինայի կարգով նրան ստիպում եյին քաղդպրոց գնալ, նա չնայած ֆիզիկապես նստում եր դասարանում, բայց մտքով՝ թափառում եր թատրոնները, կինոները, աղջիկների յետևից ման գալիս, կամ թե հայացքով խուզարկում դասարանում նստած կոմյերիտուհիների աչքերը, դեմքը։

Քաղպարապմունքի ժամը՝ միակ ժամն եր, յերբ Արամը կենտրոնանում ու մտածում եր զանազան զվարճալիքների մասին։

Յերրորդը՝ Սիրակն ե, նույնպես անկուսակցական։

«Ես իշխանությունը լավ իշխանություն ա, համա վոր ելի բարձր ու ցածրը կա, եդ ա խարաբ անում։ Թե հավասարություն ա, թող հավասարություն լինի։ Թող բերեն ռոճիկներն ել հավասարեցնեն, վոր ասենք իսկապես բանվորական իշխանություն ա…»
— Այս եր Սիրակի «հավատո հանգանակը»։

Այս չորսը միջուկն են, իսկ սրանց ավելի մոտիկ կանգնած են Արսենը («Բաղատեր Արսեն») և Սեդրակը («Խոզատեր Սեդրակ»)։

Վարպետ Ղևոնդն ել՝ և՛ սրանց ասածներին եր համաձայն, և՛ մյուսների, և՛ բոլորի։

«Դժգոհների և ծույլերի չեզրայրական ընկերություն»—այսպես էր բնորոշել բանվոր Մինասը և այդպես էլ կոչում էին նրանց փոքր գործարանում։

8.

— Յալլա՜, յալլա՜, յալլա՜ա՜ա՜...
— Հա՜, հա՜, հա՜, հա՜ա՜...
— Հա՜ ղուրբա՜ն, հա ղուրբա՜ն, հա՜, հա՜ա...
— Վուժ տուր, վուժ տուր, միքիչմ էս յանը...
— Յալլա՜, հա՜, յալլա՜, հա՜...
— Էս յանը տալ տո՛ւր, էս յանը տալ տ՛ո՛ւր...
տո չես քեզ չասի՛... էս յանը տալ տո՛ւր է՛... դժար ա հա՞, բա գիդըմիր թե խուրմա չէ՞ր...
— Հա՛ ջա՛ն, հա ղուրբա՜ն...
— Յալլա՞, հա՞, յալլա՞, հա՜...

Ամբողջ գործարանը մրջնային աշխուժությամբ թափել է բակում կանգնած բեռնատար ավտոմեքենաների շուրջը և իջեցնում է առացված մեքենաները։

Սա չէ| յուրատեսակ խնճույք է։ Բոլորն ուրախ են, ծիծաղկոտ։ Աշխույժ։

Իսկ Սանթրոսյա՞նը։ Ո՜, նրա քեփին քեփ չի հասնում։ Մի տարուց ավել էր, ինչ նա ամեն տեղ պարծանքով խոսում էր—«սպասե՛ք, հլա մի Գերմանից մաշինեքս բերել տալ-տամ, է-լախտը կիմանաք»։ Ու հիմա նրա այդ անձկալի երազանքն էր, որ կյանք էր դարձել։ Կապույտ խալաթը հագած, նա գնդակի նման գլորվում էր ավտոների շուրջը։ Ամբողջ ուժով հրում մեքենայի իջնող մասերի չեռնից։ Ու ամենապատասխանատու ռազմաճակատը ղեկավարող հրամանատարի նման անում խիստ և սպառնական հրամաններ։

Բոլորն էլ աշխատում էին։ Սկսած Սանթրոսյանից մինչև վարպետ Նիկողոսը և վարպետ Մինասից մինչև Արտոն։

— «Համա դժար ա հա՞,—մտածում էր Արտոն ծանր բեռի տակ,—յանի էս ի՞նչ մեր գործն ա, չեմ հասկանում»։
— Յալլա՞, հա՞, յալլա՞, հա՞...
— Հա՜ ղուրբան, հա՜ ղուրբան, հա՞, հա՞...
— Վո՛ժ տուր, վո՛ժ տուր, եսոր ուժինը Սանթրոսյանի վրին ա.

— Հա՜ ջա՜ն, հա ջա՜ն, յալլա՞, յալլա՞...

Բոլորի ճակատից էլ կախվել էին քրտինքի կաթիլները։



Բոլորն էլ չարչարվում էին, բայց ուրախ։
Ինդուստրիայի դիմավորումն էր այդ։

* * *

Մռայլ էր գերմանացի մասնագետը։ Իր բերած մեքենաների նման ծանր ու մռայլ։

Ո՛վ կը համարձակվեր ծիծաղել նրա առաջ, կամ բարձրաձայն խոսել։

Մեքենաները սարքի գցեց, բանվորական խնճույքում բոլորը խմեցին նրա կենացը և մյուս օրվանից սկսեց բանեցնել բոլորովին նոր ձևի մեքենաները։

Սանթրոսյանը Կարլ Հերմանի «փեշն» էլ «քաշեց» իր առանձնասենյակում, ապա ձեռքը սեղմելով դուրս յեկավ և նրա հետ միասին գնացին գործարանը։

Նա արդեն ընդունակ յերիտասարդ բանվորներից ջոկել էր մի յոթ հոգու՝ նոր մեքենաների վրա սովորելու համար։

* * *

Նոր մեքենաները խոշոր չափով բարձրացնում էին արտադրողականությունը և իջեցնում գները։

Նրանցից յուրաքանչյուրը մի բանվորական օրվա ընթացքում կատարում էր չորս բանվորի գործ։ Իսկ յեթե յերեք հերթով, անընդհատ աշխատեցնեյին, յուրաքանչյուրը նրանցից կարտադրեր 12 բանվորական միավորի չափ։

Դրա համար էր Սանթրոսյանն այնքան ուրախ։

Դրա համար էր Սանթրոսյանն ամեն տեղ նոր մեքենաների փովքն անում և ամեն օր նորանոր այցելուներ բերում գործարանը և բացատրում այդ «հազվագույտ» մեքենաների գաղտնիքը։

* * *

Մռայլ էր գերմանացի մասնագետը։ Ծանր ու մռայլ։
Յերբեք չէր ծիծաղում։
Աշխատում էր ինչպես ժամացույցը։ Վոչ մի ավելորդ շարժում, վոչ մի ավելորդ խոսակցություն։

Յերիտասարդ բանվորներն էլ աշխատում էին նրա ժամացույցային տակտով, առանց խոսակցության, առանց կատակելու։ Նրանք վոչ թե վախից էին այդ անում, այլ պատկառում էին այդ մռայլ մարդուց։

Ի՜նչպես ծիծաղել կամ կատակել, յերբ այդ մարդն ամբողջ ուժով ու ուշադրությամբ կենտրոնացած իր գործին՝ լուռ կերպով աշխատում էր։

Ծիծաղել կամ խոսել — դա հավասար էր այն բանին, յերբ մեկը յերգեր պատասխանատու և կարևոր ժողովում։ Իսկ ո՞վ կը համարձակվեր այդ անել։

Կարլ Հերմանը Սանթրոսյանի պես սրտացավ էր դեպի գործն ու մեքենաները։ Նա ուշադրությամբ հետևում էր աշակերտների աշխատանքներին, ժամերով կռացած մեքենաների մոտ, ձեռքի և դեմքի շարժումներով նրանց բացատրում և սովորեցնում էր նոր մեքենաների գաղտնիքները։

Իսկ նրանք ունկնդրում եյին այդ մռայլ մարդուն հմայվածի նման։

Յերկու շաբաթ էր անցել, բայց ամբողջ գործարանում խոսում եյին «նեմեցի» բերած դիսցիպլինի մասին։ Վարպետները զարմացել եյին, վոր այն «շուլուղչի» ու «գյավազա» տղերանցից այդպիսի լռակյաց, գործի մարդիկ եյին դուրս յեկել։

— Հալալ ա նեմեցին, ախպե՛ր, գործը լավ դրեց։

— Բա խի՞ յեն ասել նեմեց...— խոսում եյին վարպետները։

— Հինդենբուրգի հայրենակիցը մեր գործարանի դիսցիպլինային գլխին մի նոր Հինդենբուրգ դարձավ։

— Այն Հինդենբուրգի դեմ մենք կը կռվենք, իսկ սրան պետք է վողջունել — զրուցում եյին կոմյերիտականները։

Իսկ Սանթրոսյանը չափազանց գոհ էր Հերմանից։ Գործարանի ամեն մի բաժանմունքում նրա գովքն էր անում։ Վորպես որինակ՝ նրան հանձնարարում էր բոլոր վարպետներին։

Բաժանմունքի յերիտասարդ բանվորներն էլ շատ գոհ եյին Հերմանից։ Նրանք մեծ ուշադրությամբ լսում ու կատարում եյին նրա յուրաքանչյուր ցուցմունքը և ամեն որ տուն գնում՝ մի նոր բան սովորած։

9.

Փոքրիկ բաժանմունքում, գործարանի ամենաբարդ միակ մեքենայի վրա, աշխատում են նրանք։

Վարպետ Մինասը 37 տարի յե, ինչ բանում է այդ նույն տեղում, նույն մեքենայի կողքին։

Յեվ նրան այնքան ծանոթ են մեքենայի բոլոր մասերը, բոլոր մանրամասնությունները, վորքան իր հինգ մատները։

Նա բարձրահասակ է։ Ճաղատ գլխով, ճակատին խոր կնճիռներ, դեմքին ծալքեր ու խորշոմներ։ Ձեռները մազոտներից կարծ-



րացել, կոշտացել, ճեղքճեղքվել են բազմամյա կաղնու կեղևի նման։

Ինքն էլ վիթխարի կաղնի լինի ասես, վորի յերկու կողքերից մատղաշ ծիլերի նման կանգնել են Գարիկն ու Վարդանը — նրա աչալուրջ յերկու ոգնականները։

Գարիկն ու Վարդանը յերկուսն էլ կոմյերիտականներ եյին։

Առաջինը չորրորդ տարին էր ինչ գործարանումն էր, իսկ յերկրորդը՝ նրանից չորս ամիս հետո յեր յեկել։

Գործարան ընդունվեցին վորպես անչափահասներ, և հիմա արդեն յենթավարպետներ են։

Կաղնու կողքերից բարձրացած ճյուղերի յեն նման նրանք, հուսատու ճյուղեր, վորոնք կփոխարինեն, յերբ կաղնին ընկնի։

Արդեն սովորել են քանդել մեքենայի մասերը, սարքել նորից և մասամբ ղեկավարել ամենաբարդ մեքենան։

Ամբողջովին մրի ու յուղի մեջ նրանք հաճախ մեքենայի վոտների մոտով սողոսկում են ներս, մաքրում, փայլեցնում ամեն մի մասը, փայփայում մեքենան, ինչպես ամենամոտ ու հարազատ մտերմի։

Վարպետ Մինասը հաճույքով էր դիտում։ Նրա սիրտն ուռչում էր, վոգևորվում, յերբ տեսնում էր, վոր փոխարինողները նույնպես են վերաբերվում մեքենային, ինչպես ինքը տասնյակ տարիների ընթացքում։

Նրան թվում էր, վոր ինքն է ջահելացել, հին վոգևորությունն ու առույգությունն է յետ դարձել, յերբ փոխարինողների յեռանդուն ու նվիրված աշխատանքն էր դիտում։

— Ապրեք տղերք, չարչարանքս զուր տեղը չանցավ։ Հմի թե մեռնեմ էլ, արխային կմեռնեմ, վորովհետև գիտեմ, թե մաշինես չի կանգնելու։

Ամեն տեղ, վարպետ Մինասը գովեստով էր խոսում իր ոգնականների մասին։

— Ղոչախ տղերք են, հալալ ըլնի իրանց կաթը։ Քեֆս բերում են, ախպե՛ր, յերանի չեր մեր բոլոր աշակերտներն էլ եդպես ըլնեյին։

10

Յերկրորդ ամիսն էր, ինչ վարպետ Մինասը հիվանդանոցում պառկել էր։

Յերկար տարիների աշխատանքը նրան հյուծել, ուժասպառ արել ու վերջնականապես անկողին էր նետել։

Վարդանն ու Գարիկը շաբաթական յերկու անգամ նրա մոտ եյին գնում։ Տանում եյին անհրաժեշտ իրեր և ուտելիքներ, նստում

մահճակալի կողքին, զրուցում գործից, գործարանից ու վարպետ Մինասի համար կյանքը նորից քաղցրանալ, հրապուրիչ եր սկսում դառնալ։

Անցան ամիսներ։

Վարպետ Մինասը անքաց յերկար, տանջվեց անկողնում, բայց ուժերն սպառվեցին ու մի առավոտ, յերբ արևը նոր եր ծագում, նրա զարկերակն ընդմիշտ կանգ առավ։

Մեռավ վարպետ Մինասը։

Վարդանն ու Գարիկը թերթում հոդվածներ գրեցին անզուգական վարպետի մասին, ամբողջ գործարանը հուզարկավորեց նրա դիակը և նորից մեքենաները նույն չափով բանել սկսեցին։

Արմատի մոտ բուսած ճյուղերը զորացան, աճեցին ու բռնեցին կաղնու տեղը։

Վարդանը գործարանի ամենաբարդ մեքենայի ղեկավարը դարձավ, իսկ Գարիկը՝ նրա օգնականը։

11

Աշխատանքի գործարքային ձևին անցնելը Սանթրոսյանին հրամայողաբար ստիպում եր վերանայել շտատները և ազատվել անգործունյա ու ծույլ տարրերից։

Ելեկտրական լամպի լույսի տակ, յերրորդ ժամն ե արդեն, ինչ նա առանձնասենյակում նստած, բանվորների անվանացուցակն առաջին, խորասուզվել ե նրա մեջ։

Թղթի յերեսին ասես զորատես լինի, բոլոր բանվորները շարքով անցնում են նրա աչքերի առաջից։ Ահա նա բռնում ե մեկին, աչքերը կկոցելով յերկար նայում, ստուգում. հաշվի առնում նրա թերությունների ու առավելությունները, ամսվա մեջ քանի՞ անգամ ե ուշացել, քանի՞ որ բացակա յեղել։ Նորից մտածում ե և բաց թողնում նրան։ Ահա յերկրորդը, յերրորդը, և այսպես անվերջ։

Վերջապես նրա անունը—Մ ի ն ա ս յ ա ն Ա ր տ ո։

Կանգ առավ, նորից կկոցեց աչքերը, յերկար մտածեց—«... Կոմսոմոլ ա... Չհաննամ թե կոմսոմոլ ա... հաստագլուխ ա, հաստագլուխ... բեյնում բան չի մտնում... Աշի, անգյալ ղաղ ա, ռադ արա թող գնա...»։

Մի անգամ ել մտածեց և ապա ծուռումուռ տառերով ցուցակում, նրա անվան դեմը գրեց՝

«Կ ր ճ ա տ ե լ»։

Դեռ նա յերկար շարունակեց իր այդ հետաքրքիր աշխատանքը և յերբ ավարտեց, ցուցակում արդեն մի քանի մարդկանց անունների դիմաց գրված եր հեղինակավոր վճիռը։



Առավոտյան գործարանում արտակարգ յեռուզեռ եր։

Բոլորը հավաքված հայտարարությունների տախտակի մոտ, կարդում եյին որվա նորությունը՝ կրճատվածների ցուցակը։

«Դ ժ գ ո հ ն ե ր ի և ծ ո ւ յ լ ե ր ի յ ե ղ բ ա յ ր ա կ ա ն ը ն կ ե ր ո ւ թ յ ո ւ ն ը» պատվավոր տեղ եր գրավել այնտեղ։

Պակասը լրացնում եյին Արսենը («բաղատեր Արսեն») և Սեդրակը («խոզատեր Սեդրակ»)։

— Համա լավ են ջոկել, հա՜։

— Սանթրոսյանի մերը չմեռնի, ջոկին ել ռուենց կըլնի։

— Բա նա թաց տեղ քնող ա՞,—խոսում եյին բանվորները։

---

— Կարդալուց հետո միասին վորոշեցեք՝ ա) պատմվածքը դու՞ր յեկավ ձեզ արդյոք, թե վոչ. ինչո՞ւ. բ) պատմվածքի վո՞ր տեղերը գրավեցին ձեր ուշադրությունը: Ինչո՞ւ:

— Ի՞նչ ժամանակաշրջան է ընդգրկում «Դասալիքը» պատմվածքը:

— Ի՞նչպիսի մտքերից դրդված Արտոն թողեց գյուղը:

— Ի՞նչ նշանակություն ունեցավ Արտոյի ընտանիքի տնտեսության համար նրա հեռանալը:

— Ո՞վ էր կամենում ազատել Արտոյի ընտանիքի ծանր դրությունից յեվ ի՞նչը օգնեց նրան դուրս գալու այդ վիճակից:

— Ի՞նչպես ընդունեցին Արտոյին քաղաքում կոմյերիտ մարտիկները յեվ տրեստի նախագահը:—Ինչո՞ւ այդպես ընդունեցին. իրավացի՞ էյին:

— Տվեք Սանթրոսյանի համառոտ բնութագիրը.

— Տվեք նայեվ մյուս վարպետների ու բանվորների համառոտ բնութագրերը յեվ վորոշեցեք, թե դրանցից ովքե՞ր են դրական յեվ ովքեր՝ բացասական տիպեր:

— Համեմատեցեք Արտոյին կոմյերիտ բանվորներ՝ Գարիկի ու Վարդանի հետ:

— Արտադրությունը բարձրացնելու ինչպիսի՞ միջոցներ են նկարագրված այս պատմվածքում:

— Ինչո՞ւ Արտոյին հեռացրին գործարանից յեվ ինչո՞ւ յե հեղինակը նրան «Դասալիք» անվանում:

---

— Ո՞վ է պատմվածքի հերոսը:

— Վորքա՞ն հաջող են նկարագրված պատմվածքում գյուղական կյանքը յեվ գործարանը:

— Կարելի՞ յե արդյոք վորոշել հեղինակի վերաբերմունքը դեպի իր հերոսները:

—Միյեվնույն լեզվո՞վ են արդյոք խոսում պատմվածքում հեղինակը ու իր հերոսները:—

— Առանձնացրեք պատմվածքում յեղած յեվրոպական, ռուսական ու գավառական բառերը յեվ աշխատեցեք պարզել, թե ի՞նչ նպատակներով են դրանք գործածված պատմվածքում:

---

# ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

## ՅԵՎՐՈՊԱՑԻՆ

1.

Այլահվերդու գործարանի ծխնելույզն առավոտվա բացվող լույսի մեջ սկսում է ավելի և ավելի վորոշ յերևալ։ Ելեկտրական լամպերն սկսում են ավելի դժգունանալ։

Լույսը բացվում է։

Դեբետը խշշալով անցնում է և ելի գալիս է խշշալով և ելի անցնում է։ Ծառերը, վոր թեքված են նրա ջրերի վրա, դանդաղ որորվում են և նրանց որորվող պատկերն է բեկբեկվում հոսող ջրերի կոհակների մեջ։

Բացվում է լույսը։

Ձորում թարմություն կա ու զով կա։ Անտառապատ լանջերը ձգվում են յերկար և վոլորապտույտ։ Յերբ մեկը ձորի ուղղությամբ նայում է, նրա հայացքը գնում է անկյուն, ձորի առաջին վոլորն անցնում է, յերկրորդն անցնում է, յերրորդն է անցնում և գնում է ելի։ Իսկ ձորը դեռ բաց դաշտ դուրս չի գալիս։ Հեռու չե դաշտը, վոր բաց է, և յերկար է ձորն իր անտառապատ լանջերով ու Դեբետով։

Ձորում թարմություն ու զով կա և բացվող առավոտ։

Գործարանի պահակը ծեր է։ Նա հորանջում է։ Իրենից անկախ՝ ձեռքը բարձրանում է և խաչակնքել է ուզում։ Բայց շարժումը մեռնում է ճակատի վրա։ Պահակը քորում է ճակատն ու ձեռքը վար է իջեցնում։

Բանվորական շենքի լուսամուտներից մեկից մի մարդ իր գլուխն է դուրս հանում։ Ճմռում է ճպռոտ աչքերը և գլուխը նորից ներս է ծծվում սենյակի մթության մեջ։ Մի ուրիշ գլուխ է դուրս կախվում մի ուրիշ լուսամուտից և թևերը ժիլետն են հագնում։ Յերկրորդ հարկի լուսամուտներից մեկի յետևում մեկը կանգնել է և սրբիչով յերեսն է չորացնում։



Մի դուռ չխկում է։ Դռնից դուրս է գալիս «Յեվրոպացին» և առաջանում է դեպի գետը։ Ուսի սրբիչն ու սապոնը մի կողմ է դնում, պպզում է, յերկու ձեռքով վերցնում է մի քիչ Դեբետ ու լվացվում է։

«Յեվրոպացին» այդպես է սիրում լվացվել։ Գործարանի բոլոր բանվորներին ծանոթ է նրա սովորությունը։

— Յես,— ասում է «Յեվրոպացին»,— ենտեղ ենքան եմ լվացվել նեղ փողոցի աղքատիկ տան ժանգոտ լվացարանի ջրով, վոր ձանձրացել եմ։ Դեբետը, և այս առավոտը, վոր բացվում է, և խշշացող ծառերը—լավ են,— ասում է «Յեվրոպացին»։

Նա սրբիչով մաքրում ու չորացնում է դեմքը և կանգնում է։ Նա սպասում է։ Իրոք, մի րոպե հետո, ուժեղ սուլոց է լսվում և ձորի վերջին վոլորան անցնելով գործարանին է մոտենում և իր ճանապարհով գնում է գնացքը։ Նա անցնում է առաջին վոլորը և անհետանում է։

«Յեվրոպացին» վերադառնում է իր բնակարանը։ Նա արդեն վերջացրել է իր լվացվելը։

Նորից է սուլում և այս անգամ սուլողը գործարանի շչակն է։ Լռում է շչակը, իսկ նրա ձայնը դեռ ինչքան հեռու չե տարածվում և տարածվում է ինչքան լայն ու խորը։ Բանվորները գնում են գործարան և աշխատանքային որն սկսվում է։

2.

Ծառերն են։ Ծառերի տակը՝ հողն է։ Հողի տակ մարդիկ են։

Այդպես է։

Հողի հետ խառը՝ մի մետաղ կա վոր դեղին է, ինչպես արևն է դեղին։ Դա պղինձն է։ Իջել են բանվորները պղնձի մոտ ու քանդում են։

Մուրճերը յերգում են նրանց ձեռքերում և մուրճերը փորում են։ Ահա պառկել է մեջքի վրա մեկը և պղնձախառն առաստաղն է քանդում։ Իսկ մուրճը յերգում է։

— Յես, ասում է մուրճը,— ահա քանդում եմ, և պղինձն ուրախ է դրա համար։ Յես քանդում եմ պղինձը և կույտեր եմ անում։ Կգա ստորյերկրյա վագոնը և կտանի։ Իսկ այնտեղ, քաղաքներից մեկի փողոցներից մեկում մի նոր շենք կբարձրանա...

... Դա պղինձն է։

— Պղինձը, ասում է մուրճը.— գնում է գործարան։ Նա այնտեղ կմշակվի և կգովի։ Իսկ յես կուղարկեմ նոր կույտեր։ Յեվ այնտեղ, մի գյուղում, գյուղացին պանիր կունենա իր հացի վրա դնելու։

... Դա պղինձն է։

— Պղնձի պես պղնձագույն են արևից կիզված լանջերն ու դաշտերը Սարդարաբատի անապատում և ուրիշ ինչքա՜ն տեղերում: Պղնձագույնը կանհետանա այդ տեղերից և լանջերն ու դաշտերը կանաչ կհագնեն:

... Դա պղինձն ե:

Մարդն ե: Մարդի վերևում հողն ե: Հողի վրա ծառերը:

Այդպես ե:

Ծառերի տեղ վաղը գործարան կկանգնի և շենքեր կկանգնեն: Հիմա կանաչագույն են այդ տեղերը: Իսկ վաղը նրանք պղնձագույն կդառնան ու կդառնան մեծածավալ քաղաք:

— Դա յել ե պղինձը...

Մուրճերը յերգում են և նրանք գտնվում են մկանոտ ձեռքերում: Դա նշանակում ե, վոր մուրճերը դադար չեն առնի: Յեթե դադար առնեն, պղինձ չի լինի և կլռի յերգը: Բայց դադար չեն առնի:

Մուրճերն իրենք-իրենց չեն յերգում: Յերգը հոսում ե:

Նա հոսում ե ուղեղից, սրտից, արյան յուրաքանչյուր յերակից ե հոսում, անցնում ե մկանների միջով և հասնում ե մուրճին, զրնգում ե նրա մետաղի հետ:

Այդպես ե լինում, վոր յերգում են մուրճերը:

## 3.

Ներքևում գործարանն ե. պղնձաձուլարանը: Այնտեղ ե, վոր զտվում ե պղինձը և դառնում ե մաքուր-դեղին: Յեվ այնտեղ ե, վոր պղնձի միջից զատում են փոքրաքանակ վոսկին:

Այնտեղ ե աշխատում «Յեվրոպացին»:

Նա վո՞րտեղացի ե կամ ինչ ազգից: Վոչվոք չգիտե:

Ի՞նչ ե նրա անունը: Վոչվոքի հայտնի չե:

Մի որ նա յեկավ Ալլահվերդի և պղնձաձուլարանի վարպետ դարձավ: Իսկ հետևյալ որվանից նա դարձավ բանվորների սիրելին: Բանվորները նրան մկրտեցին «Յեվրոպացի» անունով և նա այդպիսին ել մնաց:

Ահա նա աշխատում ե և ահա նրա քառասուն տարեկան դեմքը պղնձագույն ե: Հալված պղնձից ե այդպես, թե՞ բնականից: Չգիտես: Նույնիսկ չգիտես, թե հալվող պղի՞նձն ե իր գույնն արտացոլել նրա դեմքի վրա, թե՞ ինքը՝ հալված պղնձի: Այդպես ե «Յեվրոպացին»:

— Յեվրոպացի, դու լավ վարպետ ես,— ասում ե մի բանվոր: Ել վո՞րտեղ ես աշխատել դու:

— Ել վո՞րտեղ չեմ աշխատել յես,— պատասխանում ե «Յեվրոպացին»:— Յես, գիտե՞ք, շատ եմ աշխատել: Քսանմեկ տարի:

— Դու ինչո՞ւ յեկար, Յեվրոպացի:



Նա չի ուզում պատասխանել: «Յեկա, ելի», քրթմնջում ե քթի տակ, բայց հետո փոխում ե մտադրությունը:

— Կպատմեմ: Կպատմեմ,— ասում ե,— մի որ:

— Հիմա պատմիր, ելի.

— Ի՞նչը: Դե, այսպես եր: Տասնինը և կես տարի աշխատեցի: Առաջին տարին նույնքան վատ եր, վորքան և տասնիններորդը: Կինս: Յերկու յերեխա: Բայց հետո՝ կոմունիստների պրոպագանդան: Գործադուլ յեղավ...

— Հետո՞...

— Բանտից վոր դուրս յեկա, գնում եմ, ասացի: Ասացի՝ գնում եմ իմ իսկական հայրենիքը, բանվորներինը: Քեզ փող կուղարկեմ, ասացի կնոջս: Իսկ հետո՝ կտեսնենք: Կամ դու ինձ մոտ, կամ յես քո: Նա լուցկու գործարանում եր աշխատում: Ֆոսֆոր: Գիտե՞ք, թունավոր ե դա:

Նորից ե հարցնում բանվորը.

— Քաղաքը մե՞ծ եր: Գործարանը...

«Յեվրոպացին նայում ե նրան և լուռ հասկացնում ե, վոր մեծ, շատ մեծ եր քաղաքը, նաև գործարանը:

Յերկուսն ել լռում են

Մի ուրիշ անգամ, մի ուրիշը հարցնում ե.

— Չե՞ս ձանձրանում այստեղ, Յեվրոպացի:

«Յեվրոպացին» նայում ե նրան և լուռ հասկացնում ե, թե «դու դեռ ջահել ես և քիչ բան գիտես»...

— Ինչո՞ւ պիտի ձանձրանամ,— շարունակում ե բարձրաձայն:

— Ո՞վ գիտի... Փոքր, մի ծխնելույզ, ձորը... Իսկ այնտեղ...

— Սա իմ հայրենիքն ե և մերն ե գործարանը: Մենք կնդարձակենք: Կնդարձակենք, ասում եմ: Յեվ դա հոգուտ մեզ կլինի: Այնտեղ մենք իտալական գործադուլ եյինք անում: Գիտե՞ս ինչ բան ե դա: Այ, այսպես: Դու, ասենք թե, այս պղնձի վրա գրում ես՝ յերրորդ տեսակ: Իսկ նա յերկրորդ տեսակի չե: Տուժում ե գործարանը: Կամ թե չե, որեկան մի պղնձաթերթ ես պատրաստում: Դու լսո՞ւմ ես, միայն մի պղնձաթերթ: Դա ծիծաղելի չե, չե՞, բայց գործարանատերն, իհարկե, չի ծիծաղի:

Լռում ե «Յեվրոպացին», իսկ քիչ հետո ավելացնում ե.

— Բա՛ս, այսպիսի բաներ...

## 4.

Ձորում վերջալույս ե: Արևն այնքա՜ն շուտ ե թեքվում սարերից այն կողմ: Յերկնքի վրա դեռ նրա շողերն են յերևում, իսկ ներքևում մոխրագույն մութն ե: Ծառերի տակ խավար ե արդեն և

արդեն չղջիկներն իրենց թևերն են թափահարում։ Իսկ փայտփորիկը դեռ փորում է։

Թեև լույս է, բայց ելեկտրական լույսերն արդեն վառվում են գործարանի մոտերքում։ Բանվորները նստել են իրենց շենքերի մոտ կամ գետի ափին և խոսում են։ Ծխում են էլ։

«Ցեվրոպացին» նստել է մի ծառի տակ, նայում է ձորի յերկայնքով, իր յեվրոպական չիբուխն է ծխում ու մտածում է։

— Այ, մտածում է նա,— ձորը խավար հագավ։ Ծառերն իրար յեկան, մոտեցան ու դարձան մի անբաժանելի, մուգ-կանաչ զանգված.

— Այս ձորն է և այս՝ ձորի վորորապտույտը։ Նրանից այն կողմ նորից ձորն է և այդպես։ Այս մի քիչ տեղում ելեկտրական լուսավորություն կա, նրանից այն կողմ լուսավորություն չկա և այդպես...

— Նայում եմ, և ի՞նչ։ Թվում է, թե ծառերի վրայից լամպեր պիտի կախված լինեն և հանկարծ պիտի փայլի ելեկտրական լույսը։ Ջորը պիտի լուսավորվի...

Գետնի տակ փորում են։ Հիմա, յերբ յերեկո չէ, հիմա յել են փորում։ Անընդհատ պղինձ են հանում և հանում են։ Պղինձը պղինձ կծնի և գործարանը՝ գործարան։ Այսպես կլինի...

— Կրակեցին գործադուլավորների վրա։ Պավլը մեռավ։ Ալբերտն ու Շացկոն վիրավորվեցին։ Հիստերիկ ճչում եր Ալիսան... Ինչե՞ր յեղան։ Ջերբակալեցին, ծեծեցին։ Իսկ իրենք յերգում եյին—«Ցելիր, ում կյանքը անիծել է»... Կյանքը մեզ անիծել եր և մենք յելանք,—մե՛նք, ստրուկների ու սովյալների աշխարհը։ Բայց մեզ վրա կրակեցին...

— Դու փախչո՞ւմ ես, հարցրեց Իոհաննը... Ցես չեյի փախչում։ Վոչ, ասացի. հայրենիք եմ գնում։ Խորհրդային յերկիրը։ Իսկ հետո —կգամ։ Կգամ, ասում եմ։ Կգամ և ինչպե՜ս... Ինձ կարող են բռնել և կախել։ Նրանք ինձ գիտեն։ «Գործադուլի կազմակերպիչը», —ասում են։ Ել ի՞նչպես միայ։ Ցեվ հետո մերոնք շատ են ուզում իմանալ խորհուրդների յերկրի մասին։ Ինչ է տեղի ունենում այնտեղ։ Կգամ և կպատմեմ։ Ցեվ կգամ պատրաստված։ Կսովորեմ, թե ի՞նչպես անել, վոր գործադուլը չվիժի, ի՞նչպես անել, վոր մերոնք միահամուռ ընթանան և այդպես։

— Ցես փախե՞լ եմ... Ցես չեմ փախել։ Թեև այստեղ այնքան լավ է և հարազատ, վոր վերադառնալ չես ուզում։ Կաց, մտածում եմ։ Իսկ հետո,—մտածում եմ,-գնա, գործ ունես անելու։ Ցեկա, տես, սիրեցի այս ամենը և անհաշտ դարձա այն կարգերի դեմ։ Պայծառ կերպով սկսեցի պատկերացնել, թե ինչի՞ համար ենք կռվում։ Ցեվ այսպես. ինչ էլ լինի, մեզ մոտ էլ այսպես պիտի անել։ Անպայման։



5.

«Ցեվրոպացու» գալու առաջին որերին, բանվորներին մի բան շատ զարմացրեց։

Այդ այն եր, վոր «Ցեվրոպացին» գործարանում իրեն զգում եր այնպես, ինչպես իր տանը։ Դա վոչ միայն բանվորի հարազատության զգացմունք եր բանվորական միջավայրի դիմաց,—ավելի՛ն եր։

Նայում է շենքերից մեկին և ասում է.

— Տասնյերկու թվին է շինված, կարծեմ։

— Ճիշտ է...

— Իսկ տարեթիվը վոչ մի տեղ չի գրված։

Հարցնում է.—Համար յերկու հանքահորն հիմի աշխատեցնո՞ւմ եք։

— Ջե։ Պղինձն այնտեղ վերջացավ։

— Հա, դե իհարկե, փոքր հանքահոր եր. տարեկան յոթ հազար փութ։ Իսկ այն նոր շերտը յե՞րբ բաց արեցիք։

— Քսանհինգ թվին։

— Այնտեղից, յերևի, տարեկան յերեսուն կստացվի։

— Ցերեսունհինգ հազար։

— Հա, յերեսունից յերեսունհինգ։

— Ճիշտ է։

«Ցեվրոպացին» կանթել է թևերը մեջքին, նայում է շուրջը և նորից հարցնում է.

Ծեղքված կաթսան վո՞ր թվին փոխեցիք։

— Անցյալ տարի։

Բանվորները զարմանում են։ Հավաքվում են իրար գլխի և «Ցեվրոպացու» գլխին։

— Վարպետ, այնպես ես խոսում, կարծես թե դու շինած լինես այս գործարանը։ Այդքան բան վո՞րտեղից գիտես...

«Ցեվրոպացին» մի աչքն է փակում, ապա մյուսը և ծիծաղում է։

Համարյա թե։ Ցես եմ շինել, բա ի՞նչ

Ու ծիծաղում է։

Բանվորները չեն հավատում և չեն հասկանում։

— Բա՜ս...

— Ֆրանսիացիներին յե՞րբ խուիկ տվեցիք.

Մեկն ուզում է պատասխանել, բայց զարմացած մեջ է ընկնում մի ջահել, շատ ջահել բանվոր.

Ի՞նչ ֆրանսիացի...

— Ջգիտե՞ս,—ասում է «Ցեվրոպացին»։—Այս մեր գործարանն

առաջ պատկանում էր մի ֆրանսիական ընկերության։ Շատ շահագործեցին։ Պղինձ։ Վոսկի։ Յեվ այդպես։

Բանվորները լուռ են։

— Պապաշա, ասում է Սառան,—դու այդ բոլորը վորտեղից գիտես։

— Յես բան շատ գիտեմ, աղջի՛կս։ Եդ ել գիտեմ։ Են ել գիտեմ, վոր համար յոթ հանքից մի քիչ դեպի հարավ…Բայց այդ մասին յես կասեմ ճարտարապետին։

Բանվորները ծայր աստիճան հետաքրքրվում են.

— Ի՞նչ…Ի՞նչ…

«Յեվրոպացին» գլուխը մոտեցնում է նրանց և բարեկամաբար շշնջում է։

— Պղինձ կա… Շատ։

Չորս ամիս հետո հաստատվում է նրա յենթադրությունը։ Բանվորները զարմացած են։

— Դու մի գաղտնիք ունես, վոր մեզ չես ասում,—հետաքրքրվում են նրանք։

— Ի՛հ,— թափահարում է ձեռքը «Յեվրոպացին»։— Ի՞նչ գաղտնիք։ Հասարակ բան։ Յես այստեղ աշխատել եմ տասնհինգ տարի առաջ, ֆրանսիական ընկերության ժամանակ։ Յերկրում դեռ վարպետներ չկային։ Դրսից եյին բերում։ Ինձ ել բերեցին։ Ահա։

Այս անգամ ել են զարմացած բանվորները, բայց ուրախ են և ծիծաղում են։

— Այդպես…

— Բա հանքը։

— Այդ հանքը հետազոտել են շատ վաղուց։ Համար յոթից այն կողմ։ Չոգտագործեցին։ Այդպես ել մնաց։ Իսկ յես գիտեյի տեղը…

Դրանից հետո դեռ յերկար ժամանակ բանվորները «Յեվրոպացուն» հարցնում եյին, թե ինչպե՞ս եր գործարանը տասնհինգ տարի առաջ և յերբ նա պատմում եր, նրանք կուշտ ծիծաղում եյին։

— Նապաստակի գործարան է յեղել, վարպետ։ Այդքան ել փո՞քր։

— Ասում ես ամեն որ մեկը մնում եր փլվածքի տակ։

— Հա։ Բայց յեթե մինչև հիմի մնային դրանք, անպայման շատ կմեծացնեյին գործարանն ու վոսկի կդիզեյին… Բայց լավ արեցիք։ Խուլկ…

Լռում են։ «Յեվրոպացին» ծոր է տալիս.

Բա՛սսս…

6.

Կիրակի որը «Յեվրոպացին» վորսորդական հրացանն ուսեց։



— Վորսի չեմ գնում։

— Մենա՞կ։

— Մենակ։

Ու գնաց դեպի սարը։ Նա վորս անել վաղուց գիտե։ Բայց այս անգամ նա վորս չի անում։ Մտնում է անտառը, խորանում է նրա մեջ, հրացանը գցում է մի կողմ և նստում է։

Նա մտածելու շատ բան ունի,—«Յեվրոպացին»։ Նա այսոր ստացավ նամակ և կարդաց։ Ֆոսֆորը, ինարկե, վտանգավոր նյութ է։ Իսկ ի՞նչ յեղան իր յերեխաները… Ի՞նչ պիտի անեն սրանից հետո, առանց մոր։

Նրանցից մեկը նույնպես աշխատում է լուցկու գործարանում. փոքրիկ Եմման։ Յերբ նա յել մեծանա և դառնա իր մոր չափ, նրա մատներն ել կլինեն լուցկու պես բարա՛կ… բարա՛կ…

…Իսկ Եմիլը դարձել է «նկուղների մարդ,» վորին, վաղ թե ուշ, կարող են կախել մարդ սպանելու կամ գողության համար։

«Յեվրոպացին» հառաչեց։ Նա պիտի թողնի իր հայրենիքը և պիտի գնա այնտեղ, վորտեղ ինքը ծնվել է։ Եմիլն ու Եմման այնտեղ են։ Այնտեղ է ստրուկ սովյալների աշխարհը։

Տարի ու կես այստեղ.—լա՛վ եր։ Բայց պիտի վերադառնա։ Մի որ մեծ քաղաքի փողոցները վառոդի հոտով կլցվեն և հրացանաձգություն կլինի։ Իսկ հետո կլինի մեծ հեղափոխություն, վորից հետո ամեն ինչ կլինի այսպես։

Այստեղ ել, ինարկե, թերի բաներ շատ կան։ Որինակ, հանքափոր Սերգոյի ընտանիքը վեց հոգուց է բաղկացած, բայց նա միայն մի սենյակ ունի։ Այդ վոչինչ, վորովհետև բոլորը գիտեն, Սերգոն ել գիտե, «Յեվրոպացին» ել, վոր վաղը մի սենյակը կդառնա յերկու, հետո յերեք։

Իսկ այնտեղ, մեկ սենյակը կմնա մեկ։

Այս է տարբերությունը և այս՝ մեծ տարբերություն է։ Անսահման մեծ…

Կբռնի կարմիր դրոշակը և կասի.—Սա չե մեր վերջին կռիվը, լսում եք, սա վերջին կռիվն է, վերջինը, վերջինը…

Յեվ—հաղթականը…

Միահամուռ կգնան։ Զինված, վոխերիմ… Միահամուռ կգնան և կգնան պալատների վրա…

«Յեվրոպացու» աչքերի մեջ կրակներ վառվեցին։ Նա վեր ցատկեց, ուսեց հրացանն ու սկսեց արագ քայլել։ Ապա լսվեց նրա ձայնը։ Նա յերգում եր և յերգում եր հաղթ, ուժեղ…

— Մեր սեփական, փորձված ձեռքով։ Մեր ձեռքով։ Մեռած

կինս։ Դու հիմի չկաս, բայց այնքան լավ է, յերբ յես խոսելիս քեզ եմ դիմում։ Մենք հին աշխարհը կքանդենք մինչև հիմքերը և քո փոքրիկ Եմման, քո Եմիլը չարաչար չեն տանջվի։ Այդպես...

Գործարանի մոտ լսվում եր «Յեվրոպացու» յերգի ձայնը։ Բանվորները ծիծաղեցին։ Վորս անողը չի յերգի։ Կփախչի վորսը...

Բայց բանվորներից մեկը խորիմաստ կերպով նայեց և դիմելով հավաքված բանվորներին՝ համոզված ձայնով ասաց.

— Վարպետը մեծ վիշտ ունի, ինչպես յերևում է։ Ո՞վ գիտե, ինչեր է տեսել աշխարհի վրա...

Իսկ բարձրից, դեռ լսվում եր.

— Ուր վոչ սորուկ կա, վո՜չ դժգոհ...

7.

«Յեվրոպացու» գնալու որը։

Դեռ չեր կարելի վորոշել, լո՞ւյսն եր շատ մթան մեջ, թե մութը լույսի, յերբ նա արթնացավ։ Ծառերը խշշում եյին գիշերվա մասին և գետը խշշում եր գիշերվա մասին։

«Յեվրոպացին» կապկապեց իրեղենները։

Պղնձի մի կտոր, մի վոսկեգույն կտոր, վոր դրված եր լուսամուտում, «Յեվրոպացին վերցրեց և դրեց պայուսակի մեջ։

Վերջացավ։

— Գնո՞ւմ ես, վարպետ։

— Գնում եմ։

— Կգա՞ս։

— Ո՞վ գիտե։ Գուցե կգամ։ Գուցե չեմ գա։ Բայց կուզենամ գալ։ Շատ կուզենամ։

Յերբ նա դուրս յեկավ լվացվելու, ամեն ինչ այնքան սովորական թվաց, վոր նա չկարողացավ հաշտվել հեռանալու մտքի հետ։ Սրբիչով դեմքը չորացրեց և կանգնեց։ Նա սպասում է։ Իրոք, մի րոպե հետո լսվեց ուժեղ սուլոց և նորից մոտեցավ գնացքը։

Գնացքը հեռացավ։ Նա չգնաց։ Նա մտածում է «Կգնամ յերեկվա գնացքով»։

Մտավ սենյակ, վերցրեց փոքրաքանակ իրերն ու դուրս յեկավ։

Աշխատանքային որն սկսվել եր։

Նա այսոր ինչո՞ւ չի աշխատում։ Ինչո՞ւ մյուսներն այնտեղ են,— գործարանում, իսկ ինքն այստեղ...

Նա ցանկություն զգաց գնալ, մտնել ներս և կանգնել իր գործին։ Նա նույնիսկ մոտեցավ դռանը։ Իսկ հետո՝ հեռացավ։ Նա յերեկ յերեկո արդեն հրաժեշտ տվել է բանվորներին։ Նա յերեկ ար-



դեն վերջացրել է իր բոլոր գործերը։ Նրան մնում է նստել գնացք ու գնալ։ Կանցնի ինչքա՜ն ճանապարհներով... Կանցնի ինչքա՜ն ճանապարհներով...

Կհասնի։

«Յեվրոպացին» գնաց կայարան և սկսեց սպասել։ Մի քիչ սուլեց քթի տակ, ապա սկսեց նայել ձորի ուղղությամբ։

Ձորը դաշտ դուրս կգա, ռելսերը կսլանան ավելի առաջ ու կգնան... կգնան... կգնան...

Կտանեն։

— Յերկաթը տաք-տաք կռենք,—բարձրացավ հորձանքը և խփվեց նրա սրտին։ «Յեվրոպացին» ուղղվեց։ Նա վերադառնում է։ Պատրաստված։ Համոզված։ Անհաղթ։

Այդպես է վերադառնում...

Յերեկվա արևը լավ եր փայլում ձորում։ Ծառերի կանաչը յերևում եր լավ.

Յեկավ գնացքը։

8.

Ձորում վերջալույս է։ Արևն այնքան շուտ է թեքվում սարերից այն կողմ։ Յերկնքի վրա յերևում են դեռ նրա շողերը, իսկ ներքևում մոխրագույն մութն է։ Ծառերի տակ խավար է արդեն և արդեն չղջիկներն իրենց թևերն են թափահարում։ Իսկ փայտփորիկը դեռ փորում է...

Թեև լույս է, բայց ելեկտրական լույսերն արդեն վառվում են գործարանի մոտերքում։ Բանվորները նստել են իրենց շենքերի մոտ, գետի ափին, և խոսում են։ Ծխում են ել։

— «Յեվրոպացին» գնաց։

— Գնաց։

— Լավ մարդ եր ու լավ վարպետ։

— Լավ մարդ եր ու լավ վարպետ։

— Ինչի՞ գնաց։

— Ո՞վ իմանա։ Ասում են մեռել է կինը։

Մեկն ասում է.

— Յես կարծում եյի, թե Յեվրոպան հեքիաթի աշխարհ է և այնտեղ ապրում են հեքիաթի մարդիկ։ Բայց ահա, մենք Յեվրոպայում բարեկամ ունենք և ընկեր։ Ասել է՝ բոլոր տեղերում ել մարդիկ կան, վորոնք կարող են մի ուրիշ աշխարհի մարդկանց հետ ընկեր լինել, աշխատանքի ընկեր և բարեկամ։

Դրսում նստածները կամաց-կամաց մտան իրենց տները։ Պահակը մնաց։ Նա վառեց ծխախոտն ու հսկում է։

*Նա պաշտպանում ե իրեն հանձնված գիրքը:*

*Բանվորները հանգստանում են իրենց տներում: Նրանց մի մասն արդեն քնել ե: Մի սենյակից լսվում ե ծիծաղի ձայն: Յերեխան, փոքրիկ յերեխան, զվարճացնում ե ծնողներին: Իսկ մյուս կողմում Լուսիկը դասն ե սովորում:*

*Բանվորները հանգստանում են:*

*Բանվորներն աշխատում են: Յերբ ականջդ դնես գետնին և լսողությունդ լարես՝ կլսես հարվածների խուլ ձայներ:*

*Պղինձ են քանդում:*

---

— Ո՞վ եր «Յեվրոպացին»:

— Վորտեղի՞ց եր յեկել յեվ ինչո՞ւ:

— Ինչո՞ւ յեր նա կապվել այս գործարանի հետ:

— Բնորոշեցեք նրա վերաբերմունքը դեպի Յեվրոպայում իշխող իրավակարգը յեվ մեր իրավակարգը: Ինչո՞վ եր պայմանավորված այդ վերաբերմունքը:

— Ի՞նչ ենք իմանում մենք այս պատմվածքից նրա ընտանիքի մասին:

— Ինչո՞ւ յեր նա վերադառնում իր հայրենիքը յեվ ի՞նչ մտքերով եր վերադառնում:

— Բնորոշեցեք բանվորների վերաբերմունքը դեպի «Յեվրոպացին»:

— Ի՞նչ ենք մենք իմանում այս պատմվածքից պղնձաձուլարանի անցյալի մասին:

---

— Վերլուծեցեք այս պատմվածքը ըստ առանձին գլուխների յեվ պարզեցեք, թե ի՞նչպես ե հեղինակը զարգացնում ու մշակում իր նյութը. ա) ի՞նչի մասին ե պատմում առաջին հատվածում, ի՞նչ ե ավելացնում յերկրորդում, յերրորդում յեվ այլն:

— Կա՞ն արդյոք պատմվածքում կրկնություններ:

— Պատմվածքից ստացվո՞ւմ ե արդյոք «Յեվրոպացու» ամբողջական բնութագիրը, վորպես գիտակից բանվորի:

— Պատմելու ի՞նչ յեղանակներ ե գործածում հեղինակը. ուշադրություն դարձրեք մանավանդ յերկրորդ հատվածի վրա, ուր հեղինակը պատմում ե պղնձի մասին:

— Ինչի՞ց ե յերեվում, վոր այս պատմվածքի հեղինակը ժամանակակից գրող ե:

— Կա՞ն արդյոք պատմվածքում այնպիսի կտորներ ու տողեր, վորոնց մեջ զգացվում ե հեղինակի վերաբերմունքը դեպի «Յեվրոպացին» յեվ մյուս բանվորները:—Բերեցեք որինակներ յեվ բնորոշեցեք այդ վերաբերմունքը:

---



# ԱՐԵՎԸ, ՀՈՒՐՀՐԱՆ ԱՐԵՎԸ...

## 1.

*Իմ յերկրի լեռներում առատ ե արեգակի լույսը և լեռների լանջին տաք ե լինում յուրաքանչյուր ցերեկ: Այնտեղ դեղնագույն արտերի հատ ու կտոր շերտերն են փռված անկանոն շարքերով, իսկ վերևում, դեպի սարի գագաթը, դեռ չի հասել վոչ մի փայտե գութան: Այնտեղ քարքարոտ հողը պղնձագույն ե և կարմրին ե տալիս հեռվից: Մի կողմում մի ճեղքվածք, մյուս կողմում՝ անկանոն սարի սապատը. և այդ ամենը պղնձագույն: Յեվ այդ ամենի վրա իր լույսն ու տապն ե հորդում արևը, իմ յերկրի հուրհրան արևը:*

*Ներքևում, ուր այլևս դառիվայր չկա և հարթ դաշտավայրն ե փռվում, ուղիներն են անցում գալարապտույտ, ուղիներն են անցնում մանեման, իսկ այդ ուղիներով սայլերն են անցնում, կմախքի նման ցցուն կողափայտերով: Անիվների մագութը վերջացել ե և անիվները ճռռում են ինչ վոր հնորյա յերգ՝ յերկար ճանապարհի և դանդաղ յեզասայլի մասին: Գլորվող անիվների ձգած ստվերները ծածկում են յեզների վոտնահետքերը և իրենց յետևից թողնում են փխրուն հետք, ճանապարհի դեղին հողի վրա: Դեղին ե ճանապարհի փոշին, դեղին են ոգոստոսյան արտերը, դեղին են յեզները, վոր լծված են այդ հնամյա սայլին:*

*...Յեվ դեղին ե արևը, հուրհրան արևը...*

## 2.

*Աթոն արևը շատ եր սիրում. նույնիսկ այն ժամանակ, յերբ դեռ խաղալ նույնիսկ չգիտեր, նա սիրում եր արևը: Յերբ իրենց ախոռից միակ կովն ու յերկու յեզները տանում եր դուրս, խառնելու հանդ գնացող նախրին, նա արևին եր նայում ու ժպտում եր: Ժպտում եր ծագող արևին:*

*Յերբ վերադառնում եր տուն հաց ուտելու, նա սիրուն արևի մասին եր մտածում: Քիչ եր պատահում, վոր նա տանը հաց ուտեր: Վերցնում եր նանի թխած բոքոններից մեկը և կրծելով դուրս եր գնում տանից:*

*Համնելով կալերին, Աթոն ներս եր վազում՝ ընկերներին գտնելու համար: Յեվ յերբ գտնում եր նրանց, նրանք գնում եյին գետերից մեկի շվաքում խաղ անելու, կամ գնում եյին կալերից դուրս. ճանապարհի, լայն ճանապարհի վրա վազ տալու համար: Յեվ ով վոր ամենից առաջ հասներ քարե կամուրջին, նա կլիներ այդ որվա բոլոր խաղերի առաջնորդը:*

*Հորիզոնի մի անկյունից դուրս եր գալիս ամպի մի փոքրիկ պատառ: Հետո նա մեծանում, մեծանում եր, ու իր մի ծայրով*

ծածկում էր արևը։ Զարմացած Աթոն վեր էր նայում դեպի երկինք, ու կանչում էր արևին՝ դասագրքի մեջ սովորած փոտանավորով։

— Արև, արև, ելի-ելի, գլխի քարին վեր ելի...

Հաճախ արևը վոչ գալիս էր, վոչ էլ գլխի քարին էր վեր գալիս։ Սկսվում էր անձրևը։ Ճարահատված՝ Աթոն տուն էր վազում, ճանապարհին կրկնելով։

— Թոն արա, թաթավ արա, գարի հացը բոլ արա...

Չար տղա չեր Աթոն։ Դրա համար էր, վոր տանը նրան մի քիչ ծեծում եյին, յերբ «խաղի յետև ընկած՝ տան գործը մտահան էր անում» նա։

3.

Բայց Աթոն գործը «մտահան» անող տղա չեր։

Յերբ տասնհինգ տարեկան դարձավ նա, արդեն իր հոր «աջ կուռն էր», ինչպես ասում եյին դրացիները։ Իսկ հայրն ասում էր։

— Ա՛յ բալամ, մենք էլ խո հարուստ չե՛նք, վոր մշակ պահենք։ Մենք մեր ուժով պիտի յոլա գնանք։

Լույսը բացվելիս վեր էր կենում Աթոն ու հագնում էր շորերը։ Յերբ աղբրի ափին կռացած նա լվացվում պրծնում էր, նայում էր յերկնքին.

— Եսոր արև ա լինելու...

Յեթե կողքին մեկը լիներ, այդպես կասեր նա, իսկ յեթե մենակ ինքը լիներ, այդպես կմտածեր։ Հետո կգար տուն ու տնից էլ կգնար դաշտ, աշխատելու։

Խավար է գյուղը, բայց լույսն արդեն մտնում է այնտեղ։ Խավարը յետ է քաշվում ու կծկվում է։ Աթոյի հայրը վորքան էլ անուսում, էլի հո գիտեր ուսումի օգուտը։ Նա Աթոյին տվել էր սովորելու գյուղի դպրոցում, դրա համար էլ խիղճը հանգիստ էր։ Իսկ Աթոն շա՜տ ուրախ էր, վոր կարդալ գիտե ու բացի դասագրքերից, նույնիսկ թերթ կարդալ կարող է։

4.

— Հո՛, հո՛, մարալ յեզ, հո՛, հո՛, ջեյրան յեզ, հո՛ մարալ, հո՛ ջեյրան...

Փխրուն հողը ճեղքվում էր գութանի յերկաթե խոփից և վեց զույգ յեզներն ավելի առաջ եյին անցնում։ Վեց զույգ յեզ, վեց ընտանիք, վեց հոտաղ։ Մի գութան ու մի մաճկալ։ Լավ են ասում, վոր «գեղ կանգնի, գերան կկոտրի»։ Եսոր «Պոտոյենց արտն են վարում, եգուց Աթոյենցը, մյուս օրը մյուսինը և եդպես յոլա կգնան։



Մեկը հոռովել էր զլում, իսկ հետո վեց հոտաղ միասին, զիլ ձայնով հնչեցնում եյին.—

– Հոռովել հո՛...

Հետո մյուս հոտաղն էր հոռովելի խոսքերն ասում և նորից խումբը ձայնակցում էր։ Իսկ յերբ վոր լռում եյին բոլորը, Աթոն շարունակում էր յերգել։ Այս անգամ արդեն նա յերգում էր «դասագրքի հոռովելը».—

Ահա ծագեց կարմիր արև,
տաք և պայծառ է օրը,
դե քաշեցեք, սիրուն յեզներ,
առաջ տարեք արորը։

5.

Խավար էր գյուղը, բայց լույսն արդեն մտել է այնտեղ։ Առաջին կարմիր դրոշակը պարզվեց մի խրճիթի վրա և այդ խրճիթում գյուղխորհրդի գրասենյակը տեղավորվեց։

Յերկրորդ կարմիր դրոշակի տակ դպրոցն էր, իսկ յերրորդի տակ՝ խրճիթ-ընթերցարանը։

Մի քանի կրծքեր զարդարվեցին կարմիր նշաններով, վորոնց վրա քարտուղար Սերգոն մեծ դժվարությամբ կարդաց ռուսերեն КИМ տառերը։

Աթոն այդ յերեկո արտից տուն էր վերադառնում, սայլի վրա բարձած հասկի դեզի հետ։ Հայրը գալիս էր Աթոյի հետ և մի զույգ դեղին յեզները դանդաղ շարժվում եյին։ Աղբյուրի մոտ հանդիպեց Յեղոն։

— Աթո՛, արի, բան եմ ասում։

Աթոն ճիպոտը տվեց հորն ու մոտեցավ։

— Զե՞ս գալի ժողովի։

— Ի՞նչ ժողով։

— Կոմսոմոլի...

— Հա՜...

— Ըմ...

— Գնանք։

Գյուղում յերկար ժամանակ խոսում եյին կոմսոմոլի մասին։ Յերիտասարդներն անհամբեր սպասում եյին բջիջի կազմվելուն։ Հարևան գյուղում արդեն «կոմսոմոլ» կար, վորն ուներ տասնչորս անդամ։

— Մենք ինչո՞վ ենք պակաս, մտածում էր յուրաքանչյուր յերիտասարդ, վոր կոշտ ուներ իր ձեռքի վրա և վառքերին սովորական արևխ։

Եդ օրը լավ օր էր։ Շատ լավ օր էր։ Բջիջ կազմակերպվեց,

անդամներ ընդունեցին, հետո զեկուցում չեղավ, իսկ մի ամիս հետո արդեն ինչե՜ր չեղան... Դարի հողերից մինչև պուճուր քարափը, վանքի արտից մինչև լեն «շոշը» զրնգում էր կոմսոմոլի անունը։ Սիրողներ էլ չեղան, չսիրողներ էլ։ Ու զարմանալի բան։ Ով վոր կոմսոմոլին չէր սիրում, նա յոթ-ութ լծկան ուներ տանը և ուրիշ շատ բան ուներ։ Նրանց հին լեզվով «համփա» չեն ասում, իսկ նոր լեզվով «կուլակ»։

6.

Իմ յերկրի լեռներում առատ է արեգակի լույսը և լեռների լանջին տապ է լինում յուրաքանչյուր ցերեկ։

Վոսկեդեղին ճանապարհի վոսկեդեղին փոշու միջով քաղաք է գնում Աթոն։

Են յե՞րբ էր, մի տարի առա՞ջ էր թե մի դար առաջ, յերբ Աթոն գրվեց կոմսոմոլի մեջ ու շա՜տ քիչ բան գիտեր։ Են յե՞րբ էր, յերեք ամիս առա՞ջ էր, թե յերեք տարի առաջ, վոր Աթոյին ղրկեցին քաղաք կուսակցական դպրոց՝ սովորելու։ Են յե՞րբ էր, մի շաբաթ առա՞ջ էր, թե մի տարի առաջ, վոր Աթոն արձակուրդ առավ ու գնաց իրենց գյուղը։

Իսկ հիմա յոթնորյա արձակուրդը լրացել է, Աթոն նորից գնում է քա՜ղաք, կուսակցական դպրոց։

— Վորդիս մի կտոր հացի տեր ելավ, մտածում էր Աթոյի հայրը։

— Մարդամեջ մտավ, ասում եյին գյուղացիք։

— Ես ուսումն էլ մի ուրիշ տեսակ արև է, վոր լուսավորում է, մրմնջում էր ինքը՝ Աթոն։

Պայծառ է արևը իմ յերկրի պղնձագույն լեռների տաք լանջերին, բայց ավելի պայծառ է արևը կուսակցական դպրոցում։

Դրա մասին Աթոն շատ է մտածել։ Յերբ առաջին անգամ ներս մտավ դպրոցի դռներից, իրեն մի քիչ նեղված էր զգում։ Յերկու որ հետո ընտելացավ ու տեսավ, վոր բոլոր ընկերներն էլ իր պես կոշտ ձեռքեր ունեյին։ Մենակ թե նրանցից մի մասի ձեռքերը մուրճի կոթից եյին կոշտացել, մնացածներինը՝ մանգաղի ու մաճի։ Յեվ Աթոն զգաց, վոր նրանցից յուրաքանչյուրն եդ դպրոցից տանելու յե մի արև, պայծառ ու լուսավոր։

Հե՜յ գիտի Աթո, մեռած Աթո։ Եգուց մյուս որ, մեկ էլ տեսար, ավարտեցիր ու հայդե, դեպի գյուղ...։

7.

Ջա՛խկ, չո՛ւխկ, չա՛խկ, չո՛ւխկ... Վե՞ր տարվանից է մնացել այդ փայտե օրորոցը։ Աթոն էլ է նրա մեջ պառկել։ Նանեյին վոր հավատաս, Աթոյի հայրն էլ է այն օրորոցում անցկացրել իր որըծկեր ժամանակ։



Ջա՛խկ, չո՛ւխկ, չա՛խկ, չո՛ւխկ։ Իսկ հիմի՞ ով է անուշ քնել այդ հին օրորոցի մեջ։ Ո՞ւմ յերեխան է դա։ Աթոյի՞նը։ Այ գետինը մտած Աթո, դեռ յերեկ մի մատ յերեխա եյիր, իսկ հիմա դու ինքդ յերեխա ունեցար։

Նանեն օրորոցի մոտ նստած օրորում է Կիմային։ Յերբեմն նրա դեմքի պառավված խորշոմները յետ են գնում ու նա իր թոռան հանգստի համար յերգում է մի հի՜ն, հի՜ն յերգ։ Ջա՛խկ, չո՛ւխկ, նորից օրորվում է օրորոցը, չխկչխկում են օրորոցի փայտից կախված կոճերը և յերեխան քնում է հանգիստ։

Յերեխի մայրը, կոմյերիտուհի Սիրուշը, մի շորի կտոր գլխին կապած, աշխատում է կաթնարտելում։ Յերբ յերեկոյան դաշտից տուն յեկան կովերը, նա նստեց փոքրիկ աթոռակի վրա ու սկսեց կթել նրանց։ Նրա սպիտակ մատների հպումից դուրս էր ցայտում սպիտակ կաթը ու հոսում դույլի մեջ, այնտեղ սպիտակ պղպջակներ առաջացնելով։

Հանկարծ դանդաղացան Սիրուշի մատների հպումները, նա ուղղվեց աթոռակի վրա, ձեռքը դեմ տվեց ծնոտին ու սկսեց մտածել, դեմքի վրա խաղացնելով հազիվ նշմարելի մի ժպիտ։

Կիմա...

Հոկտեմբերիկ Կիմա։

Պիոներ Կիմա։

Կոմսոմոլիստ Կիմա։

Կոմունիստ Կիմա...

Կովը խլշկոտած նայում էր։ Կողքի մսուրի մոտից լսվեց մի ծիծաղի ձայն ու յերևաց Մանիշակը։

Ա՛ղջի, կովը խի՞ չես կթում։

Սիրուշը բարձր ծիծաղեց ու շարունակեց իր գործը։

8.

Ջա՛խկ, չո՛ւխկ, չա՛խկ, չո՛ւխկ, քնի՛ր, Կի՛մա։ Քու հայրդ, Աթոն, աշխատում է գավառում։ Նա կուսակցական դպրոցն ավարտել է ու հիմա եդ բոլոր գյուղերում ցրում է իր բերած արևը, հուրհրան, պայծառ արևը։

Խրճիթների առաստաղների սևացած գերանների տակ ինչքա՜ն մեծ ուժ կա ամբարված... Մրոտ առաստաղների տակ վաղվա կառուցողներն ու ստեղծագործողները դեռ վեգ են խաղում, կամ կրծոտում են բոքոնի կտորները։

Աթոն տուն է վերադառնում։ Ցերեկվա արևը, ամռան արևը այրում էր շրջապատն իր տապով և փռում իր առատ լույսը։

Էս ճանապարհով նա շատ է անցել։ Մի ժամանակ ուրիշ կերպ, իսկ հիմա ուրիշ։

Մի ժամանակ նա իր հոգում ուներ մի արև, լուսավոր ու տաք, իսկ հիմա յերկու արև ունի։ Մեկն էն, որ վառվում է յերկնքում, մյուսն էն արևը, որ Աթոյի նման շատերը ձեռք բերեցին հետո։ Մեկը մյուսից ավելի լուսավոր, ավելի տաք...

Պայծառ...

Աթոյենց տան դուռը ճռռաց, ժպտերես ներս մտավ կուսակցական Աթոն։

Դրսում փայլում էր արևը, հուրհրան արևը...

---

— Ո՞րն էր այն «մյուս արևը», որ ձեռք բերեցին Աթոն ու մյուսները, յեվ ի՞նչը հնարավորություն տվեց ձեռք բերելու այդ «արևը»:
— Ի՞նչ է նշանակում «К И М», ի՞նչ գիտեք դուք դրա մասին:
— Ինչի՞ց է առաջ յեկել «Կիմա» անունը:

---

— Դո՞ւր յեկավ ձեզ այս պատմվածքի հեղինակի պատմելու յեղանակը:— Ինչո՞ւ:



# ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

## ԾԱՏՈՒՆ ՏՂԱՆ

Նա հայր ուներ, իսկ հայրը՝ վոչխարներ։ Յեվ յերբ հայրը մեռավ, գերեզմանի փոսը ծածկելիս իր մտքում նա հոր թողած վոչխարների համրանքն էր անում։

Գյուղի քահանան նրան Աբրահամ էր կնքել, մուծել մատյանի մեջ, բայց գյուղը նրան ավելորդ անուն էր տվել՝ լոշ՝ կախ ընկած ականջների համար։

Յեվ յերբ հայրը մեռավ (իսկ հայրը վոչխարատեր Ծատին էր), մեռելահացն ուտելիս մի ալևոր բարեմաղթեց լոշ ականջի տավարին ու ոջախին առատություն և դառնալով նրան ասաց.

— Ծատու տղա, նզովյալ լինես, յեթե շվաքդ անպակաս անես էս ոջախին։

Այն օրից էլ լոշ ականջը դարձավ Ծատուն տղա, ավազանի անունը հերվա ձյունի պես հալվեց։

Յեվ յերբ մի անգամ էլ ձյունը հալվեց, գարնանամուտին վոչխարը սարը քշելիս Ծատուն տղան հորից ստացած վոչխարը քսանով ավելացած տեսավ։

Հետո միքանի տարի անց, յերբ Ծատուն տղի բեղերն այնքան էյին մեծացել, վոր ապուր ուտելիս ձավարի հատիկներ էյին մնում բեղերի արանքում, միքանի տարի հետո Ծատուն տղան այնքան վոչխար ուներ, վոր յերեք չոբան հերիք չեր անում։

Հոգսը սարում արածող վոչխարն էր. իրեն ինչ, թե կտուրի գերանը ճաքել է, պառավ մայրը գլխին շալ չունի գցելու։ Տանն իր կամքը կար միայն, իր խոսքը՝ անգիր որենք տան անդամների համար, վորոնցից մեկը, պառավ նանին ճախարակի մոտ էր դարդահալ լինում, չոբանին չուխացու մանում, մյուսը՝ յեփում, կարում, փոքրերի հոգսը քաշում, ծծկերին ծիծ տալիս և էլի քնում Ծատուն տղի հետ մի վերմակի տակ, ծխից սևացած, ճաքճքած գերաններով խրճիթում։

Յերազում ել սարում արածող վոչխարի հետն եր․ գայլն եր վրա տալիս՝ ինքը քնի մեջ մռնչում եր, ասես բուկն են խեղդում, մին ել այնպես եր թվում, թե վոչխարները վոսկի չեն դառնում, դեղին վոսկիներ՝ սարի կանաչի վրա շաղ տված, ինչպես թոնրի մոխրում պեծին տվող պոզեր։

Ամեն ինչ կյանքում նրան վոչխար եր թվում՝ յուղոտ դմակով, փափուկ դմակով։ Սարում վոչխարը խուզելիս յերբ բրդով լի պարկերը դարսում եյին իրար վրա, չոբանի ձեռքի մկրատը նրան աշխարհի միակ գործիքն եր թվում, վորով մարդ կարող ե աշխարհներ գրավել, ծովի ավազի համրանքով վոսկի ունենալ։

Յերբ տերտերը յեկեղեցում քարոզ եր տալիս, ասում, թե բոլորը մի հոտ են յեկեղեցու համար, թե կա յերկնային մի հովիվ, Ծատուն տղան իսկույն մտքով սարն եր թռչում, ուր կախ ընկած դմակով վոչխարներն եյին արածում, չաղանում, դառնում դեղին վոսկի։

Հեղափոխությունն ել նա հասկացավ յուրատեսակ ձևով․ թագավորը հովիվն եր, ժողովուրդը հոտը։ Մի մեծ մկրատ Մոսկվայից մինչև ինքը խուզում եր ժողովրդին։

Գյուղում զրույց անելիս նա այդպես ել ասում եր, թե գայլերը գալու յեն անչոբան մնացած վոչխարն ուտեն, վոր առաջ յուղ ու կաթ եր հոսում Մոսկովից մինչև ինքը, յերբ մեծ մկրատը կար։

Ամռան վերջն եր։ Թուխպը մեկ-մեկ նստում եր սարին, շաղոտում եր սարի կանաչը, թացանում եր վոչխարի բուրդը։

Թուխպ կար սարում, յերբ Ծատուն տղան վոչխարի մոտ գնաց։ Չոբանները յեկան, շները՝ գայլաբոյ փնգստացին, բայց Ծատուն տղան ունքերն ել իրար չտվավ։ Բարձրացավ մի քարի գլուխ, ձեն տվավ չոբանին, վոր վոչխարը քշեն քարի տակով։ Նեղվածք եր, դժար կապ, վոչխարը մեկ-մեկ եր անցնում, գլուխը կախ, մանր-մանր քայլերով։ Յեվ յերբ վերջին կաղ վոչխարն անցավ, Ծատուն տղայի շրթունքները բեղերի տակ շարժվեցին։

— Յերեք հայրուրից չորսը պակաս։

Ասեց և հեռացող վոչխարի յետևից նայեց մի պահ, չոբանին կանչեց։

— Ծեգին վոչխարը քշիր քաղաք։

Չոբանն ուզեց հարց տալ, բայց բերանը բաց ել մնաց։ Ծատուն տղան ձիու գլուխը գյուղի կողմն եր դարձրել։

Պառավ Նանն ել զարմացավ, յերբ իմացավ, թե տղան առավոտ ծեգին քաղաք ե գնում։ Մեկ ուզեց խնդրի մի գտակ, մեկ տազ արեց։ Ծատուն տղայի աչքերն այնպես պեծին եյին տալիս ունքերի տակ, ասես յերկու թեժ ածուխ լինեյին։ Յերբ մութ յեղավ, քնեցին, կինը կամացուկ խնդրեց շապկացու, սիրտ արեց, մոտեցավ մեջքին, բայց Ծատուն տղան յերեսը շուռ տվեց, մյուս կողքի վրա պառկեց։ Շուռ յեկավ, բարկացած ասեց.

— Լավ, սատկիլ չես...

Ծեգին գնաց, յերկու որ հետո յեկավ։ Ծատուն տղան ել վոչխարատեր չեր։ Վոչխարը ծախել եր քաղաքում։ Այն, ինչ յերազում եր տեսել՝ դեղին վոսկիները, հիմա գնգում եր նրա գրպանում։

Չոբանների ձեռքը մի բան դրեց, չոբանները հեռացան, շներն ել՝ պոչերը կախ, նրանց յետևից, դեպի սարերը թխպոտ։

Յեվ յերբ յերկու որ հետո յեկավ, Ծատուն տղան իր հետ քաղաքից տասը ձիու բեռ ապրանք բերեց՝ ճոթ, սապոն, նալ ու մեխ, շաքար։

Մյուս որը Ծատուն տղան գեղում դուքան ուներ, տան մոտ, մարագի հին շենքում։ Առաջ դժվար թվաց արշին բռնելը, գրվանքա շաքարին աչքը վարժ չեր, ճոթ ու կտորի թոփը բաց անել չեր իմանում, բայց հետո սովորեց։

Նույնիսկ գործը դուր յեկավ։ Հանգիստ նստում եր խանութում, նալ ու մեխ եր ծախում և ամեն իրիկուն մտքում հաշիվ անում, թե ինչքան ոգուտ ունի։ Ելի առաջվա պես եր մտածում․ գյուղացիք, վոր ապրանք են առնում իր խանութից, գյուղացիք նրա աչքում ելի վոչխար եյին, աղի վրա վազող վոչխար, վոր թողնում ե կթես, խուզես ։

Հինգ ամիս հետո գյուղում շատ յերդիկի տակ եյին խոսում իրիկվա հացին.

— Ծատուն տղան պարտքն ուզում ա, եգուց մի փութ պանիր տանք պարտքի դիմաց։

— Եսոր ելի ասեց են շաքարի համար...

Գյուղը հեռու, յոթը սարի քամակին, ճամպեն՝ կածան, անապահով, տարիները՝ խռով, ամեն տեղ յերկյուղ, քաղաքում՝ խանութները փակ, ծածուկ պահեստներում՝ գաղտնի վաճառք հին ծանոթին։

Իր վոչխարի համրանքից ավելի լավ գիտեր այդ Ծատուն տղան։ Ապրանքը թանգացնում եր ժամեժամ, գանգատվում, թե վնաս ե անում, ել ապրանք չկա։ Շաքարը հիվանդի դեղ եր, վոսկու հավասար։

— Առ տար, ել շաքար չես տեսնելու, — ասում եր Ծատուն տղան իր հարևանին, վոր հոգեպահուստ եր Ծատուն տղին պահ տալիս։ Ծատուն տղան մեծացավ, ուռեց, դարձավ անվանի, ազդեցիկ։

Ձյունի սպիտակ փաթիլները թրթռում եյին պաղ ոդի մեջ․ պտույտներ անում, կամացուկ իջնում, դարսվում իրար վրա։

Թարմ ձյունի վրայով քայլում եյին յերեք հոգի դեպի հեռու ձորի գյուղը։ Կարմիր բանակը քաղաք եր մտել, և լուրը թռել-հասել եր գյուղին։

Յերեք հոգին գյուղ հասան իրիկվա մութին։ Յեկան, հավաքվեցին ծանոթ գյուղացիք, ազգ ու բարեկամ։

Մյուս որը գյուղում հեղկոմ կար, յեռուզեռ կար, խոսք ու զրույց։ Յերբ բաց արեցին Ծատուն տղի խանութը, միջին միքանի թոփ քաթան կար, լամպի չորս շուշա, միքիչ ել մեխ։ Ծատուն տղին կանչեցին։

— Չկա, եդ ա մնացել, տարեք…

Խուզարկեցին, բան չգտան։ Հեղկոմը առաջին նիստում վորոշեց Ծատուն տղի քաթանը գյուղի աղքատներին բաժանել։

Ձյունը հալվեց, սարերը կանաչին տվին, բայց կանաչ սարում Ծատուն տղան ել վոչխար չուներ, խանութումն ել խոտ եր դարսում։

Հողը տաքացավ, գութանները դուրս արին։ Ծատուն տղան ել վար գնաց։

Վաղուց, շատ վաղուց եր մաճ չեր բռնել։ Մոտիկացավ մաճին, ուժը գութանին տվեց, մինչև մի ակոս ծրելը ձեռքերը թուլացան, նստեց գետնին։

— Քոնը արշինն ա, Ծատուն տղա, — ձեն տվեց քշողներից մեկը, իջավ լծից, մաճը բռնեց։

Ծատուն տղան հանգստացավ, միքիչ ել մնաց և, դեռ գութանը չարձակած, տուն յեկավ։ Մյուս որը մաճկալը Ծատուն տղից մի որավարի վարձն եր ուզում։

— Ախ, ել չունեմ, յերեխաներիցս եմ կտրում, — ասաց Ծատուն տղան, խեղճանալով։

Բայց Ծատուն տղան բեռը բռնել եր առաջ, յերբ ճոթ կար խանութում, նալ ու մեխ և շաքար։ Պահած փող ուներ, մառանում յուղ ու պանիր կար։

Մի տարի յել, և քաղաքում Ծատուն տղի միքանի հին ծանոթները կողպած խանութները բաց արին։ Ծատուն տղան պանիր ու յուղ տարավ քաղաք, հողի կճուճում պահած վոսկին ել հանեց, խանութի խոտը մաքրեց, կարգի բերեց։

Ելի առաջվա խանութում եր Ծատուն տղան միքանի թոփ կտոր դարսել, սապոն, աղ, լուցկի։ Քաղաքում ծանոթներ ուներ հին, օգնել եյին, ապրանք տվել։

Ծատուն տղան ելի դինջ նստեց խանութում, արշինը ձեռքն առավ, ապառիկի հին դավթարում նոր յերես բաց արեց։



Գյուղը հեռու՝ ճամպան կածան, ուժը պակաս։ Ջահիլներն աղմկեցին, նամուսի ընկան. ով եր՝ պատմեց կոոպերատիվի մասին։

Կես գիշեր եր, յերբ ցրվեցին տները։ Յեվ դեռ յերկար ժամանակ մտածում եյին կոոպերատիվի մասին, Ծատուն տղի նոր խանութի մասին։

Ծատուն տղան լսեց, վոր ուզում են ջուրն ել առաջվա առվով չկապեն։ Մի անգամ ել մտքում կրկնեց այն, ինչ հազար անգամ եր ասել.

-- Թե սրանք մնան, վերջս լավ չի. .

Հիշեց միքանի թոփ կտավը, լամպի շուշան, նալ ու մեխը, վոր տարել եյին, խլել իրենից, միտն յեկավ մաճկալի խոսքը, թե՝

— Ծատուն տղա, քո բանը արշինն ա…

*
* *

Նոյեմբերի արև որ եր, պայծառ, դուրեկան աշնան որ։

Քաղաքում նոյեմբերի արևի տակ պսպղում եյին նվագափողերը պղնձե, լայն փողոցներում ծովացել եր բազմությունը, ալեկոծ դրոշները վեր, բարձր։ Թնդում եր քայլերգը, աղմուկ կար, յերգ ու ուռռա, մեկը պատշգամբից ձայնով գիլ մեր վերելքն եր պատմում։

Արև եր և հեռու գյուղում, աշնան դուրեկան որ։ Դրոշներ կային՝ փայտի ծայրին հագցրած. գույնզգույն շորերով հարս և աղջիկ կար, բրդի չուխավոր շինական։ Դհոլը գմբում եր, զուռնան փչում եր գիլ։

Շատերը խոսեցին. ամեն մարդ իր միտքն եր ասում, միտքը հյուսում յուրահատուկ, հետո մեկն ել բարձրացավ քարի վրա, խոսեց, թե՝

— Ընկերներ, մենք կապերատիվի կողմից շատ յետ ենք մնացել, ես ձորերում մթին ա։ Ծատուն տղան ելի կենդանացել ա։ Մեզ պետք ա մի կապերատիվ հիմնենք հենց ես տոնին, եստեղ։

Խոսեց, հետո դարձավ բազմությանը, թե՝

— Կապերատիվ սիրողը թող մոտենա, գրվի եստեղ։

Մոտեցան, առաջ քաշվելով վարանոտ, հետո սրտալի։ Գալիս եյին գրվում, փայը վճարում։

Նա, վոր խոսել եր, շուտ-շուտ կանչում եր տեղից.

— Շեն կենա մեր կապերատիվը…

Ծատուն տղան ել եր լսում նրան, տեսնում, թե ինչպես են գովում։ Մեծ մասն իրեն պարտ եյին՝ լավ եր ճանաչում։

Կանգնել եր միքիչ հեռու, նայում եր նրանց։ Կարծես հեղեղ է, գարնան վարար հեղեղ, իսկ ինքը մի չոր տաշեղ հեղեղի բերանում։

Ծատուն տղի փափախի տակ մի միտք կար միայն.

— Սրանք վոր կան, վերջս լավ չի…

Այնքա՜ն հուսահատություն եր կաթում Ծատուն տղի լոշ ակնչներից:

---

— Ո՞վ եր «Ծատուն» տղան:
— Ի՞նչ դեր եր խաղում նա գյուղում անցյալում:
— Տվեցեք նրա համառոտ բնութագիրը:
— Բնորոշեցեք նրա վերաբերմունքը դեպի հեղափոխությունը—խորհրդային իշխանությունը:
— Ի՞նչ միջոցով ե ձգտում Ծատուն տղան մեր որով վերականգնել իր նախկին դիրքն ու ազդեցությունը գյուղում:
— Ի՞նչն ե խանգարում նրան հասնելու իր այդ նպատակին:

---

— Համակրո՞ւմ ե արդյոք հեղինակը Ծատուն տղին, թե վոչ:
— Ուղղակի՞, թե անուղղակի միջոցներով ե ցույց տալիս հեղինակն իր վերաբերմունքը դեպի Ծատուն տղան:
— Ինչո՞ւ չե հեղինակը նկարագրում Ծատուն տղի բնավորության ու նրա արարքների վատ կողմերը՝ նկարագրությունն ավելի ցայտուն դարձնելու համա՞ր, թե դրանով նա բնորոշում ե յեվ իր վերաբերմունքը դեպի նա:

---

## «ՏՐԱԽՏՈՐԻ ՄԱՇԻՆ»

Գյուղը հեռվից քառակույտերի յե նման: Աթարի սրածայր կիտուկներն են, խոտի դեղնած դեզերը, մեկ ել յերդիկներից բարձրացող ծխի քուլաները, վորոնք անցորդին իմաց են տալիս, թե այդտեղ գյուղ կա, մարդիկ են ապրում:

Շատ հին անցյալ ունի գյուղը: Տների պատերը մամռոտել են, գերեզմանատան քարերը կիսով չափ թաղվել են հողի մեջ, չեչոտել՝ արևից, անձրևից: Ինչե՜ր չի անցել գյուղի գլխով: Քանի՜ դարեր քարվանի պես յեկել են, անցել ու հետք թողել: Հալածել են գյուղին, ավերել, հրդեհել միքանի անգամ, բայց ելի հավաքվել են, քարերը դարսել իրար վրա, հնացած գերանները շարել և պատըսպարվել նրանց տակ ու շատացել՝ իրենք ել, գոմի տավարն ել:

Հեռվից այդպես ե թվում: Ու յեթե տեսել ես գյուղը տարիներ առաջ, նայում ես հիմա յել և մտածում, վոր գյուղում վոչինչ չի փոխվել, դեռ ավելի յեն հնացել գուցե տները, քարերն ավելի մամռոտել:

Այդպես չե սակայն:

Գյուղի ներսում, մգլոտած, ծխից սևացած պատերով խրճիթներում ամեն ինչ տակն ու վրա յե յեղել: Անդարձ մեռնում ե հինը, ու նորը գարնան կանաչի պես հերվա դեղնած ցողունների արանքից ծլում ե փարթամորեն:

Ավելի շատ գիտեն, ավելի բանիմաց են: Չինաստանով ել են հետաքրքրվում, հացի գնով ել, կոոպերատիվի հաջողությամբ ել: Յերբեմնի աղքատը, վոր անխոս հարս եր ունևորի առաջ, հիմա համարձակ նրա յերեսին ե տալիս.

— Են անցավ, գիտեցածդ մոռացիր…

Կոմսոմոլը մերվում ե գյուղի հետ, բջիջը գնալով ուժեղանում ե, հիմա ավելի շատ են թերթ կարդում, ժողովներն ավելի բազմամարդ են, քան առաջ, յերբ չարչի կար, քյոխվա ու պրիստավ:

* * *

Գյուղ ենք գնում ընկերոջս հետ: Նոր գործիքներ ենք ուղարկել՝ սերմացրիչ, շարքացան, քամհար: Գնում ենք՝ ցույց տալու, աշխատեցնելու:

Արևը թեքվել ե արդեն, իրիկնանում ե: Հնձած արտերում խրձերը դեռ չեն հավաքել: Մի մեղմ խաղաղություն կա դաշտերում, վոր մերկացել են ցորենի դեղին հասկերից: Մարդ չկա, և խաղաղության հետ ամայություն ել կա դաշտերում: Ծնծղուկներն են միայն, վոր խմբերով թռչկոտում են հնձած արտերում:

— Ինչքա՜ն դժվար եր առաջ գյուղում աշխատել,—ասում ե ընկերս, վոր քսան տարի անընդհատ, իր գործին հավատարիմ, շրջել ե մեր գյուղերում, տարիներ առաջ նոր ագրո-խոսք ասել: Ծերացել ե այդ գործում, ճերմակել են մազերը, բայց վոտքերում դեռ ուժ ունի աշխատելու:

— Առաջին անգամ ես գյուղը յես եմ յեկել: Լավ հիշում եմ. խոսեցի, ցույց տվեցի նոր գործիքներ, բայց չուզեցին ձեռք բերել: Միքանի «դասախոսներ» խանգարեցին, նույնիսկ շարքացանը տնազ արին, ասեցին, թե մեր հողերում եդ մաշինը վոր յերևա, մեր սերմը կկտրի:

Պատմում ե, թե ինչպես ժողովից հետո քնելու յել տեղ չեն տվել, հուսահատ ու փոշման ուզել ե քաղաք վերադառնալ: Քյոխվան մի եշ ե տալիս, խուրջինը գցում ե վրան և վոտով, եշին բզելով գյուղից հեռանում:

— Ինքս ինձ վրա բարկանում եյի, թոնթորում, նզովում, թե ինչու ուրիշ արհեստ չսովորեցի…

Կես ճանապարհին իշատերը նրա յետևից ե հասնում, եշը յետ տալիս, խուրջինն ել, իրեն ել թողնում կիսաճանապարհին:

— Հետո իմացա, վոր գյուղում նրան ասել եյին, թե եշը

սատկելու չե, յեթե յես եմ տարել։ Տեսա ել ճար չկա, խուրջինն ուսս առա և ճանապարհս շարունակեցի։ Կեսգիշերին բեզարած տուն հասա։

— Իսկ հիմա թամքած ձիով ենք գնում. իրենք են մեզ կանչել…

* * *

Գյուղի վերևում նոր շինած վարձակայանի առաջ գյուղացիք են հավաքվել։ Ընդարձակ կալում մի տեղ քամհարն ե աշխատում, քամած ցորենը սերմազտիչի մեջ են լցնում, և մեքենայի ներքևից թափում ե սերմացուն ջոկ, հավի կուտը ջոկ, ուտելու ցորենն ել ջոկ։

Կայանի բաց դռներից յերևում են շարքացան մեքենաները, վոր պսպղին են տալիս։ Նոր ձևի գութաններ կան, յերկաթե փոցխեր և ուրիշ մեքենաներ։

Աղմկում ե քամհարը. փոշի չե հանում, մեկը փոշու մեջ անընդհատ թիակն ե բարձրացնում, հարդախառն ցորենը լցնում մեքենայի մեջ։ Իսկ տրիերն ել գոգռում ե, վոսկեհատ ցորենը թափում պարկերի մեջ։

Միքանի որ ե, վոր բացվել ե կայանը։ Բոլոր գործիքները նոր են ստացված. վարձակայանն ել նոր ե շինված։ Գյուղի նեղլիկ, ծուռումուռ փողոցները, ցածր դռները վոչ մի հարմարություն չունեն շարքացան կամ մի ուրիշ մեքենա տեղավորելու, փոխադրելու գյուղամեջ։ Ստիպված կայանը շինել են գյուղի գլխին, հանդ տանող ճանապարհի բերանին։

Հավաքված են գյուղացիք, նայում են զարմացած։ Վոմանք կռանում են, տակից նայում կամ վիզը յերկարացնում վերից նայելու, տեսնեն, թե միջին ինչ կա, վոր այդպես լավ մաքրում ե։

—Մեր կնանոնց կռները դինջացան, խախմալները կոտր ընկան, —ասում ե մեկը։

Մյուսը հարցնում ե, թե՝

— Ես «ագրանովը» Ռուսեթի հողում կարա՞ն շինեն։

Գյուղատնտեսական մեքենաներին շատերն են «ագրանով» ասում։ Լեզուն դեռ պատ չի գալիս, վոր շարքացան ասի, զտիչ, քամհար։

— Ես «ագրանովը» սերմ ա զցում, ես մինն ել ջոկում ա, — իրար բացատրում են։

Նայում եմ ընկերոջս։ Թիկն ե տվել պատին և անշարժ նայում ե նրանց, վորոնք տարիներ առաջ եշ ել չտվին, հիմա խռնվել են մեքենաների շուրջը, ինչպես երեխաները նոր խաղալիք տեսնելիս։



Մայր մտնող արևի շողերի հետ յերանության մի ժպիտ խաղում եր նրա հոգնած, տարիների կնճիռներով ակոսած դեմքին։

* * *

— Ա խալխը, հավատալս չի գալիս, թե ես իմ ցորենն ա եսպես խտակ։

Զտիչը դադարում ե։ Մաքրած ցորենի մեջ տասնյակ ձեռքեր են մտնում, մի-մի բուռ առնում և մատներով խառնում, տեսնեն ինչպես ե մաքրել։ Ցորենի տերն ե, վոր զարմացել ե լավ սերմացու ստանալուց։

— Հլա շատ կզարմանաս, Մուքի ամի. —պատասխանում ե մի ուրիշը, վոր նախքան այդ ներքին պարծանքով պատմում եր, թե ինքն ինչ մաշիններ ե տեսել Գերմանու պլենում։ Յերեք տարի աշխատել ե ինչ-վոր տնտեսությունում, ծանոթ ե մեքենաներին։

— Հմի եդ ինձ համար վոնց վոր խաղ ու պար. —վերջացնում ե նա իր պատմությունը Գերմանու պլենում տեսածների մասին։

— Մուքի ամի, աստված կարա՞ մեղավորին արդարից եսպես ջոկի. —ձայնում ե մի ջահել, և կողքին կանգնած մի ուրիշ ջահել պատասխանում ե.

— Աստված եդ հունարը չունի։

Իսկ Մուքի ապերը զտած ցորենը շալակում ե, դանդաղ քայլերով հեռանում գյուղի նեղլիկ փողոցներով։

Գզիրը կտուրներից ձեն ե տալիս, վոր ժողով կա, ու հետո յել, թե՝ մի վոչխար ե կորել հանդում, տեսնողը գա իմաց տա խորհրդին։

Ժողովի չեն գալիս, բայց բոլորի բերանում ել մի խոսք կա միայն.

«Ագրանովի» մաշինը։

Գալիս են մեկ-մեկ, նստոտում բակի քարերին։ Գյուղխորհրդի նախագահը մինչև ժողովի բացելը միքանի գործեր ե քննում, գանգատներ ընդունում։

Մանր գործեր են. մեկի վոչխարն ե ընկել մյուսի արտը, կամ հերվա ցորենից տալացուք կա, վոր դեռ չի ստացել։ Գործերը քննվում են շատ արագ, բանավոր գանգատի հիման վրա. բոլորին ել հայտնի չե, թե ինչ վորոշում պիտի տա խորհուրդը։ Գյուղական ադաթն ե՝ բանավոր մի որենսգիրք առանց մի հոդվածի, առանց հատվածի։

Գործերը պրծան։ Արդեն բավական բազմություն ե հավաքվել։

— Հա՛, ընկերներ, դե կանգնածը մի նստի հալա. —ասում ե նախագահը։

-- Եսորվա ժողովում մին որակարգ ունենք, բոլորիս ել սըր-տակից բան ա...

Յեվ մի քանի խոսք ե ասում այն մասին, թե ինչքան դժվար ե գյուղում յեզներով վարուցանք անել, որինակ բերում, թե մի որ վարելու համար մի յեզան վրա քանի ճիպոտ են ջարդում, և հան-կարծ խոսքը ընդհատելով՝ դառնում ե մեկին, վկա կանչում.

— Քո ալա յեզը վար անելիս սատկեց վո՞չ...

Նա յել ասում ե.

— Բա սատկեց վո՛չ:

Յեվ նա խոսքը շարունակում ե, ուրիշ որինակ բերում՝ ապա-ցուցելու, վոր յեզներով վարուցանքը ձեռնտու չի:

— Պետք ա մենք տրախտորի մաշին բերենք:

Այդ ասելիս մի թեթև շարժում ե նկատվում ունկնդիրների մեջ, վորոնց դեմքերը կիսամութի մեջ պարզ չեն յերևում: Թութու-նի կրակներն են, վոր պսպղին են տալիս:

Ընկերս ե խոսում տրակտորի առավելությունների մասին, բացատրում ե, վոր հարկավոր ե ընկերություն կազմել, ընկերու-թյան կանոնադրությունն ե կարդում:

— Մեր հողերում բան կանի՞ եդ տրախտորի մաշինը,—հար-ցնում ե մեկը, մյուսն ել, թե՝

— Մաշինն առանց յեզան վո՞նց ա շուռ տալու ծրելիս...

Ելի այն գյուղացին ե, վոր Գերմանու պլենում հազար հրաշք ե տեսել. պատմում ե հինգ տարի, և դեռ չի վերջանում տուտը տեսածի: Նա յել մի կողմից ե ավելացնում տրակտորի առավել կող-մերի մասին:

— Մաշին ա ելի, մեծ մաշին. խոփերը յեռնան քաշ տալիս: Մին որում հինգ որավար ցել կանի:

— Հինգ որավա՞ր... եդ հո հրաշք ա:

Գնի մասին են հարցնում, ուզում են իմանալ, թե՝

— Եդ տրախտորի մաշինի լեզուն հասկացող կճարվի՞ գեղում:

Սկսում են թեկնածուների անուններ տալ, թե ով կարող ե տրակտորով վարել: Գյուղը տասնյակ շոֆֆեր ու մեխանիկ ունի Բագվում, պետք ե մեկին գրել, վոր տրակտորի լեզուն սովորի և գյուղ գա:

— Դե ինչ եք ասում, այ ժողովուրդ.—ասում ե նախագահը. --են «ագրանովի» մաշինին ել հավան չեյիք, ասում եյիք, թե մեր հողերում կարալ չի աշխատի:

— Ինչ պիտի ասենք: Վորոշ դնենք. մարդս մի յեզ տա տրախ-տորի մաշինը բերենք... Յես իմ ագին ծաղիկ յեզը ես գլխից տա-



լիս եմ եդ նպատակին, - ասում ե մեկը, տեղից կանգնում և սպա-սողական դիրքով նայում, թե մյուսներն ինչ կասեն:

Քսանից ավելի գյուղացիք համաձայնվում են իրենց յեզները տալ, տրակտոր առնել:

Բայց ժողովը վորոշում ե ցորեն հավաքել, ընկերության ամեն մի անդամից հինգ փութ ցորեն: Հենց տեղնուտեղը ցուցակ են ա-նում, գրվում են ներկաները, բացակաների կողմից էլ են յերաշ-խավորում:

Ուշ ե արդեն: Գյուղացիք ցրվում են, հարևանը հարևանի հետ մինչև տուն խոսում ե տրախտորի մաշինի մասին:

Մի խումբ յերիտասարդներ շրջապատել են մեզ, ուզում են ավելին իմանալ, անհամբեր սպասում են տրակտորին:

— Մի պրծնենք ես չարչարանքից, են ժամանակ տես գեղում ապրելն ինչքան կհեշտանա,—ասում ե նախագահը, վոր մինչև այդ ցորենի և անդամների քանակն եր հաշվում:

Յեվ քանի՛ ուղեղներ մգլոտած, ծխից սևացած խրճիթներում այդ գիշեր միտք արին քաղաքի տրակտորի մասին:

---

— Ի՞նչ փաստեր ե բերում հեղինակը ցույց տալու համար գյուղի արթնացումը:

— Ի՞նչու յեր քյոխվան տարիներ առաջ գյուղից դուրս արել հեղինակի ընկերոջը:

— Համեմատեցեք քյոխվայի վերաբերմունքը դեպի «ագրանովը» չքավոր գյուղացիների վերաբերմունքի հետ ներկայումս:

Փոխվե՞լ ե արդյոք նախկին քյոխվաների վերաբերմունքը դեպի «ագրանով»-ները յեվ յեթե վոչ՝ ի՞նչն ե խանգարում նրանց պայքարելու դրանց դեմ:

...............

— Ակսելի այս յերկու պատմվածքների հիման վրա փորձեցեք բնորոշել նրա գրելաձևի բնորոշ կողմերը:

# ԱՐԱՔՍ

## ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ

Խասիկ. այդպես էին կանչում կապուտաչք, շիկահեր աղջկան։ Նա հազիվ լիներ տասնյոթ տարեկան. նիհար կազմվածքով, բարձրահասակ, գունատ էր, աչքերի տակ խոր փոսեր էին իջել։ Բայց կապույտ թաշկինակի տակից շիկագույն մազերը փռվում էին ճակատին։

Աշխատելիս աչքերը հուրհրում էին, այտերը շիկնում. այդ ժամանակ առանց հոգնելու կարելի չէր յերկար նայել Խասիկի գեղեցիկ դեմքին։

Նրան հանգիստ չէյիք տեսնի. ջուր էր կրում, կար ու կարկատան անում Ղափանենց տան համար։

Լ. գյուղում Ղափանենք հարուստ տուն էին. հինգ տարի չէր Խասիկը նրանց մոտ էր։ Տասներկու տարեկան հասակից մնացել էր վորբ, Ղափանենք վերցրել էին իրենց մոտ «տանու աղջիկ» ու անխնա բանեցնում էին։

Ղափանենց Հեքոն որ չէր տալիս Խասիկին։

— Աղջի՛, էլի անբանի պես վեր ընկա՞ր,—ճչում էր, աչքը խեթում, բերանը փրփրած ծառս լինում Խասիկի վրա։

Աղջիկը շփոթվում էր, մինչև ականջները կարմրում։

— Ախր, Հեքո՛ քուրիկ, գործ եմ անում, բա չէ՞ս...

կնճռոտվում էր Հեքոն.

— Լա՛վ, լա՛վ, վոր ջուղաբ չտաս՝ կմեռնես։

— Թո՛ւհ քու արուռին։ Դեհ շո՛ւտ, շո՛ւտ գնա ջուր բեր, բան արա, պարապ հաց ուտելու տարի չի, մարդ իրա գլուխն ա մոլորել։

Խասիկն աչքերը ցած էր գցում, ձեռքերը թույլ-թույլ բաց թողնում ու միքանի րոպե անշարժ կանգնում. ապա մի ներքին դրժգոհությամբ, շուրթերը կրծելով՝ անցնում էր այս կամ այն գործին։

Բակն ավլելիս Խասիկը հիշեց անցած որվա կարմրադրոշ փողոցներն ու են մեծ մեյդանի միտինգը։ Կանգ առավ աղջիկն, աչքերը փայլատակելով, ասես տեսնում էր կրակոտ ճառախոսին. հնչում էր կեցցեն։ Խասիկը շշնջաց «կեցցե» ու շուրջը նայեց։ Թվաց նրան, թե Ալեքը, Սաքոն, Պետրոսը բռթեցին կողքից—«գնանք»... Ավելը ցած ընկավ ձեռքից։ Մեջքը բարձրացրեց ու յերկար նայեց մի կետի։

Հեքոն ճչաց։

Աղջիկն սթափվեց նորից ու ավելը դանդաղ շարժեց։

Ամառվա առավոտ եր. արևը շուրթը դեմ արավ խոհանոցի պատուհանին։ Խասիկը վեր թռավ իր հնամաշ անկողնից, շորերը վրը գցեց, անփութորեն մազերը հավաքեց թաշկինակի մեջ ու դույլերը թեր գցած՝ փողոց յելավ։ Հեքոն դեռ քնած եր։

Աղբյուրի գլխին հավաքված էին հարս ու աղջիկներ։ Վաղուց այնտեղ եր Խասիկի ընկերուհի Շողոն։ Կուրծքը դուրս, ուրախ դեմքով նա թռվում եր՝ ձեռքի վեդրոն սրա նրա մեջքին խփելով։ Անասելի քրքիջ եր բարձրացել գյուղական աղջիկների մեջ։

— Ոհո՛, ո՛ Խասո՛, Խասո՛... բղավեց չարաճճի Շողոն, հենց վոր յերևաց Խասիկի գլուխը։

— Արի՛, արի՛ նոբաթ բռնի, թե չէ վոր ուշանաս՝ Հեքոյի ձեռից կուտես։

— Աղջի՛, Խասո՛, վո՛նց ես դրա ձեռի տակ մնում,—խոսեց Զարմանի հարսը ցած ձայնով։

— Մարդ վոր նրա սիֆաթին նայի՝ կհալվի, վո՛նց վոր դժոխքի Միմոն։

— Հա՛-հա՛-հա՛, մի ընդհանուր փռթկում ընկավ մեջները։

— Ի՛, աղջի, հենց ասում եք էլի, բա էլ ո՞ւր գնամ։

— Պետիդ ի՞նչ ա... մեջ մտավ ծիծաղելով հարևանենց չաղլիկ Սոնան։

— Ի՞նչ ես ասում,— կարմրեց ամոթահար Խասիկը։

— Ե՛, Սոնա՛։

Փսփսոցն ընկավ աղջիկների մեջ։ «Խասիկ», «Պետրոս» անունները անցնում էին բերնից-բերան։

Աղբյուրի գլխին կռիվ ընկավ։

— Եյ, անզգամ, վեդրոս... վո՛ւյ, ես ի՞նչ լեթվածն մ՛, նոբաթս խլեց։—Առ հա կտաս՝ վրա բերեց դույլը Նարգիզը ընկերուհու գլխին։

— Ամա՛ն, ամա՛ն, գլուխս։

— Վույ, ծակծկոտվես դու... վրա թափվեցին ամեն կողմից հանցագործ աղջկա վրա։

Խասիկն ու Շողոն կովի միջոցին գուլպերը լցրին ու շտապեցին տուն։

Արևը բավական բարձրացել էր ու այրում էր աղջիկների մեջքը։ Խասիկի Թաշկինակն իջել էր պարանոցին ու կապտավուն ողակել սպիտակ դեմքը։ Շողիկի սև ու սիրուն աչքերը խաղում էին երկար Թերթիչների տակ։

— Ա՛յ Խասիկ, մեր ջանը դուրս գա մի կտոր հացի համար, հացափոր մինչև յե՞րբ պտի Հեքոյի ու քոռի մունաթին մնանք։ Ես առավոտ ծեգ—ծեգի կովեցի քոռի հետ, փեսուրիս ա անում թե՝ «տավարի տակն էլ խտակլի»։ Յես էլ ասում եմ—հա բա՞, էդ էր պակաս։

— Ուհ,—հառաչեց Խասիկը մազերն աչքերից հետ տանելով։

— Թե վոր միքիչ յեդի վերկացա՝ շան լափը գլխիս են Թափում, Հեքոն, տան մեծն ու փոքրը՝

Խասիկի սիրտը հուզմունքից տկտկում էր։

— Շողո՛, մեր որն էլ կորվի, Թքենք ու հեռանանք, էլ չեմ դիմանում։

— Արշոն պսում էր՝ մտեք կոմսոմոլ... Ձեր դրութլունն էլ կլավանա...

Խասոն մտածմունքի մեջ ընկավ...

— Մ՞րտդ ե, են որը Սլոյենց Սաքոն վո՞նց խոսեց. են ինչքա՜ն բան գիտեր... Խասիկը զարմացական նայեց ընկերուհուն։

— Են Սաթոն էլ կապել էր մազին մի կարմիր կտոր ու ձեռքին դրոշակ էր բռնել։ Մենք ըլեյինք նրա տեղ ..

— Ի՞նչ լավ կլինի,— բացականչեց Խասոն ու քիչ էր մնում փաթաթվեր Շողիկի վզով։

Խոսելով հասան Ղափանենց դռանը։ Յերկու սրտակից ընկերուհիները բաժանվեցին։

— Ելի կը հանդիպենք, կանչում էր Շողիկը Խասիկի հետևից։

Ղափանենց Հեքոն արթնացել էր ու փնթփնթալով էս ու կողմն էր ընկել։

— Ա՛յ լակոտներ, հերիք իրար դիպչեք,— բարկանում էր յերեխաների վրա։

— Են անզգամն էլ աղբյուրից դեռ տուն չի յեկել։

Հենց էդ խոսքին՝ Խասիկը ծանր գուլը ցած դրեց ու բարձրացրեց գլուխը։

— Հը, մասլահաթդ Թե՞ժ էր, ա՛յ լիրբ... վեր ենք կացել, տուն ա, տեղ ա, իրար գլխով են դիպել, դու չկաս, ելի վո՞րին եյիր Թուշդ դեմ արել...



— Ուշ, ա՛յ կնիկ, էդ ինչե՞ր ես ասում, բա էդ քեզ կսազի՞, յես ես տանն էլ չեմ մնա,—բողոքում էր Խասիկը։

— Ի՛, հողեմ քո գլուխը, գնա՛, գնա՛ փողոցները...

Խեղճ աղջիկն ականջները փակեց, գիտեր թե ինչ խոսքեր են Թափվելու

—Էլ չեմ մնա, կգնամ,—լացակումեց, ու աչքերը տրորելով անցավ խոհանոցի կողմը։ Ղափանենց տանը Խասիկի ամենամտերիմը յոթ տարեկան Ծիածանն էր, վոր այս անգամ էլ մտերմաբար մոտեցավ ու քաշեց փեշից.—

— Խասո՛, Խասո՛...

Տաք արցունքներն աչքերին Խասիկը քաշեց նրա Թևից ու համբուրեց շշնջալով. – ափսո՜ս վոր սրանց աղջիկն ես։

Էդ որը վոչինչ չկերավ։

---

Յերեկոյան դեմ էր. բակում աղմկելով խաղում եյին յերեխաները. Հեքոն տանը չէր։

Խասիկն աչքերը կարմրած, տխուր նստել էր անկողնի վրա ու լաց էր անում։

Մտքերն այրում եյին աղջկա կոպերը։ Խասոն կրծում էր շուրթերն ու ասեղն արագությամբ դուրս քաշում կտորի միջից։

— Լավ էր ասում Շողիկը, մտնենք կոմսոմոլ. մարդու աչքը բացվում ա. կիմանանք թե էս աշխարքումն ինչ ա կատարվում։ Հեքոների առաջ վզներս ծուռ չենք կանգնի։

Ու նորից միտն ընկավ՝ վո՞նց էր ֆռֆռում Սաթոյի դրոշակը...

Լսվեց մի թեթև սուլոց. աղջիկը շփոթված բարձրացրեց գլուխը և այս ու այն կողմը նայեց։

— Պետրո՛ս, — բացականչեց ուրախությամբ ու տեղից ցատկեց. Թելն ու կարն ընկան վոտքերի տակ։

Ներս մտավ մոտ քսան տարեկան մի յերիտասարդ, վորի լայն Թիկունքը վո՛նց վոր ջրաղացի քար լիներ. մեջքը ողմում էր կաշե գոտին. հավաքեց խունացած բլուզը, վորի մի Թևը պատռված էր։ Դեմքն առողջ ու կարմիր էր

— Խասո ջան, ելի տխուր ես, մի բարձրացրու գլուխդ. էդ ինչո՞ւ յեն աչքերդ կարմրել...,—ու մոտեցավ, վոր համբուրի. Աղջիկը հետ-հետ քաշվեց ու քաղցր հանդիմանությամբ խփեց Պետրոսի վառվող յերեսին։

— Ախ, մի դմբուզիս տակն առնեմ քո անզգամ Հեքոյին, հազար ասում եմ՝ դուրս արի, յես աշխատում եմ, հերիք ե։

— Գիտե՞ս ինչ, Խասո,—հանկարծ ուրախությամբ մեջ բերեց Պետրոսը,– յերեկ գնացի կոմսոմոլի ժողով. իմ դիմումը կարդացին, մի բերան ընդունեցին. «մեր Պետրոն, Պետրոն, գիտենք», կանչում եյին ամեն կողմից: Եվ ինչ դարդ ունեմ, կոմսոմոլ, լավ—լավ ընկերներ... Աղջի քո դիմումն էլ տուր, վոր դու յել անցնես:

— Յես ուզում եմ, շատ եմ ուզում:

Խասիկը խանդավառությամբ փաթաթվեց նրա վզով:

Փոքրիկ Ծիծանն աչքերը պլշած նայում եր յերկուսին: Խասիկի անկողնու վրա մամռում եր կատուն ու թաթով յերեսը քորում:

— Պետրոս, Պետրոս, ամեն որ Հեքոն բիաբուռ ա անում.— «փողոցները կընկնես, վայ որդ»․ և ուրիշ անպատիվ խոսքեր: Յես էլ դիմանում չեմ, ջուղաբ եմ անում, քիչ ա մնում կատաղած շան պես յերեսս ծվատի:

— Թո՛ղ, Խասիկ, մի՛ պատմի, արյունը խփում է քունքերիս մեջ: Դրանց բոլորի ատամները պետք է ջարդել:

Պետրոսը բարձրացրել եր բռունցքն ու ճոճում եր օդում:

— Դեհ, վեր կաց գնանք:

— Չէ, չեմ ուզում, Հեքոն կգա կկատաղի:

— Ե, հերիք է վախենաս. ինչ կանի այդ ճիճուն: Կապիր թաշկինակդ:

Ու բարձրացրեց թաշկինակը.

— Ինչքա՜ն է սազում քո աչքերին:

Պետրոսը չհամբերեց ու պինդ համբուրեց Խասիկի յերեսը, աղջիկը մի տաքություն զգաց, շիկնեց ու թերթիչները ցած իջեցրեց. հեվում եր:

— Ի՞նչ արիր, Պետրոս...

Արևը շիկացած սհանի պես խրվեց արևմուտքում. կարմիր շողքն անդրադարձավ Խասիկի ու Պետրոսի աչքերում:

— Գնանք Տողիկի մոտ, չէ՞,—հարցրեց աղջիկը ցած ձայնով:

Յերկուսով գնացին դեպի Տողիկենց բակը: Մերթ-մերթ հաչում եյին շներն այս ու այն հարևանի բակից:

— Տո՜ղիկ,– կանչեց Խասիկը, յերբ հասան քոռ Աբգարենց ցանկապատին:

Դուրս թռավ Տողիկը վոտաբոբիկ: Պատառոտված շրջազգեստը փաթաթվում եր նրա վոտներին: Զարաճճի աղջկա դեմքին անսովոր ուրախություն բացվեց:

— Պետրո՛ս, Խասիկ, էլի ճանկել եք իրար:

— Դեհ, աղջի, մազերդ կպոկեմ, մի՛ սկսի,— թեթեվ հանդիմանեց Պետրոսը:



— Տո՛ւտ, չո՛ւտ, դո՛ւրս արի, միքիչ եստեղ պտտվենք:

— Մինչև հիմա աշխատում եյի... աչքս բաց չի լինում գործից:

Պետրոսը հեգնեց.—Վորովհետև աղջիկներ եք, տազ եք անում... բա յես ինչո՞ւ չեմ աշխատում...

— Հա՛, հա՛.—ծամածռեց բերանը Տողիկը.— գնամ, գնամ միքիչ կարգի բերեմ ինձ,—ու վազեց գլխի փալասը քանդելով:

— Աղջի, ամոթն էլ լավ բան ա, ուլիցումն ինչ ունես. վեր ընկի տանը.—բղավում եր Տողիկի վրա քոռ Աբգարը:

Պետրոսը զայրացել եր ու քիչ եր մնում ներս ընկնի, քոռին մի լավ դմբզի: Դուրս թռավ վրդովված Տողոն ու միացավ ընկերներին:

— Յանի, Պետրո՛ս, մինչև յե՞րբ պտի ուրիշի նոքարը լինենք. յերանի ուրիշ գործ լիներ, հազար անգամ ծանր, մենակ քոռերի ու Հեքոների մուննաթը չտանեյինք:

Պետրոսը լուռ եր:

Տողոն դարձավ ընկերուհուն:

— Աղջի, էլ բան ու ման հո չի՞ պատահել քո ու Հեքոյի մեջ:

— Աղբրից վոր տուն յեկա, գիտես գլխիս ինչ բերեց... վոնց վոր մի չարխան պղինձ ջուր լցներ գլխիս...

Արևը վաղուց մայր եր մտել. փողոցներում մութն եր:

— Արշո՛, բարև.— բղավեց Պետրոսը:

Նրանց մոտեցան յերկու կոմսոմոլիստներ.

- Եդ ո՞ւր եք եդպես զրից անելով գնում, աղջի Տողո՛, Խասո՛ բարև՛. դիմո՛ւմ տվեք, դիմո՛ւմ...

Աղջկներն իրար յերեսի նայեցին:

— Բա վոր մեզ չթողնե՞ն,— խոսեց Խասիկը:

— Ո՞վ, ինչպես իրավունք չունեն. իշտահներին թող աղ անեն. լեզուները հիմի կարճել ե:

- Բա, են Հեքոն ու քոռը շան օր են տալիս մեզ. – ավելացրեց Տողիկը:

— Են ժամանակ ինչո՞ւ չեք մեզ ասում,—տաքացավ Արշոն.— վորոշ կարգ ու սահման կա տանու աշխատողների համար. դրանց կպատժեն. ամբողջ որը դուք չպիտի աշխատեք:

Պետրոսը վիճում եր մյուս ընկերոջ հետ:

— Տո հերի՛ք է, նրան միության մեջ չպիտի ընդունեյինք, քյոխվաների ու պրիստավների հետ եյին նստում վեր կենում, Մացակը կոմսոմոլո՞ւմ... – ավելացրեց բարձրաձայն:

Մի քանի ժամ դուրսը շրջելուց հետո, Պետրոսը Խասիկին ու Տողիկին ճանապարհ գցեց տուն:

Նորից Հեքոյի նախատինքն ու ճիչը խլացրին ականջները. —

— Գյադա-գյուդա եկիր ճարել, հա՜...

Ծանր գիշերն իջավ Խասիկի աչքերին, սակայն մի ուրախ միտք պտտվում եր ուղեղում։

Յերազում տեսնում եր՝ դուրս թռավ տնից ազատակելով, անցավ կոմսոմոլի շարքերն ու պինդ գրկեց մի կարմիր դրոշակ։ Աշխարհն ազատ եր ու լայն... Հեքոն փրփրած փռվել եր գետնին... ուռա՜... հանկարծ վեր թռավ ու քրտնամխած յերեսը շփեց՝ շշնջալով. «Ի՞նչ լավ յերազ եր»։

Առավոտը, մի դիմում ծոցներում, Խասիկն ու Շողոն գնացին Կ. Յե. Մ.—յան քարտուղարի մոտ։

— Դեհ ներս մտի, էլ ի՞նչ ես վոտդ կախ գցում, հրես մեր Սմբատը, —Խասիկին հրելով կանչեց Շողիկն ու ներս մտավ ընկերուհու փեշիցը քաշելով։

— Դիմում եք բերել, հա՞։ Լա՛վ շատ լավ, —գլուխը բարձրացրեց քարտուղարն ու դիմումները վերցրեց աղջիկների ձեռքից։

— Կիրակի ժամը 6-ին ժողով ունենք, կգաք։

Աղջիկներն իրար հետևելով, ուրախ սրտով դուրս յեկան։

Փոքրիկ Ծիածանը շեմքում փաթաթվեց Խասիկի ծնկներին. աղջիկը սիրով բռնեց նրա գանգուր գլուխն ու համբուրեց։

Հեքոն վոտը խփեց գետնին։

— Աղջի՛, թո՛ղ եդ յերեխին, եդ եր պակաս, հարամ։

Խասիկը մտավ խոհանոց, Հեքոն փնթփնթում եր յետևից։

— Ախր մարդ շինեցինք. խնքոտը դռներին եր մնացել։

Քանի գնում Հեքոն վատանում եր Խասիկի հետ, վորովհետև Խասոն աչքաբացվում եր ու անհնազանդ դառնում, խոսքի տակ չեր մնում։

---

Խասիկն ու Շողոն կոմսոմոլներ եյին։ Իրիկնապահին, իրար ձեռքից բռնած, իրար ականջի փսփսալով՝ շտապ-շտապ գնում եյին։ Նրանց սրտերը թփթփում եյին։ Լսեցին կոմսոմոլիստների աղմուկը։

— Հրեն ենտեղ են, — Շողոն ենպես բզեց Խասիկի կողքը, վոր աղջիկը տեղից շարժվեց։

Նրանք ամաչելով մոտեցան կոմսոմոլիստներին։

— Ո՜հ, Շողո՛, Խասի՛կ, բարև ձե՛զ, —բղավեցին ամեն կողմից խմբված տղաները։

Խասիկի ու Շողիկի համար նոր աշխարհ եր. նրանց յերբեք այդքան լավ չեյին ընդունել։ Շողոն քաշեց Պետրոսի թևից.

— Պետրոս, յեկանք, հրե՜ն Խասիկը։



Պետրոսն ընդհատեց խոսակցությունն ու յետ նայեց։ Իսկ Խասիկը հուզմունքից կրծում եր թաշկինակի ծայրերը։

Ժողովում կողք-կողքի նստել եյին Խասիկն ու Շողոն, ամեն մի նոր բան լսելիս, զարմացած բզում եյին իրար ու փսփսում իրար ականջի։

Յերբ սկսեց Պետրոսը խոսել, Խասիկը գլուխը կախ գցեց ու շրթունքը շրթունքին սեղմեց։

Առաջին անգամ յերկու ընկերուհիներն իրենց յերջանիկ զգացին։

Ժողովից հետո յերկուսով նայեցին իրար յերեսի.

— Խասո՛, — բացականչեց Շողոն ու մտածմունքի մեջ ընկավ.

— Շողո, վա՛յ, որս ե... Հեքոն տես ինչ կթափի գլխիս։

Պետրոսը վրա հասավ բռնեց Խասիկի թևը։

— Մի՛ վախենա, յես քեզ հետ կգամ։

— Մենք էլ կգանք, —բացականչեցին Արշոն ու միքանի կոմսոմոլիստներ։

— Դու առաջուց գնա, տեսնենք ինչպես ե գազազում. մենք հետևից ներս կմտնենք, — քաջալերում եր Պետրոսը։

Միքանի կոմսոմոլիստներ էլ Շողիկի հետ գնացին։

Հեքոն արդեն կատաղած սպասում եր Խասիկի վերադարձին. հենց վոր աղջիկը բակը մտավ, ուժերը հավաքեց ու սկսեց.

— Ա՛յ լիրբ, հիմի յել կոմսոմո՜լ... եդ եր պակաս քեզ պես անաբուռին. ախր տղերք շատ կան ենտեղ։

Ու վրա պրծավ, վոր մազերը քաշի։

Աղջիկը սիրտ առած ճչաց.

— Ե՛, իրավունք չունես։

Կոմսոմոլիստները ներս խուժեցին աղմկելով։

Պետրոսն առաջ գնաց.

— Ի՞նչ ես ուզում այս աղջկանից, բավակա՛ն ե։

Աչքերն հրդեհվում եյին ներքին հուզմունքից, շուրթերը դողում։

Արշոն քաշեց Պետրոսի թևից.

— Դու են կողմը գնա... յես հանգիստ կխոսեմ։

Մինչ այդ Խասիկն անհամբեր սպասում եր, թե ինչո՛վ ե վերջանալու։

Արշոն մոտեցավ փրփրած Հեքոյին.

— Ախր Խասիկին հո ձրի չեք պահում, նա ձեզ համար աշխատում ե. իրավունք ունի մինչև ճաշ ձեզ մոտ աշխատելու, նրանից հետո ազատ ե։

Փի՜, գլխիս կարգադրիչներ եք, դեհ եղքան ցավում եք, տարեք հաց տվեք, պահե՜ք։

Այս կնոջը չի կարելի բան հասկացնել, հարկավոր է վաղը սրա հետ օրենքով խոսել, — դարձավ ընկերներին Արշոն։

Հարևանները դուրս էյին թափել և դիտում էյին տեսարանը։

Հեքոյի ամուսինը բազարից տուն յեկավ․

— Ե՞ս ինչ ղալմաղալ ա ընկել, ինչ կա․ հա՛, էս աղջկա շառն ա ելի՞։

— Հազա՛ր ասի սրա շառին կգնանք․ եսքան տարի հաց տամ պահեմ, հմի յել վրես հարփ ու զոռը անեն։ Ախպե՛ր, պետք չի, եսօրվանից թող դուրս գա։

Հեքոն կատաղությունից գունատվել էր․ եվ չհամբերեց, սկսեց հայհոյել։

Բակի շունն անդադար հաչում էր։

Խոսիկը վերջին հրաժեշտը տվեց Ծիածանին ու կոմսոմոլիստների հետ դուրս յեկավ ընդմիշտ Ղափանենց տնից։

Կարծես բանտից դուրս յեկած լիներ։

Աշխարհը թվում էր նոր, չէր հավատում աչքերին։ Շրջապատված ընկերներով... ու տեսնում էր Պետրոսի հաղթական կուրծքը, սիրտ էր առնում, ամրապնդվում։

— Այդ կնոջ հետ հարկավոր է ուրիշ լեզվով խոսել․ վաղը դատարանով դրանցից կպահանջենք քո հինգ տարվա աշխատանքը, — ասում էր Արշոն։

— Ո, Խասի՛կ, Խասի՛կ, վերջապես ազատվեցի՜ր․ — Խասիկի կողքից գնում էր Պետրոսն և ուրախացած խոսում․

— Դեհ, գնանք մեր տուն․ մայրս քեզ ուրախությամբ կընդունի․ նա քո մասին վաղուց գիտի։

Կոմսոմոլիստները ցրվեցին։ Խասիկը գնաց Պետրոսենց տուն։

---

Դատարանը Ղափանենց լռեցրեց։ Հեքոն սակել էր։ Զղջում էր իր կոպտությունների համար, բայց արդեն ուշ էր։ Հարևանները հանդիմանում էյին․

— Ախր լեզուդ քեզ չես պահում, ինչ բերանդ է՞ գալիս՝ շպրտում ես։ Խասիկի նման աղջկա հետ չբաշարեցիր։

Այս անգամ Հեքոն չէր պատասխանում։ Ղափանենք վճարեցին այն գումարը, որ հասնում էր Խասիկին։ Փոքրիկ Ծիածանն ամեն որ հիշելով Խասիկին՝ լաց էր լինում․ մայրն ափսոսում էր ու մտքում ինքն իրեն նախատում։



Պետրոսի ծերունի մայրը Խասիկի համար հոգի չէր տալիս։ Ապրում էյին մի աղքատիկ տնակում։ Խասիկը կոմսոմոլի ժողովներից հետ չէր մնում․ ամենքը սիրում էյին նրան իր պարզ բնավորության համար։ Ժողովներին կտեսնեյիք Խասիկը մեկ-մեկ մատ էր բարձրացնում, բայց խոսելիս դեռ ամաչում էր ու կարմրում։ Այնքան բան ուներ սովորելու... այդպես էր նա միշտ մտածում։

---

Անցել էր յերկու ամիս։ Աշնան մի թխպոտ օր էր։ Լ․ գյուղից դուրս յեկան ճանապարհորդական իրերով Պետրոսն ու Խասիկը։ Գնում էյին կայարան, նրանց ուղեկցում էյին մի խումբ կոմսոմոլիստներ։

Շողիկը գնում էր ընկերուհու կողքից ու կարծես խոսք չէր գտնում ասելու․ նա յերբեք այդքան տխուր չէր յեղել...

— Ե, Խասո ջան, տես, չմոռանաս․ հենց որ սիրտս լցվում էր, քեզ մոտ էյի վազում։

Յերկու խոշոր կաթիլներ շողացին Շողիկի թերթիչների տակին։

— Մի մտածի, Շողո, ամբողջ կոմսոմոլն էստեղ է․ — ու ցույց տվեց ընկերներին, — յեթե քեզ համար էլ աշխատանք լինի՝ յես քեզ կգրեմ․ են ժամանակ ինչքան լավ կլինի։

Շողիկը ժպտաց ու սեղմվեց ընկերուհուն։

Կայարանում կոմսոմոլիստները Պետրոսի հետ անց ու դարձ էյին անում էս ու են կողմ։ Խասիկն ու Շողոն ռելսերի մոտ կանգնած յերկար խոսում էյին, — կարծես դեռ էլի-էլի շատ բան կար ասելու։

Զանգը խփեցին․ յերկուսի սիրտն էլ վեր թռավ մի քանի րոպեյից հետո փնչալով գնացքը յեկավ... Շողիկին գնացքը թվում էր մի հրեշ, գազան, որ Խասիկին տանում էր իրենից հեռու։

Պետրոսը վագոն մտավ տեղ ճարելու, ընկերներն օգնում էյին նրան։ Յերկու ընկերուհիները համբուրվում էյին․ թաշկինակի ծայրերով սրբում էյին աչքերը․

— Դեհ, գնա՛ք բարով, — Արշոն խփում էր Պետրոսի ուսին, ա՛յ տղա, մեզ չմոռանաս, ինչ վիճակում էլ որ լինես՝ մեզ գրի...

Յերրորդ զանգը հնչեց — հրաժեշտ տվին ու շտապ վագոն բարձրացան։

Խասիկի աչերը հուզմունքից վառվում էյին։ Այնպես էր սազում գլխի կարմիր թաշկինակը, որ գնել էր Պետրոսը։

Գնացքը շարժվեց․ Շողիկը ճոճում էր թա՛շկինակն օդում ու արցունքներ թափում... կարծես ռելսերի տակ ճզմում էյին Շողիկի սիրտը։

Գնում էին Յերևան։ Պետրոսը բանվոր էր վարձվել ու Խասիկին էլ հետը տարավ։

Խասիկի աչքերը նոր հորիզոններ պիտի տեսնեին...

---

— Ի՞նչն է այս պատմվածքում ամենից շատ հուզիչ։

— Ինչո՞ւ չէ ընթերցողը համակրում Խասիկին։

— Ինչո՞ւ առանց կոմյերիտմիության մեջ մտնելու Խասիկին դժվար էր թողնել Հեքոյենց տունը։

— Ի՞նչ ազդեցություն թողեց Խասիկի բնավորության վրա կոմյերիտմիության մեջ մտնելը։

— Ընտրեցեք Պետրոսի յեվ մյուս կոմյերիտականների վերաբերմունքը դեպի Խասիկը։

— Ի՞նչ նոր հորիզոններ բացվեցին Խասիկի առաջ քաղաքում։

---

— Ի՞նչ պակասություններ ունի այս պատմվածքը. չկա՞ն արդյոք ավելորդաբանություններ յեվ այլն։ Յերբ կան՝ ցույց տվեք։

— Ի՞նչ առավելություններ ու պակասություններ ունի հեղինակի լեզուն։



ՀԱԿ. ՀԱԿՈԲՅԱՆ

## ԲԱՅԼՇԵՎԻԿ Է ՇԻՐ-ԿԱՆԱԼԸ

I

Բայլշևիկ է Շիր-կանալը—մի աժդահա հեքիաթային,
Նրա շուրթը ջուր է խմում պաղ ակունքիցն Արփաչայի,
գլուխը հաղթ թաղել է խոր կանաչագույն զուլալ գետում,
պոչը հեռու Կապսի ծոցում, ալիքներ է հեռուն նետում։

Մեծ ու մեծ է Շիր-կանալը կամարաձև, գեղեցկաթով,
փաթաթվել է, վո՞նց է գրկել Շիրահարթը յերկու թաթով.
մի խանդավառ կարոտ ունի, են ծարավը սիրած յարի,
վոր կարծես թե սեր ու խանդի կարոտել է հազար տարի.
հույզեր ունի սրտի խորքում խորհրդավոր իր հորձանքով —
վողջ իրանը դողունքի մեջ ապրումների մի կրքոտ ծով.
և ամենքին իր յերթի մեջ, ում տեսնում է ու ճանաչում՝
խոխոջումով, լսո՞ւմ ես մեկ, ավետում է՝ վողջո՞ւյն, վողջո՞ւյն...

II

Բայլշևիկ է Շիր-կանալը... այն վայրերը լերկ ու բորբաղ՝
վորոնք իրենց ծնված օրից այրի էին—մերկ-անապատ՝
այսօրից հետ հագնելու յեն սիրակարոտ հարսերի պես
զուք-զարդարված խաս ու կումաչ, թավիշ, մետաքս զառուզարբաբ։

Վո՛չ մի թիզ հող, վո՛չ մի ավան և վոչ մի գյուղ խոչկանդ դաշտից,
զգում ես, վոր չի տանջվելու այսուհետև բարկ յերաշտից։
Բայլշևիկ է Շիր-կանալը, հոգսը քաշող ամեն մարդի—
մեծահոգի, ներողամիտ՝ բարեկամի ու տմարդի։

III

Բայլշևիկ է Շիր-կանալը... Դարու զավակ այդ հերոսին,
մեր այս դարու հարազատին ո՛վ չի տեսել, թո՛ղ գա տեսնի.
միլիոնավոր պայթյունների, հարձակումի ականներով,
Արփաչայի ժեռ ափերին գրոհ տվող ուռաներով,
դիրքերից դիրք, նվաճումներ, մի թոնելը զոզող մյուսին,
աշխատանքի հերոսները մատի շարժով նրան ասին—

*Ուր ձեռք մեկնես, այնտեղ հրաշք, այնտեղ մի գյուղ թող կանաչի,*
*ուր յերևաս, ուր ել հասնես, մի նոր սերունդ այնտեղ աճի.*
*ով ծարավ է, թո՛ղ հագենա, ով չարամազ՝ թող կշտանա...*
*այսպես է մեր Շիր-կանալը, մի գյումրեցու ողո՛ւլ է նա,*
*և՛ դարդիման, և՛ սրտաբուղխ, և՛ լայնաշուրթ, և՛ հյուրասեր—*
*քեֆը տեղը, յերգը բերնին, խոսքը շուրթին, լիառատ սեր:*

IV

*Բոլշևիկ է Շիր-կանալը... և գյուղերը գիրկն առած*
*ցանցել է իր արյունատար յերակներով համատարած.*
*մեկը պիտի հազարների մասին հոգա—մի ղեկավար —*
*հազարները խանդով վառված պիտի հոգան մեկի համար...*
*Հրեն Կապսը սարին կանգնած հովվականչի ձեն է տալիս,*
*թե՝ հեյ, լսեք, հրես ջրիս ձե՛նն է գալիս, ձե՛զ է գալիս...*
*Կանգ է առել Պոլիգոնը և սիրահար կույսի նման*
*քրքջում է ու սպասում, վոր գան գրկեն, սիրեն իրան.*
*անհամբեր է Որթաքլիսան, բաբախում է սիրտը նրա,*
*ցնծությունից շունչը պահած քիչ է մնում ճչա, պոռա.*
*յերազում է Թոփաղվան, աչքով անում Ղոնախռանին,*
*հասկանում է Հաջի-Նազար ու կանչ անում հարևանին:*

---

*Այսպես մեկը ձենում մյուսին, ավետում է հեռու տեղից,*
*Դյուզաքյանդը՝ Քափանակին, Թափդոլաղը՝ Իլխիաբին.*
*այսպես ահա մեկը մյուսին ավետում է յերկու վերստից,*
*թե գալիս է Շիր-կանալը—բոլշևիկը Հայաստանի:*

V

*Ուրիշ փառք ու սամթ ել ունի մեր բոլշևիկ Շիր-կանալը*
*նա Շիր-դաշտի մեջքը գրկած Կապսի մոտից ինչպես նալը,*
*ջրընկեցով նորից պիտի թափվի ծոցը Արփաչայի,*
*վոր պայքարի միջից խլի ուժը հիդրո-ֆիկացիայի:*

*Յերգիչներից վո՞ր մեծն էր այն, վոր յերգել է ուժի մասին.*
*Շիր-կանալը փրփուր խասով շիր-աղյուծ է, բաշը՝ լուսին.*
*լույս թևերի փաղաքշանքով պիտի ցանցի վողջ գյուղերին,*
*և դինամոն կայծակ-փնջով այրի նիրհը մութ հյուղերի.*

*պիտի տեսնեն, վոր լուսաշաղ ասեղները ելեկտրոնի*
*միտք է ցնցում, գյուղին ասում, վոր անելիք ինքն ել ունի,*
*Շիր-կանալը շիրի նման հոնդացող մի պատանի—*
*ալիքները փրփուր խասով լույս ապագան Հայաստանի:*

VI

*Մեր բոլշևիկ Շիր-կանալը ուրիշ փառք ու սամթ ել ունի.*
*ձիավարի սանձը ձեռքին հսկա ուժով ելեկտրոնի*



*պիտի շարժի ու փոթորկի գործարաններ ու ֆաբրիկներ,*
*ջրաղացներ, սղոցարան, ալեկոծի հող ու ցանքսեր:*

*Այն յերկիրը, վոր դարերով քարացել էր ու ցամաքել՝*
*այսօրից հետ պիտի յերգի աշխատանքի հզոր յերգեր:*
*Շատ է լացել համր լացով Շիրակը իր դարդի մասին,*
*իսկ այսօրից նա լի թոքով թող ամենից բարձր խոսի:*

*Շա՜տ է տանջվել ու տոկացել անհարազատ մարդոց ձեռքին,*
*իսկ այսօրից թող նվաճի ու տիրանա իր նոր կյանքին:*
*Ու կտանջվեր նա էլ նորից, թե չծնվեր հաղթ պատանի,*
*թե չհասներ Շիր-կանալը—բոլշևիկը Հայաստանի:*

---

— Կարդացե՛ք բարձրաձայն յեվ վորոշեցե՛ք, թե ի՞նչ տրամադրություն է ստեղծում այս բանաստեղծությունը՝ բարձր, թե ընկճված:
— Ի՞նչ վերաբերմունք ունի բանաստեղծը դեպի Շիր-կանալը, անտարբե՞ր է նա, թե հիացած:
— Ինչո՞վ է բացատրվում այդ վերաբերմունքը:
— Ի՞նչ սպասելիքներ է կապում նա Շիր-կանալի հետ:
— Ինչ՞ու յե նա Շիր-կանալն անվանում «բոլշևիկ»:

---

— Ի՞նչ չափով է գրված այս բանաստեղծությունը. առաջին յերկու տողը բաժանեցե՛ք վանկերի, նշանակեցե՛ք բառերի շեշտերը յեվ պարզեցեք, թե կ՞ա արդյոք այդ տողերի մեջ վանկերի ու շեշտերի կրկնվող համաչափություն:
— Համապատասխանո՞ւմ են արդյոք յերկար տողերը բանաստեղծի բարձր, հանդիսավոր տրամադրությանը յեվ նրա ընտրած նյութի վեհությանը:
— Կա՞ն արդյոք այս բանաստեղծության մեջ բացականչություններ, գտեք դրանք յեվ ընդգծեցեք:
— Կա՞ն արդյոք պատկերներ. հաջո՞ղ են դրանք, թե վոչ:
— Ընդգծեցե՛ք բանաստեղծի գործածած ածականները յեվ աշխատեցեք վորոշել, թե բնորոշո՞ւմ են դրանք այն առարկաներն ու դրանց այն կողմերը, վոր ուզեցել է շեշտել բանաստեղծը:

---

**Ա Լ Ա Զ Ա Ն**

# ԱՌԱՎՈՏ

*Նորից արևն յելավ, նորից վառեց կրակ,*
*Նորից հնչեց կարմիր զորանոցում թմբուկ,*
*Նորից բացվեց ահա մեր սարերի վրա—*
*Խորհրդային ազատ առավոտը խնդուն:*

*Մեր զավոդի դռան հազար ուրախ աչքեր,*
*Հազար ուրախ դեմքեր բանվոր ընկերների,*
*—Մենք պատրաստ ենք, յեկանք, յերբ սուլիչը կանչեց,*
*Յերբ արևը բացվեց ազատ մեր լեռներին:*

*Նորից վառ-վառ աչքեր, նորից հայացքներ տաք,*
*Նորից կաշվե բաճկոն, նորից մաշված կեպի,*
*Առավոտվա պես վառ ու արևից էլ բարկ—*
*Այդ մեր բանակն է կուռ, պատրաստ աշխատանքի:*

*Ջան, մեր բանակը կուռ, մեր կրծքերը յերկաթ,*
*Բետոնի պես ամուր մեր բանակը կարմիր,*
*Ջան, մեր ձեռները կոշտ, մեր ճակատը հպարտ—*
*Չի կարող մեզ ընկճել և վոչ մի թշնամի:*

*Նորից արևն յելավ, նորից վառեց կրակ,*
*Նորից հնչեց կարմիր զորանոցում թմբուկ,—*
*Նորից բացվեց ահա մեր աշխարհի վրա —*
*Խորհրդային ազատ առավոտը խնդուն:*

---

— Ի՞նչպես է հնչում այս բանաստեղծությունը՝ առո՞ւյգ, թե նվազ:
— Ի՞նչպիսի տրամադրություն է ձեր մեջ արթնացնում:
— Նշանակեցե՛ք բառերի շեշտերը յեվ որոշեցե՛ք թե ի՞նչ չափով է գրված:
— Կարդացե՛ք ըստ այդ շեշտերի յեվ որոշեցե՛ք, թե առույգ տրամադրությունը բղխում է լավ բանաստեղծության իմաստի՞ց, թե տաղաչափությունից յեվս:

---

— Որոշեցե՛ք, թե ինչի՞ց է բղխում հեղինակի առույգ տրամադրությունը:



**ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ**

# ԱՅՍ ԳԱՐՈՒՆԸ

(Գեղջկուհիներին)

*Մեզ մոտ գարուն է հիմա, մեզ մոտ յեռանդ ու լարում,*
*Բայց գարունը մեզանում մի այլ արև է վառում:*
*Այս գարունը, որ հիմա զրնգում է յերկրում մեր—*
*Մենք ենք բերել պայքարով, մենք ենք կյանքում բռնկել:*
*Ինչքան արևը զնգա ու հուրհուրա աշխարհում—*
*Հո չի՞ կարող բռնկել նա այսպիսի մի գարուն:*
*Այս գարունը կրակվում ու բորբոքվում է բեղուն—*
*Յերբ ջրերի հետ մեկտեղ՝ դասակարգն է հեղեղում:*
*Անդուլ յելած յերբ մարտի՝ արգելքներին անտարբեր՝*
*Քույրը դառնում է մարտիկ, կինը դառնում է ընկեր:*
*Յերբ ինչպես ջուրը վարար՝ հորձանքներում պայքարի—*
*Սրբում, տանում է հնի կոշկոճները աշխարհից:*
*Դուք հիմա դաշտ եք յելել, մտել ակումբ ու փողոց:*
*Զրնգում է մեր յերկրում ձեր բանակը հիմա հոծ:*
*Դուք զվարթ եք ու ազատ խորհրդային մեր յերկրում,*
*Ձեր հանդերում հարազատ, ուր աշխատանքն է բերկրում:*
*Յեվ ձեր գործում ամեն օր, ձեր հոգսերում ու խաղում—*
*Մեր նոր կյանքն է խլրտում, մեր գարունը ծիծաղում:*
*Այս գարունը, որ կյանքում չի վառի վո՛չ մի արև,*
*Յեթե ինքներս անդուլ աշխատանքով չվառենք:*
*Յեթե հրում այս մարտի, որ յեռում է յերկրում դեռ —*
*Չդառնա քույրը՝ մարտիկ, չդառնա կինը՝ ընկեր:*
*Այս գարունը, որ հիմա զրնգում է մեր յերկրում—*
*Անդուլ պայքարն է բերում, աշխատանքից է բերկրում...*

---

— Դուր յեկա՞վ ձեզ այս բանաստեղծությունը, թե վոչ:
— Ի՞նչ տրամադրություն է նա ձեր մեջ ստեղծում:
— Ո՞րն է այն յերկրորդ գարունը, որ ստեղծվել է պայքարով:

---

— Որոշեցե՛ք, թե ի՞նչ չափով է գրված այս բանաստեղծությունը:
— Կա՞ն այստեղ պատկերներ, համեմատություններ յեվ այլն:
— Կա՞ն արդյոք հանգեր, տողամեջերում:—Բոլո՞ր տեղերում կան, թե տողերի մի մասում: Ընդգծեցե՛ք այդ տողերը:

Գ. ԱՌՈՎ

## ՇԻՐԱԿԻ ՋՐԱՆՑՔԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

### I

Հընչում է ձայնը նըրանց.
հընչում է խուլ տունելում. .

—Խըլացնող լադում,
տունելի մութում
դըղըրդա՛ դու.

սպառած ու ժայռ
ժի՛ր շարժումով
ցատկըրտա՛ն թող.

հացաշատ Շիրակի
դաշտերով շեկ
անհամար
առուներ կը քըշենք։

—Տունելի տոթում,
քըլո՛ւնգ,

լադումի ոժանդա՛կն ես.
ժըրաջա՛ն ջարդենք
մեր դեմի
դաժան ապառա՛ժն այս.
հացաշատ Շիրակի

դաշտերով շեկ
որա՛կտորը կաշխատի՝
վորպես մըշակ...

—Լադո՛ւմ խըլացնող
տունելի մութում
դըղըրդա՛ դու.

քանդե՛նք արգելքը
քանդելո՛վ հասնենք
լույսին առոտ.

Շիրակի հացաշատ,
շե՛կ դաշտերում
անթիվ դինամո
ո՛ւժ ենք դընում...



### II

Ու հեռուն՝
տարածվում է տունելում
ձայների ծըվատ արձագանքը...

——Մենք գիտե՛նք՝
ուր վո՛ր է, կավարտենք.
—Մենք գիտենք՝
հանցա՛նք է չըքանդելը։

Ու տակտով զարկո՛ւմ են քարերին—
դըղիրդով փըլո՛ւմ են
լեռը պինդ...

### III

Իսկ մութին՝
մարդկային շարաններ չերերուն
չերերվո՛ւմ,
գալարվո՛ւմ են ժայռ ու քարերում.
տունելից դառնում են դեպի տուն։

Ե՜յ, տունե՛լ փորողնե՛ր...
Ե՜յ, տունե՛լ փորողնե՛ր...
Ջրգիտե՞ք,
Դո՛ւք.
Հենց դո՛ւք եք առուն,—
առուները ձեր մեջն են չեռում—
ձեր ջըլուտ
շարժո՛ւն ձեր թեվերում։

### IV

Տարիներն արա՛գ կը թըռչեն—
տարիները ձեր ականջին
ինդուստրի՛կ շունչ կը փչեն։

Ամեն մի տարին վոր շըրջեց՝
կըքանդենք անթիվ տունելներ.
Ամեն մի տարին վոր շըրջեց՝
ջըրանցքները լայն կը փըռվեն։

Տեսնում եմ վորո՛շ.
տեսնում եմ պա՛րզ
տեսնում եմ՝ խըրո՛խտ են
ուրվագըծված
իմ չերկրի շենքերը,
ծըխնելույզները բա՛րձր։
Տեսնում եմ.
փռվում են ամենուրեք
հազա՛ր կանալներ,
հազա՛ր տունել.
չեվ հին չերկիրն այս ժանգակալած
պողպատե փա՛յլ է ընդունել։

V

Առաջին փայլը
քըսել եք դուք—
սըրբողը դո՛ւք եք,
սըրողը դուք։
կամքով հատու եք՝
գործով կըտրուկ։
Թըլունգ ու լաղումով
անդո՛ւլ
սարերի սիրտն եք տունելում։

Ժայռերից իջնող շարքերը ձեր—
տեսնում եմ—
յերկիրը հոծ են լըցրել

Տեսնում եմ վորո՛շ.
տեսնում եմ պա՛րզ—
պողպատե յերկրի
տե՛րն եք հըպարտ։

---

— Այս բանաստեղծության վո՞ր մասն ամենից շատ հավանեցիք։—Ինչո՞ւ։
— Ինչո՞ւ է բանաստեղծը «առու» անվանում ջրանցքը շինող բանվորներին։
— Ի՞նչ սպասելիքներ ունի բանաստեղծը նրանցից։
— Իրավացի՞ է նա, թե վոչ։

---

— Վո՞րն է այս բանաստեղծության նյութը՝ Շիր-ջրա՞նցքը, թե այդ ջրանցքը շինող բանվորները։

— Ընդգծեցե՛ք այս բանաստեղծության մեջ գործածված վո՛չ հայերեն բառերը յեվ տեղեկացեք՝ գործածվո՞ւմ են դրանք մեր խոսակցական լեզվում, թե վոչ։

— Այս բանաստեղծության լեզվից կարելի՞ է յեզրակացնել, վոր նրա հեղինակը ժամանակակից գրող է։

---



**ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ**

# ՄՈՐՍ ԿԱՐՈՏԸ

1

Մայրս գյուղացի յեր, մի հեռավոր գյուղից,
Յեկել եր քաղաք նա, ամուսնացել,
Քաղաքումն եր ապրում սկսած են որից,
Են որից նա գյուղ չեր գնացել։

Պատահում եր մերթ-մերթ, վոր տխրում եր մայրս,
Մայրս դեռ մայրական գյուղն եր հիշում.
«Այնտեղ հիմի լավ ե, գեղեցիկ ե այնտեղ,
Այստեղ քաղաքն ե ծանր ու մշուշ։

Վորքա՛ն կարոտել եմ, ասավ նա մի որ,
Մեր լեն դաշտերին, աղբյուրին, ջրին,
Իրիկվա շողերով հանդից տուն դարձող
Գյուղի բազմաբառաչ նախիրին։

Վորքա՛ն կարոտել եմ մեր լույս ցերեկներին,
Մեր բարձր սարերին, ձորերին խո՛ր,
Գյուղացի չես, վորդի՛ս, բայց մորդ ներիր,
Այստեղ շատ աղմուկ ե ու ժխոր։

Մեր կանաչ դաշտերում գույնզգույն ծաղիկներ,
Վերևում արևը, ներքևում գոլ,
Գնում ենք թըվռուն, դեպի սարն ի վեր,
Անուշ գյուղական յերգով։

Դեմից մոտենում ե աղջիկների խումբը,
Հանդիպում ենք իրար գեղջկուհու խինդով,
Գույնզգույն զգեստներով ծածկում ենք թումբը,
Ոդը լցնում ենք ծիծաղի թինդով։

Յեվ անհայտ մի սարի մի անհայտ լանջին
Մենք պար ենք բռնում զվարթագին,
Այնպես քաղցր են հնչում մարդու ականջին,
Այնպես զվարթացնում են հոգին...

Գյուղում ձյուն է, ձմեռ, արևը փայլում է,
Կիրակի չէ ուրախ, որն է բացվում դեղին,
Ճերմակ կալերի մեջ հավաքվում են մարդիկ,
Զրույցի չեն բռնվում, խոսում դեսից, դենից։

Կոճինները առած, մանուկներն են վազում,
Խաղալու ուրախ կոճախաղի,
Հանկարծ բարակ ձայնով, ձայնով իր նվագուն,
Գյուղական զուռնան է գլում մոտիկ թաղից։

Պսակում են էնտեղ այսինչի աղջկան,
Տանում են հեռու տեղ, հեռու, հեռու մի գյուղ,
Ու նորից գլում է դհոլը գյուղական,
Ուրախ ձայնով լցնում դաշտեր, կալեր ու հյուղ։

Հավաքվում են մարդիկ լենսիրտ հարսանիքին,
Ձիլ գլում է զուռնան, դհոլն է դղրդում,
Իսկ դիմացի թաղից, կանգնած տան տանիքին,
Պառավներ ու ծերեր հարսանիքին են նայում։

Մոտիկ գյուղից չեկած դհոլ խփող ուստան,
Լայն փափախը դրած, փաթաթված բաշլուղով,
Բեխերից կախ արած սառույցի շարանը՝
Զլել է չերգ մի գել, պապենական ու խոր։

Ինձ համար էլ չեղավ այսպիսի հարսանիք,
Ինձ էլ գյուղից վերցրին ու բերեցին քաղաք,
Վորդիս, վատ է այստեղ, վատ է քաղաքը լայն,
Հազար հնչյուն ունի, հազար գիլ աղաղակ»։

Նա պատմում էր էլի, իսկ չես չէյի զգում,
Զեյի զգում նրա այդ հին կարոտը վառ.
—Ախր ի՞նչ կա այնտեղ, ի՞նչն է այդպես հուզում,
Կամ ինչո՞ւ չես տանջվում էդ հին գյուղի համար։

Իսկ նա դեռ հիշում էր, մտածում էր նա դեռ,
Ցես դուրս էյի գնում դեպի մոտիկ այգին,
Մայրս դեռ հիշում էր, մայրս մրմնջում էր.
—Ո՛, հեռավոր իմ գյուղ, գյուղ իմ անուշ, անգին...

Բարձրանում էր մայրս մեր տանիքի վրա,
Ու նայում էր հյուսիս, և վորպես փակ դռներ,
Զգվում էյին նրա խոր հայացքի դիմաց՝
Գեղջկական պար բռնած լեռները։

Ցերկնքին էր նայում։ «Հեռվում ամպեր կան սև,
Շուտով կարկուտ կգա իմ լավ գյուղի վրա...»
Ամպերն էլի հեռվում դիզվում էյին դեզ-դեզ,
Անհաբեկված մայրս դեռ նայում էր նրանց։



«—Խաչը դուրս կհանեն, կանեն թափոր հիմի,
Ամպերը կգոռան կարկտաբեր ու չար,
Խաչը դուրս կհանեն, կանեն թափոր նորից,
Կարկուտն անձրև դառած՝ սելավ կթափվի վար»։

Բայց չես էլի՛, էլի՛ չէյի լսում նրան.
—Ախր ի՞նչ կա այնտեղ, ախր ի՞նչ կա այնտեղ,
Ի՞նչ կա սրտի մոտիկ, կամ սիրելու համար —
Այնտեղ տներ կան ցած ու դեղնավուն հանդեր։

Կարելի չէ գնալ, գյուղը փոխել նորի,
Այնտեղ նոր կյանք տանել՝ տրակտորին բարձած,
Կամ ուղարկել այնտեղ կարմիր զինվորներին՝
Բանակի ծառայությունից դարձած։

Նրանք ու չես այնտեղ պիտի անենք շատ բան,
Մինչև գյուղը դառնա սրտի համար անուշ,
Թե չէ ի՞նչը սիրել այդ գյուղերից հնացած,
Հյուղակներից հողե և արորից անուժ։

Ու չերբ չերկաթ հագնի գյուղը վոտից գլուխ,
Ու չերբ արդեն արտել դառնան խրճիթ ու տուն,
Ինձ էլ պիտի թվա գյուղը չքնաղ, անուշ,
Պիտի ապրի գյուղը,—էդ նո՛րը իմ սրտում։

Դրա համար է հենց, վոր բոլորս մեկտեղ
Գյուղ ենք գնում, հիմքից փոփոխելու նրան,
Մա՛յր, թո՛ղ հին հուշերդ, ախր ինչի՞ չեն պետք,
Վոր պահում ես նրանց դեռ քու հոգու վրա...

4

Որեր անցան կրկին, ու իմ մայրս անհա,
Գյուղացիական չերկրի կարոտով մի անհուն,
Դեպի էդ հին, խարխուլ գյուղը ճամբա ընկավ,
Գնում էր նա հեռու, գնում էր հորանց տուն։

Նորից հիշեց գյուղը, նորից պատմեց մի քիչ,
Ու նստելով սայլին, ճա բա ընկավ դանդաղ.
— Մա՛յրս, հինն ես էլի, մինևո՛ւյնն ես ընդմիշտ,
Ցեվ սիրտդ կրծում է նույն կարոտը անթաղ։

Նա գնում էր սայլով, հեռանում էր սայլով,
Հասնում էր լեռներին, վոր բռնել են շուրջպար,
—Դեպի ձեզ եմ գալիս ան՛ուն մի կարոտով, —
Լեռներ, էլ փա՛կ դռներ, բա՛ց արեք ճանապարհ...

3

Սերունդներ ենք տարբեր, ձգտումներով տարբեր,

Յես գնում եմ դեպի քաղաքն աղմկահույզ,
Յես հասնում եմ արդեն, յես նորով եմ հարբել,
Իսկ դու դեռ սիրում ես հնամյա գյուղդ կույս։

Ի՞նչ ես փնտրում այնտեղ, ի՞նչ ես կորցրել անհետ,
Յելնող նորի դիմաց հի՞նն ես ուզում ելի,
Բայց հինը ջարդվել ե, հինը ջախջախվել ե,
Յերկա՛թն սպանել ե փայտե սելին։

Յես քաղաքում նո՛րն եմ փնտրում, վոր ծլում ե,
Իսկ դու գյուղում հիմա պրպտում ես հինը,
Դու չես տեսնում վառման արևի ցոլումը,
Փնտրտուքդ իզուր՝ հի՛ն ե, հի՛ն ե, հի՛ն ե...

Վերադառնում եյի գործարանից յես տուն,
Ամեն որվա պես լուռ, բայց զվարթուն ելի,
Մեր դռան մոտ կանգնած մի սել եր յերևում,
Ու մայրս իջնում եր եդ գյուղական սելից։

Մոտ վազեցի նրան.—Տեսա՞ր գյուղը, տեսա՞ր,
Այնտեղ ի՞նչ կար անուշ, այնտեղ ի՞նչ կար չքնաղ.
Վորպես խոր մի ձորից, մայրս ձայնեց տխուր.
«—Դու ճի՛շտ եյիր ասում, վոչի՛նչ, վո՛չինչ չկա։

Քանդատել են առուն, են գեղեցիկ առուն,
Փորել են նեղ մի հուն, ենտեղով ե հոսում,
Նվաղել ե առուն, իմ գեղեցիկ առուն,
Եվ ջրերը այնպես զվարթուն չեն խոսում։

Գյուղում շա՛տ բան չկա, փոփոխվել ե շատ բան,
Շա՛տ տներ են քանդվել ու շինվել նոր տներ,
Իսկ դեպի դաշտ տանող մեր այն փոքրիկ ճամբան
Դարձել ե քաղաքի փողոցների պես լեն։

Մի մեծ շենք են շինել գյուղի հենց մեջտեղում,
Քաղաքի տան նման քարաշեն ու մեծ տուն,
Խրճիթները նրա տեսքից շատ են նեղվում,
Ամաչում են կարծես իրենց դեմքից անդուր։

Կար ժամանակ, վոր այդ սև շենքի փոխարեն
Մի խրճիթ եր կանգնած, պապենական ու հին,
Այն շենքի պատի տակ ինչքա՛ն ենք խաղ արել
Յես ու իմ մեռած ընկերուհին...

Գիքո ամին տխուր, իր դուքանի դռան,
Դուքանի դուռը փակ, եվ մուշտարի չկա,
Նոր խանութ ե բացվել, ցուցանակը վրան,
Կոոպերատիվ խանութ, քաղաքից գյուղ ընկած։



Ախր ափսոս չե՞ նա, գյուղի Գիքո ամին,
Թութուն անգամ չունի իր չիբուխի համար,
Յես նորից հիշում եմ անցած հին որերից՝
Գիքո ամին նստած իր դուքանի դռան։

Փոքրիկ աղջիկ եյի՝ հետս մի քանի ձու,
Գնում եյի դուքան, առնելու կոճ, ասեղ,
Գիքո՛ ամի, գլխիդ յեկել ե ցավ ու ձյուն,
Եվ ի՞նչ պատմեմ, վորդիս, կամ թե ել ի՞նչ ասեմ...

6

—Ո մա՛յր, վորքա՛ն հին ե այդ գեղջկական հոգիդ,
Վորքա՛ն օտար ես դու բարձրացող նոր գյուղին,
Բայց դեռ քիչ ե արված, բայց դեռ գյո՛ւղ կմտնի
Քաղաքների հսկան՝ յերկաթուղին։

Իսկ հետո կմտնի մի ուրիշ մեքենա,
Վողջը յերկաթ միայն ու չոր չուգուն,
Իսկ հետո դեռ վորքա՛ն պիտի բարձրանա
Գյուղի մեջ քարաշեն, մեծամեծ տուն։

Դու ատում ես նորը, սրտով հնի հետ ես,
Դու սիրում ես չուլթը, կալը, հյուղը ու կամ,
Բայց վերելքում այս նոր արդյոք, մա՛յր իմ, գիտե՞ս,
Վոր բացվում ե գյուղի մեր աշխարհի վրա
Արեգակը պրոլետարական...

---

— Բնորոշեցեք մոր հոգեբանությունը:
— Որդու հոգեբանությունը:
— Հակադրվո՞ւմ են արդյոք այդ հոգեբանությունները իրար:
— Ինչո՞վ ե պայմանավորվում մոր յեվ որդու հոգեբանության հակադրությունը:

---

— Կա՞ արդյոք այստեղ հին յեվ նոր գյուղի հակադրություն:
— Ո՞րն ե այդ հակադրության հիմնական պատճառը:

---

— Ո՞ւմ կողմն ե հեղինակի համակրանքը՝ մո՞ր, թե որդու:—Ինչո՞ւ:
— Լավատե՞ս ե հեղինակը խորհրդային գյուղի նկատմամբ, թե՞ հոռետես: Ինչո՞ւ:

---

— Կա՞ն արդյոք այժմ մեզանում այսպիսի մայրեր յեվ որդիներ:

---

— Մանրամասն վերլուծեցեք հեղինակի ոճը, պատկերները յեվ համեմատությունները, աշխատեցեք որոշել, թե ի՞նչ տարբերություն կա մոր յեվ որդու գործածած լեզվի, բառամթերքի յեվ պատկերների մեջ. ինչո՞վ ե պայմանավորված այդ տարբերությունը:
— Ինչո՞ւ յե հեղինակը ժողովրդական բառեր դրել որդու, յեվ ոչ թե մոր բերանում:

## ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ՅԵՐԿԱԹԵ ՅԵՐԳԸ

Ո՛, դաշտեղեն չլուտ յերկիր,
Ո, դաշտեղեն չլուտ յերկիր,
Ո, դաշտեղեն չլուտ յերկիր...։

Այս յերկրում հոսող ջրանցքները,
Վոր գալիս են ժայռե հուններով,
Բերում են չլուտ իմ այս յերկրին
Յերկաթի բաղձանք ու կորով։
Խոխոջանք ու խոխոջանքի տոն է այսոր
Յերկրում մեր այս տափարակ,
Կարկաչուն կարկաչում են ջրանցքները
Հողերի մեջ մեր պապակ։

Ո՛, դաշտեղեն չլուտ յերկիր...։

Վաղն այս կապտերից ջրանցքների ափերին
Կփռվի յերկիրը մեր նորաբաղձ,
Այս չլուտ գետափներին, այս չլուտ քարափներին,
Հյուր կգա յերկիր մի նորաբարձր։
Ու կբարձրանան ջրանցքների ափերին
Յերկաթավորված գյուղերը մեր,
Հնադարյան այս խավար գիշերներին
Լուսեղեն գալիքն է գալիս նվեր։

Ո. դաշտեղեն չլուտ յերկիր...։

Յեվ այսոր, վոր վոլորուն իրենց հուներով
Հոսող այս ջրանցքներն են կապտագունել,
Նրանց ջրերի միջից յես պայծառ տեսնում եմ
Յերկրիս բարձունքները գունեղ։
Նրանց ջրերի միջից վեր են յելնում
Ու կանգնում են դեմս վորոշակի՝
Յերկաթված յերկիրը մեր վաղվա գալիք,
Ու վաղվա քաղաքները մեր ահագին։

Ո՛, դաշտեղեն չլուտ յերկիր ...։



Յելնում է իմ դեմ մի հաղթ յերկիր
Այս ջրանցքներից հղիացած,
Գյուղաստան յերկրիս հողե կտուրները
Անզորորեն թափվում են ցած։
Յեվ ելի խոխոջուն խոխոջում են ջրանցքները,
Յեվ ելի նրանց ջրերն են կապտագունել,
Տեսնում եմ նրանց մեջ՝ յերկաթված իմ յերկիրը
Ու պսպղուն բախտն իր գունեղ...

---

## ԿԱՅԱՐԱՆԻՑ ՇՉԱԿՆԵՐԻ ՁԱՅՆԸ

Գալիս է հեռու կայարանից
Շչակների ձայնը...։

Այս փոքրիկ քաղաքը գյուղաստանյան,
Յեվ հողե կողերով գյուղերն այն—
Լսում են հեռու կայարանից յեկող
Շչակների ձայնը...։

Այդ արդյոք նա չէ՞ այդպես ճչում,
Վոր պիտի գար,
Պիտի գար անշուշտ,
Խավարի միջից դուրս հանելու
Այս փոքրիկ քաղաքը,
Գյուղակներն այն,
Ու յերկիրս կիսաքաղց ու կիսակուշտ։

Յեվ ահա լիաթոք ճչում է ելի,
Այդ մեր գալիքն է,
Այդ այն է,
Այն է...։

Լսվում է հեռու կայարանից
Շչակների վողջունող ձայնը...։

Այսոր յեկել է նա կայարան,
Վաղը կիջնի վար, կիջնի քաղաք,
Կպոռթկա իմ լուռ յերկրի վրա
Քաղաքների յերկաթաշունչ աղաղակը։

Վաղը կիջնի վար, կիջնի քաղաք,
Կգնգա շինվող մայթերի վրա,
Կփռվի դաշտերով, սարով, ձորով.
Ու կմտնի գյուղ ու ավան,
Կլցնի ճիչով յերկաթական,
Կլցնի գյուղերը լույս ու նորով։

Յես այդ զգում եմ արդեն իմ ներսում,
Յես այդ զգում եմ իմ արյան մեջ,
Անանջատ մասն է նա իմ արյան:

Գալիս է հեռու կայարանից
Շչակների ձայնը...:

Գյուղերը ծխում են դեռ թոնրաբերան,
Այնտեղ նախիրն է միայն բառաչում,
Ամպախռիվ յերեկոյան,
Գյուղի վրա,
Հովվական շներն են տխուր հաչում:
Մթնում է որը, նախիրն է դառնում,
Լցնում է ախոռներ, գոմ ու մարագ,
Բայց ահա,
Գյուղը,
Գյուղը հայացքը ո՞ւր է հառում,—
Թակում են քունքերը տենդոտ, արագ:
Դարերից ի վեր կույր է իմ յերկիր:
Փաթաթված գիշերվա աղջամուղջում,
Վոր այնպես կարոտ ես յերկաթի յերգի,
Վոր չես լսել դեռ յերկաթի վողջույնը,—
Այդ նա յե կանգնել լեռան վրա
Ու յերկաթալար ձեռքը մեկնած՝
Ելեքտրական կրակ է ցրում
Գյուղերի վրա մութ ու հոգնած:

Առաջին անգամ լուսնի ներքո,
Խավարամած այս ձորակում,
Վառվում են լույսեր հրե յերգով,
Իջնում է վառման, նոր իրիկուն:

Առաջին անգամ այս խավար ձորում,
Լեռնակողի ձորում այս հին,
Խավարի կուրծքն է անընդհատ փորում,
Նա,—
Ելեքտրականը,
Ամեհին:

Շատ շուտով կիջնի կայարանից
Ու դեպի գյուղ կքայլե այն ել,—
Փռում են արդեն այս յերկրի վրա
Բազմաթիվ շչակների ձայներ...:

---

— Ի՞նչ ընդհանուր բան կա Մ. Արմենի այս յերկու բանաստեղծությունների մեջ:

— Ի՞նչ է այս բանաստեղծությունների նյութը:



— Նմա՞ն են այս բանաստեղծությունները ըստ ձեզ:

— Ո՞րն է այդ նմանությունը, ինչի՞ մեջ է արտահայտվում:

— Կա՞ արդյոք նմանություն այս բանաստեղծությունների յեվ Գ. Աբովի «Շիր ջրանցքի բանվորներին» բանաստեղծության մեջ: Ի՞նչն է ընդհանուր յեվ ի՞նչը տարբեր:

— Արտացոլո՞ւմ են արդյոք այս բանաստեղծությունները մեր ժամանակակից կյանքը:

— Կարելի՞ յե արդյոք այս բանաստեղծություններից յելնելով, վորոշել հեղինակի վերաբերմունքը դեպի մեր յերկրի ինդուստրացումը. բացասակա՞ն է այդ վերաբերմունքը, թե՞ դրական:

---

ՆԱՅԻՐԻ ԶԱՐՅԱՆ

## ՀՆՁՎՈՐԸ

Տխուր է զնգում գերանդին,
Հասկերը շշում են — «ուշ է...» —
Ինչքան էլ ցնծա յեռանդից՝
Գերանդին արդեն անուժ է։

Յերբ էնտեղ հնձվոր մաշինան
Շաչշափում է շախին յեռանդից,
Շպրտում է խուրձերը շինած, —
Էլ ու՞ր է զնգում գերանդին։

Ո՛չ, քո՛ւն է հունձը, մաշինա՛, —
Տխո՛ւր է զնգում գերանդին։

---

— Ո՞ւմ բերանով է այստեղ խոսում բանաստեղծը:
— Ինչո՞ւ յէ «տխուր զնգում» գերանդին, յերբ գործում է մաշինան:
— Ինչի՞ կողմն է հեղինակի համակրանքը՝ գերանդո՞ւ, թե մաշինայի:

---

— Դրեք այս բանաստեղծության յուրաքանչյուր տողի բառերի շեշտերը յեվ փորձեցեք պարզել, թե կա՞ արդյոք այդ շեշտերի դասավորության մեջ կրկնվող դասավորություն:
— Ապա կարդացեք բանաստեղծությունն ըստ այդ շեշտերի յեվ վորոշեցեք՝ յերաժշտակա՞ն է հնչում բանաստեղծությունը, թե վոչ:

---



ԽՈՐԵՆ ՌԱԴԻՈ

## ԱՄԱՌՆԱՄՈՒՏ

1.

Ամառնամուտ է և ծիրան,
Աճում է շուրջըդ ամեն ինչ.
Արևն է վերևից ծորում,
Բուրում քաղցրություն,
Նարինջ։

Հույզերի ալիք մի ահագին,
Յեփվում է վոլորտում իմ հոգու, —
— Ամառնամո՛ւտն է իմ կյանքի,
Վոր հոգուս դռներն է թակում։

Ամառնամուտ է ամենուր,
Աճում կա շուրջս ճռնչյուն,
Յեվ գլխումս մութ մի հանելուկ,
Բզփորում է բութ մի փորփչով...։

2

Խորունկ մի ժպիտ մութ դեմքին՝
Ասում է վարպետս հանկարծ.
— Ա՛յ ղոչաղ,
Մեծանում ես աչքիս,
Դառնում ես տղամարդ։

Ընկերներս էլ Գուրգենը, Մնոն,
— Մատղա՛շ,
Մեզ ես հասնում,
Տես —
Ասում են, —
Գուցե ձե՞ռ են առնում, —
Մտածում, նայում եմ յետ։

3

Տարիներ են յեկել, անցել,
Այնպե՛ս կարկաչուն ու զվարթ.
Չգիտեմ յե՞րբ հասա այստեղ,

Այնպես արագ ու սրընթաց։

Ցե՛րբ արդյոք ձեռներն իմ դողդոջ
Մտացյան թափ աշխատանքի,—
Վոր հիմի հախուռն յեռանդով
Բանում եմ բուռն ու սրտագին։—

Շարում եմ, շարում անընդհատ,
Կապարե տառեր խառն ու խուռն,
Ցեվ առնում են նրանք հանդարտ
Շարոցում իմաստ ու խորհուրդ։

Հույզերի կոհակ մի ահագին,
Ծեծվում է ափերում հոգուս,—
— Ո՛, ամառնամուտ իմ կյանքի,
Վոր բացվում ես վառ,
Արնագույն։

4

Տեսնում եմ, վոր շուրջս,
Ինձ հետ,
Ցելնում է ամբողջ մի սերունդ,
Ամառնամուտն է լցվել
Նրանց վառ,
Հրահուր սրտերում։

Ցեվ մանուկ,
Ձի՛լ ձայներ քանի,
Հնչում են արդեն թավ,
Հասուն,
Ցեվ քանի՛ դեմքեր պատանի,
Պատվում են թարմ աղվամազով։

Աճում են մկաններ կարծր,
Աճում է միտքը խորասույզ,
Ցեվ քաղցր,
Նոր աշխատանքը
Հագցնում է ձեռներին մազոլ։

5

Ու ինչպես վարպետն իմ,
Կամ Մնոն,
Ցես ինքս էլ ասում եմ ինձ.
— Աճում ես, մատաղ,
Ամրանում,
Ինչպես սերունդը դեմիդ։

Ցեվ գալիքն այգ,
Կանգնած քո դեմ—
Ջա՛նք է, ճի՛գ.
Քրտինք է յեռուն։—



Այս տարի յես կարող եմ ընտրել.
Ընտրվել մեր խորհուրդներում։

6

Ամառնամուտ է ու ծիրան,
Աճում է շուրջս ամեն ինչ,
Արեն է վերևից ծորում,
Բուրում, քաղցրություն,
Նարինջ։

Հույզերի կոհակ մի ահագին,
Ծեծվում է ափերում հոգուս—
— Ո՛, ամառնամուտ իմ կյանքի,
Վոր բացվում ես շեկ,
Արնագույն։

---

— Ո՞վ է այս բանաստեղծության մեջ խոսողը։
— Լավատե՞ս է նա իր ներկայի ու ապագայի վերաբերմամբ, թե՞ հոռետես։
— Ինչո՞վ է դա պայմանավորված։
— Կարո՞ղ էր բանվորը նման հույզեր ունենալ հեղափոխությունից առաջ բուրժուական հասարակարգում։

---

— Ի՞նչ տրամադրություն է առաջացնում այս բանաստեղծությունը ձեր մեջ. համակո՞ւմ է հեղինակը ձեզ իր կենսուրախությամբ, թե ոչ։
— Ընդգծեցե՛ք այս բանաստեղծության ամենահաջող տեղերը։
— Ինչո՞ւ յեն դրանք հաջող. ըստ իմաստի՞, թե՞ ըստ ձևի։

ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ԱՆԻՎԻ ՅԵՐԳԸ

*Շողիդ ու շունչս*
*Իրար են ձուլվում,—*
*Անիվ իմ, դարձիր։*

*Դեռ նոր կոշտացած*
*Իմ բազուկները,*
*Քեզ հետ են կապված—*
*Անիվ իմ, դարձիր։*

*Մեր կյանքում հիմա*
*Մեր լացն ու խինդը,*
*Մեկտեղ են լինում—*
*Անիվ իմ, դարձիր։*

*Կարծես թե կյանքում,*
*Յերկուսս էլ էսպես,*
*Մեկտեղ ենք ծնվել,*
*Անիվ իմ, դարձիր։*

*Որերը ուրախ,*
*Թե տրտում անցնեն—*
*Մենք միասին ենք,—*
*Անիվ իմ, դարձիր։*

*Անսանձ ու անզուսպ*
*Սեր կա իմ սրտում—*
*Յես քեզ եմ սիրում.—*
*Անիվ իմ, դարձիր։*

*Կյանքի փոթորկում*
*Մենք իրար գտանք*
*Յեվ չենք բաժանվի,—*
*Անիվ իմ, դարձիր։*

*Շողիդ ու շունչս*
*Իրար են ձուլվում,—*
*Անիվ իմ, դարձիր։*

---

— Համեմատեցեք այս բանաստեղծությունը ըստ բովանդակության Մ. Պետրոսյանի «Մեքենավարի հիշատակարանը» պատմվածքի հետ:
— Ի՞նչն է ընդհանուր յեվ ի՞նչն է տարբեր:
— Ի՞նչով է դա պայմանավորված:
— Կարո՞ղ էր արդյոք մի մեքենավար այն ժամանակ գրել այսպիսի մի բանաստեղծություն:
— Իսկ ա՞յժմ:
— Ինչո՞ւ:



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ ՈՒ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Ի՞նչ ժամանակաշրջան են ընդգրկում այս բաժնում զետեղված պատմվածքներն ու բանաստեղծությունները:—Ինչի՞ց է դա յերեվում:
— Ի՞նչն է այդ պատմվածքներում ընդհանուր:
— Կա՞ արդյոք այստեղ զետեղված բանաստեղծությունների մեջ մի ընդհանուր տրամադրություն. վո՞րն է դա յեվ ինչո՞վ է պայմանավորված:
— Կա՞ն արդյոք այս բաժնում պատմվածքներ, վորոնցից մենք վորոշ տեղեկություններ ենք ստանում խորհրդային գործարանի յեվ այնտեղ աշխատող բանվորների մասին: Վո՞ր պատմվածքներն են դրանք:
— Կարելի՞ յե արդյոք այդ պատմվածքներից յելնելով պարզել, թե ի՞նչ վերաբերմունք ունեն այժմ բանվորները դեպի իրենց գործարանը:
— Ի՞նչն է այդ վերաբերմունքի պատճառը:—Կարո՞ղ էր լինել այդպիսի վերաբերմունք Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ։—Ինչո՞ւ:
— Վո՞ր պատմվածքներում է նկարագրված խորհրդային գյուղը:—Ինչի՞ց է յերեվում, վոր այդ պատմվածքներում նկարագրված է խորհրդային գյուղը, յեվ վոչ թե հին գյուղը:—Վո՞րն է այդ յերկու գյուղերի ամենահիմնական տարբերությունը:—Նկարագրվա՞ծ է այդ տարբերությունը ձեր մատնանշած պատմվածքներում։
— Վո՞ր դասակարգի կողմն է այստեղ զետեղված պատմվածքների հեղինակների համակրանքը: Ինչի՞ց է դա յերեվում:
— Վո՞ր դասակարգի կողմն է բանաստեղծությունների հեղինակների համակրանքը:—Ինչի՞ց է յերեվում:
— Կարելի յե արդյոք այս հեղինակներին համարել բանվոր դասակարգի յեվ չքավոր գյուղացիության տրամադրություններն ու ձգտումներն արտահայտող հեղինակներ:—Ինչո՞ւ:

---

— Վո՞ր պատմվածքն ամենից շատ հավանեցիք:—Ինչո՞ւ:
— Վո՞ր բանաստեղծությունը:—Ինչո՞ւ:
— Ի՞նչ եք կարդացել այս բաժնի հեղինակների գրվածքներից՝ բացի այստեղ զետեղվածները:

---

— Համեմատեցեք Արմենի «Յեվրոպացին» յեվ «Արեվը» պատմվածքները յեվ աշխատեցեք գտնել վոճային ու լեզվական այն ձեվերը, վոր ընդհանուր են դրանցում:—Կա՞ն արդյոք ձեվական այլ նմանություններ:
— Համեմատեցեք այդ պատմվածքներն Ակսելի պատմվածքների հետ յեվ

ախատեցեք վորոշել, թե ինչո՞վ են տարբերվում այդ յերկու հեղինակների լեզուն ու պատմելու յեղանակը:

— Ինչի՞ց կարելի յե իմանալ հեղինակի վերաբերմունքը դեպի իր նկարագրած դեպքերն ու դեմքերը. միմիայն դրանց մասին հեղինակի հայտնած կարծիքների՞ց, թե նայեվ դեպքերի դասավորությունից, նկարագրված դեմքերին վերագրվող բնավորության գծերից յեվ այլն.

---

— Ի՞նչն է այստեղ զետեղված բանաստեղծությունների մեջ ՙընդհանուր, բացի այն ամենից, վոր դրանց մեջ ընդհանուր է ըստ ընտրված նյութի **բովանդակության**:

— Կա՞ արդյոք վորոշ ընդհանուր բան **ըստ ձեվի**:

— Կա՞ն արդյոք դրանց մեջ ընդհանուր, նման պատկերներ, վոներ, առանձին բառեր յեվ այլն:

— Ինչո՞վ է պայմանավորված այդ ընդհանրությունը, նմանությունը:

---

— Կարդացեք Ալազանի «Դասալիքն» ամբողջությամբ:

— Կարդացեք Մ. Արմենի յեվ Արաքսի «Պատմվածքները»:



II. ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՆՐ-ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ՅԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ

# ՏԻՐՎԱՆՁԱԴԵ

## ՎԱՐԴԱՆ ԱՀՐՈՒՄՅԱՆ

(ԿՐՃԱՏՎԱԾ)

*Մի ականատես պառավ, վոր ապրեց մինչև տասնուիննյերորդ դարի վերջին տարին, պատմում եր, թե այն որը սոսկալի որ եր, յերբ աշխարհ յեկավ Վարդան Ահրումյանը։ Իբրև թե յերկինքը շարունակ վորոտում եր, յերբեմն մռնչում ամեհի գազանի պես. մթին ամպերը, դեկը կորցրած նավերի նման, տատանվում եյին, չիմանալով ուր գնալ։ Բայց անձրև չեր գալիս, և չեկավ ամբողջ որը։ Յերկինքը խավարել եր, կատաղի հողմից բարձրացող փոշին վոլորմոլոր պտույտներ եր գործում փողոցներում և քաղաքին տալիս վիթխարի ապորիքի տեսք։*

*Աշխարհագրական մեծ քարտեզում այս քաղաքը, հարկավ, ունի իր վորոշ տեղն ու վորոշ անունը։ Գոնե գնդասեղի գլխիկից շատ փոքր մի կետ ցույց ե տալիս, թե նա գտնվում ե Սև ու Կասպից ծովերի միջտեղում, Կովկասյան լեռնաշղթայի ստորոտում։ Յուր արտաքին տեսքով, մանավանդ ներքին կենցաղով, վարք ու բարքերով, անցյալ ու ներկայով, խելոք ու հիմար ավանդություններով ու սովորություններով նա այնքան նման ե Կովկասի մյուս քաղաքներին, վոր հարկ չկա նրա իսկական անունն այստեղ հիշելու։ Թող ուրեմն նա կրի մի անգործ կատակաբանի հնարած կեղծ անունը - Ջիլգիլ։*

*Վարդան Ահրումյանի ծնունդը կատարվում եր Ջիլգիլ քաղաքի միջին մասում, մի տափակ կտուրով միհարկանի քարաշեն տան մեջ։ Դրսի կողմից այս տունն ուներ միմիայն մի լուսամուտ, քողարկված յերկաթե ամուր ցանցով, յերկու խուլ պատուհաններ և մի ահագին դարպաս, վոր միշտ փակ եր յերկու հաստ նիգերով։ Չորս շարք յերկաթե գամեր, վորոնց գլուխներն ունեյին սունկերի*

մեծությունն, այս դարպասին տալիս եյին միջնադարյան շուք իրանց ժանգով։ Մռայլությունը կրկնապատկվում եր լուսամուտի յերկաթե ցանցի թանձր փոշով ու սարդի խիտ վոստայններով, վորոնց մեջ հանգչում եյին անթիվ ճանճեր։ Նայողն ակամա կարծում եր, թե ահա, ահա տան մի ծայրից կերևա պահապան զինվորը, հրացանն ուսին և լուսամուտից կնայե թշվառ բանտարկյալի կանանչ—դեղնագույն ուռած դեմքը։

Շատ քչերն եյին ներս մտնում այդ դարպասի մեջ բացված փոքրիկ կամարաձև դռնով, կանխապես զարկելով նրա վրա քաշ արած հաստ ու կեռ յերկաթե զարկոցը, վոր նույնպես ժանգոտվել եր քիչ գործածվելուց։ Յեվ նրանք, վորոնք մտնում եյին, դուրս եյին գալիս վոչ ուրախ դեմքով։

Այստեղ եր բնակվում Չիզիլ քաղաքի հայտնի վաճառական Բաղդասարը, պարսից վերջին խանի ախոռապետ Ահրումի թոռը։ Նա հայտնի չեր վոչ այնքան յուր հարստությունով կամ ծագումով, վորքան անմատչելի, ժանդ, նույնիսկ մարդատյաց բնույթով։ Այս մարդը խույս եր տալիս հարևաններից, ատում եր ազգականներին (և իրավունք ուներ, վորովհետև շատերը ձրիակերներ եյին), իսկ բարեկամներ գրեթե չուներ և չեր էլ կամենում ունենալ։ Սափրիչ Պողոսը, վոր կիրակի առավոտները գնում եր Բաղդասարի յերեսը թրաշելու, հավատացնում եր, թե անհյուրընկալ մարդը նույն որն իսկ յուր «ուստային» ընդունում ե տհաճությամբ։ Ավագ քահանա Տեր Սարգիսը, վոր միայն Զատիկ ու Ջրորհնեք որերն եր այցելում մռայլ տունը, պնդում եր, թե նույնիսկ այդ ուրախ որերին Բաղդասարը չի կամենում հյուր ընդունել, բացի մի մարդուց—քաղաքի առաջին վաճառական Աբրահամ աղայից։

Ահա թե ինչպիսի մարդ եր Բաղդասարը և ահա ինչու այն տագնապալի պահին, յերբ նրա կինը գտնվում եր ծանր յերկունքի մեջ, վոչ վոք չկար այդ մարդու մոտ։ Նա անցնում եր սենյակից-սենյակ, հառաչում, ինքն իրեն բարկանում և մերթ ընդ մերթ ականջ դնում դեպի ննջարան, ուսկից լսվում եյին Գյուլումի ճչերն ու աղաղակները։ Գյուլումը ծնում եր թվով յերրորդ զավակն իր ամուսնության ութերորդ տարում։ Այս առթիվ հասարակության մեջ պտտում եյին զանազան չար շշուկներ Բաղդասարի հայրական զգացման մասին։ Պատմում եյին, որինակ, թե մի որ սաստիկ բարկանալով կնոջ վրա, այնքան ինքն իրեն կորցնում ե, վոր բռնում ե մի տարեկան աղջկանը թևերից և նրանով զարկում մոր գլխին։ Թշվառ յերեխան իսկույն ավանդում ե հոգին։ Յեվ պատմողները Բաղդասարի այս վայրենությունը վերագրում եյին նրա ատելությանը դեպի իր զավակի սեռը։ Սակայն շատերը բողոքում եյին այս



մեղադրանքի դեմ. յեթե Բաղդասարի համար այդչափ ատելի յե աղջիկ զավակը, ապա ինչու՞ չի սպանում յուր մյուս աղջկան, Մարիամին, վորն այժմ հինգ տարեկան ե։

Թե վորն եր ճիշտ այս կարծիքներից—դժվար եր ասել։ Մի բան միայն անհերքելի յեր — Բաղդասարի ջերմ փափագը՝ ունենալ վերջապես մի արու զավակ։ Յեթե ծնվողն այս անգամ տղա կլինի — վկա յե աստված — Բաղդասարը Գյուլումի համար կգնի մի կտոր թանգագին թավիշ։ Իսկ յեթե, տերը մի արասցե, աղջիկ կծնի — կթքի անամոթ կնոջ յերեսին, այնուհետև հաց էլ չի տա ուտելու արգանդը անիծվածին։

Հանկարծ մի յերկարատև ճիչ ընդհատեց Բաղդասարի մտածմունքները։

Հետո լսվեց մի ուրիշ, բոլորովին տարբեր ճիչ, իսկ և իսկ տոպրակ գցած խոզի ճտի ճվճվոց։ Բաղդասարը հասկացավ բանի եյությունը, յերեսը խաչակնքեց։ Նույն րոպեյին ներս մտավ նրա զոքանչը՝ Չիզիլ քաղաքի այն պառավներից, վորոնց մեջքն այնքան վաղ կորանում ե ասիական կյանքի բռնության ներքո։

— Աչքդ լույս, փեսա, կնիկդ ազատվեց...

— Ազատվելը գլխիդ աված, տղա՞ յե, թե՞ աղջիկ...

— Տղա։

— Լավ։ Գնա բանիդ...

Պառավը չքացավ։ Բաղդասարը շարունակեց անց ու դարձ անել պարսկական գորգերով ծածկված հատակի վրա այնպիսի անկանոն քայլերով, վոր նրա յերկայն գդակի սուր ծայրն ոդի մեջ գծում եր ամենատարորինակ զիգզագներ։ Վերջապես աստված լսեց նրա լռիկ աղոթքները և գաղտնի հառաչանքները և պարգևեց նրան արու զավակ։ Այժմ թող թշնամիների (Բաղդասարն ամբողջ մարդկությունը համարում եր յուր թշնամին) աչքը դուրս գա։ Հե, անիծվածներ, կարծում եյին Բաղդասարն անժառանգ կմնա, ու նրա տուն ու տեղը քարուքանդ կլինի մահից հետո...

Քառորդ ժամ անցած՝ լուր յեկավ, թե Բաղդասարը կարող ե տեսնել իր ժառանգին, յեթե կամենում ե։ Նա անմիջապես անցավ ննջարան։ Այնտեղ նրա աչքին ներկայացավ հետևյալ տեսարանը.— սենյակի մի անկյունում պառկած եր Գյուլումը՝ թույլ, անգույն, գունատ, վորպես դիակ, աչքերը փակ, սակայն, մի յերջանիկ ժպիտ սեղմված շրթունքների վրա։ Նրա գլխի աջ ու ձախ կողմերում նստած եյին քույրերը՝ Զավահիրն ու Զարիկը և լալիս եյին... ուրախությունից։ Ուրախ եյին, վոր իրանց քույրը ծնել եր տղա և մի անգամ ընդ միշտ ազատվել Բաղդասարի դառն կշտամբանքներից։

Յերեք տարեկան հասակում Վարդանը կարմրադեմ, կայտառ մանուկ եր, համոյիկ հյութալի շրթունքներով, վորոնց միջից յերևում եյին նրա առաջին մանկական ատամները: Նրան թույլ եյին տալիս տնից դուրս գալ իր քրոջ հսկողությամբ: Մարիամը հինգ տարով յեղբորից մեծ լինելով, կարող եր նրան հովանավորել: Նա շալակում եր Վարդանին, տանում փողոց և այնտեղ հետը խաղում, չթողնելով նրան միանալ փողոցի յերեխաներին հոր պատվերի համաձայն: Սակայն, ինչպես յերևում եր, Վարդանը Բաղդասարի մարդատյաց բարքը չեր ժառանգել: Ընդհակառակը, նա ձգտում եր խառնվել հասակակիցների խմբին և նրանց հետ խաղալ: Նա սիրում եր խաղալիքներ. հենց վոր մի յերեխայի ձեռքում տեսնում եր մի վորևե գրավիչ բան, վազում եր ու աշխատում խլել նրանից: Այն ինչ՝ ինքը յերբեք վոչ մի բան չեր տալիս ուրիշներին, թեկուզ մի քանի վայրկյանով:

Մի որ Բաղդասարը նրա համար շուկայից բերեց մի տափակ տուփ, վորի փակ կափարիչի վրա կար մի նեղ ծակ հինգ կոպեկանոցի յերկայնությամբ, և տալով վորդուն, ասաց.

— Ըհը, առ, ինչ վոր ձեռքդ փող ընկնի, գցիր այս «դախլի» մեջ:

Այդ որից ինքը Բաղդասարը, գրեթե ամեն յերեկո, տուփի մեջ գցում եր վորևե պղնձի կամ արծաթի դրամ, այսպիսով վորդու համար դրամագլուխ ժողովելով:

— Լսիր, վորդի՛, ասում եր նա ամեն անգամ, դրամը գրպանից հանելիս.—փող, փող, փող, վոչ բարեկամ, վոչ ազգական, վոչ յեղբայր, վոչ քույր, վոչ մարդկանց պատիվ, վոչ սեր,—փո՜ղ: Նա յե աշխարհի ուժը, որհնվի նրա կարողի ձեռքը:

Վարդանը լսում եր այս խոսքերը և կամաց կամաց ըմբռնում նրանց իմաստը:

---

Շատ չանցած, մանուկն իր տուփը սիրեց ավելի, քան բոլոր խաղալիքները, քան բոլոր շրջապատողներին, քան նույնիսկ հարազատ ծնողներին: Նա սեղմում եր իր գանձը կրծքին այնպիսի գրգվանքով, վորպես սիրավառ մայրն իր միակ զավակին: Յերկու ձեռներով տուփը մոտեցնում եր, ականջ դնում մետաղի ախորժալուր հնչյուններին:

Այս պահերին նրա մանկական դեմքը զրկվում եր անմեղությունից, աչքերը վառվում եյին ագահության անախորժ հրով: Վայ է, յեթե մեկն այդ միջոցներին փորձեր ձեռք տալ նրա գանձին. առնետի պես ծվծվալով կհարձակվեր հանդուգն փորձողի վրա, վորպեսզի յեղունգներով հանի նրա աչքերը:



Նայելով յուր գանձը կրծքին սեղմած այդ հազիվ հազ թոթովող մանկանը, կարելի յեր կարծել, վոր նա խանձարուրից արդեն ստացել է անխախտելի գաղափար դրամի մասին, և գիտե, վոր նա յե աշխարհի առանցքը, նրան և միայն նրան պիտի կպչել ամուր, հոգու բոլոր ուժերով, սրտի բոլոր սիրով, ձեռների բոլոր զորությամբ:

Բաղդասարը հոգու խորքերում ուրախանում եր, տեսնելով վորդու այդ բնազդական սերը դեպի դրամը այնչափ, վորչափ կարող եր միայն ուրախանալ միջակ արտիստը, տեսնելով յուր ժառանգի մեջ հանճարի նշույլներ: Նա խրախուսում եր վորդու մեջ այդ սերը և ավելի ու ավելի ամրացնում այնտեղ: Յերբեմն դրամը տալիս եր Վարդանին, վոր նա ինքն իր ձեռքով գցի տուփի մեջ: Յեվ մանուկը, մինչև գցելը, խաղում եր դրամի հետ, մի ձեռից մյուսի մեջ բաց թողնելով, գլորելով հատակի վրա, ինչպես խաղում է կատուն մկան հետ մինչև նրան խեղդելը:

— Չե, այս տղան փուչ չի դուրս գա.—ասում եր Բաղդասարը Գյուլումի ներկայությամբ:

Յերբ մանուկը վեց տարեկան դարձավ, հայրը մի յերեկո վճռեց տուփը բանալ: Դանակի ծայրով զգույշ պոկեց կափարիչը: Հատակի վրա թափվեցին արծաթի ու պղնձի դրամները: Վարդանի աչքերը վառվեցին հոգեկան անսահման հաճույքից, ինչպես կարող եյին վառվել մի ուրիշ մանկան աչքերն սքանչելի հրավառություն տեսնելիս: Նա ակամա աղաղակեց.—

— Ի՛մն ե, իմն ե:

Յեվ յերկու ձեռներով հարձակվեց դրամների վրա, ինչպես գիշակերը վորսի վրա: Միքանի դրամներ գլորվել եյին սենյակի անկյունը: Մարիամը շտապեց նրանց գտնել և փորձեց գրպանը դնել: Սակայն Վարդանը բռնեց նրա ձեռը և այնպես ամուր կծեց, վոր խեղճ աղջիկը ցավից ճչաց, արտասվեց, բաց թողնելով իր ավարը:

Բաղդասարը համրեց փողերը, դուրս յեկավ—39 ռուբլի:

— Ե՛, ե՛,—ասաց նա,—հիմա մտածենք, ինչ պիտի անենք այս փողերը: Արի՛, Վարդա՛ն, տուր ինձ տոկոսով, մանեթին 10 կոպեկ տարեկան: Հա, դու չգիտես ինչ ասել ե տոկոս: Լսիր. այս տարի դու ինձ տալիս ես, ասենք 10 մանեթ...

Յեվ նա մանրամասն բացատրելով տոկոսի նշանակությունը, ավելացրեց.

— Հասկացա՞ր...

— Հասկացա,—պատասխանեց խելոք մանուկը,—յես իմ փողերը տոկոսով չեմ տա, թափիր դախլի մեջ, տո՛ւր ինձ:

Բաղդասարը տուփի կափարիչն ամրացրեց և պատվիրեց Վարդանին շարունակել դրամ ժողովել:

Մի յերեկո Բաղդասարը տանն ինչ-վոր հաշիվներ եր անում, իսկ Գյուլումը Վարդանի համար մետաքսե շապիկ եր կարում, յերբ մյուս սենյակից վազեց Մարիամը և շշնջաց․

— Գնացեք տեսեք՝ Վարդանն ինչ ե անում…

Մարդ ու կին մոտեցան դռներին։ Նրանց աչքերին ներկայացավ հետևյալ տեսարանը․ մյուս սենյակի անկյունը Վարդանը, վառ մոմը առջևը դրած, համրում եր մի բուռն արծաթի ու պղնձի դրամներ։ Նա այնքան եր խորասուզված իր զբաղմունքի մեջ, վոր ծնողների մերձավորությունը չզգաց։ Նրա մանկական ճակատը խորշոմել եր, շրթունքները սեղմվել եյին, ձեռները հուզումից դողում եյին։ Համրելով բոլոր դրամները՝ ձեռը դրեց ճակատին, նայեց առաստաղին—ինչ հիանալի նյութ նկարչի համար։ Հետո նորից սկսեց համրել․ նորից ձեռը դրեց ճակատին։ Պարզ ե, վոր հաշիվը ուղիղ չեր գալիս։ Յեվ վորքան ավելի յեր համրում փողը, այնքան ձեռների դողոցն ավելանում եր, ականջներն ու այտերը կարմրում եյին, շունչը սաստկանում։ Այս յոթ-ութ տարեկան մանուկը սենյակի լռության մեջ, աղոտ լույսի առջև, հիշեցնում եր այն ավանդական ագահին, վոր մեն-մենակ խուլ գիշերներն սուզվում եր իր գանձը, հրճվում վոսկու հնչյունով, լուռ խոսում նրա հետ, վորպես մենասեր փիլիսոփան իր մտքերի հետ։

— Հրաշք ե, տղա չե․—անգիտակցաբար շշնջաց Բաղդասարը, կնոջ թևից քաշելով։

Նա կամացուկ մոտեցավ վորդուն։ Վարդանը գլուխը բարձրացրեց և, իսկույն յերկու ձեռներով փողերը թաքցնելով՝ գոչեց․

— Չեմ տա, չեմ տա, վոչ-վոքի չեմ տա…

Նրա ձայնը, աչքերը, ամբողջ կերպարանքն արտահայտում եյին 70 տարեկան ժլատի վոսկեմոլությունը։

— Վորտեղի՞ց են այդ փողերը,—հարցրեց հայրը։

— Չեմ տա, կծեծես ինձ։

— Դախլի՞ց ես հանել։

— Չե, աստված վկա, չե, յես եմ հավաքել, իմ աշխատած փողերն են։

— Քո աշխատա՞ծ։ Դու ինչպե՞ս ես փող աշխատում։ Ասա, թե չե—կծեծեմ…

Վարդանն ստիպվեց գաղտնիքը բացատրել։ Բանն այն ե, վոր մայրը գրեթե ամեն որ նրան ուղարկում ե մերձակա խանութները, գնելու զանազան պարագաներ տան համար՝ սապոն, մոմ, լեղակ, լուցկի, մածուն և այլն։ Վարդանն ամեն անգամ աշխատում ե մի-մի, յերկու-յերկու կոպեկ յետ գցել իր համար, և ահա գոյացել ե այս գումարը։



— Խելո՛ք տղա, խելո՛ք տղա․—գոչեց Բաղդասարը հիացած։

— Ուրեմն գողությո՞ւն ես արե,—հարցրեց Գյուլումը, վորը միանգամայն համաձայն չեր ամուսնու հայացքին վորդու արարքի վերաբերմամբ։

— Իսկի յել գողություն չե, առևտուր ե,—պատասխանեց Վարդանն ամենալուրջ յեղանակով․—բախկալից առել եմ եժան, քեզ ծախել եմ թանգ։ Առևտրականներն ել այդպես են փող աշխատում։

— Կերար,—գոչեց Բաղդասարը միանգամայն հափշտակվելով վորդու խելացի պատասխանով։

Յեվ համբուրելով նրա ճակատը, կրկնեց․

— Խելոք տղա, խելոք տղա…

* * *

Առաջիկա աշնան սկզբին Բաղդասարը վորոշեց Վարդանին տալ ուսումնարան։ Մի առավոտ մանկանը զարթեցրին կանուխ։ Մայրն ամրապնդեց նրա վորովայնը մի զույգ ձվով, կարագ ու մեղրով և, որհնելով, հանձնեց հորը։

Ճանապարհին Բաղդասարն ամբողջ ժամանակ խրատում եր Վարդանին, բացատրելով ուսման նշանակությունը։

—Տես, վորդի,—ճառաբանում եր նա,—աշխարհն, այ, որինակ, այս չինարի պես մի ծառ ե։ Մարդիկ վորդներ են, նստած՝ ուտում են ծառը։ Վորդ կա, վոր ղոչաղ ե․ նա համ շատ-շատ ե ուտում, համ շուտ-շուտ։ Վորդ կա, վոր տեղից չգիտե շարժվել․ նա քաղցից սատկում ե։ Ուտելու համար ատամներ են հարկավոր։ Մարդու խելքը նրա ատամներն են։ Ուսումը վոր կա մի սրոց ե, իմացի՞ր, համա՛, ատամների սրոց։ Յեթե անուսում խելոքն արժե հինգ հիմարի, ուսում առած խելոքը տասն անուսում խելոքի արժե։ Ուսում առած մարդուն խաբելը շատ դժվար ե․ նա ինքն ուրիշներին կխաբե։ Հիմա քեզ տանում եմ ուսումնարան, փող եմ ծախսելու համա՛, հեշտ չիմանաս։

Վարդանը գլուխը քաշ լսում եր հոր խոսքերը, ամուր բռնած նրա ձեռը և մի քայլին յերկուսն անելով, հազիվ կարողանում եր հավասար ընթանալ նրա հետ։ Մերթ ընդ մերթ Բաղդասարը, այս կամ այն խրատը դրոշմելու համար, այնպես պինդ եր սղմում նրա ձեռը, վոր մանուկը քիչ եր մնում ցավից գոռա։

— Ուսումնարանում,—շարունակեց հայրը,—վոչ վոքի հետ չկռվես, բայց վոչ վոքի հետ ել չընկերանաս։ Գլուխդ քաշ բռնիդ կաց։ Ընկերներից ոգուտ չկա, վնաս կարող ե լինել, և առավել աղքատ ընկերներից․ մեկը գրիչ կուզե, մյուսը թուղթ, թանաք, ել չգիտեմ ինչ։ Ասեղ չտաս, վոր աչքները կոխեն, իմանո՞ւմ ես, ասեղ

չտաս շան վորդիներին։ Դեհ, հասանք ուսումնարան, տեսնենք վերջդ ինչ է լինելու...

Ճիշտ այս պահին Վարդանը յերկու անգամ փռշտաց։ Վորովհետև գիտեր, վոր զույգ փռշտոցը խեր է, իսկ կենտը՝ շառ, շըրթունքները սեղմեց, քթի ծակերը մատներով փակեց և յերրորդ փռշտոցը զսպեց։

— Փառք աստծու,—գոհ յեղավ Բաղդասարը։

Դռների առջև Բաղդասարն իր գույնզգույն մեծ թաշկինակով սրբեց Վարդանի քիթը, վորի ծայրն, ի դեպս ասած, այն ժամանակ հյութավորելու վատ սովորությունն ուներ։ Հայր ու վորդի մտան մի ընդարձակ բակ, վորի յերկու կողմերը ներկայացնում եյին բաց տարածություն տախտակյա պարսպով շրջապատված։ Դասերը դեռ չեյին սկսվել, աշակերտները վազվզում եյին բակում։

Աշակերտներն իսկույն շրջապատեցին նորեկին։

Այստեղ կային մի քանի ազգերի, կրոնների ու աղանդների մանուկներ։ Յուրաքանչյուրը հագնված եր իր ծնողների քեֆով ու նրանց կարողության համեմատ, ուստի խումբը ներկայացնում եր տարազների մի նկարչական խառնուրդ։

—Մյարթին Բաղդանըշը չայ է խմում,—ասաց մի թուրք աշակերտ։

— Քեզ հարցնող չկա,— բարկացավ Բաղդասարը և չուխայի թևերն ուսերին գցելով, նստեց ուսումնարանի առջև դրված նստարանի վրա։

Վերջապես ուսումնարանի պահապան Անդրեասն ազդարարեց, թե Մարտին Բաղդանիչը գալիս է։ Մի քանի վայրկյանում բակը դատարկվեց, աշակերտները վազեցին դասարանները։ Բաղդասարը վոտքի կանգնեց, չուխայի թևերը ցած գցելով ի նշան հարգանքի և խոնարհության։

Յերկդասյան ուսումնարանի տեսուչ Մարտին Բաղդանիչը միջին հասակից քիչ բարձր մի մարդ եր, յերեսը չեչոտ, կտրած բեղերով ու կարճ միրուքով, վոր ծնոտի վրա յերեք մատնաչափ սափրած եր։ Նրա աջ այտի վրա կար ինչ վոր մի բուժված վերքի հետք հինգ կոպեկանոցի մեծությամբ, վոր նրա դեմքին տալիս եր գաժանություն։ Իրոք դժվար եր վորոշել այդ մարդու տարիքը, վորովհետև թեև միրուքն ալեխառն եր, բայց գլխի մազերն տակավին սև եյին, թեև ատամները փթած ու սևացած եյին, բայց քայլվածքն ուներ պատանեկական աշխույժ, ձայնը՝ յերիտասարդական, հնչյուն, իսկ կտրած բեղերը թամբաքուի գույն ունեյին։

Նա մտավ դասարան գլուխն առաջ թեքած. կարելի յեր կարծել, վոր մի անյերևույթ ձեռք կմշտում եր նրա պարանոցը։



Հայր ու վորդի անմիջապես հետևեցին տեսչին։ Սկզբում Բաղդասարը մի քիչ շփոթվեց նրա դեղին կոճակներից, բայց հիշելով, վոր յերկու տարի առաջ նրան ծախել եր մունդիրի համար յերեք արշին կապույտ մահուդ՝ հազաց ու մտքում ասաց, «Քո հերն ել անիծեմ»։

— Բարով ես յեկել,—ասաց տեսուչը,—ինչ կհրամայես։ Վորդուդ ես բերել։ Հա՛, լա՛վ, շա՛տ լավ, ուսում է՝ կտանք, ելի։ Սա՛ս, գարշելիներ։ Խոնարհ տղայի յե նման։ Իսկի գրել-կարդալ չգիտե՞։ Վոչինչ, շուտով կսովորեցնենք...

---

Առաջին տարին Վարդանն ուսման մեջ ցույց տվեց բավական շնորք։ Սովորեց կարդալ ռուսերեն ու հայերեն, նաև մի փոքր գրել։ Նա ամեն յերեկո դասերը կրկնում եր հոր մոտ և արժանանում նրա գովասանքին։ Սակայն հանկարծ նրա բանականությունը կանգ առավ, վորպես կամակոր եշ գետի մեջտեղում և կարծես այլևս չեր ուզում առաջ յերթալ։ Բայց և այնպես մանուկն ի բնե աշխատասեր եր. առնելով ձեռն ամենակարող համբերության մտրակը, սկսեց առաջ քշել բանականությունը, անխնա հարվածելով նրան։ Յեվ այն, ինչ վոր ընդունակ աշակերտները յուրացնում եյին առանց դժվարության, Վարդանը ձեռք եր բերում քրտինքով բառիբուն մտքով։ Միայն մի առարկայում նա ընդունակություն ցույց տվեց—թվաբանության մեջ։ Արդեն տանը, անդադար համրելով իր փողերը, նա ընտելացել եր թվաբանության չորս կանոններին։

Վանդանի դասարանական հարևանը ձախ կողմից գինեգործ Կարապետի վորդի Մինասն եր։ Շեկ մազերով, հեզ, նիհար, հիվանդոտ դեմքով մի բարեսիրտ և ընդունակ մանուկ։ Հագնվում եր նա շատ աղքատ, կապույտ կտավից կարած արխալուղը կրծքի կողմում կարկատած եր մի քանի տեղ, իսկ նույն գույնի վարտիքն այնքան կարճ եր, վոր կոշտ գուլպաների վերևից յերևում եյին նրա նիհարիկ սրունքները։ Նա մեջքին կապում եր հաստ ասույա գոտի. միակ բանը, վոր պաշտպանում եր նրան ցրտից։ Սակայն յուր ցնցոտիների մեջ նա միշտ մաքուր եր մարմնով ավելի քան ով և է աշակերտներից։ Նրան անխտիր սիրում եյին բոլոր աշակերտները, վորովհետև յերբեք վոչ վոքի անախորժություն չեր պատճառում, վոչ վոքի չեր նախանձում և վոչ վոքի չեր մերժում յուր ոգնությունը, յեթե կարող եր մի վորևե բանով ոգտակար լինել։ Յուր համեստ նախաճաշը, վոր մեծ մասամբ բաղկանում եր հաց ու պանրից, յերբեք մենակ չեր ուտում։ Հենց առաջին որը նա սկսեց ոգնել Վարդանին դասերի մեջ։ Ահա ինչու Վարդանն ընկե-

բացավ նրա հետ և սիրեց նրան, իհարկե, այնչափ, վորչափ ընդունակ եր սիրելու։

Մինասի կատարյալ հակապատկերն եր ներկայացնում Վարդանի աջ կողմի հարևանը։ Դա գդակ կարող Աթանասի վորդի Մարտիրոսն եր։ Նրա հակակրելի բերանը, նեղ ճակատի տակից միշտ գողնովի նայող աչքերը, ագռավի կտուցի նման սուր քիթն արտահայտում եյին քսու, նախանձոտ ու կրքոտ հոգի։ Նրա ամենասիրելի զվարճությունն եր՝ միշտ կմշտել իր ընկերներին, միշտ դավաճանել նրանց, միշտ նրանց մանկական չարությունների մասին զեկուցանել ուսուցիչներին, կամ տեսչին։ Հենց առաջին որը նա մի յերկու անգամ Վարդանին կմշտեց, կարծես փորձելու համար՝ արդյոք նորեկի մարմինն իր հարևանությունը դիմանալու չափ ամուր ե։ Վարդանը վոչինչ չասաց, բայց մտքում վորոշեց զգույշ լինել նրա հետ։

Այժմ Բաղդասարը հրամայել եր վորդուն ամեն որ ճաշից հետո գալ խանութ։ Նա ուզում եր Վարդանին փոքր առ փոքր ծանոթացնել առևտրական գործերին։

Խանութը գտնվում եր Զիլզիլ քաղաքի ստորին մասում, մի ծածկված քարվանսարայում։ Այդ մի վոչ այնքան մեծ սենյակ եր յերկու մասերի բաժանված։ Յետևի մասը բռնված եր դեռ չբացված ապրանքների հակերով, առջևի մասը ներկայացնում եր բուն խանութը։ Այստեղ ապրանքը դարսված եր հատակի վրա, պատերի տակ, վորովհետև այն յերանելի ժամանակները Զիլզիլ քաղաքում այժմյան մագազինների դարանների մասին գաղափար չունեյին։ Բաղդասարը սովորաբար նստում եր խանութի մեջ տեղում, մինդարի վրա, կամ պարսկի ձևով չոքում, առջևն ունենալով պարսկական կես գազը ու մի կեղտոտ համարակալ, վոր տեղ-տեղ հիշեցնում եր պառավի ատամներ յուր հատիկների պակասով։ Վարդանը նստում եր դռների առջև, սեքվի վրա։ Մուշտարին գալիս իսկույն վոտքի յեր կանգնում, ձեռները դնում կրծքին ու սպասում հոր հրամաններին։ Նա ոգնում եր Բաղդասարին չթի կտորները բաց անելում ու ծալելում, ծախած ապրանքը փաթաթելում։ Նա ավլում եր խանութը, մուշտարիներին խմելու ջուր եր տալիս, կրակ եր դնում նրանց ծխաքարշի վրա և այլ այսպիսի մանր ծառայություններ մատուցանում։

Շուտով Բաղդասարը հանձնարարեց նրան՝ վաճառել ապրանքի հակերից մնացած խուրձերն ու պարանները։ Գոյացած փողերի կեսը պիտի տար հորը, իսկ մյուս կեսը դցեր իր տուփի մեջ։ Այս առաջին գործում Վարդանը ցույց տվեց զարմանալի առևտրական ձիրք։ Հենց վոր հեռվից տեսնում եր մուշտարուն, շտապում եր



դուրս թռչել, ցցվել նրա առջև, դեմքից արդեն գուշակելով յեկողին ինչ ապրանք ե հարկավոր։ Նա յուր խուրձերն ու պարանները, նաև կոտրված արկղերը գովաբանում եր այնպիսի ջերմեռանդությամբ, վորպես պարսիկ դարվիշներն ամեն որ խանութների առջև փառաբանում եյին Ռուստեմի Զալի ասպազենը։

Յերեկոները, յերբ առևտուրը վերջանում եր, Վարդանը կողպում եր խանութի դռները և, բանալիները վերցնելով, հոր հետ տուն վերադառնում։ Այդ միջոցներին կարելի յեր նրա դեմքի վրա նշմարել լրջություն, վորով խիստ տարբերվում եր փողոցներում վազվզող անհոգ մանուկներից։ Նա ինքն զգում եր իր առավելությունը, և այս զգացումը նա արտահայտում եր բանալիների միջոցով, վորոնց զրնգացնում եր կատաղի կերպով՝ ընկերներին տեսնելիս։ Տանը նա հորը յենթարկում եր հարց ու փորձի այս կամ այն ապրանքի մասին։ Իսկ հայրը հրճվում եր, տեսնելով վորդուն այդչափ հետաքրքիր և հարցասեր։

Կարճ միջոցում Վարդանն այնքան սիրեց վաճառականությունը, վոր ուսումնարանն էլ դարձրեց յուր համար մի տեսակ շուկա։ Սկսեց աշակերտներին վաճառել ամեն ինչ, վոր կարող եր վաճառել՝ ընկույզ, շագանակ, աղանձ, հալվա, յեփած սիսեռ, փոխինձ և այլն։ Յերբեմն պաքսիմատը փաթաթում եր թղթի մեջ, քարով ծեծում, մանրացնում, խառնում շաքարի հետ ու պտղուցը մի կոպեկով ծախում։ Առևտուրը նրան ավելի յեր զբաղեցնում, քան նույնիսկ ընկերական խաղերը։ Այս առիթով քիթը ծուռ Մկիչը նրան յենթարկում եր ամենակծու հեգնության, իհարկե, ավելի գործով, քան խոսքով։ Անգութ չարաճճին Վարդանի համար դարձավ կատարյալ յերկնային պատիժ։ Ինչ ասես անում եր փոքրիկ վաճառականին կատաղեցնելու համար։ Խլում եր ձեռքից «ապրանքը», վազում, բարձրանում ուսումնարանի կտուրը, նստում յեզրին, վոտները ցած գցելով, և նրա աչքի առջև անուշ անում հալվան, աղանձը, փոխինձը։ Յերբեմն հավաքում եր իր շուրջն ընկերներին և ավարը բաժանում նրանց։ Հետո յուրաքանչյուրին տալիս եր մի մի թղթե կոպեկանոց և պատվիրում վճարել Վարդանին։ Աշակերտները, ծիծաղելով ու վոստոստալով, մոտենում եյին վաճառականին ու ասում.

— Սովդաքյա՛ր, ա՛ռ ապրանքիդ գինը։

Մի որ նա ուսումնարան բերեց ծախելու տասը հատ փայտե գդալներ։ Վորպեսզի քիթը ծուռ Մկիչը չխանգարի իրան, Վարդանը մի գդալ նվիրեց նրան—առաջին նվերն իր կյանքում։ Այն ժամակ Մկիչն ինքը հանձն առավ ծախել «ապրանքը»։

— Մածուն ուտելու գդա՜լ, մածուն ուտելու գդա՜լ,—վազվզելով բակում գոռում էր նա,—ո՞վ է ուզում, հատը յերկու կոպեկ։

Կես ժամում բոլոր գդալները վաճառեց ու փողերը հանձնեց Վարդանին։

---

— Գյուլում,—դարձավ մի յերեկո, Վարդանի հոր մահից հետո, նրա մորեղբայր Հախվերդյանն իր քրոջը,—թող Վարդանին հետս տանեմ Բագու։

— Ախ, առանց նրան չես կարող եմ ապրել։ Աչքի լույս մի հատիկ տղա ունեմ, նրան էլ ոտարություն ուղարկեմ։ Հերիք չէ՞, վոր դու ինքդ գնացիր ոտար յերկրներ, մորդ թողնելով դառն արտասուքի մեջ։ Խեղճ կնիկը հենց քո հոգսից մեռավ։

— Ե՜հ, չէ, իմ հոգսից մեռավ։ Պառավեց-մեռավ, էլի։ Այս մայրերն էլ զարմանալի յեն, տիզի պես կպչում են իրանց վորդկերանց ու պոկ չեն գալիս։

— Քեռի, ինչ լավ ասացիր, դրուստ սրտիցս ձայն տվեցիր,—գոչեց Վարդանը, վորի համար մայրն արդեն ձանձրալի յեր դարձել։

— Դե լավ, հին զարմանը քամուն չտանք։ Քեզ էլ, Գյուլում, Վարդանի հետ կտանեմ Բագու։ Վարդանը, փառք աստծու, հիմար տղա չի, մինչև անգամ խելոք է, ինչպե՞ս կարելի յե նրան թողնել այս յետ ընկած քաղաքում։ Ի՞նչ կա Զիլզիլում, հը՞մ, փողրաթնե՞ր, մեծ-մեծ առուտուրնե՞ր, թե հանքեր կամ գործարաններ։ Այ, Բագուն ուրիշ բան է։ Հիմա ով գլխում մի հավի չափ խելք ունի, այնտեղ պիտի գնա։ Հինգ տարի յեր չեյի տեսել, այս անգամ անցնելիս՝ յերեք որ մնացի, լավ տեսա, ճանաչեցի. շատ առաջ կգնա։ Յես էլ վճռել եմ այնտեղ գործ սկսել։ Ինչո՞ւ կմնամ Ասխաբաթում։ Էլ այնտեղ ոգուտ չկա։ Աչքիս առաջ ռուսները թուրքմենների չալմաները քամուն տվեցին--պրծավ, էլ պատերազմ չկա, զորքը յետ է գալիս, առևտուրն էլ ընկնում է։ Բագո՛ւ, Բագո՛ւ, ուրիշ վո՛չ մի տեղ։ Ուզում եմ այնտեղ մի լավ մագազին բաց անել, մագազինի տեղն էլ մտքումս նշանակել եմ։ Ուղի՛ղ ծովի ափին։

— Քեռի, ինչի՞ մագազին ես ուզում բաց անել, չիթ ու կտո՞րի,—հետաքրքրվեց Վարդանը։

— Չիթ ու կտորի՜։ Ասված մի արասցե։ Չիթ ու կտորի առևտրումն ինչ աշխատանք կա։ Արշինին քառորդ, կամ շատ-շատ կես կոպեկ։ Մանուֆակտուրան ծույլ մարդկանց համար է, վոր նստեն ու արշինով ճանճեր փախցնեն։

— Բաս վո՞ր առևտուրն է լավ։

— Վո՞րը. հիմա մոդնի առևտուրը թանգագին խմիչքների և զակուսկաների մագազինն է, ա՛յ թե ինչ…



— Այդ ինչ բան է, բախկալի դուքա՞ն։

— Բախկալի՜, չէ չախկալի. հա՛, հա՛, հա՛, հա՛։ Իմ ասածն է. «Մագազին գաստրանամիչեսկիխ տավարով ի զագրանիչնիխ նապիտկով», ա՛յ թե ինչ։ Մեծ մագազին կլինի, շատ մեծ։ Ցուցանակի յերկայնությունը կլինի տասն արշին, լայնությունն էլ յերկու արշին, տառերը վոսկեզոծ։ Ցուցանակը մագազինի համար մեծ բան է, իհարկե, մեծ քաղաքում, վոչ թե ես քարուքանդ Զիլզիլում։ Այստեղ իսկի ցուցանակներ էլ չկան, յեթե կան էլ՝ թիթեղի կտորներ են։ Դռների վրա կլինի ուրիշ ցուցանակ, պատկերով։ Պտի նկարել տամ մի տղամարդ, հաստ փորով, մի ձեռին կալբաս, մյուս ձեռին գարեջրի բաժակ։ Նեմեցի պատկեր։ Վորտե՞ղ եմ տեսել եսպիսի պատկե՞ր։ Այնքան քաղաքներ եմ տեսել, վոր մտիցս ընկել է։ Հա, Ռոստովում, Սադովիյ փողոցում։

— Մագազինում ինչ ապրանքներ կլինեն, քեռի…

— Այնպիսի ապրանքներ, վոր տեսնողի բերանի ջուրը գնա։ Այ, որինակ, մի կողմում դարսած կլինեն շշեր. կոնյակ, ռոմ, խերես, վերմուդ, մարսալա, մի խոսքով, զուբրովկայից ու րյաբինովկայից սկսած մինչև շամպանսկի։ Հասկացա՞ր։ Մյուս կողմում՝ սարդինկա, լավ-լավ ձկներ և այլն։ Հետո դախլի վրա կշարենք տապակած գառ, ճուտ, հնդուհավ, հորթի միս, խավյարներ, կալբասներ, տեսա՜կ-տեսակ պանիրներ և այլն։ Հետո հատակի վրա տոպրակներով ու արկղներով չոր պտուղներ, շաքարեղեններ, քաղցր խմորեղեններ։ Ա՛յ թե ինչպիսի մագազին կունենամ։ Բախկալի դուքան. չէ՜, չախկալի դուքան։

— Որական քանի՞ ռուբլու ապրանք կծախենք, քեռի,—կամեցավ իմանալ Վարդանը յեռանդուն վաճառականի ապագա ձեռնարկության եյականը։

— Աջողությունից է կախված։ Իմ ասած մագազինի պես մագազին դեռ չկա Բագվում։ Յես մեծ հույս ունեմ նավատերների վրա։ Նավատերերն ուտել, խմելու ընկերներ չունեն։ Նովորոսիյսկումն եմ տեսել։ Հենց այս պատճառով էլ մագազինս ծովի ափումն եմ բաց անում, վոր նրանց աչքի առաջը լինի։ Իմ հաշվով առաջին տարին որական ամենաքիչը հիսուն ռուբլու ապրանք կծախենք։ Հետո կարող ենք հասցնել որական հարյուր, յերկու հարյուր ռուբլու։

— Բաս յես գնացի Բագու, մայրի՜կ,—գոչեց Վարդանը միանգամայն վոգևորված։

— Միքանի տարի դու իմ մոտ կլինես գործակատար, իհարկե, ռոճիկով։ Հենց վոր առևտուրը սովորեցիր, լիակատար կամպանիոն կշինեմ։ Հորիցդ մոտ հինգ հազար ռուբլի յե մնացել։ Քիչ փող չէ խելոք տղայի ձեռքում։ Այս շաբաթ յես կգնամ Բագու, մագազինը

կսարքեմ։ Դու դեռ ուսումդ վերջացրու։ Աշխատիր ռուսերեն գրել-կարդալը լավ սովորել, ևս առավել խոսելը։ Ռուսերեն լեզուն մեր ժամանակում մի կտոր հաց ե։ Հայրս շատ տգետ եր, չհասկացավ այս բանը, ինձ ուսման չտվեց։ Բայց հետո, հետո փառք աստծու, ինքս սովորեցի։ Հիմա յես խոսելում վարժապետից վարժապետիցն ել լավ եմ։ Շատ ել գազեթ կարդացող եմ, այս ել իմացիր։ Վաճառականը, վոր գազեթ չի կարդում, հենց մին ղրուշ ել չարժի։ Յես վոր գազեթ չկարդայի, իսկի կիմանայի՞, վոր ռուսը Թուրքմենի հետ կռիվ ունի, ու կգնայի՞ փոդրաթ վերցնելու։ Հա, յես Բաքվից քեզ համար կուղարկեմ մի լավ գիրք։ Այնտեղ ամեն բան կա վաճառականի համար, կը կարդաս, անգիր կանես...։

---

Այդ յերեկոյից Վարդանի յերազների ու ցնորքների կենտրոնը դարձավ Բաքուն։ Արդեն այդ քաղաքի անհուն հարստության վերաբերմամբ նա շատ բան եր լսել և շատ անգամ եր մտածել այնտեղ տեղափոխվելու մասին։ Այժմ յերևակայությամբ ապրում եր այնտեղ և պատկերացնում քեռու մագազինը և յուր գործունեյությունը։

Ահա նա, մուշտարիներով շրջապատված, հազիվ կարողանում ե կատարել նրանց պահանջները։ Դրամարկղի մոտ կանգնած ե քեռին, ուրախ ու զվարթ, և կտրտում ե ռուսերեն։ Հարյուրանոցներ ե, վոր ստանում ե, մանրացնում ու գցում դրամարկղի մեջ։ Յերեկոները նրանք հաշիվ են անում որվա յեկամուտը և միասին ուրախանում։ Վերջապես, Վարդանն ընկերանում ե քեռու հետ, և այլն, և այլն...

— Մայրիկ,—դարձավ նա մի անգամ յուր մորը՝ յերևակայության բոցբոքուն պահին,—հիշո՞ւմ ես, հայրիկն ինձ վրա ի՞նչ պարտք դրեց։

— Ի՞նչ պարտք։

— Նա ասաց. «Դու պետք ե հարստանաս»։ Հիշո՞ւմ ես։ Ասաց. «Անիծվես, յեթե խոսքս չկատարես»։

— Ախ, այդ խոսքերն անեծք եյին, վորդի՛, հայրդ սիրտը ցավելուց եր ասում։ Դու կարծում ես փողից ավելի հարստություն չկա՞։ — Կա։ Լավ անունը փողից շատ-շատ թանգ արժե. անո՛ւն աշխատիր։

— Վոր փող ունենամ, անունն ել յետևից կգա։

Այս եր տասնչորս տարեկան պատանու դավանանքը, և հանուն այս դավանանքի նա պատրաստ եր անել ամեն ինչ։

Շուտով նա Բաքվից ստացավ քեռու խոստացած գիրքը։ Այս ուրիշ վոչինչ եր, յեթե վոչ առևտրական տարրական կանոնների ու հաշվեգիտության ձեռնարկ։ Մի գիրք, վոր Վարդանի ժամանակա-



վոր ավետարանը դարձավ։ Նա կարդում եր և ուսումնասիրում, անգիր անում մուրհակների, պայմանագրերի և առևտրական նամակների որինակները։

Մի որ նա հայտնեց ընկերներին, թե շուտով գնալու յե Բաքու։ Յերևաց, վոր մենակ ինքը չի յեղել Ավետյաց յերկրի մասին յերազողը, այլ համարյա թե բոլոր աշակերտները։

— Դու ինչ պիտի անես այնտեղ,—կես արհամարհանքով հարցրեց նա Մինասին։

— Պիտի մտնեմ ռեալական ուսումնարան ուսումս շարունակելու։

— Ոհո՜, գիմնազիա։ Բարեկամ, լավ կանես, վոր հորդ արհեստը սովորես գլուխդ քաշ։ Արհեստավորի վորդու համար առած ուսումդ ել շատ շատ ե։

— Հայրս ել այդպես ե ասում,—պատասխանեց հեզ պատանին ամենայն հեզությամբ,—բայց հորյեղբայրս չի թողնում։ Դու տեսե՞լ ես հորյեղբորս։ Ձե՞, վեց տարի յե նա Բաքվում ե։ Վարժապետություն ե անում։ Ամեն շաբաթ յես հորս կողմից նրան նամակ եմ գրում։ Շատ հավանել ե նամակներիս։ Գրում ե հորս, վոր թույլ տա ինձ՝ ուսումս շարունակելու։

— Յերևի շատ հարուստ մարդ ե,—ծաղրով նկատեց Վարդանը։

— Հարուստ չե, բայց ինձ շատ ե սիրում։ Ինքը պսակված չե, ուզում ե ինձ վորդեգրել։

— Յես ել եմ գնում Բաքու,—մեջ մտավ գանգրահեր Լևոնը։

— Քեզ ո՞վ ե տանում։

— Մենք ընտանիքով ենք գնում։

— Դուք կարծում եք յես այստեղ կմնա՞մ,—ասաց Մարտիրոսը, վոր վոչ մի բանում չեր ուզում յետ մնալ ընկերներից—հորս կաղաչեմ, վոր ինձ ել ուղարկի։

— Պակասը դու եյիր,—գոչեց Վարդանը, միանգամայն կատաղելով բոլոր ընկերների դեմ, վորոնք կարծես խոսք մեկ եյին արել նրա հացը ձեռքից խլելու։—Մկի՛չ, մենակ դու յես մնում այստեղ։

— Իսկի՛ յել չեմ մնա,—լրացրեց չարաճճին,—ինչո՞ւ պիտի մնամ, ձեզանից պակա՞ս եմ, ինչ...

Հետո ընկերները խոսեցին իրենց ապագայի մասին, յուրաքանչյուրը պարզեց իր փափագն ու ձգտումները։

Մինասն ասաց, թե կկամենար այնքան ուսում առնել, վոր իմանար, թե որացույց կազմողներն ինչպես են գուշակում լուսնի և արեգակի խավարումը։

Լևոնը խոստովանեց, վոր ցանկանում ե ամբողջ աշխարհը ճանապարհորդել և բոլոր լեզուներով խոսել։

Մկիչը փափագ հայտնեց գոնե մի անգամ գնալ Դաղստան,

*տեսնել Շամիլի ծննդավայրը և այն տեղերն, ուր նա պատերազմել է:*

*Մարտիրոսը ջերմ ցանկություն արտահայտեց վոստիկանական պաշտոնյա դառնալու:*

*Մարտին Բաղդանիչը, հիշելով Վարդանի հոր նվերները, Վարդանին տվեց ընտիր ուսումնավարտի վկայական: Զվարթացրեց և մյուս նրա ընկերներին, յուրաքանչյուրին տալով լավ թվանշաններ: Վերջին որը պատկառելի տեսուչը մի խրատական ճառ ասաց ուսումնավարտներին:*

*— Աշխատեցեք մարդ դառնալ, — ավարտեց նա իր խոսքը, — վոր յերեսս պարզ անեք ձեր ծնողների առջև: Չմոռանաք Մարտին Բաղդանիչին, հա՛, թե չէ ձեր բոլորի հերը կանիծեմ: Լավ միտներդ պահեցեք, վոր ինչքան էլ մեծ մարդ դառնաք, պատճառը յես եմ: Յես եմ ձեզ նման ավանակներից մարդ շինել: Դե, հայդա, գնացեք, բարի ճանապարհ: Էհե, չեղա՛վ, չեղա՛վ, կացե՛ք, կացե՛ք... Ա՛յ, հենց խսկույն ցույց տվեցիք ձեր էշությունը....: Հենց այդպես, դուզ-դուզ գնում եք, էլի...*

*— Սմիռնո, — աղաղակեց Մկիչը, — ադա՛, կանգնեցե՛ք շարքով: Այդպե՛ս: Վերցրե՛ք գդակներդ: Այդպե՛ս: Մե՛կ, յերկո՛ւ, յերե՛ք, — հուռա՛, կեցցե՛ Մարտին Բաղդանիչը: Յերեք անգամ... Դե, բավական է...*

*Յեվ, կանգնելով տեսչի առջև, ձեռը զինվորականի ձևով պահեց քունքի մոտ, շուռ յեկավ և «մեկ, յերկու» — ասելով հեռացավ:*

*— Այ, չա՛ր սատանա — գոչեց Մարտին Բաղդանիչը, ծիծաղից թուլանալով:*

---

*Մի ամիս անցած՝ Վարդանը գնաց Բագու:*

---

— Ի՞նչ ժամանակաշրջան է ընդգրկում այս պատմվածքը:

— Ի՞նչ միջավայր է այստեղ նկարագրված:

— Ի՞նչպես կարելի յե բնորոշել Վարդան Ահրումյանի ընտանիքը:

— Բնորոշեցեք նրա հորը, վորպես առեվտրականի: Վերլուծեցեք նրա բնավորությունը, հայացքները յեվ այլն: Աշխատեցեք պարզել, թե ի՞նչ միջավայրի յեվ պայմանների հետեվանք էին այդ բնավորությունն ու հայացքները:

— Կա՞ն արդյոք այժմ նրա նման տիպեր, յեվ յեթե չկան — ինչո՞ւ:

— Պատահակա՞ն էր արդյոք, վոր նրա վորդին՝ Վարդանը՝ սկզբից յեվ յեթ առեվտրական հակումներ ցուցադրեց:

— Կայի՞ն արդյոք նրա շուրջը, թե ընտանիքում, թե դուրսը, պայմաններ, վորոնք նպաստում էին այդ հակումների զարգանալուն:

— Հետեվեցեք ամբողջ պատմվածքի ընթացքում յեվ պարզեցեք, թե ի՞նչպես էն հետզհետե զարգանում ու ամրանում նրա մեջ այդ հակումները:



— Բնորոշեցեք Վարդանի վերաբերմունքը դեպի իր շրջապատի մարդիկ՝ դեպի ընտանիքը, ընկերները յեվ այլն:

— Համեմատեցեք Վարդանի բնավորությունը հոր բնավորության հետ յեվ վորոշեցեք, թե ի՞նչ նմանություններ ու տարբերություններ կան նրանց միջեվ:

— Ի՞նչ միջավայրի ներկայացուցիչ էր Հախվերդյանը. ինչո՞վ էր նա հարստացել, վո՞րն էր նրա բնավորության յեվ հայացքների տարբերությունը Վարդանի հոր բնավորությունից յեվ հայացքներից:

— Այս պատմվածքի մեջ Վարդանի մասին տված տեղեկությունների հիման վրա մոտավորապես կարելի՞ յե գուշակել, թե ի՞նչ է դուրս գալու նրանից հետագայում:

— Հնարավո՞ր են այժմ Վարդան Ահրումյաններ. յեթե անգամ վորեվե յերեխա ունենա այժմ Վարդանի հակումները՝ կարո՞ղ են արդյոք դրանք զարգանալ ու Վարդանի հակումների ծավալն ստանալ: Յեթե չեն կարող — ինչո՞ւ:

---

— Ի՞նչպես է գրված այս պատմվածքը՝ հեղինակն ի՞նքն է պատմում, թե մի ուրիշը:

— Ձեզ դուր գալի՞ս է արդյոք նրա պատմելու յեղանակը, յեթե այո՝ ինչո՞ւ:

— Գործածո՞ւմ է արդյոք հեղինակն այնպիսի բառեր ու դարձվածքներ, վորոնք այժմ գործածական չեն:

— Պատմվածքից յերեվո՞ւմ է արդյոք, վոր հեղինակը ժամանակակից հեղինակ չէ:

— Փորձեցեք բնորոշել նրա վերաբերմունքը դեպի իր նկարագրած տիպերը:

---

## ՀԱՏՎԱԾՆԵՐ «ՔԱՈՍ» ՎԵՊԻՑ

### Մարկոս Ալիմյանի մահը

### I.

*Մարկոս աղա Ալիմյանը ծանր հիվանդ էր:*

*Յոթ օր առաջ նա իր նոր կառուցվող տասնումեկերորդ տան վրա արհեստավորներին պատվերներ տալիս մարմնի մեջ զգաց անսովոր ցուրտ, յեկավ տուն, պառկեց անկողին և այլևս չկարողացավ վերկենալ: Բժիշկները մարդուն ուշադիր քննեցին և միաձայն հաստատեցին թոքերի բորբոքում:*

*Լուրը նույն ժամին տարածվեց ամբողջ քաղաքում: Ո՛վ չէր ճանաչում կալվածատեր և հանքատեր Մարկոս Ալիմյանին — այդ վաթսունուհինգ տարեկան, կլորիկ մարմնով, ուռած թշերով, յեռանդուն ու աշխույժ ծերունուն և չէր լսել նրա բազմավաստակ կյանքի խրատական պատմությունը: Ուղիղ հիսուն տարի առաջ, թողնելով իր աննշան ծննդավայրը, յեկել, հաստատվել էր այն փոքրիկ, աննշան ծովեզրյա քաղաքը, վորին վիճակված էր մոտիկ ապագա-*

ում ստանալ համաշխարհային հուշակ իր ստորերկրյա գանձերի շնորհիվ։

Այժմ տասնուիններորդ դարի վերջին քառորդում նրա մասին կազմվել էին կատարյալ առասպելներ։ Պատմում էին, որ նրա հոյակապ տան ներքնահարկում կա մի առանձին սենյակ մթին ու սառն ինչպես շիրիմ։ Ոչ մի հողեղեն էակ նրա յերկաթե դռներով ներս չի մտել։ Այնտեղ են դարսված Մարկոս Ալիմյանի ոսկիներով լի տոպրակները։ Ասում էին, որ ամեն գիշեր միայն ծերունին մեն-մենակ, յերկայն թավիշե խալաթը հագին, գիշերային սև թասակը գլխին, ձեռին բռնած մի ճրագ, իջնում է վար, բաց է անում յերկաթե դռները ժանգոտ բանալիով, համարում է տոպրակները և ավելացնում նոր ոսկիներ։ Հավատացնում էին, թե այնտեղ մի պողպատե պահարանի մեջ փայփայելով պահում է այն տրեխները, վորոնցով գաղթել էր իր ծննդավայրից տասնուհինգ տարեկան հասակում։ Ասում էին նաև այն, որ Զատիկ ու Ջրօրհնեք տոների նախընթաց գիշերը, մի զույգ մոմ վառելով, աղոթում է պահարանի վրա չոքած և որհնում է նվիրական տրեխները։

Նրա հոյակապ տները, որ հպարտ ճակատներով կանգնած էին քաղաքի կենտրոնական փողոցներում, մի-մի փուշ էին դարձել քաղաքացիների աչքում, նրա բազմաթիվ հորերից բղխող նավթը խեղդում էր և գործարանի ծուխը կուրացնում նրանց աչքերը։ Բայց մարդիկ գիտեյին ինչպես զովացնել իրանց նախանձավառ սրտերը։ Չէ՞ որ Մարկոս Ալիմյանը յեղել է ջրկիր, հետո դռնապան, հետո խոհարար, հետո մրգավաճառ, այնուհետև գինեվաճառ և այլն, և այլն... Յեվ ոչ մի գործ նա չի վարել ազնվաբար։ Գնալով Ռուսիա, նա այնտեղից բերել է կեղծ դրամներ և տգետների վրա սաղացրել։ Նա խաբել է, գողացել է, գռփել ու կողոպտել է խեղճերին, նա նույնիսկ թունավորել է իր մի ընկերոջը։ Նա ժլատ է, նրա ձեռները դողում են գրպանից դրամ դուրս բերելիս, ապրել չգիտե, դրամն է նրա հավատը, հոգին, Աստվածը։ Նրա ընդարձակ տունը, ուր ոչ մի ոթյակ ծածկված չէ պաստառով, միայն բանտ է իր կնոջ ու զավակների համար։ Այնտեղ կահ-կարասի չկա, ծառա չկա, խոհարար չկա։ Նա իրեն տան համար պաշարեղենն ինքն է տուն բերում իր ձեռքով առավոտները կանուխ, որ ոչ ոք չտեսնի։ Նա գրպանում ունի յերկաթաթելից շինած մի օղակ և միայն այն ձուն է գնում, որ այդ օղակով չի անցնում և շատ անգամ պտտում է ամբողջ շուկան այդ չափի ձվեր գտնելու համար։

Շատ շատերը գիտեյին, որ այդ բոլորը մտացածին է, որ Ալիմյանի տանը ծառաներ էլ կան, խոհարար էլ, կահ-կարասի յել,



նույնիսկ փարթամ կահ-կարասի։ Գիտեյին, որ յեթե Մարկոս աղան մի օղակ ունի, այդ այն է, որով անխնա սեղմում է իր պարտապանների կոկորդը։ Բայց սև նախանձը կուրացրել էր մարդկանց և հնարում էին ամեն ինչ, որ կարող էր քիչ թե շատ հանգստացնել կյանքի անհաջողություններից ժանգոտված ու թթված սրտերը։

Սանձարձակ ծաղրում էին, զրպարտում, հայհոյում քաղաքի առաջին միլիոնատիրոջ, սակայն միայն յետևից։ Իսկ յերբ աղան, կլորիկ փորը դուրս ցցած, բադի պես աջ ու ձախ յերերվելով, գնում էր փողոցով կամ անցնում էր խանութից խանութ և կամ կլուբ էր մտնում, ամենքն աշխատում էին որսալ նրա հայացքը, որպեսզի բարևեն խոնարհ և արժանանան նրա արհամարհական պատասխանին։ Այն ինչ Մարկոսը, այդ նախկին ջրկիրը, դռնապանը ինքը ոչ ոքի բարևին չէր սպասում, բացի մեկից և այդ մեկը յերկրի իշխանն էր - նահանգապետը։ Քսանուհինգ տարի չէր, որ վերադարձնում էր իր ինքնասիրության և պատվի կորուստները, ընդունելով ուրիշներից այն, ինչ որ ինքը քսանուհինգ տարի շարունակ շռայլել էր իրանից մեծերին ու զորեղներին։

Յեվ ահա այսօր մեռնում է անվանի քաղաքացին, խելացի մարդը, տոկուն վաճառականը, որ ամբողջ կյանքն անց է կացրել անդուլ գործունեյությամբ, քրտինքը ճակատին, խիղճը հանձնած յերկաթե սնդուկին և հոգին գրպանը դրած։

Նրա բնակարանը գտնվում էր քաղաքի կենտրոնում։ Տունը, հարկավ, սեպհական էր։ Այդ մի յերկհարկանի շինություն էր սրբատաշ քարից, տափակ, կղրածածկ տանիքով։ Ստորին հարկը բաղկացած էր խանութներից ու գրասենյակներից, վերինն ամբողջովին Ալիմյաններինն էր։

Օգոստոսի չոր և ջերմ օրերից մեկն էր։ Արեգակը թեքվել էր դեպի մուտքը և նրա վերջին ճառագայթները վողողել էին բուսականությունից զուրկ, անհրապույր քաղաքը և նրա առջև տարածված ծովի մակերևույթը։ Ծանր ու ճնշող է այդ քաղաքի արտաքին տպավորությունը։ Հեռվից դիտողին նա իր տափակ տանիքներով, մերկ փողոցներով, պատկերանում է այնպես, որ կարծես մի սոսկալի հրդեհ լափել է բոլորը, ինչ որ կարող է լափվել կրակից և թողել է մի վիթխարի կմախք։ Շրջակայքն ավազուտ, կամ նավթի լճերով ծածկված, այստեղ ոչինչ չի մեղմացնում արեգակի տրոպիքական տապը, նույնիսկ ծովը։ Քարե պատերը շիկանում են կիզիչ ճառագայթներից, ավազը խանձվում է, օդը դառնում հեղձուցիչ։ Բնակիչներն շտապում են լողարանները և օրը մինչև յերեկո ծովը լի յե մերկ մարմիններով, որոնք մերթ փայփլում են արեգակի տակ և մերթ սուզվում ջրի մեջ, որպես դելֆիններ։

դեմքերին տալ ավելի տխուր արտահայտություն։ Նորեկը, վերցնելով իր հարդե նեղ յեզրերով գլխարկը, բարևեց աջ ու ձախ, քաղաքավարի, բայց շատ սառը և շտապ քայլերով գնաց հիվանդի ննջարանը։ Ներկա յեղողները նորից մերձեցան իրար՝ միանգամից փոխելով իրանց դեմքերի տխուր արտահայտությունը մի տեսակ արհամարհականի։

Մահամերձի մահճակալը դրած եր պատի տակ, լուսամուտի առջև։ Մի կողմում կանգնած եր մեռնողի կինը աղջկա հետ, մյուս կողմում վորդիները։ Ինքը մահամերձը նստած եր անկողնի մեջ, հենված փափուկ բարձերին, ծնկները մետաքսե վերմակով ծածկած, ուսերն ու կուրծքը կիսով չափ մերկ, գլուխն անզոր վար թեքած։ Բժիշկը նորից նրա կաշվի տակ մեջքի կողմից սրսկում եր ինչ վոր սթափեցուցիչ հեղուկ։ Անհրաժեշտ եր քանի մի րոպե ևս պահպանել կյանքը՝ լուծված ու քայքայված անոթի մեջ։

Մահամերձն աչքերը բաց արավ, գլուխը դանդաղորեն բարձրացրեց։ Նրա դեմքն արդեն ընդունել եր մահանիշ հողագույն ստվերագծեր, բերանի անկյունների բնորոշ ակոսներն այժմ հարթվել եյին, կլորիկ յերեսը յերկայնացել եր, մնում եր ինչ-վոր անհանգստության մի թույլ ժպիտ թառամած շրթունքների վրա։

Բժիշկը կամացուկ հաղորդեց նրան վորդու ժամանման լուրը։ Նույն վայրկյանին յեկվորը, մի կողմ ձգելով գլխարկն ու ճամբու պայուսակը, չոքեց ծերունու մահճակալի առջև և գլուխը թեքեց, վոր համբուրե մեռնողի չոր, սառած ձեռը։

Կյանքի վերջին շողը լուսավորեց Մարկոս Ալիմյանի հողագույն դեմքը, աչքերը լայն բացվեցին, և մի անցողիկ ուրախություն վայրկենաբար պարզեց հոնեղ ճակատը, վոր նրա վաթսունամյա գոյության ընթացքում յերբեք չեր արտահայտել զվարթություն։ Արյունաքամ շրթունքների միջից արձակելով մի խուլ մրմունջ, թույլ ձեռներով գրկեց վորդու գանգրահեր գլուխը և սեղմեց իր կրծքին, վորքան կարող եր ամուր։

Տիկին Ալիմյանն սկսեց հեկեկալ։ Նրան հետևեց իր աղջիկը, հետո վորդիները։ Այժմ ծերունին կարող է իր հոգին ավանդել, ո՜, վոչ հանգիստ, ինչպես կփափագեր, այլ մի անջնջելի վիշտ սրտի մեջ։ Ութ տարի յեր, նա չեր տեսել վորդուն, անդրանիկ վորդուն, վորի վրա այնքան հույսեր եր դրել, վորին սիրել եր ամենից ավելի և վորին պիտի հանձներ իր բոլոր գործերը։ Յեվ վոչ միայն չեր տեսել, այլև չեր ուզում տեսնել, նույնիսկ լսել անգամ նրա անունը։ Ա՜հ, վորքան հուսախաբ արավ նրան այդ սիրված վորդին և վորքան տանջանքներ պատճառեց, վորպիսի՜ հոգեկան մորմոք, վորը թշնա-



միներից և նախանձամիտներից թաքցնելու համար հարկավոր եր գերընական կամքի զորություն։ Անիծվի՜ այն որը, յերբ նա թույլ տվեց իր Սմբատին գնալ ուրիշ յերկիր ուսումը շարունակելու. անիծվի՜ նա, վոր կորզեց իրանից իր վորդուն…

Մահամերձը ցանկանում եր դուրս թափել սրտի մեջ կուտակված դառը մաղձը, ասել բոլորը, բոլորը, ինչ վոր զգացել եր ութ տարվա ընթացքում։ Ասել՝ արտասուքով վողողելով ճամբից շեղված վորդու մոլի գլուխը։ Բայց ուժերը դավաճանում եյին։ Բժշկի ջանքերն այլևս անզոր եյին կենդանություն ներշնչել սառող մարմնին։ Սակայն մի յերկարատև, խորը, շատ խորը հայացք, վոր գալիս եր գերեզմանի խորքից, ամեն ինչ պարզեց մեղսագործ վորդու համար, վոր այժմ վոտքի յելած, ճգնում եր զսպել իր արցունքը, վորպեսզի ցույց չտա իր հոգու տկարությունը։

— Մենա՞կ ես յեկել,— կարողացավ միայն հարցնել մեռնողը։

— Մենակ,— պատասխանեց վորդին հակիրճ, հասկանալով, թե ինչ իմաստով է տրվում իրան այդ պարզ հարցը։

Մռայլ ժպիտը ծերունու դեմքի վրա մի ակնթարթ տեղի տվեց հուսո շողին. մի՞թե նրա տանջանքները լուրջ պատճառ չեն ունեցել, մի՞թե անիրավաբար է անիծել վորդուն։ Բայց ահա ծերունու պղտոր հայացքն ընկավ վորդու վոսկե մատանու վրա, վոր նրա ամուսնության նշանն եր, և նրա անզոր գլուխն ընկավ բարձի վրա ու աչքերը փակվեցին։

— Անցածը վերադարձնել չի կարելի, հա՛յր. որհնի՛ր,— արտասանեց վորդին մի տեսակ խուլ ձայնով, վորի մեջ զգացվում եր դառը կսկիծ, և վո՛չ զղջում։

Վոչ-վոք ներկա յեղողներից չհասկացավ խոսքի բուն իմաստը և չըմբռնեց, թե վո՛րքան է մորմոքվում այդ պահին այդ առողջակազմ, ինքնավստահ դեմքով վորդու վիշտը։

Հայրը ժողովեց վերջին ուժերը և արդեն սառչող շրթունքների միջից արձակեց.

— Անիծվի՛ս, յեթե վերջին կամքս չես կատարի…

Այդ վայրկյանին նա սոսկալի յեր, ինչպես ինքը մահը, սոսկալի՝ մեղսագործ վորդու համար։

— Տո՛ւր ինձ,— լսվեց դարձյալ ծերունու անդրգերեզմանային ձայնը և նրա սառցային հայացքը դամվեց կնոջ յերեսին։

Կինը նրա բարձի տակից դուրս բերեց մի մեծ ծրար, վոր կնքված եր կարմիր զմուռսով։ Մեռնողն ապակյա աչքերով նշան արավ դեպի Սմբատը, և մայրը ծրարը տվեց վորդուն։

— Անիծվի՛ս, յեթե չես կատարի։

Այս եղավ Մարկոս Ալիմյանի վերջին խոսքը, որ սակայն դուրս թռավ նրա բերանից շատ պարզ և շատ որոշ։ Ջքացող կյանքի վերջին զորավոր ցնցումն էր այդ, սպառված աղբյուրի վերջին կաթիլները, որ մի առանձին թափով են ընկնում ցամաքած ավազանի մեջ։ Ծերունու դեմքը թեթևակի աղավաղվեց մահու ցուրտ սյուքից։ Դառն, անհանգիստ ժպիտը, որ միայն մի քանի վայրկյան էր հեռացել, մնաց սառած բերանի անկյուններում։ Միլիոնների տերը և ընդհանուր նախանձի առարկան մեռավ, իր հետ տանելով մի ծանր վիշտ, որից ազատվելու համար պատրաստ էր իր հարստության կեսը զոհել։ Եվ այդ վիշտը նրա զավակներն էին...

Այրիացած Վոսկեհատն ազատություն տվեց հեկեկանքին, հարձակվելով ամուսնու սառչող դիակի վրա։ Նրան հետևեց աղջիկը — տիկին Մարթա Մարութխանյանը։ Սրաֆիոն Գասպարիչը, որ Վոսկեհատի եղբայրն էր, բռնեց նրանց թևերից, ետ քաշեց։ Հարկավոր է հանգուցյալին թողնել, որ հանգիստ փչե իր վերջին շունչը։

— Խեղճ մարդ, տանջվեցիր որդիներիդ ձեռքում, տանջվեցիր, — կրկնում էր Վոսկեհատը։

Նույնը կրկնում էր և նրա աղջիկը։

Սրաֆիոն Գասպարիչը գրեթե ուժով նրանց տարավ մյուս սենյակը։ Այնտեղ նրանք կարող են ազատություն տալ իրանց լեզուներին ու արցունքներին։ Հետո նա բոլորին խնդրեց անցնել այնտեղ։ Սմբատը դուրս եկավ, թաշկինակն աչքերին սեղմած։ Նրա ետևից գնացին մյուսները։ Այնտեղ Վոսկեհատն հարձակվեց նորեկ որդու վրա և սկսեց համբուրել խանդավառությամբ։ Վիշտը նրա մեջ խառնվել էր ուրախության հետ։ Կորցնելով ամուսնուն, որի հետ քառասուն տարի ուրախացել էր ու տխրել, նա գտնում էր որդուն, որին ութ տարի էր՝ կորցրած էր համարում։

— Շատ տառապեց խեղճ մարդը, շատ, — կրկնում էր նա հեծկլտանքով. գիշեր-ցերեկ բերանի խոսքն էր. «որդիս մոռացավ իր պապերի հավատը, որդիս խայտառակեց ինձ»։

Սմբատը, մեջքը պատին հենած, գլուխը թեքած կրծքին, շրթունքները կրծոտում էր անխնա։ «Անիծվի՛ս, եթե չկատարես», — հնչում էին նրա ականջին հոր վերջին խոսքերն այնքան ահեղ, որ նա ցնցվում էր ամբողջ մարմնով, աջ ձեռի մեջ ամուր սեղմելով նվիրական ծրարը։

Բոլոր ներկա եղողների հայացքներն ուղղված էին դեպի այդ ծրարը, իսկ ամենից ավելի մեկինը։ Դա հանգուցյալի երկրորդ որդին էր՝ Միքայելը, քսան և ութ տարեկան մի երիտասարդ՝ նուրբ կազմվածքով, նիհար, գունատ, ածուխի պես սև մազերով և նորաձև սրուկ միրուքով։ Նրա խոշոր, մուգ-ընկուզեգույն աչքերն արտահայտիչ էին, խելացի և միևնույն ժամանակ, կարծես, անտարբեր դեպի ընտանեկան վիշտը։ Արդարև նրա համար կորուստն այնքան մեծ չէր, որքան իր եղբոր հանձնված ծրարի բովանդակությունը։ Գիտեր, որ այդ ծրարի մեջ ամփոփված է հանգուցյալի կտակը, բայց ինչ կտակ — ահա խորհրդավոր ժամի էյականը, ահա այն, որ պիտի որոշե իր ճակատագիրն ու ապագան։ Մերթընդմերթ նա այնպիսի անհամբեր և ներվային շարժումներ էր անում, որ կարծես ուզում էր հարձակվել ավագ եղբոր վրա և խլել նրանից ծրարը, որ սպունգի պես ծծում էր նրա ամբողջ ուշադրությունը, նույնիսկ բոլոր զգացումները։

— Չլինի՞ թե ծերունին խենթացավ և ինձ զրկեց ժառանգությունից, — դարձավ նա մոտ քառասուն տարեկան մի տղամարդի, որ քայլ առ քայլ հետևում էր նրան։

Դա հանգուցյալի փեսան էր, Մարթայի ամուսինը, քաղաքում բավական ականավոր գործարանատեր և միևնույն ժամանակ սպեկուլյանտ Իսահակ Մարութխանյանը։ Արտաքինն այդ մարդուն պատկերացնում էր վերին աստիճանի անվրդով հոգու տեր, հաշվագետ, սառը, եսամոլ։ Հագած էր երկայնափեշ սև ռեդինկոտ, մոխրագույն անդրավարտիկ և սև մետաքսե խոշորագույն փողկապ։ Միջահասակ էր, կարճ խուզած սև մազերով, փոքրիկ իսպանական ձևի մորուսով, խնամքով սանրած և վեր ցցած բավական թանձր բեղերով։ Չնայելով իր տարիքին, նրա այտերը կարմիր էին, ինչպես տասնևմեկ տարեկան պատանու թշեր։ Մինչդեռ պարզ ակնոցների տակից նայում էին մի զույգ կանաչ-դեղնագույն աչքեր, որոնց արտահայտությունը ոչ այնքան խելացի էր, որքան նենգամիտ ու հրող։ Ուռած և նույնպես կարմիր շրթունքների վրա ծփում էր մի շինծու և անախորժ ժպիտ, որ, կարծես, ասում էր. «Մի՛ կարծեք, որ ես լիմարի մեկն եմ»։ Կանգնած էր նա հանդարտ, անվրդով, գլուխը միշտ բարձր պահած, այնպես որ, կարծես, պարանոցը դրված էր երկաթե օղիկի մեջ։ Գուցե նրան նեղում էր խիստ մաքուր և խիստ փայլուն օսլայած շապկի բարձր և ամուր օձիքը։ Նրա կանաչ-դեղնագույն բիբերը ձվաձև շրջանակների մեջ դառնում էին այս ու այն կողմ անագից շինած խաղալիքի աչքերի պես նույնչափ մեքենայաբար, որչափ մեքենայական էին նրա բոլոր ձևերն ու շարժումները։

Պարզ էր, որ աներոջ մահը մազու չափ չէր խլրտում նրա ազգակցական զգացումների նիրհը։ Պարզ էր նաև, որ եթե բոլոր ներկա եղողները րոպեաբար և տեղն ու տեղը մահանան՝ դարձյալ նրա աչքերը չպիտի թրջվի։ Իսկ իր կնոջ հեկեկանքներին ու արցունք-

ներին նա նայում էր արհամարհանքով։ Այն ինչ պճնազարդ Մարթան, Թաշկինակն աչքերին սեղմած, շարունակ հեկեկում էր բավական վարպետորեն։ Յեվ Իսահակն ավելի քան ուրիշ մեկը նրա վորդիական վողբի մեջ զգում էր հոգու անսահման կեղծիք և տեսնում էր, վոր կինը Թաշկինակի տակից գաղտուկ դիտում է բոլորին, վոր իմանա՝ ինչ ազդեցություն է գործում իր վողբը շրջապատողների ու մանավանդ այն յեղբոր վրա, վորի ձեռքումն էր հոր կտակը։ Յեվ վոչվոք չէր լալիս անկեղծորեն, բացի այրիից, իսկ տասնութամյա Արշակը, վոր ընտանիքի մեջ ամենակրտսերն էր, անտարբեր աչքերով նայում էր մերթ մեկին, մերթ մյուսին, կարծես գիտնալու համար, թե ինչ է կատարվում իր շուրջը։ Քիչ անցած ագալի տեսարանն սկսեց նրան ձանձրացնել, և նրա թուխ գույնի և խոշոր գծերով դեմքը, վորի վրա նկատվում էր մի տեսակ անժամանակ զարգացում և նույնիսկ չափահաս տղամարդի հավակնություն, անկարող էր թագցնել այդ ձանձրույթը։

Այրին և՛ լալիս էր և՛ արտասվախառն ձայնով պատմում հանգուցյալի տանջանքները։ Նա գլխավորապես դառնում էր իր ավագ վորդուն և նրան հաղորդում բոլորը, ինչ վոր անցել էր ութ տարվա ընթացքում։ Խեղճ մարդ, նա չկամեցավ հիսուն տարվա արյունքրտինքով վաստակածը քամուն տալ, այսինքն ձգել յերկրորդ վորդու՝ Միքայելի ձեռքը։

— Մի՛ չարանար,— դարձավ այրին յերկրորդ վորդուն, վոր մի կատաղի հայացք էր ձգել նրա վրա,— յես հորդ խոսքերն եմ կրկնում։ Նա վախեցավ, վոր դու մի տարի չանցած, չոր տափի վրա կթողնես ամենքիս, և կանչեց Մոսկվայից Սմբատին։ Ասաց. «կասես նրան, վոր շուտ յեղբորը ճանապարհի բերի, Արշակին լավ մտիկ անե, քեզ էլ մենակ չթողնե։ Կասես, վոր ինչքան ինձ տանջեց—հերիք է, թող գոնե քեզ խնայե, դու էլ խեղճ ես, դու էլ անուն ու պատիվ ունես»։

Այրին կանգ առավ, նոր հեծկլտանքը խեղդեց կոկորդի մեջ դառն խոսքերի հոսանքը։ Մի քիչ զսպելով իրան, նա կրկին դարձավ ավագ վորդուն։

— «Ինչո՞ւ գնաց, կյանքը կապեց ոտարազգի աղջկա հետ», կրկնում էր խեղճը։ Տեսա՞ր, վո՛րդի, ինչպես նայեց ձեռից, ինչպես փոխվեց յանկարծ՝ այդ մասանին տեսնելով մտից։ Նա գիտեր, վոր օրենքով ամուսնացել ես ռուս յեկեղեցում, գիտեր, վոր յերեխաներ ունես, բայց էլի չէր ուզում հավատալ այդ դժբախտությանը։ «Չէ՛, ասում էր, չէ՛, խելքի կգա, կբաժանվի»։ Այժմ, վորդի, ահա դու և ահա հորդ կտակը... Արա, ինչ վոր ուզում ես, բայց չլինի թե հորդ անեծքին արժանանաս։ Լսեցի՞ր, լսեցի՞ր. «անիծվիս, յեթե կամքս չկատարես»։ Մեռնող հոր վերջին անեծքը յերկնքից է գալիս, հոգին է, վոր բերում է։ Խեղճ մարդու միակ իղձն էր, վոր թողնես այնտեղ նրանց և գաս մտնես ծնողներիդ օջախը։ Այժմ դու գիտես»։

Սմբատը լուռ, անշարժ, կանգնած էր միևնույն դիրքում, միշտ ծրարը ձեռում բռնած։ Մոր խոսքերը ճնշում էին նրա հոգին և սիրտը մորմոքում։ Նրանց մեջ նա զգում էր իր արած քայլի բոլոր պատասխանատվությունն իր համար և ծանր հետևանքներն իր ծնողների համար։ Բայց ինքը, մի՞թե այդ ութ տարիներն անց էր կացրել հանգիստ ու յերջանիկ, մի՞թե նրա դառնությունը պակաս էր յեղել, քան ծնողներինը։

— Իսկ յեթե չկարողանամ կատարել հանգուցյալի պահանջը,— հարցրեց նա գրեթե անգիտակցաբար և այնքան ցածր ձայնով, վոր հազիվ լսվեց։

— Յեվ չես կարող կատարել, յեթե ազնիվ մարդ ես,— ասաց հանկարծ Միքայելն զգալի չափով գրգռված ձայնով։

Յերկու յեղբայրները նայեցին միմյանց յերեսին։ Միքայելի աչքերը վառվել էին մի տարօրինակ չարախնդությամբ, և նա շարունակ կրծոտում էր բարակ, քնքույշ բեղերը։

Մայրն ապշած նայեց նրան։ Ի՞նչ, մի՞թե ազնիվ վորդին պարտավոր չէ կատարել իր հոր վերջին կամքը։

— Միխա՛կ,—արտասանեց նա սպառնալից հանդիմանությամբ։

— Այո՛,—բորբոքվեց Միքայելը,—դու կտակը գրել տվեցիր մեծ վորդուդ անունով, բայց չզգացիր՝ ինչ մեծ պատասխանատվություն և ծանր պարտք ես դնում նրա վրա։ Այժմ թո՛ղ նա վարվի ինչպես մի անազնիվ մարդ կամ ընդունե իր հոր անեծքը... Նա ուրիշ յելք չունի։

Արտասանելով այս խոսքերը, նա շտապով դուրս գնաց։ Նրան հետևեց Իսահակ Մարութխանյանը, մի սուր ու զննիչ հայացք ձգելով Սմբատի յերեսին։ Նրա քայլվածքն էլ նույնպես հանդարտ էր, ինչպես ձևերը։

— Բաց արա ու կարդա հորդ կամքը,— ասաց այրին վորդուն։

— Վոչ, վաղը կկարդանք, թո՛ղ առայժմ մնա իմ մոտ։

Նա ծրարը դրեց գրպանը և մի ծանր, յերկարատև հառաչանք արձակելով անցավ հյուրասենյակ, ուր վոմանք այցելուներից դեռ սպասում էին, հուսալով վորևե բան իմանալ հանգուցյալի կտակի բովանդակության մասին։

Յերեք յերեկո շարունակ հոգեհանգիստ էր կատարվում։ Հասարակության բոլոր խավերը գալիս էին իրանց վերջին հարգանքը մատուցանելու հանգուցյալին։ Այլ ևս վոչ վոք չէր բամբասում, վոչ վոք չէր ասում, թե Մարկոս աղան յեղել է խաբեբա, կողոպտիչ,

ժլատ, բռնակալ իր ընտանիքի համար։ Մահն ամենքին հաշտեցրել էր նրա հետ, և ամեն վոք շտապում էր իր վշտակցությունն արտահայտելու ժառանգներին։

Ուշադրության գլխավոր առարկան Սմբատն էր։ Բոլորը նրա մասին էին խոսում՝ թե թեր և թե դեմ։ Շատերն ասում էին, թե ծերունին դեռ յերկար կապրեր, յեթե չունենար սրտում Սմբատի ցավը։ Ո՜ո, մաշեց խեղճ մարդու հոգին ու մարմինը դավաճան վորդու արարքը։ Մեղադրանքն արտահայտվում էր շշնջյուններով։ Վոչ վոք չէր համարձակվում բարձր խոսել։ Յուրաքանչյուրը վախենում էր՝ մի գուցե լուրը հասնի միլլիոնների ժառանգին։ Բանն այն է, վոր արդեն ամբողջ քաղաքը գիտեր, թե Ալիմյան առևտրական տան գործերի ղեկը Սմբատի ձեռքն է անցնում։

Կտակը բաց արին հանգուցյալի մահվան յերկրորդ օրը, ինչպես ցանկացավ Սմբատը։ Դա ավելի հանգուցյալի զգացումների ցեղումն էր, քան չոր ու ցամաք գործնական թելադրություն։ Ծերունին ասել էր, ծխական քահանա տեր-Սիմոնն արձանագրել։ Նախ հանգուցյալը հանձնարարում էր Սմբատին աշխատել Միքայելին ուղիղ ճանապարհի բերելու, դուրս բերելով նրան այն անբարոյական, շռայլ կենցաղից, վոր կլանել էր նրան ամբողջովին։ Հետո պատվիրում էր արթուն հսկողություն ունենալ Արշակի վրա, սիրել ու հարգել մորը, ապրել նրա հետ մի հարկի տակ անբաժան։ Այնուհետև նա խնդրում ու աղերսում էր «ուղղել» իր «սխալը»։ Գալով գործնականին, հանգուցյալը, բացի մի քանի աննշան նվերներից իր չքավոր ազգականներին ու բարեգործական նպատակով, բոլոր իր շարժական ու անշարժ կայքերը և բանկային թղթերն ու սատանալիքները հանձնում էր Սմբատի իրավասությանը։ Այրին նշանակում էր կրտսեր վորդու խնամակալ մինչև չափահասություն։

Նշանավոր էր այն պայմանը, վոր հանգուցյալը դնում էր Միքայելի ժառանգական իրավունքների վերաբերմամբ։ Նշանակում էր նրան ամսական ընդամենը մի հայրուր ռուբլի գրպանի ծախք, բայց իրավունք էր տալիս իր բաժին ժառանգությանը տիրանալու, յեթե միայն կամուսնանա և անպատճառ «հայ-լուսավորչական» մի աղջկա հետ։ Հակառակ դեպքում ցմահ պիտի բավականանար իր համեստ ամսականով։ Իսկ ամուսնանալ կարող էր միայն իր շռայլ կենցաղը փոխելուց հետո։

Ավելի նշանավորը մի ուրիշ կետ էր։ Սմբատն իրավունք չուներ իր բաժին ժառանգությունը կտակել վոչ իր «օտար-ազգի» կնոջը և վոչ իր զավակներին։ Յեթե կբաժանվի այժմյան կնոջից, իրավունք ձեռք կբերի ամուսնանալ մի հայ աղջկա հետ, այն ժամանակ



նոր կնոջից յեղած զավակները կհամարվեն նրա օրինական ժառանգները։

Կտակը ջարդուփշուր արավ շատ իրավացի և ապօրինի հույսեր։ Շատերին զարմացրեց և ամենից ավելի Մարութխանյանին։ Այս մարդը համոզված էր, վոր ժառանգության մի վորոշ մասը պիտի ստանա իր կինը։ Նա կատաղեց, բայց իր ներսում. կտակը կարդացվելիս նրա դեմքի մկանունքը չշարժվեց, միայն կանաչ-դեղնագույն աչքերի մեջ փայլեց մի անսովոր չարամտություն։ Թեքվելով կնոջ ականջին, նա շշնջաց.

-- Այդ կտակն ապօրինի յե։

Կինը զարմացած նայեց նրա յերեսին։

Մարդը շարունակեց.

— Հայրդ նրան գրել է ավել հոգեկան հիվանդության մեջ։ Դա կտակ չե, այլ խրատ՝ մի ապուշ քահանայի ձեռքով։ Դատարանը չի հաստատիլ նրան։ Հեռանանք այս տնից։ Այստեղ, բացի Միքայելից, ամենքը մեր թշնամիները կլինեն... շուտով կտեսնես...

Յեվ կնոջը չսպասելով, Մարութխանյանը քայլերն ուղղեց դեպի դռները գլուխը բարձր պահած...

Ազգականների կեղծ վշտակցությունը, հարկավ, փոխվեց անկեղծ ատելության, ապա թշնամանքի։ Բոլորը զինվեցին Սմբատի դեմ։

Պարզվեց, վոր ներքնահարկում պահվող վոսկով լի տոպրակներն անգործ մարդկանց վառ յերևակայության ծնունդ են յեղել։ Ծերունին զուտ դրամ է թողել միայն տոկոսաբեր թղթերի մեջ, այն էլ ընդամենը չորս-հինգ հարյուր հազար ռուբլի։ Մնացյալ հարստությունը պարունակվում է անշարժ կալվածքների, հանքերի, գործարանների և յերկու շոգենավի մեջ։ Տրեխների գոյությունը տակավին չէր երևում։ Լուր տարածվեց, թե հանգուցյալը կտակել է՝ դնել նրանց իր դագաղի մեջ և հետը թաղել։ Դյուրահավատ մարդիկ հոգեհանգստի ժամանակ մոտենում էին ագահ դագաղին, վոր տեսնեն նվիրական վոտնամանները։ Սակայն այնտեղ վոչինչ չկար, բացի ծերունու մոմի գույն ընդունած դիակից։

Կիրակի օրը վաղ առավոտից Ալիմյանների տանն ասեղ գցելու տեղ չկար։ Հանգուցյալի դագաղն իրանց ուսերի վրա դուրս տանել ցանկացողների թիվը այնքան մեծ էր, վոր թաղման հանդեսի գլխավոր կարգադրիչ Սրաֆիոն Գասպարիչին անգամ հերթ չհասավ։ Նա կատաղեց մարդկային կեղծիքի դեմ և ասում էր բարձրաձայն.

– Անիծվածնե՛ր, քանի մարդը կենդանի յեր, բամբասում էիք, գրպարտում, հացը գլխին հարամ անում, հիմա ինչ պատահեց, վոր հանկարծ բարեկամացաք.. Իշտահներդ կապեցեք. Սմբատը խելքը չի կորցնի...

Պատարագիչն ազատամիտ Տեր-Աշոտն եր, չոր-չոր դեմքով մի յերիտասարդ քահանա, վոր մի լրագրի աշխատակից եր և մի տեսակ փորձանք մյուս քահանաների գլխին։ Թեմական առաջնորդ Յեփրեմ յեպիսկոպոս Փիրվերդյանը նույն առավոտ եր յեկել թեմի կենտրոնից՝ թաղմանը ներկա լինելու համար։ Սյուների մեկի առջև, փայտաշեն ամպհովանու տակ կանգնած, մտքում շարադրում եր «ավուր-պատշաճի» քարոզ։

Մոմերով շրջապատված և պսակներով ծածկված դագաղի առջև կանգնած եյին յերեք յեղբայրները յերեք տարբեր խոհերով և զգացումներով։

Արշակը, սուգի նշան սև լաթը թևին կապած, մոլոր հայացքով նայում եր աջ ու ձախ։ Զգում եր մարմնական թուլություն ու քաղց, վորովհետև գիշերը լավ չեր քնել և առավոտից ել բան չեր կերել։ Ձանձրալի եյին նրա համար պատարագչի չոր ու զիլ ձայնը, ծանր, հանդիսավոր շեշտերն ամեն բառի վրա, այդ միապաղաղ «ալելուաները» և «խաղաղություն ամենեցուները», տիրացուների աններդաշնակ ձայները, խուռն ամբոխի շշնջյունները, բուրվառից բարձրացող ծուխը, բշոցների ճնճղոցը, բազմաթիվ մոմերի լույսն ու մուխը։ Հոր մահն այժմ նրան ուրախացնում եր, չե՞ վոր նա ազատվեց, վերջապես, մանրակրկիտ, ժլատ և խստասիրտ վերահսկողից։

Միքայելի սիրտը ճնշվում եր, ներվերը թուլացել եյին, յերեսը յերկայնացել, աչքերի տակերի խորշերը լայնացել և կապտել։ Ամբողջ գիշերը չեր քնել։ Այն պահից, յերբ իմացավ հոր կտակի բովանդակությունը, դագաղը նրա համար դարձավ ատելի ու զզվելի։ Այժմ նրան թվում եր, վոր սառն ու քարացած դիակը ծաղրում ե իրան, ծիծաղում չարախինդ ու չարախնդիր, վորպես մի անծանոթ աշխարհից յեկած դևային ուրվական, վոր խլել ե նրա յերջանկությունը։ Յեվ արդարև, միթե ծայրե ի ծայր անամոթ ծաղր չե ամբողջ կտակը։ Դնել քսան և ութ տարեկան տղամարդին ուրիշի խնամատարության տակ — միթե կարող եր մի հայր ավելի դաժանորեն պատժել իր հարազատ վորդուն։ Ո՛ս, անողոք ծերուկ։ Իսկ նա միամտաբար կարծում եր, թե այդ մարդու մահով կազատվի, վերջապես, ձանձրալի հսկողությունից, անտանելի կշտամբանքներից, կդառնա ինքնագլուխ, կապրի, ինչպես ցանկանում ե, կծախսե՝ վորքան կամենում ե։ Կանգնած ավագ յեղբոր աջ կողմում թվում եր նրան, թե կանգնած ե մի ոտար, անկոչ հյուրի հետ, վոր հեռու աշխարհից գալով, ուժով մտել ե նրա սեպհական տունը, տիրացել նրա իրավունքներին, ինչպես մի հրոսակ։ Չե՞ վոր այդ մարդն ութ տարի գոյություն ուներ իր հոր կյանքում վոչ ուրիշ բանի համար, յեթե



վոչ կատաղության ու անեծքների. չե՞ վոր նա առ միշտ աքսորված եր ծնողների տնից, լքված ու թքված վորպես գերդաստանի գերագույն արատ… Իսկ այժմ… Նա յեկել ե ու կանգնել վորպես տեր և իշխանավոր…

Այլ եյին Սմբատի զգացումները։ Մռայլ մտքերի մեջ խորասուզված, գլուխը կրծքին թեքած, կանգնած եր վորպես մի տեսակ դատապարտյալ։ Վորքա՛ն հիշողություններ եյին վերականգնել նրա մեջ, վորպիսի՛ ծանր մտքեր եյին ալեկոծում նրա ուղեղն այն հարազատ միջավայրում, ուր շատ տարիներ եր չեր յեղել և վորն այսոր կարծես հրում ե նրան, վորպես մի խորթ, անհարազատ տարր։ Շատ տարիներ. վոչ, ընդամենն ութ տարի։ Բայց թվում եր նրան, վոր իր կյանքի այս վերջին քառորդում ապրել եր, խորհել, զգացել ավելի, քան առաջ։ Յեվ ինչ-վոր անխորտակելի պատնեշով այդ ութ տարիները բաժանում եյին նրան անցյալից։ Յեվ վոչինչ նմանություն գոյության այդ յերկու շրջանների մեջ, վոչ մի աննշան կապ։ Դեռ մի շաբաթ առաջ նա կարծում եր, թե առ միշտ անջատվել եր մերձավորներից և յերբեք, յերբեք չպիտի վերադառնա ծնողների հարկի տակ։ Հայրն անիծել եր նրան և զզվանքով հեռացրել իրանից և ինքն ել կարծում եր, վոր արդեն մոռացել ե նրան։ Իսկ յերբ ստացավ ծերունու մահամերձ լինելու հեռագիրը, մի վայրկենում ամեն ինչ տակն ու վրա յեղավ նրա սրտի մեջ։ Յերկու տող գիրը վայրկենաբար ալեկոծեց նրա մեջ սառած վորդիական զգացումները, վորպես ուժեղ ձեռքով արձակված մի քար նիրհած լիճը, և նանորից իր հոգու խորքում զգաց ջերմություն դեպի անցյալը։ Յեվ այժմ նա հոր դագաղի առջև լալիս եր և լալիս եր անկեղծ, դառն արցունքներ թափելով սրտի մեջ։ Կծու վիշտը մերթ ընդ մերթ ցնցում եր նրան վոտքից մինչև գլուխ։ Թվում եր նրան, թե ինքը, միայն և միմիայն ինքն ե պատճառը ծերունու մահվան, ինքը՝ իր անուղղելի սխալով։ Չե՞ վոր այդ յերկաթե առողջության տեր մարդը կարող եր ապրել դեռ շատ տարիներ, չե՞ վոր հոգեկան տանջանքներն եյին վաղաժամ քայքայել նրա մարմինը…

Սակայն վշտանալով, վողբալով ու ինքն իրան դատապարտելով հանդերձ, նա այժմ ել զգում եր, վոր իր և այն ծանոթ միջավայրի, այս մերձավոր և ընտանի դեմքերի մեջ բարձրացած պատնեշն անխորտակելի յե…

Բեմ բարձրացավ յեպիսկոպոսը և սկսեց փքուն խոսքերով դրվատել հանգուցյալի քանի մի բարեգործական նվերները, վոր վոչինչ եյին նրա հարստության համեմատ։

— Եջմիածնի վանքին հինգ հազար, ճեմարանին հինգ հազար,

մեր Մարդասիրական ընկերությանը տասը հազար, ուսումնարանին մի հազար, աղքատանոցին յերեք հազար։ Թող որհնվի հանգուցյալի անբասիր հիշատակը, Թող Աստված բյուր ի բյուրոց վարձատրե նրա ազնվազարմ ժառանգներին, Թող հանգուցյալի այս լուսապայծառ և յերկնաճաճանչ գործը ծառայե որինակ բոլոր ազգայնոց համար։

Յեվ այլն, և այլն, և այլն…

Պատարագն ավարտվեց, հոգեհանգիստը կատարվեց, դիակը դուրս տարան։

Յերբ թաղման հանդեսը վերջացավ, արդեն յերեք ժամն եր։

Հակառակ նորամուծ սովորության, այրի Վոսկեհատը պահանջել եր, վոր հանգուցյալի հիշատակին այնպիսի մի հոգեճաշ տրվի, վորի նմանը յեղած չլիներ։ Սմբատը համաձայնություն եր տվել հակառակ իր հայացքներին, չկամենալով մորը վշտացնել։

Հուղարկավորների մեծ մասը ցրվեց, բայց և այնպես սգավորների ընդարձակ բնակարանը լցվեց։ Բոլորը քաղցած եյին և անհամբեր սպասում եյին ճաշի, նույնիսկ պատարագի կիսից սկսած։ Սպիտակ մաքուր սփռոցների վրա դարսած առատ ուտելիքները և գինու փայլուն շիշերն ամենքի ախորժակն եյին գրգռում։ Տեր Սիմոնը—Ալիմյանների քահանան, վոր պատվավոր քաղաքացիների հետ անցել եր առանձին սենյակ, առաջարկեց հանգուցյալի հոգու բաժակը։ Նրան ձայնակցեցին Տեր-Աշոտը և Տեր-Սահակը, և «Աստված հոգին լուսավորե» դարձվածն անցավ սենյակից սենյակ և շատերին տրամադրեց լավ խմելու։ Գինու և ողու բաժակները դատարկվեցին, դանակ-պատառաքաղներն սկսեցին գործել, մետաղի ու ափսեների հնչյունները խափանեցին ընդհանուր լռությունը։ Տեսարանն սկզբում հիշեցնում եր Եջմիածնի վանական ճաշարանն իր քարե սեղաններով։ Հյուրերն ուտում եյին անխոս, աչքի տակով ծուռ-ծուռ իրարու նայելով և իրարուց ամաչելով, կամ իրարուց խրախուսվելով։ Բայց գինու շիշերի առաջին շարքը գլուխները տաքացրեց, և թրջված լեզուները բացվեցին, ինչպես թառամ բույսերն անձրևի ցողից։

Սմբատը, վոր վաղուց չեր տեսել նման հանդեսներ, անցնում եր սենյակից սենյակ և հետաքրքրությամբ դիտում։ Նա ինքը քաղց չեր զգում և զարմանում եր ուտողների ախորժակի վրա։ Շատերն սկսեցին գինու ազդեցությամբ կատակներ անել ու ծիծաղել, միմյանց հյուրասիրելով, վորպեսզի իրանք ևս առիթ ունենան խմելու։ Սմբատի զգացումները վիրավորվում եյին։ Մի կոշկակար ամեն անգամ բաժակը դատարկելիս, հարևանին արմունգով բոթում եր և աչքով անում դեմուդեմ նստած իր արհեստակցի կողմը, ձեռը քսելով կրծքին ոխայ, ի՞նչ անուշ ե հարստի գինին։ Կային այնպիսի-



ները, վոր բերանները կերակրով լեցուն անեկդոտներ եյին պատմում և ծիծաղ շարժում։ Վոմանք արդեն կարմիր գինով ներկել եյին ճերմակ սփռոցները և վրեն աղ սփռել։ Մի քանի գործակատարներ զանազան միմոսություններով աշխատում եյին միմյանց ծիծաղեցնել։ Նրանց զվարճության գլխավոր առարկան «ադվակատ» Մուխանն եր—դեղնագույն, ուռած քթով մի մարդ, վոր կերակրի յուրաքանչյուր պատառը կուլ եր տալիս մերթ գինով, մերթ ողիով։ Մազերը փոշոտ, գզգզված, ալեխառը միրուքը խճճված շատ գործածված ավելի պես, աչքերի շրջանակները կարմիր, կեղտոտ, հնամաշ անգույն ռեդինկոտը կուչկուչված, նա հիշեցնում եր ասիական բաղնիսի մոխրատան բնակչին։ Առավոտից մինչև յերկու-յերեք ժամը Մուխանը հաշտարար դատարանի առջև սրա ու նրա համար հատը տասը կոպեկով խնդրագիր եր հորինում կամ որենքներ բացատրում, իսկ այնուհետև որվա վաստակածը հանձնում եր ողետներին ամենայն բարեխղճությամբ։

Գործակատարները զցում եյին նրա վրա հացի գնդիկները։ Նրանց նշանակն եր «ադվակատ»-ի աղյուսագույն պարանոցի խոշորագույն խուլինջը։ Ստեպ-ստեպ նրա դողդող ձեռներից հատակի վրա յեր ընկնում մերթ դանակը, մերթ պատառաքաղը, անձեռոցիկը կամ մսի կտորները։ Յեվ յերբ ցածր եր թեքվում ընկածը վերցնելու, հացի գնդիկները կարկտի պես եյին տեղում նրա պարանոցի վրա։

Մի անգամ, յերբ գնդիկներից մեկը դիպավ քթին, բերանը բաց արավ հայհոյելու, մի ձեռ յետևից փակեց նրա բերանը։

— Շատ մի կռնծիր, —շշնջաց նրա ականջին մի կարճահասակ մարդ դեղնագույն մազերով և ապակու պես փայլուն աչքերով, քեզ հետ գործ ունեմ… յերեկոյան ութ ժամին կգաս մեր տուն…

Ասաց փոքրահասակ մարդը և իսկույն չքացավ։

Յեղանակը պարզ եր, ոդը ջերմ, լուսամուտները բաց։ Դեպի մուտքը թեքվող արեգակի շողերը խուրձերով ներս եյին թափվել և լուսավորում եյին բազմաթիվ գլուխների խայտաբղետ շարքերը։ Ամբոխի շունչը, կերակուրների գոլորշին, ծխախոտի ծուխը, փոշին, կեղտն ու ըրտինքը, միմյանց խառնվելով, սենյակներում գոյացրել եյին սորին տեսակի պանդոկային մթնոլորտ, ծանր, անախորժ։ Շատերն եյին արդեն հարբել, բղկոց եյին տալիս, ցույց տալով, վոր իբր չեն ուզում, և դարձյալ ուտում եյին. ով գիտե մեկ ել յերբ պիտի տեսնեն այդպիսի առատ սեղան։

Մարդկանց ագահությունը և զվարթ, ուրախ դեմքերը, վոմանց անամոթ բարձրաձայն ծիծաղներն ակամա զզվանք եյին ներշնչում Սմբատին։ Վաղուց նա չեր տեսել այդպիսի նողկալի տեսարան։

Անցնելով «ադվակատ» Մուխանի մոտով, նկատեց, վոր արբշիռը գինին թափել է սպիտակ սփռոցի վրա և աղաման է փնտրում կարմիր լճակը աղով ծածկելու համար։ Նրա աջ ու ձախ կողմերում նստած դերձակները բարձրաձայն քրքջացին, լայն բանալով կերակրով լի բերանները, ինչպես շնաձկներ։

— Յես ձեզ քաշ կըտամ գերձալի տակ, շուն շան… կատաղեց Մուխանը։

Սմբատը, զզվանքը զսպելով, շտապեց անցնել «պատվավորների» սենյակը։ Այստեղ ել ուտում եյին ախորժակով, բայց արժանավայել, խմում եյին շատ, բայց վոչ շտապով և վոչ աղմկալի, ծիծաղում եյին, բայց ցածր ձայնով։ Տեր-Աշոտ ազատամիտը վոգևորված խոսում եր ազգի, յեկեղեցու նորագույն պահանջների մասին։ Նրա ազատամիտ հայացքները կատաղեցնում եյին պահպանողական Տեր-Սիմոնին, վոր առհասարակ ատելով ատում եր իր յերիտասարդ պաշտոնակցին։ Շուտով նրանց մեջ սկսվեց մի թեթև վիճաբանություն, վոր հետզհետե տաքացավ։ Բանն այն է, վոր յուրաքանչյուրն աշխատում եր փայլել իր գիտությամբ հարուստ սեղանակիցների ուշադրությունն ու համակրանքը գրավելու համար։ Այն ինչ՝ հարուստները լսում եյին վիճաբանությունն արտաքուստ ուշադիր, իսկ մտքով զբաղված իրանց գործերով և Մարկոս աղայի թողած հարստությամբ։ Մեկը նավթահոր եր փորել տալիս և յերեկ խողովակը ծռվել եր հորի մեջ, մյուսի գործակատարը գողություն եր արել, յերրորդը վաղը պիտի բանկից ազատեր իր մուրհակները, մի ուրիշն ել մտածում եր՝ արդյոք լավ չէ՞ լինի, վոր ինքն ել իր հանքում գետնի տակով խողովակ անցկացնելով, հարևանի նավթը գողանա, ինչպես անում եյին վոմանք։ Մի խոսքով վոչ մեկը գլուխ չուներ Տեր-Աշոտի լուսավոր գաղափարները լսելու…

Հոգեհացին ներկա եյին նաև Միքայելի մտերիմ ընկերներից մի քանիսը։ Ամեն ինչ նրանց վրա նորաձև եր, սկսած կոշիկների սուր ծայրերից և տափակ կրունկներից՝ մինչև գլուխների մազերի սանրվածքը և բեղերի սրածայր ցիցը դեպի վեր։

Դրանցից մեկը Գրիգոր Հաբեթյանն եր, վորին համառոտ կոչում եյին «Գրիշա»։ Կարմիր, մսալի յերեսով, հաստ շրթունքներով, փառփառուն սև աչքերով մի յերիտասարդ եր, վոր սիրում եր աղմկալի քեֆեր, կոտրտել, ջարդել, սրա ու նրա վրա շիշեր շպրտել, թուղթ խաղալ, շամպայնը խմել շիշից, գիշերները փողոցներում թառ ու դուդուկ ածել տալ, վոստիկանների հետ կռվել, հետո նրանց կաշառել։ Նրա մի կողմում նստած եր նիհար, դալուկ դեմքով Մելքոն Ավրումյանը, քսան ու վեց տարեկան մի հանքատեր, վորի աչքերի



մեջ փայլում եյին կիրքն ու այն սոսկալի ախտը, վոր նրան դարձրել եր կմախք։ Մի կողմում նստած եր քնահարբ դեմքով, թմրած աչքերով Մովսես Բաբախանյանը, վորի ուղեղն ու զգացումները բացառապես թղթախաղին եյին նվիրված։

Նա հանեց մի հարյուրանոց թղթադրամ, սեղմեց բռունցքի մեջ։

— Զույգ, թե՞ կենտ, - հարցրեց, հազիվ թմրած աչքերի կոպերը բարձրացնելով։

— Կենտ,—պատասխանեց Գրիշան։

Նայեցին թղթադրամի թվահամարին — կենտ եր։ Մովսես Բաբախանյանը դրամը տվեց Գրիշային։

Միքայելը նստած եր նրանցից հեռու, Իսահակ Մարութխանյանի մոտ։ Թվում եր նրան, վոր ընկերները ծաղրում են իրան։ Շատ անգամ եր պարծեցել նրանց մոտ, թե հոր մահից հետո պիտի այնքան ծախսե, վորքան վոչ վոք դեռ չի ծախսել։ Յեվ այսոր հանկարծ հայտնվում է, վոր նա լիազոր ժառանգ չե, այլ իր յեղբոր ստորադրյալը՝ յետին գործակատարի ամսականով։

— Ի՞նչ անեմ, սա՛, Իսակ, ինչ անեմ,—հարցնում եր նա ստեպ-ստեպ Մարութխանյանին։

Դեղին-կանաչագույն աչքերն ակնոցների տակից նայում եյին այդ պահին շատ մտախոհ։ Պարզ եր, վոր Մարութխանյանի գլուխն զբաղված եր արտաքո կարգի լուրջ խնդրով։ Հանկարծ նա կամացուկ իր անշարժ գլուխը թեքեց Միքայելի կողմը և շշնջաց.

— Իրիկնադեմին յեկ մեր տուն, խոսելիք ունեմ…

— Ուրեմն հույս կա՞,—արտասանեց Միքայելը մի փոքր ուրախանալով։

— Յեկ, կխոսենք…

Հոգեճաշն ավարտվեց, տերտերները պահպանիչ ասացին, հյուրերն սկսեցին ցրվել, բացի Միքայելի ընկերներից ու բարեկամներից։ Նրանք դեռ չգիտեին Մարկոս աղայի կտակի բովանդակությունը, ուզում եյին գիտենալ։

Տան ընդարձակ բակում խռնվել եր խեղճերի անհագին բազմություն։ Հանգուցյալի գործակատարներն ու ծառայողները նրանց կերակուր եյին բաժանում։ Տիրում եր անասելի աղմուկ և իրարանցում։ Կեղտոտ, կիսամերկ մուրացկանները միմյանց հրում եյին, գարկում, հայհոյում, աշխատելով իրարու առաջել և մոտենալ խոհանոցին։

Պղնձե հսկայական կաթսաների հնչյունները, շերեփների զրնգոցը, ծառայողների գոռում-գոչյունները, քաղցած խուժանի կառաչյունը, իրարու խառնվելով՝ ասիական բազարի տպավորություն եյին

գործում։ Կոպտությունը, կեղտը, կերակուրների գոլորշին, ցնցոտիների հոտը նողկանք էին ներշնչում կուշտ և անտարբեր դիտողին։ Մի կույր հաչ փայտով անխնա հարվածում էր աջ ու ձախ իր համար ճանապարհ բանալով դեպի այն կողմ, ուսկից կերակուրների հոտն էր գալիս։ Մի պատանի պարսիկ, նրա փեշերից քաշելով, աշխատում էր ինքն առաջ ընկնել։ Մի ռուս անդամալույծ սայթաքեց, ընկավ մի ասորի կնոջ վրա և կատաղությունից խածնեց նրա գարշապարը։ Մի կարմրերես լեզգի, որի թևերը մինչև արմունկները կտրած էին, հարձակվում էր սրա ու նրա վրա և ատամներով խլում մսի կտորները և գրեթե առանց ծամելու կուլ էր տալիս։ Թափառաշրջիկ շների մի վոհմակ խառնվել էր մուրացկաններին և մրմռալով կռծոտում էր գետնի վրա թափված ոսկորներն ու լակում կերակուրի կեղտոտ հեղուկը։ Մերթ ընդ մերթ գործակատարներն ու ծառաները միահամուռ ուժերով հարձակվում ու յետ էին մղում խուժանը, բայց ոչինչ չէր օգնում որևէ կարգապահություն վերականգնելու։

Վերջապես բոլոր ուտելիքները բաժանվեցին, խոհանոցի դռները փակվեցին, բայց խուժանը դեռ չէր արտաքսվում և այս նշանակում էր, որ տակավին կա մի բան, որին պետք է սպասել։ Ահա դեպի տան յերկրորդ հարկը տանող սանդխտի վրա հայտնվեց Սրաֆիոն Գասպարիչի հանդիսավոր կերպարանքը։ Նա հրամայեց ծառաներին մեկիկ-մեկիկ մուրացկաններին թույլ տալ իրեն մոտենալու։ Ձեռքում բռնած ուներ մի մեծ գույնզգույն թաշկինակ արծաթե դրամներով լի։ Այրիացյալ տիկին Վոսկեհատն էր կարգադրել սեփական դրամից հայրուր ռուբլի բաժանել մուրացկաններին հանգուցյալի հիշատակին։

Սրաֆիոն Գասպարիչը թաշկինակը շարժեց, դրամները հնչեցին։ Արծաթի ախորժալուր ձայնը ելեկտրական տոկի պես անցավ խուժանի մարմնով, ցնցեց նրան։ Քանի մի վայրկյան նա անշարժ էր և ապշած նայում էր վաղեմի աստիճանավորի դյութական թաշկինակին։ Բայց ահա նա շարժվեց, դղրդաց և, խուլ աղաղակ բարձրացնելով, դիմեց դեպի թաշկինակը որպես գիշակեր թռչունների յերամ։ Այլևս ոչ ծառաներն ու գործակատարները և ոչ փողոցից յեկած ոստիկանները չկարողացան զսպել խեղճերի մերկանդամ բանակը։

Ծերունին շրջապատվեց։ Հարյուրավոր կեղտոտ, առողջ և գոս, առնական և կանացի ձեռներ միաժամանակ բարձրացան վեր և օդի մեջ կազմվեց մի շարժուն անտառ կաշվից ու ոսկորից։ Կային անդամալուծներ, զուրկ յերկու ոտներից։ Ձեռների վրա սողալով, սրա ու նրա ոտները կծոտելով, ճգնում էին իրանց համար ճանապարհ բանալ։ Կային թոքախտավորներ, որ անզոր էին առաջ շարժվելու. այնքան հյուծվել էին նրանց մարմինները, կային բորոտներ անգամ, որոնցից խուժանը չէր զգուշանում։ Պատանիներն արմունկների հարվածով միմյանց քիթ ու ծնոտներն էին ջարդում։ Կանայք, ճչալով ու հայհոյելով, իրարու մազերն էին քաշկռտում։ Պարսիկներն որհնում էին հանգուցյալի հիշատակը և աղերսում նրա համար յերկնային դրախտ։ Քրիստոնյաներն անզուսպ հայհոյում էին «անհավատներին», անխնա ծեծելով նրանց։ Խլացուցիչ ժխորի մեջ լսվում էին զանազան լեզուներով ամենակեղտոտ ածականներ, ամենազազրելի հիշոցներ, որ դարերի ընթացքում կազմվել էր ցեխի ու կեղտի ձուլարանում, ուր ապրում են ու շնչում մարդկային մերկությունն ու անոթությունը։ Մարդկության ամոթն էր այդ և դաժանությունը, անարգանքը բնության և ծաղրը տիրող կարգ ու կանոններին և ապիկար օրենքներին։

Տեսարանը հետաքրքրել էր հյուրերից շատերին։ Պատշգամբի վրա ժողոված, նայում էին դեպի վար և... զվարճանում, տեսնելով ապականության մեջ տրորվող մարդկային հոգին ու մարմինը։ Դրանք մեծ մասամբ հարուստների զավակներ էին, որոնք իրանք իրանց անվանում էին «ոսկե յերիտասարդություն»։

— Ձո՛ւյգ, թե՛ կենտ,— ասում էր շարունակ Մովսես Բաբախանյանը մեկին կամ մյուսին և խոշոր թղթադրամները մերթ առնում էր ու մերթ տալիս։

Այստեղ էր նաև ազատամիտ լրագրի թղթակից Արմենակ Մարգպետունին, թուխ, դեղնագույն դեմքով, մեծ քթով մի յերիտասարդ, հագին յերկայն վատ կարված ռեդինկոտ, որի անթիվ ծալերը ցույց էին տալիս, որ նոր է սնդուկից դուրս բերվել։ Տեսարանը նրան թելադրում էր մի հոդված, որ պիտի կրեր «Հակադրություն» վերնագիրը։ Նայում էր վար— քաղցի ու մերկության սոսկալի պատկեր, ուր մարդիկ շներից չէին տարբերվում։ Նայում էր վեր — կշտության ու անհոգության կենդանի մարմնացում։ Այնտեղ կիսամերկ մարմիններ, կեղտոտ ու գզգզված մազերով վողորմելի գլուխների մի քստմնելի ճահիճ։ Այստեղ վերջին տարազի հագուստներ, ոսկե շղթաներ, թանգարժեք «բրելոկներով», ադամանդյա մատանիներ ու փողկապի քորոցներ։ Կարելի չէ խղճալ ստորիններին, գրչով համակրել նրան, սակայն գրավիչը վերինն էր։

Թղթակիցը մոտեցավ Սմբատին, որ դիտում էր իր սեղանի փշրանքներից խլրտող խուժանը, և ասաց.

— Պարոն Սմբատ, յես այսոր ևեթ մտադիր եմ թաղման հանդեսը նկարագրել և ուղարկել «Կայծակ» լրագրին, որ, ինչպես գիտեք, ամենից հարգվածն է ու տարածվածը։

*— Ինչպես կամենաք, — պատասխանեց Սմբատն անտարբեր, նույն-իսկ չնայելով թղթակցի յերեսին:*

*— Մեր պարտքն ե ասպարեզ հանել հանգուցյալի որինակելի բարեգործությունը... Քարոզն այստեղ միայն լսեցին... գրվածը կկարդան աշխարհի բոլոր անկյուններում... Ուստի թո՛ւյլ տվեք նախքան գրելը միքանի լրացուցիչ տեղեկություններ իմանալ ձեզ-նից...*

*— Մի ուրիշ անգամ, պարոն, այսոր դրա ժամանակը չե, — ասաց Սմբատը և յերեսը դարձնելով հեռացավ:*

*Թղթակիցը նրա յետևից մի կատաղի հայացք ձգեց և մտքում ասաց. «ա՛յժմ յես գիտեմ՝ ինչ պետք ե գրել, հղփացած բուրժուա»:*

*Մոտեցավ ազատամիտ Տեր-Աշոտը:*

*— Ցտեսություն, Սմբատ Մարկիչ, թույլ տվեք կրկին ու կրկին ասել, վոր ձեր հայրն իր անունն անմահացրեց:*

*— Պարոն Սմբատն իր հանգուցյալ հոր արածների արժեքը մեզնից լավ ե գնահատում, - միջամտեց պահպանողական Տեր-Սիմոնը, վոր քայլառքայլ հետևում եր Սմբատին տնային քահանայի իրավունքով:*

*Սմբատը՝ քաղաքավարի, բայց սառը սեղմեց մեկի ու մյուսի ձեռքը և, յերեսը դարձնելով, հեռացավ:*

*Բազմաթիվ նախանձոտ հայացքներ ուղեկցում եյին նրան ամե-նուրեք: Այն ինչ այդ պահին նա իր սրտի վրա զգում եր մի այն-պիսի ծանրություն, վորի նմանը յերբեք չեր զգացել...*

---

— Բնորոշեցեք այն միջավայրը, վոր նկարագրված ե այստեղ:

— Ո՞վ եր Մարկոս Ալիմյանը. ի՞նչպես եր նա հարստացել. մի՞թե միայն նախա՞նձն եր պատճառը, վոր նրա մասին ստեղծվել եյին առասպելներ:

— Ի՞նչու չեր Ալիմյանը ցանկանում, վորպեսզի իր մեծ վորդին անպայ-ման թողնի իր ռուս կնոջը յեվ ամուսնանա հայ աղջկա հետ. «ազգասիրու-թյո՞ւնն» եր այստեղ դեր խաղացողը, թե՞ մի ուրիշ հանգամանք:

— Բնորոշեցեք Ալիմյանի զավակների յեվ ազգականների վերաբերմունքը դեպի նա: Վո՞րն ե այդ վերաբերմունքի հիմնական առանցքը:

— Վերլուծեցեք Մարկոս Ալիմյանի թաղման ու հոգեհացի տեսարանը մանրամասն. ա) բուրժուական հասարակության վո՞ր խավերն են ներկա այդ հանդիսին). բ) դրանց վերաբերմունքը դեպի հանդեսը. գ) այդ վերաբերմունքի պատճառները:

— Սրապիոն Գասպարիչը, Մարութխանյանը, Տեր-Սահակը, Տեր-Աշոտը, թղթակից Մարզպետունին, վորպես բուրժուական հասարակության ներկայա-ցուցիչներ. ի՞նչն ե ընդհանուր դրանց մեջ:

— Բուրժուական յերիտասարդություն (Գրիշա, Մովսես Բաբախանյան յեվ այլն):



— Բուրժուական «բարեգործություն» (Մարկոս Ալիմյանի կտակը, աղքատ-ների հացը. մուրացիկներին վողորմություն տալը):

— Համեմատեցեք այստեղ նկարագրված «խեղճերի բանակը» հարուստների «ընտիր հասարակության» հետ. կա՞ արդյոք դրանց մեջ վորոշ նմանություն. բերեք որինակներ յեվ ընդգծեցեք այդ նմանությունները:

— «Քաոս»-ի այս գլուխը մանրամասն վերլուծելուց հետո գրավոր, ձեր խոսքերով, փորձեցեք տալ բուրժուական հասարակության ընդհանուր նկարա-գիրը, նախապես կազմելով ծրագիր ըստ կետերի:

---

— Բնորոշեցեք Մարկոս Ալիմյանին, վորպես բուրժուական հասարակու-թյան ներկայացուցչի. բուրժուազիայի զարգացման վո՞ր շրջանի ներկայացու-ցիչն ե նա:

— Համեմատեցեք նրան Բաղդասար Ահրումյանի հետ. ի՞նչ նմանություն-ներ յեվ տարբերություններ եք տեսնում. ինչո՞վ են պայմանավորված դրանք՝ Ահ-րումյանի յեվ Ալիմյանի անձնական հակումներո՞վ, թե բուրժուազիայի զար-գացման տարբեր շրջաններով:

— Համեմատեցեք այստեղ նկարագրված միջավայրը «Վարդան Ահրումյան» պատմվածքում նկարագրված միջավայրի հետ յեվ բնորոշեցեք այդ միջավայրերի հիմնական տարբերությունը (առեվտրական միջավայր յեվ արդյունաբերական):

— Կարելի՞ յե կարծել, վոր Վարդան Ահրումյանը Բաքու գալով կարող եր դառնալ Մարկոս Ալիմյան:

---

— Ի՞նչ վերաբերմունք ունի հեղինակը դեպի իր նկարագրած միջավայրն ու տիպերը:

— Առանձնացրեք այն նախադասությունները ու առանձին արտահայտու-թյունները, վորոնք բնորոշում են այդ վերաբերմունքը:

— Վո՞ր տեսարաններն են ամենահաջող ու ամենացայտուն կերպով նկա-րագրված:

— Այս հատվածը կարդալուց կարելի՞ յե յեզրակացնել, վոր հեղինակը քաջ ծանոթ ե բուրժուական միջավայրին: Յեթե այո՛ ինչո՞ւ:

---

— Այժմ մեզանում կա՞ն արդյոք Ալիմյանի յեվ նրան շրջապատող մարդ-կանց նման տիպեր. կարո՞ղ եք հիշել վորեվե մեկին. ի՞նչ եր նա առաջ անում, — այժմ ինչո՞վ ե զբաղված:

— Իմացեք հասակավորներից վորեվե նախկին հարուստի մասին յեվ հա-մեմատեցեք ձեր լսածը Շիրվանզադեյի նկարագրածի հետ:

## II. ԱԼԻՄՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ

*Այրի Վոսկեհատն իրան համարում եր աշխարհի յերեսին մայրե-րից ամենաանբաղդը: Մեծ վորդին աղավաղեց յուր յերիտասարդ կյանքը, ամուսնանալով ոտարուհու հետ: Այժմ նրա վոչ խորին*

պատկառանքը, վոչ անկեղծ վորդիական սերը չեն կարող Վոսկեհատի սրտից ջնջել արմատացած վիշտը։ Թող Սմբատը, վորքան ուզում է, լինի խելոք, աշխատասեր, խնայող, բարի, նրա արած սխալն արժե շատ հանցանքների յուր մոր աչքում։ Նա ինքը կրում է յուր սխալի հետևանքները, նա տխուր է, մռայլ, ինչպես կարող է բաղդավոր լինել նրա մայրը։

Միքայելն արդեն անուղղելի վորդի յե։ Նրա կենցաղը հուսահատեցնում է Վոսկեհատին. շռայլում է, առանց վաստակելու, մաշելով որերը թղթախաղի սեղանների մոտ, անվայել զվարճությունների մեջ, անարժան ընկերների հետ։ Որ որի վրա նրա առողջությունը քայքայվում է։ Այժմ ի՞նչ է մնացել մի ժամանակվա առողջ ու գեղեցիկ Միքայելից.— Մի զույգ խորը թաղված աչքեր, կաշի ու վոսկոր—ուրիշ վոչինչ։ Ի՞նչպես Վոսկեհատը չվողբա նրա մասին։

Աղջիկը, Մարթան, բաղդավո՞ր է արդյոք։ Վո՛չ. Նրա կյանքն էլ մի ուրախալի բան չի ներկայացնում Վոսկեհատի համար։ Մի վորդին դեղնած, մաշված, հինգ տարեկան է, դեռ որինավոր մանգալ չի կարողանում, մյուս վորդին նույնպես հիվանդոտ, որ որի վրա սպասում են մեռնելուն։ Ասում են, նրանց հայրը վարակված է յեղել ինչ-վոր հիվանդությունով։ Ա՜խ, այդ մարդը. հարուստ, աչքաբաց, խելքը գլխին, բայց միշտ լալիս է, միշտ գանգատվում, թե աղքատ է, և կնոջն էլ է ստիպում գանգատվել։ Ամեն որ Մարթան գալիս է, արտասունքն աչքերին, աղաչում, վոր իրան բաժին տան հոր ժառանգությունից։ Կռվում է մոր հետ, թունավորում նրա առանց այն էլ անբաղդ կյանքը, սպառնում է ինչ-վոր դատ բանալ յեղբայրների դեմ։ Ե՜հ, դա յել աղջիկ...

Վոսկեհատը հույս ուներ մխիթարվել գոնե փոքր վորդով—Արշակով։ Բայց այս վերջին հույսն էլ չի արդարանում։ Արշակը, վորի լեզուն հազիվ ազատվել է մանկական կապանքներից, արդեն սկսել է այն վոճով խոսել մոր հետ, վորպես չի խոսել նույնիսկ Միքայելը։ Նախատինքին նախատինքով է պատասխանում, սպառնալիքի դեմ սպառնալիք կարդում, խրատներն ու աղերսները ծաղրում ու արհամարհում։ Դպրոցից տուն է՞ գալիս թե չէ, նախաճաշ է պահանջում։ Վայ, յեթե մի րոպե ուշացրին. կատաղում է, փրփրում, բոլորին հայհոյում և քիչ է մնում յերբեմն դատարկ ափսեն մոր գլխին շպրտի։ Հետո անհետանում է ամբողջ որով։ Գիշերները յերկու ժամից առաջ տուն չի գալիս, իսկ շատ անգամ մինչև լույս էլ դրսերումն է մնում։ Քանի՜-քանի՜ անգամ Սրաֆիոն Գասպարիչը և Միքայելը նրան տեսել են անբարոյական պատանիների հետ ծովի վրա մակույկով շրջագայելիս, այգիներում կասկածելի կանանց հետ զբոս-



նելիս, յերբեմն նույնիսկ հարբած, իսկ մի անգամ էլ ծեծվելիս։

Տեր Աստված, Տեր Աստված, այս ինչ յերկնային պատիժ է, ինչ մի մեծ մեղք է գործել Վոսկեհատը։ Յեվ կան դեռ անխելք կանայք, վոր նախանձում են նրան։ Ա՜խ, չի ուզում նա այդքան հարստությունը. խլեցե՛ք նրանից այդ տները, քարվանսարաները, հանքերը, գործարանները և փոխարենը տվեք միայն մայրական բաղդ։

Սրաֆիոն Գասպարիչը պնդում էր, թե չպիտի Արշակի ձեռը փող տալ, թե հենց փողն է նրան փչացնում։

— Փողը նրա հասակի տղայի ձեռքին մի սուր դանակ է։ Պահիր նրան տկլոր, քաղցած, կտեսնես, վոր կխելոքանա։

Այրին չէր լսում նրան։ Ի՞նչ. Արշակին փող չտալ, էլ վո՞ր որվա համար է նրա հայրն այսքան հարստություն դիզել։ Վերջապես, ամոթ չէ՞, վոր նա գրպանում փող չունենա, յերբ բոլոր ընկերներն ունեն։

Սակայն մի որ Վոսկեհատը փորձեց կատարել յեղբոր խորհուրդը։ Յեվ ինչ դառն փորձ էր այն։ Նախընթաց յերեկո Արշակը թղթախաղում տանուլ էր տվել, այսոր պարտավոր էր վճարել պարտքը։ Առավոտը նա մտավ մոր սենյակն այն ժամանակ, յերբ այրին նոր էր հագնվում։

— Մոտդ փող կա՞,— հարցրեց նա, ձեռները վարտիկի գրպանները դնելով։

— Ելի ինչ ես անում, չէ՞ վոր յերեկ տվեցի։

— Դու ասա, փող կա՞ մոտդ։

— Չկա։

Արշակը գլխաբաց վազեց ներքև, մտավ գրասենյակ, կանգնեց յերկաթի վանդակապատի առջև, վորի հետևում նստած էր Սրաֆիոն Գասպարիչը, շքանշանը կրծքին, բեղերը վոլորած, դեմքը խոժոռած այնպես, վոր, կարծես, պատրաստ էր առաջին պատահողի հետ կռվելու։

— Քեռի՛, սնդուկդ բաց արա, տեսնեմ...

Ծերունին հեգնորեն ժպտաց։ Արդեն նա վաղուց էր սպասում այն որին, յերբ կկարողանա մերժել պատանուն փող տալու։

— Չե՞ս լսում, սնդուկդ բաց արա՛,—կրկնեց Արշակը, վիրավորված մորյեղբոր ժպտից։

— Չեմ կարող։

— Ուրեմն, բանալին տուր, յե՛ս բաց կանեմ։

— Բան չկա սնդուկում։

— Բանկից բերել տուր։

— Գնա, Սմբատին ասա, հետո։ Առանց նրա հրամանի ես ծախս չեմ անում։

— Սմբատն ո՞վ է։

— Սմբատը ֆիրմայի գլխավորն է, ներկայացուցիչը և քո հոգաբարձուն։

— Ա՛յ նորություն,— գոչեց Արշակը, արդեն կատաղելով։ — Ես գնամ, Սմբատից իրավո՞ւնք ստանամ իմ փողերի համար։ Միքայելը ծախսի ինչքան քեֆն է, իսկ ես մի հայրուր ռուբլու համար նրան աղաչե՞մ... բաց արա սնդուկդ, ասում եմ...

Ծերունին համառեց։ Այն ժամանակ Արշակը գոռաց, վոտները խփեց հատակին, հայհոյեց Սմբատին էլ, Միքայելին էլ, ծերունուն էլ և կրկին վազեց վերև։ Այս րոպեյիս, առանց հետաձգելու, թող նրան տան հարյուր, վո՛չ, հարյուրը բավական չէ, յերկու հարյուր, յերեք հարյուր ռուբլի։

— Փող չունիմ, վորդի, չունիմ,— կրկնեց այրին, թեյի բաժակը դառնացած, հեռացնելով բերանից։

Եվ սաստիկ զղջաց։ Պատանին բաց արավ մունդիրի կոճակները, հանեց գրպանից ատրճանակը և ուղղեց յուր կրծքին։ Կամ փող կամ մահ— ահա թե ով է Արշակ Ալիմյանը։

— Իմ պատիվը կարող է արատավորվել։ Օրենքով թղթախաղի պարտքը պիտի վճարել քսան ու չորս ժամում։ Ես Ալիմյանների անունը կոտրել չեմ ուզում, հասկանո՞ւմ ես...

Այրին վոչինչ չէր հասկանում։ Նա միայն տեսավ փայլուն զենքը վորդու ձեռում, արձակեց մի սուր ճիչ և, ուշաթափվելով, տարածվեց տաճկական շքեղ թախտի վրա։

Կանչեցին Սմբատին, և միայն նա կարողացավ ատրճանակը խլել Արշակից։

Երբ այրին ուշքի յեկավ, առաջին խոսքն էր.

— Փո՛ղ տվեք նրան, Աստված սիրեք, տվեք ինչքան ուզում է։

Բայց Արշակն արդեն չքացել էր։ Երեք որ նրան փնտրում եյին, չեյին գտնում։ Այրին փետում էր մազերը, կեղեքում կուրծքը, անիծում յեղբորն ու մեծ վորդուն։ Ինչ-վոր հարյուր -յերկու հարյուր ռուբլու համար կործանեցին նրա զավակին։ Արշակն իրան ծովն է գցել ու խեղդել. փնտրեցե՛ք նրա դիակը։

Չորրորդ որը պատանուն գտան յուր դասընկերներից մեկի տանը յերեսն իվայր հագստով քնած։ Գիշերվա կիսին յեկել էր այնտեղ, ապաստան խնդրել, ցեխոտ, հարբած ու ծեծված։

Անկանոն կյանքն ու անքուն գիշերներն արդեն իրանց կնիքը դրոշմել եյին տասնուվեց տարեկան պատանու դեմքի վրա։ Ջուր



կլիներ նրա աչքերի մեջ վորոնել պատանեկական անապական հոգու արտափայլում։ Նա թվում էր յուր հասակից առնվազը տասը տարով մեծ։ Որ որի վրա յերեսը դալկանում էր, յերկայնանում, աչքերի տակ կապտավուն խորշերը լայնանում եյին, ճակատի յերակներն ավելի ու ավելի վորոշ գծավորվում...

Վորոշեցին վարձել մի մարդ, վորի պարտքը լինի հսկել Արշակին և թույլ չտալ շվայտությունները շարունակելու։ Այսուհետև պատանին առանց այդ մարդու տնից չպիտի դուրս գար։ Վճռվեց դպրոցից նրան դուրս բերել. թող անկիրթ մնա, կյանքն ուսումից թանգ է։ Արշակը հակառակեց, բողոքեց յուր գլխին նշանակած հսկիչի դեմ, բայց հպատակվեց։ Նրա սենյակում դրեցին առանձին ակողնակալ հսկիչի համար և այսպիսով պատանուն դարձրին մի տեսակ բանտարկյալ։ Այրին հայտնեցին, վոր հսկողությունն անհրաժեշտ է ընկերների վատ ազդեցությունից պաշտպանելու համար...

Մի որ քաղաք վերադառնալով Սմբատը լսեց, վոր Արշակն առավոտից անհետացել է, հայտնի չէ ուր։ Այն մարդը, վոր նշանակված էր նրա վրա հսկիչ, կամ, ինչպես Սրաֆիոն Գասպարիչը նրան անվանում էր «լյալյա», ամբողջ որը փնտրել էր, չէր գտել։ Բանը պատահել էր այսպես. առավոտը Արշակը Սրաֆիոն Գասպարիչից փող է խնդրում. ծերունին, փողը նրան տալու փոխարեն, տալիս է հսկիչին։ Արշակը կատաղում է, կռվում բոլորի հետ և բոլորին հայհոյում փողոցային հիշոցներով։ Հետո վազում է և փակվում Սմբատի առանձնասենյակում։ Հսկիչը չի համարձակվում նրա յետևից գնալ։ Մի քիչ անցած, պատանին դուրս է գալիս այնտեղից գողնովի. վոչ վոք չի տեսնում նրան, բացի Անտոնինա Իվանովնայի աղախնից։ Արշակը գունատված և հուզված գոչում է. «կասես բոլորին, վոր էլ յերեսս չեն տեսնի»։ Աղախինն անմիջապես վազում է և այրի Վոսկեհատին հայտնում։ Այրին իսկույն հսկիչին ուղարկում է վորդու յետևից։ Ամեն տեղ խեղճ մարդը փնտրում է պատանուն և չի գտնում։

Լսելով անախորժ լուրը, Սմբատը ձեռը խփեց ճակատին և շտապով անցավ յուր սենյակը։ Մոտեցավ գրասեղանին, շարժեց դարանը, վոր իսկույն բացվեց առանց բանալիի։ Նայեց և ապշած յետ կանգնեց մի քայլ։ Միջին դարանը կոտրած էր, թղթերը տակն ու վրա արած։

Սմբատը նայեց դարանի անկյունները, խառնեց թղթերը, բաց արավ մյուս դարանները, վորոնեց սեղանի տակ, սեղանի վրա, թղթապանակների մեջ և, վորոնածը չգտնելով, թուլացած ընկղմվեց բազկաթոռի վրա։ Առավոտը բանկից բերել էր տվել բավական խո-

շոր մի գումար, վոր, հանքերից վերադառնալուց հետո, նույն յերեկո պիտի բաժաներ նոր շինության վրա աշխատող կապալառուներին և արհեստավորներին։

Դրամի կապոցն անհետացել եր։ Կասկած չկար, վոր գողացել եր Արշակը։ Ահա, ուրեմն, նրա փախչելու պատճառը. պակասում եր գողությունը – այս ել արավ։

Նա թղթերը ժողովեց, դրեց դարանը, իջավ գրասենյակը և սպասող արհեստավորներին խնդրեց վաղը գալ վարձ ստանալու։ Հետո կանչեց գործակատարներին, և պատվիրեց Արշակին վորոնել ամենուրեք։ Նա վոչ-վոքի չհայտնեց գողության մասին, նույնիսկ Սրաֆիոն Գասպարիչին։

Նորից բարձրացավ վերև, յենթարկվեց մոր կծու կշտամբանքին։ Այրին ասում եր, թե Արշակը մեղավոր չե, վոր տնից փախչում ե։ Վերջին ժամանակ նրան կատարելապես տանջում եյին. բանտարկել եյին, վոտով ձեռով կապել ինչ-վոր «լյալյի» հետ։ Ծախսի փող չեյին տալիս «խեղճ յերեխային»։ Արշակը մազերը փետում եր, լաց լինում, սպառնում եր իրան սպանել։ Նա կատարել եր յուր սպառնալիքը. կամ ծովն ե ընկել, կամ պարանով խեղդվել, կամ ռեվոլվերով իրան սպանել։ Տաքարյուն տղա յե, կանի, անպատճառ կանի...

— Իսկի յել չի անիլ,—գոչեց Սմբատը, վշտացած մոր կշտամբանքից,—նա ինքնասպանություն գործող տղա չե։ Կարող եմ հավատացնել, վոր այժմ, անառակների հետ շնթռնած, քեֆ ե անում։

— Վո՛չ խելոք ե վորդիս, վոչ գիժ,—ասաց այրին, արտասուքը սրբելով,—մեկը փչացավ, մյուսն ել նրա ճանապարհով ե գնում։ Իսկ դու, դո՛ւ նրանցից ավելի վատ դուրս յեկար, ավելի խորը խոցոտեցիր սիրտս...

Ազատվելով մոր ձեռքից, Սմբատն ընկավ քրոջ ձեռքը։ Ներս մտավ թե չե, տիկին Մարթան սկսեց ուղղակի հարձակվել նրա վրա։

— Դու հորս վորդուն չես թողնում որ տեսնի։ Ընկել ես կնոջդ կոշիկների տակ, ինչ ուզում ե, անում ես։ Քանդեց իմ ծնողների տունն այդ կնիկը։

— Մարթա, թո՛ղ այդ կնոջը հանգիստ, խոսք ունիս ասելու՝ ինձ ասա։

— Քեզ ասելու վոչինչ չունիմ, կռիվս նրա հետ ե, նա յե քանդում մեր տունը։ Մարկոս աղայի սիրած վորդին գրպանում ծախսի փող չունենա, գնա իրան ծո՛վը գցե, բաս այս կվերցնի՞ Աստված...

— Այո՛, գրպանում փող չունի, բայց փուչ կյանք ե վարում,



—ասաց Սմբատը դառն հեգնությամբ,—ինձանից թաքուն մորից ստացած փողերով։

— Առաջինը՝ սուտ ե, յերկրորդը՝ շա՛տ լավ ե անում, թշնամիների աչքն ել ե հանում...

Սմբատը զայրացած և ապշած նայեց քրոջ յերեսին։ Այդ հանդուգն պարզախոսությունը վիրավորեց նրան մինչև հոգու խորքը, դիպչելով արյունակցական զգացմանը։ Նա ամաչեց։

— Լռի՛ր, լռի՛ր, Մարթա...

Բայց Մարթան արդեն կորցրել եր չափավորության զգացումը։

— Ո՛ւխ,—արտասանեց նա,—սուրբը դու յես, դու, վոտից մինչև գլուխ։ «Լռի՛ր». իսկի յել չեմ լռիլ։ Ի՞նչ կա, ումի՞ց պիտի քաշվեմ։ Չլինի՞ թե քեզանից։ Ինչպե՞ս չե, քեզ ել ենք լավ ճանաչում...

Սմբատը չկարողացավ իրան զսպել և բարձրաձայն գոռաց.

— Լռելո՞ւ չես, հիմար կին, թե՞ չե...

Այրի Վոսկեհատն ընկավ աղջկա ու վորդու մեջ և աղերսեց վերջ տալ կոպիտ վեճին։

Սմբատը դուրս գնաց, բայց նրան սպասում եր ուրիշ տեսարան։ Նրա կինը՝ Անտոնինա Իվանովնան սաստիկ հուզված եր։ Մի փոքր առաջ սկեսուրը նրան վիրավորել եր։ Վշտացած մայրը յուր սրտի թույնը թափում եր առաջին պատահողի գլխին։ Հանդիպելով հարսին բնակարանները բաժանող միջանցքում, նա անխոհեմաբար արտասանել եր մի քանի վիրավորական խոսքեր ռուսերեն լեզվով։ Խոսքեր, վորոնց իսկական իմաստը չգիտեր։ Հարսը հասկացել եր միայն կոպիտ հնչյունները, առանց հասկանալու նրանց շարժառիթը։ Իսկ շարժառիթը սովորական եր՝ այն որից, յերբ նա վոտ ե դրել Ալիմյանների տունը, ընտանիքի թշվառություններին վերջ չկա։

Անտոնինա Իվանովնան ջղային կին չեր, բայց այս անգամ այնքան վիրավորվել եր, վոր, տեսնելով Սմբատին, հեկեկաց։

— Այս կյանք չե, այլ դժոխք,—կրկնում եր նա։

— Վո՛չ, դժոխք չե, այլ քաոս,—արտասանեց Սմբատը։

Նյարդերն այլևս անզոր եյին դիմանալ ընտանեկան փոթորկին։ Գլուխը պտտում եր, արյունը պղտորվել եր։ Վախեցավ, մի գուցե ընդհարումն ավելի սուր կերպարանք ստանա և ակամա կրկնակի վշտացնի կնոջը, վորին այս դեպքում անմեղ վիրավորված եր համարում սկեսրի կողմից։

Նա շտապեց դուրս։ Նա փախչում եր և՛ կնոջից, և՛ մորից, և՛ յեղբայրներից ու քրոջից։

Նա կառք նստեց, դիմեց դեպի ծովեզր, գնաց Բաիլով թերակղզին։ Սառն և լուսնկա յերեկո յեր։ Ծովը հանդարտ եր, միայն

յեղերքի թեթև ալիքները, շփվելով ավազուտ ափերին, տարածում էին մեղմիկ շառաչյուն, որ հիշեցնում էր մետաքսի խշխշյուն։ Նոսր կաթնագույն մշուշով տոգորված մթնոլորտը խոնավ էր։ Պայծառ լուսնի շողերը, անցնելով այդ մշուշի միջով, ծովի մակերևույթը չէին լուսավորում, այլ սքողում էին մի նուրբ շղարշով, որի ներքո նավերի անթիվ կայմերը ներկայացնում էին խորհրդավոր անտառ։ Մերթ ընդ մերթ լսվում էին շոգեշարժ նավակների շվիկների սուլոցները, որ, սուր նետերի պես, օդը ճեղքելով, տարածվում էին հեռու ու հեռու։

Գործնական քաղաքը դեռ չէր ննջել։ Այնտեղ տիրում էր խուլ դղրդյուն։ Այդ դղրդյունի միջից լսվեց մի գիլ ձայն, որ, հետզհետե սաստկանալով, իջավ ցած ու ցած և կորավ, չքացավ մթնոլորտի մեջ։ Ով գիտե ո՞վ՝ յերգում էր մի պարսիկ, յուր սրտի ուրախությունը թե վիշտը բարձրաձայն հաղորդելով ամենակուլ տարածությանը։

Հասնելով թերակղզու ծայրը, կառապանը կառքը յետ դարձրեց, առանց հարցնելու Սմբատի կամքը։

Նա վերադարձավ տուն։ Ուղարկված գործակատարները դեռ վոչ մի լուր չէին բերել Արշակի մասին։ Վոսկեհատը լալիս էր և անիծում յուր վիճակը։

Վերջապես, վոստիկանությունը հայտնեց, թե Արշակը գտնվել է Թիֆլիզում և շուտով կհանձնվի ընտանիքին։ Փախստականին բռնել էին հենց այն միջոցին, յերբ մի ինչ-որ կնոջ հետ թև-թևի տված թատրոն էր մտնում։ Անծանոթ կինն անհետացել էր, իսկ Արշակին հետևյալ օրն իսկ ուղարկել էին Բագու։

Պատանուն տուն բերեցին կառքով յերկու վոստիկաններ։ Նրա աչքերի կոպերը յերկար անքնությունից ուռել էին, դեմքն ավելի թառամել։ Հիշեցնում էր անտուն, անտեր և հասարակական ստորին խավերում դեգերող մի շրջմոլիկի։

Վոսկեհատը հեկեկալով հարձակվեց նրա վրա, սեղմեց կրծքին։ Կշտամբեց, բայց միայն այն պատճառով, որ մորը չէր հայտնել, թե ուր է գնացել։ Անվերջ համբույրներով արտահայտվեց թուլասիրտ ծնողի անվերջ ներողամտությունը։ Խրախուսվելով այդ համբույրներից, Արշակն զգաց, թե դեռ կարող է ընդդիմադրել ավագ յեղբորը։ Ահա ինչու շատ էլ չվախեցավ, յերբ Սմբատը գրեթե ուժով քաշեց, տարավ նրան մի խուլ սենյակ։

Մեծ յեղբայրն ստիպում էր ամեն ինչ խոստովանել, փոքրը համառում էր։ Արշակը վոչ վոքի պարտավոր չէ հաշիվ տալու. նա ազատ է, ինքնագլուխ։



— Ձեռ քաշիր ինձանից, յես ստրուկդ չեմ,— գոչեց նա, փորձելով փախչել։

— Այստեղից դուրս չես գնա, մինչև որ չես խոստովանի մեղքդ։

Արշակի աչքերը պսպղացին, բռունցքները սեղմվեցին։

— Թո՛ղ ինձ, ասում եմ, թո՛ղ,— գոռաց նա, վոտները հատակին զարկելով։

— Յեթե չես խոստովանի, պոլիցիային կհայտնեմ գողությունդ, քեզ կբանտարկեն ու հետո կաքսորեն։

Սպառնալիքը ներգործեց. Արշակը վախեցավ և խոստովանեց, թե ինքն է կոտրել սեղանի դարանը և փողերը վերցրել։ Դա գողություն չէ, այլ «վերցնել». հարկավոր էր, վերցրեց, յուր հոր փողերն են, ուրիշինը չեն։

Մոտ յերեք հազար ռուբլուց նրա գրպանում մնում էին յերկու հարյուրանոց և մի քանի հատ մանր թղթադրամներ։ Կարևորը Սմբատի համար փողը չէր, այլ տխուր փաստը. այն, թե ով է յեղել գողության մասնավոր շարժառիթը և ում վրա յեն փողերը ծախսվել։ Այս կետի վերաբերմամբ Արշակը ցույց տվեց զարմանալի համառություն։

— Քեզ հետ կին է յեղել,— պնդում էր Սմբատը։

— Չի յեղել, չի յեղել, չի յեղել,— կրկնում էր Արշակը։

Սմբատը վճռեց դիմել ստի օգնության։ Նա ասաց, թե «այդ կինը» բռնված է և այժմ բանտում նստած։ Արշակը ցնցվեց. աչքերի ուռած կոպերը բարձրացան վերև, անշարժ մնացին, քթի պնչերը կապտեցին ու սկսեցին դողալ։ Կուրծքն ուժգին բարձրանում էր ու ցած իջնում։

— Ինչ ասացի՞ր,— գոչեց,— Զինաիդան բանտո՞ւմն է, իմ Զինա՞ն, այդ անկարելի յե...

— Այո՛ քո Զինան, այդ քնքույշ ու սիրուն կինը հիմա նստած է բանտում գողերի ու մարդասպանների հետ։

— Անաստվածնե՛ր, նա մեղավոր չէ, յես եմ մեղավոր, յես եմ փողերը գողացել ու ծախսել։ Նրա մոտ յեղած փողերն իրանն են, հորից է ստացել... Յես նրան փող չեմ տվել, այո՛, չեմ տվել. նա ինքը հարուստ է...

Արդեն այս խոսքերով Արշակն իրան մատնում էր։

— Բայց ո՞վ է այդ Զինաիդան, վո՞րտեղացի յե, ինչ պտուղ է։

— Պտուղ չէ, պարոն, հարսնացո՛ւս է, հասկացի՛ր, հարսնացուս։

Այժմ ցնցվողը Սմբատը յեղավ։ Ահա՛ ինչ, ուրեմն, այդ պատանին հարսնացու յել ունի։

— Ինչու չպիտի ունենամ, ումից եմ պակաս, կամ ով կարող է ինձ արգելել։ Ես պիտի Զինայի հետ Թիֆլիզում պսակվեի, հենց դրա համար եկի գնացել։ Ինչու չթողեցիք․․ Ես նրան ազնիվ խոսք եմ տվել, պիտի կատարեմ, ինչպես ջենտլմեն, թեկուզ բանտ գցեք, կախաղան բարձրացնեք, պիտի կատարեմ։ Սիրում եմ Զինային, հասկանու՞մ ես... Ո՛չ, յես ինձ կսպանեմ, յեթե մեզ բաժանեք...

«Ազնիվ խոսք» է տվել և այդ ազնիվ խոսքը տասնուվեց տարեկան պատանին կատարում է գողության միջոցով։

— Բայց գոնե ասա. ինչ շրջանի աղջիկ է այդ Զինան, ով է...

— Նրա ծնողները Մոսկվայումն են։ Շատ ազնիվ աղջիկ է։ Այստեղ առաջ մի լավ ընտանիքում գուվերնանտկա էր։ Ես ստիպեցի, որ պաշտոնը թողնի։ Այստեղ Զինայի պես աղջիկ չկա, ֆրանսերեն խոսում է, ինչպես փարիզուհի։ Ինձ էլ սովորեցնում է. ինչպես կարելի յե այնպիսի աղջկան բանտ գցել։ Ես ուզում եմ նրա հետ պսակվել և պիտի պսակվեմ։ Ծիծաղում ես, հա՞, բաս ինչու դու պսակվեցիր առանց ծնողներիդ կամքի և ճակատակ մեր կրոնի։ Իմ Զինան էլ քո կնոջ պես կրթված է։ Ի՞նչ էիր մտածում. պիտի գնայի ու մի քթի մազ հայ աղջկա հե՞տ պսակվեի, որ բերանից սխտորի հոտ փչեր...

Սմբատը չգիտեր ծիծաղեր, բարկանար, թե՞ գժատուն ուղարկեր յեղբորը։ Այնինչ, Արշակը քանի գնում խրոխտանում էր։ Սկսեց պահանջել, որ իսկույն, առանց մի րոպե հետաձգելու, հարսնացուին ազատեն բանտից։ Զինաիդան այնտեղ կխեղդվի, այնքան քնքույշ է, այնքան բարի սիրտ ունի։ Ա՜խ, Զի՛նա, Զի՛նա...

— Լի՛րբ,— գոչեց Սմբատը, այլևս չկարողանալով զայրույթը զսպել,— դու մեր ժամանակի իսկական ծնունդն ես, դու մեր կյանքի այժմյան քաոսի զավակն ես... լի՛րբ... Այդ Զինան բանտարկված չէ, բայց դու յերբեք նրա յերեսը չես տեսնի...

Արշակն ուրախացավ, որ յուր սիրեցյալն ազատ է, բայց ինչու նրա յերեսը չի տեսնի, ով կարգելե նրան։ Նա վոչ վոքից կախում չունի, ով ինչ կասի, վո՛չ վոքից։

— Յես ազատ քաղաքացի յեմ... Ե՛ս, այն հին դարերումն էր, յերբ մեծերն և ուժեղները պստիկներին և թույլերին ստրկացնում էին։ Մի՛ կարծիր, թե մենք Ասիայումն ենք ապրում, ուրեմն ամեն բան կարելի յե անել։ Այժմ անհատական ազատության ժամանակն է, տասնուիններորդ դարի վերջը, հասկանու՞մ ես...

— Դարի վե՛րջը,— կրկնեց Սմբատը դառն ծիծաղելով,— ափսոս միայն, որ այդ կլինի և՛ քո կյանքի վերջը, և դու յերբեք չես հասնի քսաներորդ դարին։ Նայիր հայելուն. միթե չե՞ս զգում, որ վոտքի վրա կենդանի փթում ես, ամբողջ մարմինդ վորդնել է... Միթե չգիտե՞ս, վողորմելի՛...



Իսկի՛ յել չեմ փթում։ Դու կարծում ես նա՛ է մարդ, վոր հաստ փոր ու կարմիր թշեր ունի։ Ներողություն, մեր դարը ներվային դար է, զգացում ունեցողներն ու մտածողները միշտ ինձ պես դեղնած ու հիվանդոտ են լինում։

Նա խոսում էր այնքան վոգևորված և այնքան լուրջ, վոր ակամա շարժեց յեղբոր ժպիտը։ Բայց շուտով Սմբատի արյունը դարձյալ գլխին խփեց, և նա գոչեց.

— Լռի՛ր, աներես, լռի՛ր, քանի վոր խելքս գլխիս է։

Ներս վազեց այրի Վոսկեհատը և, ընկնելով վորդիների մեջ, սկսեց պաշտպանել Արշակին։ Նա կարծում էր, թե Սմբատն ուզում է յեղբորը ծեծել։

— Յերեխաս դեռ չի հանգստացել,— ասաց նա, մի ձեռով գրկելով Արշակին,— ով գիտե, քաղցած էլ է, դու խրատելու ժամանա՞կ ես գտել։

— Ա՜խ մայրիկ,— գոչեց Սմբատը խորին հանդիմանությամբ,— այդ տղային փչացնողը հենց դու յես։ Այդքան յերես տալ չի լինի։ Չեմ հասկանում, այդ ինչ մայրական սեր է...

---

— Տվեք բուրժուական ընտանիքի ընդհանուր նկարագիրը՝ յելնելով այս հատվածից:

— Բնորոշեցեք Վոսկեհատին, Սմբատին, Միքայելին յեվ Արշակին, վորպես բուրժուական հասարակության ներկայացուցիչների:

— Փորձեցեք բացատրել, թե ի՞նչով է պայմանավորվում բուրժուական ընտանիքի բարոյական այն վիճակը, վոր նկարագրված է այս հատվածում:

— Տալի՞ս է արդյոք հեղինակը դրա համար բավականաչափ նյութ:

# ՆԱՐ-ԴՈՍ

## ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

(Կրճատված)

Թիֆլիս, 11 նոյեմբերի 1880.

Սիրելի Հռիփսիմե.

Նախորդ նամակումս խոստացել էի քեզ տեղեկություն տալ մեր ընտանիքից և ահա կատարում եմ խոստումս։

Նախ պիտի ասեմ, որ Գրիգորը հիվանդ է. սաստիկ հազում է։ Այս հինգերորդ օրն է, որ գիմնազիոն չի գնում. բժիշկները խորհուրդ են տալիս առժամանակ ձեռք վերցնելու պարապմունքներից։ Ես սաստիկ չերկյուղ եմ կրում, որ նրա հիվանդությունը թոքախտ լինի, մանավանդ որ նրա կազմվածքը շատ քնքույշ և նիհար է։ Դու գիտես, թե ինչպես սիրում եմ յեղբայրներիս, առավելապես նրան, որ, այս վերջին ժամանակներս մանավանդ, ինձ թե յեղբայր է՝ բառիս բուն նշանակությամբ, և թե ամենամոտ խորհրդակից։ Ես տանջվում եմ, յերբ տեսնում եմ նրան՝ ձեռքը կրծքի վրա դրած՝ այնպես սաստիկ հազալիս։ Նա շատ է պարապում, չափից դուրս պարապում է. կարծում եմ, որ նրա հիվանդությունը դրա հետևանքն է։ Բայց Գրիգորի հիվանդությունը դեռ ելի վոչինչ. մի ուրիշ հանգամանք կա, որ թե ինձ և թե մեր բոլոր ընտանիքին ավելի յե մտատանջում։— Դու գիտես, թե հայրս ինչպիսի զվարճասեր և կատակներ անող մարդ է, բայց վերջին ժամանակներս մեծ փոփոխություն է նկատվում նրա մեջ. օրինակ՝ յերեկոյանները նա վերադառնում է տուն միշտ մի տեսակ տխուր ու մտախոհ և գլխարկն աչքերի վրա վայր թողած, այն ինչ առաջ տուն գալիս՝ նա գլխարկը միշտ յետ գցած էր ունենում ճակատի վրա և միշտ մրմնջում էր մի վորևիցե ուրախ յերգ։ Խոսելիս էլ



ամենքի հետ բարկացած է խոսում, կարծես ամենքն էլ նրան մի վորևիցե անախորժություն են պատճառել, կարծես թե ամենքն էլ նրա առաջ մեղավոր են։ Մի անգամ հարցրի նրանից պատճառը։ Նա խոժոռած դեմքով նախ լուռ նայեց ուղղակի աչքերիս, հետո հանկարծ մի վայրկյան միայն ժպտաց, աչքերը վայր թողեց, ներքին շրթունքը կախեց և դեմքին տվեց մի այնպիսի ճիշտ և միևնույն ժամանակ ծիծաղելի արտահայտություն, վորպիսին ունենում է յերեխան այն ժամանակ, յերբ նրան բոլորովին իզուր մեղադրում են չարություն անելու համար։

— Ես ինչ մեղավոր եմ, օրիորդ,— արտասանեց նա բարակ, իբրև թե յերեխայական ձայնով.— Կիրակոսյանը չարություն է անում, դուք ինձ եք մեղադրում։ Ուզում եք Մարտիրոսյանին հարցրեք։

Զկարողացա ծիծաղս զսպել և գրկեցի նրան։

Նա կամաց ազատվեց գրկիցս, ժպտաց՝ նայելով աչքերիս և, քնքշորեն համբուրելով ճակատս, դուրս գնաց յուր առանձնասենյակը։

Մտախոհությամբ նայեցի նրա յետևից։ Ինչպես շուտ և հեշտությամբ կարողացավ ազատվել բացատրությունից։ Այնուհետև ամեն անգամ նկատում եմ, որ նա ամեն կերպ աշխատում է խույս տալ ինձնից, իսկ յերբ այդ չի հաջողվում, դարձյալ յուր կատակներն է սկսում։ Սակայն նա իզուր է աշխատում ծածկել ինձնից յուր վիշտը. մի վիշտ—և այն էլ ծանր վիշտ - կրծում է նրա սիրտը և մեծ մտատանջություն է պատճառում նրան,— այդ յես գիտեմ, այդ յես պարզ տեսնում եմ։ Իհարկե, նրա վիշտը Գրիգորի համար կարող չի լինել, վորովհետև Գրիգորն այնքան էլ հիվանդ չէ, վորի համար կարելի լիներ այդպես մտատանջվել և, բացի դրանից, յեթե նրա վիշտը հենց դրա համար էլ լիներ և մեծ յերկյուղ չպատճառելու համար միայն՝ այդ մեզնից ծածկելիս լիներ,— յես այդ իսկույն կարող էի հասկանալ, տեսնել, բայց յես գիտեմ (և սիրտս էլ այդ նախազգուշակում է), որ նրա վիշտը բոլորովին ուրիշ բանի համար է։ Իսկ թե ինչ բանի համար,- այդտեղ յես արդեն վոչինչ չեմ կարողանում հասկանալ և վոչ յենթադրել։ Մայրս սաստիկ անհանգիստ է նրա համար. ասում է, որ գիշերները նա հանգստություն չունի, իսկ յերբեմն՝ քնած ժամանակ, ասում է, կարծես սաստիկ վախեցած, հանկարծ աղաղակում է և վեր է թռչում, յերբեմն էլ յերազում, ասում է, ուղղակի լաց է լինում...

Մնացել եմ սաստիկ տարակուսած։ Ի՞նչ է նշանակում այս...

Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

Թիֆլիս, 14 նոյեմբերի 1880.

Սիրելի Հռիփսիմե.

Այս անգամ դարձյալ նորա մասին պետք է գրեմ, որովհետև բոլոր մտածությանս առարկան նրա օտարոտի դրությունն է, որից մինչև այժմ էլ գլուխ չեմ կարողանում դուրս բերել:

Անցյալ կիրակի օրն եկավ մեր տուն Թոմաս Գասպարիչը: Դու ճանաչում ես նրան — այն անատամ, ժամանակից շատ վաղ ծերացած, անտերությունից սրա-նրա դռանն ապրող, յուր ասելով «ոտստավնոյ տիտուլյարնիյ սովետնիկ»-ը, որ ոչ մի օր եկեղեցուց ետ չի ընկնում:

Ես նստած էի սենյակումս՝ բաց լուսամուտի առաջ և կարդում էի Տուրգենևը: Եղբայրներս տանը չէին, մայրս խոհանոցումն էր, իսկ հայրս դուրսը — պատշգամբում: Նա նստած է լուսամուտիցս հեռու՝ մեջքը դեպի ինձ արած և մտախոհ նայում էր քաղաքին: Երևի չգիտեր, թե ես տանն եմ և նայում եմ իրեն, ապա թե ոչ աչքերիս առաջ նա երբեք անձնատուր չէր լինի յուր տխուր մտածմունքներին: Բայց նա այն աստիճան անձնատուր էր եղել յուր մտածմունքներին, որ բոլորովին չնկատեց, թե ինչպես Թոմաս Գասպարիչը յուր դանդաղ քայլերով մոտեցավ նրան:

— Շատ խորն ես մտածում, աղա Գևորգ, — կարճ ժամանակ նրա մոտ լուռ կանգնելուց հետո, ասաց Թոմաս Գասպարիչը, յուր բութ հայացքով կողքից շարունակ նայելով նրան:

Հայրս հանկարծ սթափվեց և նայեց նրան: Առաջին նվագ, կարծես, չկարողացավ ճանաչել նրան, որովհետև նախ մի րոպե, ըստ երևույթին, զարմացած և լուռ նայեց նրա դեմքին, հետո հանկարծ բացականչեց.

— Ա, Թոմաս Գասպարիչ, այդ դո՞ւ ես... Ի՞նչ նոր լուր ունես, ասա տեսնենք:

Ե՛հ, աղա Գևորգ, ես ինչ նոր լուր պետք է գիտենամ. բացի եկեղեցուց, ո՞ւր եմ գնում, որ ինչ նոր լուր լսեմ. Լրագիրը դո՛ւք եք ստանում, նոր լուրեր դու կլինես կարդացած:

— Այս քանի՜ ժամանակ է, ինչ ձեռքս լրագիր չեմ առել. Ապա գնա տես, սեղանի վրա կլինի լրագիրը բե՛ր կարդա մոտս... Սպասի՛ր, լավ, դու նեղություն մի կրիր, ծառան կբերե:

Նա բարձրաձայն դարձյալ կանչեց ծառային և հրամայեց, որ լրագիրը բերե:

Ես լուսամուտից տվեցի ծառային նախորդ օրվա լրագրի համարը: Ծառան տարավ տվեց Թոմաս Գասպարիչին:

Թոմաս Գասպարիչը նախ հանեց յուր ակնոցը, որ պահում է, ինչպես գիտես, առանձին պատյանի մեջ, դրեց աչքերին և սկսեց կարդալ: Կարդաց մի քանի լուր, թե ինչպես մի կին մի անգամից երեք երեխա է ծնել, երեքն էլ կենդանի, թե ինչպես այսինչ տեղն ավազակները ճանապարհին կողոպտել և սպանել են ճանապարհորդներին, թե ինչպես այս ինչ հայտնի վաճառականը սնանկացել է և նրա բոլոր կայքը աճուրդով վաճառել են...

Հայրս սկզբում, ըստ երևույթին, հետաքրքրությամբ էր լսում Թոմաս Գասպարիչին, բայց վերջինս այնքան դանդաղ և անվարժ էր կարդում, որ նա շատ շուտով ձանձրացավ և դեմքը դարձյալ շրջեց դեպի քաղաքը: Վերջին լուրը լսելով, նա հանկարծ մի այնպիսի ուժով դուրս խլեց լրագիրը Թոմաս Գասպարիչի ձեռքից, գոռալով «ինչ վատ ես կարդում», — այնպես ճզեց և, ձեռքով ճմլելով, շպրտեց պատշգամբից ներքև, որ կարծեցի, թե խելագարվեց: Ինքս էլ չիմացա, թե ինչպես այդ ժամանակ գլուխս հանեցի լուսամուտից դեպի դուրս և նայեցի նրա կողմը: Նա հանկարծ տեսավ ինձ, և ես մինչև հիմա էլ զարմացած եմ մնացել, թե ինչպես այնպես արագությամբ կարողացավ փոխել յուր դեմքի արտահայտությունը:

Դիտմամբ այս անցքն այսպես մանրամասն նկարագրեցի նամակիս մեջ, սիրելի Հռիփսիմե, որպեսզի ցույց տամ, թե որքան մեծ է այն գաղտնի վիշտը, որ, այնքան մտատանջություն պատճառելով, այսպիսի դրության մեջ է ձգել նրան:

Այնպես վախենում եմ, որ խելագարվի... Սարսափը, անասելի վիշտը ու հուսահատությունն իսկույն պաշարում են ինձ, երբ մտածում եմ, որ կարող է այդպիսի դժբախտություն պատահել... Բայց ինչ անեմ, ինչ... Ինչո՞վ կարելի է այս դժբախտության առաջն առնել... Սրտիս վատ նախազգացումներից ես ավելի եմ սարսափում...

Ընդունիր ջերմ համբույրներս:

Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

Թիֆլիս, 23 նոյեմբերի 1880.

Անգին քույրիկ.

Գուշակությունս ճիշտ դուրս եկավ — դժբախտությունը — և այն էլ ինչպիսի՜ դժբախտություն — առաջին անգամ բաց արավ մեր տան դուռը և ներս մտավ՝ այնտեղից այլևս երբեք չհեռանալու մտքով: — Մենք համարյա միանգամից զրկվեցինք մեր բոլոր կարողություններից, մեր բոլոր հարստություններից. հայրս աջ ձեռքով անդամալույծ եղավ և խելագարվեց: — Ահա թե ինչ եղավ

Նրա բոլոր մտատանջությունների, նրա գաղտնի վշտի, նրա ստարոտի դրության հետևանքը։ Իսկ պատճառը հորս պարտքերն են յեղել, վորոնց գոյության մասին մենք նույնքան տեղեկություն ունեյինք, վորքան տեղեկություն ունեյինք, թե մեր գլխին մի այսպիսի սարսափելի փորձանք պետք է գար... Բայց մինչև հիմա յել զարմանքից չեմ կարողանում ուշքի գալ, թե հայրս այնքան պարտք յե՞րբ է արել և ի՞նչ բանի համար... Մայրս ասում է, վոր նա սաստիկ խաղացող եր. այդ յես ինքս ել գիտեյի, բայց մի՞թե խաղալով այդքան պարտքեր են անում, այդքան տանուլ են տալիս... Վո՛չ, վո՛չ, յես այդ բանին վոչ մի կերպ չեմ ուզում հավատալ և յերբեք ել չեմ հավատա... Գուցե, այո, ուրիշ մարդիկ այդպես անեն, բայց իմ հայրս... Դու խո քիչ թե շատ ճանաչո՛ւմ ես հորս, դու խո գիտես, թե վորքան ազնիվ, պատվասեր և հեռատես մարդ եր նա. մի՞թե այդպիսի գեղեցիկ հատկություններ ունենալով, նա կարող եր չհասկանալ, թե ապագայում ինչ սարսափելի հետևանքներ կարող եր ունենալ խաղալու սերը։

Յես ճանաչում եմ հորս, ինչպես ինքս ինձ. նրա բնավորության բոլոր կազմը, նրա հոգին բաց եր իմ առաջ, վորպես մի պատկեր նույր, պարզ ու վորոշ գծերով, և յես համարձակ, առանց կույր կողմնապահության պետք է ասեմ, վոր նրա պես ընտանիքը պաշտող և դրա պատվի համար գլուխը յետ դրած մարդ ճրագով պիտի վորոնել։ Ամենավաղ մանկությունիցս, գիտակցությանս բացվելու որից սկսած մինչև այժմ դեռ չեմ հիշում գեթ մի որ, յերբ նա, թեկուզ ամենաչնչին բանի համար, մորս հետ կռված լինի կամ մեզ—յուր զավակների վրա ձեռք լիներ բարձրացրած. Նա մեզ պահել է միշտ սիրո և խաղաղության մեջ ազատ ընտանեկան ամեն տեսակ տարաձայնություններից և յերկպառակություններից. Նա մեր ամենաչնչին կապրիզներին անգամ անտրտունջ բավականություն է տվել, և ընտանիքի յերջանկության ու պատվի նախաձախնդիր նրա սրտի մեջ մենք միշտ հովանի կայան ենք գտել։ Յեվ այդ բոլորից հետո, ասա՛, սիրելի՛ս, մի՞թե յես իրավունք ունեմ համարձակվել թեկուզ յենթադրելու, վոր այդ միևնույն հայրս, վոր միշտ անփոփոխ եր մնացել իմ աչքում (և յես կերդվեմ, վոր չեմ խաբվել), յուր ընտանիքի յերջանկությունը, պատիվը, ապագան, ամեն ինչ, վորոնց համար նա կյանքը յետ ուներ դրած, այդպես թեթևամտորեն տանուլ տար կանաչ սեղանի վրա... Ախ, վորքան ծանր է, վորքան ծանր է, սիրելի քույրիկ... Այսքան ժամանակ վոչ մի ծանր վիշտ տեսած չլինելով մեր ընտանիքի մեջ, այժմ այս սոսկալի դժբախտության առաջ զգում եմ, վոր հոգիս շատ



հեշտությամբ է ընկճվում... Յեվ կարելի՞ չե միթե անվեհերությամբ դեմ գնալ ճակատագրի մի այդպիսի հարվածի։ Ո՞վ է ուշադրություն դարձնում, թե զրկվեցինք մեր բոլոր կարողությունից. դրա մասին չեմ ել մտածում կամ գեթ ափսոսում, այլ հայրս, հայրս...— յես տանջվում եմ հորս համար։ Յես և մեր բոլոր ընտանիքը կորցրինք մի այնպիսի հայր, վորպիսին կարող չե տալ աշխարհն յուր բոլոր գանձերով։ Յեվ դեռ փառք աստծո այո, փառք աստծո,— վոր կաթվածն այնքան ել սաստիկ չեր, ապա թե վոչ, նա կարող եր բոլորովին անդամալույծ դառնալ կամ իսկույն և յեթ մեռնել։ Բայց ամենից ավելի ինձ տանջում, հուսահատեցնում է այն հանգամանքը, վոր նրա խելքն այլևս գլխին չե։ Արդյոք հասկանո՞ւմ ես, յերևակայո՞ւմ ես, սիրելի քույրիկ, թե ինչ է նշանակում խելագարված լինել։—Այդ նշանակում է լինել մեծ մարդ և միևնույն ժամանակ—յերեխա. այդ նշանակում է անել այն, ինչ վոր շուրջդ վոչ վոք չի անում, և չանել այն, ինչ վոր շուրջդ ամենքն անում են. այդ նշանակում է հիմարների ծաղրածության և խելոքների խղճահարության թշվառագույն առարկա լինել. այդ նշանակում է բնությունից անարգված լինել, մարդկային իրավունքներից զրկված լինել, ապրողների ցանկից դեռ կենդանության ժամանակ ջնջված լինել. այդ նշանակում է հազարավոր ապրողների մեջ ապրել իբրև առանձին մարդ, ինչպես մի ամայի անապատի մեջ, վորտեղ շրջապատը դեպի քեզ լուռ է և խուլ և վորտեղ դու ինքդ շրջապատի համար լուռ ես և խուլ. այդ նշանակում է տեսնել և չճանաչել, լսել և չիմանալ, ապրել և չզգալ. այդ նշանակում է կրքեր չունենալ—կյանքի խորհրդի այդ բանալիները։ Սոսկալի չե, սոսկալի...

Ների՛ր, սիրելի Հռիփսիմե, նամակս յերկար չեմ կարող շարունակել.—ամբողջ հոգեկան աշխարհս փշրված է։

Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

Թիֆլիս, 7 դեկտեմբերի 1880։

Իմ քաղցրիկ ընկերուհի.

Շնորհակալ եմ ցավակցությանդ համար։

Հորս դրությունը նույնն է, ինչ վոր առաջ։ Նա բոլորովին խելագարված է, բայց նրա խելագարությունը շատ հանդարտ է, վորի պատճառը, կարծում եմ, վոր անդամալուծությունը պիտի լինի, վորովհետև դա չի թողնում, վոր ազատ շարժումներ անի կամ ազատ խոսի։ Սակայն վերջին որերս փայտի կամ ուրիշի ոգնությամբ կարողանում է շատ կամաց ման գալ տանը։ Նա վոչ վոքի չի կարո-

ղանում ճանաչել. պատահում է յերբեմն, վոր մայրս կամ յեղբայրներս մտնում են նրա մոտ, սկսում են խոսել նրա հետ, հարցնում են՝ արդյոք ճանաչո՞ւմ է իրենց։ Նա անթարթ, կարծես ամենայն մտադրությամբ նայում է նրանց դեմքին, առողջ ձեռքում միշտ խաղացնելով յուր թաշկինակը, դեմքը շրջում է նրանցից և բոլորովին վոչինչ չի պատասխանում։ Ինձ էլ չի ճանաչում, բայց ինձ հետ սիրով և քնքշությամբ է խոսում։ Յերբ մտնում եմ նրա մոտ, ինչպես նկատում եմ, շատ ուրախանում է, բայց յեթե ամբողջ որերով ամենևին չերևամ էլ նրա աչքին, յերբեք չի հիշի։ Նրա խոսակցությունը շատ անմիտ է և անկապ, հարցերին պատասխանում է, բայց վոչ այն, ինչ վոր ուղղակի այդ հարցին է վերաբերում, այլ բոլորովին ուրիշ բան։ Նա ինձ միշտ սիրուն աղջիկ է կանչում. անունս մոռացել է և չնայելով, վոր ամեն անգամ հիշեցնում եմ անունս, բայց իսկույն և յեթ մոռանում է։ Մի անգամ միայն—այն էլ հազիվ յերկու րոպե—ճանաչեց ինձ և լաց յեղավ։ Սակայն վերջին որերումս, ինչպես նկատում եմ, նրա ուշքը քիչ-քիչ սկսում է վրան գալ. յուր անցյալից մի-մի բան հիշում է և նույն րոպեյին էլ մոռանում, իսկ առաջ բոլորովին վոչինչ չեր հիշում։ Այդ ինձ հույս է տալիս, վոր վերջ ի վերջո գուցե առողջանա։ Բժիշկն էլ հույս է տալիս, բայց ասում է, վոր կառողջանա վո՛չ բոլորովին։ Թող, թող, ինչպես կուզե՝ առողջանա, միայն թե ներկա դրության մեջ մինչև վերջը չտեսնեմ նրան։ Դու չես կարող յերևակայել, անգին քույրիկ, թե ինչ սոսկալի, ինչ անտանելի տանջանք եմ կրում յես, յերբ ամեն անգամ մտնելով նրա մոտ, հանդիպում եմ նրա միշտ անմտորեն ժպտող հայացքին և լսում եմ նրա նույնքան անմիտ խոսակցությունը։

Անցյալ որն եր։ Ինչպես միշտ, նույնպես և այդ որն առավոտյան մտա նրա սենյակը։ Մորս և ծառայի ոգնությամբ վաղուց արդեն հագնվել և լվացվել եր (առավոտները նա միշտ վաղ է վեր կենում. առհասարակ շատ քիչ է քնում)։ Յերբ ներս մտա, նա մենակ նստած եր մահճակալի վրա և թաշկինակն՝ յուր սովորության համեմատ՝ խաղացնում եր ձեռքին։ Ինձ տեսնելուն պես դեմքը սաստիկ խոժոռեց (այդ առաջին անգամն եր, վոր ինձ այդպես եր հանդիպում) և հետո, յերևի ճանաչելով, ժպտաց և, բարևելու փոխարեն, թաշկինակը քնքշորեն իմ կողմը գցեց։ Իսկույն բռնեցի թաշկինակը, նախ քան գետին կընկներ, և նետեցի նրա մոտ՝ մահճակալի վրա։

— Հայրիկ, ինչպե՞ս ես այսոր,—հարցրի թաշկինակը տալով նրան

— Լավ եմ,—պատասխանեց յուր միշտական, բայց այս անգամ, կարծես, ամոթխած ժպիտով և թաշկինակը նորից սկսեց խաղացնել ձեռքին։



Հարցիս տված ուղղակի պատասխանն ինձ շատ ուրախացրեց։

— Բայց ինչդ է ցավում, հայրիկ,—շտապով հարցրի, այս անգամ կամաց գրկելով նրա մեջքը։

Նայեց դեմքիս։ Այլևս չեր ժպտում։

— Ի՞նչ,—հարցրեց, կարծես, խորին մտադրությամբ։

— Ասում եմ՝ ինչդ է ցավում, վորտե՞ղդ է ցավում։

Խորը հառաչեց և հայացքը դարձրեց դեպի լուսամուտը։

— Շատ վատ, շատ վատ,—արտասանեց կամաց, բայց այնքան սրտառուչ ձայնով, վոր աչքերս լցվեցին արտասունքով։ Յես ավելի ամուր գրկեցի նրա մեջքը և յերկար ժամանակ վոչինչ չկարողացա արտասանել։ Նա թաշկինակն այլևս չեր խաղացնում ձեռքին և՝ կարծես տխուր մտածմունքների մեջ ընկղմված՝ շարունակ նայում եր դեպի լուսամուտը։

— Հայրիկ, մի՞թե ինձ չես ճանաչում,—վերջապես հարցրի։

Նորից նայեց ինձ, կարծես, աշխատելով մտաբերելու, թե ո՞վ եմ։

— Վո՛չ,—արտասանեց միայն։

— Յես Աննան եմ, հայրիկ, յես քո աղջիկն եմ,—բացականչեցի։

— Յես աղջիկ չունեմ,—անտարբերությամբ արտասանեց և դեմքը նորից դեպի լուսամուտը դարձրեց։

— Ունե՛ս, ունե՛ս, հայրիկ, ինչպես չե, ունե՛ս աղջիկ,—այդ յես եմ, յե՛ս, քո Աննան եմ, մի՞թե ինձ չես հիշում։

Նա նույն անտարբերությամբ գլուխը շարժեց միայն և վոչինչ չպատասխանեց։ Սաստիկ հուսահատությունից, վշտից և անզորությունից պատրաստ եյի աղիողորմ լաց լինելու, բայց կարողացա զսպել ինձ։

Յերկար չկարողացա մնալ նրա մոտ. արտասուքն արդեն խեղդում եր ինձ. դուրս յեկա և ինչպիսի դառնությամբ վողբացի մեր յերջանիկ, անդառնալի անցյալը…

Ընդունիր վողջույնս, իմ անգին քույրիկ։

Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

Թիֆլիս, 14 դեկտեմբերի 1880.

Սիրելի Հռիփսիմե,

Հորս ցավալի դրությունն այն աստիճան զբաղեցնում եր ինձ, վոր մեր ընտանիքի մյուս անդամների մասին վերջին անգամներս, կարծեմ, վոչինչ չեյի գրում քեզ։ Բայց նախ պետք է ասեմ, վոր հորս դրության մեջ վոչ մի նկատելի փոփոխություն չի կատարվել դեպի լավը։ Նա դարձյալ վոչ վոքի չի ճանաչում։ Մայրս, վոր սկզբ-

ներում սաստիկ վշտանում էր և համարյա թե միշտ լաց էր լինում. այժմ, կարծես, հաշտվել է յուր դրության հետ, և յես այլևս վոչ մի տրտունջ չեմ լսում նրա բերանից. նա, կարծես, տեղն ու տեղը սառել է։ Ամեն որ վաղ առավոտյան մտնում է հորս մոտ, հագցնում է, լվացվել է տալիս նրան, թեյ խմեցնում, ձեռքից բռնած՝ սենյակում մի քանի անգամ անց ու դարձ է անել տալիս, կես որին յուր ձեռքով ճաշ է ուտեցնում, յերեկոյան դարձյալ թեյ, գիշերը հանում և պառկեցնում է քնեցնելու,—և այդ բոլորը կատարում է լուռ, յերբեմն միայն խոր հառաչում է։ Շատ անգամ գիշերները լուսացնում է հիվանդի մոտ՝ աթոռի վրա, չնայելով թախանձանքիս, վոր այդ պաշտոնի կատարումը ինձ թողնի։ Ամեն անգամ, քանի նայում եմ նրա գունատ, նիհարած դեմքին և անկենդան աչքերին, սաստիկ վշտից և կարեկցությունից սիրտս ճմլվում է։ Իսկույն յերևակայում եմ, թե վորքան մեծ պիտի լինի այն լուռ վիշտը, վոր բույն է դրել նրա սրտում։ Սակայն միայն հորս դրությունը չէ, վոր նրան այդպես տանջում է. Գրիգորի դրությունն էլ պակաս մտատանջությունների առարկա չէ նրա համար։—Նամակներից մեկի մեջ, կարծեմ, գրել եյի քեզ, վոր Գրիգորը սաստիկ հազում է և բժիշկների խորհրդով առժամանակ դադարել է գիմնազիոն հաճախելուց։ Իսկ այժմ պիտի ասեմ, վոր նրա դրությունն ավելի վատացել է։ Սկզբներում նրա հազը թեև բոլորովին կտրվեց, բայց յերկու շաբաթից հետո նորից լույս ընկավ և մինչև այժմ էլ շարունակվում է, որ որի վրա սաստկանալով, այնպես վոր վոչ գիշերը քուն ունի, վոչ ցերեկը—հանգիստ։ Ուսումը շարունակելու մասին առայժմ կարելի չի մտածել անգամ։ Հորս դրության հետ յես համարյա հաշտվել եմ, բայց այժմ սկսել է տանջել ինձ Գրիգորի դրությունը, և այդ տանջանքը պակաս տանջանք չէ։ Յեթե գոնե մի անգամ տեսնես, թե վորքան նա փոխվել է և լսես նրա հազը, կսարսափես։

Յերեկ առավոտյան ժամը տասն և մեկն էր, բայց նա դեռ չէր վեր կացել անկողնից։ Չնայելով, վոր ձմեռային ցուրտն ու խոնավությունը ստիպում են նրան տնից դուրս չգնալ, բայց առավոտները նա միշտ յուր ժամանակին էր վեր կենում և որվա միջոցում համարյա յերբեք չէր պառկում անկողնում, վորքան էլ իրեն թույլ զգում լիներ. բայց ինչո՞ւ այդ որը մինչև այդ ժամանակ դեռ չէր վեր կացել անկողնից։ Փոքր ինչ վախեցած՝ ներս մտա նրա սենյակը։ Նա պառկած էր հանգիստ՝ յերեսը պատի կողմն արած։ Կարծեցի, թե քնած է, այդ պատճառով, վորպեսզի չանհանգստացնեմ նրան, զգուշությամբ մոտեցա նրա մահճակալին։ Բայց նա քնած չէր. նրա աչքերը բաց եյին և, ինչպես յերևում էր, անձնատուր



էր յեղել խոր մտածության։ Կամաց խոնարհվեցի նրա դեմքի վրա, նա տեսավ ինձ, բայց մնաց նույն դրության մեջ։

— Գրիգո՛ր, ինչպես ես,—հարցրի կամաց։

— Լավ եմ, քույրիկ,—պատասխանեց շատ հանդարտ ձայնով։

— Բայց ինչո՞ւ մինչև հիմա պառկած ես։

— Վեր կացա, բայց վորովհետև այսոր շատ ցուրտ է, նորից պառկեցի։

Յես մնացի խոնհարված նրա դեմքի վրա։ Նա այնքան հանգիստ էր, վոր կարծես չէր շնչում։

— Գրիգո՛ր, ի՞նչ ես մտածում,—հարցրի յերկար լռությունից հետո։

Նա յուր հանգիստ հայացքն ինձ դարձրեց։

— Յե՞ս,—հարցրեց։

— Այո։

— Յես վոչինչ չեմ մտածում։

Նա շուռ յեկավ մեջքի վրա և ուղղակի նայեց աչքերիս։

— Ինչո՞ւ աչքերդ միշտ այդպես կարմիր են,—հարցրեց։

— Աչքերս կարմիր չեն,—փոքր ինչ շփոթված, բայց վորքան կարելի էր հանգիստ ձայնով արտասանեցի յես և վերմակով ծածկեցի նրա բաց կուրծքը։

Նրա դեմքը դժգոհության արտահայտություն ստացավ։

— Ե՜-եհ, Աննա, դու քեզ ամենևին չես խղճում,—արտասանեց տխուր ու մեղմ հանդիմանությամբ, և նույն րոպեյին սաստիկ, չոր հազը կարծես պատառեց նրա թոքը։ Իսկույն շուռ յեկավ պատի կողմը, գլուխը քիչ բարձրացրեց բարձի վրայից, հազաց, հազաց և անկողնի տակից հանելով յուր թաշկինակը, թքեց վրան։ Սարսափեցի, թաշկինակի վրա արյուն տեսա, վոր առաջ յերբեք չեյի տեսել։

— Գրիգոր, այդ ինչ է,—բացականչեցի ակամա։

— Ի՞նչ է,—հարցրեց հազիվ հանգստացած, բայց սաստիկ թուլացած ընկնելով բարձի վրա։

— Արյո՞ւն ես թքում։

— Ե՜հ, հիմար բան է,—արտասանեց, իբրև թե, արհամարհանքով,—արժե՞ ուշադրություն դարձնել։

— Վաղո՞ւց է, ինչ արյուն ես թքում։

— Վաղուց է։

Յես անհուն սիրով և միևնույն ժամանակ սարսափած մի ձեռքով կամաց գրկեցի նրան. զգում եյի, թե ինչպես սիրտս մարում է։ Վոչինչ չկարողացա արտասանել։ Նա կարծես հասկացավ, թե այդ րոպեյին ինչ անցավ մտքովս և ինչ էր կատարվում իմ մեջ։ Նա շատ տխուր ու մեղմորեն ժպտաց, և յես կյանքումս չեմ մոռանա

այն հայացքը, որ նա այդ ժպտի հետ ձգեց իմ դեմքին. բայց նա ոչինչ չպատասխանեց, միայն ձեռքը հանեց վերմակի տակից և կամաց, քնքշորեն ուղղեց ճակատիս վրա թափված մազերը:

— Ինչո՞ւ ես ինձ այդպես նայում, քույրիկ,— հարցրեց նա, լռությունը խզելով:

Հանկարծ զգացի, որ արտասուքը խեղդում է ինձ: Արագությամբ համբուրեցի նրա ճակատը, թողի և ուղղվեցի դեպի դուռը:

— Աննա,— կանչեց յետևիցս: Կանգ առա, առանց նրա կողմը նայելու:

— Մայրիկին ոչինչ չասես:

Իսկույն հասկացա, որ խոսքն արյան մասին էր:

— Չեմ ասիլ,— արտասանեցի որքան կարող էի հանգիստ ձայնով, որ, սակայն, չաջողվեց ինձ, և շտապով դուրս գնացի: Յեվ այդ ժամանակ թե որքան և ինչպես լաց յեղա, սիրելի քույրիկ,— դրա մասին լռում եմ: Մի անգամից սրտիս մեջ փշրվեց բոլոր, բոլոր հույսս...

Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

Թիֆլիս, 21 դեկտեմբերի, 1880

Իմ սիրելի Հռիփսիմե,

Չեմ հիշում վո՞ր բանաստեղծն է ասում՝ — «Թշվառությունը մենակ չի գալիս», և այդ ճիշտ է: Մեր անկումը որքան թշվառություններ բերեց իր յետևից և, ո՞վ գիտե, դեռ ելի որքան է բերելու: — Հայրս անդամալույծ յեղավ և խելագարվեց, Գրիգորի դրությունն որ-որի վրա սկսեց վատթարանալ, մայրս ոտքի վրա հալվում է, իսկ այժմ հերթը հասել է մյուս յերկու յեղբայրներիս.— մեծին, Արշակին, ահա յերրորդ շաբաթն է գնում, ինչ հեռացրել են պաշտոնից իր արբեցողության համար, իսկ փոքրին—Գարեգինին վռնդել են ուսումնարանից իր ծուլության համար: Դրանք ել պակաս թշվառություններ չեն մեր ներկա դրության մեջ, մանավանդ առաջինը` մեծ յեղբորս անպաշտոն մնալը, որովհետև մեր ամբողջ ընտանիքի միակ հույսը նա յեր: Մեր նախկին հարստությունից դեռ ելի մի բան մնացել է մեզ և մենք, փառք աստծո, դեռ բոլորովին նեղը չենք ընկել, բայց յերբ այդ «մի բանն» ել կհատնի և չքավորությունը (ո՞վ գիտե, գուցե ծայրահեղ աղքատությունը) ներս կմտնի մեր տուն, այն ժամանակ ինչ պիտի անենք, ինչո՞վ պիտի ապրենք, ինչո՞վ պիտի կերակրվենք... Այժմից արդեն պաղում է, դառն, անտանելի դառն մտածմունքներ ճնշում են հոգիս. յերևակայում եմ, թե մոտիկ ժամանակներում ինչ սոսկալի



վիճակ է սպասում մեզ:—Աղքատություն... Անգին քույրիկ, արդյոք հասկանո՞ւմ ես, թե ինչ է նշանակում այդ բանը մեզ համար:— Աղքատությունը միշտ յերևակայում եմ որպես հազար գլխանի մի հրեշ, որ մեզ յուր սառ գրկի մեջ առած՝ յուր սարսափելի ժանիքներով դժոխային անհագ բավականությամբ կամաց-կամաց պիտի քաղե մեր հոգին: Ո՜հ, հազար անգամ ավելի լավ է, որ մարդ առաջուց մեռնի, քան մի որ անգամ զգա իրեն այդ սոսկալի հրեշի գրկի մեջ, ապա թե ոչ մարդս ամբողջապես յերկաթից պիտի լինի կազմված, որպեսզի կարողանա տանել դրա բարոյական և ֆիզիքական բոլոր հալածանքները: Գուցե խոսքերս քեզ չափազանցություն թվան, սիրելի քույրիկ, գուցե աղքատությունն իսկապես այնքան ել սարսափելի չէ, ինչպես յես եմ նկարագրում, բայց յես ուրիշ կերպ այդ չեմ կարող յերևակայել: Ինկատի ունեցիր, թե մինչև այժմ ինչպես եմ մեծացել, կենսական ինչպիսի պայմաններում և այսուհետև ինձ ինչ է սպասում, ինչպիսի կյանք: Մանկական հասակից յես շրջապատված եմ յեղել դայակներով և աղախիններով. յես յերբեք չեմ իմացել, թե ինչ է նշանակում չոր կամ սև հաց: կերակուրս միշտ կաթ է յեղել և ամենահամեղ խորտիկներ: Յերբ հագուստիս վրա մի աննշան յուղ է կաթել կամ ծայրը փոքր ինչ պատռվել, այլևս չեմ հագել այն: Յերբ՝ մագազինների առաջով անցնելիս՝ նրանց լուսամուտների վրա դարսոտած իրեղեններից մի որևիցե բան հավանել եմ, նույն օրն և յեթ դա իմս է յեղել: Յերբ մի որևիցե ինձ պես հարուստ օրիորդի հագին տեսել եմ մի որևիցե նորաձև շրջազգեստ, գլխարկ կամ մի ուրիշ բան և հավանել, միքանի օրից հետո յես ել ունեցել եմ այնպիսին: Մի խոսքով՝ յես միշտ ապրել եմ լիության և փափկակեցության մեջ: Բայց հանկարծ այդ բոլորից հետո – ծայրահեղ թշվառություն, ծայրահեղ աղքատություն, սև, չոր հաց,— և այն ո՜չ միշտ,— մութ սենյակ, անվերջ աշխատանք, մերկություն, ցուրտ, հիվանդություն, անվերջ զրկանքներ, վիշտ, տառապանք, լաց, ողբ, հալածանք, արհամարհանք, սառ կարեկցություն, վիրավորանք, ամոթ, անպատվություն, անզոր բարկություն, անպաշտպանություն, տանջանք, անվերջ տանջանք... Ո՜հ, բավական է. յերևակայելով անգամ կարելի չէ խելագարվել...

Ա. Ս.

Թիֆլիս, 10 փետրվարի, 1881.

Սիրելի Հռիփսիմե,

Մեր վիճակն որ-որի վրա վատթարանում է: Մի յերկու խոսքով նկարագրեմ քեզ մեր կենցաղավարությունը, մեր ապրուստը, և դու ամեն բան կհասկանաս: Յեթե այժմ մտնես մեր տուն, շրջես

մեր սենյակներն և քեզ ասեն թե՝ այստեղ Սարոյաններն են ապրում, վոչ աչքերիդ կուզես հավատալ, վոչ ականջներիդ․ այն բոլորը, ինչ վոր կտեսնես, շատ ծիծաղելի — չեմ ասում դառն — կատակ կթվա քեզ։ — Տան մռայլ շինությունն և անհարմարությունները մի կողմը թողնելով (այդ մասին, կարծեմ, գրել եմ քեզ), մեր սենյակների նախկին շռայլ, փառավոր զարդարանքների և կահավորման հետքն անգամ չես կարող գտնել այժմ․ դաշնամուրից, իմ սիրելի դաշնամուրից սկսած մինչև վերջին բազկաթոռը, մինչև լուսամուտի վերջին վարագույրը — բոլորը վաճառեցին աճուրդով։ Խոհարարի, աղախնի և ծառաների մասին, ինարկե, ավելորդ ե անգամ խոսել․ չունենք գոնե մի հատիկ ծառա, վորին փողոց ուղարկենք։ Ամեն բանի մեջ — ուտելում, խմելում, հագնելում — սաստիկ խնայողություն ենք անում, անում ենք ճարահատյալ․ Ել չեմ գրում, թե այդ բոլորը վորքան զգալի յե մեզ համար, այդ ինքդ ել կարող ես յերևակայել... Տանը գտնված ավելորդ վոսկեղենը և արծաթեղենն արդեն սկսել ենք վաճառել։ Առավելապես մեզ քանդում են բժշկների վարձն ու դեղորայքը․ գոնե դրանից մի զգալի ոգուտ լիներ հորս կամ յեղբորս։ Ահա ամբողջ չորս ամիս ե, վոր այդ բժշկները ջանասիրությամբ հաճախում են մեր տուն և, չնայելով դրան, հորս դրությունն այժմ ել համարյա նույնն ե, ինչ վոր առաջ, իսկ Գրիգորի առողջությունն, ընդհակառակն, որ-որի վրա յետ ու յետ ե գնում...

Հա, բժիշկներ ասացի, միտս յեկավ։ Անցյալ անգամները (այդ մասին, կարծեմ, քեզ չեմ գրել) հորս բժիշկը — X-ը (դու պետք ե վոր ճանաչում լինես այդ պարոնին) դառնում ե մեզ և ասում ե ծածուկ, վոր հորս այլևս վոչինչ չի ոգնի և իզուր համ նա յե չարչարվում․ համ մենք։ «Յեթե ուզում եք, ասում ե, այնպիսի դեղ կտամ, վոր վերջնականապես կվորոշե նրա վիճակը»։ Հասկանում ես, սիրելի քույրիկ, թե դրանով ինչ եր ուզում ասել․ ուզում եր ասել՝ — ձեր հոր կյանքն իմ ձեռքին ե, ուզում եք, յես նրան կսպանեմ... Զարմանքից, սարսափից և կատաղությունից չգիտեյի ինչ պատասխանեմ։ Սառնասրտությունս կատարելապես կորցնելով, պատրաստ եյի մի սաստիկ ապտակ տալ նրա գեր յերեսին և կտայի, յեթե նա, նայելով թե բանն ինչումն ե, իսկույն և յեթ չհեռանար։

Մյուս յերկու յեղբայրներս — Արշակն ու Գարեգինը — բավական չե, վոր անգործ են, այլև մի ծանր բեռ են դարձել մեր վզին։ Յերկուսն ել ամբողջ որն ընկած են տանն և ձրի ուտում են, խմում։ Արշակին այլևս վոչ մի տեղ չեն պահում յուր արբեցողության համար, իսկ Գարեգինն ինքը չի ուզում վոչ մի տեղ կանգնել։ Չնայելով մեր հորդորներին, թախանձանքներին և հանդիմանություններին, վոչ Արշակն ե ուզում ձեռք վերցնել յուր արբեցողությունից, վոչ Գարեգինն — յուր ծուլությունից։ Ախ, հայր, հայր, վորքան տառապանքներ բերիր մեր գլխին... Նրա առողջության ժամանակ ամենքս սիրում եյինք նրան և վախենում նրանից։ Թողնելով յուր զվարճախոսությունն ու կատակները, հարկավոր դեպքում նա գիտեր և լուրջ խոսել, լուրջ խրատել․ Մենք աշխատում եյինք վոչինչ այնպիսի անդուրեկան բան չանել, վորի համար նա հանդիմաներ մեզ․ իսկ այդպիսի դեպքերում նրա հանդիմանությունները շատ խիստ եյին լինում։ Կարո՞ղ եյինք Գրիգորը, յես կամ Գարեգինը գեթ մի որ առանց մի վորևիցե հարգելի պատճառի ուսումնարանից յետ ընկնել, կարո՞ղ եր Արշակը՝ նրա հետ միասին ճաշի նստած ժամանակ՝ մի բաժակ ավելի խմել։ Իսկ ա՞յժմ։ Այլևս չկա հայր, հավիտյան լռեցին նրա հանդիմանությունները, նրա խրատները, այո, հավիտյան, վորովհետև այն, ինչ վոր կար, ել չի լինելու, անցյալն ել չի դառնալու։ Վայ նրան, ով տեր չունի։

Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

Անգին քույրիկ․

Յեղբայրս — Գրիգորը մեռավ... Արտասուքը խեղդում ե ինձ․ ել ուժ չունեմ գրելու...

Թիֆլիս, 25 հունիսի, 1881

Սիրելի Հռիփսիմե,

Նամակ ես պահանջում․ ինչ գրեմ, ինչ ունեմ գրելու, ինչ կարող եմ գրել, յերբ շուրջս և ներսս կատարյալ դատարկություն ե տիրում։ Վոչինչ չկա, վոչինչ մի հիմնավոր բան, վորից կարողանայի ամուր կպչել՝ չանհետանալու համար, վորի վրա կարողանայի վերջնականապես կենտրոնացնել թափառող մտքիս ընթացքը՝ չմոռանալու համար․ Յերևակայիր մի անհուն, անտակ խորխորատ անվերջ տարածության մեջ․ վորտեղ ընկել ե մի մարդ՝ նա տարածում ե ձեռքերն այս ու այն կողմը, վորպեսզի մի բան գտնի, վորից կարողանա կպչել՝ ավելի խորը չընկնելու համար, բայց միշտ հանդիպում ե դատարկ տարածության, և նա շարունակ ընկնում ե ցած, ընկնում ե անվերջ, մինչև անգամ վոտների տակ հատակ չգտնելով․ — յես այդ դրության մեջ եմ։ Ճշմարիտ ե, կա իմ մեջ մի զգացմունք, վորի համար պարտական եմ մեռած յեղբորս, և թեև այդ զգացմունքը շատ անգամ բարերար ներգործություն ե ունեցել տանջված հոգուս վրա, բայց... անգին քույրիկ, հասկանում ես, թե վորքան յերիտասարդ եմ յես դեռ և թե սիրտս, հոգիս բնականա-

քար դեպի ինչը պիտի ձգտեն։ Յես… Ախ, բավական է. թողնենք այս, այլևս սիրտ չկա։

Յեղբորս մահն, իհարկե, անհետևանք չէր կարող անցնել վոչ ինձ և վոչ մորս համար՝ մանավանդ մեր այս թշվառության ժամանակ։ Մայրս անմիջապես ընկավ անկողին և մոտ մի ամիս շարունակ պառկած էր։ Նրա և հորս միակ խնամատարն յես եյի, թեև յես էլ պակաս հիվանդ չէյի զգում ինձ։ Նրա անկողնից վեր կենալը և իմ պառկելը մեկ յեղավ. կարծես դիտմամբ միմյանց խոսք եյինք տվել այդպես անելու։ Յես նրանից ավելի կարճ ժամանակ եյի պառկած և ահա մի շաբաթ է, ինչ վեր եմ կացել։ Այժմ ինձ սաստիկ թույլ եմ զգում. յերկար չեմ կարողանում ման գալ կամ վորևիցե բան շինել, շուտով հոգնում եմ, ուզում եմ նստել կամ թիկն տալ։ Գրիչն էլ այժմ դժվարությամբ եմ շարժում ձեռքիս։ Անցյալ օրը նայեցի հայելուն և ինքս ինձնից սարսափեցի։ Ակամա վերցրի անցյալ տարվա լուսանկարս և համեմատեցի.—ինչքան փոփոխություն… Մինչև անգամ ինքս էլ չէյի ուզում հավատալ, թե այդքան փոխվել եմ։ «Կամ այս իմ լուսանկարը չէ, կամ թե հայելին է ինձ խաբում»—ասում եյի ինքս ինձ։ Լուսանկարի մեջ հանված է մի գեղեցիկ, մի կայտառ օրիորդ, վորի աչքերն յերջանկությամբ և չարաճճի կերպով ժպտում են, իսկ հայելու մեջ տեսնում եյի սաստիկ նիհար, սաստիկ գունատ, կարծես ծերացած մի աղջիկ, վորի անկենդան, մեքենայական հայացքը, կարծես, ասում է… ինչ է ասում։—Վորոշ վոչինչ, բայց մի բան է ասում, վոր վոչ ինքն է հասկանում և վոչ ուրիշը կարող է հասկանալ…

Ներիր, սիրելիս, սաստիկ հոգնեցի, էլ վոչինչ չեմ կարող գրել։ Ընդունիր կարոտալի համբույրներս։

Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

Թիֆլիս, ոգոստոսի 16, 1881.

Սիրելի Հռիփսիմե,

Դարձյալ բանը թարսվեց. մեծ յեղբայրս իր հին աստվածը միտը բերեց։ Մեր «բարեկամն» էլ վռնդեց նրան, և իրավունք ուներ, վորովհետև յեղբայրս դարձյալ սկսել էր խմել. յուր ստացած ռոճիկից էլ վոչ մի կոպեկ տուն չէր բերում։ Ես, այդպես էլ կարծում եյի. արբեցողությունն այնպես չէ բուն դրել նրա մեջ, վոր նա յերբևիցե կարողանա դրանից ձեռք վերցնել։ Դրա համար կամք է հարկավոր և փոքր ինչ ժուժկալություն, իսկ յեղբայրս զուրկ է թե մեկից և թե մյուսից. անգործ ման գալն ու խմելը նրա համար ամեն բանից քաղցր է։ Իսկ փոքր յեղբայրս դարձյալ այնտեղ է, և պիտի



ասած, վոր կարողացել է ծուլությունը խափանել և աշխատում է։ Բայց նրա ստացած ռոճիկն ինչ պիտի անի մեր այնքան, թեկուզ սաստիկ չափավորած, կարիքներին։ Ծայրահեղ աղքատությունը սպառնում է թակելու մեր դուռը… Մայրս ուզում է տունը ծախել, բայց յես չեմ թողնում. դրանից ստացած փողն էլ շուտով կհատնի (մանավանդ վոր տունն անհամեմատ պակաս են գնահատում), այնուհետև ինչ պիտի անենք, ինչո՞վ պիտի վճարենք բնակարանի վարձը… Վոչ, անփութություն կլիներ հոգսերի վրա նոր հոգսեր էլ ավելացնել։ Յերևակայում եմ, թե վորքան դժվար է մի տնից մյուսը տեղափոխվել, թե վորքան անտանելի յե տանտիրուջից միշտ անարգված լինել տան վարձն իր ժամանակին չվճարելու համար… Վոչ, հազարապատիկ ավելի լավ է մեռնել թեկուզ քաղցած, բայց ականջը հանգիստ՝ յուր սեփական տան հարկի տակ։ Սեփական տան, սեփական տանը… Ուրիշ կյանքը կրկնապատիկ, քառապատիկ դառը կլինի։ Յես այդ զգում եմ։ Մայրս ուզում է մի վորևիցե գործ վերցնել։ Տեսնենք ինչ կլինի։

Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

Թիֆլիս, 24 ոգոստոսի, 1881.

Սաստիկ հուզված եմ գրում քեզ այս տողերը, սիրելի Հռիփսիմե։ Յես այժմ կատարելապես վոչնչացած եմ։—Մայրս կար էր վերցրել կարելու, յես էլ ոգնում եյի նրան, բայց… վոչինչ չկարողացա կարել. սակայն, վոչ թե վոչինչ չկարողացա կարել, այլ—կարել չգիտեյի, կարը փչացրի։ Կար բաժանող կինը տեսավ կարածս և սաստիկ հանդիմանեց նախ մորս, վոր ինձ թողել էր կարելու, հետո—ինձ, վոր կարը փչացրել եյի։ «Անհագին աղջիկ ես ու ամենահասարակ կարը չգիտես, ամոթ չէ՞»-ասաց։ Ամոթ չէ՞… Այնքան ամոթ էր, վոր հազար յերանի կլիներ, յեթե նույն րոպեյին գետինը պատռեր ու ինձ կլաներ հավիտյան… Մինչև անգամ մտադրվեցի ինքնասպանություն գործել և կգործեյի, աստված է վկա, յեթե… Ամեն տեսակ դժբախտություն, ամեն տեսակ բախտի հալածանք կտանեյի—և տանում եմ, բայց հասարակ կնոջ այդ հասարակ բանի համար տված հանդիմանությունը վոչ մի կերպ չեյի տանիլ և չեմ էլ կարող տանել։ Այդ հանդիմանությունը մտքիցս մի վայրկյան անգամ չի հեռանում, վորքան շատ եմ մտածում այդ մասին, այնքան… սիրտս անտանելի ծանրանում է… Կարծում եմ, թե ամբողջ մարդկությունը աշխարհիս ամեն ծայրերից, մինչև անգամ տան չորս պատերը, վորոնցից այլևս դուրս չեմ գալիս, ծաղրելով մատնացույց են անում ինձ և ասում-տեսեք, այս անհագին

աղջիկը հասարակ կար անել անգամ չգիտե... Ի՜նչ մեծ համարում ունեյի ինձ վրա. կարծում եյի, թե բավական է, որ մի բան անել կամենամ և վերջացած է, ամեն բան կանեմ բայց իրողությունը, փորձը ցույց տվեց, որ ոչ թե ոչինչ չեմ կարող անել, այլ և... որ յես ինքս ոչինչ եմ։ Ոչինչ, ոչինչ... և դեռ մի անգամ մեռած յեղբորս հպարտությամբ պատասխանեցի. «Ի՜նչ, յես կաշխատեմ»... Խեղճ, խեղճ Աննա... Յեվ յեղբայրս ել հույս ուներ ինձնից, որ յես կարող եմ աշխատել... Ո՛հ, որքան անտանելի յե դրությունս... Ինքս ինձնից սարսափում եմ։ Գոնե չունենայի սրտիս մեջ՝ դեռ մանկությանս հասակից սերմանված՝ այս հպարտությունը, այս գոռոզությունը, գոնե կարողանայի տանել ինձ տված արդարացի հանդիմանությունները, գոնե սիրտս կարողանար հաշտվել ուղեղիս հետ,—այն ժամանակ. Իսկ այժմ.. Կատարելապես իրավունք ունեմ ասելու, որ յես իսկապես թշվառ եմ... Ա՜խ, ա՜խ, անգին քույրիկ... սրտիս և ուղեղիս մեջ դժոխք կա. .

Քո Ա. Ս.

Թիֆլիս, 9 սեպտեմբերի 1881.

Սիրելի Հոփսիմե,

Աղքատ տեղովդ ինձ քսան ռուբլի յես ուղարկել։ Ինչո՞ւ. . ինչո՞ւ յես ուղարկել .. Յեվ դեռ ներողություն ել ես խնդրում, որ ուշ ես ուղարկում, որովհետև ռոճիկդ նոր ես ստացել... Բայց քեզ ո՞վ ասաց, որ ուղարկես... Նպատակդ ի՞նչ եր, որ ուղարկել ես... ինձ ծաղրե՞լ, ինձ հանդիմանել.. ա՞յո... Կարծես թե ինքս ինձ քիչ եմ ծաղրում, կարծես թե ինքս ինձ քիչ եմ հանդիմանում. . Յեվ գրում ես, որ շնորհակալություն չգրեմ քեզ։ Մի՞թե կարծում եյիր, որ շնորհակալություն կգրեմ. ինչ բանի համար,—որ տանջանքս կրկնապատկեցի՞ր... որ ինքս ինձ ավելի ատել տվեցի՞ր... որ մի անգամից ցույց տվիր, թե որքան չնչին և անպե՞տք եմ յես՝ քեզ հետ համեմատած... Յերբ բաց արի ծրարը, հանեցի միջից ուղարկածդ թղթադրամներն և կարդացի նամակդ, արյունս գլխիս խփեց։ Հուսահատությունից, ամոթից և անզորությունից լաց յեղա... աստվա՜ծ իմ, այն ինչ արտասուք եր... Կյանքիս մեջ դեռ այնպես լաց չեյի յեղել. արտասուքիս յուրաքանչյուր կաթիլը, կարծես, թույն եր, որ քաղվում եր ուղղակի սրտիցս... Անգին քույրիկ, այս ինչ է պատահում ինձ...

Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ



Հ. Գ. Նամակիս հետ յետ եմ ուղարկում ուղարկածդ քսան ռուբլին։ Անշուշտ հասկանում ես ինձ և ինձնից չես նեղանա, որ այդ փողերը չեմ ընդունում։

Ա. Ս.

Թիֆլիս, 15 սեպտեմբերի, 1881.

Դարձյալ, դարձյալ ուղարկել ես և հետն ել մի յերկար ու խիստ հանդիմանություն։ Այո՛, այո՛, սիրելի Հոփսիմե, համաձայն եմ քեզ հետ՝ որ յես շատ հպարտ եմ, շատ փոքրոգի և շատ հիմար, բայց. . հավատա, որ ավելի մեծ բարերարություն արած կլինեյիր ինձ, յեթե այդ փողերը հենց սկզբից չուղարկեյիր։ Չես կարող յերևակայել, թե ինչպես տանջվում եմ յես, յերբ նայում եմ այդ փողերին... Այնուամենայնիվ, ընդունում եմ, բայց այն պայմանով,—ուշադրություն դարձրու,—այն պայմանով, որ այդ իմ պարտքս լինի, յես՝ այսօր թե եգուց, բայց մի ժամանակ՝ անպատճառ վերադարձնեմ քեզ։ Գրիր, որ այդ պայմանին համաձայն ես, ապա թե ոչ դարձյալ յետ կուղարկեմ։ Մինչև գրելդ այդ փողերից մի կոպեկ անգամ չեմ ծախսիլ։

Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

Թիֆլիս, 19 սեպտեմբերի, 1881.

Իմ սիրելի Հոփսիմե,

Շնորհակալ եմ։

Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ

Թիֆլիս, 4 հոկտեմբերի, 1881.

Սիրելի Հոփսիմե,

Ի՞նչ ես ուզում, որ գրեմ։ Թե ինչպես եմ անցկացնում օրս։ Կզակս ափիս հենած՝ առավոտից մինչև յերեկո նստած եմ լուսամուտի առաջ և յեթե յերբեմն պատահում է, որ մի որևիցե ճանճ՝ ցրտից անզորացած՝ ման է գալիս ապակիների վրա, բռնում կամ գլուխն եմ կտրում դեն գցում, կամ թևերն ու ոտները կտրատում և թողնում, որ թավալգլոր գա այդպես անդամահատված, մինչև որ սատակի... Սրանից ել լավ զբաղմունք կուզե՞ս։ Ժամանակ չէ՞, թող անցնի, ելի, ուրիշ կերպ չանցնի, թող այսպես անցնի, ինչ վնաս։ Վերջը խո մահ է...

Քո Ա. Ս.

*Թիֆլիս, 18 հոկտեմբերի, 1881.*

*Սիրելիս,*

*Իզուր ես ինձ յերկար ու բարակ խրատներ կարդում. իզուր ես աշխատում ապացուցանել ինձ, վոր իմ այս խելքով, հասկացողությամբ յես չեմ կարող և չպետք է այսպես լինեմ, վոր յես զոռով եմ այսպես անում և անարդարացի կերպով չարախոսում ինքս ինձ վրա։ Յես ինքս էլ այդպես եմ կարծում, բայց արի տես, վոր անիծյալ իրականությունը խելք և հասկացողություն չի պահանջում, այլ* կյանքի համար պատրաստություն։ *Իսկ հենց այդ բանն է, վոր յես չունեմ, բայց թե ինչո՞ւ չունեմ,—այդ ինքդ էլ շատ լավ կարող ես հասկանալ, յեթե քրքրես անցյալս և դաստիարակությունս... Միանգամից համոզվիր, վոր յես կյանքի համար մի կոպեկ, մի գրոշ չարժեմ։ Կրկնում եմ՝ յես անպատրաստ եմ, անպատրաստ,—այս յերբեք մի մոռանար։ Իսկ նոր պատրաստվելու սկսել, այժմ—անհնարին է։ Ինչպես սկզբից հիմքը գցվել է, այնպես էլ պետք է գնա մինչև վերջը։ Յեվ թող գնա։ Յես հրաշքներ չեմ սպասում և վոչ էլ ինքս կարող եմ հրաշքներ գործել։ Յես մի այլանդակ արարած եմ, վորի բերանը հացը ծամած պիտի դնել... Վորքան ատում եմ ինքս ինձ, վորքան զզվում եմ ինքս ինձնից... Յեթե հնար լիներ սոսկալի մեղապարտությունից խուսափելու...*

*Քո ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ*

*Թիֆլիս, 31 հոկտեմբերի 1881.*

*Իմ անգին Հռիփսիմե,*

*Այս տողերը գրելիս արդեն թույն եմ խմել, իսկ յերբ կարդալիս կլինես, անշուշտ այլևս կենդանի չեմ լինի։ Մնաս բարյավ... հավիտյան.. էլ ինձ չես տեսնի։ Անիծիր ինձ, բայց լաց յեղիր, արտասուքդ գուցե թեթևացնե մեղապարտ հոգիս... Ի՜նչ սոսկալի բան է թույնը... բայց կյանքն ավելի սոսկալի յե, ի հարկե, ինձ համար, իսկ քեզ և ուրիշների համար—վո՛չ։ Հա, կարծեմ արդեն ստացած պետք է լինես միքանի որ առաջ իմ ուղարկած քսան ռուբլին, վոր պարտ եյի քեզ։ Ներիր, հպարտությունս հաղթեց։ Այս նույն հպարտությունն է, վոր ինձ գերեզման է տանում։ Արդյոք կներե՞ ինձ աստված, կներե՞ Գրիգորի հոգին... բայց ապրելն ինձ համար անհնարին եր։ Դարձյալ մնաս բարյավ, աննման քույրիկ, աղոթք արա մեղապարտ հոգուս համար։*

*Քո թշվառ ԱՆՆԱ*

---

— Ի՞նչ միջավայրի ծնունդ եր Աննա Սարոյանը:



— Բնութագրեցեք նրա ծնողներին, մանրամասն կանգ առեք նրա հոր բնութագրի վրա։

— Ինչպիսի՞ դաստիարակություն եր նա ստացել:

— Պատահական եր այդ դաստիարակությունը, թե՞ դա հետեվանք եր ամբողջ բուրժուական հասարակության կենցաղի ու պայմանների:

— Պատահակա՞ն եր նրա հոր սնանկացումը։

— Հոր սնանկացումից հետո ի՞նչն եր ամենից ավելի ազդում Աննայի վրա:

— Բնութագրեցեք Աննայի յեղբայրներին: Ինչո՞ւ նրանցից վոչ մեկը աշխատանքի ընդունակ չեր։

— Ինչո՞ւ Աննան յեվս ընդունակ չեր վոչ մի աշխատանքի։

— Կարելի՞ յե արդյոք Աննայի նամակներից վորոշ գաղափար կազմել Հռիփսիմեյի *(նրա ընկերուհու)* մասին:

— Աննայի նամակներում ցրված զանազան կտորներից կազմեցեք Հռիփսիմեյի ընդհանուր բնութագիրը. *1)* ի՞նչ միջավայրի ծնունդ է նա, *2)* ինչո՞վ է ապրում, *3)* բնավորության ի՞նչ գծեր ունի յեվ այլն:

— Համեմատեցեք Աննային Հռիփսիմեյի հետ:

— Ինչո՞ւ Աննան դժվարությամբ է ընդունում Հռիփսիմեյի ուղարկած *20* ռուբլին յեվ վերջիվերջո յետ է ուղարկում:

— Բղխո՞ւմ է արդյոք Աննայի ընդհանուր նկարագրից յեվ նրա համար ստեղծված պայմաններից այն յեզրակացությունը, վոր անում է Աննան՝ ինքնասպանության դիմելով:

---

— Համեմատեցեք «Աննա Սարոյան»-ում նկարագրված բուրժուական ընտանիքի ընդհանուր պատկերը Շիրվանզադեյի «Քաոս»-ից բերված հատվածներում նկարագրված պատկերի հետ:

— Համեմատեցեք Աննայի յեղբայրներին Մարկոս Ալիմյանի յերեք զավակների հետ: Ինչո՞ւ շատ ընդհանուր բան կա նրանց բնութագրերում:

---

— Հեղինակն ի՞նքն է արդյոք պատմում Աննա Սարոյանի մասին, թե մի ուրիշը:

— Չնայած վոր հեղինակը ինքն իր կողմից վոչ մի բառ չի ասում Աննայի մասին, սակայն չի՞ յերևում արդյոք նրա վերաբերմունքը դեպի Աննան։ Չի՞ համակրում արդյոք հեղինակն Աննային:

— Ինչի՞ մեջ յեվ ի՞նչ ձևով է հեղինակն արտահայտում իր վերաբերմունքը դեպի Աննան:

— Չունի՞ արդյոք հեղինակը ձգտում՝ ընթերցողների մեջ յեվս համակրանք առաջացնելու դեպի իր հերոսուհին: Ինչի՞ց է դա յերևում:

— Աննա Սարոյանի նամակների լեզվից, նրա գործածած վոճերից, առանձին արտահայտություններից յեվ նույնիսկ վորոշ բառերից չի՞ յերևում արդյոք, վոր Աննան բուրժուական միջավայրի աղջիկ է: Գտեք նրա նամակներում այս տեսակետից ամենաբնորոշ կտորներ յեվ ընդգծեցեք:

---

# ՆԵՂ ՈՐԵՐԻՑ ՄԵԿԸ

## 1.

Պատրիկյանը մի հայացք ձգեց իր հնացած հագուստին, նայեց կոշիկների ծռմռված ծայրերին, դուրս յելավ սենյակից, դուռը փակեց, բանալին գրպանը կոխեց, անցավ բակի յերկայնքով և բարձրացավ տանտիրոջ բնակարանի ընդարձակ պատշգամբը, վորը, մաքուր ու կարմրավուն, պլպլում եր հայելու պես, առավոտյա արևի պայծառ ճառագայթներով վողողված: Նրան թվում եր, թե անասունները, յերբ նրանց սպանդանոց են տանում, ճիշտ նույնը պիտի լինեն զգալիս, ինչ վոր զգում եր ինքն այդ րոպեյին: Նա մի վտիտ յերիտասարդ եր, հազիվ յերեսուն տարեկան, խիստ բարի աչքերով և անվստահ շարժումներով: Խոհանոցից դուրս յեկող իմերել ծառային խնդրեց կամացուկ, վոր տանտիրոջն իմաց տա, թե ինքն ուզում ե տեսնել նրան: Ծառան, չուխայի յետ ծալած յերկայն ու լայն թևերը վայր թողնելով, գնաց նրա խնդիրքը կատարելու, իսկ Պատրիկյանը մնաց խոհանոցի մոտ և բաց լուսամուտից նայում եր ներս, վորտեղ խոհարարն ամբողջապես սպիտակազգեստ և սպիտա՜կ գլխարկը գլխին, վարժ ձեռքերով փետրահան եր անում նոր մորթած հավեր և բերանով ինչ-վոր պարերգ շվշվացնում: Ծառան դուրս յեկավ և հեռվից ձեռքով արավ նրան: Պատրիկյանն զգուշորեն անցավ պատշգամբով, դռան մոտ սրբեց վոտները, ծառայի առաջնորդությամբ մտավ ճաշասենյակը, այնտեղից—ընդարձակ ու խիստ բարձր դահլիճը, վորը կորած եր հսկայական ծաղկամանների, աթոռների, աթոռակների, բազկաթոռների, սեղանների, գահավորակների և բազմոցների մեջ, և կանգ առավ տանտիրոջ առանձնասենյակի առաջ: Ծառան դուռը բաց արեց, ներս հրավիրեց նրան, իսկ ինքը հեռացավ:

Տանտերը—խիստ ջղուտ, կարծես բրոնզից ձուլված մի տղամարդ, մոտ 50-60 տարեկան, սպիտակախառն կոշտ մազերով և սրածայր կարճ մորուքով—նստած եր թղթերով, թղթապանակներով, գրքերով և անթիվ մանր-մունր բաներով ծանրաբեռնված ահագին գրասեղանի առաջ և գրում եր:

— Ներեցեք, յես՝ իսկույն,—ասաց նա, մի վայրկյան նայելով այցելուին պենսնեյի վերևից, և շարունակեց գրել:

Պատրիկյանը մնաց կանգնած:

— Խնդրեմ նստեցեք,—ասաց տանտերը, շարունակելով գրությունը:

Պատրիկյանը կամաց նստեց, գլխարկը ծնկների վրա բռնած, և նայեց շուրջը: Սենյակը զարդարված եր դահլիճի պես, փարթամորեն: Կահավորանքի մեջ աչքի եր ընկնում վոչ այնքան ճաշակը, վորքան փափկակեցության թուլությունը: Ուր նայում եր, տեսնում եր գորգ ու թավշյա բարձիկներ: Կար և մի ահագին գրքերի պահարան ապակյա դռներով, վորի բոլոր դարակները լիքն եյին ոսկեկազմ գրքերով՝ զորքի պես խիստ կանոնավոր կարգ-կարգի շարված: Այդ պահարանն եր, անշուշտ, սենյակի անհրաժեշտ ճանաչված կահավորանքից մեկն եր կազմում, այլապես Պատրիկյանը չեր կարծում, թե տանտերը ժամանակ ունենար այդ ստվարահատոր գրքերից վորևե մեկը ձեռք առնելու, վորովհետև չափազանց զբաղված եր իր մասնավոր և հասարակական գործերով.—նա գործարանատեր եր, քաղաքային խորհրդի իրավասու, քաղաքային մի քանի հանձնաժողովների անդամ, բանկի դիրեկտոր, կլուբի ավագ, յեկեղեցու յերեսփոխ և դպրոցի հոգաբարձու: Պատրիկյանը հայացքը դարձրեց տանտիրոջ վրա և տեսավ, վոր նա գրում ե ձեռքի համարձակ շարժումով և անդադար կրծում ե վերին շրթունքը ձախ կողմից:

— Նուս, ինչ կհրամայեք, ասաց տանտերը գրությունը վերջացնելուց հետո և սև մարմարի ծանր ծծոցաթուղթը թխկթխկացնելով գրած թղթի վրա:

— Յես...ներեցեք,—արտասանեց Պատրիկյանն իր ասելիքը նախապատրաստած մարդու շփոթմունքով: Յերեկ գիշեր դուք նորից հիշեցրել եյիք սենյակիս վարձը...Յես յեկել եմ խնդրելու, վոր, յեթե կարելի յե, միքանի որ սպասեք դարձյալ:

Տանտերը վերցրեց պենսնեն, արմունկներով հենվեց գրասեղանին և նայեց նրան իր լուրջ ու յեռանդուն աչքերով:

— Յեղբայր պատվական,—ասաց նա,—յեթե, կարծեմ, յոթն որ ե սպասում եմ, չե՞:

Պատրիկյանն աչքերը վայր թողեց:

— Այո, բայց...խնդրում եմ դարձյալ միքանի որ...յեթե կարելի յե. .

— Բանը միքանի որվա մեջ չե: Միքանի որ, ինչու՞ չե, կարելի յե սպասել, և տեսնում եք, վոր սպասում եմ: Բայց ցավալին այս ե, վոր միքանի որից հետո, յերբ դարձյալ յես ինքս ստիպված կլինեմ հիշեցնելու ձեր պարտքը, դուք կգաք ինձ մոտ, ինչպես այժմ եք յեկել, և դարձյալ կխնդրեք, վոր դարձյալ միքանի որ սպասեմ: Յես այդ փորձով գիտեմ և այդ բանի վերջը չեմ տեսնում: Ուստի մի անգամ առ միշտ կանոն եմ շինել ինձ համար, վոր յերբ կենողներից վորևե մեկը չի վճարում բնակարանի վարձը կանոնավորապես, նրան առաջարկում եմ անմիջապես դատարկել

բնակարանը։ Ձեզ էլ ասում եմ. յեթե չեք կարող վճարել, դատարկեցեք սենյակը։ Յես ինքս վճարելիքներ ունեմ, և իմ պարտատերս, բանկը չի սպասում, վոր յես սպասեմ։

Տանտերը խոսում եր վճռական տոնով և սուր-սուր նայում Պատրիկյանի խեղճ ու կրակ դեմքին։

— Յես հասկանում եմ ձեր դրությունը,—թոթովեց Պատրիկյանը, թեև ամենևին չեր հասկանում, թե ինչպես կարող եր ամսական իր վճարելիք միքանի ռուբլին վորևե նշանակություն ունենալ այդ հարուստ մարդու համար։—Բայց դուք էլ, խնդրում եմ, մտեք իմ դրությունը։ Յես ուսուցիչ եյի գավառում. այժմ դպրոցներ չունենք, փակել ե կառավարությունը, ինչպես գիտեք, և յես անգործ եմ։ Ուզում եյի գնալ արտասահման ուսումս շարունակելու. դիմեցի միքանի բարերարների, մերժում ստացա։ Հետո մտա մի խմբում իբրև հասարակ գործակատար, հույս ունեյի, թե խնայողությամբ այնքան կհավաքեմ, վոր կարող կլինեմ ձգտումս իրագործել, բայց հիվանդացա և խնայած բոլոր փողերս ծախսեցի։ Հիմա վոչինչ չունեմ. որեր են պատահում, վոր քաղցած եմ մնում...

— Ի՞նչ հարկավոր ե, վոր այդ բաները պատմում եք ինձ,— շտապեց ընդհատել Պատրիկյանին տանտերը, և նրա բրոնզյա դեմքի վրա յերևացին դժգոհության պարզ նշաններ։ – Դուք կրթված յերիտասարդ եք, և ձեր անձնասիրությունը չպետք ե թույլ տա, վոր ուրիշի պատմեք ձեր մասնավոր կյանքը։ Յես էլ հազար ու մի ցավ ու դարդեր ունեմ, նստեմ պատմե՞մ ձեզ։ Լավ չե, այդ լավ չե։ Ասում եք՝ միքանի որ,—համեցեք, կսպասեմ. միայն յես չեմ հասկանում, թե վորտեղից պիտի կարողանաք վճարել, քանի վոր ասում եք, թե վոչինչ չունեք և անգործ եք։

— Յես... գիտեք...յես... մի-յերկու գիրք ունեմ տպագրած,— ասաց Պատրիկյանը շփոթված, կարծես ամաչելով, վոր այդպիսի բան ունի արած. -յերկար ժամանակ ե, չեմ մտել գրավաճառանոց. այսոր կմտնեմ. յերևի այնքան ծախած կլինեն, վոր...

— Դուք գրո՞ղ եք — հարցրեց տանտերը, զարմացած նայելով նրա շփոթված աչքերին։

— Այո։

— Ինչ եք գրում։

Պատրիկյանը գլուխը բարձրացրեց և նայեց նրան ամոթխածության ժպտով։

— Ո՛վ գիտե...գրում եմ, ելի...

— Դե, դուք գիտեք,—ասաց տանտերը և վերկացավ։—Ձեր կողքի կենողը, այն հրյա ալրի կինը, վոր դանակներ և կողպեքներ



ե ծախում բակի դռան մոտ, տասը տարի յե՝ կենում ե, և չեմ հիշում մի ամիս, վոր ամենայն ճշտությամբ վճարած չլինի սենյակի վարձը, չնայելով վոր մեն-մենակ այնքան էլահագին ընտանիք ե պահում։ Ասելս այն ե, վոր... Ինչևիցե, ցտեսություն։ Միքանի որ կսպասեմ։

2.

Պատրիկյանը դուրս յեկավ ինչ-վոր հիմարական մի ժպիտ դեմքին։ Պատշգամբում պատահեց տանտիրոջ նիհար ու տգեղ աղջկան և նրա ֆրանսուհի կոկետ դաստիարակչուհուն, վորոնք թևանցուկ զբոսնում եյին աշնանային արևի ախորժելի ջերմ ճառագայթների տակ և ջարդում եյին ֆրանսերեն։ Յերկայն պատշգամբով անցնելիս աշխատում եր քայլել այնպես, վոր նրանք չտեսնեն իր անդրավարտիկի մաշված պատառոտված տոտերը։ Նա իջավ բակը և դեպի փողոց տանող լայն անցքի մեջ, բակի դռան մոտ, տեսավ հարևան հրյա կնոջը՝ նստած հասարակ մի աթոռակի վրա, յերկայն ու նեղ սեղանի կողքին, վորի վրա վորոշ կանոնավորությամբ դարսված եյին ամեն տեսակ դանակներ, մկրատներ, կողպեքներ, պորտմոնեներ և այլ մանրունքներ։ «Յերջանի՜կ կին. համ ինքն ե ապրում իր ահագին ընտանիքով, համ էլ սենյակի վարձը տալիս ամենայն ճշտությամբ»,—մտածեց Պատրիկյանը, հիշելով տանտիրոջ խոսքերը և նրա մոտով անցնելիս բարևեց նրան։

— Ինչու՞ այսոր տաք ջուր չվերցրիք,—կանչեց նրա յետևից հրյա կինը՝ հրյաներին հատուկ առոգանությամբ։

Պատրիկյանը կանգ առավ և նայեց նրա բարի գիրուկ դեմքին նույն հիմարական ժպիտով։

— Վորովհետև շաքարս հատել եր,—պատասխանեց նա մի տեսակ անհոգությամբ։

Հրյա կինը զարմանքից մինչև անգամ վերկացավ իր աթոռակից։

— Ա՛յ քեզ բան,—բացականչեց նա։—Շաքար էլ կտայինք, ինչ կա վոր...

— Չե, առանց այն էլ յես շատ եմ պարտական ձեզ...

— Ի՞նչ պարտական... Ամեն որ մի քանի բաժակ տաք ջուր տալով մեծ բա՞ն ենք արել, ինչ ե։ Շաքար չունեյիք, կասեյիք. մի յերկու կտոր շաքարն ի՞նչ բան ե վոր...

— Բան չկա, մի որ թեյ չխմելով չենք մեռնի,—ասաց Պատրիկյանը, ծիծաղեց նույն անհոգությամբ և շտապեց դուրս գնալ փողոց։

Այդ փողոցն իսկապես քաղաքի վաճառաշահ շուկաներից մեկն էր՝ լի աղմուկով և ժխորով։ Ժամը տասին մոտ էր։ Արևը նոր սկսել էր հալել գիշերը կտուրների վրա նստած ցեղյամը, վորն այժմ ջուր դառած՝ կաթկթալով թափվում էր յերկար ջրախողովակներով ներքև և մայթերի վրա փոքրիկ գետեր էր կազմում։ Պատրիկյանն զգաց, վոր ոտքերի մեջ օդը բավական ցուրտ է ու խոնավ, և ձեռքերն անդրավարտիքի գրպանները կոխած՝ աշխատում էր գնալ այն տեղերով, ուր արևը թափում էր մաքուր յերկնքից իր ճառագայթները։ Սակայն արևի տակ էլ նրա մարմինը սառում էր. Նրան թվում էր, թե դրա պատճառը վոչ թե աշնանային յեղանակն է և այն, վոր ինքը տաք չի հագնված, այլ այն, վոր այդ առավոտ վոչ թեյ է խմել և վոչ վորևե բան կերել։ Մրսում եյին առավելապես ձեռները, վորոնց ինչքան էլ աշխատում էր կուչ ածել իր յերկարամյա սյուրտուկի կարճ թևերի մեջ, այնուամենայնիվ դաստակները բաց եյին մնում։

Պատրիկյանի առաջին գործն այն յեղավ, վոր մտավ գրավաճառանոց։ Հույս ուներ, թե այնքան կստանար, վոր, սենյակի վարձը հանելուց հետո, դեռ մի բան էլ կմնար իբրև ապրուստի փող։ Սակայն գրավաճառանոցում նրան ասացին, վոր վերջին յերեք ամսվա ընթացքում նրա յերկու գրքերից մեկն ամենևին չի ծախվել, իսկ մյուսից ծախվել է հինգ օրինակ միայն և կոմիսիայի տոկոսը հանելուց հետո, նրան հանձնեցին 1 ռ. 20 կ.։ Պատրիկյանը, հիասթափության ժպիտը դեմքին, փողը գրպանն ածեց և դուրս յեկավ գրավաճառանոցից՝ ճնշված այնպիսի զգացման տակ, վորպիսին ունենում են անսովոր մուրացիկները վողորմություն ստանալուց հետո։ Ամոթի և նվաստացման կարմիրը յերեսին՝ մի րոպե կանգ առավ դուրսը գրավաճառանոցի լուսամուտի առաջ, վորի թեթև քրքրված ապակիների միջից մի հայացք ձգեց ցուցանակի վրա հպարտորեն շարված ռուսերեն փարթամ գրքերին, ապա նրանց կողքին մի անկյունում ամոթխածությամբ կուչ յեկած հայերեն վտիտ գրքույկներին, հետո յերեսը շուռ ավեց և հեռացավ, խորասուզված ինչ-վոր դառն մտածմունքների մեջ։ Նա մոռացավ թեյի փափագն էլ, քաղցն էլ և, վորովհետև ուրիշ տեղ չուներ գնալու և մրսում էր, քայլերն ուղղեց դեպի խմբագրատուն։

Խմբագրատանը, ինչպես միշտ, այս անգամ էլ նստած էր մենմենակ քարտուղարը—չորիկ-մորիկ մի յերիտասարդ պարզ ակնոցով և աջ ձեռքի ճկույթի վրա աճեցրած կես վերշոկաչափ սրածայր յեղունգով,—և արագ գրում էր յերկայն ու նեղ թղթերի վրա, ճկույթը խիստ վորոշակի առանձնացրած հարևան մատներից։ Պատ-



րիկյանը, իբրև պարապ մարդ և իբրև ձրի աշխատակից, խմբագրատան ամենօրյա այցելուն էր, այնպես վոր քարտուղարն ու նա, վորոնք մտերիմ ընկերներ եյին, այլևս չեյին բարևում իրար տեսնելիս։ Այս անգամ էլ Պատրիկյանը մտավ քարտուղարի սենյակն առանց բարևելու, նստեց գրասեղանի ծայրին, վերցրեց տեղական ռուս լրագրներից մեկը, վորոնցից քարտուղարը լուրեր էր թարգմանում, և սկսեց կարդալ։ Տեղական լուրերից մեկը կարդալուց հետո հարցրեց.

— Ինչո՞ւ այս լուրը չես նշանակել։

— Վո՞ր լուրը,—հարցրեց քարտուղարը, շարունակելով գրել։

— Ջափինյանի մասին։ Հրավիրված է այս ձմեռ արքունական թատրոնում յերգելու համար։

— Հերն անիծեմ,—սրտանց արտասանեց քարտուղարը, առանց գլուխը բարձրացնելու թղթի վրայից։– Մե՞զ ինչ օգուտ։

Պատրիկյանն, ըստ յերևույթին, համամիտ յեղավ նրա հետ, վոր Ջափինյանի արքունական թատրոնում յերգելուց վոչ մի օգուտ չպիտի ունենա հայ հասարակությունը, ուստի վոչինչ չառարկեց։

Ներս մտավ տպարանական փոքրիկ աշակերտը մրոտ յերեսով ու ձեռքերով և կապույտ բլուզով, վորի մեջ սրթսրթում էր ցրտից նրա վտիտ մարմինը։

— Նութ,—ասաց նա յու-ն ու հնչելով։

— Սպասիր միքիչ,— ասաց քարտուղարը, և գրիչը նրա ձեռքին սկսեց շարժվել ավելի արագ։Նա շուտով գրեց վերջացրեց թուղթը և գրած մյուս թղթերի հետ միասին ծալեց ավեց աշակերտին։—Ահա, տար և վոր եյի գալու լինես, հարցրու՝ քանի կոլոն է պակաս։

Աշակերտը դուրս գնաց, գլխարկը փողոցում ծածկելով։

— Դե՛հ, Պատրիկ, պարապ մի նստիր,—ասաց քարտուղարն ակնոցն ուղղելով և նոր գործի պատրաստվելով։—Նյութ չունենք, մի բան գրիր ձեռաց։

— Տրամադրություն չունեմ,—ասաց Պատրիկյանը մելամաղձորեն։

— Ցես հեստիկ է վոր խեղդվում եմ, այ, տրամադրությունից։

— Դու միքենա յես դարձել։

— Շատ մի խոսիր, գրիր. հոգիս դուրս է գալիս։ Գիշերն էլ մինչև ժամի յերկուսը տպարանումն եմ անցկացրել, վորովհետև սրբագրիչը հիվանդացել է։

— Ո՞ւր է խմբագիրը, ինչո՞ւ չի օգնում։

— Գնացել է փող ճարելու, վորովհետև տպարանատերն սպառ-

նացել է, որ չեթե այսօր փող չստանա, համարը բաց չի թողնի։ Եզուց-էլոր բաժանորդագրություն ենք բանալու, և հանկարծ—այսպիսի խայտառակություն... Գրիր, գրիր, խոսելու ժամանակ չէ։

— Ի՞նչ գրեմ։

— Ինչ ուզում ես, միայն թե գրիր։

Պատրիկյանը դանդաղորեն միքանի թերթ թուղթ քաշեց առաջը, գրիչը թաթախեց թանաքամանի մեջ, կարճ ժամանակ մտածեց և գրեց վերնագիրը՝ «Յերեք ամիս, յեվ հինգ որինակ միայն»։ Այստեղ նա կանգ առավ, ճակատը շփեց և յերկար մտածելուց հետո, սկսեց. «Այս օրերս պատահեցի մեր յերիտասարդ գրողներից մեկին, որի համար կրիտիկան կամ այն, ինչ որ մեզանում կրիտիկա յե անվանվում, միաբերան վկայել է, որ բավական ձիրք ունի։ Նա գանգատվեց ինձ, որ անհագին նեղություններով հրատարակած իր մի գրքից յերեք ամսում վաճառվել է հինգ (հարյուր չկարծեք) հատ միայն։ Այս իրողությունը շատ լավ ծանրաչափ կարող է լինել՝ ցույց տալու համար մեր հասարակության ընթերցասիրության չափը և միևնույն ժամանակ, շատ դառն մտածմունքների առիթ է տալիս մեր գրականության ապագայի մասին։ Մեր հասարակությունը...» Պատրիկյանը նորից կանգ առավ, մտածեց, մտածեց, հետո գրիչը վայր դրեց և ասաց.

— Այստեղ վոչինչ չի կարելի գրել. մտքերս փետացան։

— Տո, գրիր, է, բղավեց քարտուղարը, որի գրիչը նորից արագ շարժվում էր թղթի վրա։—Վաղուց է, որ այդքան քնքշացել ես։ Կարծես թե քո սենյակը սրանից տաք լինի։

Պատրիկյանը սառած ձեռքերը շփեց իրար, բերնի գոլորշիով տաքացրեց մատների ծայրերը, նորից առավ գրիչը, գիծ քաշեց «Մեր հասարակությունը» բառերի վրա և շարունակեց. «Ճիշտ է, չի կարելի պնդել, թե մեր հասարակությունն ընթերցասեր չէ, բայց...»։

— Կարելի՞ յե մտնել,—լսվեց մի ուժեղ բարիտոն։

Պատրիկյանը և քարտուղարը միաժամանակ բարձրացրին գլուխները և նայեցին դեպի նախասենյակի դուռը։ Այնտեղ կանգնած էր մի թիկնավետ յերիտասարդ՝ բեղերն ու միրուքը սափրած և ցիլինդրը ձեռքին։

— Խնդրեմ,—մեքենայաբար արտասանեց քարտուղարը։

Այցելուն մտավ խիստ անձնավստահ քայլերով և ներկայացրեց իրեն.

— Ջափինյան։ Յերևի գիտեք, որ յես հրավիրված եմ այս սեզոնին արքունական թատրոնում յերգելու։



— Ա՛խ, ինչպես չէ,—արտասանեց քարտուղարը, մեքենայաբար վերկենալով տեղից և ակամա հարգանքով սեղմելով յերգչի ձեռքը։—Խնդրեմ նստեցեք։

Նա շփոթված էր այցելուի գեղեցիկ ու ազդու արտաքինից և, մանավանդ, նրա անունից, որ բավական հռչակ էր սկսել վայելել ռուս մամուլի և հասարակության մեջ։

Ջափինյանն արագ նստեց, ցիլինդրը դրեց գրասեղանի վրա, ձեռնոցը ձգեց ցիլինդրի մեջ, հետո տեսնելով, որ գրասեղանը ծածկված է փոշով, ցիլինդրի տակ մի լրագիր դրեց։

— Խմբագիրն այստեղ չէ՞,—հարցրեց նա։

— Դժբախտաբար վոչ,—պատասխանեց քարտուղարն սարկական-հարգական ժպտով և ակամա ուշադրություն դարձրեց յերգչի կարմիր ատլասի փողկապի վրա հուրհրատին տվող խոշոր ադամանդի վրա։ Նա նորից նստեց և չէր իմանում ինչպես անի, որ այցելուի աչքից ծածկի իր կեղտոտ մանժետները։

— Իբրև հայ յերգիչ, իմ պարտքս համարեցի այցելել ձեր խմբագրատունը,—ասաց Ջափինյանը։—Յերևի գիտեք, որ յես սովորել եմ Իտալիայում, որտեղից, սրանից վեց տարի առաջ, ինձ հրավիրեցին Ոդեսսա։ Յերկրորդ տարին յերգեցի Իրկուտսկում, հետո մի-մի սեզոն յերգել եմ Խարկով, Կիև, Մոսկվա, իսկ անցյալ սեզոնին յերգում էյի Պետերբուրգում։ Այժմ յեկել եմ Թիֆլիս։ Թիֆլիսը յերաժշտական քաղաք է, և կարծում եմ, որ կգնահատի ինձ։ Ներեցեք, դուք ստանո՞ւմ եք մայրաքաղաքի թերթերը։

— Ինչպես չէ։

— Ուրեմն անշուշտ կարդացած կլինեք ինձ վերաբերյալ ռեցենզիաները։ Ամենքը գովում են։

Յերգիչը խոսում էր յերկար և բացառապես իր մասին։ Նրա ձայնը հնչում էր առողջ և ինքնավստահ։

— Ինչևիցե,—ասաց նա և հանկարծ վերկացավ։—Յես ձեզ չխանգարեմ։ Իմ խոնարհ հարգանքներս պ. խմբագրին։ Հույս ունեմ, որ նա, ինչպես և դուք, շնորհ կբերեք լսելու ինձ։ Դուք սեզոնային տոմսակ ունեք, չէ՞։

— Վոչ, հայ թերթերին հարկ չեն համարում մշտական տոմսակ ուղարկելու,—պատասխանեց քարտուղարը։

— Ի՞նչ եք ասում,—բացականչեց Ջափինյանը։—Յես կասեմ, որ ուղարկեն յերկու տոմսակ, մեկը հատկապես խմբագրին, մյուսը ռեցենզենտի համար։ Դա ինչ զզվելի խտրականություն է։ Իմ առաջին դեբյուտը լինելու յե ամսույս տասին. յերգելու յեմ Անեգինը։ Հետո դուրս կգամ «Մազեպա»-ի, «Իգոր»-ի, «Կուպեց Կալաշնիկով»-ի, «Ցարսկայա նևեստա»-ի, «Ժիզն զա ցարյա»-ի, «Ռուս-

յան և Նյուդմիլա»-ի, «Ռուսալկա»-ի և ուրիշ օպերաների մեջ, Ցանտուեթյուն։

Զաֆինյանն ամուր և յերկար սեղմեց քարտուղարի ձեռքը, թեթևակի գլուխ տվեց սեղանի ծայրին կուչ յեկած Պատրիկյանին և դուրս գնաց նույնպիսի արագ քայլելով, ինչպես վոր մտավ, հատակը թրխկթրխկացնելով իր պլպլան կոշիկների խիստ բարձր ու բարակ կրունկներով։ Քարտուղարը մինչև դուռը ճանապարհ դրեց նրան և յերբ վերադարձավ, ձեռքերը խփեց իրար և բացականչեց ապշած.

— Փա՜հ… Տեսա՞ր, Պատրիկ։ Ճանաչում ե՞ս՝ ով եր։ Յերեկ մեկել օրվա քելեխ ուտող տիրացուն եր, ե՜… Խմբագիրը պատմում ե, վոր յերբ յերեսփոխական ընտրության վերաբերյալ հայտարարություն եր բերում, չեր համարձակվում դռան շեմքից առաջ գալ, իսկ հիմա… իր պարտքն ե համարել այցելություն տալու խմբագրին… Ցիլինդրի տակ լրագիր դրեց, վոր չփոշոտվի… Տեսա՞ր նրա փողկապի ադամանդը… Գնացել ես գրող ես դառել, վա՜յ, գրողը տանի քեզ, Պատրիկ, գրո՜ղը… ինձ ել քեզ հետ,—ավելացրեց քարտուղարը և գնաց նստեց իր տեղը։

— Դու ինձ այս սաս. հիմա լուրը կգրես, չե՞,—հարցրեց Պատրիկյանը, հեգնորեն ժպտալով։

Քարտուղարը պատասխանի տեղ ձեռքերը տարածեց խաչելության պես, ուսերը վեր քաշեց կոմիկական տարակուսանքով, կարճ ժամանակ մտախոհության մեջ ընկավ, հետո հանկարծ նայեց ծոցի ժամացույցին և բացականչեց վոչ այնքան զայրացած, վորքան զարմացած.

— Ինչքա՞ն ել ժամանակ խլեց անիծվածը… Իսկ տպարանում նյութ չկա։ Գրիր, Պատրիկ, մինչև վոր տեսնենք ինչ ե դուրս գալիս այս եշի մարտիրոսությունից։

— «Մանի՛ր, մանիր, իմ ճախարակ…»—արտասանեց Պատրիկյանը, ծիծաղեց, առավ գրիչը և պատրաստվեց շարունակել սկսած հոդվածն անսիրտ և դառնացած, ինքն ել չիմանալով ում և ինչի դեմ։

Իսկ այդ միջոցին քարտուղարն արդեն գրում եր իր մանր ու փուռթկոտ գրերով «Մեր հայրենակից յերգիչ Զաֆինյանը հրավիրված ե այս սեզոնին յերգելու Թիֆլիսի արքունական թատրոնում։ Իտալիայում իր արվեստը կատարելագործելուց հետո, նա վերջին վեց տարվա ընթացքում յերգել ե Ռուսիայի զանազան քաղաքներում, ի միջի այլոց՝ Մոսկվայում և Պետերբուրգում, ու, տեղական թերթերի վկայությամբ, մեծ աջողություն ե ունեցել։ Թիֆլիսում նա առաջին անգամ բեմ ե յելնելու ամսույս 10-ին Չայկովսկու «Յեվգենիյ Անեգին» օպերայի մեջ, Անեգինի դերում»։



Նա ուզում եր մի քանի խոսքեր ևս ավելացնել, հասարակության ուշադրությունը հրավիրելով հայ տաղանդի վրա, բայց, մտածելուց հետո, բավական համարեց գրածը, նայեց Պատրիկյանին և, տեսնելով, վոր նա գրում ե շատ դանդաղ և անդադար գլուխը քորելով, ասաց.

— Պատրիկ ջան, շուտ արա; թե չե հրես վորտեղ վոր ե, կգա պատիկ հոգեառս և «նութ» կպահանջի։

Մտավ եքսպեդիտորը՝ պոստից ստացված մի կույտ լրագրներ և նամակներ ձեռքին։ Քարտուղարն ամենից առաջ վրա ընկավ նամակներին և սկսեց աչքի անցկացնել։ Նա այնքան վարժվել եր, վոր մի քանի տող վերևից, մի քանի տող մեջտեղից և մի քանի տող վերջից կարդալուց հետո հասկանում եր ամբողջ նամակի բովանդակությունը և իսկույն ել վճռում՝ կարելի՞ յեր տպել, թե վոչ։

— Վա՜հ, այս անիծվածները կարծես խոսքը մեկ են արել, վոր գրեն քահանաների, տիրացուների, յերեսփոխների և հոգաբարձուների մասին,—բացականչեց նա մի քանի նամակներ աչքի անցկացնելուց հետո։—Քահանա և տիրացու, տիրացու և քահանա, յերեսփոխ և հոգաբարձու, հոհաբարձու և յերեսփոխ… Կարծես ել ուրիշ բան չկա գրելու, յես ձեր…

Յեվ զայրացած քարտուղարի բերանից ակամա դուրս թռան ինտելլիգենտ մարդուն անվայել մի քանի խոսքեր քահանաներից, տիրացուներից, յերեսփոխներից և հոգաբարձուներից դուրս ուրիշ նյութ չգտնող թղթակիցների հասցեյին։ Նա վերցրեց այդ նամակները և ուզում եր պատռել ու ձգել գրասեղանի տակ դրված կամբյուղը, բայց հիշելով, վոր տպարանում նյութ չկա, մի կողմ դրեց։ Նույն կարգով շարունակեց աչքի անցկացնել մնացած նամակները և, ինչպես յերևում եր, այդ նամակները ևս անպետք եյին, վորովհետև նա իր յերկայն ու չոր մատներով ջղայնորեն վոլորում ու փետրում եր ցանցառ բեղի ծայրերը։ Այնուհետև, յերբ բոլոր նամակներն աչքի անցկացրեց պրծավ, խոնարհվեց սեղանի վրա և սկսեց ուղղել ամենից առաջ այն նամակները, վորոնք քիչ թե շատ հետաքրքրություն ունեյին։ Նա ջնջում եր անխնայորեն ահագին պարբերություններ, յերբեմն ամբողջ յերեսներ և տեղը գրում եր մի քանի տող միայն. ջնջում, փոխում կամ ավելացնում եր այս կամ այն տառը, պեդանտի նախանձախնդրությամբ և համբերությամբ պահպանելով լրագրի ուղղագրությունը, վորի ստեղծողն ինքն եր։

Մինչդեռ Պատրիկյանը, սուսուփուս նստած սեղանի ծայրին, շարունակում եր իր հոդվածը, այլ ևս ուշադրություն չդարձնելով

*սենյակում տիրող ցրտին: Մի ժամից հոդվածն արդեն պատրաստ էր: Նա գրած թերթերը դարսեց իրար վրա ըստ թվահամարների, դրեց քարտուղարի առաջ և վերկացավ:*

*— Ի՞նչ է, արդեն գնո՞ւմ ես,— հարցրեց քարտուղարը, գլուխը բարձրացնելով և նայելով նրան իր պլպլան ակնոցի միջից:*

*— Հա: Յես բոլորովին սառեցի այստեղ: Գնամ տեսնեմ ինչ եմ անում: Այսօր բան չեմ առել բերանս. թեյ էլ չեմ խմել: Տես այդ հոդվածը,— անսիրտ եմ գրել,— թե բանի նման է՝ տպիր, թե չէ՝ զամբյուղը գցիր: Ցտեսություն:*

*Յեվ Պատրիկյանը դիմեց դեպի դուռը, մի րոպե կանգ առավ նախասենյակում ինչ-վոր անվճռականության մեջ, մեքենայաբար թափ տալով ձեռքին բռնած գլխարկը, հետո կամաց յետ դարձավ և ասաց ավելի ևս կամաց, կարծես վախենալով, վոր մի յերրորդ անձ կարող է լսել.*

*— Չե՞ս կարող ինձ մի հինգ ռուբլի փոխ տալ:*

*— Հինգ ռուբլի՛,— բացականչեց քարտուղարը, կարծես ապշած, վոր նա այդքան մեծ գումար է պահանջում:*

*— Հա, խնդրում եմ: Սենյակիս վարձը պետք է տամ:*

*Քարտուղարն արագորեն հանեց իր մաշված-ջարդված պորտմոնեն, բաց արեց, միջի փողը — սև ու սպիտակ դրամներ — թափեց գրասեղանի վրա և սկսեց համարել, դրամները մեկ-մեկ քաշելով մի կողմը — 10, 20, 25, 35, 50, 55, 58, 60, 62 կոպեկ: Ահա իմ ունեցած բոլոր կապիտալը: Թե վոր սրանից 5 ռուբլի դուրս կգա, վերցրու: Հինգ ամիս է՝ ռոճիկ չեմ ստացել, կհավատա՞ս թե չէ…*

*Պատրիկյանը ձեռքով հուսահատական մի շարժում արավ և դուրս գնաց:*

---

— Ի՞նչով էր զբաղվում Պատրիկյանը:

— Տվեք նրա տանտիրոջ ընդհանուր բնութագիրը:

— Ո՞վ էր Զափինյանը: Համեմատեցեք նրան Պատրիկյանի հետ:

— Բացասակա՞ն տիպ է թերթի քարտուղարը, թե դրական: Ինչո՞ւ:

— Պատահակա՞ն էր արդյոք Պատրիկյանի «նեղ օրը», թե դա բխում էր հասարակական այն պայմաններից, վորոնց մեջ ապրում էր նա:

---

— Այս պատմվածքից ելնելով՝ կարելի՞ է արդյոք վորոշ գաղափար կազմել այն դրության մասին, վորի մեջ ապրում էին Պատրիկյանի նման ինտելիգենտները բուրժուական հասարակության պայմաններում:

— Բնորոշեցեք այդ դրությունը:

— Պատմվածքի համապատասխան մասից օգտվելով ներկայացրեք, թե ի՞նչ հարցերով էր զբաղվում հայ մամուլը բուրժուական հասարակության պայմաններում:

---



— Ինչպես է գրված այս պատմվածքը. հաջո՞ղ է զարգացնում հեղինակն իր նյութը, թե վոչ:

— Կա՞ն արդյոք ավելորդ տեղեր:

— Ո՞ւմ է համակրում հեղինակը՝ Պատրիկյանի՞ն, թե Զափինյանին:

— Մանրամասն վերլուծության յենթարկեք հեղինակի լեզուն, նկարագրելու յեղանակները. առանձին ուշադրություն դարձրեք այն ածականների վրա, վորոնցով հեղինակը բնորոշում է իր հերոսներին:

— Ուշադրություն դարձրեք այն հանգամանքի վրա, վոր հեղինակն ամեն կերպ խուսափում է իր հերոսների մասին իր սեփական կարծիքը հայտնելուց:

---

## ԹԵ ԻՆՉ ՅԵՂԱՎ ՀԵՏՈ, ՅԵՐԲ ՇԱՔԱՐԱՄԱՆԻՑ ՅԵՐԿՈՒ ԿՏՈՐ ՇԱՔԱՐ ՊԱԿԱՍԵՑ

*Մի ընդարձակ ամայի բակում յետին կողմը կանգնած էր դրոգապան Յագորի հնորյա տնակը՝ բաղկացած ընդամենը մի մեծ սենյակից, վորի դուռը բացվում էր ուղղակի դեպի բակը: Տնակի մի կողքից կպած էր տախտակամած խոհանոցը, իսկ խոհանոցի կողքին մի ընդարձակ ծածկոց, վորի տակ Յագորը գիշերները կապում էր իր ծանրաշարժ դրոգի ամդահա ձին: Բակը փողոցից բաժանվում էր տախտակի ցանկապատով, վորի տակ մի անկյունում կիտված էր ձիու ամիսներով հավաքված աղբը: Մինչդեռ բակի մնացած մասում մի ծեղ անգամ չէր կարելի գտնել — այնքան մաքուր էր, վորովհետև Յագորի կինը - Անանը օրը լուսանար թե չէ՝ ամենից առաջ ձիու աղբն էր հավաքում և բակն ավլում:*

*Զարմանալի մաքրություն էր տիրում նաև ներսը, սենյակում: Հնամաշ, տեղ-տեղ թելերը դուրս թափված կապերտը ցածրիկ թախտի վրա միշտ ավլած էր: Հողի հատակն անդադար ջրվելուց խոնավացել, պնդացել, գորշ գույն էր ստացել և այնքան մաքուր էր, վոր, ինչպես ասում են, յուղ թափեիր՝ կհավաքվեր: Թախտի, յերկու փոքրիկ պատուհանների, ծալքի և թարեքի սպիտակ միտկալի վարագույրները և չորս հատ հնաձև աթոռների սպիտակ յերեսները փայլում եյին ձյունի մաքրությամբ: Մինչև անգամ պատի տակ դրված, տակը ջրակալած և ամողջապես ջուր լացող կարմիր խեցեղան ամեն անգամ ջրով լցվելիս խնամքով վողողվում, մաքրվում էր: Ճանճ ասված բանը կարծես գոյություն չուներ այդ սենյակում, ուր ներքնատան մի տեսակ ծանր գոլություն էր տիրում: Հաճախ կարելի յեր տեսնել միայն մի վորևե հոթիս, վոր դուրս գալով հայտնի չե վորտեղից՝ լույսից վախեցած վազում էր թախտի տակը մտնելու, կամ մի նամաճիճու, վոր տրխկալով ցած էր ընկնում առաստաղից մեջքի վրա և սպիտակ փորը վերև արած՝ յերկար ժամանակ վոտները բալդի բալդի չէր անում, մինչև վոր աջողում էր շուռ գալ և ծանր*

ու բարակ, կարծես խոր մտածմունքի մեջ, սկսում եր ուր-վոր գնալ։

Ամառվա տոթ յերեկո յեր։ Ոդն այնքան անշարժ եր, վոր պատուհանների վայր թողված վարագույրներն ամենևին չեյին շարժվում։ Անանը նստած եր հատակին մի չիլ վրա և յերեխային վեր եր կացնում որորոցից։ Նա դեռևս շատ ջահել կին եր, հազիվ քսան տարեկան, չթի հնամաշ դերիայով և գլխին մաքուր, սպիտակ աղլուխ փաթաթած։ Կազմվածքն այնքան նիհար եր, վոր պարզորոշ նկատվում եյին թիակների սուր ծայրերը, վորոնք դուրս եյին ցցվել բարակ դերիայի տակից և մեջքի վրա, վերևից ներքև, տաշտանման մի փոս եյին գոյացրել։ Մի տեսակ սարսափի արտահայտություն կար նրա տեղ-տեղ կարմրատակած, տեղ-տեղ կապտած և տեղ-տեղ ուռած դեմքի վրա, մանավանդ տարորինակ կերպով չռածքարացած աչքերի մեջ, վորոնք կարծես ծայրահեղ ապուշ տարակուսանքով հարցնում եյին շարունակ՝ «ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ...» ու վոչ մի տեղից պատասխան չեյին ստանում։

Լուռ ու մունջ առավ յերեխային, դրեց գոգը և սկսեց հագցնել։ Յերեխան ծիծաղկոտ աչիկներով նայում եր նրա քարացած դեմքին և, ինչ-վոր թոթովելով, կարծես քնքշանք եր խնդրում մորից. բայց մայրը կարծես չգիտեր, թե ինչ ե քնքշանքը։ Սակայն, յերբ յերեխան փամփլիկ ձեռքը մեկնեց և սուր յեղունգներով բռնեց նրա քթից, նրա դեմքի վրա ժպտի նման մի բան յերևաց. նախ համբուրեց յերեխայի ձեռքը, գլխի մի թեթև շարժումով քիթն ազատեց նրա ձեռքից, հետո խոնարհվեց և շրթունքն ամուր ու կաթոգին սեղմեց նրա թխլիկ այտին։ Բայց և այնպես սարսափը քարացած եր նրա դեմքի վրա և աչքերի մեջ։

Ներս մտավ մի կին միջին տարիքով, սև հագուստով, կարմիր քրտնած դեմքով, մի սև շալ ձեռքին։ Ամբողջ թաղում և թաղի սահմաններից էլ դուրս նա հայտնի յեր Գիժ-Հոռոմսիմ անունով։ Յեվ իզուր չեր, վոր վաստակել եր այդ անունը։ Կիսախելագարի մեկն եր, վերին աստիճանի չար և կռվարար. որ չեր անցնի, վոր մեկի հետ չկռվեր — ով ուզում ե լիներ այդ մեկը՝ հարազատ, հարևան թե անծանոթ։ Տարին տասներկու ամիս անեծքներ եյին միայն, վոր թափվում եյին նրա բերանից։ Անիծելիս շատ անգամ կատարյալ բանաստեղծ եր դառնում. այնպիսի հզոր ու ազդու, յերբեմն և կնոջ բերանին անսազ անեծքներ ու հայհոյանքներ եր հորինում, վոր վոչ վոք վոչ մի տեղ չեր լսել։ Յեվ ամբողջ թաղը սարսափում եր նրա բերանից։ Թաղական վոստիկանն անգամ, յերբ հարևանները գնում եյին Գիժ-Հոռոմսիմից գանգատվելու, ձեռքը թափ եր տալիս և հեռանում։



Թաղում թեև կային ուրիշ միքանի հայտնի կռվարար կանայք ևս, բայց Գիժ-Հոռոմսիմը վաղուց տվել-անցել եր ամենքից թե իր ճարտար լեզվով, թե անեծք-հայհոյանքով և թե նույնիսկ ֆիզիկական ուժով, վորին շատ անգամ դիմում եր բերանացի կռվից հետո։

Ցածրահասակ, լղար, ծայր աստիճան արագաշարժ՝ տեղն ու տեղը կրակ եր Գիժ-Հոռոմսիմը։ Պստիկ պլպլան աչքերը ջղային անհանգստությամբ այս ու այն կողմն եյին դառնում շարունակ ծտի գլխի պես, — կարծես շարունակ կռվի առիթ եր վորոնում։ Կռվելիս նախ յերկար ժամանակ լեզվակռիվ ու անեծքակռիվ եր անում համարձակ հակառակորդին սկզբում հանդիստ, հետո արագորեն տաքանալով, վերջը հանկարծ կատվի պես վրա յեր ընկնում նրան և յեթե աջողում եր բռնել նրա մազերից, ձիգ եր տալիս բոլոր ուժով, իսկ յեթե վոչ, սկսում եր կմշտել և վոլորել նրա մարմինը իր յերկայն, չոր մատների սուր յեղունգներով, վորոնց գծած ստորակետներն արնակալում, ուռչում-կապտում եյին և յերկար ժամանակ չեյին ջնջվում։

Գիժ-Հոռոմսիմը Անանի սկեսուրն եր։

* * *

— Ը՜ր, տափը դնեմ քեզ, տափը, վոնցոր փետացել ես եդ տափին, — մրթմրթաց նա մտնելուն պես, պստիկ, չար աչքերը վոլորելով հարսի վրա։

Անանն այն աստիճան սովորել եր այդպիսի անառիթ անեծքների, վոր մինչև անգամ չնայեց սկեսոր կողմը, այլ անտարբեր ու դանդաղ՝ շարունակում եր հագցնել յերեխային։

Գիժ-Հոռոմսիմը շալը շպրտեց թախտի վրա, վորի ժամանակ նրա արագաշարժ աչքերը հանկարծ մի վայրկյան կանգ առան պատուհանների վայր թողած վարագույրների վրա։

— Աղջի, բա եդ քոռացած աչքերովդ տեսնում չե՞ս՝ արևը մեր ա մտել, խի՞ չես փարդեքը յետ քաշել, վոր միքիչ հով մտնի, — ասաց նա։ — Ա՛յ վոչ ունենամ քեզ պես հարսը, վոչ, չորանաս կպչես եդ տափից, վոնցոր չորացել կպել ես։

Ու, անեծքները շարունակելով, Գիժ-Հոռոմսիմը բարձրացավ թախտը, պատուհանների վարագույրները գցեց բաց փեկերի գլխին, հետո ուզում եր իջնել, բայց մի բան մտաբերելով՝ արագ մոտեցավ թարեքին, յետ քաշեց վարագույրը և սկսեց մեկ-մեկ համարել թիթեղյա մատուցարանի վրա թելի պարագաների կողքին դրված շաքարամանի միջի շաքարի կտորները։ Առավոտյան տնից դուրս գնալիս շաքարամանի մեջ ճիշտ տասը կտոր շաքար եր թողել նա, բայց այժմ, համարելուց հետո, տեսավ՝ յերկու կտոր պակաս ե։ Ու ճտի նման ցած թռավ թախտից։

— Ա՛յ քեզ… ա՜յ, ա՜յ, ա՜յ…

Այս խոսքերով նախ յերկու ձեռքով պինդ խփեց Հարսի գլխին, հետո ծայրահեղ կատաղությամբ ատամները սեղմած՝ սկսեց սուր-սուր յեղունգներով կմշտել նրա դեմքը, ձեռքերը, կողերը—ուր վոր պատահեր, ընդսմին ամեն մի կմշտոցի հետ յեղունգների մեջ բռնած կաշին վոլորում եր և ձիգ տալիս։

— Ը՜ը…,—ցավից մղկտաց Անանը և, յերկու ձեռքով ամուր գրկելով յերեխային, խոնարհվեց նրա վրա։

— Առանց ինձ չայ ել ես խմում, հա… Ա՛յ քեզ… Տասը կտոր շաքարից ութն ես թողել, ութ կտոր դառնաս դու… Ա՛յ քեզ, ա՜յ, ա՜յ…Շատ եժան ենք առնում, հա՞, վոր քոռ ու փուչ ես անում, քոռանաս ու փչանաս դու…այ քեզ, ա՜յ, այ…

Ու սուր յեղունգները դանակի պես ակոսում եյին Անանի վտիտ մարմինը։

— Վըի, վըի՜…,—մղկտում եր Անանը ցավերից գալարվելով, և նրա ձեռքերը մեքենայաբար ավելի ու ավելի եյին սեղմում յերեխային, և նա ավելի ու ավելի յեր խոնարհվում յերեխայի վրա։ Իսկ յերեխան սաստիկ ճչում եր նրա գրկին։

Գիժ-Հոռոմսիմի կատաղությունը գնալով սաստկանում եր։ Յերկու ձեռքի սուր յեղունգները կարծես անզոր եյին նրա բոլոր բարկությունը թափելու։ Նրան կատաղեցնում եր առանձնապես այն հանգամանքը, վոր Անանը համարյա թե ձայն չեր հանում, կարծում եր, թե ուրեմն Հարսը բոլորովին ցավ չի զգում, մինչդեռ սիրտը հովացնելու համար ուզում եր, վոր Անանը ճչար, աղաղակեր, լաց լիներ, ոգնություն կանչեր, ուստի աշխատում եր խփել կամ կմըշտել նրա մարմնի այնպիսի մի նրբազգաց տեղ, վոր Հարսն ստիպված լիներ վերջապես բարձրաձայն արտահայտել իր ցավը։ Բայց չե, Անանը համառորեն ձայնը փորն եր գցել և, նրա առջև խոնարհված, զսպած հառաչանքներ եր միայն արձակում, վոր Գիժ-Հոռոմսիմը հազիվ թե լսում եր իր կատաղի ծկլթոցների և յերեխայի լացի մեջ։

Տեսնելով, վոր խփելով և կմշտելով վոչինչ չի լինում, Գիժ-Հոռոմսիմը պոկեց Հարսի գլխից սպիտակ աղլուխը, բռնեց նրա ցանցառ մազերի յերկու հյուսերից մեկի ծայրից և ձեռքի ուժգին թափով ձիգ տվեց հանկարծ։

— Ասա՜…, -յերկար ու սուր ճչաց Անանը և, սաստիկ ցավից աչքերը փակելով, յետ ընկավ մեջքի վրա։ Նրա թուլացած ձեռքերը բաց թողին յերեխային։ Յերեխան նրա գոգից գլորվեց ընկավ գետնին և սկսեց ավելի ճչալ։



Հարսի սուր ճիչը, վերջապես, փոքր ինչ հովացրեց Գիժ-Հոռոմսիմի սիրտը. նա թողեց Հարսի մազերը, վերցրեց յերեխային և շարունակելով անեծքներ թափել, հոգնած նստեց թախտի վրա ու սկսեց ձեռքերի մեջ որորել յերեխային, վոր սուս կացնի։ Նրա պստիկ չար աչքերը դեռևս պլպլում եյին խելագարի կատաղությամբ. քըրտինքը վրա յեր տվել նեղ ճակատին. նա հևում եր յերկար տեղ վազած մարդու նման

Իսկ Անանը, աչքերը փակ, ընկած եր հատակին մեջքի վրա և նվում եր միալար հազիվ լսելի ձայնով։

*
* *

Ամառվա յերկարատև, անտանելի տոթ որը նոր եր մթնել։ Պառավ Հեղնարը և նրա յերկու փոքրիկ թոռները—մեկը տղա, մյուսն աղջիկ—ծալապատիկ նստոտած եյին թախտի վրա և հայտնի չե՝ ճաշ թե ընթրիք եյին ուտում, վորովհետև իրենք ել չգիտեյին՝ վո՞րն եր իրենց ճաշը և վո՞րն ընթրիքը։ Կապույտ սուփրի վրա պլպլում եր մի փոքրիկ լամպ, վոր չմաքրած ապակու միջից պղտոր լույս եր սփռում նրաց հոգնատանջ, քրտնած յերեսներին։ Նրանց կերածը փռան սև հաց եր և կիսախակ մի ձմերուկ, վորի գույնը դըժվար եր վորոշել՝ սպիտա՞կ եր, թե դեղին։ Լամպի լույսն իր շուրջը հավաքել եր անհագին թվով մանր մժեղներ, վորոնք պտույտ եյին անում տաք ապակու շուրջը, շատերն այրվում թափվում եյին ներքև, շատերն ել կպչում թաց ձմերուկից։

Պառավ Հեղնարը ցամաքած, կուչ յեկած մի կին եր դեմքի անհամար խորշոմներով։ Հարատև չքավորությունն ու բախտի ծանր հարվածները ծռել եյին նրա մեջքը և իրենց անջնջելի կնիքը դրոշմել նրա դեմքին և թախծալի աչքերի մեջ։ Թոռները—քույր ու յեղբայր—վորբ եյին և մնացել եյին պառավ տատի խնամքի տակ։ Այդ յերկու փոքրիկ յերեխաներն եյին, վոր պառավ Հեղնարին յեռանդ եյին ներշնչում ապրելու և աշխատելու։ Բայց պառավ Հեղնարը մի ավելի մեծ վիշտ ուներ, այդ՝ յերկու վորբերի մեծ քրոջ—Անանի վիճակն եր իր կիսախելագար սկեսոր և նրանից վոչ պակաս վայրագ ամուսնու ձեռքին։

Պառավի մշտական պարապմունքը լվացարարությունն եր և հաց թխելը։ Շատ լվացք անելուց և թոնրի մեջ հաց կող տալուց նրա դեմքի և ձեռքերի կաշին յեռացրած ջրի և թոնրի կրակի մեջ մրկվել, չորացել, ճաքճքել, մագաղաթ եր դարձել։ Լվացք անելիս փոքրիկ թոռներն ոգնում եյին տատին. մեկը փայտն ու տաշեղները խտտած, մյուսը կաթսան ուսած լվացքի թաբախը քարշ տալով

առաջնորդում էյին լվացքի ծանր կապոցը շալակած տատին դեպի գետափ։ Յեվ այնուհետև, յերբ տատը կիզիչ արևի տակ Թաքախի մոտ պպզած՝ ճմռում եր լվացքը, նրանք ծակ տոլչով ջուր էյին մատակարարում մերթ կաթսայից Թաքախին, մերթ գետից կաթսային։ Իսկ յերբ պարապ էյին մնում, աղջիկը դերիայի փեշերը շեքը հավաքած, տղան վարտիկը մինչև ազդրերը վեր քաշած՝ մտնում էյին գետի վճիտ ջուրը և լպրծուն սալ քարերից ու խճից թմբեր կազմում։

Այդ յերեկո յել, ամբողջ օրը կիզիչ արևի տակ գետափին անցկացնելուց և լվացքը, կաթսան ու Թաքախը տիրոջը հանձնելուց հետո, նոր էյին վերադարձել տուն և հոգնած ու քաղցած՝ հաց էյին ուտում, վոր շուտով քնեն և առավոտը վաղ-վաղ դարձյալ գործի գնան։

— Նանի, վոր ուտես, կորիզն ինձ տու,—ասում եր Թոռներից մեկը, ձմերուկի կորիզները հավաքելով իր առջև։

— Սուտ ա ասում, Նանի ջան, ինձ տու,—ասում եր մյուսը, նույնպես կորիզները հավաքելով իր առջև։

— Հրեդ, դու քիչ ունե՞ս,—ասում եր առաջինը։

— Դու ավելի շատ չունե՞ս—առարկում եր յերկրորդը։

— Ո՞ւր ա, հը՛հ, ո՞ւր ա. շատ ըլի՝ ջսանն էլի։

— Քսանն ել կըլի, հլա հարուրն ել։

— Հա վո՞նց չե. հարուրը հրեդ քունը կըլի ու։

— Դե, քիչ բասբաս մտեք, գլուխս ցավում ա,—բարկացավ տատն իրեն հատուկ բարեսրտությամբ։—Յանի ինչ եք տեսել եդ կորիզի մեջ, վոր ամեն հետ իրար միս եք կրծում։ Կեսը մեկիդ կտամ, կեսը մեկելիդ։

*
* *

Պառավ Հեղնարը կորիզը յերկու Թոռների մեջ բաժանելու վրա յեր, յերբ հանկարծ ներս մտավ Անանը յերեխան խատին։ Մտավ շտապով, հուսահատ-վճռական քայլերով։

— Նանի, ախր իմ մեղքը վո՞նց ընկար, վոր տարար ինձ են գժոխքը գցեցիր—բացականչեց նա լացակումած, յերեխան գրեթե գցելով Թախտի վրա։—Քար ե՞մ, յերկաթ ե՞մ, վոր դիմանամ։ Աստված ինձ ել մարդ ա ստեղծե՞լ, թե շուն...

Նա նստեց Թախտի վրա և, սրտի փղձուկը չկարողանալով բռնել, սկսեց սաստիկ, ցնցողաբար հեկեկալ, դեմքը ձեռքերով ծածկած։

Նանն իր յերկու պստիկ Թոռներով կորիզն ել մոռացավ, ամեն



բան ել։ Սկզբում, յերբ Անանը ներս մտավ այնքան անսովոր կերպով, պառավ Հեղնարը խիստ վախեցավ, բայց յերբ Անանի խոսքերից իմացավ բանը, մնաց նստած տեղը ցամաքած, լուռ ու վշտահար։

— Ել ինչ արեց, աղջի -հարցրեց նա։

— Չես գիտի՞ ինչ կանի,—պատասխանեց Անանը հեծկլտանքի միջից։—Ջանիս վրա ել տեղ չմնաց, վոր արենլվիկ չածեց, ել գլխիս վրա մազ չմնաց, վոր չպոկեց, ել գլխումս ղուղ չմնա՛ց—են-քան Թակեց... Մինչև յե՞րբ... Մի հոգի ունեմ, դե են ա մի անգամ հանի, պրծնեմ, էլի... Թե չե, ել հալ կա՞, վոր դիմանամ...

— Ա՛յ, վոչ եր ըլել են օրը, սև օր եր մԹնել են որն իմ գլխին, վոր դու մտար եդ քարուքանդ տունը,—հառաչեց Հեղնարը։—Քու սաբաբ ըլողի ջանը կրակ ընկնի, վո՞նց վոր կրակ ա ընկել իմ ջանը։ Ախր են գիժ սրտամեռն ինչ ա ուզում քեզանից, վոր ըտենց կրծում ա միսդ, շունը կրծի նրա միսը։

— Ի՞նչ ա ուզում,—դառնությամբ պատասխանեց Անանը, գլխի աղլուխի ծայրով սրբելով աչքերը։—Ե՛ն ա ուզում, վոր ասում ա՝ մի՛ ուտի, մի՛ խմի, մի՛ հագնի, մի՛ մաշի,—հենց իմանաս մանանա յա Թափվում ինձ հըմա յերկնքից։

— Ըսոր ելի գժվե՞ց։

— Գժվեց Թե ընե՞նց... Առավոտը վերկացավ, կորավ գնաց մեռելի Թաղման։ Զունքի ինքը չայ չեր խմելու, չԹողեց վոր սամավար գցեմ։ Յագորն ել առավոտը լիսանում ա Թե չե, դըրոգը լծում գնում ա առանց չայ խմելու։ Դե իմ գլուխը ջհաննամը, չայի հըմար սիրտս շատ ել չի գնում,—ես երեխեն եր լաց ըլում, սոված եր։ Զուտելուց ծիծս չորացել կպել ա դոշիս։ Գնացել հարևաններից մի չայնիկ ջուր եմ բերել, յերկու կտոր շաքար եմ գցել, հաց բրԹել ուտացրել, վոր անջախ ձենը կտրել ա։ Սաղ օրը կորած եր։ Իրիկնապահին քելեխը գահրումար արած, հարբած-տրաքված տուն յեկավ ու յեկած-չեկած հլա մի լավ անըծքակոխ արավ, յեննա վրա ընկավ Թարեքին։ Տեսավ երկու կտոր շաքար պակաս ա,—խո գիտես, շաքարն ել ու ամեն բան ել համբրած ունի տանը,—վո՞նց Թե, ասում ա, յերկու կտոր շաքար ես բանացրել առանց ինձ,— վո՞նց վոր մի կատղած շուն՝ վրա պրծավ ու ջանիս վրա մի սաղ տեղ չԹողաց. խփեց, գզգզեց, ծակծկեց... Ջանս վոր բաց անեմ, չես կարա մտիկ անի, կասես կեծացրած շամփուրներով դաղդըղել են...

Փղձուկը նորից բռնեց Անանին, բայց նա կարողացավ զսպել իրեն։

— Սրանից յետը, վոր սպանես ել, Նանի, յես ել ընտեղ գնացողը չեմ.—ավելացրեց դողդող, բայց վճռական ձայնով։—Կգնամ

Քունը կընկնեմ կխեղդվեմ, հոգիս սատանի փայ կանեմ ու ընտեղ չեմ գնա։ Հերիք ա. հոգիս հրես եկել ա դեմ ա առել բկիս։ Իմ մատաղ օրերը սև ու մութ ա արել։ Մի օր ուրախություն չեմ տեսել։ Սաղ իրեք տարի վոնցոր շամփուրի վրա դնես խորովես, ընենց խորովել ա ինձ, ինքը ջոկ, տղեն ջոկ։ Ինքը ծեծել, ջարդել, մսերս գզգզել ա—հերիք չի, տղեն ել հարբած-տրաքված եկել ա պակասը թամամացրել։ Ընչի՞, ինչ եմ արել։ Մի անլիզու հայվանի պես ընկած եմ ինձ հըմար. տալիս են՝ ուտում եմ, չեն տալի՝ ձեն չեմ հանում։ Սաղ օրը հոգիս դուրս ա գալի Քռից ջուր կրելով, ձիու թրիքը հավաքելով, բակն ավլելով, տունը տեղավորելով, նրանց կարկատաններն անելով, ել ինչ են ուզում։ Տունը վոր շուն ա, շանն ել են չարչարանքը չեն տա, ընչոր ինձ. բա մի շան ղադար ել չկամ։ Հրես ես ըրեխի հըմար հոգի յեն տալիս, բա սրա հըմար ելա խնայեն, ե՞, ինձ։ Վա՛յ, աստուծ ջան,—բացականչեց Անանը, արտասվալից աչքերը գցելով առաստաղին,—ի՞նչ կլլի հոգիս առնես պրծնեմ...

Նրա ձայնը բոլորովին դողդողաց և հանկարծ կտրվեց, գլուխն ընկավ տախտակի պես հարթ կրծքի վրա, և ուժգին հեկեկանքը նորից սկսեց ցնցել Նրա վոսկրացած ուսերն ու մեջքը։

Փոքրիկ քույրն ու յեղբայրը սուս արած՝ նայում և լսում եյին Նրան մանկական լուրջ հետաքրքրությամբ. մանուկը չոչ անելով մոտեցել եր սուփրին, վերցրել ձմերուկի մի կլեպ և աշխատում եր կրծել իր նոր դուրս յեկած պստիկ ատամներով։ Իսկ պառավ Հեղնարը մնացել եր տեղն ու տեղը ցամաքած, չիմանալով ինչ ասի, վոր գոնե միքիչ մխիթարական լինի սկեսոր և մարդու ձեռին այրված-դաղված թոռանը։ Վշտից և կարեկցությունից Նրա պառավ գլուխն օրորվում եր սաստիկ, և բարի աչքերը լցվել եյին արտասուքով։

— Աղջի, ըտենց վոր խոսում ես, սաղ ջանս կրակ ա ընկնում, ախր,—ասաց նա լացակումած։—Ասում ես, թե ել չես գնա ընտեղ, յեննա դրանով կպրծնե՞ս են կապելու գժերի ձեռից։

— Չեմ պրծնի, ավելի լավ,—պատասխանեց Անանը, շարունակելով հեծկլտալ։—Սրանից ավելի ինչ պտի անեն։ Սպանե՞ն։ Թող սպանեն։ Ջանս ելա կդնջանա։ Ել խո ամեն օր դաղդղորիկ չեն ածի։ Գիշերները չեմ կարում քնի մղկտոցից ավելացրեց նա, և արտասուքը նորից սկսեց գլգլալով թափվել Նրա աչքերից։

Պառավ Հեղնարն այլևս չկարողացավ դիմանալ։ Նրա գլուխը դադարեց օրորվելուց, հանգած աչքերը վառվեցին հուսահատական վճռականության կրակով, և պառավ մարմինն սկսեց դողդողալ ներքին բուռն զայրույթից։



— Լա՛վ, մնա։ Ել չգնաս, ել չգնաս են կապելու գժերի տունը,—բացականչեց նա։—Յես Նրանց աղջիկ չեմ տվել, վոր համ քոծի պես բանացնեն, համ ել տակները դնեն ջարդեն։ Մումի պես հալել մաշել են, հալվի ու մաշվի Նրանց ջանը։ Անտեր չես, յես հլա չեմ մեռել։ Կաց, ել չգնաս։ Հալբաթ մի կտոր հաց ել քեզ համար կճարենք, վոր...

Խոսքը չվերջացավ պառավի բերանում. գժված գոմշի պես ներս ընկավ մի ահագին մարդ, այնքան ահագին, վոր ներս ընկնելուն պես լցրեց իրենով այդ փոքրիկ խրճիթը։ Անանի մարդն եր, դրոգապան Յագորը, իր դրոգի պես կոպիտ ու անտաշ, իր հսկա ձիու պես խոշոր ու ջլապինդ։ Գլխին գդակ չուներ, արևառ յերեսն այնքան թավամազ եր, վոր միրուք ու բեղերը կարծես խառնվել եյին իրար կուրծքը բաց եր, կապույտ արխալուղով և այնչափ լայն շալվարով, վոր յեթե ոտերը հաներ անկրունկ յերկարաճիտ լափչիների միջից, կկարծեյիր, թե կանացի շրջազգեստ ունի հագին։ Կատաղությունից փայլում եյին Նրա ահագին աչքերը թավամազ սև հոնքերի տակ, մեծ քթի պնչերը փռնչում եյին հոգնած ձիու ռընգների պես լայնացած։

Կինը Նրան տեսնելուն պես վայրկենաբար դադարեց լալուց, վեր թռավ տեղից և վազեց կպավ պատին մեռելի պես գունատված։

— Յես քո...,—գոռգոռաց մի սարսափելի հայհոյանք, և Յագորն սպառնագին միքանի քայլ արավ դեպի նա։

Պառավ Հեղնարը վեր թռավ տեղից և ուզեց կտրել Նրա ճանապարհը, բայց նա ձեռքի մի թեթև շարժումով նետեց Նրան նորից դեպի թախտը և իր հսկա հասակով գնաց կանգնեց վախից տերևի պես թպրտացող կնոջ առջև։

— Վա՛յ, չխփես, Յագոր ջան... հոգուդ մեռնեմ, չխփես, ջանս ցավում ա,—աղաչեց Անանը գլուխը յերկարացրած և յերկու ձեռքով պինդ գրկած իր վոսկրացած ուսերը։

— Չխփե՞մ, չխփե՞մ,—վորոտաց Յագորը կատաղի աչքերը փայլեցնելով Նրա վրա։—Բա ինչ անեմ։ Աչքերդ պաչե՞մ, վոր են պառավը քնած՝ թագուն վեր ես կացել յեկել, տունն անտեր թողել։ Փախել ես, հա՞, տանից։ Զառը ջհանդամը թե փախել ես, շատ ել դարդ չեմ անի քեզ հմար,—ես յերե՞խին ուր ես բերել։ Հը՞։ Խո չե՞ս ուզում ես սհաթին ճիվը ճվից հանեմ, ճիճվի պես ճխլեմ վոտիս տակը։ Հը՞։ Ինձ չես ճանաչո՞ւմ։ Ը՛ըը, յես քու...

Յեվ մի ահագին բռունցք, կարծես յերկաթից ձուլված, ծանր ու դանդաղ հորիզոնական ձևով գնաց ու յեկավ դիպավ կնոջ կողքին։

Անանը մինչև անգամ չճչաց, այլ միայն հանկարծ բերանը բաց արեց, ներս ծծեց ոդը մի տարորինակ հեքով, այնպես, ինչպես ջրից հանած ձուկը, հետո ոլորվեց և կամաց, փալասի պես, վայր ընկավ գետին:

— Ա՛, քո սիրտը չմեռնի, եդ ի՞նչ արիր,—ճչաց Հեղնարը սարսափած և վազեց ոգնության:

Ցագորը մի րոպե թավամազ հոնքերի տակից նայեց իր վոտների առջև թավալված կնոջ չռած աչքերին, հետո, շարունակելով հայհոյանքները, մոտեցավ յերեխային, վորը շարունակում եր կրծել ձմերուկի կլեպը. վերցրեց և առանց շտապելու դուրս գնաց:

Պառավ Նանը խոնարհվեց Անանի վրա և սարսափից քարացավ:

Անանն ընկած եր գետնին՝ վորկորը տարորինակ կերպով վեր ցցած. չռած աչքերը նայում եյին առաստաղին ապակու բութ փայլով, բաց բերանից արյուն եր հոսում. հեքը կարծես քարացել եր այնտեղ...

---

Կնոջն սպանելու համար մեղադրվող դրոգապան Ցագոր Նախնակյան քննության ժամանակ դատական քննչի հարցուփորձերին պատասխանելով՝ ասաց.

— Մի մուշտի տվի, ելի, խո ուրիշ բան չեմ արել:

---

— Ի՞նչ միջավայր ե նկարագրված այս պատմվածքում:
— Ի՞նչ պայմանների հետեվանք եյին այն կոպիտ բարքերը, վոր նկարագրված են այստեղ:
— Բնութագրեք Գիժ-Հոռոմին, Հեղնարին, Անանին յեվ Ցագորին: Սրանց սոցիալական դրությունը:
— Գիտակցո՞ւմ եր արդյոք Ցագորն իր արարքի գազանայնությունը:

---

— Հաջողվե՞լ ե արդյոք հեղինակին համոզեցուցիչ կերպով ցույց տալ ընթերցողին, վոր կարող եր այս դեպքը պատահել:
— Ի՞նչու յեք դուք համարում, վոր դա հնարավոր եր: Արդյոք դեր չի՞ խաղում այստեղ հեղինակի պատմելու յեղանակը:
— Ուշադրությամբ վերլուծեցեք յեվ վորոշեցեք, թե տարբերվո՞ւմ ե արդյոք հեղինակի լեզուն իր հերոսների լեզվից: Վո՞րն ե այդ տարբերությունը:
— Այստեղ յեվս հեղինակը խուսափո՞ւմ ե արդյոք իր հերոսների մասին սեփական կարծիքներ հայտնելուց, թե վոչ:
— Ինչո՞ւ յե նա այդ անում յեվ լավ ե դա գրվածքի գեղարվեստականության տեսակետից, թե վոչ:

---

— «Աննա Սարոյան», «Նեղ օրերից մեկը» յեվ այս պատմվածքների հիման վրա վորոշեցեք, թե սոցիալական ի՞նչ խավեր ե նկարագրում Նար-Դոսը յեվ վորքա՞ն ե հաջողվում դա նրան:
— Ի՞նչն ե ամենից շատ ձեզ դուր գալիս նրա գրվածքներում:



# ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

## ՔԱՂԱՔԸ ՅԵՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

(Հատված «Յերկիր Նայիրի» վեպից)

Նայիրյան այդ հնամյա քաղաքն ամեն ինչով նման եր Նայիրյան բոլոր հին ու նոր քաղաքներին. փոքր եր, վոչ բազմամարդ, խարխուլ ու փոշոտ. ժամանակակից լեզվով այդպիսի քաղաքներին ասում են—գավառական հետամնաց քաղաք: Յե՞րբ ե շինված Նայիրյան այդ հին քաղաքը—աստված ինքը գիտե. բայց ասում են, վոր այդ քաղաքը հիմնողները յեղել են հին Նայիրցիներ.—գուցե խալդեր լայնաթիկունք ու ջլաբազուկ, գուցե՝ գանգրահեր ուրարտացիներ: Սակայն պատմական այդ հանգամանքը, կարծում ենք, այնքան ել կարևոր չե, վորովհետև խալդական կամ ուրարտական այն հին քաղաքից հիմա յերևի տեղն ել չե մնացել. Նրանց այն կավե, գետնափոր խրճիթների փոխարեն կանգնած են հիմա Նայիրյան այդ փոքրիկ քաղաքում քարե միհարկանի, յերկհարկանի և նույնիսկ յերեքհարկանի շինություններ՝ տներ ու խանութներ, վորոնք նույնքան են նման ուրարտական այն հին խրճիթներին, վորքան քո քիթը, ընթերցող... Եյֆելյան աշտարակին: Այդ նոր տներից ու խանութներից միքանիսը նույնիսկ թիթեղե կարմիր կամ կանաչագույն կտուրներ ունեն — մի հանգամանք, վոր քսաներորդ դարից ե գալիս—և, վորպես այդպիսին, նոր ե և միանգամայն ուշագրավ: Քաղաքի ցածլիկ տների ու խանութների միորինակ ծովում թիթեղե այդ կտուրներն աչքի յեն զարնում, ինչպես աչքի կզարներ կանացի յեվրոպական փետրազարդ գլխարկն արևելյան գյուղերում: Յեվ իզուր չե, վոր Նայիրյան այդ քաղաքում մինչև որս ել մի անհուն վախով ու պատկառանքով են խոսում այն անձնավորության մասին, վորն առաջին անգամ թիթեղե կտուրով ե ծածկել իր յերկհարկանի բնակարանը. դա բոլորին հայտնի, բոլորից հարգված այսպես անվանված Գեներալ Ալոշն ե, ութսունն անց պատկառելի մի Նայիրցի, վորի հետ ընթերցողը դեռ շատ առիթ կունենա հանդիպելու սույն իմ այս պոեմանման վեպում:

Տները, ինչպես ասացի, Նայիրյան այդ քաղաքում ցածլիկ են, մեծ մասամբ միհարկանի, տափակ կտուրներով,– բայց տների ու խանութների այդ միօրինակ տափակության ծովում, քաղաքի ճիշտ կենտրոնում, վորպես ուրիշ մի աշխարհից, կամ յերկնքից ընկած քարեղեն մի հրաշք—կանգնած կա, յերևակայում եք… հինգհարկանի մի հսկա, քարե մի թյուրիմացություն… Ծխական դպրոցի ծանոթ ուսուցիչ պ. Մարուքե Դրաստամատյանը, վոր պակաս մի հրաշք չե Նայիրյան այդ քաղաքում, ամեն անգամ այդ շինության մոտից անցնելիս ասում ե ինքնիրեն, կամ, յեթե խոսակիցներ ե ունենում —նրանց. «Ուրիշ բան ենք մենք, ուրիշ -- յեվրոպալիք… Ա՛յ»։—Յեվ նա հիացած աչքերով նայում ե հինգհարկանի շենքի տարօրինակ — փոքրիկ, քառակուսի պատուհաններին։— Դեռ մենք շատ ենք հետամնաց». ասում ե նա։

Ամենամեծ նորությունը, վոր Նայիրյան չե և նույնիսկ անընտել, անհասկանալի յե թվացել սկզբում տեղացիների աչքին – յերկաթուղագիծն ե՝ ձգված ռուսների տիրապետության որով՝ քսան տարի առաջ։ Քաղաքի բնակչության կեսից ավելին դեռ մինչև հիմա յել հիշում ե անմոռանալի այն որը, յերբ անհայտ հեռուներից մինչև այդ քաղաքը ձգված յերկաթե գծերի վրայով առաջին անգամ մոտեցել ե գնացքը Նորակառույց կայարանին։ Յեղել ե—խնդուն խրախճանք՝ զարմանալի զարմանք։ Յեղել են մարդիկ, վոր զարմանքից ու հիացմունքից չեն կարողացել խոսել. առնվել ե լեզուները զարմանքից ու հիացմունքից։ Շատերը հիշում են այն հետաքրքիր մանրամասնությունն անգամ, վոր գնացքի շոգեկառքը զարդարված ե յեղել ծառերով ու ծաղիկներով։ Իսկ շոգեկառքի ճակատին, ճիշտ լապտերի վերևը, ծածանվելիս ե յեղել կապույտ մի դրոշակ՝ վրան վոսկենկար յերկգլխանի մի արծիվ։ Այդպիսի ահա շուքով ու ցնծությամբ ե մոտեցել գնացքը քաղաքի կայարանին, վորտեղ քաղաքի համարյա ամբողջ բնակչությունը հավաքված ե յեղել—ուրախ, տոնական զգեստներով—գնացքին դիմավորելու։ Կայարանի առաջ նվագելիս ե յեղել զինվորական յերաժշտախումբը և նրա մոտ կանգնած դիմավորել են գնացքը մի շարք պատկառելի Նայիրցիներ և բարձրաստիճան պաշտոնյաներ. գավառապետը, ոգնականը, զինվորական ատյանի պետը, Գեներալ Ալոշը, Մազութի Համոյի հայրը՝ Առաքել աղան—վորը հիշես… Զնայած, սակայն, նրան, վոր այդ զարմանահիշատակ որվանից քսան-քսան յերկու տարի յե անցել, չնայած, ասում ենք, այդ յերկար ու ձիգ քսան-քսանյերկու տարիներին—մինչև որս ել կան այդ քաղաքում շատ և շատ պատկառելի ու անպատկառ Նայիրցիներ, վորոնք, յերևակայում եք, վոչ միայն գնացք չեն նստել, այլ և նայում են շոգեկառքին, վորպես մի զարմանալի հրաշքի։ Օրինակ՝



քաղաքում ամենին հայտնի դագաղագործ Մեռելի Յենոքին մինչև որս ել զարմանալի չե թվում, թե եդ ինչպես են մարդիկ, անշունչ յերկաթների վրայով, անձի-անգոմեջ վագոնների մեջ նստած՝ տեղից-տեղ ճանապարհվում։ Դեռ մինչև որս ել կյուրակի օրերը շատ անգամ կարելի յե հանդիպել յերկու պատկառելի Նայիրցիների, վորոնք կիրակնորյա պտույտի յելած (յերկաթուղու կայարանը քաղաքային այգուց հետո յերկրորդ զբոսավայրն ե Նայիրյան այդ քաղաքում)—կանգնել են յերկաթուղագծի առաջ և զբաղված են այսպիսի մի զրույցով։

«Ես տնաքանդի ռուսը տես մի ինչե՛ր արաց»…—ասում ե մեկը, վոտքով ծուլորեն խփելով յերկաթուղագծին և յուղոտ մի ժպիտ յերեսին՝ լսելով յերկաթուղագծի ախորժ զնգոցը։

— Եսպես վոր նստելու լինես մինչև ու՞ր կգնաս…

«Հենց ուր վոր ուզես», —պատասխանում ե մյուսը։

— Մոսկվա կգնա՞ս։

«Իհարկե, կգնաս»։

— Կի՞վ…

«Կիվ ել կգնաս»…

Ու տիրում ե լռություն՝ ակնածանք ու զարմանք։

Յերկրորդ նորությունը, վոր նույնպես Նայիրյան չե, և դեպի վորը հատուկ մի ակնածանք են զգում բոլոր քաղաքացիներն անխտիր, և վորով այնքան հիանում ե միշտ ծխական դպրոցի ուսուցիչ պ. Դրաստամատյանը—հինգհարկանի այն հսկա շինությունն ե, վոր կանգնած ե քաղաքի մեջտեղում, վորպես առհելի մի վեհություն, քարե ակնածանք։ Այո, քարե մի ակնածանք, վորովհետև այդ շենքը, բացի իր վիթխարի լինելը, նշանակալից ե մի ուրիշ, ավելի կարևոր—ամենակարևոր հանգամանքի շնորհիվ. այդտեղ, այդ միակ շենքում են կենտրոնացած քաղաքի և նույնիսկ գավառի ամենաազդեցիկ հիմնարկությունները։ Այդտեղ են նստում՝ գավառապետը, վոստիկանապետը,—այդտեղ ե զորակոչային գավառական ատյանը և այդ շենքում են, վերջապես, գտնվում փոստ-հեռագիրը և պետական գանձարանը։

Ինչպես ամեն տեղ աշխարհիս յերեսին, այդպես ել Նայիրյան այդ փոքրիկ քաղաքում կանուխ, մութլուսուն յելնում ե Նայիրցի խանութպանը, վոնց Կարապետյան կամ Մարտիրոսյան, իր տնից, և գնում ե գործի։ Քաղաքի առևտրական մասը Լորիս-Մելիքյան կոչված փողոցն ե, ուր յերկու շարք, կողք-կողքի ձգվում են ցածլիկ, միհարկանի խանութները՝ յերկար-յերկար մինչև կայարան։ Քաղաքի ամենաբանուկ փողոցն ե այդ և վորպես այդպիսին՝ ամենափոշոտն ու ամենացեխոտը։ Յեթե անձրևային ե լինում յեղանակը՝

փողոցի մի մայթից մյուսն անցնելու համար հարկավոր է ձեռք քաշել կրկնակոշիկից կամ կոշիկից, յեթե մեծ է նա վոտքից, անպայման ցեխում կմնա։— Այդ փոշոտ, ցեխոտ, նեղլիկ փողոցում են կենտրոնացած քաղաքի առևտրական հիմնարկությունները և ուրիշ վոչ մի տեղ, յեթե, իհարկե, չհաշվենք թաղերում գտնվող այն մի-յերկու տուն-խանութները, վորոնցում առևտուրը տեղի չե ունենում նահապետական ձևով՝ ապրանքների փոխանակությամբ։ Մի ձու — մի ասեղ՝ ահա այդ խանութների առևտուրը։

Ինչպես ասացինք՝ առավոտ կանուխ, համարյա մութլուսուն, յելնում է Նայիրցի խանութպանը տնից և գնում է գործի։ Նա—ահա—անցնում է առավոտվա մշուշի միջով, յելնում է մշուշից՝ միջահասակ, ծուռ, աջ ուսը միշտ միքիչ բարձր ձախից. մոխիրե ուրվական։ Լուրջ է՝ դեմքը թուխս նստած հավի չե նման. ճոզսեր, ճոզսեր, ճոզսեր,—աշխարքի հանելուկ։ Յելնում են, յելնում են տներից ու քայլում են դանդաղ, անշտապ բացվում են խանութներն իրար յետևից, հացագործ, մանրավաճառ, կոշկակար. կողքին՝ մրգեղենի խանութ, կողքին՝ կտորեղեն, խալիներ, բրինձ։ Համարյա վոչ մի խանութ չկա, վոր մի գործով զբաղվի. հացթուխի խանութում միևնույն ժամանակ նավթ էլ է ծախվում՝ Մազութի Համոյից մի փութ էլ նավթ է գնել և գրվանքաներով ծախում է ուզողին։ Կտորեղեն ծախողը—հակերով բրինձ է վաճառում, կամ շաքար, կամ լուցկի։ Խանութը կոշկակարի չե, բայց խանութի անկյունում դրված է մի սեղան, վորի դեմը կանգնած յեկվոր մի Նայիրցի վարսավիրությամբ է զբաղվում։ Կամ մտնում ես ներս—վարսավիր է, բայց պատուհանի առաջ, անկյունում, ակնոցավոր մի մարդ սեղանի դեմ նստած ժամացույցներ է նորոգում. ժամագործ է։

Կամ այստեղ, նպարավաճառի կողքին, աղյուսե բավականին ընդարձակ մի խանութ է ահա. մեծ, ապակեպատ դռներով, նույնիսկ վիտրին ունի, ուր շարված են՝ տղամարդու և կանացի պատրաստի կոստյումներ, սանրեր, մկրատներ, արտասահմանյան օծանելիքներ։ Իսկ ցուցանակը. Պարիզից է բերված, սև ֆոնի վրա վոսկեզօծ տառերով գրված է ֆրանսերեն «A bon marché»։ Տերը՝ յերեսունն անց սափրված յեվրոպացի չե՝ պենսնեն նայիրյան քթին, անբեղ-անմորուք. դերասան է ասես, վոր զբաղվում է առևտրով։ Նրան անվանում են քաղաքում—պ. Աբոմարշ։

Աբոմարշի հարևանը սափրիչ է. չե, յեվրոպական վարսավիր, ինչպես հայտարարված է նրա ցուցանակի վրա։ Անունն է պ. Վասիլ։ Միջահասակ է, լայնաթիկունք. չիլ աչեր ունի, դեղին մորուք։ Սիրում է ածիլելիս այնքան մոտեցնել շրթունքները սափրվողի դեմ-



քին, վոր նրա մասին քաղաքում պատմում են զանազան առասպելներ։

Նրա հարևանը — կոշկակար է, հայտնի չե քաղաքում, վորպես սքանչելի «կինտաուրի» պարող։ Բարեկենդանի հինգշաբթի յերեկոները, յերբ քաղաքի ակումբում, վոր մի փոքր բեմանման հարմարություն ունի, վորևե յեկվոր դերասան տեղական սիրողների հետ խաղում է «Վարդանանց պատերազմը»—բոլորը գնում են ակումբ վոչ այնքան «Վարդանանց պատերազմը», վորքան կոշկակար Սիմոնի «կինտաուրին» տեսնելու։ Բոլորը սիրում են նրան, բացի վարսավիր Վասիլից, վոր չարախնդաբար անվանում է նրան կամ «Կինտաուրի Սիմոն», վոր դեռ ելի վոչինչ,— և կամ... «Կլուբի մեյմուն».—կատարյալ խայտառակություն։

Բայց ամենից հետաքրքիրը կոշկակարի հարևանն է՝ պարսկաստանցի մի վաճառական, վոր զբաղվում է գորգի, քիշմիշի, մորթեղենի և շաքարի առևտրով։ Յեթե խանութը մտնեք՝ կտեսնեք.— գորգեր, գորգեր, գորգեր՝ հին, փոշոտ, զանազան։ Աղվեսի, սանսարի, վագրի ու արջի մորթիներ։ Պարկերով իրար վրա դարսած շաքար։ Արկղներով քիշմիշ։ Մեծ խանութ է. Պարսկաստանի և Յեվրոպայի հետ առևտրական կապեր ունի։

Հարևան խանութը — մեզ արդեն բավականին ծանոթ Տելեֆոն Սեթոյի սրճարան-ճաշարանն է, վորի ցուցանակի վրա, ինչպես ասացինք, գրված է՝ «Չայ, Ղահվե, Ճաշարան»։ Ինքը չոր, բարձրահասակ, գլուխը ֆեսի չե նման, չոր բեղեր ունի, ցանցառ մորուք. այծի կերպարանք։ Նրա սրճարանը նույնն է քաղաքի ցածր խավերի համար, ինչ վոր վերին խավերի համար Մազութի Համոյի գրասենյակը. քաղաքական ակումբ է, կատարյալ ակումբ։

Հաջորդ խանութը... Այդտեղ Հաջի եֆենդի Մանուկոֆը մանուֆակտուրա չե ծախում, այսինքն՝ Սամարղանդի փուշիներ, զանազան կերպասեղեն (չիթ, յազմա, չլվարի), «բռոցկի» շաքար, անգլիերեն գիտե և վորպես միակը քաղաքում՝ վայելում է քաղաքացիների առանձին հարգանքը։ Կատաղի հայասեր է Հաճի Մանուկոֆ եֆենդին, ինչպես իրեն հենց ինքը սիրում է հորջորջել։

Խանութները շատ են, բոլորը հո չի՞ կարելի թվել. մենք պատահմամբ միքանիսի մասին միայն յերկու խոսք ասացինք։ Մնացածների մասին թող նրանց ցուցանակներն ասեն՝ ճիշտ այն հերթով, ինչ հերթով վոր շարված են նրանք Լորիս-Մելիքյան փողոցի մի ծայրից մյուս ծայրը՝ մինչև կայարան։

«Մանրուքի խանութ. Պողոս Կոլոպոտյան»—«Գինի, արաղ, կոնյակ. Համբարձումով Նիկոլայ» (սա իր բավականին ընդարձակ

փորի պատճառով քաղաքում քոչվում է Բոչկա Նիկալայ)—«Դազադազործ. ընդունում եմ պատվերներ. Յենոք Կարապետյան» (սա հենց ինքն է՝ Մեռելի Յենոքը)—«Ճաշարան «Յեվրոպա». Յեգոր Արզումանով» և էլի մանրավաճառ, կոշկակար, մանրավաճառ, վարսավիր, մանրավաճառ, մանրավաճառ և հանկարծ—«Դեղատուն Ժգենտի»—ու էլի մանրավաճառ, ու էլի՝ մանր-մունր խանութներ—մինչև կայարան:

Կանուխ, մութլուսուն, բացվում են խանութներն իրար յետևից—ու ծույլ, դանդաղ, միապաղաղ՝ սկսվում է քաղաքի գործնական յեռուզեռը՝ գործնական առօրյան:

Սովորաբար առավոտվա այդ վաղ պահերին մայթերը բավականին դատարկ են լինում, այնինչ փողոցի մեջտեղով, խուռն ու բազմերանգ, հոսում են բավականին սովոր բազմություններ: Անցնում են փողոցի մեջտեղով՝ սայլեր, վոչխարի և տնային այլ անասունների բազմագլուխ նախիրներ, մշակներ, վոր մեծ խմբերով գնում են քաղաքից դուրս՝ յերկաթուղագծի վրա աշխատելու, գյուղացիներ, վոր գյուղական այլ և այլ բարիքներ են բերում քաղաքում վաճառելու: Սայլերի, նախիրների ու գյուղացիների այդ խուռներամ հոսանքը հոսում է Լորիս-Մելիքյան փողոցի մեջտեղով դեպի մեյդանը, այսինքն՝ շուկան, վոր գտնվում է փողոցի և կայարանի մեջտեղն ընկնող այն դաշտանման տեղում, վոր տեղացիների լեզվով կոչվում է «գյոլ» կամ «լիճ», վորովհետև գարնան սկզբին այդտեղ է հավաքվում բլուրներից հոսող ջուրը, վորը և մնում է այդտեղ լճացած, մինչև վոր չորանա: Անցնում են, անցնում են. առավոտները հաճախ մշուշ է լինում,—ու մշուշի միջից դանդաղ առաջացող, կարծես մշուշից յելնող սայլերից, նախիրներից ու գյուղացիներից կազմված հորդածուփ այդ հոսանքն արժանանում է իրենց խանութների առաջ նստած կամ կանգնած, գնորդի սպասող խանութպանների զանազան նկատողություններին: Պետք է ասել, վոր առավոտվա այդ կանուխ պահերին, յերբ գյուղերից յեկած հոսանքը դեպի մեյդան է շտապում, փողոցի յերկու կողմը շարված խանութները շատ չնչին ուշադրության են արժանանում դեպի մեյդան շտապող գյուղացիների կողմից. վերջը, կեսօրից հետո, յերբ իր բարիքը ծախած գյուղացին յետ՝ դեպի գյուղ է շտապում նույն Լորիս-Մելիքյան փողոցով—այս անգամ վոչ թե մեջտեղով, ինչպես այդ վայել է սայլերին ու նախիրներին, այլ մայթերի վրայով—այդ ժամանակ միայն յեփվում, կատաղի ճակատամարտի կերպարանք է ստանում մանրուքի խանութների առևտուրը: Իսկ մինչ այդ, մանավանդ առավոտյան այդ վաղ պահերին, յերբ նոր է սկըս-



վում գյուղացիների հոսանքը դեպի մեյդան—Նայիրցի խանութպանները խաղաղ նստած են լինում իրենց խանութների առաջ և փողոցի մեջտեղով դանդաղ առաջացող յեռուզեռին նայելով՝ հաղորդում են իրար իրենց պատահական մտքերն ու տպավորությունները: Որինակ.—«Ան ոչխարը, նայե. մեկ փութ դմակ կախված է յետևեն»—ասում է Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆը ղավենի (սրճարանատեր) Սեխոյին: «—Յես յաղլու մը կլլած եմ առտուս»—տեղի-անտեղի պատասխանում է ղահվեճին, ինչպես յերևում է, բոլորովին տարբեր տրամադրություններով տարված: Յեվ Հաջի Ոնիկ եֆենդին, միանգամայն բավարարված այդպիսի մի պատասխանով, լռում է խորհրդավոր և շարունակում է նայել փողոցով անցնող սպիտակ վոչխարների ծանր դմակներին: Ղահվեճին, վոր ընդհանրապես սիրում եր խոսակցությունը, ուզում է զրույց սկսել քաղաքի նորությունների մասին, բայց Հաջին, նկատելով փողոցի ծայրից առաջացող իր յերեխային, վոր ամեն առավոտ իր համար հաց ու պանիր է բերում տնից (շաքար խանութներում կա)—մտնում է իր խանութը թեյելու: Ղահվեճին մենակ մնալով՝ մտածում է ինքն էլ մտնի իր խանութը թեյելու, բայց այդ պահուն կոշկակար Սիմոնը դուրս է յելնում խանութից և ձեռք մեկնելով նրան՝ «Բարի լույս, պ. Սեդրակ»—ասում է քաղաքավարի: «—Գիշերս լավ ես քնե»—հարցնում է կոշկակար Սիմոնը և միակն է քաղաքում, վոր «պ. Սեդրակ» է անվանում ղահվեճի Սեխոյին: Ուստի և այս վերջին հանգամանքից չափազանց զգացված՝ «Աղեկ եմ»—պատասխանում է ժպտալով ղահվեճի Սեխոն «—առավոտ յաղլու մը կլլած եմ, ըստ սովորության»: «—Անուշներ»,—կտրուկ կտրում է Սիմոնը և նորից մտնում է խանութը՝ թողնելով անուշ հիացմունքի մեջ ղահվեճի Սեխոյին: «Ի՞նչ կըսեր էլի Կլուբի Մեյմունը»—յուղոտ ժպիտը դեմքին դանդաղ մոտենալով, հարցնում է վարսավիր Վասիլը: «Գործ չկա»—պատասխանում է հորանջելով ղահվեճի Սեխոն և յերկուսը միասին, տխուր-տխուր աչքերով, սկսում են նայել փողոցի միջով անցնող անասուններին ու գյուղացիներին: «Յես չեմ հասկնար, թե դուն ինչու՞ չես հարգեր սապոժնիկ Սիմոնը»—ասում է ղահվեճին. «—յես անոր վոտքերն ուննենայի նե—հիմա սանկ թխլիկ կնիկ մը տունս նստած կըլլար. սատանայի պես կպարե շանորդին...»—«Ջի ըսե—մեյմունի պես, կըսե սատանայի»—լինում է վարսավիրի կտրուկ պատասխանը: Ղահվեճին վիրավորվում է իր մեջ, բայց վախենում է վարսավիրի հեգնող լեզվից և վոչ մի բառով կամ ակնարկով չի արտահայտում իր դժգոհությունը: «Ի՞նչ կհասկանա աղ աղտոտը»—հայհոյում է մտքում վիրավորված ղահվեճին և մի վախլուկ ժպիտ սահեցնելով դեմքին՝ մըտ-

նում է խանութը։ Յեվ այս պատմությունը կրկնվում է ամեն որ համարյա, ամեն առավոտ։ «Վատ, չարախոս լեզու ունի այդ պերպերը»—մտածում է, խանութի մի անկյունը նստած, ղահվեճի Սեթոն։

Արևը կամաց-կամաց սկսում է բարձրանալ և ահա մյուս, վոչ խանութպան, քաղաքացիները յելնում են տներից և մայթերի վրայով գնում են՝ մի մասը «պրովիզ» գնելու, մի մասը—գործի։ Պաշտոնյաներն շտապում են պաշտոնատեղի, պ. Մարուքեն շտապում է դպրոց։ Խանութներում գործը հետզհետե սկսում է յեռալ և գուցե միայն դագաղագործը և «Յեվրոպա» ճաշարանի տնօրեն Յեգոր Արզումանովն են հիմա, անգործ նստած իրենց խանութների առաջ, ձանձրույթից հորանջում։ Սակայն նրանք էլ կամաց կամաց սկսում են զբաղվել. դագաղագործը ձանձրույթից ձանձրացած՝ սկսում է թղթե արծաթազոծ հրեշտակներ կպցնել դագաղների վրա, իսկ դուքանչի Յեգորը իր բավականին մաքուր սրբիչը վերցնելով՝ սկսում է ճաշարանի սեղանները սրբել։ Սրբում, սրբում է դուքանչի Յեգորը և շվվացնելով «Վասսադուլի» ռուսական յերգը, մտածում է, վոր հարկավոր է մի մեծ քաղաք տեղափոխվել—Ռոստով կամ Կատրինդար—և այնտեղ կարգին «ստալավո» պահել։ Յեվ հանկարծ, ինքն էլ չգիտե ինչու, հիշում է, վոր ղահվեճի Սեթոն մի անգամ բարեկենդանին մի փունտ լվացքի սապոն մի անգամից կերավ՝ տասը ռուբլի գրազի համար։ «Թյու քո գալած ճամփեն...» զզվանքով հայհոյում է Յեգոր Արզումանովը և սրբիչը մի կողմ նետելով՝ յելնում է փողոց։

Մարդիկ անցնում են դանդաղ, անշտապ անցնում են մարդիկ, կանայք, յերեխաներ. յելել են փողոց, վոր գնան՝ պաշտոնի, գնումներ անելու, բաղնիք, գործի։ Բաղնիք, ասենք, առավոտվա վաղ ժամերին, միայն կանայք են գնում Նայիրյան այդ փոքրիկ քաղաքում. քաղաքում կա միմիայն յերկու բաղնիք, յերկուսն էլ ասիական, թեկուզ մեկի անունն է «Ճերմակ», վորովհետև նրա պատերն սպիտակացրած են կրով.—իսկ մյուսը, վոր մեչեթի նման ձմերուկաձև գմբեթ ունի, կոչվում է «Ֆանտազիա բաղնիք—առանձին համարներով»։ Ընդամենը յերկու համար ունի այդ յեվրոպականացրած բաղնիքը, բայց դրությունը դրանից, իհարկե, չի փոխվում. համարներում գնում են լողանալու քաղաքացիներից միմիայն՝ —առաջին քաղաքամասի պրիստավը, նրա կինը, աղջիկները, էլի մի քանի պաշտոնյա ռուսներ և մեկ էլ հայտնի մանուֆակտուրիս Հաջի Ռնիկ աղա Մանուկոֆը. նա յել, լինելով հմուտ անգլիագետ, համարները գերադասում է ընդհանուր լողարանից։ «Ինչ ընես ըրե—մարդ չի տեսնար»—ասում է նա այդ առթիվ, թեկուզ մեզ արդեն ծանոթ



ղահվեճի Սիմոնը նրա մասին էլ, ինչպես և վարսավիր Վասիլի մասին, ունի առանձին կարծիք. «Հաջի Ռնիկ աղան չի ուզեր հարևանները տեսնեն, վոր ինքը դեղին սապոնով կլողնա» ասում է նա։

Առավոտվա այդ վաղ պահերին բաղնիք են գնում, ինչպես ասացինք, բացառապես կանայք, վորովհետև քաղաքում գտնվող յերկու բաղնիքներն էլ, առանց բացառության, մինչև ցերեկվա ժամը չորսը բաց են կանանց, իսկ չորսից հետո—տղամարդկանց համար։ Բաղնիք այդ քաղաքում կանայք գնում են առանձին մի շուքով, կարծես գնում են ծիսակատարության։ Գնում են՝ ընդհանրապես մի քանի ազգական-կանայք, աղջիկներ և յերեխաներ միասին. մենակ ընդունված չէ բաղնիք գնալ Նայիրյան այդ քաղաքում։ Առջևից, գնացքի ավանգարդը կազմելով, գնում է սովորաբար գզգզված մի մշակ, շալակին պղնձե մի մեծ ջրաման, վորի մեջ դրված են լինում պղնձե կլոր թասեր, փայտե նալըններ, սանր, սապոն-մի խոսքով՝ լողանալու զանազան պարագաներ։ Յեթե ընտանիքում ծծկեր յերեխա յե լինում—նրան էլ սովորաբար գրկում է նույն մշակը, վորի յերկու կողքից հաղթական քայլերով արշավում են յերեխաները, տղաներ ու աղջիկներ, տղաները—մինչև յոթը տարեկան, իսկ աղջիկների համար տարիքը նշանակություն չունի։ Յերեխաների համար առանձին օրենք է ընդունված Նայիրյան բաղնիքներում. ընդունված է կանանց հետ բաղնիք թողնել մինչև յոթը տարեկան տղաների, բայց յեթե ընտանիքում, վոր բաղնիք է գնում, հիվանդ է տասնմեկ տարեկան մի տղա—նրան էլ մայրն իրավունք ունի հետը բաղնիք տանելու. հո չի կարող հիվանդ յերեխան տանը սպասել և անլվա մնալ։ Այսպիսի բաղնիքային կարգեր կան, հնուց մնացած, Նայիրյան այդ քաղաքում։

Յեթե ամառ է, աշուն, մի խոսքով—մրգի ժամանակ՝ բաղանիք գնացող ընտանիքի հայրը, լինի նա վարսավիր Վասիլը, թե Հաջի Ռնիկ եֆենդի Մանուկոֆը, կամ դուքանչի Յեգորը—ցերեկվա տասներկուսին մոտիկ պետք է բաղնիք ուղարկե, լողացող ընտանիքին նվեր՝ ձմերուկ, սեխ, խաղող կամ խնձոր. և դա սովորաբար արվում է հրապարակով, բոլորին ի տես, մանավանդ, յերբ բաղնիք է գնացած լինում Հաջի Ռնիկ եֆենդի Մանուկոֆի հանըմը՝ յերեխաներով հանդերձ։ -«Եսոր էլի Հաջին բաղնիք է ղրկե նունուֆար հանըմին»—ասում են հարևանները քմծիծաղ։ «Խելք եղնի» ասում է այդպիսի օրերին Յեգոր Համբարձումովը, «Յեվրոպա» ճաշարանի տերը, Հաջի Ռնիկին.«—Եսոր Հաջին մեզ մոտ պիտի ճաշե. լավ բոզբաշ եմ շինել տվե, իսկական ղամաշնի՝ պամիդորով ու սոխով»։ Բայց Հաջին չի սիրում ընտանիքից դուրս—ճաշարաններում ճաշել.

յերբ տնից ճաշ չեն ուղարկում, նա յոլա յե գնում հացով ու պանիրով, իսկ յեթե մրգի ժամանակ ե, սիրում ե ձմերուկ կամ սեխ ունենալ մսի փոխարեն։ «Շատ բան պետք չե մարդուս մը կշտացնելու համար» - մտածում ե Հաջին. «—Անգլեթերում լորտերը սև հացով կբավականանան. սակայն այդ հանգամանքը չի խանգարեր անոնց, վոր անոնք ըլլան ազնիվ ու հայրենասեր»։—Յեվ հարևանները, չնայած վոր բնավ չեն ել մտածում հավատալ, վոր լորդերը Անգլեթերում սև հաց են ուտում, բայց հավանություն են տալիս Հաջու խոսքերին։ «Մարդս ինչով ասես կարող ե կշտանալ, մանավանդ Հաջի Ոնիկ եֆենդին» — մտածում են նրանք։

Յերբ արևը բավականին բարձրանում ե վեր և կեսորից սկսում ե դեպի արևմուտք թեքվել՝ Լորիս-Մելիքյան փողոցի վրա գտնվող խանութներում գործնական յեռուզեռը հասնում ե իր գագաթնակետին։ Հաջին շուկայից վերադարձող գյուղացիներին մանուֆակտուրա, շաքար, փուշիներ ե ծախում, վարսավիր Վասիլը սափրում ե ու խուզում, «Յեվրոպա» ճաշարանում բորշ են սկսում ուտել զինվորներն ու գյուղացիները, իսկ մանրավաճառները շունչ քաշելու անգամ ժամանակ չեն ունենում։ Ասեղ, թել, կոզպեք, քառորդ ֆունտ սպիտակ հալվա, ֆուրգոնի մազութ, Լապշինի լուցկի, — գնում են, գնում են, ում ինչ հարկավոր ե որվա համար և ծախում ու հարստանում են — Կոլոպոտյանը, Զարգար Հովհաննեսի տղան, վոր հիմա մանրուքի խանութ ունի, Բաչալ Թաթոսը, Կաթոլիկ Սիմոն տղան և մնացած չարչիներն ու խանութպանները. խեղճ Աբոմարշն ե միայն, վոր անգործ, աչքը խանութի պատերից կախած յեվրոպական գույնզգույն հագուստներին հառած, սպասում ե գնորդի։ Յերևի նայիրցիները չեն հասկանում, վոր ինչպես իր ցուցանակի վրա գրված, այնպես ել իրեն կպցրած ֆրանսերեն «Աբոն մարշե»-ն վոչ այլ ինչ ե նշանակում, յեթե վոչ—եժան վաճառք Յեթե այդ հասկանային, գոնե ներս կմտնեյին, գնելը դեռ մի կողմ։ Պետք ե ցուցանակները ռուսերենի վերածել—մտածում ե նա և սկսում ե իր նոր ցուցանակի համար մի հարմար անուն մտածել։

Արևը զենիթից սկսում ե իջնել, ժամը մոտենում ե յերեքին, իսկ ղահվեճի Սեթոն դեռ վոչ մի մսխալ սուրճ չի կարողացել ծախել։ «Թարս օր ե, գիշերը ձախ եմ քնացել» մտածում ե նա խանութի առաջը նստած և ծխախոտ ե վոլորում, վոր քունը չտանի։ Որորվելով, ուսը տարօրինակ ցնցելով մոտենում ե նրան Աբոմարշը, վոր ձանձրությունից փակել ե խանութը և դռան ապակուն, ինչպես այդ ընդունված ե Յեվրոպայում, փակցրել ե սպիտակ մի թուղթ՝ վրան գրված. «փակ ե. գնացել եմ ճաշի»։ Այդ քաղաքավարի արարքով նա յերկու նպատակի միանգամից կարողացել ե հասնել. նախ, վոր իր խանութը յեվրոպական խանութ ե իր բոլոր կողմերով, յերկրորդ՝ վոր ինքը, վորպես իսկական յեվրոպացի, ճաշում ե ժամը չորսին։ Թեկուզ վոչ մի կոպեկի ապրանք չի կարողացել ծախել պ. Աբոմարշը, բայց գոհ ե, վոր հնարավորություն ունի և գեթե յեվրոպացի լինել։ «—Տո, գուեհիկ գոմեշ, ինչ ես արևի տակ նստել. գնանք թուղթ խաղանք միքիչ» — ասում ե նա, մոտենալով ղահվեճի Սեթոյին։ «—Նարդի կուզես նե—կխաղամ, թուղթ չեմ խաղար» — պատասխանում ե ղահվեճին և քանի վոր Աբոմարշը չի հակաճառում՝ նա նույնպես փակում ե խանութը, բայց թուղթ չի փակցնում դռանը, վոր գնում ե ճաշի—և յերկուսով միասին գնում են Յեգոր Համբարձումովի ճաշարանը, վորը և սրճարան ե միևնույն ժամանակ—նարդի խաղալու։

Յերբ նրանք, թև-թևի տված, ձանձրույթից փրկվածների գոհունակությամբ մտնում են Յեգորի ճաշարան-սրճարանը՝ այնտեղ հանդիպում են մի շարք հարևանների, վորոնք նույնպես թուղթ, դոմինո, կամ նարդի յեն խաղում՝ նայած տրամադրության։ Դագաղագործ Յենոքը և Կինտաուրի Սիմոնը նախընտրել են թուղթը և յերկյուղով «փոստոն» են խաղում ձմերուկի վրա. ով վոր տարվի—մի ձմերուկ գնի։ Նրանց գլխին հավաքվել են՝ Հաջի Ոնիկ Մանուկոֆ եֆենդին, մանրավաճառ Պողոս Կոլոպոտյանը, Կաթոլիկ Սիմոնը, գինեվաճառ Նիկոլ Արզումանովը և իրենց տաք բացականչություններով մասնակցում են նրանց խաղին ու մի առանձին հետաքրքրության մթնոլորտ են ստեղծում Յեգորի սրճարանում։ Նրանց այդ վոգևորված հավաքույթը տեսնելով ղահվեճի Սեթոն և պ. Աբոմարշը, մոռանալով իրենց նարդի խաղալու ցանկությունը՝ միանում են նրանց։

Յերբ որն սկսում ե կամաց-կամաց մթնել՝ հերթով իրար յետևից սկսում են փակվել Լորիս-Մելիքյան փողոցի ցածլիկ խանութները։ Ամենից առաջ դագաղագործ Յենոք Կարապետյանն ե փակում իր խանութը ներսից և ինքը մնում խանութում։ Այդ հարգելի նայիրցին տուն չունենալու պատճառով քնում ե իր գործատեղում, իր շինած դագաղներից մեկում. այդ բանն ամբողջ քաղաքը գիտե, և ահա հենց այդ ե պատճառը, վոր նրան քաղաքում անվանում են Մեռելի Յենոք, իսկ յերեխաները վախենում են նրանից և չեն սիրում անցնել դագաղագործի խանութի առաջից։ Յերկրորդ խանութպանը ղահվեճի Սեթոն ե, վոր փակում ե իր խանութը և նույնպես ընտանիք չունենալու պատճառով գնում ե քաղաքային այգի՝ զբոսնելու և հարսնացու ընտրելու։ Հետո Հաջի Ոնիկ եֆենդի Մանու-

կոփն է, իր խանութը փակում և ահա նրանից հետո բոլորը, իրար յետևից խանութները փակելով, գնում են՝ վորը տուն, վորը քաղաքային այգի, վորն էլ նորից Յեզոր Համբարձումովի սրճարանն է գնում, վոր յերեկոյան հանգիստն այնտեղ վայելե - թղթախաղով, կամ ուրիշի խաղին նայելով։ Յեվ այսպես կամաց-կամաց սկսում է բոլորովին ամայանալ. մութն էլ, անդեմ ու անխորհուրդ, ծույլ, հորանջող պառավի մի նման, իջնում է ու նստում փողոցների վրա և տեղ-տեղ տարտամ, վախկոտի աչքերի պես թարթող կրակներն են միայն յենթադրել տալիս, վոր այդտեղ դարերից ի վեր ապրում է ու զվարճանում Նայիրյան մի քաղաք։

---

— Ինչպիսի՞ քաղաք է նկարագրված այստեղ։

— Առանձնացրե՛ք այս գրվածքի այն հատվածները, վորոնք վերաբերում են առանձին տիպերի, յեվ տվե՛ք դրանց համառոտ բնութագիրը։

— Բնորոշեցե՛ք գավառային քաղաքի զանազան բնակիչների սոցիալական դրությունը։

— Ինչո՞վ են հետաքրքրվում դրանք. վորո՞նք են դրանց առօրյա, սովորական մտքերն ու հետաքրքրության առարկաները։

— Առօրյա մանր հոգսերից բացի կա՞ արդյոք վորևիցե բան, վոր հետաքրքրում է դրանց։

— Առանձնացրե՛ք այս գրվածքի այն տեղերը, ուր նկարագրված է քաղաքացիների կենցաղը յեվ համառոտ կերպով բնորոշեցե՛ք այդ։

---

— Ո՞վ է պատմում քաղաքի յեվ բնակիչների մասին՝ հեղինա՞կը, թե մի ուրիշը։

— Հայտնո՞ւմ է նա արդյոք իր կարծիքը քաղաքի յեվ բնակիչների մասին։

— Դիմո՞ւմ է նա արդյոք ընթերցողին։

— Միյեվնույն լեզվո՞վ են խոսում արդյոք հեղինակն ու իր հերոսները։

— Միյեվնույն լեզվո՞վ են խոսում արդյոք տարբեր հերոսները։

— Մոտավորապես վորոշեցե՛ք, թե քանի՞ բարբառ կա այս գրվածքում։

— Առանձնացրե՛ք բարբառային բառերը յեվ դարձվածքները յեվ դրանց դիմացը գրական բարբառով գրեցե՛ք դրանց նշանակությունը։

---

— Ձեր շուրջն այժմ էլ կա՞ն արդյոք այս գրվածքում նկարագրված տիպերի նման մարդիկ, հիշեցե՛ք ու համեմատեցե՛ք։

---



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ՊՈԵՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ

Նըստած եմ մի օր ու միտք եմ անում,
Միտք եմ անում միտք, ու չեմ կարենում
Մի հընար գտնեմ՝ ցավերս հոգամ...
Վե՛ր կենամ, ասի, մեկի մոտ գնամ,
Կըրկին պարտք անեմ, գլուխը քարը,
Մինչև վոր տեսնենք ինչ կլնի ճարը։
— Վողջո՜ւյն Պառնասի գլխից սըրբազան...»
Յետ նայեմ տեսնեմ՝ իմ ծանոթ մուսան։
— Վե՛ր կաց, բանաստե՛ղծ,— կանչում է եսպես,
Վե՛ր կաց, ներշընչվի՛ր, գո՜ւրս արի հանդես։
Յերկինք են հասել արցունք ու արյուն...
Ահա՝ քեզ համար բերել եմ ավյուն,
Հո՜ւյս տուր վհատին, ըսփոփի՛ր վորբին,
Ո՛ւժ տուր պանդխտին իր յերկար ճամբին։
Ուրախ ու անհոգ գարունն էլ ահա
Բազմել է կանաչ սարերի վըրա,
Ջրերը լցվել, փռվել հովիտում,
Հավքերն յերգում են, ծաղկունքը փըթթում...
Դո՛ւ էլ ըսթափվի՛ր, յերգի՛ր քեզ նման,
Վողջունի՛ր շքեղ գալուստը գարնան»։
— Հերի՛ք է, Մուսա՛, յերկինքը վըկա,
Էլ համբերելու սիրտ ու տեղ չկա.
Ենպես կանեմ քեզ, վոր դու մոռանաս
Արյուն ու գարուն, պոետ ու Պառնաս։
Անիծված լինին են օրն ու տարին,
Վոր գերի դառա յես քո քընարին.
Քեզ հետ մտերիմ դառնալու օրից
Զըրկված մնացի կյանքում բոլորից...
— Են տաղանդը, են ձիրքը հապա,
Վոր տըվել եմ...
— Ա՛յ, խաբեբա,
Ահա յես էլ էդ եմ լալիս.
Ինչո՞ւ ես ձիրքն եյիր տալիս։
Չգիտեյի՞ր միթե այնժամ,

Թե ինչ աշխարք պիտի չես գամ։
Թող լինեյի մի կեղեքող,
Հավաքեյի միշտ փող ու փող.
Առաջ թեև «գազան» ու «ցեց»,
Կդառնայի շուտով չես մեծ,
Վեհ բարերար
Ազգի համար.
Մեռած որըս էլ պսակ տային.
— «Իր վորը ազգից — միակ հային»։
Կամ թե՞ տերտեր լինեյի թող,
Խաչը վըզիս մեռել թաղող,
Սուփրի վերև միշտ նստեյի,
Իմ ապրուստը դրատեյի.
Ազգն էլ աչքը տնկեր վրաս,
— Իմ փըրկողը դո՛ւ չես, վոր կաս։
Ահա եսպես բան լիներ մարդ,
Գընար ապրեր լի ու հանդարտ։
Կամ սընգուրված մի ճոխ հիմար,
Վոր ապրում է լոկ իր համար,
Ուտում-քնում, չելնում-ուտում
Լի, գոհ, ինչպես աղբակույտում
Հանգիստ ապրող վորդը պարարտ.
Կըլինեյի հարգի մի մարդ,
Նույնիսկ չեթե գլուխս այնժամ
Դատարկ լիներ հազար անգամ,
Քան թե հիմա իմ գլուխը։
Ահա կյանքում ես է բանը.
Թե չե՝ լինել ի ծնե գերի
Մերկ Մուսայի ու չերգերի,
Վորդիք ու կին
Թողած բախտին,
Մերձավորի ծաղր ու ծանակ,
Ուժից ընկնել անժամանակ —
Թե պոետ եմ… ո, վո՛չ, Մուսա՛,
Մի անարդար պատիժ է սա։
Յեվ ինձ մոտիկ
Փորձված մարդիկ
Դեռ շատ վաղուց նկատեցին,
Կռիվ արին, խըրատեցին,
Թե աշխարքին մոտիկ արա՛.
Շատըն էլ խնդաց խելքիս վրա…
Իսկ չես, ա՛խ, չես,
Միշտ խենթ եսպես,
Գիշեր-ցերեկ թերթում գըրքեր,
Շինում եյի դատարկ չերգեր,
Միշտ քո կամքով եյի թռչում
Ու միշտ բախտից հեռու փախչում։



— Ա՜յ, ապերախտ, ի՞նչ ես ասում.
Են վո՞ր բախտն ես դու ափսոսում,
Վոր չեմ տըվել քեզ իմ ձեռքով,
Աստվածային հզոր ձիրքով
Ես ցած կյանքից հեշտ ու անթեվ
Թըռչել չերկինք, վերև՛, վերև՛,
Ցավեր, հոգսեր վողջ մոռանալ,
Դըժոխք իջնել, դըրախտ գնալ,
Անհուն ըզգալ, թովիչ չերգել…
Վո՞ր բախտից եմ չես քեզ զըրկել։
— Ո, վո՞ր բախտից… ա՛յ սեերես,
Ահա շարեմ, հիշի՛ր ու տե՛ս։
Ինձ մի անգամ առան-տարան,
Հաշվապահի ուսումնարան,
Շատ խոսեցին,
Համոզեցին,
Թե կավարտես ես դպրոցում,
Ատեստատը հետո ծոցում,
Ուր վոր գընաս,
Տեղ կունենաս,
Լավ փողով տեղ բուղգալտերի.
Խաղեյինդ էլ տարեցտարի
Միշտ կավելցնի քո ռոճիկը,
Վերջը վրան է… աղջիկը։
Բայց դու չեկար միտքըս մըտար,
Ինձ չըթողիր տեղս դադար.
Դավթարըն աչքիս դարձավ դաժան,
Թիվ, կոտորակ, թըվանշան
Ուղեղիս մեջ դարձան վորդեր,
Քիչ եր մնում սիրտըս պայթեր.
Յես էլ խրտնած, խենթ չերեխա՝
Փող ու աղջիկ թողի, փախա,
Թե չեմ կարող, չես չեմ կարող,
Յես գըրո՛ղ եմ, գըրո՛ղ, գըրո՛ղ։
Սակայն ելի բախտս ժըպտաց,
Ջեռըս բռնեց, տարավ հանկարծ
Ու պիսերի տըվավ պաշտոն։
Վոչ լի որ կար ինձ ու վոչ տոն։
Մեծավորըս ենքան սիրեց,
Հին գրչակոթն ինձ նվիրեց.
Ընկերներս էլ ինձ դաս տըվին —
Վոնց պըռկել խնդրատվին։
Բայց դու ելի չեկար, գտար,
Խաղաղ գործիս մեջը մըտար.
Յես էլ հիմարըս՝ իսկույն է չեթ
Վեճ բաց արի ամենքի հետ,

Թե ինչ բան է՝ խեղճ գյուղացուն
Գերի շինել վողջ տարին բուն,
Տանել, բերել ու թալանել,
Այրու պղինձն աճուրդ հանել...
Ես բոլորը քիչ էր կարծես,
Ենքան արիր սատանի պես,
Վոր գըրեցի մեծիս պարսավ.
Նա յել՝ կորի՛, կորի՛, ասավ,—
Մե՛նք ենք տալի քեզ փող ու վարձ,
Դու, Մուսայի խելքով ընկած,
Վեր ես կենում մեր դեմ խոսում.
Եդպես պիսեր մենք չե՛նք ուզում։
Սակայն աստված մեծ է գութով,
Հայտնի կանտոր ընկա շուտով։
Լա՜վ էր, ասի, այսուհետև
Կապրեմ ազատ, գործըս թեթև։
Հետըս յեկար, մըտար կանտոր,
Գործերս արիր խառնուփընթոր.
Քու յերեսից հենց նույն տարին
Իմ պաշտոնից ինձ դուրս արին։
Եսպես յեղա յես խայտառակ,
Համ էլ ընկա պարտքերի տակ.
(Հո պոետի պարտքն էլ գիտե՞ս.
Եդ լոկ պարտք չէ ուրիշի պես,
Այլ ազգային մի մեծ առակ,
Վեճ ու վճիռ ծանր ու բարակ)։
        Վո՞ր մեկն ասեմ, վո՞րը թողնեմ.
Յերբ վոր տեսան շնորք չունեմ,
Այնուհետև քանի անգամ՝
Ծանոթ ընկեր, լավ բարեկամ՝
Տերտերության տվի՛ն խորհուրդ.
— Ա՛յ քեզ մեծ ժամ, լա՜վ ժողովուրդ,
Փարթամ քելեխ, հարգ, մեծարանք,
Հարստություն, հանգիստ, հեշտ կյանք...
Իսկ յես՝ անփորձ, անխելք, հիմար,
Վողջ մերժեցի լոկ քեզ համար.
Պատրաստ կյանքից, բախտից փախած,
Գանձանակի թափշին թողած,
        Քընարըն առա,
        Պոետ դառա,
Յերգ ու տաղով մըտա հանդես.
— Հե՛յ, Մուսայի ընկերն եմ յես...
Յերգերըս ուղիղ տարա տպարան.
Դուրս յեկավ եսպես մի նոր յերգարան։
Այնժամ մըտրակող մի թունդ պուբլիցիստ,
Հայտնի քննադատ, բազմագետ ու խիստ,



Սաստիկ վըրդովված, անաչառ հոգով
Ծաղրի առավ ինձ իրեն «ակնարկով»։
—Յես դեմ եմ, ասավ, բանաստեղծության,
Զըզվեցնում է ինձ եդ յերգի մուսան։
Վո՛չ մտքեր են պետք, վո՛չ ձիրք և վոչ խելք,—
Բառեր ու հանգեր—և ահա քեզ յերգ։
Հենց նոր դուրս յեկած ես խակ տըղան էլ
Գըլխից ես տեսակ բաներ է հանել։
Ուրիշ բան էյին հին պոետները...
Նրանք էլ մեռան, տարան հետները
Տաղանդ ու յերգեր... ամե՛ն, ամե՛ն բան
Մտավ նրանց հետ խավար գերեզման...
Դարձավ անապատ... էլ ո՞վ է մնում...
Էլ ուրիշ պոետ մենք չենք ընդունում...
Վորքան ծաղրում ենք, սրանք չե՛ն լռում,
Վոչ էլ մեր ուզած բաներըն են գրում»։
...Մեր խեղճ տանըցիք, վորքան նախատում —
Բայց յես միշտ համառ չեյի հավատում,
Մինչև լսեցի մի մեծ պարոնի,
Մեր մեջ շատ խելոք ու շատ անվանի։
Մի որ ինձանից արավ հարց ու փորձ.
Ունե՞ս, հարցրեց, մի պաշտոն, կամ գործ,
— Բանաստե՛ղծ եմ յես, հայտնեցի հպարտ։
— Դժվա՛ր է, ասավ, յերբ անգործ է մարդ։
— Բանաստե՛ղծ եմ յես, կրկնեցի մեկ էլ.
— Հասկացա՛նք, ասավ, պարապ ես յեղել...
Յեվ խեղճ ընկերս, յերբ վոր սրտացավ՝
Սա յել պետքական մի մարդ է, ասավ,
Ենպես ծիծաղեց մեր աղան փառփառ,
Վոր և հասարակ և մեծ վեհափառ
Ով վոր իմացավ, ծիծաղը պրծավ։
Բայց վերջն ավելի պարզվեց խնդիրը,
Յերբ հոդված գրեց մեր լրագիրը.
— Բանաստեղծն, ասաց, թող մի գործ շինի,
Վոր հացի, վարձի դառնա արժանի,
Թե չէ համառի ու մնա պոետ՝
Ի՞նչ հաշիվ ունի ազգը նրա հետ.
Ազգը՞ հո նրան չի խնդրում գրի,
Թերթն էլ փող չունի՝ թե վոր վճարի ..
Թող գնա ապրի իրեն գրիչով ...
Եսպես ենք դատում մեր մաքուր խղճով։
Ներշնչման համար
Եսպես է հարմար —
Ով սովից մեռել,
Նա՛ յե լավ գրել։
Կարող ենք մենք էլ

Եսպես մոլորակել
Ու ծաղրել մի-մի,
Վոր առաջ գիմի.....
— Ո՛վ ախոռ յերկիր, մոլորակի մարդիկ...
Դե՛հ, յեկ, սիրելիս, տանեմ քեզ յերկինք.
Ենտեղ յերջանիկ վոգիների հետ
Զվարթ կխնդաս ու կերգես հավետ.
Կամ կուզես թռցնեմ, հանեմ Վոլիմպոս,
Վոր նեկտար ըմպես, ճաշակես ամբրոս։
— Իմ ազնի՛վ մուսա,
Ա՛յ, եդպես խոսա։
Իրավ ես կյանքից յես շա՜տ եմ զզվել։
Ի՞նչ յերանություն՝ յերկնքում սուզվել,
Են չքնաղներին, վորոնք անկասկած,
Նման չեն իսկի մեր հայոց կանանց,
Լինել միշտ ընկեր
Ու սիրո յերգեր
Հորինե՛լ,
Զոնե՛լ,
Յերկրային չնչին հոգսերը թողած.
Կամ վոտներն հանգիստ ժայռերից կախած,
Նստել Պառնասի յերջանիկ գլխին
Ու բարձր նայել ես հիմար խալխին։
Բայց յես ունեմ կին, շատ յերեխաներ,
Նրանց բանն ենտեղ ինչպե՞ս կլիներ...
— Ո՛, յերբ Պառնասի գագաթ վերանաս,
Զավակներ ու կին պիտի մոռանաս։
— Ո՛վ դու անիրավ, ի՛նչ եմ արել քեզ,
Վոր ինձ իմ տանից եդպես բաժանես,
Չէ՛, լավ է կրկին, վոր յերկրում մնամ,
Ծաղրի, նեղության մի կերպ դիմանամ...
— Քո կամքը լինի, ապա՜ բանաստեղծ,
Ընտրիր, ուր կուզես՝ յերկինք, թե յերկիր,
Բայց միշտ, ամեն տեղ, յեղիր դու անկեղծ,
Մաքուր, սրտալի քո յերգը յերգիր։
Կանգնի՛ր միշտ վերև
Ու ինչպես արև՝
Նայիր լուսավոր,
Պայծառ ու հզոր.
Քո կոչումն է դա.
Յեվ ինձ հավատա,
Բոլո՛ր պանձերը, պոհարներն անգին
Զարժեն կարճատև քո ներշնչանքին։
— Ա՛յ դու սատանա, ե՛լ կուզես խաբել,
Մեծ-մեծ խոսքերով աչքերս կապել,
Ա՛յ դու կեղծավոր, սիրուն անպիտան,



Յես լա՜վ եմ տեսնում այժմ ամեն բան։
Դու ինձ ես մենակ միամիտ գտել.
Հապա դե խոսիր ուրիշի մոտ էլ,
Ա՛յ, թեկուզ մեզ մոտ, հենց իմ կնկանը,
Ասա, թե մենակ փողը չի բանը...
Բայց ի՜նչ եմ ասում, հայոց գրողը
Վաղուց է արդեն ճանաչել փողը.
Յեվ յերկա՜ր, յերկա՜ր մեր վողջ հանճարով
Մտածել ենք մենք դժար ուրերով՝
Գրողի պատի՞վ,
Թե՞ փողի քսակ...
Յեվ լավ ենք վճռել...
Դե գնա, Մուսա.
Գըրադարանս շինում եմ կասսա,
Թքում եմ և քեզ և քո պսակին,
Յերկրպագում եմ փողի քսակին։—
«Փողի քսա՜կը, փողի քսա՜կը,
Բարձրացընում է մարդու հասակը,
Գեղեցկացնում է հրեշ տգեղին,
Սրբագործում է գարշն ու աղտեղին։
Նրա ուժն է, վոր դարձնում է լոկ
Անասուններին հարգի ու խելոք,
Կույսին, զառամին մոտեցնում իրար,
Չարին, վաշխառվին շինում բարերար,
Պճնում ճակատը լիրբ ավազակի,
Կանգնեցնում արձան անվախճան փառքի։
Նա՛ յէ միշտ շարժում դատողի լեզուն,
Նա՛ յէ հասցնում աղոթքն աստծուն,
Նրա վրա՛ յէ աշխարհքը կանգնած,
Նա մեր վոգին է. մեր յերկրորդ աստված։
Գոետն էլ ընավ թե խոսել է վատ,
Տուժել է սատիկ, զղջացել է շատ,
Յեվ այժմ անհա խելքի յէ յեկել,
Սկսել է նրան որհնություն յերգել»։
Յերգս վոր լսեց իմ դժբախտ Մուսան,
Իսկույն հավաքեց իր փասա փուսան.
— Դեհ, մնաս բարյավ,
Անսի՛րտ, անիրա՛վ,
Յես եսքան տարի
Ինչ վոր քեզ արի,
Բոլորն ուրացար,
Փողապաշտ դարձար...

---

— Ի՞նչ միջավայր է նկարագրում ու ծաղրում այստեղ բանաստեղծը:
— Իսկապե՞ս նա մտածում էր «քնարը փոխել փողի կասսայի», թե դա գրական վորոշ ձեվ է՝ շրջապատի հասարակությունը ծաղրելու համար:

— Ո՞վ է այս պոեմում հայտնում բանաստեղծի իսկական մտքերը՝ ինքը բանաստե՞ղծը, թե մուսան:

— Համաձա՞յն եք դուք պոետի կոչման մասին նրա արտահայտած մտքերի հետ:—Ինչո՞ւ

— Ի՞նչ է ուզում ասել բանաստեղծն իր այս պոեմով:

— Ի՞նչ է ձեր կարծիքը դրա մասին:

---

— Համեմատեցեք այստեղ նկարագրված միջավայրը Շիրվանզադեյի «Քաոս»-ում նկարագրված միջավայրի հետ. կա՞ արդյոք տարբերություն այդ միջավայրերի յեվ նրանց ներկայացուցիչների մեջ:

---

— Միյեվնույն տաղաչափությա՞մբ է գրված այս պոեմը, թե տաղաչափությունը տարբեր է պոեմի զանազան մասերում:

— Առանձնացրեք տարբեր մասերը յեվ վորոշեցեք, թե ի՞նչ չափերով են դրանք գրված:

---

— Պա՞րզ է հեղինակի լեզուն, թե բարդ. ունի՞ արդյոք ավելորդաբանություններ. կարելի՞ յե արդյոք պոեմից դուրս գցել տողեր կամ կտորներ՝ առանց պոեմի ամբողջությունը խախտելու:

---



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Ի՞նչ ժամանակաշրջան են ընդգրկում այս բաժնի նյութերը:

— Ի՞նչ միջավայր:

— Ի՞նչից է այդ յերեվում:

— Տալի՞ս են արդյոք այս պատմվածքները վորոշ պատկերացում բուրժուական կենցաղի, բարքերի յեվ բուրժուական հասարակության վորոշ ներկայացուցիչների մասին:

— Վո՞ր հեղինակն է նկարագրել Վարդան Ահրումյանին:—Կարո՞ղ եք առանց կրկին անգամ կարդալու վերականգնել ձեր հիշողության մեջ նրա մանկությունը:—Վո՞րն էր նրա բնավորության հիմնական գիծը: Ինչո՞ւ յեր դա այդպես:

— Ո՞վ էր Մարկոս Ալիխյանը: Վո՞ր գրվածքում էր նա նկարագրված: Ի՞նչ վերաբերմունք ունեյին դեպի նա շրջապատողները.—Ի՞նչն էր այդ վերաբերմունքի առանցքը:

— Հիշում եք Աննա Սարոյանին:—Վո՞ր դասակարգի ծնունդ էր նա: Ի՞նչն էր նրա վողբերգական վախճանի հիմնական պատճառը:

— Փորձեցեք Շիրվանզադեյի «Քաոսից» բերված հատվածների յեվ Նար-Դոսի «Աննա Սարոյան» պատմվածքի հիման վրա գրել մի շարադրություն «Բուրժուական յերիտասարդությունը Շիրվանզադեյի յեվ Նար-Դոսի գրվածքներում» թեմայի մասին:

— Վո՞ր գրվածքում է նկարագրված մանր-բուրժուական քաղաքն իր բնակիչներով:—Կա՞ արդյոք այդ գրվածքում նկարագրված միջավայրի յեվ «Քաոսում» նկարագրված միջավայրի մեջ վորեվե նմանություն: Ինչի՞ց է բխում տարբերությունը:

— Միյեվնո՞ւյնն են արդյոք «Քաոսում» յեվ «Պոետն ու Մուսա»-յում նկարագրված տիպերը:

— Արդյոք դրանք միյեվնույն տիպերը չե՞ն՝ տարբեր ձեվով նկարագրված:

— Վո՞ր պատմվածքն ամենից շատ հավանեցիք:—Ինչո՞ւ:

— Վո՞ր հեղինակի պատմելու յեղանակը ձեզ առանձնապես դուր յեկավ:—Ինչո՞ւ:

— Ի՞նչ հիմնական տարբերություն եք տեսնում Նար-Դոսի «Աննա Սարոյան» յեվ «Նեղ որերից մեկը» պատմվածքների մեջ՝ ըստ պատմելու յեղանակի:

— Կարելի՞ յե արդյոք այստեղ զետեղված պատմվածքների հիման վրա Շիրվանզադեյին յեվ Նար-Դոսին համարել ժամանակակից գրողներ:—Յեթե վո՞չ՝ ինչո՞ւ:

---

— Ո՞ր դասակարգը նկարագրող գրողներ են Նար-Դոսը յեվ Շիրվանզադեն:

— Կարելի՞ յե արդյոք նրանց հերոսների գործածած լեզվից, վոճերից, առանձին դարձվածքներից յեվ անգամ բառերից վորոշել այդ հերոսների դասակարգային պատկանելիությունը:—Բերեք որինակներ, վորոնք այդ տեսակետից բնորոշում են նրանց։

— Առավելությո՞ւն է այս հանգամանքն այդ հեղինակների համար, թե՝ պակասություն։

---

— Կարդացեք Շիրվանզադեյի «Վարդան Ահրումյան»-ը յեվ Նար-Դոսի «Աննա Սարոյան»-ն ամբողջությամբ

— Կարդացեք նայեվ Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածքների ժողովածուն:

---



# III. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՅԵՎՆՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ

# ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

## ՉՈՒՉՈՒ—ՔԱՐ

Չուչու—քար կոչվածը մի ժայռոտ և անտառապատ լեռ էր, որ ցցվում էր կնճռոտ ձորակի ծայրին։ Տեսնում էինք նրա կրծքի վրա, ապառաժները ճեղքած և դեպի անդունդը խոնարհված կաղնիների տակ, մթին, խոշոր քարայներ, որոնց հասնելը մեզ թվում էր ուղղակի անհնարին։

Ցերբ քիչ ավելի հարթ տեղ էինք հասել, հարցրի նրանց մասին։

— Այնտեղ մեղվի փեթակներ էին պահում գյուղացիք. չերևի առաջ փարախներ են չեղել և կամ ով գիտե՝ ինչ։ Սակայն այդ այրերը նշանավոր են նրանով, որ այնտեղ են սպանված չեղել Հասար գյուղացի չորս հայտնի չեղբայրները… Անշուշտ, լսած պիտի լինեք նրանց մասին։

— Ոչ,—ասացի ես,—ինչ չեղբայրներ են դրանք։

Ընկերս գլխով համբերության հրավիրեց և պատմեց մեզ Չուչու-քարի մասին։

— Հասարցի չորս չեղբայրներն իրանց գյուղի ամենակտրիճներն էին։ Տունուտեղ էլ ունեյին. ամենքից մեծը, որ հիսնամյա հսկա մարդ էր, ամուսնացած էր. միայն մի մանուկ ուներ, տասնամյա տղա. մյուսներն ամուրի էին, ամուրի չել մեռան. դուք, իրավ, չե՞ք լսել Դուգանի Հաբեթ աղայի մասին։

— Ո՛չ։

— Հաբեթ աղան,—սկսեց ընկերս,—բազմահարուստ մի աղա չեր իր շրջանում. հարուստ և լիրբ… Փողի ուժը փորձել էր և լրբացել… Փողը, մանավանդ այդպիսի խուլ տեղերում, տեր և իշխան է ամեն բանի… Ունես փող—ունես ամեն ինչ. կարող ես գողալ, կանչել, հայհոյել, ծեծել… Անհոգ կաց, ամենքը կատու կդառնան առաջդ. քանի ամուր զարնես, այնքան ավելի կքծնեն. քանի պինդ գոռաս, այնքան ավելի լեզուները դուրս կհանեն։ Փո՛ղ ունիս. դա

հանաք բան չէ... Յեվ Հաբեթ աղան փող ուներ, շատ փող... Այսպես կամ այնպես՝ նա դիզել էր բավական, տոկոսով էր տալիս—ի նկատի ունեցեք հարյուրին ամենապակասը 20, հաճախ 40 և դեռ չհաշված ընծաները, ձրի աշխատեցնելը, վորևէ բան կես գնով պարտատերից կորզելը, գյուղի մեջ ամենալավ պատառների տեր դառնալը։ Ու դիզում էր այդպես։ Կենտրոն էր դարձել և կամաց-կամաց շրջան էր գծում իր չորս կողմը, ձեռքը հասնելու չափ վոտների առաջն էր քարշ տալիս հասնողներին։ Նախ, իր գյուղացիներին էր սարուկ շինել, մուրհակներով, գրավներով շղթայել, հետո շրջանը մեծացրել էր այնքան, վոր հասել էր մինչև այս կողմերը, մինչև Հասար և դեռ ելի հեռուն... Գյուղացի չկար՝ վոր պարտք չունենար նրան։ Տոկոսները հենց—մի տարվա տոկոսն—ինձ ու իմ ընտանիքիս կապահովեյին ընդմիշտ։ Միայն կանխիկ փող այնքան թողեց, վոր մեռնելուց հետո վորդին քաղաքում ցորենի նման, բռով դես ու դեն ցրվելով հազիվ 3 4 տարում հասավ իր շորերը ծախելու որին...

Վերադառնանք, սակայն, Հաբեթ աղային։ Յեվ այսպես՝ նա իր գրպանի և բռան մեջ էր հուպ տալիս մի ամբողջ գավառ։ Իր յուղը, պանիրը, բուրդն ու հնձվորները՝ տոկոսի տոկոսներն եյին. իսկ տոկոսի տոկոսի տոկոսները.—«Այսոր բաղս փորելու յեկ, Արշա՛կ... Եգուց յեզներդ ղրկիր գութանի, Մարկո՛ս... Յեկող շաբաթ պատս պիտի շինես, ուստա Ղազա՛ր...»։ Յեվ կամ—«Ես ո՞ւր ես, ա՛յ համբազաղա Թորոս, բաս թողնելու յե՞ս, վոր ես ծեր հալովս գնամ ցորենս հնձեմ, բերեմ կալըս...։ Հասկանո՞ւմ եք... Սրանք բուն տոկոսները չեյին դեռ. բուն տոկոսներն սկսվում եյին ձմեռնամուտին... «Ղազա՛ր, մուրհակիդ որը հասել է... Ադա Մարկո՛ս, փողս չե՞ս տալու... Տո Արշա՛կ, թե փող չունես տոկոսը տալու, էլ ո՞ւր ես հարոցիդ խոտը տուն տանում»... Յեվ ժողովում էր և ճզմում սարդից ավելի անգութ։

— Որերից մեկ որ էլ,—շարունակեց ընկերս,—Հաբեթ աղան լուր է ուղարկում Հասար Սողոմոնին թե՝ «դե շուտ, յերկու որ կա մուհակիդ լրանալուն, փողն ու տոկոսը բեր, թե չէ, ես ա՛գալիս եմ տավարդ առաջս անեմ, քշեմ ու ծախեմ»։

Բանն այն է, վոր խեղճ Սողոմոնն ու իր յեղբայրները վաղուց պարտք ունեյին աղային։ Մի տարի տավարների հիվանդությունը կոտորել էր գոմեշներին, յեզներն էլ սովածությունից ընկել սատկել եյին, տուրք պիտի տային, ինչ անեյին. մի քանի, կարծես հենց յերկու հարյուր ռուբլի՝ տոկոսով առել եյին, 40 տոկոսով. պարտքն էլ, գիտե՞ս խո, ձնագնդի նման գլորվել էր, գլորվել, սար էր դարձել և դեռ ելի գլորվում... Ջուչա-քարի չափ էր լինում։



— Յերևի յերկու հարյուրը՝ չորս էր դարձել,—հարցրի յես։

— Առանց տոկոսների... Դեհ, խեղճ Սողոմոնն ու յեղբայրները չորս հարյուրը մի անգամից ինչպե՞ս տային։ Այդ տարին էլ հակառակի պես անձրևային էր, կալերը ծլել եյին, գետնախնձորը փչացել։ Անիծվի այս յերկիրը, ամեն տարի հո այդպես է... Հաբեթ աղան, ո՞վ գիտե, ինչո՞ւ—յերևի Սողոմոնը շատ խոնարհ վողջույններով չէր հանդիպել նրան—թշնամացել էր, այժմ իր բոլոր առնելիքն էր ուզում։ Մի կողմից էլ յերևի տեսնում էր, վոր պարտքն աճում է, իսկ վճարող աղբյուրը՝ ցամաքում։ Մտածում էր՝ քանի շուտ էր, յեղածը սաղացներ։ Պահանջում էր. կարո՞ղ ես գոռալ, վճարել. ձեռք ես քաշել՝ պիտի վճարես։ Սողոմոնս էլ, շատ դեսուդեն է անում, լուր է ուղարկում, աղաչում, բայց տեսնում է, վոր աղաս անդրդվելի յե, մի որ էլ չարուխները հագնում, վոտքով Դուզան է գալիս, վոր ինչ է՝ անձամբ աղաչի, պաղատի, գուցե մուրհակը կաբողանա նորոգել տալ։ Մի 20—30 մանեթ ճարում է, վոր տոկոսները վճարի, գուցե խղճան և ժամանակ տան...

Գալիս հասնում է գյուղ, վոր Հաբեթ աղան նստել Սերովբենց դուքանումը, գլխին է հավաքել գյուղացոց ու ղալմաղալի մեջ է, տոկոսներն է հավաքում, նեղսրտվել է, գոռգոռում է, հայհոյում։

— Բարև, Աստծու բարին...

— Հա՛, յեկա՞ր... Յե՛կ տեսնենք, գոնե դու պարտք բեր, թե չէ ես անիծածներն ինձ սոված են թողնելու այս ձմեռ։

— Աղա, յես...

— Հը, ինչ կա։ Քեզ հետ էլ կովե՞նք... Տո, ես ինչ անամոթ, լիրբ խալխ եք... փող եք առացել՝ դե բերեք, տվեք, ելի... Էլ ո՞ւր եք նեղացնում, ես կիրակի որով հայհոյանքներ հանում բերնիցս... Ջի լինիլ, չէ, ամբողջը պիտի տաս, հերիք է համբերածս...

Սողոմոնի լեզուն՝ ասես կապվել էր։ Անձայն հանում է 30 մանեթը, դնում աղայի առաջ և աղաչում թե՝ ես եյեղածը, աղա՛, վոր քամես մեզ, ավելին չունենք։ Մուրհակը նորոգիր, գուցե գարնան...

— Վո՞նց թե գարնան... Տո, իծի մորուք, յես քո խաղալի՞քն եմ, կամ թե չէ՝ փողը դաշտի՞ց եմ գտել... բաս իմ ողերքը հաց չե՞ն ուզիլ, դու գարնան կարո՞ղ ես չորս–հինգ հարյուր մանեթ մի անգամով տալ...

Էլ ինչ է լինում, ինչ չի լինում—մի թունդ կռիվ ու հայհոյանք հետևում է դրան։

Մանրամասն չի հասել մեզ, թե ինչպե՞ս է լինում, վոր Հաբեթ աղան մի թունդ, լկտի հայհոյանք է բաց թողնում բերնից, յետևվից էլ մի մեծ ապտակ հասցնում Սողոմոնին։ Սողոմոնս էլ մո-

ռանում է աղա պարտք, անճարություն, արյունը գլխին է խփում, տանում է բերում և այնպիսի մի հարված հասցնում աղային, վոր սա յետ-յետ է գնում ու խանութի գետինը չափելու պառկում։

Մի խառնաշփոթ, մի աղաղակ։ Վո՜նց, Հաբեթ աղան ծեծ ուտի՜, խանութի փոշի՜ն ավելի։

Բայց դեհ, թափվում են գյուղացիք, մեջ են ընկնում, աղային բարձրացնում, շորերի փոշին թափ տալիս, ճգնում են հաշտեցնել, Սողոմոնին են համոզում, աղային աղաչում՝ ներել։ Բայց վոչ կորին և սրտի խորքից վիրավորված լեռնցին է ուզում աղաչելով հաշտվել և վոչ էլ լիրբ ու յերես առած բռնավորը՝ զիջել և ներել։

— Գնա՛, — կանչում է նա կատաղած, — գնա՛, յես մարդ չեմ լինի, յեթե դու և բոլոր ցեղդ այս ձմեռ չկոտորվեք քաղցածությունից։

Ու կատարում է սպառնալիքը։ Ճշմարիտ է, կերած ծեծը վոչինչ, բայց մեկ մտածեք... Հաբեթ աղան, գավառի գլխին կակալ կոտրողը, ամենքի վրա անպատիժ գոռացողը, ամենքին վախ ու դող ազդողը... Յեվ հանկարծ՝ ծեծված մի ինչ-վոր լեռնցուց, փռված գետին, վոտքի տակ, այն էլ վողջ գյուղի առաջ... Վատը չէ՞ վոր լուրը կտարածվեր, ամբողջ նահանգի խոսելիքը կդառնար։ Վոչ, պետք է ցույց տալ, վոր անպատիժ կերպով չէր կարելի նույնիսկ բարձրաձայն խոսել նրա նման «իշխանի», նրա նման գավառի մեծի, աղայի հետ...

Այդ ձմեռ Սողոմոնն ու ընտանիքը, բոլոր յեղբայրները, հիրավի, մնում են համարյա անոթի։ Աղան ամեն կերպ աշխատում է և փողի ուժով հաջողվում է հասցնել նրանց այդ դրության։ Խլում է տավարը, խոտը, կալի արդյունքը... Սողոմոնի կինը կրած տանջանքներից մեռնում է, թողնելով վորբ տասնամյա մանուկին։

Գարունը յերբ բացվում է, այլևս չկան վոչ յեզ, վոչ գոմեշ, վոչ սերմացու, վոչ փող... Չորս յեղբայրները դառնում են որվա հացի կարոտ մարդիկ։

Յեվ մի խորունկ գայրույթ, վառվող կատաղություն բռնկվում է մի ժամանակ մեծ, առատ տան զավակների սրտի մեջ։ Ավելացրեք դրանց վրա Հաբեթ աղայի ծաղրը, չարախնդաց ակնարկները, ամեն տեղ, ամեն բանում նրանց վնասելը։

Վո՛չ, տանել չէր կարելի այլևս։ Հարկավոր էր քանդված ոջախի վրեժն առնել, գա՛վառն ամբողջ ազատել կլանող հրեշի ձեռքից, վիշապի ակռաները խլել։

Այս և ուրիշ այս տեսակ մտքեր ներշնչում էյին յեղբայրներին՝ թողնելու ամեն ինչ և ընկնելու լեռները։ Մի գիշեր էլ զինված իջնում են Դուզան, գտնում գյուղի գիշերապահներից մեկին, ստի-



պում, վոր նա մի պատրվակով բաց անել տա Հաբեթ աղայի տան դուռը, ներս են նետվում և բռնում աղայի կոկորդից։ Մեկը գտնում է բոլոր մուրհակները, դիզում, վառում է, իսկ Սողոմոնը վար է բերում տանտիրոջ արծաթապատ հրացանը, կամենալով զրկել նրան պաշտպանվելու միջոցից։ Սպառնում է սպանելու, յեթե նա չի ցույց տա փողերի տեղը։ Այդպիսով մտածում է իրենց քանդած տունը վերանորոգելու գումար ձեռք բերելուց հետո՝ թողնել հեռանալ։

Հաբեթ աղային և վոչ իսկ ճչալ է հաջողվում. կինն ու վորդիները սարսափահար՝ կծկվում են անկյունում. ոգնություն կանչել անհնար է, գիշերապահի վրա իսկ հսկում է յեղբայրներից մեկը։

— Ուրեմն մտադիր չէ՞ն յեղել սպանել աղային, — հարցնում եմ յես ընդհատելով։

— Վո՛չ, արյուն թափել վոչ վոք չի կամենում. Սողոմոնը մինչև իր կյանքի վերջը յերդվում էր, վոր նա չէր կամեցել Հաբեթ աղայի մի մազն իսկ շարժել տեղից, այլ միայն դիզած մուրհակները վոչնչացնել և միքանի հարյուր ռուբլի ձեռք բերել — գնալու ուրիշ յերկրում տեղավորվելու համար։ Բայց փող քիչ են գտնում, հազիվ յերկու հարյուր. աղան, ըստ յերևույթին, զգույշ մարդ է յեղել։ Ինչ վոր է լիներ, գլխավոր խնդիրը կատարված էր, ամբողջ գավառի շղթաները — մուրհակները վոչնչացած էյին։ Յեղբայրները գոհ պատրաստվում են հեռանալու։ Սողոմոնը կամենում է հետը վերցնել նաև աղայի լի հրացանը, վախենալով վոր հետևից չխփեն իրեն։ Խելոք էր մտածում. Հաբեթ աղային ճանաչողը պիտի իրավունք տար Սողոմոնի կասկածներին...

Բայց մուրհակներից հետո նրանց տերն ապրել չէր կարող։ Հիմարությո՞ւն է գալիս Հաբեթ աղայի վրա այդ միջոցին, թե՞ հիրավի նա կամեցել է յեղբայրների հետևից զարնել՝ փաստն այն է, վոր նա անմիջապես բռնում է հրացանի փողից և չի թողնում, վոր տանեն։

— Ինչ վոր տարար, վնաս չունի, — գոչում է նա, — բայց հրացանս թո՛ղ, պապենական հիշատակ է...

— Թո՛ղ տուր, շո՛ւն, — ճգնում է նրա ձեռքից քաշել Սողոմոնը, — թողնեմ, վոր յետևից զարնե՞ս մեզնից մեկին...

— Վո՛չ, յերդվում եմ...

— Յերդվո՞ւմ... քեզ նման շո՞ւնը... Թո՛ղ տուր։ — Յեվ պինդ գետնի յերեսին քարշ գալով կառչում է աղան իր հրացանի փողից։

Մինչև այդ, աղայի կինն սթափվում է, դուրս է վազում և ճիչ ու աղմուկ բարձրացնում։ Լսվում են աղմուկներ, շների հաչոց։ Պետք էր փախչել, բայց աղան ձյութի պես կպել է հրացանից. վոչ

աքացիները, վոչ գլխին տված բռունցքները չեն կարողանում պոկել նրան։ Յեղբայրները հասկանում են, վոր վաշխառուն դիտմամբ է սարքում այս տեսարանը, մինչև ոգնության հասնեն, բռնեն նրանց, և կամ, յեթե հրացանը թողնեն, յետևից գնդակահար անի մեկնումեկին։

— Շուտ, յեղբայր,—ձայնում է Սողոմոնին կրտսերը,—գալիս են, վերջ տուր՝ գնանք, գյուղը վոտքի յե յելնում...

— Ի՞նչ անեմ, թողնեմ հրացանը...

— Տո, ինչ ես շվարել,—գոչում է Ղուկասը.—բլթակը քաշիր։

Յեվ իրավ, ուրիշ ճար չկար։ Սողոմոնը քաշում է բլթակը... լսվում է մի խուլ թնդյուն, հետո բարձրանում է ճիչեր, աղմուկ, և չորս յեղբայրները հազիվ կարողանում են իրենց դուրս նետել գյուղից, մտնել անտառները և ազատվել հետապնդումից։

Այլևս նրանք «ղաչաղ»-ներ են... Ղաչաղներ՝ ազատ, բայց տխուր, վոր մարդ են սպանել և այժմ հալածական, անտուն, մի մանուկ ել հետներին, աստանդական, վոչ մի տեղ հանգիստ չեն գտնում։ Սողոմոնի յերեսից ժպիտն անհետացել եր։ Իրավ է, գյուղացիք ոգնում եյին նրանց, յեղբայրներից գյուղ իջնողին տալիս եյին պաշար, վոչխար, հագուստ, սակայն մյուս կողմից հալածանքն ստիպում եր միշտ շարժուն, միշտ թագնված, քարայրների, խիտ անտառների մեջ ապաստանել, վոչ ազգականի յերևալ, վոչ հայրենի գյուղը մտնել։

Այսպես նրանք փախստական՝ ապրում են ամբողջ ամառը։ Քանիցս ձիավորների զինված խմբեր, նրանց յետևից ընկած՝ վորոնում-գտնում են, բայց միշտ փախստականներին հաջողվում է ազատվել, մինչև մի որ ել, այդ դժբախտ Զուչա-քարի մոտ ապաստանած ժամանակ, մատնության շնորհիվ, թե պատահմամբ, պաշարվում են հանկարծ, անհույս՝ այս անգամ ազատվելու...

Ու կռվում են, վորքան հնարավոր է չորս հոգուն, մի մանուկ ել հետները՝ հարյուրի դիմաց։

Յեղբայրներից կրտսերը զարնվում է թփի տակ և մեռնում տեղն ու տեղը, յերկրորդը վիրավոր՝ ժայռերից գլորվում է ձորը և փշրվում քարերի վրա՝ մի քարայրի մոտ, և նա յել բանտում է մեռնում, իսկ Սողոմոնն արյունաքամ, միքանի գնդակ մարմնի մեջ, տասնամյա վորդուն գրկած՝ նետում է իրեն, նայեցեք այն վիհին՝ մեծ «քարայրը»...

Սայլն այդ միջոցին կանգ առավ. ձիերից մեկի սանձը կտրվել եր. կառապանն իջավ, բայց յերևի նա յել եր լսում պատմողին, վորովհետև ներքևում կանգ առավ և փոկը ձեռքին՝ սպասեց։



— Յեվ այնտեղ,—շարունակեց ընկերս հուզված,—թշվառ ծերունին թեև չի գտնվում, բայց յերկու որ պաշարված, արյունաքամ, անխնամ և անոթի, վորդին սեղմած կրծքի վրա, մեռնում է՝ անիծելով լեռն ու ձորը, կյանքն ու նրա դառնությունները, աղայի ամբողջ սերունդն ու հայրենի հողը... Անիծելով բոլոր նրանց, վորոնք սրտի փոխարեն քար են կրում կրծքերի մեջ...

Յերկու որից հետո պաշարողները քայլ առ քայլ խուզարկելով՝ հասնում են քարայրին և սառած կանգ են առնում արյունալի տեսարանի առաջ... Ծերունի հայրն արյունաթաթախ մեռած, իսկ մանուկն անոթությունից և հուզմունքներից՝ նվաղած նրա կրծքի վրա...

---

Պատմեց ընկերս և լռեց։

Դուզանը յերևում եր դաշտի ծայրում, իր կարմիր տանիքներով, գետեզրի ծառաստաններով։ Մեր կառքն, ընկած հարթ հողի վրա, գլորվում եր արագությամբ։

Վոչ վոք չխոսեց այլևս։ Կառապանը նստեց, սանձերը ժողովեց և մտրակեց ձիերին։

---

— Ո՞վ էր Հաքեբ աղան, ի՞նչպես էր նա հարստացել յեվ իր ազդեցության տակ գցել ամբողջ շրջանը:

— Հաքեբ աղայի վերաբերմունքը դեպի չքավոր գյուղացիները: Ի՞նչ միջոցներով էր նա ստրկացնում նրանց:

— Ովքե՞ր էյին չորս յեղբայրները: Ինչո՞ւ նրանք լարվեցին Հաքեբ աղայի դեմ:

— Ուզո՞ւմ էյին նրանք սպանել Հաքեբ աղային, թե վոչ: Ինչո՞ւ նրանք այրեցին Հաքեբ-աղայի մոտ գտնված բոլոր մուրհակները:

— Մուրհակներն այրելով կարո՞ղ էյին նրանք վոչնչացնել շահագործումն ու չքավորությունը գյուղում:

— Չորս յեղբայրները հասկանո՞ւմ էյին արդյոք իրենց չքավորության յեվ Հաքեբ աղայի դիրքի ու ազդեցության իսկական, բուն պատճառները:

— Ինչո՞վ վերջացավ նրանց ըմբոստացումն Հաքեբ-աղայի դեմ: Կարո՞ղ էր այդ ըմբոստացումն այն ժամանակ այլ կերպ վերջանալ: Յեթե չէր կարող՝ ինչո՞ւ. ի՞նչն էր խանգարում *(թվեցեք պատճառները)*:

---

— Ո՞վ է այս պատմվածքի կենտրոնական հերոսը. Հաքեբ աղա՞ն, թե չորս յեղբայրները:

— Այս պատմվածքի վո՞ր տեսարանն է ամենասարսռուչը:

— Ո՞ւմ կողմն է ձեր համակրանքը՝ Հաքեբ աղայի՞, թե չորս յեղբայրների

— Ո՞ւմ կողմն է հեղինակի համակրանքը, ինչի՞ց է դա յերևում:

— Ո՞վ է այս պատմվածքում պատմում Զուչա—քարի մասին՝ հեղինա՞կը, թե մի ուրիշը:

— Կա՞ն արդյոք պատմվածքում գավառական բառեր ու դարձվածքներ: Ի՞նչ նպատակներով են դրանք գործածված:

# ՀՈՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԸ

Հոփարցի կոչվող փոքրիկ գյուղի մոտ, Դուզանի հողերին կից, չորս-հինգ որավարի չափ քարոտ մի տարածություն կար, վոր ցանցառ թփիկներով միանում էր անտառին։

Արքունի սեփականություն էր այդ. սակայն գյուղացիք, վոր մի առանձին հաճույք են զգում այդպիսի հողերից վորևէ կերպ ոգտվել—արժան իսկ չէյին համարում այդ կտորին ձեռք տալ, վորովհետև ծայրից-ծայր քարերի մի հոսանք ծածկել էր նրան։ Տավարներն անգամ չէյին մտնում այնտեղ։ Փուշ, տատասկ—վորքան կուզեք։

Միքանի որից ի վեր, սակայն, հովարցիներն ապշելով նկատում էյին, վոր մի ինչ-վոր գյուղացի, սայլը լծած, անտառից յելնելով, գալիս կանգ էր առնում այդ հողի ծայրին, յեզները բաց թողնում, իսկ ինքը, հողի վերին ծայրիցն սկսած, ձեռնարկում էր մի առ մի ժողովել ջարերը, դեզ առ դեզ կիտել, փուշ ու տատասկն էլ պոկ տալ ու յեզերքներին շարել։

Սոսկալի «անմիտ» աշխատանք էր սկսել «խենթ» գյուղացին։

— Ադա, խո չի՞ գժվել էդ ուզուն-ախմախը,—ասում էյին հեռվից անցնողները միմյանց,—էն ո՞ւր ա քարերը կիտում ընենց։

Մտքներովն անգամ չէր անցնում, վոր Թեոսը մտածում էր հողը մշակելի դարձնել, հերկել ու վարել։ Շատերը յենթադրում էյին, թե անշուշտ ուզուն-ախմախը պետք ուներ քարի կամ փշերի։ Միքանիսները, սակայն, կռահեցին ու ծիծաղում էյին։ Նախ վոր պետական հող էր, յերկրորդ՝ յերբեք չհերկած, խոպան, անբերրի։ Յեվ հետո, մի՞թե, հիրավի, Թեոսն ընդունակ պիտի լիներ հողը շուռ տալ գութանով, աղբել, այդքան փուշն ու տատասկն արմատախիլ անել, ճիլ դարձած շերտերը քրքրել և վորևէ բանի գործածել։

Ու այլևս անուշադիր անցնում էյին։

Ճիշտն այն էր, վոր Թեոսը վճռել էր մշակել այդ հողը։ Հող էր հարկավոր նրան։ Գիտեր, վոր համառ աշխատանքով կարող էր ամեն հողից ոգտվել։ Յեվ վերջապես ամեն տարի յել խո չպե՞տք է մուրացկանի նման, գիժ հացով թունավորել իրեն, ընտանիքին, արա-նրա դուռն ընկնել, ձմեռը՝ սովել, գարնանը՝ չնչին գնով այսայն հարստահարողի մշակը դառնալ...

Վոչ, հարկ էր աշխատել, հող ունենալ։ Ի՞նչ է, Մելիքի չափ էլ չկար։ Նրա նման հարուստ չէր, վոր հաջողվեր անտառի կուրծքից կորզել, անտառապահին կաշառել, խլած հողի ծառերովը տուգանքներ վճարել, պետության դեմ դատի յելնել...



Բայց ահա գտել է մի հող, վոր լիովին անպետք, խոպան էր և վոր վոչ-վոքի ուշադրությանը չէր արժանացել։

Համոզված էր, վոր տերությունն անգամ չէր փորձի արգելք լինելու։ Ինչի՞ն էր պետքը. վոչ անտառ կար վրան, վոչ խոտ կարելի չէր հնձել. ինքը քարոտ, հավիտյանս-հավիտենից խոպան մնացած։

Յեվ, վերջապես, մի՞թե իր քրտինքն ու աշխատանքը բավական չէյին՝ հողին տեր դառնալու համար։ Հող, վոր իբրև անպետք՝ դեն էր ձգված և վորը, իր աշխատանքով, նա պիտի դարձներ պետքական, արժեք ունեցող և հողի աշխատավորին կերակրող։

Այդպիսի մտածումներով էր, վոր Թեոսը ձեռնարկել էր գործի։

Ծրագիրն այսպես էր.—մաքրել հողը քարերից, դիզել կույտ-կույտ, սայլով դուրս տանել և ապագա պարսպի համար հավաքել. փշերն ու տատասկներն արմատախիլ անել, ցախի տեղ բանացնել, պարսպի վրա դնել՝ տավարների դեմն առնելու համար. հետո գութանով շուռ տալ հողը ծայրից-ծայր, կտրտել-հաշմել հողի միջի արմատները, ապա թողնել, վոր ձյունը գար վրան, մի լավ փխրեր, իսկ գարնանը՝ գետնախնձոր տնկել։

Գետնախնձոր, այո։ Ահա միակ միջոցը՝ հողը փափկացնելու։ Յեվ յերբ անպետք տարածությունն այդ բոլորից հետո դառնար վարելահող՝ պետք է աղբել նախ, ապա մեկ տարին ցանել վարսակ, մյուս տարին՝ գարի, և միքանի տարուց հետո Թեոսը հույս ուներ տեր դառնալ ցորենի համար բավականաչափ լավ, մեծ և իր ընտանիքը կերակրող արտի։

Այդ ծրագիրը գտնում էր իրագործելի, վոր վոչ տերությունը պիտի վորևէ արգելք լիներ, և վոչ էլ ինքը պիտի աշխատանք խնայեր։

---

Յերբ լսեցի, թե ուզուն-ախմախը, հիրավի, ձեռնարկել է այդ անսովոր աշխատության, սաստիկ հետաքրքրվեցի տեսնել հողը, տեսնել հողի աշխատավորին—և պիտի ասել՝ հսկա աշխատավորին, վորովհետև գիտեյի, թե վորպիսի տաժանելի, տոկուն և մեծ աշխատանք էր հարկավոր՝ ցորեն ունենալու համար մի այդպիսի խոպան տարածությունից։

Աշունը գրեթե սկսվել էր Դուզանում.—ամպամած օրեր, անձրև մաղող շաբաթներ, խոնավ, մշուշոտ, ցեխ և ճնշող յեղանակներ։

Այնուամենայնիվ հաջողվեց ինձ հասնել Թեոսի հողին։

Ուզուն-ախմախն արդեն կիսից ավելին մաքրել էր քարերից ու տատասկներից և ձեռնարկել՝ այժմ այդ կիսի հողը շուռ տալ գութանով։

— Բարև, Թեոս։

— Ա՛յ աստծու բարին։

— Ա՛յ տղա,— կանչեցի նրան,— ինչո՞ւ չթողիր գարնան հերկելու. հողը գոնե քիչ կկակղեր։

— Վնաս չունի,— գոչեց Թեոսը, առանց մաճը ձեռքից բաց թողնելու,— անձրևները կակղացրել են. գարնանն էլ կհերկեմ, կթամզեմ, հլա կփոցխեմ էլ ու կարտոֆիլ կցանեմ...

Ու շարունակեց հերկել։ Վորդուն նստեցրել էր մի լծի վրա, վարձել էր չորս զույգ գոմեշներ, և գութանի տակ հողն արագությամբ շուռ գալով՝ խոր ակոսներ էր կազմում։

Անտառային հող էր յերևում տակի շերտերում։ Ըստ յերևույթին շատ առաջ այստեղ անտառ պիտի յեղած լիներ։ Թեոսը չեր սխալվել և յեթե շարունակեր այդպիսի անդուլ գործունեյությունը, մյուս տարվա վերջին իսկ կարող էր մի աշնանացան փորձել նրա վրա։

Մնում էր տեսնել այժմ, թե տերությունը, անտառապահն ու պահապանը ինչպես կվերաբերվեյին Թեոսի «հափշտակությանը»։

Թեոս,— ասացի յես,— բաս ինչ կանես, յեթե գան ու հողը ձեռքիցդ խլեն։

- Վո՞նց,— ասաց նա և մաճը ձեռքից բաց թողեց,— յանի ընչի՞ պիտի խլեն. պակաս աշխատանք եմ դնում վրե՞ն... չոլ էր, քարոտ, փշոտ, դեն գցած հող... քրտինքովս կակղացրել եմ, ես ձեռներովս քարերը մեկ-մեկ հավաքել, փշերը դուրս տվել... բա ընչի՞, մադամ թալան ա էս աշխարքը, վոր գան ու աշխատանքս խլեն ձեռքիցս...

— Տերության հող է, քեզ հո իրավունք չե՞ն տվել մշակելու. մեկ էլ տեսար՝ յեկան, վզակոթիդ խփեցին ու...

— Ո՞վ, անտառապա՞հը,— կանչեց Թեոսը,— չի կարալ... եղքան զակոնը գիտենք...

Ապա ժպտաց, սրբեց քրտինքն ու յեկավ մոտս։ Նստել էյի քարակույտերից մեկի վրա։

— Չի կարալ.— ավելացրեց նա անվստահորեն,— շատ-շատ գանգատ կտա, պրատակոլ կշինի, կկանչեն, հրեն, այ, են կեսը ցույց կտամ... իրանք էլ կտենան, վոր անպետք, դեն գցած հող էր, կծիծաղեն նրա վրա ու... բան չեն ասի։

Գլուխս յերերցրի։ Միամիտ Թեոս։ Ըստ յերևույթին յերբեք գործ չեր ունեցել այն անհամար չինովնիկների հետ, վորոնք ծիծաղել գիտեն միմիայն իրենց զոհերի ճիչերի վրա, վորոնք վոչ մի առիթ չեն փախցնում Թեոսներին անգամ տանջելու, ճզմելու...

---



Ապահով էյի, վոր Թեոսի արածը գաղտնիք մնալ չեր կարող։ Անշուշտ անտառի թե՛ պահապանը և թե՛ ոգնական հսկողները լսած պիտի լինեյին։ Մի որ գյուղում, իմ ներկայությամբ իսկ, յերբ Նիկոլը հարցրեց անտառապահին, թե գիտե՞ր նա արդյոք «ուզուն-ախմախի» արածը— պահակը ժպտաց ու ասաց.— Գիտեմ։ Թող անի, ինչ կա, տերությունն ուրախ կըլի, վոր իրա հողերն ըտենց մաքրեն ու պետքական դարձնեն։

Գյուղացիք միմյանց նայեցին, հասկացան ու քրքջացին։

Բայց յերևի այդքան էլ անխիղճ չեր անտառապահի ոգնական Ավագը, վոր մի որ հրացանն ուսին՝ տնկվեց հանկարծ Թեոսի առաջ ու գոչեց.

— Ադա՛, էդ ի՞նչ բանի յես, ա՛յ ուզուն ախմախ։

Թեոսը մաճի վրա ընկած, գոմեշները քշողների «հորովելին» էր ձայնակցում։ Թեև տեսավ Ավագին, բայց չլսեց ասածը։

— Բա՛, քեզ հետ չե՞մ... էդ ի՞նչ բանի յես է է...

— Հա՛, հա... կանգնեցրեց գութանը Թեոսը և դարձավ դեպի յետ։

— Ի՞նչ կա, Ավագ, խեր ըլի։

— Ադա՛,— ձայնեց ոգնականը,— բա դու խո չես գժվել։ Էդ ո՞ւր ես կազյոննի հողը վարում, կասես քո՞նն ըլի։

— Յանի վո՞նց...— ժպտաց շփոթված Թեոսը.— ես խո անպետք, դեն գցած հող ա։

— Վո՞նց թե դեն գցած,— ձայնն ավելի բարձրացրեց Ավագը,— տո քե՞զ ինչ, տերությանը չի՞. կուզի անպետք կթողա, կուզի կըվարի։

— Դե յես էլ վարում եմ, էլի...

— Փիշե...— բացականչեց ավագը զարմացած,— էն խաչը՝ վոր գժվել ես, տղա։ Ընչի՞, չե՞ս իմանում, վոր կազյոննի հողը թողալ չեն, վոր վարես։

— Հլա կաց, Ավագ,— ասաց Թեոսը, թողեց մաճը և պահապանի ոգնականին մի կողմը կանչեց.— դու քո աստվածը, յանի ես հողը քարոտ, փշոտ, անպետք ու ավարա հող չե՞ր։

— Հա՛, դրուստ ա, հետո՞։

— Հետո յել են, վոր յես թամզել եմ, հողը շուռ եմ տալիս, գարնանն էլ կաղբեմ...

— Յա... արեց Ավագը,— տո վո՞նց թե...

— Կաց, կաց,— ընդհատեց Թեոսը,— դեն գցած հող էր, հարոցի անպետք, ծառ՝ սկի չկա վրեն. տերությանը վոչ մի խեր չկար սրանից։ Դե, յես էլ անհող, քաղցած... յես վարում եմ, քրտինք

թափում վրեն, վոր բալքի միքիչ հաց հանեմ... Բա դուք ինսաֆ չունե՞ք, ողլուշաղի տեր չե՞ք... Թե մեշիցը, Մելիքի պես, զավթեյի, վզիս տվեք, առեք. ամա դե, ըհը այ, խո տեսնում ես, ես ձեռքերովս եմ տակոիքը մեկ-մեկ հանել, քարերն խառակել, ճլոտ հողը քրքրել․

— Տո՛ փիչե՜...— գոչեց տաքացած Ավագը,— ո՞վ քեզ կանչեց, վոր անես, ո՞ւր եյիր հողի վրեն քրտինք թափում։

— Արի ու ղորթն ասա, Ավագ, հողը ո՞ւմն ա։

— Տերությանը։

— Եդ ա, վոր չես իմացել է... Հողը վոր կա, աշխատավորինն ա, վրեն քրտինք թափողինը։ Հրեն, ա՛յ, տերությունն աշխարքի չափ հող ունի՝ անպետք վեր գցած. ամա դե յես իսկի հող չունեմ. համ էլ ուզածս ի՞նչ ա վոր, մեկ ըսենց քարոտ, անպետք կտոր...

Ավագը, իրավ է, հուզվեց, տեսնելով թե վորպիսի հսկայական աշխատանք եր գործ դնում միամիտ ուզուն-ախմախը՝ մի կտոր հող ձեռք բերելու համար, սակայն գրեթե համոզված եր, վոր «կազյոննի հողը»—լիներ իսկ ամբողջ աշխարհը միասին վերցրած—կազյոննի յեր, հետևապես՝ անմատչելի։

— Գժվել ես, են խաչը.— ասաց նա քիչ մեղմ ձայնով,— քանի շուտ ա, Թեոս, գոմեշները քաշի ու գնա տեղդ. իզուր կչարչարվես, հետո գլխիդ կտան ու եդ թափած քրտինքն էլ վրեն կերթա... Հրեն, ա՛յ, անտառապանն ուզում ա եգուց պրատակոլ սարքի վրեդ...

Ասաց ու գլուխը յերերցնելով գնաց։

Թեոսը ժպտաց։ Մելիքի վրա յել տարին միքանի անգամ պրատակոլ եյին սարքում, բայց ամեն անգամ այդ «թունդ» գրվածքները մնում եյին առանց հետևանքի, և Մելիքը շարունակում եր հողը ձեռքին պահել, ծառերը ուզածի չափ կտրել

«Պրատակոլ սարքելը», անշուշտ, անտառապահի, լեսնիչու պաշտոնն եր. պիտի անեյին։ Ո՞վ չի իմանում, թե քանի-քանի դեզ թղթեր են գրվում ու դարսվում պաշտոնատեղերում։ Բայց ո՞վ է նրանց բանի տեղ դնողը։ Գրվեց ու պրծավ. շատ-շատ՝ միքիչ տուգանք, մի յերկու հայհոյանք, միքանի մանեթ էլ կաշառ—և ամեն ինչ կանցներ։

Մյուս կողմից, չե՞ վոր նրանց հաջողվել եր արդեն այնքան քրտինք թափել հողի վրա, այնքան աշխատանք։ Ուրեմն բնական էլ եր, վոր հողի տերն ինքն եր։ Ուրիշ ինչ կերպ, չե՞ վոր հողն աշխատավորինն է և միմիայն աշխատավորինը։ Պապենական այդպես եր լսել, Մելիքն էլ հաստատեց այդ ու ամեն գյուղացի յել նույնը կպնդեր։



Ու յերբ Ավագը գնաց, Թեոսը միայն մի քանի րոպե մնաց խոհուն ու տխուր։ Հետո թոթվեց իրեն, մաճը ձեռքն առավ և վերսկսեց «հորովելը»...

Այնուհետև մի ամբողջ շաբաթ Թեոսն այլևս վոչ Ավագի յերեսը տեսավ, վոչ անտառապահի։ Յենթադրում եր, վոր ազատվել եր։

— Վախացրին,— մտածեց նա,— ենքան էլ խո քարասիրտ չեն.— հալբաթ լեսնիչուն ասել են, յեկել-տեհել, վոր վարած հողն անպեք, դեն գցած, վատ եր ու ասել են. «Թող մնա Թեոսին, մեղք ա, ողլուշաղի տեր, հողը քիչ... Համ էլ մարդը գլխի չափը, ախր, քրտինք ա թափել վրեն... Թող վայելի, խեղճ ա»...

Յեվ ձեռնարկել եր հողի մյուս մասն էլ մաքրելու, թեև արդեն ցուրտն սկսվել եր, և ձմեռը վրա յեր հասնում։ Մտածում եր գոնե փշերից ու տատասկներից ազատել հողն այդ տարի, իսկ գարնանը մի անգամ ևս շուռ կտար փխրացած հողը, գետնախնձոր կըցաներ, ապա կաղբեր, եյի կվարեր... մի խոսքով մի լավ արտ կշիներ։

Բավական որեր անցան դրանից հետո։ Թեոսին այլևս չեյի տեսնում։ Պատրաստվում եյի գյուղից հեռանալ և մոռացել եյի նրան։

Գնալուցս մի յերկու որ առաջ, մի յերեկո, յերբ տուն եյի մտնում, պատշգամբի մոտ կանգնած տեսա մի փոքրիկ աղջիկ, վոր յերևի ներս մտնել եր ուզում, բայց չեր վստահանում։

— Ի՞նչ կա, աղջի,— հարցրի յես,— ո՞ւմն ես ուզում։

— Քու խանումին. հիվանդ կա։

— Ո՞վ է հիվանդը։

— Հերս. . դողացնում ա։

— Հերդ ո՞վ է։

— Թեոսը։

Հիվանդ։ Ի՞նչ եր յեղել արդյոք այդ յերկաթե մարդուն, վոր մի ամսից ի վեր, տաժանելի աշխատանքով՝ ուզում եր հողի տեր դառնալ։

Կինս մանկաբարձուհի, գիտե նաև ոգնել թեթև հիվանդներին. գիտե գոնե քիչ ամոքել նրանց ցավերը։

Դեղատուն էլ ունեյինք։ Շտապով անհրաժեշտ դեղերը վերցրինք և հետևեցինք փոքրիկ աղջկան։

Յերբեք չեմ մոռանա այն հուզիչ պատկերը, վորին ներկա գտնվեցի փոքրիկ, ցած, խոնավ և մութ խրճիթի մեջ։

Անկողնի վրա մեկնվել եր գունատ և նիհարած Թեոսը՝ խամրած աչքերով։ Կինն արտասվալի՝ կծկվել-նստել եր կողքին. յերեխաները վերահաս ցրտից, մերկությունից և վշտից քար կտրած՝ մեզ եյին նայում անկյուններից։

Ու յերբ խնամում եյինք Թշվառին, նա պատմեց իր մարտիրոսության ահավոր պատմությունը:

Խլել եյին ձեռքից հողը: Թողել եյին, վոր մաքրեր, հերկեր, թողել, վոր անպետք հողն իր քրտինքով փափկացներ; համառ կամքով բերրիության հասցներ, և ապա հանկարծ մի որ վճիռ տվել, անտառի պահապաններ ուղարկել, ծեծել եյին նրան, հողից դուրս շպրտել և թողել, վոր ջարդված, ընկճված՝ նստեր արտի կողքին ու լար, և լար կսկծալից, աղիողորմ ու հուսահատ...

Ի՞նչ կարող եյինք անել այժմ վշտից և հուսաբեկությունից անկողին ընկած Թշվառին, յեթե վոչ միմիայն վշտանալ նրա հետ, հուզվել և զայրանալ թե՛ Թեոսի միամտության և թե՛ աշխարհի խիստ անիրավ, չափազանց անարդար անհավասարության և ընկերական զզվելի որենքների վրա...

Հողի աշխատավորը կարծել եր, թե քրտինքն ու աշխատությունը նույնքան արժեք ունեյին հողի տեր դառնալու համար, վորքան բռնի ուժը կամ լրբությունը: Սակայն նրան շատ ազդու կերպով հասկացրել եյին, վոր դեռ չեն յեկել այդ որերը, և վոր հողի տերը նա յե, ով ուժ ունի, ունի զարնող ձեռք, կաշառելու, բըռնելու վարպետություն, ունի, մանավանդ, բռունցք, կոպիտ, վայրենի, գազանային բռունցք...

---

— Գյուղացիության վո՞ր խավի ներկայացուցիչն ե Թեոսը:

— Ճշմարի՞տ են արդյոք Թեոսի մտքերն այն մասին, թե «հողը—աշխատավորինն ե»:

— Յեթե այո՛, ել ինչո՞ւ նրա մշակած հողը խլեցին նրա ձեռքից:

— Ինչո՞ւ իշխանությունը նույնպես չեր վարվում Մելիքի հետ:—Ո՞ւմ իշխանությունն եր դա, Մելիքի՞, թե Թեոսի:

— Վորքա՞ն ճիշտ ե հեղինակը նկարագրել Թեոսի մտքերն ու հոգեբանությունը:

— Բնորոշեցեք հեղինակի վերաբերմունքը դեպի իր նկարագրած կարգերը:

— Ի՞նչ ե ուզում ասել հեղինակն իր այս պատմվածքով:—Ցո՞ւյց ե տալիս նա արդյոք վորեվե միջոց, վորը կարող եր դուրս բերել Թեոսին յեվ նրա նմաններին իրենց կացությունից:

---

— Պա՞րզ ձեվով ե գրված այս պատմվածքը, թե բարդ:

— Կարելի՞ յե արդյոք այս պատմվածքից հանել վորեվե հատված, առանց վորի պատմվածքը չկորցնի իր իմաստը յեվ պատմության թելը:

— Անո՞ւմ ե արդյոք հեղինակը դատողություններ իր հերոսների յեվ նրանց հետ կատարված դեպքերի մասին, թե՞ միայն փաստերն ե նկարագրում:

— Ի՞նչ կկորցնի պատմվածքը, յեթե այդ դատողությունները հանենք:



## ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

Այդ առավոտ շուտ եյի զարթնել:

Արևը նոր եր ծագել. սահուն և կտոր-կտոր ամպերը հաճախ ստվերում եյին ճառագայթները. շրջակա անտառոտ լեռներն ամբողջովին դեռ պատած եյին թանձր մշուշով, աշնանային խոնավ, անձրևոտ այդ որերը ցեխ են շինել, թացության մեջ ծածկել շրջակայքը:

Յերբ դուրս յելա, դռան առաջ տանտերս հանդիպեց: Սայլի վրա յերկու չութ բարձել, վորդու հետ մոտակա արտն եր ուզում գնալ՝ աշնանացանն անելու:

Առաջարկեց ընկերանալ:

Մոտ եր արտը. թաց եր, բայց շատ ցեխ չեր. հարմար եր չթելու և ցանելու: Հարմար ել չլիներ—ժամանակն եր:

Յեվ յերբ հասել եյինք, իսկույն գործի ձեռնարկեցին:

Լծեցին արտի կիսից. տանտերս ցած գլորեց ցորենի տոպրակը, մի մեծ սպիտակ գոգնոց կապեց ուսից և մի փթաչափ սերմ հավաքելուց հետո, վոտքի յելավ:

Բայց, նախքան սկսելը, ծնրացավ մի վոտքի վրա, դեմքը դեպի արևելք դարձրեց, խաչակնքեց ու աղոթեց:

— Ո՜վ Մարիամ աստվածածին, դու բարեխոս լինես միածնիդ... մեկն հազար անես...

Ասաց, բուռը լիքը սերմ հանեց գոգնոցից ու շպրտեց հողը:

Մինչ այդ՝ յեզներն ել քայլեցին: Արտի յերկու ափերից գործիքների ծայրերը մղվեցին փուխր հողի մեջ:

— Հո՛, հո՛...

— Բոզո՛լ, բոզո՛լ...

Յեվ գորշ հողը պառավելով՝ դիզվում եր ակոսների կողերին:

Յեվ սերմնացանը կաղն ի կաղ, պարբերաբար, բռով ցորեն եր սփռում արտի վրա. լսվում եր ցորենի ընկնելու ձայնը, անձրևի ձայնի նման:

— Ծա՜նր, ծա՜նր քշի,—կանչում եր չթվորներից մեկը:

— Հե՜յ, յե՜ս քու տիրոջը,—նեղանում եր մյուսը յեզների վրա:

---

Քայլում եր ու ցանում: Բայց և խոսում եր: Ինձ՝ միքանի բառ, չթվորներին՝ նկատողություն... Այդ բոլորը նա անում եր առանց կանգ առնելու, միապաղաղ ձայնով:

— Վոտդ ո՞ւր ես հուպ տալիս:

— Գնում չեն...

Ու անցնում եր մոտովս ցորենը շղշղալով ընկնում է փոտնե-րիս առաջ։

— Փնջքեշ,— ասում է ինձ։

— Հազարով լինի,— բարեմաղթում եմ յես

Իսկ յերբ քիչ հեռանում են, տանտիրոջ վորդին, կարծես մի կիսատ թողած խոսակցություն վերանորոգելով, ճնշում է վոտքը չուլթի կոթի վրա և ասում է հորը.

— Մելիքին յերբ ենք փող տալու, վոր ասում ես 3 մանեթ էլ կա... Բարը վոր տարար,—փողն առար...

Հայրը քիչ լռում է, մի յերկու բուռ ևս նետում, հետո նույն միապաղաղ ձայնով պատասխանում է.

— Քեզանից բեխաբար...բաս 3 մանեթը դա, իսկ մյուս յերեքը։

Միմյանցից հեռանում եյին ավելի, ուստի և ձայները քիչ բարձ-րացնում, վոր լսելի դառնան։

— Բաս վոր մի որ յեզնիքը տարանք քարհանք,—առարկում է վորդին։

Ու լռում են։ Հայրը վոչինչ չի պատասխանում

Քիչ հետո սերմնացանը հասնում եր արտի ծայրին Մոսծեցի, վոր մի կողմը վերջացրել է և պիտի կիսիցը դառնա յետ. Բայց նա նորից սերմ լցրեց և նորից նույն կեսի վրա սկսեց։

— Յերկու անգամ ես ցանում նույն տեղը,—հարցրի յես։

— Վոր խիտ լինի, հավասար,— ասաց նա։

Ապա, յերբ հասել եր ինձ, ավելացրեց.

— Առանց են էլ մի բան չի դուրս գալիս. Հո տեսա՞ր գար-նանացանը։

— Տեսա։

— Մեծ մասը գիժ ցորեն է, մնացածն էլ անձրևներից՝ կալի մեջ ծլել է։

— Այո։ Ավելի լավ չէ՞ լինի, յեթե յերբեք ցորեն չցանեք, ամեն տարի այդպես է։

— Ապա ինչ անենք։

— Ձեր հողերը ցորենի հող չեն. անձրևներ, հողը վատ։

— Հա՛ լավ խոտի, վարսակի հող է։

— Յեվ կաղամբի, գետնախնձորի։

— Ճիշտ է։

— Դուք էլ, ուրեմն, միայն վարսակ, կաղամբ ու գետնախնձոր ցանեք։

Յերեսիս նայեց ժպտուն ու ցանելով անցավ։ Յերբ քիչ հեռա-ցել եր, առանց դառնալու՝ ասաց.



— Լա՛վ ես ասում, բաս դարմա՞ն։

— Դարմա՞ն, ուրեմն միայն դրա համար ցանել։

— Ապա ի՞նչպես,- ասաց նա։

Ջթվորներից մեկը, վոր մոտեցել եր, չուլթը շուռ տված՝ յեր-կաթի ցեխն եր մաքրում, միջամտեց։

— Վոր դարման չլինի,—ասաց նա—տավարը խոտով չի ապրիլ։

Այլևս վոչ վոք չխոսեց։

— Աղա, ո՞ւր եք կանգնել, քշե՛ք, է՛,— ձայնեց հեռվից սերմնա-ցանը.—յես ես ա պրծնում եմ մեկ կողմը։

Ու կաղն ի կաղ մոտենում եր։ Գոգնոցի սերմը պրծել եր, բայց նախ քան նորից լցնելը, նստեց ինձ մոտ՝ քիչ հանգստանալու։ Մի պապիրոս շինեց, վառեց ու ասաց.

— Եհ, հիմար բան է, մարդ ափսոսում էլ է այսքան աշխատանքը։

— Ինչո՞ւ,—մխիթարեցի յես.—ասում են, վոր աշնանացանը գիժ ցորեն չի տալիս։

— Ճշմարիտ է, բայց տված ցորենն էլ մի բան չի... Եհ, ապ-րուստ հո չի՞ մերը, դժոխք է, դժոխք... Ցանում ես, տանջվում—և վոչինչ։ Տոթ, մկներ... գետնախնձորն էլ, հրեն, կիսից ավելին փչացել է։

— Հա, այս տարի ամեն ինչ վատ է յեղել... Բայց ամենքը քեզ պես չեն գանգատվում... Այ, Մաթոսը, օրինակ. յերեկ ասում եր, վոր՝«Փառք ըլի Աստծուն, ինչ կա, ամեն տարվա պես տարի չե էլի»։

— Կասի, բա՛ս, ինչո՞ւ չասի,—ժպտաց դառնությամբ սերմնա-ցանը,—Նրա շատ մեկ վեջն ա, վոր արտը վոչինչ չտա։ Նրա՞ն ինչ, ինքն ու տղեն հո սովորել են ուրիշների տունը քանդելով հարստանալ։

— Հա, ասում են վաշխառու յե, տոկոսով...

— Հըմ, տոկոսը վո՞րն ա, տոկոսն էլի բան ա. ուղղակի խա-բեբայությունով։ Անցյալ օրերը չէ՞ր, վոր բողազիցս բռնեց ու քսան մանեթի տեղ 10 սայլ խոտը ձեռիցս խլեց... Եհ, ուժն էլ նրա կողմն է, իրավունքն էլ։

— Եդ նրանից է,—ասացի յես,—վոր դուք ձեր իրավունքները պաշտպանել չգիտեք. վոչխա՛ր եք, վոչխա՛ր... խուզում են ձեզ լավ։

— Չեն խուզում, ուտում են գայլերի պես... աշխարհումս մարդիկ յերկու յեն լինում—գայլ ու վոչխար. դեհ, իհարկե, գայլը վոչխարին կուտի։

— Դուք էլ վոչխար մի՛ լինեք. մարդուս իրան ձեռքն է այդ...

— Հա...—արեց նա մտախոհ.—իրա՛վ է, մարդուս իրան ձեռքն է՝ ինչ անասունի ասես նմանվելը... Մարդ կա, վոր օձ է, մարդ՝ վոր խոզ, մարդ էլ կա՝ վոչխար է...

— Վոչխարն, ուրեմն, վոր ուզենա, գալ էլ կդառնա։
— Կդառնա, ինչո՞ւ չէ։
Հետո վոտքի յելավ ու քայլեց դեպի ցորենի տոպրակը։ Հետը գնացի. ուզում եյի տուն վերադառնալ։
Յեվ յերբ չոգել՝ լցնում եր,—ասաց
— Սպասի՛ր, քեզ մի բան պատմեմ, պարո՛ն... Ուզում ես գնա՞լ։
— Չէ՛, պատմի՛ր։
— Մեկ պապիրոս էլ ծխիր, մինչև յես պատմեմ... Հա, են եյի ասում, վոր... մեր գյուղումը, սրանից տարիներ առաջ մի խեղճ մարդ կար, Հարութ եր անունը։ Մեզ պես ցանում եր, հնձում, գիժ ցորեն ուտում—հիվանդանում. և քանի ընտանիքը մի կողմից ավելանում եր, այնքան նրա արդյունքը պակասում եր, անձրևը կալը փչացնում, հիվանդությունը և խոտի պակասությունը տավարը վոչնչացնում։ Քիչ եր մնում ամեն բան թողնի ու գլուխն առնի կորչի։ Մի որ էլ, յերբ այսպես դառն մտածություններով լի յեկել եր աշնանացանի, հազար անգամ որն ու հողը, անձրևն ու իր ցանքն անիծելով՝ կռացել սերմնացվի տոպրակի վրա, ցորեն եր լցնում գոգնոցը, ինչ տեսնի լավ է... Հանկարծ տեսավ, վոր տոպրակից մի սատանա դուրս թռավ ու առաջը նստեց...
Ի՞նչ ասել կուզի, վոր Հարութը խիստ վախեցավ, գոգնոցի միջինը վեր ածեց և ուզեց փախչել։
— Ո՞ւր ես փախչում, տո՞,—ասաց նրան սատանան.—յես քո քեզ չեմ ուտելու, կա՛ց հալա...
Հարութս եր. դողը ջանն ընկած՝ կանգնեց։
— Մո՛տ արի, ախմա՛խ,—ձենեց սատանան—ինձ քո ճանաչեցի՞ր։
— Հրամանք ես։
— Յես խղճացի քեզ, նրա համար էլ յեկա։ Շատ էլ լավ չի որդ, հ՞ը... Ցանում ես՝ գիժ է ստացվում, ծնում ես՝ մյուս կողմից ապրուստդ է քչանում... Կուզե՞ս արի քեզ հարստացնեմ։
— Բաս չեմ ուզի՞լ։
— Դե լավ, վոր ըտենց ա, առաջ մեկ եդ սերմացու ցորենի վրա վոտքդ դիր ու մի լավ տրորիր։
— Վո՛նց, բաս մեղքը չի՞...
— Հիմա՛ր, բա դու մեղքը չե՞ս... Տրորի՛ր, ասում եմ։
Հարութի սիրտը խփում է, բայց դե, սիրտ արավ ու տրորեց։ Տրորելուն պես վոտքը ծովեց ու կաղ դարձավ։
— Վա՛յ, վա՛յ,—կանչեց նա.—վոտքս ծովեց։
— Վոչինչ,—ծիծաղեց սատանան.—կաղ վոտքը չի խանգարել



հարուստ լինելու... ըտենց, դե հմի մոտ արի ու սերմացվիդ տոպրակի մեջն էլ մի լավ թքիր։
— Բո՜ւ... չէ, եդ կարող չեմ... ընտանիքիս կերակրող տոպրա՛կը...
— Տո թքի՛ր է, քե՛զ ասում եմ. վողջ ընտանիքդ էնպես հարստացնեմ, վոր սաղ գյուղը վառներդ լիզի...
Հարութը կռացավ ու թքեց։ Բայց հենց վոր թուքը ցորենին կպավ, մի ցորեն թռավ, մտավ աչքն ու խկույն քոռացրեց։
— Վա՛յ, վա՛յ,—կանչեց նա.—աչքիս մեկը քոռացավ։
— Վո՛չինչ,—քրքջաց սատանան.—են մեկ աչքով էլ կտեսնես վոսկիները... Դեհ հմի մնաց մեկ բան էլ անելու, պիտի ապականես հողը...
— Չէ, յես եդ բանը չեմ անի... հողը բաս կապականե՞ս, կըպղծե՞ն...
— Տո արա՛, ախմախի ճուտ, էլ հողի հետ ինչ գործ ունես, էնքա՜ն վոսկի կտամ քեզ, վոր մեռնեյիս էլ նրա մեջ թաղվես։
Դե, Հարութն եր, ապականեց։ Բայց հազիվ արել եր, մարմնի վրա խկույն այնպիսի վերքեր գոյացան, վոր թե ինքը չազատվեց նրանից և թե ցեղից-ցեղ նրա սերունդն որ չտեսավ այդ վերքերից։
— Վոչինչ,—ասաց սատանան,—լավ-լավ շորեր կհագնես, վերքերդ չեն յերևա.
Ասաց, իր չանկերով կնքեց Հարութի սիրտն ու ճակատը և խրատեց.
— Դե, հմի,—ասաց նա.—գնա տուն. դրացուդ՝ Գալոյենց տան պատերի մեջ վոսկի կա, քանդիր տունն ու վոսկին առ... Բայց տե՛ս՝ մինչև վոր սաղ տունը քարուքանդ չանես, վոսկին չես գտնելու... Յեթե Գալոյենց վոսկին քեզ չհերիքի, մյուս դրացիներիդ, սաղ քո թաղի, գեղի և աշխարհի տները վոսկիներով լիքն են, քանդի՛ր ու վերցրո՛ւ։
Հետո մի լավ կուշտ ծիծաղեց ու անհետացավ։
Հարութն էլ գնաց։ Մյուս որն եեթ Գալոյենց տունը քանդեց, հետո դրացիներինը և մինչև հմի յել ինչ տուն տեսնի՝ կքանդի, վոր վոսկի դիզի..
Պատմեց սերմնացանը և վոտքի յելավ՝ գոգնոցը ցորենով լի։
— Հետո՞,—հարցրի յես.—ինչո՞ւ այդ բոլորը պատմեցիր։
Յերեսիս նայեց ժպտալով և ասաց.
— Հարութը վոչխար եր՝ գալ դարձավ, էլի...
Յերեսիս նայեց դարձյալ, մի վարկյան լուռ մտածեց, հետո բուռը կոխեց, հանեց սերմը և ցանելով հեռացավ։

*Լուռ՝ յես էլ հեռացա։*

*Մշուշն իջնում էր դարձյալ, արևը թաքնվել էր և ցուրտ քամին սաստկանում էր։ Ձթվորները ճնշում էին գործիքների կոթերը և ակոսելով անցնում։*

*— Բո՛ղոլ, Բո՛ղոլ, մ՛րդյալ արի...*

*— Վա՜յ, յես քու տիրոջը..*

*Վերևում լսվում էին կռունկների ձայներ։ Մի զույգ էր այն, վոր կռկռալով սավառնում էր դեպի անտառոտ լեռները։*

---

— Ո՞րն է այս պատմվածքի կենտրոնը՝ ցանքսի նկարագրությո՞ւնը, թե սերմնացանի պատմությունը Հարութի մասին։

— Մանրամասն վերլուծեցեք այդ պատմությունը յեվ փորձեցեք, թե նրա մեջ ճի՞շտ են արդյոք արտացոլվել հարուստների յեվ չքավորների հարաբերությունները նրա գյուղում։ Ճի՞շտ է արդյոք ժողովուրդը նկատել, վոր նրա գյուղում հարստանալու միակ ուղին Հարութի ուղին էր:

— Ո՞վ է իրավացի՝ հեղինա՞կը, թե նրա նկարագրած ծերունի սերմնացանը։

---

— Այս պատմվածքից յելնելով՝ փորձեցեք քննարկել՝ թե ի՞նչ խավի ներկայացուցիչ է հեղինակը, չքավոր գյուղացի՞, բանվո՞ր, թե՝ քիչ-թե շատ ապահով խավի ներկայացուցիչ:

— Նրա վոր խոսքերից է այս յերևում:

---

— Վրթ. Փափազյանի այստեղ բերված յերեք պատմվածքներից յելնելով, փորձեցեք քննարկել, թե ինչ շրջանի գյուղն է նա նկարագրում:

— Հաջողվո՞ւմ է նրան արդյոք ցայտուն կերպով պատկերել չքավորների յեվ հարուստների փոխհարաբերությունները այդ գյուղում:

— Տալի՞ս է նա արդյոք կենդանի տիպեր. փորձեցեք առանց վերջին անգամ կարդալու վերակենդանացնել այդ տիպերը ձեր հիշողության մեջ:



# ԱՐՇ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

## ԱԽՊԵՐ ՋՈՄԱՐԴԸ

1

*Ասենք՝ կային, լավ ձիեր էլ շատ կային մեր գյուղում, բայց Ջրպետենց Գալոյի կարմիր քուռակը, Ջոմարդը, մի աննման բան դուրս յեկավ։*

*Հասակը բարձր ու վայելուչ, կուրծքի լայնությունը մի արշինից ավել, վոտները յերկաթի պես ամուր, սաղրին կլոր ու լիքը, շլինքը հաստ և ուժեղ, գլուխը փոքրիկ ու սիրուն — կասես, մի կարմիր խնձոր, մի քաշած պատկեր լիներ Ջոմարդը։ Յերբ Ջոմարդը փողոցով անցնում էր, բոլոր մարդիկ բերանները բաց նրան էին մտիկ տալիս ու զմայլում։ Կուպչիկ փալանը մեջքին դրած, գլուխը բարձր բռնած, աչքի պոչով հպարտությամբ չորս կողմը դիտելով՝ թեթև յորղալով այնպես էր նա սորորում, վոր ասես վոտները գետնին չէին առնում։ Ջոմարդը բեռից վախեցող չէր. նա իսկական և ընտիր բեռնակիր էր։ Սովորական 10—12 փութ ծանրությունը մեջքին առած նա խաղալով էր օրերով ճանապարհ անցնում և յերբեք թույլ չէր տալիս, վոր մի ուրիշ ձի իր առջևից գնա։ Կարավանում Ջոմարդը միշտ ամենից առաջինը պիտի լիներ։*

*Գալոն իր ձեռովն էր խնամել ու մեծացրել Ջոմարդին և միքանի տարի շարունակ նրա հետ էր անցկացրել իր բոլոր լավ ու վատ օրերը, նրա հետ էր բաժանել իր լացն ու ծիծաղը։ Գալոն մինուճար տղա յեր, օգնական յեղբայր չուներ, և Ջոմարդը նրա համար աշխատավոր յեղբայր դառավ, թև ու թիկունք հանդիսացավ։ Գալոն ու Ջոմարդը ամառ ու ձմեռ, գիշեր ու ցերեկ միասին էին աշխատում, տունը պահում, յերեխաներին կերակրում։ Այդ էր պատճառը, վոր Գալոն իր ձիուն միշտ «ախպեր Ջոմարդ» էր կանչում։*

*Յեվ իսկապես, շատ քիչ կգտնվեն հարազատ յեղբայրներ, վորոնք կապված լինեն միմյանց հետ այնպիսի ամուր սիրով և անձնվիրությամբ, վորպես Գալոն ու Ջոմարդը։ Գալոն բերանը հաց*

չեր դնի, մինչև վոր առաջուց չկերակրեր և չջրեր Զումարդին նրա. սրտին հանգստություն և աչքին քուն չեր մոտենա, մինչև վոր չհամոզվեր, թե Զումարդը կուշտ ե ու հանգիստ։ Ութ տարվա ընթացքում Գալոն իր պաշտելի Զումարդին յերբեք աչքաթող չեր արել, վոչ մի որ ուրիշի խնամքին չեր հանձնել, «ամանաթ» չեր տվել։ Շատ անգամ եր պատահել, յերբ Գալոյին լավ վարձատրություն եյին առաջարկել այն պայմանով, վոր նա Զումարդին «ամանաթ» տար, բայց նա միշտ մերժել եր և համաձայնվել ավելի փոքր վարձատրության, միայն այն պայմանով, վոր ինքն ել իր ձիու հետ լիներ։ Այդպիսի դեպքերում նա անդադար կրկնում եր պապից սովորած իր սիրելի առածը՝ «ապրանքն եթա՝ տերը հետը, վորդին եթա՝ հերը հետը»։ Յերբ նախանձոտ ընկերները Գալոյին նախատում եյին այն բանի համար, վոր նա իր ձիուն կուռքի պես ե պաշտում ու «Զումարդի պոչից պոկ չի գալիս»՝ նա պատասխանում եր. «Ի՞նչ անեմ, ախպեր, աստված վկա, չեմ կարողանում. հենց վոր Զումարդը աչքիցս հեռանում ե, րոպեն մի որ ե թվում, ժամը մի տարի. մարմինս մի տեսակ ծանրանում ե, քունս ել չի տանում։ Յես ինչ անեմ, վոր մի անգամ սիրտս կպել ե ու չեմ կարողանում առանց նրան մնալ»։

## 2

Ծաղկազարդի կիրակին եր, գարնանային մի հրաշալի որ։ Յերկնքի անբիծ կապտությունը, արեգակի մեղմ ու դուրեկան ջերմությունը՝ գյուղը շրջապատող ծաղկազարդ ծառերի արբեցուցիչ բուրմունքը, մանուշակով նախշած նորածիլ կանաչը, այս բոլորը այնքան սիրուն եր, այնքան մաքուր ու հրապուրիչ, վոր գյուղի բոլոր շնչավորները, յերկարատև փակ կյանքից ձանձրացած՝ դուրս եյին թափվել իրանց մութ ու խոնավ խրճիթներից և առատորեն վայելում եյին մայր բնության աննման գեղեցկությունը։

Կեսորը մոտ եր։ Գալոն Զումարդին դուրս եր քաշել բակը և խնամքով մաքրում եր նրան, կամ ավելի ճիշտ ե ասել՝ շոյում, փայփայում եր, վորովհետև այդ որը նա արդեն յերկու անգամ մաքրել ու քորել եր իր ձիուն։ Գալոյի քեֆը գալիս եր, յերբ Զումարդի լիքը սաղրուն շրըպպացնելիս՝ փափուկ միսը դողդղում եր. նա գրկում եր ձիու շլինքը, պաչում եր նրա աչքերը և այնպիսի աննկարագրելի բավականություն եր զգում Զումարդին փայփայելիս, վորպես գորովագութ մայրը իր մինուճար զավակին փաղաքշելիս։

Ձին, ասես, հասկացավ իր տիրոջ զգվանքը։ Նա ուզեց արտահայտել իր փոխադարձ սիրո զգացմունքները, բարձրացավ հետևի վոտների վրա, առաջիններով փորձեց գրկել Գալոյին ու համբուրի



փոխարեն իր խոշոր ատամներով բռնեց նրա թևից և կամաց թափահարեց։

— Ե՜յ, անշնորհք,—կշտամբեց տերը ձիու կոպտությունը։

Զումարդն իսկույն լըջացավ, մի րոպե անշարժ կանգնեց, աչքերը Գալոյի յերեսին գցեց և սկսեց գլուխը տարուբերել. կասես ուզում եր ներողություն խնդրել իր կոպիտ վարմունքի համար։ Գալոյի հաստլիկ շրթունքները ձգվեցին, ուրախ ժպիտը փայլեց նրա արևառ, կոշտացած դեմքին, և նա, չկարողանալով թաքցնել իր հիացմունքը, նորից համբուրեց ձիու սիրուն աչքերը ու վերջապես գնաց յոնջա բերելու։

Ձիուն կեր տալուց հետո Գալոն ինքն ել մտավ տուն, յերկու կակուղ լոշ վերցրեց, չորս տակ ծալեց, մեջն ել միքանի բուռ լոբի լցրեց, փաթաթեց, ու գլխիցը կրծելով՝ տանից դուրս յեկավ։ Յերբ Գալոն անցնում եր Զումարդի մոտից՝ ձին ղրճղրճալով ծամում եր համեղ յոնջեն։

— Ջա՛ն, ջա՛ն, ախպեր Զումարդ, կե՛ր, իշտահիդ մեռնեմ, անուշ արա,—լի բերանով ասաց նա ու դուրս յեկավ փողոցը։

## 3

Բակի դռան առջևից փողոցի մի կողքով սրընթաց անցնում եր գյուղի մեծ առուն։ Առվի ափին լավ արեգունի տեղ կար։ Մի խումբ ծերունիներ այստեղ մեջքերը պատին տված ու վոտները յերկարացրած՝ զրուցում եյին։

Գալոն հացը կրծելով, մոտեցավ այս վերջին խմբին ու նստեց խանութի առջևի թումբի վրա։

Այդ ժամանակ փողոցի ծայրից յերևաց մի կարճահասակ մարդ, վոր ձեռները քամակին դրած՝ հանդարտ քայլերով առաջ եր գալիս։ Նրա կիսաևրոպական շորերը և ինքնահավան ու արհամարհական հայացքը միանգամից ցույց եյին տալիս, վոր յեկողը հասարակ մահկանացու չե։ Դա Կոստանդ աղան եր, գյուղի ամենաճարպիկ վաշխառուն և միևնույն ժամանակ ամենաառաջին հարուստը։ Փողոցում գտնվող գյուղացիներից շատերը նրա առջև վոտի եյին կանգնում և յերկյուղածությամբ գլուխ խոնարհեցնում։

Աղան իր մանրիկ ու խորամանկ աչքերը չորս կողմ պտտացնելով՝ գլխի թեթև շարժումով վողջունում եր վոտի կանգնողներին ու անցնում։ Յերբեմն նա մոտով կանչում եր այս ու այն գյուղացուն և զանազան պատվերներ ու հրամաններ եր տալիս նրանց։

— Բարի որ ձեզ,—ասաց աղան, կանգ առնելով խանութի առջև ու իր փոքրիկ աչքերը պտտեցնելով։

— Բարով, հազար բարի, աղա ջան, սրտալի պատասխանեցին տղերքը միաձայն։

Աղայի վազվզող աչքերը մի րոպեյի չափ կանգ առան Գալոյի վրա, վորին նա վոտից գլուխ այնպես եր զննում, կասես թե մի տարօրինակ ու զարմանալի բան եր նկատել նրա շալվարի բազմագույն կարկատանների և արխալուղի ծլանքների մեջ։ Գալոն այրվեց աղայի հայացքից. նրա դեմքը ամբողջապես կարմրատակեց, ու քըրտինքի խոշոր կաթիլներ յերևացին նրա ճակատին։ Գալոն սաստիկ վրդովված եր. նրա բերանը բացվել եր, հաստ շրթունքները դողդողում եյին, և սիրտը անհանգիստ կերպով թրթռում եր։ Աղան հանդիսավոր հանդարտությամբ հանեց գրպանից մի պապիրոս և առանց վառելու դրեց բերանը։ Խանութպանը մի վայրկյանում քսեց լուցկին ու կրակը մոտեցրեց աղայի բերանին։ Պապիրոսը վառելուց հետո Կոստանդ աղան ագահությամբ նրա ծուխը ներս քաշեց, հետո թանձր քուլաները դուրս փչեց ուղիղ խանութպանի աչքերին ու մի ակնարկ գցելով Գալոյի վրա՝ մատով կանչեց նրան ու յերեսը շուռ տվեց։

Գալոն հացի կեսը ծոցից հանեց, տվեց մոտի գյուղացուն և ինքը մեքենայաբար հետևեց աղային։ Նա գնում եր անհաստատ, դողդոջուն քայլերով, ու նրա սիրտը ինչ-վոր սարսափելի բան եր նախազգուշակում։ Յերբ նրանք միքանի քայլ հեռացան՝ աղան կանգ առավ ու դառնալով դեպի Գալոն, ասաց.

— Ա՛յ տղա, մեր հաշիվը ինչո՞ւ չես վերջացնում, մինչև յե՞րբ խաբխբելով ձգձգես, չե՞ս ամաչում։

Գալոն նորից կարմրատակեց, նախ աչքերը գետին գցեց, ապա բարձրացրեց, ասես ուզում եր մի բան ասել, բայց չկարողացավ։ Նա միայն չորացած շրթունքները լեզվով թրջեց, նորից գլուխը կախեց ու սկսեց իր հնամաշ տրեխներին մտիկ տալ։

— Մարդս պիտի միքիչ ել նամուս ունենա,— շարունակեց աղան, ուղիղ Գալոյի աչքերին նայելով։— Բա դու հողը չե՞ս մտնի, յեթե յես եգուց-ելոր պրիստավ կամ տանուտեր բերեմ ու քո տան կճուճ-բծուճը, պղինձ-պղնձկալը, քեչա ու կարպետը, վերջապես քո կնկա շալիկն ու վարտիկը դուրս քաշել տամ ու հրապարակով ծախեմ։

— Քեզ հետ եմ խոսում, ինչ ես լալացել,— շարունակեց Կոստանդ աղան ավելի ու ավելի բորբոքվելով և ձայնը աստիճանաբար բարձրացնելով.— ինչո՞ւ չես պարտքդ տալիս։

— Ի՞նչ պիտի ասեմ, վոր չտամ, աղա ջան,— վերջապես դողդոջուն ձայնով արտասանեց Գալոն,— իմ լեզուս լալանա, թե յես



մի որեց մի որ եդպես մի բան ասած լինեմ. ընդհակառակը, գիշեր ցերեկ յես դրա մասին եմ մտածում, թե...

— Յեթե մտածում ես, ո՞ւր է տվածդ փողը. ամբողջ տասնումեկ ամսվա ընթացքում յես քեզանից մի սև փող չեմ ստացել։

— Աղա ջան, յես ել գիտեմ, վոր մեղավոր եմ քո առջև. միայն ճար չունեմ. աղաչում եմ, մի փոքր ժամանակ տուր, կամաց-կամաց կաշխատեմ, տոկոսներն ել հետը կտամ։

— Ամբողջ տասնումեկ ամիս համբերեցի, ինչ ստացա, վոր դեռ այսուհետև ել համբերեմ։ Չե՛, ախպեր, ինչ քո անամոթությունն եմ տեսնում, մինչև վոր խայտառակ չլինես, խելքդ գլուխդ չի գա ու վոչ մի կոպեկ չես տա։

— Կտամ, աղա ջան, կտամ, են կապույտ աստվածը վկա, կըտամ,— ասաց Գալոն, ձեռը դեպի յերկինք բարձրացնելով։

Գալոյի խղճալի կերպարանքը, կասես, միքիչ մեղմացրեց աղայի սիրտը.

— Տես, ինչ եմ ասում, Գալո,— շարունակեց աղան։— Յես գիտեմ, վոր շուտ կամ ուշ դու մի բան պիտի ծախես, վոր կարողանաս պարտքդ տալ. առանց դրան՝ անկարելի յե, վոր դու պարտքից թեթևանաս. իսկ քանի վոր մի բան ծախելու յես՝ վորքան շուտ ծախես, այնքան հեշտ հոգիդ կազատես։

— Ախր ինչ ունեմ, վոր ինչ ծախեմ, աղա ջան, ունեցածս-չունեցածս յերկու աչք կիսավեր հին տուն է ու միքանի թումբ պապական այգի, են ել վոր ծախեմ, կմնա, վոր մի տուն կաթնակեր յերեխաներիս տանեմ ջուրը լցնեմ։

— Ո՞վ է մեղավոր, այ վորդի, մի՞թե դու կարծում եյիր, թե փող տվողը պարտքդ քեզ կբախշի։

— Յես չեմ ել ուզում, վոր բախշես. յես մենակ խնդրում եմ, վոր միքիչ խղճմտանքով վարվես ինձ հետ...

— Անխի՛ղճ ենք, բաս,— վրա բերեց Կոստանդ աղան, առաջին բառը սաստիկ շեշտելով և շեշտի համաձայն գլուխը տմբացնելով,— փողը տալիս՝ խղճալի յենք, լավ ենք, իսկ յետ պահանջելիս՝ անխիղճ ենք, անիրավ ենք... Ա՛խ, տեղն է ինձ։ Ինչո՞ւ պիտի լայաղ անեմ քեզ պես աննամուսների հետ խոսել. մուրհակի ժամանակը լրանալուն պես կզանգատվեմ, պրիստավ կբերեմ, տուն ու տեղդ կծախեմ, քեզ ել կխայտառակեմ ու իմ փողս ել լիուլի կվերցնեմ, այ, են ժամանակ յես լավ մարդ կլինեմ։

— Ախր չունեմ, վո՞րտեղից տամ ես բոպեյիս։

— Սև ջհաննամից,— գոռաց աղան, չկարողանալով այլևս բարկությունը զսպել և փորձելով փեշը Գալոյի ձեռքից ազատել,— տունդ ծախիր, այգիդ ծախիր, ձիդ ծախիր...

— Վա՜յ գլխիս,— դուրս թռավ Գալոյի բերանից, յերբ լսեց աղայի արտասանած վերջին յերկու բառը։

— Անունն էն է, վոր յես փողատերն եմ, իսկ դու պարտքատերը. ես բոլեյիս իմ գոմում մի քոսոտ յաբու յել չկա, իսկ դու թագավորի վայել ձի յես պահում։ Յեթե դու աղքատ ես, քո ինչի՞դ է հարկավոր 50—60 մանեթանոց ձին։

Գալոն լուռ եր։

— Այ, օրինակի համար, հիմի ինձ ձի չե հարկավոր,— շարունակեց աղան, մի տեսակ սրտացավ յեղանակով.— իսկ դու 120 մանեթ փող ես պարտ, Զոմարդիդ տուր, վորքան արժողությունն է, պարտքիցդ դուրս արի, դեռ միքանի մանեթ էլ ավել հաշվիր, կորած փող չի, իսկ մնացածի համար էլ շատ չեմ նեղի, վոր որը վոր ունենաս՝ էն որը կտաս։ Իսկ յեթե կոպտություն կանես, ձիդ չես տա, եդ էլ քո բանն է, միայն իմացած կաց. վոր յես քո քեֆին չեմ մտիկ անի, եգուց-ելոր գլխիդ կտամ, օրենքով ձեռքիցդ կառնեմ։

Գալոն, վոր մինչև այդ գլուխը կախ, խոր մտածմունքների մեջ եր ընկղմված, հանկարծ, ասես, շանթահար յեղավ. Նրա ամբողջ մարմնով սարսուռ անցավ։

— «Գլխիդ կտամ, ձեռքիցդ կառնեմ»— կրկնում եր Գալոն մտքումը,— այն էլ «օրենքով», բայց մի՞թե նա սուտ չի ասում. մի՞թե օրենքը թույլ կտա, վոր ախպերը ախպորից խլեն, չե՞ վոր Զոմարդը իմ թև ու թիկունք ախպերն է…

— Հը՛, Գալո, ի՞նչ ես ասում,— հարցրեց աղան,— ինձ մի հաստատ պատասխան տուր, յես առավոտը շուտով գնալու յեմ քաղաք, հազար ու մի գործ ունեմ, թե ձիդ տալու յես, ասիր, թե չե…

Աղան լռեց և պատասխանի յեր սպասում։ Լուռ եր և Գալոն։

— Չեմ ծախի, աղա ջան, Զոմարդիս չեմ ծախի,— ասաց նա վերջապես,— անկարելի բան է, քանի վոր յես սաղ ու կենդանի յեմ, նրա վոտը իմ տանիցս չի կտրվի. Նրա գլուխը իմ տան շեմքում պիտի թաղվի։ Միայն…

— Հետո՞։

— Միայն քո պատվի համար քրեհով կտամ, աղա ջան։ Ամեն ժամանակ, յերբ վոր սիրտդ ցանկանա, նստիր, բանացրու. իսկ քրեհը դու քո աստվածը, կհաշվես ու պարտքիցդ կամաց-կամաց դուրս կգաս, մինչև տեսնենք, թե տերը ինչ է աջողում։

Կոստանդ աղան ուրախությամբ համաձայնվեց և մինչև իսկ սկսել օրհնել նրան։

— Ապրիս, վորդիս, այ հիմա խելոք ես խոսում. յես էլ հո անիրավ չեմ, վոր քեզ նեղացնեմ։ Վնաս չունի, վորդի, գիտեմ լավ ապրանք է ձեռքդ ընկել ու այնքան էլ սիրտդ վրան տաքացել է, չես ուզում ձեռքից թողնել։ Յես քեզ չեմ մեղադրում։ Թող քո ասածը լինի. ամեն անգամ, պետք գալիս, քո ձին կտաս, կնստեմ ու քրեհը պարտքիդ տեղը կհաշվեմ։

— Ուրեմն, աղա ջան, հավատամ, վոր էլ գանգատ չես անի… խղճա՛ ինձ, վոտներիդ մատաղ, իմ նամուսը ջուրը մի՛ գցի, ինձ մի խայտառակի…

— Գնա բանիդ, անհոգ կաց, վորդի, յես անաստված հո չեմ… իմ բարձր անունիս, իմ աղայությանս ինչ է յեկել, վոր իմ թքածը լիզեմ։

Գալոն արագությամբ սանդուղքներից ցած իջավ և, համարյա վազելով, անցավ լայն բակը։ Նա այնպես եր շտապում այդ տան պատերից դուրս գալ, վոր ասես այդտեղի մթնոլորտը նրան խեղդում կամ այրում եր։ Վերջապես նա իրան փողոց գցեց ու այդտեղ միայն իր ամբողջ կրծքով ազատ շունչ քաշեց։ Գալոն այնպես եր ուրախացել, նրա սիրտը այնպես եր թեթևացել, վոր կասես մի ահագին ջաղացաքար վերցրած լինեյին կրծքից։ Ուրախ եր, վորովհետև այլևս նամուսը չի կորցնի, չի խայտառակվի. բացի դրանից՝ չի զրկվի իր աննման Զոմարդից, իր ջան ու ջիգար յեղբորից։

Իրիկունը դեռ խավարը նոր եր յերկիրը պատել, յերբ Գալոն հանգիստ սրտով անկողին մտավ ու իսկույն քնեց։ Անուշ յերազների մեջ եր նա, յերբ դռան թրխկթրխկոցը ականջն ընկավ. Գալոն անկողնում նստեց, մթության մեջ շոշափելով՝ արխալուղը գտավ ու վոտաբոբիկ դուրս յեկավ բակը։

— Ո՞վ է,— հարցրեց Գալոն, մոտենալով դռանը։

— Յես եմ,— պատասխանեց ձայնը փողոցից,— դուռը բաց։

Գալոն ճանաչեց Կոստանդ աղայի ծառայի ձայնը, և նրա սիրտը մի առանձին անախորժ զգացմունքով լցվեց։

— Խե՞ր ըլի, Մադո,— հարցրեց Գալոն դուռը բանալով,— ի՞նչ է պատահել էս կես գիշերին։

— Խեր է, փառք աստուծո, աղեն ասում է՝ ձիուն լավ կըշտացրու, վոր էս գիշեր աքլորականչին գնալու յե քաղաք. շատ վռազ գործ ունի։

— Հենց էս գիշե՞ր,— բացականչեց Գալոն շփոթվելով։

— Էս գիշեր, աքլորականչին։

— Եդ չեղա՛վ,— ասաց Գալոն գլուխը պտտեցնելով։

— Վո՞նց թե չեղավ. աղեն ասում եր, վոր դու արդեն խոսք ես տվել, Կոստանդ աղայի հետ հանա՞ք ես անում, ի՞նչ է։

Գալոն մնացել եր մոլորված՝ կանգնած։ Ի՞նչ աներ. յերեք որից հետո նա իր հանգուցյալ հոր քառասունքը պիտի կատարել տար. Նա առաջուց արդեն ամեն պատրաստություն տեսել եր, այնպես վոր ինքը վոչ մի կերպ չեր կարող մինչև ավագ հինգշաբթի որը գյուղից հեռանալ, իսկ Զոմարդին ոտարի խնամքին հանձնելը, ամանաթ տալը հեշտ չեր, այդպիսի բան Գալոն իր կյանքում յերբեք արած չուներ։ Բայց Կոստանդ աղայի հրամանը չկատարելը, նրա խոսքը կոտրելն ել հեշտ չեր։ Գալոն վախենում եր։

— Ուրեմն, չե՞ս տալիս։

— Ի՞նչ անեմ, ախպեր, յեթե իմ կամքիս լիներ, չեյի տա...

— Ուրեմն գիտես, վոր քո կամքից չի կախված։ Են, ողորմի հորդ, ել խոսելն ավելորդ ե։

Գալոն լուռ եր և սգավորի պես տխուր։

— Դե՛հ, յես գնում եմ Գալո. դու յել ձիուդ կշտացրու, վոր լուսադեմին գամ տանեմ։

— Արի, ի՞նչ անեմ,— ակամա մրմնջաց Գալոն, ապա կրկին հոգոց քաշեց ու ներս մտավ։

4

Զատկի շաբաթ որը արևն արդեն մերեմեր եր, յերբ Կոստանդ աղան քաղաքից վերադառնալով, հասել եր ճանապարհի ամենավտանգավոր ձորերից մեկին։ Ըստ յերևույթին, ձիավորը ամեն ջանք գործ եր դրել, վոր կարողանա որ ցերեկով անցնել այդ յերկյուղալի տեղից։ Զոմարդը, վորը մինչև այդ իր սաղրու վրա չեր փորձել անգամ ճիպոտի ազդեցությունը, այժմ գալարվում եր նըստողի մտրակի ուժգին հարվածներից և ամբողջ մարմնով քափ ու քրտինքի մեջ կորած, աչքերը արյունակալած, բոլոր թափով սլանում եր ձորի քարքարոտ ու գառիվայր ճանապարհով։ Կոստանդ աղայի սիրտը յերկյուղից սաստիկ թրթռում եր. Նա ձախ ձեռքով ամուր բռնել եր ձիու սանձը, իսկ աջով մերթ գրպանի վոսկու տոպրակն եր ամրացնում, մերթ նրա մոտ կախված ատրճանակի փղոսկրյա կոթն եր սեղմում և ատամները կրճտացնելով սպառնում քարափների հետև թաքնված յերևակայական ավազակներին։

Վերջապես նա ձորից դուրս յեկավ, և նրա սրտի թրթռոցը փոքր ինչ մեղմացավ։ Մնացած ճանապարհն արդեն անվտանգ եր։ «Են, փառք աստուծո», անցավ աղայի մտքով, և նա ձեռով շոյեց կրծքի ձախ մասը, վորտեղ ուղիղ սրտի վրա կարված գաղտնի գրպանում պահված եր թղթադրամների հաստ կապոցը։ Մտրակի հարվածները միքանի րոպե դադարեցին, և հոգնած Զոմարդը փոքր առ փոքր քայլերը մեղմացրեց։



Այդ ժամանակ աղայի ականջին հասավ մոտակա կիսավեր վանքի զանգերի ղողանջոցը։ Կոստանդ աղայի սրտում մի անսպասելի ցանկություն առաջացավ. Նա փափագ զգաց այդ ազիզ իրիկունը ժամ առաջ տանը գտնվել և իր սիրելիների հետ միատեղ զատկական ընթրիքը վայելել։ Աղան թամբի մեջ ուղղվեց, վոտներն ասպանդակներում ամրացրեց և ձիու սանձը թափահարեց. միևնույն ժամանակ մտրակը ոդի մեջ վժժաց և սաստիկ շրպպոցով զարնվելով ձիու փորատակին՝ կծկծեցնող ցավ պատճառեց նրան։ Խեղճ անասունը, վորի հևոցը դեռ չեր կտրվել, անսպասելի հարվածից ծլունգ յեղավ և վերջին ուժերը հավաքելով, սկսեց վազել, բայց վոչ յերկար։ Զոմարդի վաստակած վոտները չեյին ուզում հնազանդվել նրա կամքին և փոքր առ փոքր դանդաղեցնում եյին քայլերը։ Մտրակը նորից ճոճում եր և սաստիկ շառաչյունով հարվածում ձիուն. մղկտացնող հարվածներից ձին պոչը պտտեցնում եր, գլուխը թափահարում, փնչացնում։ Աղան միքիչ իրան զսպեց և թույլ տվեց, վոր յերկու րոպե ձին իր կամքով գնա։ Ուժասպառ անասունը գնաց, գնաց ու կանգնեց։ Այդ ժամանակ աղան այլևս չկարողացավ բարկությունը զսպել. Նա առավ մտրակը և սկսեց ջարդել ձիուն, սարսափելի հիշոցներ թափելով նրա տիրոջ գլխին։ Ձին իր սովորական քայլերը ել չեր արագացնում և, կասես, չեր ել զգում մտրակի պատճառած սոսկալի ցավը։

Արդեն մութը գետինը կոխել եր. ընդամենը միայն յերկու վերստ եր մնում մինչև տուն հասնելը։ Հարկավոր եր բարձրանալ առջևի դարի գագաթը, վոր հայրենի գյուղի ճրագները յերևային։ Կոստանդ աղան յերևակայում եր, թե ինչպես հիմա իրանց տանը բոլորն անհամբեր իրան են սպասում և սաստիկ փափագում եր, վորքան կարելի յե շուտ, տուն հասնել։ Բայց Զոմարդը չափազանց դանդաղ եր շարժվում։ Աղան առաջվա պես անդադար մտրակում եր ձիուն և ասխական սրածայր ասպանդակներով այնպես եր խփում խեղճ կենդանու փորին, վոր քիչ եր մնում կաշին ծակեր։ Դարի ստորոտից մինչև կեսը բարձրանալով, ձին առաջին անգամ ծանր տնքաց և տեղն ու տեղը կանգնեց։ Նստողը մերթ մտրակի ուժով, մերթ ասպանդակի հարվածներով և մերթ գոռում-գոչյունով փորձում եր կոտրել ձիու համառությունը, բայց անաջող։ Վերջապես աղան շրթունքները կրծոտելով իջավ ձիուց և սկսեց անողորմաբար հարվածել Զոմարդի գլխին, առանց աչք ու ականջ վորոշելու։ Մտրակի դաղող հարվածներից մեկը կպավ ձիու ձախ աչքին, վորից սկսեցին գլգլալով ցած հոսել պարզ արտասուքի խոշոր կաթիլները։ Յերբ աղայի ձեռը հոգնեց, նա նորից նստեց ձիու վրա ու քշեց։

Զամարգը մեծ դժվարությամբ բարձրացավ դարի գլուխը, այստեղ յերկրորդ անգամ ծանր տնքաց ու ելի կանգ առավ։ Կոստանդ աղան զայրույթից փրփրեց և այս անգամ առանց ձիուց իջնելու սկսեց իր բոլոր ուժով մտրակի հարվածներ թափել թշվառ կենդանու վոտին ու գլխին, աչք ու ականջին։ Զամարգի աչքերից կրակ եր թափվում, նա շլինքը ծռեց, բերանը լայն բացեց, տեղն ու տեղը միքանի անգամ պտույտ գործեց, ճռռաց և հանկարծ անսպասելի արագությամբ սկսեց վազել քարքարոտ ճանապարհով դարի գլխից դեպի ցած. Նա սլանում եր բոլոր թափով՝ առանց առջևը տեսնելու, նա հասկանում եր, վոր նստողը պահանջում ե վազել և իր ուժերի վերջին մնացորդները գործ եր դնում, վորպեսզի նրա կամքը կատարե ու դժոխային հարվածներից խուսափե։

Ահա և գյուղի ճրագները, ահա Կոստանդ աղայի կարմիր պատշգամբը. ահա և գերեզմանատունը, վորի մոտից անցնելիս՝ աղան մի տեսակ ճնշող յերկյուղ զգաց, ու նրա մարմինը ամբողջապես փշաքաղվեց։ Կոստանդ աղան անընդհատ ասպանդակում եր ձիուն և մտրակը ոդի մեջ ճռճեցնում, իսկ Զամարգը վազում եր, վազում բոլոր ուժով և արդեն իջնում եր գյուղի վրա, յերբ հանկարծ մի սոսկալի դըմփոց լսվեց, վորին հաջորդեց հուսահատ «ա՜մմմանը»։ Զամարգը փռված եր յերեսի վրա... Անմեղ անասունը բոլորովին սպառելով իր վերջին ուժերը, հանկարծ գերեզմանների կողքին չոքերի վրա վայր ընկավ, ու նրա գլուխը սաստիկ զարնվեց ճանապարհի սուր քարերին։ Խեղճ կենդանին մի րոպե շշմած դրության մեջ մնալուց հետո մեկ ել աչքերը լայն բացեց, շլինքը բարձրացրեց և գլուխը գետնին սյուն տալով՝ իրան թափահարեց, փորձեց նորից վոտի յելնել, բայց չկարողացավ։ Նա վերջին անգամ ծանր հոգոց քաշեց ու կամաց կողքի վրա պառկեց։ Տաք արյունը գլգլալով հոսում եր խեղճի ջարդոտված քիթ ու բերանից։

Կոստանդ աղան այնքան ճարպիկ գտնվեց, վոր կարողացավ ժամանակին ձիուց ցած թռչել և իր գլուխը վերահաս փորձանքից ազատել։

Այժմ նա անսահման զայրույթով լցված՝ կանգնած եր ձիու կողքին և չգիտեր, թե ի՞նչ անե։ Նա առաջ փորձեց մտրակի ուժով ձիուն վոտքի կանգնեցնել, կամ գոռում-գոչյունով նրան վախեցնել, բայց յերբ տեսավ, թե վորքան քիչ ե ազդում այդ բոլորը Զամարգի վրա, կամացուկ արձակեց ձիու թարքի ծանր խուրջինը, գցեց ուսը և ձիու տիրոջ հասցեյին սարսափելի հայհոյանքներ ուղղելով, տնքալով դիմեց դեպի տուն...

— Գալո՛, ա՜յ Գալո,--լսվեց բակի դռնից Մադոյի գիլ ձայնը։



— Ի՞նչ կա, Մադո՛ ջան, Զամարգս եկա՞վ—շտապով հարցրեց Գալոն։

— Աղեն ասում ե՝ Զամարգը հիվանդացել գերեզմանատան կշտին ճամբի վրա վեր ե ընկել. գնա ձիուդ տիրություն արա,— ասաց Մադոն ու արագ-արագ հեռացավ։

Անսպասելի գույժը քիչ մնաց Գալոյին կաթվածահար աներ։ Նրա կուռն ու ճուռը թուլացան, աչքերը մթնեցին, սիրտը սևացավ ու կես րոպեյի չափ նա մնաց անշարժ կանգնած. բայց հետո հանկարծ գլուխը բարձրացրեց, աչքերն ու ճակատը շփեց և քամու արագությամբ փայտե սանդուխքներից ցած իջավ։

Գյուղի փողոցները դատարկ եյին։ Գալոն կեռիկ-մեռիկ փողոցներով վազում եր դեպի գերեզմանատուն։ Կոստանդ աղայի տան մոտից անցնելիս նա զզվանքով լսեց վաշխառուի խռպոտ ձայնը, վոր մի առանձին վոգևորությամբ պարսկական «շիքաստի» յեր յերգանակում։

Յերկու րոպեյից հետո Գալոն գերեզմանատան լանջով բարձրանում եր դեպի վեր. նա աչքերը չռել եր և տեսողությունը լարել և ուշի ուշով իր շուրջը զննելով, լուսնյակի աղոտ լուսում մի բան եր վորոնում։ Ահա նա տեսավ հեռվում փոքրիկ մատուռի դեմ մի ինչ վոր բան կարմրին ե տալիս։ «Ախ աստված, չլինի՜ թե Զամարգս ե» մտածեց Գալոն ու քայլերն ավելի արագացրեց։ Այո, դա Զամարգն եր, վոր վոտները յերկար մեկնել եր, շլինքը ծռել ու գլուխը մի տափակ քարի վրա դրել։ Սպիտակ կրաքարը, վորի վրա ընկած եր ձիու սիրուն գլուխը, ներկվել եր մուգ կարմիր գույնով. կենդանու բերանից բղխած թանձր արյունը կեռիկ մեռիկ առվակներով քարի վրայից իջել եր դեպի ցած և ապա, ճանապարհի մեջտեղում լճանալով, լերդացել։

— Զամարգ ջան, ախպեր ջան, - գոռաց Գալոն դեռ ձիու մոտ չհասած։

Ձին տիրոջ ձայնն իսկույն ճանաչեց. նա իր կիսախուփ աչքերը լայն բացեց, շլինքը շարժեց, գլուխը մի փոքր բարձրացրեց ու վոտքերը թափահարեց. նա ուզեց վոտի կանգնել, բայց ուժ չկար... Նրա շլինքը թուլացավ և ծանրացած գլուխը գլխկալով նորից սպիտակ կրաքարի վրա ընկավ։ Ձին խորը տնքաց ու աչքերը խփեց։ Գալոն ընկավ ձիու վրա և ամուր գրկեց նրա արյունաթաթախ գլուխը։

— Ախ, Զամարգ ջան, ինչո՞ւ դու իմ մեջքը կոտրեցիր, իմ յերեխաների շլինքը թեքեցիր,—մրմնջում եր Գալոն և արտասուքի խոշոր կաթիլները թրջում եյին խեղճ կենդանու ճակատը։

Գյուղի կողմից լսվում եր ուրախ ամբոխի խառնիճաղանջ ղըժ-

վըժոցը, վորոնց միջից պարզ հասնում էր Գալոյի ականջին Կոստանդ աղայի գարշելի ձայնի անդուրեկան կլկլոցը։

— Տե՛ր արդարադատ աստված, դո՛ւ անիրավ մարդի դիվանն անես,— աղաղակեց Գալոն՝ արտասվալի աչքերը դեպի յերկինք բարձրացնելով— ու նորից իր դառնագին վողբը շարունակեց։

Ախպեր Զոմարդի դողացող շրթունքներն այդ վարկյանին մեղմությամբ շարժվելով՝ ասես մի բան մրմնջացին. այդյոք խղճուկ անասունն էլ անիծում էր մարդկային անիրավությունը, թե՞ իր հոգատար տիրոջը մահի դռնից «մնաս բարև» էր շշնջում։

---

— Ո՞վ է այս պատմվածքի հերոսը՝ Գալո՞ն, թե Զոմարդը:
— Ինչո՞ւ յեր Գալոն այդքան կապված «ախպեր Զոմարդի հետ»։
— Ո՞վ էր Կոստանդ աղան՝ նրա վերաբերմունքը դեպի գյուղացիները. Դեպի Գալոն:
— Բնորոշեցեք չքավոր գյուղացիների վերաբերմունքը դեպի Կոստանդ աղան:
— Ինչո՞ւ նա այնպես քնքուշ ու հոգատար չվարվեց «ախպեր Զոմարդի» հետ, ինչպես վարվում էր Գալոն:
— Վո՞րն է այս պատմվածքի ամենասրտառուչ կտորը:

---

— Համեմատեցե՛ք Կոստանդ աղային Վրթ. Փափազյանի «Զոչո-քար»-ում նկարագրված Հաբեթ աղայի հետ. կա՞ն արդյոք նրանց մեջ նմանություններ ու տարբերություններ:— Ինչո՞վ են դրանք պայմանավորված:

---

## ԿԱՐՄԻՐ ՃԻՊՈՏԸ

Հունիսի վերջերն եր ու որը կիրակի։ Կեսօրյա արևը վառում, տոժոժացնում եր։ Գյուղամիջի տոթը մարդ եր խեղդում։ Թե գաղան, թե թռչուն, թե սողուն— բոլերս էլ, ձեն ու ծպտունները կտրել, ծակ ու ծուկերն եյին մտել։ Անգործությունը ու թմրությունը կաշկանդել եր ամենքին։ Մինչև անգամ գյուղացի յերկրագործը, վորի համբերատար անդամները սովոր չեն խույս տալու վոչ ամառային արեգակի կիզիչ ճառագայթներից և վոչ ձմրան կապտացնող ցրտից, նա անգամ աշխատում եր ոգտվել կիրակնորյա ազատ ժամերից, վոր մի փոքր հանգիստ շնորհե իր վաստակավոր ու ջարդված անդամներին։

Մի շաբաթ եր, ինչ հունձն ընկել եր։ Դա գյուղացու այն ժամանակն է, յերբ, ինչպես ասում են, փայտի գլուխը շոր են փաթաթում ու բանեցնում։ Հնձի ժամանակ գյուղացու վոտի տակ կրակ



է վառվում. նա մի րոպե դադար չի առնում։ Արտերը մեկը մյուսի հետևից հասնում, հնձող են կանչում։ Րոպեն թանգ է. պետք է շտապել, յեթե վոչ արտը կկծղի, գյուղացու տարեն ապրուստը ձեռքից կգնա, նրա թափած արյուն-քրտինքն անօգուտ կկորչի, կվոչընչանա։

Յեվ ահա յերկրագործը կրկնապատկում, լարում է իր ուժերն ու յեռանդը և որ ու գիշեր գերանդին ձեռքից վայր չի դնում։ Ուրիշ հարց է, յերբ այսպիսի նեղ ժամանակ կիրակի յե մեջ ընկնում։ Կիրակի որն աստծունն է, և ջերմեռանդ հայ գյուղացին չի համարձակվի պապենական այդ որենքը խախտելու, թեկուզ ինչ էլ վոր լինի։

Ահա մի այդպիսի կիրակի որ եր։ Պարապ գյուղացիներից միքանիսը մանգաղ ու գերանդի եյին սրում և կարգի գցում, ուրիշները խանութների հովերում նստոտած՝ դեսից-դենից զրույց եյին անում, իսկ շատերն էլ քնահարամությունից շշմած՝ գլուխները մի պատի շեմքում վեր եյին դրել ու անուշ քուն մտել։

Տատմոր Սիմոնն էլ քնահարամներիցն եր։ Նա փափախը գլխատակն եր դրել ու իրանց մութը տան խոնավ գետնի վրա պառկել։ Ո՜, վորքան քաղցր, վորքան անուշ է ջարդված ու վաստակած յերկրագործի քունը, մանավանդ միքանի անքուն գիշերներից հետո։

Սիմոնը խոր քնի մեջ եր. նրա դեմքը խաղաղ եր ու վերին աստիճանի անվրդով։ Վշտի ու հոգսի՝ գյուղացու այդ յերկու անբաժան ընկերների հետքն անգամ չեր նշմարվում Սիմոնի անխռով դեմքի վրա։ Ընդհակառակը, յերբեմն թեթև-թեթև ժպիտը վայրկենապես փայլում եր նրա արևառ այտերի վրա ու անմիջապես անհետանում։

Յերևում եր, վոր քնողը յերջանիկ յերազների աշխարհումն է գտնվում։

Յեվ իսկապես, վո՜րքան մեծ բախտավորություն կլիներ Սիմոնի համար, յեթե մի գերբնական զորությամբ իրականանար այն բոլորը, ինչ վոր այդ րոպեյին նա տեսնում եր յերազում։ Սկզբում Սիմոնին թվում եր, իբր թե գարուն է, և ինքը դաշտ է դուրս յեկել վարելու. նա աշխատում է մեծ յեռանդով, բայց վարում է վոչ թե առաջվա պես ոտարի գութանով. վոչ, այժմ գութանը Սիմոնի սեփականն է։ Այդ գութանին լծված են յոթ զույգ՝ նույնպես սեփական՝ յեզներ. այն էլ ինչ տեսակ յեզներ— ամեն մեկը մի մաբալ. մարդ ուզում է վոչ ուտել, վոչ խմել, այլ միայն որերով կանգնել ու այդ սիրուն կենդանիներին նայել։ Սիմոնը հասել է իր իսկական նպատակին. սեփական գութանը յոթ զույգ յեզներով նրա

միակ տենչանքն էր կազմում։ Սիմոնն իրան կատարելապես յերջանիկ է համարում, նա քաղցր ձայնով հորոլո յե կանչում և մեջեմեջ ծվծվացնում է յեզներին ու փայփայում. «Դե՜, մեռնեմ Ջեյրանիս։ Ծաղիկ ջան, մեջ արի, Ծաղիկ... ա՛յ, գլխին մատաղ Արաբիս, հոբոլո՛»... Յեվ վորքան լավ են քաշում անիրավ կենդանիները. անհագին գութանը փետուրի թեթևությամբ է առաջ լողում և փխրուն հողի հաստլիկ շերտերը շարեշար դիզում։

Ժամանակը յերազում զարմանալի արագությամբ է սլանում։

Մեկ էլ տեսնում է Սիմոնը, վոր արտը հասել է, դեղնել ու նրա տռուզ հասկերը վոսկու պես շողշողում են նորածին արևի թույլ ճառագայթների առջև։ Յեվ այնքան մեծ, անյքան ընդարձակ է արտը, վոր նրա մի ծայրից մյուսը չի յերևում. այնքան լավ ու այնքան բարձր է ցորենը, վոր յեզը նրա մեջ կորչում է։ Սիմոնն անմիջապես վերցնում է գերանդին ու սկսում է հունձը։ Գործը զարմանալի արագությամբ է առաջ գնում։ Միքանի վայրկյանից հետո ծեծած ցորենի հսկայական թեզը կալում պատրաստ է։ Գյուղացիք բոլորը, մեծ ու փոքր, մեր ու մանուկ հավաքվել են կալի շուրջը և բերանբաց զարմանքով Սիմոնի թեզին են մտիկ տալիս։ Ահա՛ փչեց արևելյան մեղմ քամին. Սիմոնը մի ակնթարթում անհագին թեզը քամուն ավեց և սրսուռ ու սպիտակ ցորենը դարմանից զատեց։ Նայում է Սիմոնը ցորենի հսկայական կույտին, հրճվում է նրա սիրտը, ու լեզուն փառք է տալիս աստծուն։

Ահա կալը շրջապատեցին գյուղի աղքատներն ու շրջիկ մուրացկաններն իրենց պարկ ու տոպրակով։ Սիմոնը մի ակնարկ գցեց այդ թշվառ արարածների վրա և ինչ տեսավ. ցնցոտիների մեջ փաթաթված՝ մաշված ու վոսկրացած մարմիններ, մարած ու անփայլ աչքեր, նիհար ու դժգույն դեմքեր, մի խոսքով՝ շարժուն ու խոսուն դիակներ, վորոնք՝ որհնության մրմունջը շրթունքներին՝ իրանց դողդոջուն ձեռքերն անվստահ կերպով մեկնել եյին Սիմոնին։ Սիմոնի ջիգարի ծայրը մզկտաց. նա բոլորի պարկ ու տոպրակը պռնկեպռունկ լցրեց ու բարձրաձայն ավելացրեց.

— Տարեք, խեղճ ախպերներս, տարեք։

Վորքա՜ն բախտավոր կլիներ Սիմոնը, յեթե այս բոլորը յերազ չլիներ։

Լուռ էր խրճիթն ու խաղաղ։ Տանը վոչ վոք չկար։ Սիմոնի կինը յերեխաներին ժողովել ու հարևանի տունն էր գնացել, վորպեսզի փոքրիկներն իրանց ղալմաղալով հոգնած ամուսնու քաղցր քունը չխանգարեն։ Խրճիթում մնացել եր միայն սև կատուն, նա յել Սիմոնի գլխավերևը կծկվել ու իր կիսախուփ աչքերի թույլ հայացքը տիրոջ յերեսին եր ուղղել։



Խրճիթում տիրող խորհրդավոր լռության մեջ լսվում եր միայն քնողի միակերպ ու հանգիստ շնչառությունը։

Շը՛խկ, շը՛խկ, շը՛խկ—լսվեց Սիմոնենց բակի դռան ամուր թակոցը։

Սիմոնին յերազում այնպես թվաց, թե կալի հարևանը մուրճով ամրացնում է կամերի վրայի թուլացած վորձաքարերը, և նա մնաց ընկղմված յերազի մեջ։

Շը՛խկ, շը՛խկ, շը՛խկ շը՛խկ,—ավելի ուժգին կրկնվեցին դռան հարվածները, վորից հետո բակի հին դուռը, մի աղեկտուր ճիչ արձակելով, կրնկի վրա պտտվեց ու թակողին ներս թողեց։ Դա գզիր Գևոն եր, յերկար ու բարակ մի մարդ, ծուռ ճիպոտը ձեռին։

— Կասես խուլեր է ընկել ավերակ դառածը, մարդահոտ չի գալիս,—բեղի տակ մրթմրթաց նա, մոտենալով խրճիթի դռանը։

— Տատմեր տղա, հե՜յ,—գզրին հատուկ սուր ու ծիգ ձայնով գոռաց նա, տան դուռը ծերպ անելով։

Սիմոնը պառկած տեղից ծուլ ելավ ու ջղաձգական շարժումով սկսեց քնաթաթախ աչքերը տրորել։ Քաղցր յերազների գրավիչ տեսարանները մի ակնթարթում խորտակվեցին, ու նրանցից մնացած վողորմելի ավերակների վրա իսկույն վոտի կանգնեց դառն ու տխուր իրականությունն իր բոլոր խեղճությամբ։ Ահա՛ նրա ուռած ու կիսաբաց աչքերին յերևում են պապենական հին խրճիթի հաբյուրամյա սև սյուները, բլբլոտած պատերն ու մրոտ առաստաղը. ահա խրճիթի մի անկյունում պպզած՝ հացի դատարկ տաշտը, իսկ մյուսում ալյուրի սովատանջ փեթակը, յերկուսն էլ շինքը ծուռ՝ աղաչական հայացքով նայում են Սիմոնին...

— Իսկ ինչ յեղավ գութանը,—մտածում եր Սիմոնը,—ինչ յեղան իմ սիրուն յեզները, իմ կալը, իմ թեզը, ցորենի անհագին կույտը. մի՞թե այս բոլորը յերազ եր,—ինքն իրան բարձրաձայն հարցրեց նա։

— Ագա՛, ինչ ես արջաքուն մտել,—գոռաց գզիր Գևոն, դռան շեմքից գլուխը յերկարացնելով,—մեռլի պես ես շնթռկում, տնաքանդ, բա դու ըսկի ցավ ու կրակ չունե՞ս։ Հլա մի տես վո՜նց ա շարժվում, վոնց, կասես կուռն ու ճուռը կարմիր քամի ընկած լինի։ Վե՛ր կաց, իշի գլուխ, վե՛ր, տանուտերը կանչում ա, շո՛ւտ։

Սիմոնը դեռ նոր եր ուշքի գալիս. թարմ յերազն այնքան գրավիչ եր, ու նրա թողած տպավորությունն այն աստիճան խոր, վոր նա չեր կարող հեշտությամբ հաշտվել նրանից բաժանվելու մտքի հետ։ Բայց գզիր Գևոյի ատելի յերեսը, նրա ծուռտիկ ճիպոտը, վորի մզկտացնող հարվածները շատ անգամ եր կերել Սիմոնը, և մեկ էլ

տանուտերի ահեղ անունը վերջնականապես սթափեցրին նրան ու միանգամայն մոռացնել տվին յերջանիկ յերազի քաղցր հիշողությունը։

— Հը, ի՞նչ կա, Գևո ջան, ինչի՞ յես կանչում խեր լինի,— աղաչական ձայնով հարցրեց նա գզրին, թեև լավ գիտեր, որ գզրից ու տանուտերից վոչինչ խեր բան չի կարելի սպասել։

— Ջոռ ու ցավ կա քո գլխին ու արևին. կոր՛, տես ինչ են ասում. յես հո իմաստուն չեմ,— կոշտ ու կոպիտ պատասխանեց գզիրը։

Սիմոնն շտապով արխալուղը կոճկեց, փափախը ծածկեց ու վոտաբոբիկ հետևեց գզիր Գևոյին։

«Տեր աստված,— մտածում եր Սիմոնը ճանապարհին,— տեսնես ինչի՞ համար են կանչում ես նեղ ժամանակին։ Թե ասեմ հարկ են պահանջում, ախար անցյալ կիրակի տռան. թե կոռ են ուղարկում, ախար յերեկ չե՞ մեկել որը կոռատեղից վերադարձա. մինչև հերթը ինձ համնելը դեռ շատ ժամանակ կա, Ե՞հ, ո՞վ է իմանում, յերևի կամ գիշերապահ են նշանակում, կամ մի ուրիշ գործի յեն դնում. վերջապես, շատ չի քաշի, հիմի կիմանանք»։

Իրիկնապահի հովը արդեն ընկել եր։ Գյուղամիջին մարդիկ խմբվել եյին տանուտեր Սեփանի շուրջը, վոր իր հսկայական կոկորդի ամբողջ ուժով գոռում եր մի աղքատ գյուղացու վրա ու թափահարում ձեռքի կարմիր ճիպոտը։

Տանուտեր Սեփանի կարմիր ճիպոտն անճար աղքատների հոգեառ հրեշտակն եր։

— Լի՛րբ, անամոթ, շա՛ն վորդիք,— բղավում եր տանուտերը,— ձեզ պես շների համար իմ յերեսն ամոթանք ա գալիս ու մեծերիս առջև անպատիվ եմ լինում. ինչո՞ւ, պատճառը. հարկ չտվողը դու լինիս, ամոթանք քաշողը՝ յես...

Այդ րոպեյին տանուտեր Սեփանի մաքուր ածելած՝ կլոր յերեսն այնպես եր կարմրատակել, վոր քիչ եր մնում նրա կզակից արյուն կաթկաթեր. իսկ նրա հաստլիկ ուժեղ մատներն՝ անգործությունից ձանձրանալով՝ բոլոր ուժով սեղմում եյին կարմիր ճիպոտի ուռած գլուխը։

Լուռ ու մունջ ամբոխը վախկոտ հայացքով հետևում եր տանուտերի բարկացած դեմքին ու նրա ձեռքի կարմիր ճիպոտին, և վոչ վոք նրանցից չեր համարձակվում ձեն ու ծպտուն հանել։ Հագի ձայն անգամ չեր լսվում։

— Արդար է խոսում ես մարդը,— վերջապես միջամտեց հարկաժողով Հաթոն, ցանցառ մորուքով, կեղտոտ ոձիքով, կարճահասակ ու տգեղ մի վաշխառու,— մեր գյուղացիք որեցոր ամոթն ու պատկառանքը կորցնում, լվացվում են։ Ցեղբայր, ո՞վ է տեսել հարկն ամիսներով ուշացնեն։ Արքունական հարկ ա, դա յել հո ուտելու բան չի. պիտի տաք, շո՛ւտ տվեք, թող վերջանա կորչի ելի. ինչու յեք աննամուսություն անում, վոր համ դուք խայտառակվեք, համ էլ մեր տանուտերի յերեսը թուք ու մուր գա։

— Տեսնենք ունե՞ն, վոր չեն տալիս,— լսվեց ամբոխի խորքից մի յերկչոտ ու թույլ ձայն, վորպես պատասխան հարկաժողով Հաթոյին։

Տանուտերն արագությամբ յերեսը շուռ տվեց ու մի կատաղի հայացք գցեց չորս կողմն, աշխատելով գտնել հանդուգն ընդդիմախոսին։ Բայց նրա հարցական հայացքին իբրև պատասխան լսվեցին ամբոխի զանազան ծայրերից կեղծ հազի զսպված ձայներ։

Այդ միջոցին Սիմոնը դողդոջուն սրտով՝ գզրին հետևելով, մոտենում եր գյուղացիների կազմած շրջանին։

— Տառմոր տղին բերի, տանուտեր աղա,— ասաց գզիր Գևոն, Սիմոնի թևից քաշելով ու տանուտերին մոտեցնելով։

Տանուտեր Սեփանը, վոր այդ ժամանակ բարկությունից պռոշներն եր կրծոտում, կարմրատակած խոշոր աչքերի այրող հայացքը մեխեց ուղիղ Սիմոնի ճակատին և իր վորոտացող ձայնով հարցրեց.

— Ա՛յ անամոթ, շա՛ն վորդի, ինչո՞ւ չես հարկդ տալիս։

Տանուտերի աչքերի վայրենի ցոլքն անմիջապես շփոթեցրեց Սիմոնին, վոր մեքենաբար իր մորթե փափախը հոնքերի վրա իջեցրեց, աշխատելով պաշտպանել իր մանր ու սև աչքերը տանուտերի հալեցնող հայացքից։ Սիմոնը մինչև անգամ չհասկացավ, թե ինչ հարցրին իրան, ու չգիտեր ինչ պատասխաներ։ Նա սաստիկ անհարմար դրության մեջ գտնելով ինքն իրան, նախ մի փոքր կարմրեց, ապա ուսերը վեր ջաշեց ու սկսեց ծոծրակը քորել։

— Խլացե՞լ ես, թե՞ պապանձվել, իշի քուռակ,— ավելի բարձր ձայնով գոռաց տանուտերը,— ինչո՞ւ չես հարկդ տալիս, լի՛րբ, լրբի զավակ։

Այդ խոսքերի հետ նա թևքերը վեր քաշեց ու կարմիր ճիպոտը բարձրացնելով, հարձակվեց անպաշտպան զոհի վրա։ Միքանի րոպե լռեց ամեն ինչ։ Լսվում եր միայն կարմիր ճիպոտի անողորմ շրպշրպոցը, վորի ամեն մի հարվածին հաջորդում եր ամբոխի ցավակցական շշուկը՝ «ո՜ֆ»։

Լուռ եր և Սիմոնը. նա վո՛չ ճչում եր, վոչ փախչում, այլ մի տեսակ անմռունչ արհամարհանքով տանում եր անտեղի պատիժը։ Այդ սառն անտարբերությունն ավելի ևս զայրացնում եր տանու-

տերին, և սա կրկնապատկում էր կարմիր ճիպոտի ուժը, վոր կարողանա անպատճառ մղկտացնել ու լացացնել Սիմոնին։ Սիմոնը միայն աշխատում էր ձեռքերով պաշտպանել իր խեղճ ու անբախտ գլուխը, իսկ նրա թիկունքն իր ամբողջ լայնությամբ բացված էր կարմիր ճիպոտի առջև, վորի ամեն մի հարվածը մի յերկար, կապուտակ շերտ էր դրոշմում այս բազմաչարչար թիկունքի վրա։

Վերջապես տանուտերը հասավ իր նպատակին. յերբ վոր կարմիր ճիպոտը քամում էր նրա սրտում լճացած թույնի վերջին մնացորդներն, այդ ժամանակ նա նկատեց, վոր Սիմոնի կոշտացած ու մազապատ դեմքի վրայով մի կաթիլ բյուրեղանման հեղուկ գլորվեց դեպի գետին։ Աղի հեղուկի այդ չնչին կաթիլը մի վայրկյանում հանգցրեց բարկացած սրտում բորբոքված կրակը։

Մաղձը թափվեց. սիրտը նստեց։

Այժմ բավական էր մի թեթև միջամտություն, վոր կարմիր ճիպոտը դադարեր գործելուց. այս բանը լավ հասկացավ սուդյա Սաքոն, վոր իշխանաբար մոտենալով Սեփանին, ասաց.

— Բավական է, տանուտեր, սպանեցիր մարդին։

Հետո նա ընկնելով ծեծողի ու ծեծվողի մեջտեղը, բաժանեց սկսեց նրանց ու միջից հեռացրեց Սիմոնին։

Ասենք, տանուտերը դադարեցրեց ծեծը, բայց անմիջապես ամենակեղտոտ ու զզվելի հիշոցներ թափել։

— Ա՜յ ժողովուրդ, ա՜յ գյուղացիք, ա՜յ հարևան, ա՜յ բարեկամ,— հանկարծ գոչեց Սիմոնը, մի անսովոր զիլ ձայնով դիմելով շրջապատողներին, - մի ասացեք տեսնեմ՝ ինչ է իմ մեղքը, վոր տավարի պես ջարդ...

Դառն արցունքի առատ հոսանքը խեղդեց Սիմոնի կոկորդը. նա չկարողացավ վերջացնել կիսատ խոսքը, այլ յերկու ձեռով յերեսը ծածկեց ու սկսեց դառնագին հեկեկալ։

Սուդյա Սաքոն ու հարկաժողով Հաթոն փորձեցին իրանց քըրքիջով խեղդել Սիմոնի հեկեկանքի սրտակոտոր հնչյունները, բայց տեսնելով, վոր այդ լիրբ քրքիջն արձագանգ չգտավ շրջապատողների մեջ, իսկույն սսավեցին ու գլուխները կախեցին։

— Հարկս անցած կիրակի որն եմ տվել. ուրեմն ինչո՞ւ յեք իզուր տեղն ինձ ջարդուփշուր անում,—շարունակեց Սիմոնը հեկեկանքը զսպելով ու արխալուղի թևքով արտասուքը սրբելով։

-- Ձա՛յնդ, անամոթ շուն, թե չե լեզուդ կկտրեմ այս րոպեյիս,—վորոտաց տանուտերը, կարմիր ճիպոտը թափահարելով ու յերկու քայլ առաջ գալով։—Հաթո բիձա,—դիմեց տանուտերը հարկաժողովին,—այս մարդը հարկը տվե՞լ է։



— Ասենք, ես տարվանը տվել ա,—ծանր ու բարակ պատասխանեց հարկաժողովը,--բայց անցած տարվա ապառիկը մնում ա, տասնուչորս մանեթ ու քսան կոպեկ ա, կարծեմ։

— Ի՞նչպես,--ճչաց Սիմոնը, սոսկալով։

— Այնպես,—անվրդով պատասխանեց հարկաժողովը։

— Յես հերվա հարկը չե՛մ տվել։

— Վո՛չ. թե չես հավատում, հարկի ցուցակը տես։

— Յեղբայր, ինչո՞ւ յեք շատախոսություն անում,---մի առանձին համոզիչ ու հեղինակավոր ձայնով սկսեց որենսգետ սուդյա Սաքոն.—տերությունը հաստատ լինի, ամեն բանի համար մի լավ որենք ա դրել. առանց որենքի վոչ մի գործ յոլա չեր գնալ։ Փառք աստծու, հարկը տալու համար էլ կարգ ու կանոն կա դրված. որենքով հարկը պիտի տաս հարկաժողովին ու անդորրագիրն առնես, դնես ծոցդ։ Ով վոր անդորրագիր ունեցավ, վոչ-վոք չի կարող նրանից կրկին անգամ հարկ պահանջել. իսկ ով այդ թղթի կտորը չունեցավ, խոսելն ավելորդ ա, տիկ հանելով հարկը կառնեն։

Այդ րոպեյին ամբոխի մեջ մի անսովոր շարժում սկսվեց։ Նրանցից վո՛րը գրպանն էր պտռում, վո՛րը ծոցը ու վորն էլ փափախածալը, անդորրագրերն եյին վորոնում։

— Հա, խոսքը Տատմոր տղի վրա յեկավ,—շարունակեց սուդյան,—հիմի յեթե այդ մարդն անդորրագիրը ցույց տվեց, կնշանակի հարկը տվել ա, իսկ յեթե վոչ, ուրեմն հոգին դուրս գալով պիտի տա. սա որենք ա, հանաք-մասխարություն չի,—վերջացրեց Սաքոն իր ազդու ճառը. հազաց ու սկսեց մի պապիրոս փաթաթել։

— Լավ ա ասում սուդյա Սաքոն, յեթե հարկդ տվել ես, անդորրագիրը ցույց տուր,—ժպտալով ավելացրեց հարկաժողովը, լավ իմանալով, վոր Սիմոնից հարկը ստացել է, բայց, ոգտվելով նրա միամտությունից, անդորրագիր չի տվել։

-- Յես հերվա հարկը չե՛մ տվել, Հաթո բիձա,—ձեռքերը խաչելով հարցրեց Սիմոնն, ուղիղ հարկաժողովի աչքերին նայելով։

— Վո՛չ,—պատասխանեց Հաթոն, գլուխը կախելով։

— Դու ու քո աստվածը, դու ու քո միակ վորդու արև՛ը, չե՞մ տվել։

— Այ, իշի գլուխ, ինչո՞ւ յես յերդում տալիս, յեթե տված լինես, անդորրագիր կունենաս, և վերջապես ցուցակումն էլ նշանակված կլինի։

— Հաթո բիձա, դու քրիստոնյա յես. ախր եսորվա պես միտս է. յերկու խալվար խաղող ծախեցի Բարխուսենց Վարդանին՝ կիսագին, ու բերի տասնչորս մանեթ քսան կոպեկ քեզ տվի։ Դու յել

եդ ժամանակ Վոսկանենց խանութումն էլիր, այ, սուդյա Սաքոն էլ էնտեղ էր տալու ժամանակ։ Դու հոգի ունես, դու աստված ես պաշտում ախար։

— Ե՛հ, դատարկ բաներ ես խոսում,— ասաց հարկաժողովը ու շարունակեց շրխկշրխկացնել սև տերողորմյայի խոշոր հատերը։

— Սուդյա Սաքո, դու լինես՝ ես բարի էրիկունը, էն անարատ մայր աստվածածինը,— ասաց Սիմոնը, ձեռքը մեկնելով պեպի աստվածածնի յեկեղեցու գմբեթը,— ճշմարիտն ասա, քո աչքի առաջև չտվի՞ հարկը։

— Ի՞նչ ասեմ, յեղբայր, միտս չի գալիս, համա իմ կարճ խելքովը յես էնքան եմ հասկանում, որ յեթե տված լինես, անդորրագիր կունենաս․ սա օրենք ա, հանաք-մասխարություն չի,— ասաց սուդյա Սաքոն ու վրդովված խղճմտանքը հանգստացնելու համար արագությամբ ներս ծծեց մախորկի դառը ծուխը։

— Ա՛յ գյադա, բավական ա,— դարձավ Սիմոնին տանուտեր Սեփանը, որ մինչև այդ լուռ կանգնած՝ յեղունգներն էր կրծոտում,— դու ինքդ էշ ես ու եդ էշ տեղովդ ուզում ես եստեղ մարդ խաբել։ Յես քեզ ասում եմ հարկ ես տալու, քո կամքովդ հանիր ու տուր, տասնչորս մանեթ քսան կոպեկ՝ ես րոպեյիս հանիր ու համբիր, թե չէ, կաշիդ քերթելով կառնեմ։

Տանուտեր Սեփան, թե աստված կսիրես, ձեռք քաշիր ինձանից․ յես իմ հարկը տվել եմ, համ ես տարվանը, համ էլ հերվանը․ աստվա՛ծ, յերկինք, գետինք վկա, որ տվել եմ։

Այդ խոսքերի հետ Սիմոնը իր մորթե փափախը վերցրեց ու բոլոր ուժով գետնին խփեց։ Հետո նա առավ գետնից մի կից հող և ողի մեջ վերև ցանելով, աղաղակեց․

— Թո՛ղ ես հողը իմ աստվածը լինի, թող յես կուռք պաշտած լինեմ, թող իմ տունս բրիշակ լինի ու իմ որդիքս ջարդվեն, թե յես եդ փողը չեմ տվել։ Այ մարդի՛կ, ախար դուք աստված եք պաշտում…

Արտասուքը կրկին խեղդեց Սիմոնի կոկորդում կիսատ մնացած նախադասությունը, և նա սկսեց հեկեկալ։

Ողի մեջ ցանած հողի թեթև մասնիկները, բաժանվելով ամենամանր հյուլեների, սկսեցին անհոգաբար պարել Սիմոնի գլխի վերևը, մինչև որ արևելքից սլացող մի բարակ քամի հափշտակեց նրանց ու անհետացավ վոլորապտույտ փողոցի հեռավոր ծայրում։

— Տատմոր տղա, Տատմոր տղա, ինձ լսիր,— ասաց տանուտերը միքիչ մեղմությամբ,— առաջին՝ լաց լինելը կինարմատի արհեստ ա և շատ ամոթ ա, որ քեզ պես մաղ ու մորուքով տղա-



մարդը հրապարակի մեջ արտասուք թափի․ իսկ յերկրորդ՝ վոչ խոսելը և վոչ արտասվելը մի կոպեկի օգուտ չի բերել քեզ։ Այս րոպեյիս յես քեզանից հարկ եմ պահանջում, անցած տարվա ապառիկը՝ տասնուչորս ռուբլի քսան կոպեկ, տալի՞ս ես, թե չէ։

— Տվել եմ, աստ…

— Ջայնդ կտրի՛ր, անպատկառ շո՛ւն, թե չէ բիբիկդ կհանեմ,— բղավեց տանուտերը, կարմիր ճիպոտի սուր ծայրը մոտեցնելով ուղիղ Սիմոնի աչքին,— յես քեզ ասում եմ հարցիս պատասխանիր․ հարկդ տալի՞ս ես, թե չէ։

Սիմոնը ուզեց նորից պնդել, թե տվել է, ուզեց կրկին ու կրկին յերդվել, ուրիշ զորավոր սուրբերի անուններ հրապարակ բերել, բայց վախենալով կարմիր ճիպոտից, որի բարակ ծայրը դեռևս ցցված էր նրա բիբիկի առջև, շվարեց ու չիմացավ, թե ինչ պատասխանի։

— Այ տղա, դու ինչո՞ւ յես կոպտություն անում,— նորից հնչեց օրենսդիր սուդյայի հեղինակավոր ձայնը,— գյուղի մեծ է, հարկ է ուզում, հանիր ու տուր․ իսկ յեթե առաջուց մի անգամ տվել ես, կարող ես գանգատվել ու հետ ստանալ։ Փառք աստծու, դատավոր կա, դատաստան կա․ սա օրենք ա, հանաք-մասխարություն չի։

— Տալի՞ս ես, թե չէ՛,— կրկին գոչեց տանուտերն իր կրակոտ աչքերը լայն չռելով Սիմոնի վրա։

Սիմոնը լուռ էր։ Այդ րոպեյին նա այնպես վրդովված էր, որ յեթե սրտին դանակ տային, արյուն չէր կաթիլ։

Հարկաժողով Հաթոն, լռությունը համաձայնության նշան համարելով, ներքուստ ուրախացավ ու զզվելի ժպիտը շրթունքներին՝ ասաց․

— Կտա, տանուտեր, կտա, վոչինչ չի ասիլ․ Սիմոնը խելոք տղա յա, սա ուրիշների պես ուրացող ու աննամուս չի․ իր պարտքն ա, կտա, վոչինչ չի ասիլ։ Բայց յես քեզ խնդրում եմ, որ միքանի օր ժամանակ տաս, մարդ ա, կարելի յա հիմի չունի։

Սիմոնը յերեսը Հաթոյին դարձրեց ու մի թունալից ակնարկ ձգեց նրա վրա։ Ո՜, որքան տգեղ, որքան զզվելի յեր այդ դեղնագույն ու կնճռոտած դեմքը, որի վրայի ցանցառ մորուքն ու շրթունքների դիվային ժպիտը դժոխային սատանայի տեսք եյին տալիս նրան։ Սիմոնը ուշի ուշով դիտում էր այդ հրեշային այլանդակությունը, և նրա ատելությունն ավելանում, նրա զզվանքը ծայրահեղության էր հասնում։ «Իր պարտքն է, կտա», նորից հնչեցին նրա ականջում Հաթոյի արտասանած խոսքերը։ Յեվ Սիմոնի դեմքը

սպրդնեց, բռունցքները իրանք իրանց սեղմվեցին, ու նրա սև սաթե աչքերն այնպես պլպլացին իրանց նեղ բնում, վոր, կասես, ուզում եյին դուրս թռչել այնտեղից։

— Հրեղեն սուրը մտնի քո տունը,— ճչաց Սիմոնն ու բռունցքները բարձրացրած հարձակվեց Հաթոյի վրա։

Դա մի հուսահատական հարձակում եր, վոր գործեց հարստահարված խեղճությունը հարստահարող անիրավության դեմ։ Բայց թույլի առաջին հարվածն ել դեռ չեր հասել իր նպատակին, յերբ գզիր Գևոյի յերկար բազուկը սեղմեց նրա կոկորդը ու տապալեց գետին։

Այնուհետև ճիպոտների, քացիների ու բռունցքների անողորմ հարվածները կարկտի արագությամբ սկսեցին թափվել խեղճ Սիմոնի գլխին։ Ծեծում եր տանուտերը, ծեծում եր գզիրը, ծեծում եր և հարկաժողովը. իսկ սուդյա Սաքոն քիչ հեռու կանգնած՝ խրախուսում եր նրանց ու ասում.

— Խփեք, խփեք, դրա լիրբ հերն անիծած. ջարդեցեք, վոր խելքը գլուխը գա ու խրատվի։ Սա որենք ա, հանաք-մասխարություն չի։

Ծեծը դադարեց միայն այն ժամանակ, յերբ տանուտերը համոզվեց, վոր ծեծվողն արդեն ուշագնաց ե յեղել։

Կես գիշերը մոտ եր, յերբ Սիմոնն աչքերը բացեց ու ինքն իրան գտավ միայնակ՝ գյուղական բանտի գարշահոտության ու խավարի մեջ թաղված։ Նախընթաց օրվա տխուր պատահմունքն իր բոլոր մանրամասնություններով մի րոպեյում պատկերացավ նրա մտքում։

— Տեր աստված, սա ինչ փորձանք եր, վոր իմ գլխիս յեկավ,— հուսահատությամբ բացականչեց Սիմոնը, մթության մեջ ջուխտ ձեռքով ծնկներին խփելով,— վա՜յ գլխիս, արտս կկծղի, տունս կըքանդվի...

Հետևյալ օրն իրիկնապահին տանուտեր Սեփանը կարմիր ճիպոտը ձեռին մոտեցավ գյուղական բանտին ու դռան գլխի փոքրիկ ծակից ներս նայելով, հարցրեց.

— Հը՛, Տատմոր տղա, յեթե արձակեմ՝ կիրակի օրը կտա՞ս հարկիդ ապառիկը։

Պատասխանելը դժվար եր։ Սիմոնն սկսեց մտածել։ Կծղող արտը, դատարկ տաշտը, կարմիր ճիպոտը և սրանց պես հազար ու մի դառն ու տխուր մտքեր չորս կողմից պաշարեցին նրա ուղեղը, և այդ մտքերի սարսափելի ծանրությունը չդիմանալով,



Սիմոնի փոքրիկ գլուխը կամաց-կամաց խոնարհվեց դեպի ցած ու այսպիսով համաձայնության նշան տվեց տանուտերի առաջարկությանը։

Անճարը կերել ե բանջարը...

---

— Ինչո՞ւ յեր Սիմոնը հե՛նց այդպիսի յերազներ տեսնում։— Պատահակա՞ն եր այդ յերազը Սիմոնի համար, թե՞ նա բղխում եր նրա մշտական մտքերից ու զգացումներից։

— Համեմատեցեք այդ յերազն այն իրականության հետ, վորին հանդիպեց Սիմոնն արթնանալուց հետո։

— Գյուղացիության վո՞ր խավի ներկայացուցիչ ե տանուտեր Սեփանը. ո՞ւմ շահերն ե նա պաշտպանում։

— Վորպիսի՞ հարաբերությունների մեջ ե նա հարկահավաք Հաթոյի յեվ սուդյա Սաքոյի հետ։ Կա՞ արդյոք դրանց մեջ համերաշխություն յեվ ինչի՞ց ե դա բխում։

— Պատմվածքի համապատասխան կտորներից օգտվելով, բնորոշեցե՛ք հարկահավաքի սիստեմը հին գյուղում։

— Ի՞նչ դեր ե խաղում «կարմիր ճիպոտը» այդ սիստեմում։

---

— Ա. Շահնազարյանի այս յեվ «Ախպեր Զամարդը» պատմվածքները համեմատեցեք Վրթ. Փափազյանի պատմվածքների հետ յեվ վորոշեցեք, թե ի՞նչն ե այդ պատմվածքներում ընդհանուր։

— Հասարակական միատեսա՞կ միջավայր ու կարգեր են նրանք նկարագրում, թե վոչ։

— Համեմատեցեք այս յերկու հեղինակների գրելաձևը յեվ նշեք այն տարբերությունները, վոր կարելի յե նկատել դրանց մեջ։

---

# Հ. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

## ՋԱՏՈՅԻ ԲԱԽՏԻ ԱՆԻՎԸ

1.

Ջատոն յերեսուն ռուբլի պարտք արեց մի վաշխառվից և, տոկոսը վրան գալով, մի տարեն ժամանակի 48 ռուբլու բարաթ տվեց նրան, հույս ունենալով, որ մինչև գարնան բացվելը կարող է պարտքը լրացնել և ժամանակին առանց դավի-դառաբայի հատուցանել։ Ջատոն արդեն 56 ռուբլի փող ուներ։ Նա այդ գումարով մի լուծ յեզ գնեց և ամբողջ ձմեռը իր հարազատ յեղբայրների պես պահպանեց մինչև գարունը։

Իսկ այս գարունը մի չտեսնված և շատ անուշ գարուն եր նրա համար. բոլորովին նման չեր այն գարուններին, վորոնք անցել եյին ա՜յնքան դառնություն պատճառելով նրա սրտին։ Այս գարունը ճրնշված Ջատոյին համարձակություն, կարողություն ու անգնահատելի սեփականություն, մի լուծ կյանք, մի լուծ յեզն, կամ յերկու հարազատ յեղբայր եր տվել, և բացի դրանից, Նարգիզն ել, հենց այդ միջոցին մի արու զավակ եր ծնել։ Գյուղը, հանդն ու արտը, սարն ու քոլը այս գարնանը նրան ավելի անուշ, ավելի և մինչև անգամ անչափ, անսահման սիրելի եյին թվում, քան յերբ և իցե իր ամբողջ կյանքի հազվադեպ ուրախ վայրկյաններից մեկում։

Աննկարագրելի յեր մանավանդ այն րոպեյին, յերբ Ջատոն արորն ու սերմնացուն պատրաստած, խինդն յերեսին, ժպիտը շրթունքներին և իր սիրելի յեղբայր յեզների ականջը բռնած լծան տակն եր քաշում, իսկ կինն ամբողջապես ուրախություն դարձած՝ կարմիր ու սպիտակ թելերից հյուսած սամոտեններով եր շնորհավորում մարդուն, և, մոտենալով լծվող յեզներին, անվերջ համբույրներ եր դրոշմում նրանց յերեսին, դնչին ու ծնոտներին, և անմեղ հավատով դառնալով յերկնքին, պաղատում եր աստծուն. «տեր, վերնային աստվա՛ծ, դո՛ւ ղսմաթ անես մեզ, դո՛ւ կապները պինդ ա-



նես, դու աջողաս մեր բանն այսուհետև, մե՛ղք ենք, խե՛ղճ ու նաչար ենք...»։

Յեզները լծելուց և արորը լծնովը ձգելուց հետո, Ջատոն նույնպես, աղոթարանին դառնալով, կրկնեց կնոջ խնդրվածքն ու յեզները քշեց, իսկ կինը, յերեխան գիրկն առնելով, հետևեց նրանց դեպի իրենց սեփական և պապական վարելահողը, վորի չորս կողմերում արդեն ծրել ու վարում եյին նրա բախտավոր համագյուղացիները։

— Բարի լո՛ւս, բարի ա՛ջողում ձեզ.— Ջաթոն աջ ու ձախ վողջույն տալով ամենքին, կարծես ուզում եր նրանց ուշադրությունն իր չնաշխարհիկ լծկանների վրա դարձնելով, նրանց ուրախակից դարձնել։

— Բարի լո՛ւս, բարի աջողում ձեզ, ա՛յ հարևաններ.— կրկնում եր Ջատոն բարձր ձայնով։

— Աստու բարին, ա՛յ Խաչատո՛ւր, կապները պինդ ըլի, աստված քեզ ղսմաթ անի, վո՛նց վոր քու սիրտը կուզի։

— Քաշեցե՛ք, արևներիդ ղուրբան. յեզներ ջան, քաշեցեք. հա՛, հո՛... հո՛, հա՛...— պաղատանքով քշում եյին հոտաղները։

— Քշի՛ր, ծռիլ մի՛. տղա՛, քշի՛ր, դյուզ (ուղիղ) քշի՛ր...

— Հա՛, հո՛..., տղա՛, խարակ մի՛ անիլ, քշի՛ր...

— Հո՜ո՜ո՜... Հո՛շ, հո՛շ։ Աղա՛, սև յեզանն իշ արա։

Ջատոն ևս յետ չեր մնում իր հարևաններից. նա ել եր հատ հատ յերգում և իր արյուն քրտինքով ձեռք բերած սիրելի Արշառ ու Խնձոր յեզների ուսին և արևին ղուրբան լինում. նա ել եր փափագում, վոր վարածն ու ցանածը ծլի, կանաչի, կարկտից, տոթից, մկներից ու մորեխից ազատ կանաչի, միայն նրա վարը-արորը մի լծանի յեր, հորիքչիներ չուներ, վոր հետները խմբով յերգեր, կինն եր նրա միակ ձայնակիցը. այն ել գյուղական կյանքումն ընդունված բան չեր, վոր քթկալն իջեցներ, բերանը բաց աներ և համարձակվեր բարձր ձայնով կամ խոսեր և կամ յերգեր. այդ վորպես թե խիստ ամոթ եր...

Մխիթարականը, սակայն, այն եր, վոր, ինչպես զույգ յեզներն, այնպես ել յերկու ընկերները— մարդ ու կին, կարծես նույնպես իրար հետ լծված՝ ամեն որ դաշտ դուրս յեկած, աշխատում եյին ու ոգնում իրար։ — Կինն ուղղություն տալով ծրերին ու յեզներին, «յետևիցս յեկեք, ախպերտինք ջա՛ն» խնդրելով՝ յերեխան գրկումը, ծիծը բերանին, գնում եր առաջներից, իսկ ամուսինը խփել — չդմբշելով նրանց, ճիպոտը պտտելով և աղաչելով ու փաղաքշելով, նույնպես քշում եր յետևներից։

Մի ամիս դեռ չանցած հողը կանաչեց, կանաչը տափի յերեսն առավ։ Զատոն մի կողմից կանաչ արտովն եր ուրախանում ու հուսադրվում, մյուս կողմից զույգ յեզների և զավակի տեր դառնալով։ Բայց ինչ ասել աղքատի քոռ բախտին. հակառակի պես հենց եդ տարին չորային արավ, յերկնքից նամ չկաթեց ամենևին և խեղճ Զատոյի «ամակը ջուրն ընկավ»։ Արտերը, ճշմարիտ է, սկզբում բարձրացան, բայց հենց հասկը ծաղիկ ու հատիկ բռնելիս՝ տապից, տոթից ու խորշակից խաշվեցին, և շատ վտիտ ու նվազ պտուղ բռնեցին։

Դրանից էլ չեր հուսահատվի չարքաշ գյուղացին, յեթե միայն պատուհասները իրար չհետևեյին։ Գողերը գյուղի նախրի միջից աղքատի յեզները քշեցին։ Խելոք Աբշառին անդարձ տարան ու մարսեցին, իսկ գիժ Խնձորը, պոզահարելով նրանց, յետ եր փախել դեպի իր տիրոջ տունը։

— Վոչինչ, հույս աստված, հալբաթ թե ելի մի վողորմության դուռը բաց կանի մեզ համար. թող գլուխս սաղ մնա. յեզած չեզած հաշանս կհավաքեմ, միջից ենքան խրփուկ կլնի, վոր միառժամանակ բողազներս կպահի, ենքան էլ դարման կհավաքվի, վոր մեր Խնձորին հերիք կանի։ Մեծ դարդներս մեր պարտքն ա, վորի տալու ժամանակն էլ հլա հեռու ա. մինչև են վախտը հալբաթ թե աստուծով ելի մեքանի դալա կկալնեմ ու պարտքս կտամ, ինչ ես վախենում։ Չէ՞ վոր ասած ա, թե՝ «հույսը լավ բան ա»։

Ասածին խորը հավատալով՝ Զատոն ամառվա տապն ու տանջանքները տանելով հանդում, հնձած խորշակահար արտերից ընդամենը քսանեհինգ փութ ցորեն հանեց, մնացածը դարման դարձավ իր սիրելի յեղբայր Խնձորի համար։

Դարմանը չոլթան ածելուց հետո, նա իր նման միայն մի յեզնատեր աղքատի հետ ընկերանալով, վարուցանքսն արավ կրկին, մի քանի քաշան վառելափայտ իջեցրեց անտառից, ոդան նորից կարկատեց և բարձրանալով անտառը, ելի նորոգեց իր հուսալից թակարդները։

2.

Աշունն անցավ շուտով և բարբարոս ձմեռը նորից բռնացավ, նորից սարսեցրեց աղքատներին։ Այս անգամ, սակայն, չքավոր Զատոյի ցավը միայն ձմեռվա խստությունը չեր, այլ այն, վոր իր այնքա՜ն սիրած, այնքա՜ն փափագով հազիվ ձեռք բերած յեղբայրը, իր միակ հույս ու ապավեն Խնձոր յեզը ձեռից գնում եր։

— Վա՜յ. ելի կապվեց բախտս,— ամեն անգամ դառնությամբ հի-



ում եր նա։ Բայց այս դառնությունն ավելի թունավորվում եր պարտատիրոջ պահանջով։

— «Փո՛ղս, փո՛ղս, թե չե համ յեզդ կխլեմ, համ հացդ, ու սոված կթողամ...»։

Յեվ, չնայելով Զատոյի ու կնոջ աղաչանքներին, չնայելով նրանց անհամարձակ, վախվխելով աղային մոտենալուն և կնոջ նրա առաջը չոքելուն ու պիրծ ձեռները համբուրելուն, այնուամենայնիվ, լսվում եր նույն անողորմ և ահաբեկող ձայնը, թե՝

— Փո՛ղս փո՛ղս։

— Աղա ջան, աղաչում ենք, երկու շաբաթ էլ համբերի, բալքի մի տեղից ճարենք, տանք։

«Անկարելի ա, փո՛ղս, ծեգին հետ փո՛ղս...»։

Զատոն ու կինը հուսահատ բեկված սրտով, ձեռքները ծոցներում, քաշվեցին նո՛րից իրենց ավերվելու վտանգին սպասող խրճիթը, վորի մի անկյունում իրենք եյին տեղավորված, մյուսում Խնձորն եր կապված։ Այնտեղ նրանք մնացել եյին տրտմած ու քարացած։ Առաջն ածած խոտը Խնձորը կերել, նստել և բերանը փրփրացնելով, յերկար ու քաղցր վորոճում եր, ապա յերբեմն փշշացնում և յերբեմն էլ վորոճալուց դադարելով տնքում, ինքն իրան կողքը լեզ տալիս, ու, կարծես մի ինչ վոր բան զգալով, փնչալով տերերին նայում, նրանց աչքն ու հոնքը պահում։

Այսպիսի վարկյաններից մեկում Զատոյի կինը հանկարծ զգաստանալով քարացած դրությունից, աչքերը արցունքներով լցված մոտեցավ Խնձորին, վորդու նման գրկեց նրան, մորմոքվելով ու կարոտով պինդ կուլովը փաթաթվեց և խիստ անհագ կերպով ջերմաջերմ համբույրներ տալով դնչին, այտերին, ճակատին ու աչքերին, լուռ և անվերջ արցունքներ սահեցրեց իր արցունքից այրված այտերի վրայից։ Զատոն նույնպես լուռ եր ու լցված, բայց աշխատում եր մասամբ թագցնել իր արցունքները և կնոջը քաջալերել։

— Լավ, Նա՛րգիզ, յերեխա հո չե՞ս, ինչ ես լաց լինում։

— Ե՛. ինչ անեմ, ինչ սև հողը գլխիս տամ, վոր լաց չլինեմ. ես ա էլի մեր կարողությունը. ես էլ եգուց պարտքատերը գալու ա, վոր տանի. կարկուտս նրա գլուխը, նրա համար եմ բերանիս պատառն էլ հետ քաշել ու սրան ուտացրե՛լ,— արտասվահեղձ հեկեկանքով պատասխանում եր գեղջկուհին և նորից փաթաթվելով, յեզջյուրներից բռնած կրկնակի համբույրներ տալիս սիրելի կենդանուն։

— Դե լավ, է, ամոթ ա։ Վա՛հ, զո՛րթ վոր յերեխա յես դառնում։

— Ինչի՞. դու չլսեցի՞ր, ինչ ասեց...

— Վոր լսեցի, ի՞նչ. նրա հերն էլ անիծած, շատ էլ վախեցնում էր, չեղա՞. կը թողամ, վոր տանի. իմ պարտքը 48 մանեթ այեգս հարիր։ Վո՛նց կը համարձակվի, վո՛նց կտանի. են հո արինս շաղ կտամ,— ուժից վեր ակամա կեղծ վստահությամբ կնոջ առաջ պարծենում էր Զատոն։

— Հա՛, վա՜յ գլխիս.եդ եր պակաս. միթամ թե աշխարհիցս լխացար, վոր արինդ էլ շաղ տաս,— մարդու յերեսին նայելով, հեկեկաց կինը։

Առավոտը սև լուսացավ Զատոյի համար։ Տանուտերը, վաշխառուն և սրանց կամակատարները, մինը մորակ առած, մյուսները դագանակները, մազոտ քուրքները հագած, համարձակ ավազակների նման, գնում էին դեպի ոդան։ Այն միջոցին Զատոն, ամենածանր մտածողության տակ, դուրս յեկավ նրանց առաջ և վշտից խեղդվող ու ընդհատվող ձայնով սիրտ արավ մեկ էլ խնդրել, վոր խըղճան իրեն և միքանի որ ժամանակ տան, վոր փողը ճարի։ Բայց ո՞ւր դարձյալ։ Յեզը խիստ դուր եր յեկել աղային, նա վաղուց եր ասել, թե՝ «են յեզն ամեննին աղքատի յեզ չի, հարիր մանեթ նաղդ փող արժի, ճանկս եմ գցելու», ու մերժեց։

Զատոյի հույսի այս վերջին թելն էլ կտրվեց. այնուհետև աններևակայելի և աննկարագրելի չեր նրա վիշտը, վոր կարծես թե սըրտի բոլոր արյունը գլուխն եր խփել։ Ավազակախումբը յերբ ներս մտավ յեզը դուրս անելու, Զատոն ու կինն ամբողջապես արտասուքի հեղեղ դարձած, փաթաթվեցին իրենց յեղբորը և համբույրներով հեղեղեցին նրան ևս։ Ապշել ու վշտացել եր նաև կենդանին. կարծես նա յել եր հասկանում այն չարությունը, այն անգթությունն ու վտանգը, վոր մոտենում եր իրեն. նա ևս չռած աչքերով և հառած հայացքով նայում եր դեպի անծանոթները, դեպի իր տիրոջ թշնամիները, իսկ տերերը դեռ փաթաթվում էին նրան. կենդանին մռնչում ու փախուստի չեր դիմում և ուզում եր թոկը կտրի, կարծում եր յերևի, թե հանդի ավազակներ են։ Նրանք թոկը յետ արին սյունից և յեզը դուրս քաշեցին ոդայից, բայց կենդանին խըրտնեց հանկարծ և, թե տերերին թե հափշտակողներին բավական տեղ քաշ տվեց դուրսը։ Այստեղ Զատոն համարյա ցնորվելու չափ շփոթված դրության մեջ միքանի վայրկյան, կնոջ հետ միասին, թեպետ անորոշ և անհավասար դիմադրության փորձ արին, սակայն մորակների և դագանակների հարվածները հետ մղեցին նրանց և յեզը քըշեցին, տարան, իսկ Զատոն ու կինը, յեղբայրը թաղած յեղբոր ու քրոջ նման, կարծես գերեզմանատնից վերադարձան ոդան, ուր ամբողջ որը դառն հեկեկանքներով և անվերջ մտածմունքներով անմըխիթար սգի մատնվեցին։



3.

Զատոն ու Նարգիզը, Խնձորի դարդով սրտները դամղված, մարդկանց վարմունքներով հույս ու հավատից զրկված և իրենց խաբուսիկ բախտի անիվը հեծած, մի ձմեռ էլ անցկացրին։

Այս գարնան մի շնչասուն առավոտ, ծիրանիների ու դեղձենիների ծաղկով փթթելու ժամանակ, յերբ այգիների ու հանդի ամեն մի թփի տակից կապույտ մանուշակն ու ձնծաղիկն ավետաբեր նորահարսների նման քնքույշ գլուխները նազով բարձրացրած, հեզիկ հեզիկ աչիկներով ողջունում էին իրար ու շոյշոյում, գրավում և սքանչացնում նայողին, յերբ լանջերում ու մարգագետիններում կանաչների մեջ գառնիկներն ու ուլիկները մայում, մկկում էին իրանց մոր սիրով ու ցատկոտում անվերջ, յերբ մեղուները փաթաթվելով անուշաբույր ծաղիկներին, դեղին փոշին վոտիկներին թռչում էին դեպի փեթակ և կրկին վերադառնում ծաղկի, այդ նույն ժամին բոլոր գեղջուկներն էլ, ձմրան վերջում գետնի խորքերից թերժաժ յելած մրջյունների պես, աշխատանքի էին շտապում աջ ու ձախ։

Այդ միջոցին այն յերկհարկանի տան և ընդարձակ այգու ցանկապատից դուրս մշակների մի շարք էլ յերևաց։ Հենց առաջին հայացքից նույնիսկ անծանոթ մարդն էլ կգուշակեր, վոր այգին մի հարստի կամ հարստահարողի այգի չէ։ Տան և այգու տեր, յերբեմն չարչի, յերբեմն դուքանչի և վերջն էլ կապալառու Թումանց Թորոսը հարստության շնորհիվ քաղաքների և քաղաքացոց հետ շփվելով, իր գյուղական կամ պապական տարազը յեվրոպականի փոխած, բայց բոլի և անտաշ գյուղացիներից մինն եր։ Արխալուղի վրա սյուրտուկ հագած այդ ցուցամոլ գյուղական տիպը, բեխերը յուղած, տաճկական ֆեսը թեք դրած, տերվողորմեն ձեռին, խիստ փքուն ու հպա՜րտ-հպա՜րտ, անց ու դարձ եր անում մշակների առաջ և դաժան-դաժան աչքերով գրողի նման հսկելով նրանց, անհանգիստ և անողորմ կերպով բանացնում եր, այնպես վոր, դժվար թե կարողանային նրանք քիթները սրբել։

Բանվորները բոլորն էլ այն աղքատ ու անճար գեղջուկներն էին, վորոնք ձեռները պակաս ժամանակ Թումանց Թորոսի խանութից մի քանի արշին չիթ ու կտոր էին վերցրել ապառիկ հաշվով և այսօր ո՛չ թե այն ապառիկի, այլ տոկոսի հաշվումն էին բանում նրա համար։ Մշակները շարված էին բախտը կապված Զատոյի վարելահողում և այս հողի մեջ՝ աղայի այգու յերկարությամբ փոսեր էին փորում։

Զատոյի հողն անիրավացի կերպով պիտի գավթեր Թորոսը և

իր այգին էլի ընդարձակեր։ Զատոն մի ժամից ավելի անհամարձակ պտտվում էր նրա շուրջը և աղաչում։

— Աղա ջա՜ն, մեղք եմ, չեղս հո տարար, արի մրուա՜թ արա, հողս զավթիլ մի, սրանով եմ չերեխեքս պահելու...

Բայց աղան ոչ միայն չէր խղճում նրան ու չէր ամաչում, այլ ամենևին չէր էլ ուզում չերեսին նայել. Թիկունքը շրջելով վրան, քամակով էր պատասխանում նրան և այն էլ՝ մոլեգնելով և նոր ու խայտառակ սպառնալիքներով անարգելով նրան։

— Կորի՛ր, ըռա՛դ ըլիր գլխիցս. շան պես քի՛չ մռմռա, թե չէ մշակներին կհրամայեմ, որ փոսերը հողիդ կիսո՜վ անցկացնեն...

— Աղա՛, մեղք են մանուկներս, դու ու քու աստոծը, ինձ մի զրկիլ մի կտոր հողից։

— Հը՛մ, հարամզադա՛ սարսա՛ղ. մեղք ե՞ն, տար ջո՛ւրն ածա՛ հո, հա՛, հա՛, թե որ քու մանուկները մեծացան, աշխարհն ավա՞թ են անելու, էլի...

— Աղա՛, թե ուզում ես, ինձ ջուրը գցիր, չերեխանցս պետք ա խնայես...

— Կորի՛ր, լիրբ։

— Աստու սերն, աղա՛ մյուննաթ եմ անում, որ բանս դիվանի չգցես...

— Ինչպե՞ս, ինչպե՞ս, ի՞նչ ես հաչո՜ւմ, դիվանի. հա՛հ, հա՛հ. թե աստոծ կը սիրես, դիվանի անունը տալ մի, թե չէ լեղիս թամամ կպատռվի ու կմեռամ անճար։

Կուշտ կուշտ ծիծաղելով ու բեղերը սղալելով հեգնում էր Թորոս աղան և դառնալով մշակներին ասում. «Փորեցեք, անզա՜ջ մեջ գնի, սրա հերն անիծած. Թող գնա տեսնեմ են վո՞ր դիվանն ա սրա գնչին մաիկ անելու», ապա Զատոյին դառնալով և ձեռքով իր գրպանին խփելով, ավելացնում էր։

— Ե՛յ, դիվանն էս ա, ա՛յ, էս...

— Աղա՛, վերջին անգամ էլի չեմ աղաչում, մի անիլ, ոջաղս արին մի կապիլ. առաջինը չես քեզ մյուննաթ եմ անում, չետո, Թեկուզ և մեռնեմ էլ, Թողալու չեմ, որ դու ջո բաղը մեծացնելու համար, իմ տափը զավթես. ես էլ չեղս չի, որ շահը շահի վրա չեկար ու խլեցիր և աչքներիցս պեծ ու՛ կրակ Թափելով քշեցիր, տարար. բավակա՛ն էր...

— Հը՛, հը՛. ըռադ ըլիր, կորի՛ր, թե չէ ես փոսերից մինի մեջ վրադլխիդ սաղ սաղ Թաղել կտամ,— ասում էր աղան ու բայղուշ աչքերն աջ և ձախ շուռ ու մուռ տալով, խեթմեթասում, իսկ Զատոն շարունակ կրկնում էր նույնը թե՝ «Թողալու չեմ, որ քու



բաղը մեծացնելու համար իմ տափը զողանգոռ խլես ու իմ չերեխեքը սոված Թողաս»։

Այս հետզհետե համարձակություն ստացող կրկնողություններին աղան այլևս չհամբերեց և մի ուժգին ապտակ զարկելով չերեսին, դուրս քշեց նրան իր սեփական հողից։

Զատոն ապտակն ստանալով, առաջին անգամ ուժերը ժողովեց, որ ինքն էլ խփի, պատասխանը տա, բայց տատանվելով Թողեց այդ համարձակությունը, կոտրվեց և հուսահատված, ձեռնունայն ու փշրված սրտով, չերեսը դարձրեց դեպի գյուղամեջ, դեպի ժամի դուռը, որի պատերի սառն ստվերում ընկերակցաբար իրենց զրույցն էին անում ագետ տերտերն ու տանուտերը։

— Ե՞... որ գնում եմ, դիվան կա՞,— հա՛մ գնում էր, համ ինքն իրեն բացականչում Զատոն։

Այս Թունալից և հուսահատություն պարունակող խոսքերը բացականչելով՝ Զատոն հանկարծ կանգ առավ կես ճանապարհին և փոքր ինչ մտածելով, կարծես ուզում էր հետ դառնալ՝ կա՛մ վրեժ առնել Թուխինի աղից, և՛ կամ մեռնել։ Սակայն հուսախաբվելով, թե մի գուցե գոնե այս անգամ խղճան իրեն ու առանց արյունահեղության պատճառ դառնալու իր արդար դատը պաշտպանեն, նորից, բայց ավելի արագ քայլերով շարունակեց ճանապարհը՝ շարունակ նույն Թունավոր միտքը կրկնելով և հարց տալով ինք իրեն թե՝ «վոր գնում եմ, դի՛վան կա՞»։

Այս սիրտ փշրող հուսահատական բողոքը քյասիբ Զատոն մինչև տեղ հասնելը հազար ու մի անգամ շշնջալով, գնում էր խիստ տխուր, խիստ մտահոգ։ Գնում էր — հոնքերը ոլթած, արագ ու վրդովված, և, որ անտանելին էր, ապտակի անարգ դրոշմը — Թուխինի աղի հարվածի հետքերն չերեսին։

— Զատո՛, Զատո՛, եհե՛ Զատո՛...

Այգիների չափարներից գլուխները դուրս հանած, հետաքրքրությամբ և անհամարձակ կարեկցությամբ, չետևից ձայն էին տալիս բանվորները ու մշակները, բայց Զատոյին դիպած հարվածն այնքա՜ն ծանր ու դառն էր, որ կարծես ականջները ծանրացել էին և նա ոչինչ չէր լսում ու տեսնում իր շուրջը։

— Ա՛յ աղա, Զատո՛, եհե Զատո...

Դարձյալ իզուր էին բարձրացնում նրանք իրենց ձայները, Զատոն իրեն սրտի ալավո՜ն չեղած, էլի համ քայլում էր, համ հազար ու մի անգամ կրկնածը կրկնում։

— Վոր գնում եմ, դիվա՛ն կա՞։

Նա հասավ չեկեղեցուն, գլխարկը վերցրեց և նախ համբուրեց

եկեղեցու պատը, ապա մոտեցավ տեր հորը, արյունոտ ու քրտնքոտ շրթունքներով համբուրելով նրա անարժան աջը, գլուխ տվեց տանուտերին, դողդողալով կանգնեց նրանց առաջ և այրվելով ու մորմոքվելով արավ իր աղիողորմ գանգատը:

— Տե՛ր հայր ջան, ախր սհե անաստոծ, սհե անխղճմտանք բան կըլի՞. ես չի՞ իմ հալը. վոտս, գլուխս ու դոշս բա՛ց, մի հալավ ելա չունեմ, վոր լաշս ծածկեմ. հու տեհնո՞ւմ ես, աչքից հեռու չեմ, փառք աստծու: Յես ինչի՞ տեր եմ, վոր յեղած-չեղածս միայն յերկու որավար հող ա, են ել մնի կեսը Թուխինի աչկածակ տղեն ա կորում տանում: Բա յես ինչո՞վ պտի ապրեմ, ինչո՞վ պտի տամ վզիս վրա արճի՛ճ դառած խարջ ու պարտքս...մեղք չե՞մ:

Այսպես, աղի արտասուքով հեղեղելով արյունոտված ու այրված աչերը, արավ իր բողոքը նախ՝ իր հոգևոր հորը, հուսալով, վոր նա կհովանավորի իրեն: Բայց իզո՛ւր.տգետ տերտերը նույնքան անըզգա մնաց, վորքան տանուտերը, իսկ յերկուսը միասին, ինչպես յեկեղեցու պատի այն քարերը:

— Ինձ ո՞ւր ես գանգատվում, վորդի՛, գիտըմ չես, վոր յես դուխովնի չե՞մ: Եդ գործը սրա՛ գործն ա, գանգատդ սրա՛ն արա...

— Հալբա՞թ վոր դրա՛ գործն ա, միայն թե քու խաթրն ավելի կընդունի, տե՛ր հայր ջան...

— Չէ՛ վո՛րդի, յես մարմնավոր գործերին խառնվում չեմ, եդ սրա՛ գործն ա, սրան գանգատվի՛ր,—կրկնեց տերտերը, վորից նա այնքան հուսով սպասում եր, թե մի կերպ կմխիթարի իրեն, մի կերպ կմեղմացնի իր սրտի այնքա՛ն դառնությունը:

Բայց իզո՛ւր: Ընդհակառակը՝ տեր հայրն իր անտարբերությամբն ավելի լքացրեց Զատոյին, քան Թուխինի տղեն, իսկ տանուտերը, վո՛չ միայն ամենևին չգթաց նրան, այլև աննկարագրելի ու քարացած սրտով կարկտի պես քարեր շպրտեց խեղճ մարդու սրտին:

— Քյո՛խվա ջան... Հո՛ղս... Հո՛ղս...

— Ջենդ կորի՛ր, ախմա՛խ հարամզադա. մի թիզ հող ա, հո մի որավար չի:

— Մի թիզ ա, ղորթ ես հրամայում, ամա իմ միակ հուսատեղն ա, աղաչում, խնդրում եմ, թողա՛ս վոչ, վոր խլի, թողա՛ս վոչ, վոր ինձ անբախտացնի...

— Կորի՛ր, ըռա՛դ լիր գլխիցս. քեզ պես մի անպետքը մարդու համար յես կարալ չեմ, վոր գեղի պետքական ու լավ մարդկանցից մեկի քեֆին դիպչեմ: Մարդն արին-քրտինք ա թափել, հարիրներ ծախսել, Հնդաստանից ել ծառ ու տինկ բերել տնկել, վոր ինչ ա քու մի թիզ հողի խաթեր պտուղը չափարի դրսիցը խալխը թափտան, ուտեն:



— Քյո՛խվա ջան, նրա ծառերի ճղները դրսի վրա ա՛ստոծ ա յերկարացրել, իմ մեղքն ի՞նչ ա, վոր հողս խլի:

— Հողը թագավորինն ա, քունը չի. ում ուզենամ նրան կտամ. իրավունքն ինձ ա տված:

— Վա՛, եդ ի՞նչ ես հրամայում, ա՛ վոտքիդ մատաղ. Թուխինի տղեն քի՞չ հող ունի՞, վոր նրան տաս. հողն իմն ա, աղքատը յե՛ս եմ ախր, նա զոռդան զոռ յեկել, խլում ա:

— Աչքիդ պտուղն ել ա հանում, խի՞ յես աղքատ, խի՞ յես անկյալ:

— Աղքատությունն ախր աստոծ ա տվել, յես ի՞նչ մեղավոր եմ:

— Մեղավո՛ր ես...

— Թող քու ասածն ըլի, քյոխվա ջան, գիդամ, վոր շատերին ես վողորմացել, քու ածո՛ւ սերը, ես մի անգամն ել ինձ վողորմա. ինձ պահի՛ր. մերկ ու մեղք յերեխանցս մրվաթ արա, թողալ մի՛, նա հարուստ մարդ ա, զոռ շա՛տ ունի, կարըմ չեմ աղաքին կաղնեմ, ուժս ախտըմ չի, ու հողս զոռդան-զոռ զա՛վթում ա, տունս գլխիս քա՛նդում ա:

— Ասեցի վոր, քանի պատիվդ վրեդ ա, քաշվի՛ր գլխիցս, քի՛չ զահլաքյուշտ արա, թե չե, վե՛ր կկենամ, ու ես ձեռիս մաթրախովը մեջքիդ կաշին մի՛ն, հի՛նգ, խորխահան կանեմ:

— Քյո՛խվա, արևիդ մատաղ, քյո՛խվա, յերեխեքս մեղք ու կրակ են:

— Աղա՛, տո քյոփառղլի, քեզ ո՞վ եր ասում, վոր մի գլուխ հենց յերեխեքդ շատացնես...

— Քյո՛խվա, մրվաթ արա՛...

— Ա՛յ, ա՛յ. իմ մրվաթն ես ա, ա՛յ...

Տեղից վեր թռչելով, հարձակվեց անգթաբար և սկսեց շրփալե ու վրա-վրա մտրակահարել, իսկ նա՝ ահռած մարդ գազանից, թևերով պաշտպանվող թռչունի նման, ձեռները մտրակին դեմ անելով՝ յետ-յետ գնաց, քարոզն ընկավ ու մեջքի վրա վայր ընկավ, վերկացավ նորից և, սաստիկ հուսահատությունից ինքնամոռացության մեջ ընկնելով, սկսեց արհամարել նախկին աղաչանքներն ու պաղատանքները և ասաց վճռական կերպով:

— Տեսե՛ք, յես ե՛ս ա գնում եմ հողիս վրա արին թափեմ, ել հույս չկա՛, համբերությունս ու աղաչանքս ել հատավ...

— Ի՞նչ, ի՞նչ. արին ես թափելո՞ւ. այ ք՚գ նոր արին, ա՛յ... ա՛յ. .

Շրը՛խկ, շրը՛խկ, նորից մտրակահար անելով քըքրեց միսը բաց աղքատին՝ և վռնդելով յեկեղեցու բակից, դարձավ տեղը, և պարծեցավ.

— Շա՛ն տղա. յերկու շաբաթ ա ամեն կողմից, թե սուդյա, թե քյոխվա, ասում են մի թիզ հող ա, ձեռը քաշիր, թող վոր մարդի ծառերը չփչանան, սա յեկել ա համարձակ-համարձակ հաջում կշտիս թե՝ «արին կանեմ». ձեռիս շորվեն խմեցիր. դե հըմի դնե չլինքդ քորելով, վորտեղ ուզում ես, գնա...

Այսպես վերջացրեց տանուտերը, իսկ քահանան այդ սրտաճմլիկ տեսարանին Զաքարիայի լռությամբ իր հանդիսատես լինելը բավական չհամարելով, դեռ զովեց էլ նրան, դեռ շոյեց էլ նրան։

— Շա՛տ լավ արիր, ա՛չքն էլ հանեցիր. պետկա իրան թաչ ու թյուշն ճնանչի. քյոխվի ու սուդյի խոսքն էլ վոր չի լսում, էլ ո՞ւմը պտի լսի։

Այսպես վարվեց նաև տեր հայրը իր հարստահարված զավակի հետ։

4.

«Բա վոր ա՛սըմ եյի թե դիվան չկա. ա՛խ»...

Մի անգամ էլ կրկնեց Զատոն այս ավերիչ ու գարշելի «դիվան» խոսքը և սրտոտ ու վճռական քայլերով ուղղվեց դեպի իր հողը, ուր այժմ Թուխինի տղեն տերվողորմիայի փոխարեն ծխախոտը ձեռին, ծխելով և բերանից հպարտությամբ աջ ու ձախ ծուխ արձակելով, ծանր քայլվածքով շրջում եր չափարի յերկարությամբ. բայց թվում եր, թե մի նոր և չար խորհրդավորություն կար նրա այդ կասկածավոր քայլվածքի մեջ, թվում եր, թե նա հողի այդ կտորը խլելով չի բավականանալու, այլ մի նոր աղետ է բերելու Զորանանց Զատոյի ընտանիքի գլխին։ Նա կարծես հոգեառի կերպարանք ստանալիս լիներ հետզհետե, իսկ Զատոն գալիս եր համարձակ, հայհոյելով, Թուխինի տղի բոլոր գաղտնիքներն ու կեղտոտությունները բարձրաձայն հրապարակ հանելով և մի ծանր դագանակ էլ ուսին դրած։

— Յես ուզում եյի կարգին, դիվանով բան բռնեմ. յերբ վոր դիվանն էլ միշտ անարդարութին ու անիրավութին ա անում, յերբվոր միշտ աղքատի պատիժն անորեն հարստի վոտի տակն ա տալիս, յերբ վոր առանց կաշառքի դատաստան չի կտրվըմ, ես ա հրես սաղ գեղը կը տեսնի, վոր հերիք ա համբերութինս, վոր յես պատիվս մահից բարձր եմ դասըմ...

Այս վոգևորիչ և անակնկալ գիտակցությամբ ու վստահությամբ գյուղամիջի ձորն իջավ նա, իսկ գյուղացիք սկսեցին կես հանաքով ու ուրախությամբ և կես էլ ցավակցությամբ դեպի նա և ատելությամբ դեպի Թուխինի տղեն, խոսել ու քննադատել վերջինի անիրավությունը։ Խեղճ Զատոն յերբ առաջին անգամ համարձակ,



արագ-արագ և աղիողորմ կերպով սկսեց անխիղճ Թորոսին հայհոյել և տանուտերին քննադատել, նրանցից մինը իր այս անմեղ նըկատողությամբը բավական ծիծաղ և զվարճություն պատճառեց այգիներում բանողներին։

— Տղերք, խեղճ Զատոյին յեկեղեցու դռանը մաթրախ ա դիպել, — ասաց նա հանկարծ և ջուր շինեց ամենին։

— Հա՛հ, հա՛հ, հա՛հ,—յերկար ժամանակ, լացի ու վրեժխնդրության փոխարեն, շարունակվում եր ծիծաղը, մինչև վոր Զատոն դուրս յեկավ ձորից և հետևյալ հարձակողական խոսքերն ուղղեց Թուխինի տղի հասցեյին։

— Թուխինի տղեն սովդաքյարի փուրգուններըը թալանեց, խաս ու ղումաշ ճոթը մարսեց, գողութենով ու ավազակութենով հարստացավ անամոթը, դեղին վոսկիքը շան ու գիլի—պրիստավների ըռըխովը տալով, խալխին վերդումի տակ գցելով ազատվեց. հըմի էլ յեկել ա, մի թիզ ջրովի հող ունեմ, ուզըմա են էլ խլի, ակլոր ու քաղցած յերեխանցս բերանի թիքեն կտրի։ Այ անիրավ, անաստված, եա էլ լավութենիս փոխն ա, վոր գնացի, հավատս ուրացա՝ խաչ ու ավետարան խատեցի, հոգիս դժոխքին տալով, քեզ համար սուտ յերդըմ կերա թե՝ «են գիշերը, յերբվոր փուրգուննին թալանեցին, Թուխնանց Թորոսն իրանց կրակ ընկնելու տանն արինքնումը քնած եր...» Ը՞հ, հլա յավաշ, հենց իմանում ես թե պրծել ես։ Դե՛հ, դու փորձիր հողս խլիր ու տես թե հըմի էլ թարս չեմ յերդում ուտելու...

— Տղերք, յես զարմացել եմ, Զատոն թամամ համարձակացել ա. էլ թագուն բան չի թողնում. չիմ աշկար անելով, խայտառակում, բիաբուռ ա անում նրան։

— Երված, խորովված ա, է։

— Բա էլ չերվի. խեղճի պապական են դանգիզ հողերն ես ու են խլեցին, հըմի յել մնացել ա մի կենտ ջրովի հողի հուսով, եդ էլ Թուխինի տղեն ա խլում։

— Ա՞յ դրա անհոգի հերն անիծած, մի ասող լինի, թե՝ տո անիրավ, դա ինչ թամահ ա, վոր եդ դառն աղքատի մեղքն ես ընկնում ու յերեխանց բերնի պատառը խլում. մեղք չի՞, տո անորեն, տո անգութ։

— Մե՞ղք։ Դա վոր մեղք իմանար, վոր աստված ունենար, հինգ թյումանի համար են ծեր մարդուն գինու տեղ թեղեփ կխմացներ ու տանջելով կսպաներ։

— Ո՛, անխղճմտանք, արին խմող գազան ա դա...

— Լավ, տղերք, մենք էլ գիտենք, վոր քյասիբի սեփական հո-

ղը Թուխինի տղեն ափաշկարա, որը ցերեկով խլում ա, բա մեր հասարակությինն էլ պետկա լռի ու բան չասի՞։

—Ի՛, խեղճ միամիտ. մենք չա՛ հասարակութին, չա՛ հասկացող մարդ ունե՞նք. ո՞վ պտի բան ասի, հասարակության գլխավորնին էլ նրանք չե՞ն, վոր գիշերիս՝ աղքատի ոջախին ջուր ածելու համար Թուխնանց գինու կարասներում լող են տվել շոգած գոմշի պե՞ս...

— Հա՜։

— Խե՜ղճ Զատո, յերբ վոր եդպես էր, բա էլ ինչի՞ էր մաթրախի տակ ընկնում. շատագիլի ըռխիցը գառը խլել կլի՞, կորած ա խեղճը։

— Ծաղր միք անիլ, Զատոն գլխիցը ձեռը վերցրած ա յերեվում. նա սառած ոձի պես տաքացել ա. կծիլու ա անպատճառ։

— Համբերութին ունենանք, տեսնենք թե տաքանալու գյորա մի բան շինելու ա՞, թե հլե զուր տեղը խայտառակ ա դառնալու սաղ գեղի առաջ։

Այգիներից խիստ հետաքրքրությամբ հետևում էյին, վոր տեսնեն, թե Զատոն ինչպե՞ս ե կռվելու իր սեփական հողի վրա. արդարև արյուն թափելո՞ւ չե։

5.

— Յե՛ս ռսալ (վատ) դիվանի...

Հայհոյում էր Զատոն և ասում. «Հերիք չե՞. մեկել տարին համբերեցի, գլուխս թակելով բաղատեղս խլեցին, հերու էլ տաց արի, խոտհարքս տարան, հիմի յել կանանչ արտս կոխ տալով ուզում են տափս կտրեն. ես անգամ էլ վոր սուս կենամ, գալու յեն կնիկս էլ խլեն. հետո՞, էլ նամ՞ուս ա մնում ինձանում։ Լավն են չի, վոր յա մեռնեմ պրծնեմ, յա թե չե Սիբիր գնամ։ Էլ ուրիշ ինչ հնար ունեմ, չե՞ վոր ջանիս հասել ա...

Այս անմեղ սպառնալիքներով Զատոն մոտենում էր հափշտակվող հողին։

— Մոտա՛նում ա,—խորհրդավոր ձայնով իրար մեջ շշնջում էյին մշակները։

— Մոտանում էլ ա ու իսկի հանաք էլ չի անում,—զարմացմամբ նկատում էր մի ուրիշը։

— Թող գա՛. դուք սո՛ւս ձեր բանին կացեք. ոձի գլուխը վոր ցավի, կբերի ճանապարհի մեջ տեղը կդնի. հալբաթ դրանն էլ ա ցավում,—վրեժխնդրության թույնով լցված ասաց Թորոսն ու դահճի աչքերով շուրջը թափված կաղնի ցցերին նայեց, ապա ձեռքերը յետևը դնելով, լռությամբ սկսեց քայլել։ Բայց այս լռությունն ավելի վտանգավոր էր թվում, քան թե այն մեծ դագանակն ու աղմկարար գայրույթը։



— Արևս եմ յերդվում, հորս հոգին վկա, վոր, յեթե իմանամ յերկնքիցն էլ գլխիս աստղեր են թափվելու, վոր իմանամ թե Թուխնի տղեն ինձ կտոր-կտոր էլ ա անելու, էլի իրեսս յետ չեմ թեքելու. էլի իմ հողից պոկ չեմ գալու։ Հողը իմն ա, տանուտերն էլ ա անիրավ, պրիստավն էլ, սուդն էլ, մեր յերեցն էլ, ու Թեկուզ աստոծ էլ, վոր եսպես անիրավների գլխին քարեր չի գցում...

Ինքնամոռացության մեջ, մի ժամից առաջ յերկյուղածությամբ յեկեղեցու պատի քարերից համբուրող Զատոն աստծուց էլ վերավորված, աստծուն էլ հանցավոր համարելով, վորքան մոտենում էր իր արյունոտ հողում փորված փոսերին ու կոխ տված կանաչած արտին և իրեն արհամարհող, բանի տեղ չդնող անիրավին, այնքան ավելի յեր դառնանում։

— Անիրա՛վ, անխղճմտանք, հենց քո՛ւնն ես համարում, վոր իմ հողումը հլա ձեռներդ էլ քամակիդ դրած ես ման գալի՞ս։

— Վոր ասում էյի թե հանաք չի՞. հրես դագանակը վրա՛ ա բերելու։ Հասավ, Թամաշա արե՛ք,—կրկնում էյին հեռվից հետաքրրքրվողները։

Զատոն փոսերին հասնելով, մշակների թիերից մինը խլելով, սկսեց փոսերը հողով լցնել և հանդիմանել նրանց։

— Տո տնավեր ու տնաքանդներ, բա դուք տեսնո՞ւմ չեք, վոր հողն իմ պապական հողն ա՞. ես արնոտ տեղը դուք վո՞նց եք մշակութին անում. դե՛հ, հաշաթներդ հավաքեցեք, թե չե ձեզ էլ նրա՛ն եմ խառնելու,—աղաղակում էր նա զայրագին և մյուսների բահերիցն էլ քաշում, ձիգ-ձիգ անում։

Այս միջոցին Թուխինի տղեն էլ չկարողացավ դիմանալ։

— Մգյար դու եդ քանի՞ գլխանի յես, վոր համարձակվում ես Թորոսի փոսերը լցնել, տո քյա՛չալ շան տղա,—գոռաց նա և մի ահագին քարով գագանաբար հարվածեց Զատոյի կողքին։

Հարվածը խիստ ծանր էր. Զատոն առաջին անգամ յերերվեց, լըլքաց և քիչ մնաց, վոր վայր ընկներ, բայց աշխատեց արիությունը չկորցնել դեռ։ Նա ուժերը ժողովելով թեև դագանակը խիստ տեղին վրա բերեց, վոր վերջացնի անիրավին, սակայն վերջինս գլուխը փախցնելով ճարպիկությամբ, հարվածի տակից դուրս պրծավ դեպի մի կողմ և նորից քար առավ, իսկ Զատոյի դագանակն իջնելով քարին, շրխկաց ուժգին և կիսից կոտրվելով, մի կտորը միայն մնաց նրա ձեռքին։ Ձեռքին մնացած կտորը շպրտելով և հափշտակելով բահերից մինը, նա նորից պտտեց հարվածելու։

— Վա՛հ, վա՛հ, Թամա՛մ չտեսնված բան. տեղն ու տեղ կըա՛կ ա դառել Զատոն, տղե՛րք։

Զարմանքով նկատում եյին հանդիսատեսները և ուշադրությամբ
հետևում նրան, վորից ամենևին սպասելի չեր այնչափ համարձա-
կություն, վորպես մի աղքատ, նվաղած, սորկացած ու վերին աս-
տիճանի հարստահարված մարդուց։ Արդարև, ո՞վ եր տեսել, վոր մի
Զատո կամ մի Սահակ համարձակվեյին հրապարակով և ամենի աչքի
առաջ այնպիսի վիրավորանք հասցնել Թումանց Թորոսին. ո՞վ եր
տեսել, վոր այս հարուստ և անմատչելի, վոչ միայն գյուղական
տանուտերի, այլև գավառական բոլոր վոստիկանների և դատավոր-
ների կողմից ապահովված, նրանց հետ միշտ նստող, ուտող, խմող,
խորհող ու խոսող, դիրք ստացած, գազանի պես առողջ ու անհա-
լի, առյուծի պես ուժեղ ու հաղթանդամ մարդու դեմ հարձակում
գործեր մի Զատո։ Բայց աղքատության ու չարչարանքի դառն բա-
ժակն արդեն լցվել եր և հրեշն այլևս չեր սարսեցնում Զատոյին.
Նա քնած տեղում վիրավորված օձի նման տաքացել եր կարծես։
Զարքաշ կյանքի տանջանքները, անտանելի վիրավորանքները, մարդ-
կային պատվի այնչափ արհամարհվելն ու վոտնահարվելը և բռնի ու
բացարձակ զրկողությունների ամբարված նրա տանջված սրտում,
այլևս համբերության տեղ չեյին թողել, ամեն ինչ մոռացնել եյին
տվել նրան։ Մոռացել եր և՛ կյանք, և՛ արև, և՛ մահ, և՛ գարուն ու
ծաղիկ, և՛ քաղցած ու պատառոտուն ցնցոտիներով հազիվ մերկու-
թյունները ծածկած կնոջն ու մանրիկ զավակներին։ Վերջին համ-
բերությունից դուրս յեկած, նա գնում եր որհասական կռիվ տա-
լու իրենից անհամեմատ ուժեղ մի կատաղի գազանի հետ։ Վեր-
ջինս, մոծակի խայթոցից շփոթված գազանի նման, մռնչում եր դե-
պի Զատոն, վոր դեռ պտտում եր բահը, կրկին արհամարհելով թե՛
մահաշունչ և ահավոր հրեշտակի սպառնալիքը և՛ թե մութն ու խո-
նավ և սառն գերեզմանը։

Յեվ, թեպետ բահը շըրխկաց Թորոսին գլխին, ցնցեց հանդի-
սատես գյուղականներին և, արյունոտելով, քերծեց ու տարավ ճա-
կատի մի կողմը, սակայն բահը վերջին անգամ միայն հասավ իր
նպատակին, իսկ այնուհետև յերկրորդ հարվածն ստանալով նրանից,
իբրև վիրավորված գազանից, դողդողաց, չոքեց գետնին, ճիգ արավ
կանգնելու, աշխատեց նորից ձեռքը ձգելու մի կողմը նետած բահը,
սակայն վոտքերն այլևս չդիմացան տակին, իսկ գազանացած թշնա-
մին գոնե այդ դրության մեջ չխղճալով նրան, հափշտակելով վո-
տերի ցցերից մեկը, յերրորդ և վերջին կատաղի հարվածն իջեցրեց
նրա գագաթին, ջախջախեց գլուխը, վերջ դրեց նրա այնքան տանջ-
ված ու թունալից կյանքին։

Զատոյի դին թավալվեց գետին, մի քանի ահավոր ցնցումներ



արավ և յերկու թե յերեք անգամ բերանը բաց խուփ անելով, աչ-
քերը շրջելով, վերջապես հանգստացավ։

Հարայն ընկավ գյուղը։

— Վա՛յ, սպանե՜ց, մեռա՛վ, մեռա՛վ...

Աջ ու ձախից իրար խառնված գոչում եյին ձայները։ Շուտով
թե այգետերերը և թե մերձակա դաշտերի աշխատավորները, մարդ,
կին, ծեր, մանուկ, բոլորը ժողովվեցին և ամբոխը ծովացավ Թո-
րոսի պարտեզի առաջ, իսկ վերջինիս ընտանիքը և բարեկամները
նրա կուռն ընկած, վորպես ծանր վիրավորվածի, տարան իր ամա-
րաթը։ Ամբոխը խոսում, ափսոսում, ախ ու վախ եր քաշում, գայ-
րանում եր զազրելի յեղեռնագործության համար, սակայն վրեժ-
խնդիր յեղող չկար, վո՛չ մեկի մտքից չեր անցնում հրդեհել և ա-
վերել այն հոյակապ տունն ու ընդարձակ այգին, վորոնք տասնյակ
զոհերի և Զատոների արյունով եյին կառուցված ու կանգնեցրած։

Հարայի ձայները կայծակի արագությամբ հասան նաև ոդայի
դռանը պարտատիրոջ համար մանած անող խեղճ Նարգիզի ականջին։

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ... տունս քանդվեց, վա՛յ...

Յերկինք հասնող վողբ ու ձայնով անբախտ գեղջկուհին յերկու
բռունցքով ծնկներին տալով, յերեսն արյունոտած, մազերը պոկ
տալով գլխից, վորբացող մանուկներին ոդայի դռանը թողած՝ գա-
լիս եր դեպի արյունոտ հողը, ուր պատվավոր մահով ընկել եր իր
լծակից ընկերը, ուր վերջնականապես փշուր փշուր եյին արել նրանց
բախտի անիվը։

Թշվառը հասավ դիակին, գրկեց ու սեղմեց նրան իր կրծքին։

— Ա՜յ իմ անորենի ձեռն ընկած, ա՛յ իմ տանջված, քարացած,
քաղցած ու ծարավ տեր, բա ասում եյիր, թե վախիլ մի՞. բա ա-
սում եյիր, թե աստված մեզ կտեսնի, մեր դարդին դարման կանի՞.
ա՛յ իմ տեր, մի խոսա մի ձեն տուր, մի ասա տեսնեմ ու՞մ ես
պահ տալիս ես յեթիմ բալեքդ, ես չիփլախ ջորփեքդ, վոր լալիս
են անհեր, անտեր, անհաց ու պարտքատեր...

Սրտամորմոք, խղճահարող և այրող այս վողբին հանկարծ միա-
խառնվեց նաև հեռահետ տեղ հասնող մտերիմների, հարևան այրի-
ների, տատմեր պառավի և մանավանդ անմեղ մանուկների բարձրաց-
րած աղեկտուր և սրտակեղ ճիչն ու աղաղակները։

Քարասիրտ, անզգա և անխիղճ մնացին միայն հարային յեկած
հարուստների շամփուրները լիզող և Զատոյի իսկական յեղեռնա-
գործները՝ արյան հետ միշտ գործ ունեցող վոստիկանները, դատա-
վորները, տանուտերերը և պահապանները։

Նրանք, այսինքն՝ անուսում, ագետ ու անգիտակ ժողովրդի

*ջանն ուտող ցեցերը, վաղուց յեկել և շրջապատել էին իրենց անարդարության և անիրավության յերեսից ընկած անմեղ զոհին ու, ձևականապես, արտաքուստ, ամբոխին խաբելով, իբր թե իրողությունն ու ճշմարտությունն արձանագրում էին գեղջուկին անհասկանալի ռուս լեզվով, հօգուտ Թուխինի տղի։ Կեղծ ցուցմունքներ էր տալիս նրանց գյուղական տանուտերը և քարացած հոգով, բայց մեռել ուտողի աչքերով հանդիսատես էր տերտերը։*

*Կաշառակեր վոստիկանների ձեռքով կազմված այս կեղծ* պրոտոկոլը *վոչինչ օգուտ չունեցավ վորբերի համար։*

*Դեղին վոսկու, կարմիր գինու և յուղոտ խորովածի յերկրպագուները Թուխինի տղին արդարացրին, իսկ այրին ու վորբերը մնացին քաղցած ու ծարավ այրվելիս, մինչև 1905 թիվը։*

*Մոտ տաս տարուց հետո, այս թվականին միայն դատաստան տեսնվեց գյուղում, ուր հեղափոխության շնորհիվ սարսափ տիրեց հարստահարիչներին ու կաշառակերներին, վորոնք էլ չկարողացան հովանավորել Թուխինի տղին։ Յեվ մի յերեկո Պ. գյուղի ամբողջ շրջակայքը հանկարծ վառվեց ու լուսավորվեց և մի քանի անգամ հրացանի ճայթյուններ լսվեցին Թուխինի տղի այգում։ Թուխինի տղեն սպանված էր և կատաղի հրդեհը լափում էր նրա թե՛ այգին և թե տունն ու տեղը, վորով խորտակվեց և՛ նրա բախտի անիվը։*

---

— Բնորոշեցեք Զասոյի տնտեսական դրությունը:

— Բնորոշեցեք Թուխնանց Թորոսին:

— Մանրամասն պարզեցեք, թե ի՞նչ միջոցներով է նա հարստահարում ու կախման մեջ պահում չքավորներին:

— Թուխնանց Թորոսի վերաբերմունքը դեպի Զասոն:

— Կարո՞ղ էր գյուղական «դիվանը» դեմ գնալ Թուխնանց Թորոսի կամքին։

— Ինչո՞ւ յեն քյոխվեն, ուդյեն ու տերտերը Թուխնանց Թորոսի կողմը պահում:

— Բնորոշեցեք դրանց, վորպես հին գյուղի վորոշ խավի ներկայացուցիչների:

— Յե՞րբ ակնհայտ կերպով Զասոն համոզվեց, վոր «դիվան չկա»:

— Ի՞նչ յեզրակացություն նա հանեց դրանից:

— Մանրամասն բնութագրեք Թուխնանց Թորոսի մոտ աշխատող գեղջուկ բանվորներին՝ ա) նրանց սոցիալական վիճակը, բ) վերաբերմունքը դեպի Թուխնանց Թորոսն ու Զասոն, գ) դասակարգային գիտակցության աստիճանը յեվ այլն:

— Վերեվում նշած հարցերը պարզելուց հետո, փորձեցեք բացատրել, թե ի՞նչն եր պատճառը, վոր այդ գեղջուկ բանվորները լոկ հանդիսատես յեղան Զասոյի սպանությանը:



— Ցարական իշխանության պաշտոնյաների յեվ գյուղի «իշխանների» վերաբերմունքը դեպի Զասոյի սպանությունը յեվ դեպի Թուխնանց Թորոսը:

---

— Յե՞րբ է կոտրվում Թուխնանց Թորոսի «բախտի անիվը»:—Ի՞նչ գիտեք *1905* թվի հեղափոխության մասին:

— Հետաքրքրվեցեք հասակավորներից յեվ իմացեք, ինչպես է անցել այդ թիվը ձեր քաղաքում, գավառակում, գավառում: Ի՞նչ դեպքեր են հիշում:

---

— Հեղինակն՝ ինքը դատողություններ անո՞ւմ է իր հերոսների մասին, թե վոչ:

— Բնորոշո՞ւմ է ածականներով: Չե՞ք գտնում, վոր նա չափազանց շատ է այդ անում:

— Հայտնո՞ւմ է արդյոք հեղինակն իր կարծիքը կատարվող դեպքերի մասին, թե միմիայն նկարագրում է այդ դեպքերը:

---

— Ի՞նչ տարբերություն կա Ծուղրուղյանի յեվ Ս. Շահնազարյանի մեջ, իբրեվ գրողների:

— Այս հեղինակներից վո՞րն է ավելի շեշտակի դնում չքավորության պայքարի խնդիրը՝ հարստահարիչների դեմ:

— Ինչի՞ց է դա յերեվում:

— Տարբերվո՞ւմ է արդյոք Շահնազարյանի գրելաձևը Ծուղրուղյանի գրելաձևից։ Վո՞րն է հիմնական տարբերությունը:

---

# ՄԱԴԱԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀՌԻՓՍԻ

Ինը տարեկան շինական աղջիկ Հռիփսին կամի վրա կանգնած կալ է կալսում և տաղտուկ ձայնով յերգում է՝ «Հորովել՛, յեզը ջան, կալ արա, յեզը ջան...»

Կալի ամբողջ լայնությամբ փռված է ցորենի որանը, վորը զույգ յեզների համաչափ քայլերի տակ տրորվում, նորից բարձրանում և թողնում է ցաք ու ցրիվ հետքեր։ Կամը խշշալով սողում է առաջ և յերբեմն-յերբեմն քսվելով յեզան վոտքերին, հարթում է որանը․ յեզն զգուշությամբ խլում է վոտքերը նրանից, բայց կամը նորից հասնում, քերծում, արյունոտում է նրա սրունքները։

Շոգ է, թոզ է բարձրանում․ կալի վրա տիրում է տաղտկություն։ Յեզները հոգնել են, հազիվ են քարշ տալիս ահագին կամը։ Հոգնել է Հռիփսին, աչքերը փակվում են․ գլուխը ծանրացել, ցած է ընկնում, վոտքերը ցավում են։

— Մանր-մանր արա, յեզը ջան․—դնդնում է նա․—կալը մանր արա, յեզը ջան։ Կալի շուրջը դոխազների տակից անհանգիստ աղմուկ է անում ճռիկը։ Մարագի կտերը, ցորենի դեզի մոտ, պառավ Յեղսիկ տատը փնփնթալով խնամքով հավաքում է թափված հասկերը։ Լուռ է միայն Հռիփսիի մայրը, նոր այրիացած Շողերը, վորը յեզանով տխուր-տրտում շուռ է տալիս որանը։

— Քշի՛, բալա ջան, քշի՛․ որը ճաշ ելավ...

«Որը ճաշ ելավ»․ ա՜հ, Հռիփսին ինչպե՜ս կուզեր, վոր իրավ որը ճաշ լիներ։ Նա իր թմրած աչքերը բռունցքով տրորում է, ապա դոխազի տակից նայում է կտրած սայլի շվաքին։ «Ո, դեռ շատ կա, շվաքը պետք է թեքվի սրահի պատին հասնի, վոր որը ճաշ լինի», մտածում է նա, բայց մորը վոչինչ չի ասում։

Արեգակը բարձրացել է, իր վառ ճառագայթներն ուղղել է կալին, ծղոտը տաքացել վառվում է․ կալի միջից տեղ-տեղ կարծես ալաֆ է բարձրանում։ Սպիտակ փալասի կտորը չի կարողանում Հռիփսիի գլուխն ամբողջապես ծածկել, նրա ծոծրակը, ճակատը այրվել, սեվացել, մազերից չեն զանազանվում։ Մի քանի տեղ կարկատաններով լաթած շապիկն էլ հազիվ է ծածկում նրա մերկ մարմինը։



— Ո, ինչ շոգ է,—գոչում է նա և ակամայից աչքը կթում է դեպի շվաքին։ Յեթե այժմ նա կարողանար այնտեղ պառկել, գլուխը խրձին դներ և քներ, յերկար քներ։ Ամբողջ գիշերը նա աշխատել է մոր հետ, զարմանը հարել ու լցրել բակը և հազիվ ընկել է քնելու՝ վեր ելին հանել և վաղ առավոտից կամի վրա չորանում է։

— Կալը մանր արա, յեզը ջան,—նորից շշնջում է նա,—հորովել՛, յեզը ջան,—յերգում է նա, կարծես տաղտուկը հեռացնելու համար։

Տաղտուկը չի հեռանում, նա ավելի յե թմրում, միատեսակ պտույտները, յեզների համաչափ քայլերը, ծղոտի, կամի խշշոցը, ճռիկի պաղ-պաղ կոչը, այդ բոլորը ձուլվում, ներդաշնակում են մի որոր, վորն այնքան քաղցր է լսվում, յերբ պառկում են քնելու...

Նա աչքերը տրորում, նորից նայում է սայլի շվաքին․ այսօր նա կարծես տեղը քարացել է․ չի շարժվում։ Գոնե տանից մեկը դուրս գար և իրեն տեղ կամը քշեր,—մտածում է նա և քունը փախցնելու համար նորից դնդնում է։

«Հորովելոն» նրա բերանում մեծանում է, լեզվի վրա ճնշում, և նա չի կարողանում մինչև վերջը ասել․ գլուխը թեքվում է, ծնկները թուլանում, ընկնում է նա կամի վրա։ Թվում է նրան, վոր սայլի շվաքը մեծացել—դոխազից անցել է, յերկարացել—սրահի պատին է հասել։ Ճաշ է․ յեզները բաց է թողել, տարել է աղբյուրը, յեզները ջուր են խմում, ինքն էլ ուզում է խմել, աղբյուրը քչքչում է, սառը ջուրն անցնում է նրա բերանի մոտով, վիզը ցավում է, ծռվում է, ուզում է հասնել ջրին, բայց հանկարծ մինը ծոծրակին խփում է, գլուխը դիպչում է քարին։ Նա աչքերը բաց է անում, նայում է շուրջը․ յեզները կանգնել են, պառավ տատը փնթփնթում է։

— Գլուխդ մեռնի, յեզները ցորենը կերան, դու քնո՞ւմ ես։

Պառավը դեռ յերկար անիծում էր թոռին, իսկ նա զարմացած նայում է նրան, և հազիվ ուշքի գալով՝ խփում է յեզներին և նորից սկսում է ընդհատված պտույտները։

Այդ միջոցին պառավ բոթոն, պոչին հավաքված ճանճերի հետ կռվելով, արագ անցավ կալի միջով, և միքանի բերան ճանճ վորսալուց հետո քնկոտ գլուխը կոխեց դեպի խորքը, վոտքերը ձգեց և դեպի շվաքում սկսեց հանգիստ խռմփալ։

— Քութի-քութի,—ինքն էլ չիմանալով թե ինչու, միքանի անգամ կանչեց աղջիկը։ Շունը դանդաղ կերպով պոչը շարժեց և ցանկանալով հավաստիացնել իր համակրանքը՝ թեթև կերպով բարձրացրեց գլուխը, նայեց աղջկան և նորից սկսեց խռմփոցը։

— Քութի, քութի,—նորից կանչեց նա, բայց այս անգամ շունը ծուլացավ պատասխանելու և շարունակեց ավելի յեռանդով

խամփալ, վորով Հռիփսին ավելի ու ավելի յեր գրավում դեպի շվաքը։ Յեթե ինքն ել կարողանար գլուխը դնել քոթոթի վրա և նրա պես հանգիստ քներ...

— Ջուր եմ ուզում,— դառավ նա մորը։ Մայրը փայտյա փոքրիկ կուժը շվաքից հանեց, տվեց աղջկան. յեզները կանգ առան, նա կուշտ խմեց և փոքր ինչ թարմացած՝ ուզեց նա մոր հետ խոսել։

— Մայրի՛կ,— կալը վոր քամենք, դեզի տակը կքնե՞նք, հա՞, այ, քոթոն քնել ե։

Մայրը լուռ ե. նա, խորասուզված իր մտածմունքների մեջ, առանց հասկանալու աղջկա ասածը, մեքենաբար միայն գլխով ե անում։

— Մայրիկ, նորից դառնում ե աղջիկը մորը,— կալը վոր քամենք, ցորենն ելի պիտի տանե՞ն։

Մայրը նայում ե աղջկան, բայց չի պատասխանում։

— Մայրի՛կ, ցորենը քյոխվան պիտի գա չափի ու իրանց տունը տանի։ Տատին ել հո չի՞ ծեծի, չե՞, նանի։

Նանը լուռ եր. նա զգուշությամբ նայեց տատին, կարծես համոզվելու համար, թե այսոր տատին հո չպիտի՞ ծեծեն։ Այդ միջոցին Հռիփսիի փոքր յեղբայրը ձմերուկի մի մեծ կճեպ վազելով բերեց տվեց քրոջը։ — Յես ելի կբերեմ,— ասաց նա ու նորից վազեց դեպի խանութը, ուր իրար ձեռքից խլխլում եյին աղբակույտում թափված ձմերուկի և սեխի կճեպները։

Հռիփսին միքանի անգամ կռան տակով սրբեց կճեպը և ագահաբար կրծեց, մինչև կճեպը ձեռքում կհալվեր։ Անցյալ ամառ լավ եր, հիշեց նա, ապին ձորից մի բեռը ձմերուկ բերեց, ինքն այդ օրը մի ամբողջ ձմերուկ ստացավ, մեծ, կարմիր ձմերուկ եր. նա միայն կեսը կարողացավ ուտել, իսկ մյուս կեսը ջուր շինեց ու խմեց. անուշ ջուրը։ Նա նորից ծարավ զգաց, նայեց շվաքին, թեքվել եր, քիչ եր մնացել, վոր հասներ սրահի պատին. բայց այդ օրը քիչը վորքա՜ն յերկարանում ե... Նայեց քնած քոթոթին, վոր գլուխը հանել՝ միքանի անգամ ճանճերի հետ կռվում եր. նրա քավթառ ատամները միքանի անգամ խփվեցին իրար, ապա նորից գլուխը կոխեց դեպի խորքը։

— Քութի, քութի, քութի,— կանչեց Հռիփսին, ինքն իրան, առանց շանը նայելու։ Շան անտարբերությունը Հռիփսիին չեր վրդովում, նա միայն ցանկանում եր շանը հասկացնելու, վոր քութի լինելը լավ ե. նա համ կալը չի քշում, համ ել շվաքի տակը քնում ե։ Յեթե ինքն ել քներ, այնպես աչքերը փակեր, քներ խորը. նրան վոչ վոք չզարթեցներ...

Կալի մոտով անցնում եյին գյուղի մեծամեծները։ Քաղաքից



ստացած նոր որաթերթերը ձեռքերին, կարդում եյին. լավ լուր չեր բերել նա՝ բոլորի դեմքն ել դաժան եր։ Նրանք կանգ առան կալի առաջ. մեկը մոտեցավ, ինչ վոր փսփսաց «քյոխվի» ականջին, սա ուղղելով վզի դեղին նշանադրոշմի շղթան՝ հազաց և դեմքին լուրջ դիրք տալով դառավ Շողերին։

— Ա՛յ, ենպես արա, վոր ել ինձ դուռդ չբերես. ես մարդին պարտ եք հինգ թաղար 20 խան ցորեն. իրան կտաք։ Գլխիդ լաչակ ա, յես չեմ կարող վոտս վոտիդ դնել, հենց արա են որվա պես աշխարհը գլխիդ չբերեմ։

Հռիփսին լացակնվել եր, պառավ տատն ավելը ձեռքին կուչ եր յեկել յերկուտակվել. դողում եր բարկությունից։ Շողերն ամոթխածությունից գլուխը կախել, տխուր տրտում նայում եր առաջն ընկած հասկերին. Նրա աչքերից կաթ-կաթ ընկնում եյին արցունքները։

— Քշի՛ր, բալա ջան, տեսնենք ինչ ե գալիս գլուխներս,— արցունքի արանքից ասում ե նրան մայրը՝ գյուղի մեծերը հեռանալուց հետո։

Աղջիկը շապիկի թևով սրբում ե աչքերը և կատարելով մոր հրամանը՝ նորից սկսում ե «Հորովելի՛, յեզը ջան»-ը։

Տատը կարծես մեխված լինի դոխազին, վոչ մի շարժում չի անում. դա նկատում ե թոռը. Նրա սիրտը ցավում ե.— Տատի՛ ջան, դառնում ե նա պառավին,— գնա դեզի շվաքը, գլուխդ վեր դի, մի քիչ ննջա։

— Տատդ սև ննջա իրա գլխին, մահը փախել ե նրանից։

— Ինչի՞ մեռնես, տատի՛ ջան, քյոխվեն գնաց, նա ել քեզ չի ծեծի...

— Քիչ լեզվիդ տուր, քշի՛, որը ճաշ եղավ,— համբերությունից դուրս գալով նկատեց պառավը։ Հռիփսին տխրեց, նայեց յեզներին, նրանք հևում եյին։

— Կալը մանր արա՛, յեզը ջան,— աջ ձեռքով յեզանը շփելով կրկին սկսեց նա իր հորովելն ավելի քնքուշ և վշտալի։

---

— Ի՞նչն ե այս պատմվածքում ամենից ավելի հուզիչ:

— Ինչո՞ւ յե ընթերցողը համակրում Հռիփսիին:

— Այս պատմվածքում յեվս տրվա՞ծ ե արդյոք չքավորության խուլ տրտունջի ու անել վիճակի պատկերը, վոր այնքան ցայտուն կերպով նկարագրել են Փափազյանը, Շահնազարյանը յեվ Ծուղուրյանը:

— Այս շարքի պատմվածքներից վո՞րն ե ամենից ավելի ձեզ հուզում ու դուր գալիս. ինչո՞ւ:

— Այս շարքի պատմվածքների հերոսներից վո՞րը ձեզ ամենից շատ դուր յեկավ յեվ վորը՝ վոչ:—Բացատրեցեք, թե ինչո՞ւ:

# ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

## ԱՆՀԱՅՏ ԹԵԼԵՐ

Սկսվել էին տխուր, ձանձրալի յեղանակներ։

Թեև ոգոստոսը նոր էր, բայց լեռնային այդ գյուղում աշունն արդեն ցույց էր տալիս իր բոլոր գույները. անտառը պարուրող կաթնագույն մշուշը յերեկոյից իջնում էր գյուղի վրա և մինչև առավոտ ծածկում նրան իր պաղ, թափանցիկ քողով. հաճախ տեղում էր մանրահատ անձրև, մի այնպիսի անձրև, վոր ծակում է մարդու յերեսի մորթը, սարսուռ է ազդում մարմնին և թվում է թե վոչ վերջ է ունենալու, վոչ վախճան։

Տխուր էր. արևածաղիկները գլխիկոր նայում էին գետին, ծառերն այգում թրջված հսկաների պես մնացել էին համր ու անշարժ, իսկ հավերն անգործ ընկած սայլերի կամ այլ ծածկույթների տակ հավաքված շարունակ քրքրում էին իրենց փետուրները, վոր գյուղացիների համար նշան էր նոր անձրևի։ Գյուղն ամառելու յեկած մարդիկ ման էին գալիս վերարկուներով, կրկնակոշիկներով և անձրևանոցով։ Նախկին գրավիչ ամառանոցն այժմ թվում էր անհրապույր, ատելի, ինչպես թարմությունը կորցրած վաղեմի գեղեցկուհի։ Ձանձրույթից շատերը պատրաստվում էին հեռանալու այդ տխուր ամառանոցից։

Գյուղացի Յերեմի կենվորները նույնպես պատրաստվում էին քաղաք մեկնել։ Դրանք սպիտակահեր, անզավակ ամուսիններ էին, բայց իրար սիրում էին ինչպես նորապսակներ. դողում էին մեկը մյուսի առողջության համար, ճաշին միմյանց մեկնում էին յուղոտ պատառներ, իսկ թեյի ժամանակ միշտ մի ավելորդ կտոր շաքար էին գցում միմյանց բաժակ, «թող քաղցր լինի» ասելով։ Նրանք յերևանցի էին. իրենց ասելով ունեյին սեփական տուն, խանութներ և խաղողի այգի։ Յեղանակի պատճառով նրանք էլ շտապում էին շուտով հեռանալ։ Սակայն յերկու որ էր արդեն, վոր նրանք իրենց իրերը կապկպած, սրտատրոփ սպասում էին, թե Յերեմն ու



իր կինն ինչ պատասխան պիտի տան իրենց առաջարկին։ Բանը նրանումն էր, վոր այդ անզավակ ամուսինները ցանկություն էին հայտնել Յերեմին ու իր կնոջը վորդեգրել նրանց հինգ աղջիկներից մեկին, ամուսնացնել նրան և իրենց ամբողջ կարողությունը կտակել նրա գլխին։ Բայց ահա յերկու որ էր գյուղացի ամուսինները չեյին կարողանում նրանց պատասխան տալ։ Յեվ ծեր ամուսինները, անխուսափելի շալերն ուսերին, շարունակ դուրս ու ներս էին անում պատասխան ստանալու հույսով։ Իսկ գյուղացի ամուսինները պատասխան տալ չեյին կարողանում, վորովհետև դժվարանում էին վճռել իրենց համար այդ անսովոր խնդիրը։ Քաղաքացիների առաջարկն սկզբում նրանց թվաց շատ անբնական, նույնիսկ անգութ, բայց հետո գտան, վոր այդ բանը կարող է և բախտավորեցնել իրենց զավակներից մեկին և թեթևացնել իրենց ծախսը. չէ՞ վոր իրենք ծայրը ծայրին չեն հասցնում. թեև մարդը յերկրագործական աշխատանքներից դուրս, սայլով միշտ ապրանքի բեռներ է կրում կայարանից գյուղ և գյուղից կայարան, իսկ կինը գրեթե ամեն որ մանած է անում գյուղի ունևորների համար, բայց շատ բան դարձյալ պակաս է մնում։ Չի ոգնում և այն, վոր ամառները, յերբ տավարը դուրսն է կապվում նրանք գոմում տեղավորվելով, ունեցած յերկու սենյակը տալիս են քրեհով։ Վոչ, այդ քրեհը նույնպես չի ոգնում և էլի մի բան միշտ պակաս է մնում... Յեվ ծեր ամուսինների առաջարկն ամեն կողմից քննելով՝ նրանք այն գտնում էին իրենց համար ոգտակար.—Վա՞տ կլինի միթե, վոր իրենց զավակներից մեկը դառնա այդ ունևոր մարդկանց ժառանգը. ի հարկե—վոչ։ Բայց յերբ խնդիրը դառնում էր աղջիկներից վո՛ր մեկին հանձնելուն, նրանք չեյին կարողանում ընտրություն անել։

Այդ յերեկո յել մարդ ու կին գոմում նստած դարձյալ խոսում էին նույն այդ բանի մասին։ Մարդը նստել էր մեջքը սանը դեմ տված, իսկ կինը թախտի վրա ծալապատիկ իլիկ էր մանում։ Սյունից կախված լամպը լուսավորում էր նրանց արևառ դեմքերը և գոմի կեսը։ Վորովհետև յերեխաներն այդտեղ՝ գոմում էին, ամուսինները խոսում էին կամաց, ակնարկներով և դարձյալ դժվարանում էին մի բան վորոշել։ Յերեմը, ձանձրացած գործի այս ընթացքից, դարձավ, վերջապես, կնոջը.

— Արի, Սանամ, Աշխենին տանք։

Կինը ցնցվեց միջնակ աղջկա անունը լսելով։

— Գժվե՞լ ես, ինչ է, այ մարդ,—ասաց նա մեղմ հանդիմանանքով,—բա ղազերն ո՞վ արածացնի։

— Սաթոն։

— Սաթո՜ն... բան մտածեց։ Նա ինչ է որ՝ ինչ դարդեր պահի, դեռ ոխտը տարեկան չկա։

— Դե վոր եդպես է Սաթոյին տանք. մի բան, վոր մարդիկ ասում են՝ վորին կուզեք տվեք։

— Չէ՛ մի, Սաթո՛ն։ Նա դեռ յերեխա յե, ա՛յ մարդ, իրա շորերը հանել չի կարում։

— Ե՜հ, բա վո՞նց անենք հըմի.—հարցրեց Յերեմը տարակուսած։

Կինն ուսերը վեր քաշեց։ Մեծ աղջկանն ու նրանից փոքրին տալ չեր կարելի, վորովհետև նրանք մորն ոգնում եյին տնային գործերում. իսկ ամենից փոքրը դեռ որորոցի ծծկեր եր. մնում եր ուրեմն ընտրություն անել Աշխենի և Սաթոյի միջև։

— Հը՛, հիմի ինչ ես ասում,—նորից հարցրեց Յերեմը կնոջը։ Մարդիկ յերկու որ է սպասում են. պետք է կամ հա՛ ասել, կամ՝ չե։ Մտածիր, բախտիդ քացի մի տալ...

Սանամը, փոխանակ մարդին պատասխանելու, դարձավ այդ միջոցին մյուս տախտի վրա քույրերի հետ խաղացող ութ տարեկան աղջկան.

— Սաթո՛, կուզե՞ս մայրիկի աղջիկը դառնալ։

«Մայրիկ» կոչում եյին իրենց կենվորուհուն։

Փոքրիկ աղջիկը յելավ նստած տեղից, մերկ վոտները բանալով։

— Խի ցեմ ուզի.—պատասխանեց նա, աչքերին թափած մազերն յետ տանելով և հիշելով այն կանֆետներն ու մրգերը, վոր «մայրիկը» տալիս եր իրեն, յերբ ինքը լսում եր նրան։

— Իսկ նրա հետ քաղաք կերթա՞ս,—հարցրեց մայրը նորից։

— Խի ցեմ գնալ...

— Ինձ կթողնես՝ կերթա՞ս։

— Հա՛...

— Բա վոր քեզ ծեծե՞ն։

— Խի են ծեծում. շաքար հո ցեմ գողանա, վոր ծեծեն։

Ամուսինները ժպտացին և նշանակալից հայացքով իրար նայեցին։ Իսկ այդ հայացքն ասում եր. «Թեև դժվար է, բայց ինչ արած, սրան կարելի յե»...

Յեվ հարցն այսպիսով լուծվեց. վորոշվեց Սաթոյին վորդեգիր տալ քաղքցոց։

* * *

Յերբ ամուսիններն այդ վորոշումն իմացան, ուրախությունից արտասվեցին իրենց արված շնորհի համար.—այն, ինչ գլացել եր աստված, տալիս եյին մարդիկ, հասարակ գյուղացի մարդիկ... Հիմա,



վերջապես, իրենք կունենան մի ժառանգ, վոր մահից հետո գոնե կհիշի իրենց... Ուրախությունից նրանք չգիտեյին ինչպես շնորհակալ լինեն իրենց շնորհատուներից. կանայք՝ արտասվակալած աչքերով, մի քանի անգամ սրտագեղ համբուրվեցին, տղամարդիկ սեղմեցին իրարու ձեռք։ Յեվ ապա իրենց մեկնումը մի որով հետաձգելով՝ ծեր ամուսինները յերեխայի մոր համար ձմեռվա մի փափուկ շալ առան ընծա, իսկ իրա՝ Սաթոյի համար գնեցին հագուստ ու վոտնամաններ. հագցրին, կապցրին նրան, ձեռքերն ու յերեսը լվացին սապոնով, մազերը սանրեցին, ժապավենով կապեցին, զուքեցին՝ դարձրին քաղաքացու աղջիկ, այնպես վոր տեսնողի նախանձն եր շարժում։ Նախանձում եյին մանավանդ իր վոտաբոբիկ քույրերը, վորոնցից ամեն մեկը սրտանց կամենում եր նրա տեղը լինել։ Սանամն այս բոլորին նայում եր առանձին հպարտությամբ, վոր իր յերեխայով բախտավորեց անզավակ մարդկանց, իսկ փոքրիկ աղջիկն իր նոր հագուստներում իրեն պահում եր ծանր ու մեծ և, շորերը չկեղտոտելու համար, պատշգամբից ցած չեր իջնում քույրերի մոտ։ Այդ որը գյուղացի ամուսինները, ծերերի հրավերով, ճաշեցին նրանց մոտ. կերակուրը բրդեցին, ինչպես իրենց բոլոր կերակուրները, միսը կերան մատներով, ձեռք չմեկնելով անգամ առաջները դրած պատառաքաղին ու դանակին։ Իսկ հետևյալ որն առավոտյան Յերեմն իր սայլով (ամառանոցի կառքերը կայարան եյին գնացել) նրանց՝ իրենց իրերով, Սաթոյի հետ, տարավ յերկաթուղու կայարանը, վոր յերեք վերստի վրա յեր։ Ծեր ամուսինները շալն ուսերին տեղավորվեցին կապոցների մոտ, իսկ Սաթոյին նստացրին իրենց արանքում։ Անձրևի պատճառով Սանամը նրանց ճանապարհ գցեց մինչև գյուղի ծայրը։ Հրաժեշտի ժամանակ նա միքանի անգամ համբուրեց աղջկա թշերը և գոգնոցը տարավ աչքերին։ Մինչ այդ նրան այնպես եր թվում, թե Սաթոյին տանում են ժամանակավորապես և շուտով պիտի վերադարձնեն, բայց այդ րոպեյին նա զգաց, վոր, գուցե, իր յերեխային այլևս չտեսնի, և արցունքը զսպելու համար՝ աչքերը ծածկեց գոգնոցով։

Վերադարձի ամբողջ ճանապարհին ամեն ինչ նրան թվում եր ավելի տխուր, ավելի մռայլ. թրջված այգիները, տները թվում եյին վորբ, անոգնական, մոռացված. բոլորը միասին տխրած արտասվում եյին կարծես։

Տան մոտ նա հանդիպեց իր գյումրեցի հարևանուհուն՝ պայտառի կին Մարուշին, վոր թեշիկ վոլորելով ու մաստակ ծամելով կտրեց նրա առաջը.

— Քա-աղջի, Սանա՛մ, երեխին տարա՞ն,—հարցրեց նա հետաքրքիր աչքերը հառելով հարևանուհու դեմքին։

Սանամն անխոս գլխով արավ։

— Շատ էլ լավ երեք. թեթևանաք կը քնշըմ—շարունակեց աբլան ցավակցելով և, ապա խոսքը փոխելով, ավելացրեց.—Էհ, ինչըղ երեք, փարա-մարա տվի՞ն, թե...

— Մենք երեխա ծախող չենք, աղջի ջան,—վրդոված պատասխանեց Սանամը և, յերեսը շուռ տալով, մտավ տուն։ «Եդ էր պակաս, երեխա ծախեյինք, մտածեց նա, հիմի կսկսեն բամբասանքը»...

Տանն ու դրանը ամեն բան հիշեցնում էր Սաթոյին։ Ահա այնտեղ էր, որ նստում էր Սաթոն ու յերեխեն օրօրում. եստեղ էր ահա, որ քնում էր նա, ահա էս ավազի վրա չէր, որ խաղում ու տնակներ էր շինում...Յեվ հանկարծ Սանամը մի այնպիսի դատարկություն զգաց տան մեջ ու իր սրտում, որ ինքն իրենից սարսափեց... Ո՛վ է տեսել ծնողն իր ձեռքով յերեխին ուրիշի տա, մտածեց նա. ինչ կասեն խալխը... Մի փոքրիկ յերեխա օտար, հեռու քաղաքում. յեթե քնած տեղը բաց լինի, ո՞վ պիտի ծածկի նրան, յեթե գիշերը ջուր ուզի, ո՞վ պիտի ջուր տա... «Էն յես չեմ՝ որ գիշերը միքանի անգամ վեր կենամ»—մտածեց նա։—Նրանք ծեր, Սաթոն յերեխա—ի՞նչ կարող են անել. մինը պիտի նրանց ծառայի... Իսկ յեթե հանկարծ հիվանդանա՝ կարմրուկ կամ ծաղիկ հանի, վո՞նց պիտի պահեն նրան... «Դեղով ու դոխտուրով կպահնեն երեխին» մտածեց Սանամը, յերևակայելով իր Սաթոյին մենակ, անօգնական մի մեծ քաղաքում։

Յեվ պատկերացան նրան մեծ-մեծ տներ (այն ձևով, ինչպես տեսել էր թղթերի վրա նկարված), օտար, անծանոթ, սառը մարդիկ, կանայք և լավ հագնված յերեխաներ։ Դրանք բոլորն անցնում և հրում են Սաթոյին։ Իսկ Սաթոն մոլորված ճանապարհ չի գտնում և լաց է լինում փողոցի մեջ. լաց է լինում ու կանչում. «Նանի՜»... Իսկ նանը չկա... Նանը հեռու յե, շուրջը խորթ, անծանոթ մարդիկ... Յեվ նա յերկյուղած մտածեց—մի՞թե աստված այդ բանը կների իրեն. յեթե մի բան պատահի Սաթոյին, ինչ կասեն գեղացիք, հարևանները։ «Մի շալի համար յերեխան տվել է... Յերեխան ծախել է մի շալի»... Ահա ինչ պիտի ասեն։ Իսկ աստված այս բանը կների՞... Իհարկե, իհարկե,չի ների։ Տեսնելով տված յերեխաներին չի պահում, մյուսներն էլ կխլի իրենից... Այո, կբարկանա ու կխլի...

Այս միտքն այնպես վախեցրեց Սանամին, որ նա կանգնած տեղը դողաց, թե մի գուցե աստված հենց հիմա իրագործի իր պատիժը, ու բնազդաբար նայեց օրորոցին... Ո՛չ, նա իր յերեխան ուրիշի չի տա... Զորս աղջիկ պահողը, հինգն էլ կպահի. չորսի համար հաց գտնողը հնգի համար էլ կգտնի։ Յեթե չորսը սոված պի-



տի մնան, թող Սաթոն էլ նրանց հետ սոված մնա։ Դա ավելի լավ է...

Ու ահեղ պատժից՝ մյուս յերեխաներից զրկվելու մտքից սարսափած, նա չկարողացավ այլևս կանգնել, նստել մի տեղ։ Մի թագուն ձայն կարծես շարունակ ասում էր նրան. «յեթե յերեխադ յետ չբերես, մյուսներից կզրկվես»...

*
* *

Փոքր անց՝ Սանամն արդեն գնում էր դեպի կայարան։ Ընծա տացած շալը կռնատակին՝ նա գրեթե վազում էր ցեխոտ փողոցներով. չնայած վոտնամանները խրվում եյին ցեխի մեջ, շրջազգեստը փաթաթվում էր վոտներին, բայց նա ավելի յեր արագացնում քայլերը, հույս ունենալով դեռ ճանապարհին հասնել սայլին։

Նա գնում էր յերեխային յետ բերելու։

Յերեք վերստ տարածությունն անցավ մի ժամում։

Յեվ ճանփին բոլոր ժամանակ մտածում էր.—Իսկ յեթե հանկարծ գնացած լինեն, յերեխին տարած... Ո՛, յեթե տարած լինեն, նա մինչև քաղաք կերթա նրանց յետևից, նա թույլ չի տա. նա իր լերեխին պիտի յետ բերի...

Նրա սիրտը հանդարտեց այն ժամանակ միայն, յերբ հեռվից նկատեց իրենց սայլը կայարանի շենքի մոտ։ Լծարձակ յեզները՝ թոկով իրար կապված, վորոճում եյին հանգիստ։ Ուրեմն դեռ չեն գնացել։

Նա քայլերն արագացրեց։

Հասնելով կայարան, նա գլխապատառ մտավ նրա միակ դահլիճը և, առանց վորևե խոսք ասելու խելագարի պես սկսեց համբուրել յերեխային, վոր կանգնած էր ծեր ամուսինների և Յերեմի մոտ։

— Յես քեզ ուրիշի չեմ տա, չե՛. չեմ տա, չեմ տա,— ասում էր նա յերեխային ու համբուրում։

Ծեր ամուսինները, վոր շալերն ուսերին նստած եյին իրար կողքի, զարմացած նայում եյին Սանամին և կարծես հարցնում եյին իրար. «Ի՞նչ է պատահել սրան»։ Պակաս զարմացած չեր և Յերեմը. նա մերթե փափախի տակից ամոթահար նայում էր մերթ կնոջը, մերթ կենվորներին և չգիտեր ինչ անել։

Յերկար աղջկան համբուրելուց հետո, վերջապես, Սանամը դարձավ պառավին.

— Ե՛ս ձեր շալը, մայրիկ ջան,— ասավ նա ընծան պառավի ծնկան դնելով։—Առեք, յես իմ երեխին կարալ չեմ տալ, կարալ չեմ. ներողություն կանեք. կարալ չեմ...

Ներողության էլի մի քանի խոսքեր քթիմնջալով, նա յերեխային

ամուր գրկած շտապ-շտապ դուրս յելավ կայարանի շենքից, այնպես, կարծես մեկը հետապնդում եր նրան՝ յերեխան խլելու։

Թե ծեր ամուսինները, թե Յերեմը և թե կայարանում հավաքված մարդիկ մնացել եյին տարակուսած, ապշած Սանամի արարքից։

Պառավ «մայրիկն» այդ տեսնելով,—յերկար չկարողացավ համբերել և լաց յեղավ։

— Յերեխին տարավ, Գոքոր,—ասավ նա մարդուն՝ թաշկինակն աչքերին սեղմելով։

Ծեր ամուսինն սկսեց մխիթարել նրան։

— Վոչինչ, վոչինչ, յերևի աստված եդպես ե կամեցել. մեր ճակատին յերևի յերեխա չի գրած...

Շուտով գնացքը յեկավ։ Ծերունիները դողդոջուն քայլերով, սգավորի նման դուրս յեկան դահլիճից։ Յերեմը նրանց վագոն նըստեցնելուց հետո, նույնպես տխուր և միաժամանակ ամոթահար, ասես մի հանցանքի մեջ բռնված, սայլը լծեց ու շտապեց տուն։

Կինը ճանապարհին սպասում եր նրան։

— Չե, Յերեմ, չե, ինձ բան չասես. բարկանաս վոչ. յես իմ երեխին կարալ չեմ ուրիշի տալ,—ասավ նա սայլը նստելով.—կարալ չեմ... Հասկացիր ու բան մի խոսալ, թե արեդ կսիրես։

Մարդն ամոթից բան չեր գտնում ասելու։

— Աստված դրա համար չի ինձ յերեխա տվել, վոր յես բաժանեմ. չե, Յերեմ, վրես բարկանաս վոչ.. Յերեխա տվողը, ապրուստ ել կտա. յես գիշերներն ել կաշխատեմ՝ իմ երեխին ուրիշին չեմ տալ...

Յեվ նա կրկին ու կրկին համբուրեց աղջկա ճակատը, այտերը մազերը։ Համբուրում ու ժպտում եր ինքն իրեն. և ամեն բան այժմ պայծառ, ուրախ եր թվում նրան. Թրջված այգիները, կարծես լվացած, գոհունակությամբ նայում եյին յերկնքին, ծառերը շողշողում եյին ցողակալած տերևներով, իսկ արևածաղիկները ժպտում եյին իրենց դեղին աչքերով և գլխով անում...

---

— Վերլուծեցեք այս պատմվածքը թե ըստ բովանդակության, թե ըստ ձևի։

— Բնորոշեցեք հեղինակի վերաբերմունքը դեպի իր հերոսները։

— Առանձնացրեք բնության նկարագրությունները և փորձեցեք պարզել, թե ի՞նչ կապ ունեն նրանք պատմվածքի բովանդակության հետ։



# ԱՐԱԶԻ

## ԿԻՍԱՏ ՏՈՒՆԸ

Այդ են ժամանակն եր, յերբ ամեն ինչ շարժվեց...

Յերբ մութ խորշերից լույս աշխարհ յեկավ լուռ տանջանքը...

Յերբ բացվեցին փակ բերանները...

Են ժամանակ Սարգիսը վերադարձավ քաղաքից և հայտարարեց գյուղի շուկայում.

— Ել հարուստ-աղքատ չկա... սրանից դենը բոլորս մեկ ենք...

Ու վոգևորված նա պատմում եր, շշմեցնում լսողներին իր բերած նոր մտքերով։

Ապա յեկան քաղաքից և ուրիշները՝ նույն հովերով, և ամբողջ որը գյուղի շուկան դղրդում եր նոր խոսքերից...

Եդ օրերին եր ահա, յերբ Սարգիսն ուրախ-զվարթ սկսեց իր նոր տան շենքը։

Նա բարձրացրեց պատերը, բայց չկարողացավ ծածկել ու սարքել իր տունը...

* * *

Ու անցան տարիներ...

Սարգիսը մնացել եր գյուղում. քաղաքում այլևս գործ չկար։

Նա մաև եր գալիս գլխիկոր, ինքն իր մեջ խորասուզված, աշխատելով աննկատելի դարձնել իրեն։

Խունացել եր նրա չուխան, վորի վրա յերևում եյին յերկու մեծ կարկատաններ, դժգունել եր նրա դեմքը, ասես նույնպես խունացել...

Իսկ նրա տունը դարձյալ կիսատ եր...

* * *

Անցել եր են ժամանակը...

Կյանքը նորից իր նախկին հունի մեջ եր մտել։

Գյուղի շուկայում դարձյալ իրենց առաջվա դիրքերն եյին գրավել յերկու վաշխառուները — հաստափոր Սանդրոն և Նիհար Մարտիրոսը։

Ու ամեն անգամ, յերբ Սարգիսը մռայլ անցնում եր շուկայով, հաստափոր Սանդրոն՝ շրջապատված իր մարդկանցով՝ բղավում եր լիառատ, հրճվալից ձայնով ու հեգնող շեշտով.

— Սարգի՛ս, բա ասում իր ել հարուստ-աղքատ չկա, բա ինչի՞ չես տունդ շինում. . կիսատ ա մնացել. .

Իսկ Մարաիրոսն սպասում եր, վոր նա մոտենա իրեն, ու կամացուկ ասում եր.

— Սարգի՛ս, կարելի չա փող ա հարկավոր, արի տամ, տունդ վերջացրու...

Յեվ նրա չորացած, խոշոր դեմքի վրա խաղում եր մի խորամանկ ժպիտ, վորից փայլում եյին նրա մանր, խոր ընկած աչքերը:

Սարգիսը դողում եր այդ խոսքերից, վորոնք հիշեցնում եյին են անցած օրերը, յերբ ինքն եր հարձակվում այդ յերկուսի վրա:

Նա աշխատում եր արհամարհել, լուռ մնալ, բայց յերբ Սանդրոն չափն անցնում եր, ել չեր համբերում:

— Շատ մի յեղակալիլ,— ասում եր նա.— մի առվով վոր ջուր ա գնացել, մին ել կգնա... Սաղ աշխարքի տունն ա կիսատ մնացել, մենակ իմը հո չի՞... Լավ իմանաս, են օրը ելի կգա, տունը կթամամեմ, քո աչքն ել կհանեմ...

— Հա՛, հա՛, հա՛ .. մին ել՝ կգա...— հռհռում եր Սանդրոն, ավելի ես լայնացնելով իր տեղը, և նրա հետ հռհռում եյին իր շուրջը պատած մարդիկ ..

— Ծիծաղի՛ր, ծիծաղի՛ր, տեղդ լենացել ա... ամա լավ միտդ պահիր,քանի ես խալխի ցավը կա,են օրերն ելի ուղտի պես կչոքեն դուանդ...

Ասում եր Սարգիսը, դառը հեգնանքով չափում վոտից գլուխ Սանդրոյին ու հեռանում դանդաղ քայլերով:

Գնում եր նա լուռ ու մտախոհ ու իր այրվող աչքերով մի յելք փնտրում այդ նեղ փողոցում...

Յեվ վորպես մի արձան են անցած օրերի՝ խորհրդավոր լռությամբ հանդիպում եր նրան իր կիսատ տունը...

---

— Ի՞նչ ժամանակաշրջան է նկարագրված այստեղ:

— Ո՞վ եր Սարգիսը, ինչո՞ւ յեր գնացել քաղաք յեվ այդ օրերին վերադարձել քաղաքից գյուղ:

— Ի՞նչ եր ավետում նա գյուղին:

— Ո՞վքեր եյին նրա հետ քաղաքից վերադարձածները. ի՞նչ խոսքեր եյին այդ, վորոնցից դղրդում եր գյուղը:

— Վո՞րն եր այն «տունը», վոր սկսեց շինել Սարգիսն այդ օրերին:

— Ի՞նչը խանգարեց նրա ավարտմանը:

— Բնորոշեցեք . ունեվոր գյուղացիների վերաբերմունքը դեպի այդ «տան» կառուցումը:

— Յե՞րբ ավարտեց Սարգիսն իր «կիսատ տունը»:

---

— Կարե՞լի յե արդյոք «Կիսատ տունը» պատմվածք համարել:





## ԾԵՐՈՒՆՈՒ ՀԱՌԱՉԱՆՔԸ

(Հատված «Հառաչանք» պոեմից)

Մըթնեց: Ծերունին լուռ չարչարանքով
Մի քանի կոճղեր դըրեց կըրակին,
Նորից բարևեց իր յերկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել ղոնաղին:

Ու նըստոտեցինք իրար դեմ ու դեմ
Սաստությամբ վառվող կրակի շուրջը,
Մեր առջև ձորն եր թըշշում խավարչտին,
Մեր դեմը խաղում ձորերի շունչը:

Գիշերվան անքուն հավքերն են տըխուր
Ծվում, ծըկլթում խավարի միջում,
«Վորբըն» և յեղբորը կանչում ցավալուր,
Բուն և իր դաժան վայը կոընչում:

Ու վողջ միասին մի խորունկ թախիծ,
Մի մութ զարզանդ են գիշերին տալի...
Ահա տարածվեց հեռու ծմակից
Յեվ ձիգ ոռնոցը սովատանջ գայլի:

* *
*

Ծանըր տընքալով թեք ընկավ ծերը,
Յերկար կոթավոր չիբուխը լըցրեց.
Գիշերվա նման կիտած նոթերը
Խուլ վորոտալով եսպես հարցըրեց.

—Ի՞նչ կա քաղաքում, դե՛ պատմիր տեսնեմ,
Իմանամ, յես ել ուրիշին ասեմ.
Մեռնող-ապրողից, թանգ ու եժանից,
Կամ նոր դուրս յեկած գազեթից, բանից...

Յերեք թագավոր, ասում են, իբրև,
Խելքս չի կտրում, վոր եսպես լինի,
Խորհուրդ են արել, վոր այսուհետև
Իր թախտից զըրկվի, ով կռիվ անի:

Ո՞վ է իմացել եսպես հրաշք բան:
Ել ի՞նչ թագավոր կամ ել ի՞նչ իշխան,
Վոր կռիվ չանի, ուրիշին չըտիրի.
Մարդ չկոտորի, յերկիր չավերի...»:

—Ե՛հ, աստված սիրես, թո՛ղ դրանց, պապի,
Յես շատ եմ զըզվել քաղքից, գազեթից.

Ինչպես եք ապրում, դու ձեզնից պատմի,
Ձեր որ ու կյանքից, ձեր ցավ ու դարդից։

—«Ի՞նչ ես կորցրել—ընչի ման գալի,
Խոսեց ծերունին դառը խնդալով,
Բա մեռած հո չենք, ապրում ենք, ելի՛,
Ամեն մեռնողի յերանի տալով։

Մեր ապրուստն ի՞նչ ե.—մի կտոր չոր հաց,
Են ել հըրեն հա՛—յերկընքից կախված։
Մի մարդ վոր նըրա յերեսը պահի՝
Նըրա ապրուստը ի՞նչ պետք ե լինի ..

Յես քեզ օրինակ։ Ե՛ս խոր ձորերում
Ես ե չորս քսան տարիս լըրացավ,
Վոչ մի խնդություն տեսա իմ օրում,
Վոչ ել միանգամ աչքըս լիացավ։

Ամբողջ ամառը առանց տաքիլեթ
Պըտիտ եմ գալի ես ձորի միջին,
Կռիվս եմ տալի հազար ցավի հետ
Ու չեմ կարենում—չեմ հասնում վերջին։

Վազներից ենքան օգուտ չի գալի,
Ինչ նրանց համար յես փող եմ տալի.
Գըլուխը քարը, գոնե փող լիներ,
Ել ինչո՛ւ եսքան մարդ գանգատ կաներ։

Ցախ եմ հավաքում, կրակ եմ վառում,
Սրա համար ել փող եմ վըճարում։
Ես դափեն ի՞նչ ե—մի յերկու լատան,
Հինգ ու վեց անգամ տարան դատաստան։

Ասում են գեջ ես կտրել դու մերին։
Իրենցն ասում են ու քեզ չեն լսում,
Մինչև չտեսնես մեծին, պլսերին,
Հիմի տես նրանք ինչքան են ուզում։

Գողն ել մի կըռնից, գելն ել մյուս կըռնից
Աչքըդ թեքեցիր—բանիդ տերը չես.
Քաշում են տանից, քաշում են դըռնից
Ու չես իմանում վոր կողմը թըռչես։

Թե տանուտերին գանգատ եմ գնում,
Բան չեմ վաստակում բացի դուշմանից.
Գողերի հետքը իր տունն են տանում,
Համեցեք դիվան ուզիր սըրանից։

Նստեցնում ե քեզ, մի յերկու բաժակ



Տաք ջուր խմեցնում կամ մի թաս օղի.
«Դու գնա, պա՛պի, միամիտ քընի՛ր,
Յես աչքի լույսը կհանեմ գողի...»

Դարձել ե աշխարքն, ա՛խպեր, առ ու ու փախ
Սերը դարձել սուր ու ջուրը—արին.
Վոչ ամոթ ունի ուժեղը, վոչ վախ,
Վայը յեկել ե տարել տըկարին։

Երեկ իրիկուն եդ կողքիդ սընից
Կախ ելին արած յերեք հըրացան,
Տղեք են՝ փախած տանից, դիվանից,
Յեկան ու ծեքին ել յետ հեռացան։

Ո՞վ ե մեղավոր... Միտք եմ անում, մի՛տք,
Ու չեմ հասկանում ո՞վ ե մեղավոր։
Հենց են եմ տեսնում—մութն, անգետ մարդիկ
Ել մենք ենք մեջտեղ տանջվում ամեն օր...

Մեր բանն ել, ա՛խպեր, եսպես ե յեկած,
Մենք լեզու չունենք—ուժեղը աստված։
Մեր հին ադաթից ընկել ենք, զըրկվել,
Նոր ել չըգիտենք, թե ի՞նչ ե յեկել։

Ետեղ մեզ մոտիկ թավադներ ունենք,
Ամենքս, իմացիր, տասը տեր ունենք.
Փորներն ողողած, փոխկները թողած,
Կըռները կանթած կըտերը կանգնած։

Մեկըն մեր գյուղում մի թիզ հող ունի,
Թքես մի ծերից մյուս ծերը կընկնի,
Վոչ ինքն ե վարում, վոչ տալիս մեկին,
Բուռն ե հավաքել գյուղացու հոգին։

Գնում ե ուրիշի ապրանքը զանում,
Թաքուն հավաքում իր հանդն ե անում,
Աղմուկով քշում իր հանդի միջից,
Տորափ ե առնում անմեղ տիրոջից։

Պարում ե ձմեռն հարսանիքներում,
Կամ մեծավորի թեփշի յե լիզում,
Մինչև մի քանի շահի յե ճարում,
Են ել տանում ե լափում Թիֆլիզում։

Մի օր սա յեկավ՝ թե չոբան Զատին
Վոչխարը թաքուն իմ հանդն ե քշել.
Զատին ել կուլ չի գընաց թավադին,
—Թո՛ղ գա մի տեսնենք—եդ ո՞վ ե տեսել։

Աղաչանք արի, պաղատանք արի,
—Ա՛յ տղա, ասի, չես քաշվի, հեռի,
Բեր ձեռը վեր կալ, անեծք չար բանին...»
Բայց ի՞նչ հասկացնես բոլոր չոբանին։

--Զե՛ վոր չե՛, ասավ, էն լեռ սարի պես
Գընաց դիք կանգնեց գեղի մեյդանում.
Ես դադաստանը, ես Թավադն, ես չես,
Թո՛ղ գա մի տեսնենք ինձ ինչ է անում։

Յեկան իրարու, խոսք խոսքի հասավ,
Զատին մի քանի կոշտ խոսքեր ասավ.
Դե մարդիկ յերբվոր կռիվ են անում,
Մեջտեղ փլավ չեն իրար բաժանում։

Մեր տանուտերն էլ, աստված է օրհնել,
Եսպես մի բան էր պակաս նրան էլ.
Մեկի պոչը միշտ մեկելի տակին,
Յեկավ տաքացած, ճիպոտը ձեռքին։

Յեկավ ես Զատնիս հաջիցը կպեց,
Ինչքան վոր գիտես՝ քո ասած Թակեց,
Թե՝ պետք է կորցնեմ քեզ էնքան հեռու,
Վոր էլ չտեսնես արևը Լոռու։

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք Թավադի վոտը խնդիրքով,
Ինչքան վոր տվինք, ավել խնդրեցինք —
Բանը վերջացնի գեղական կարգով։

Ախպեր, ասեցինք, ինչ արիք իրար,
Խոսք եք կռվացրել, արին հո չարի՞ք,
Համ ծեծել տվիր, համ ըշտրափդ առ,
Արի վերջացրու, բոլ էլավ, հերի՛ք։

Սա վոտը դրեց վերի Թարեքին.
—Էսքան ու էսքան բերեք, վոր ներենք...
—Ես է ունեցածն աստծու տակին,
Էլ չըկա, ախպեր, վո՞րտեղից բերենք։

Ինչ արինք, չարինք՝ չեկավ հավատի,
Գնաց ավելի բարձըր դանդատվեց,
Թե՝ ինքըս Թավադ, Թավադի վորդի,
Ու չոբան Զատին ինձ ուշունց տվեց...

Վերեից մի մարդ յեկավ քննություն,
Միրուքը հաչա, աստղը ճակատին,
Յեկավ, վեր յեկավ, մտավ քեոխվի տուն.
—Վո՞րտեղ է, ասավ, էն չոբան Զատին...



Զատին էլ յեկավ անճոռնի ու մեծ,
Էն փետի նման մեջտեղը տընկվեց.
Վո՛չ օրենք գիտի, վո՛չ կարգն ու լեզուն,
Բերանը կապած սարի անասուն։

Քննություն արին ըռնեցին գյադին,
Թե ինչպես ուշունց կտաս Թավադին.
Բաց արին տեսան գըրած զակոնում,
Թե չոբան Զատին Սիբիր է գնում...

Յերեկ իրիկուն էդ կողքիդ սընից
Կախ էյին արած յերեք հըրացան...
Քանի՛-քանի մարդ կորավ իր տանից,
Քանի՛-քանի մարդ դառավ մարդասպան...

Ո՞վ է մեղավոր։ Մի՛տք եմ անում, մի՛տք,
Ու չեմ հասկանում ո՞վ է մեղավոր.
Բայց իմ կարճ խելքով էնքանն եմ տեսնում--
Ապրիլ չի լինիլ եսպես ամեն օր։

Մինը իր կամքին՝ ինչ ասես անի,
Մյուսը խոսելու իրավունք չունի.
Յես չասեմ, դու հո կարդացող մարդ ես,
Էն վո՞ր աստվածն է կարգ դըրել եսպես...

Թե չէ՝ Թավադ ես՝ ինչ ուզես անես,
Յես չըկարենամ քեզ մի խոսք ասե՞լ..
Ե՛հ, մի՛ խոսեցնի աստված կըսիրես,
Թե չէ մի ղաչաղ կըդառնամ յես էլ..»

Լըռեց ծերունին։ Իրար դեմ ու դեմ
Թիկնած էյինք Թեժ կըրակի շուրջը,
Մեր առջև ձորն էր Թըշշում խավարաչին,
Մեր դեմը խաղում գիշերվան շունչը։

---

— Բնորոշեցեք ծերունու հոգեբանությունը. գյուղացիության վոր խավն է խոսում նրա բերանով:

— Ինչո՞ւ ծերունին չէր հասկանում, թե «ո՞վ է մեղավոր»:

— Ի՞նչ էր ուզում ասել ծերունին իր վերջին խոսքերով:

---

— Տարբերվո՞ւմ է արդյոք հեղինակի լեզուն իր հերոսի լեզվից:

— Մանրամասն վերլուծեցեք ծերունու լեզուն յեվ վորոշեցեք, թե դա համապատասխանո՞ւմ է նրան յեվ բնորո՞շ է նրա համար, թե վոչ:

ԱԼ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

## Ա՜Յ ՍԵՎ ԱՄՊԵՐ...

*Ա՜յ սև ամպեր, վա՜յ սև ամպեր,*
*սիրտս պատեց սև ու մութ.*
*յարաբ ի՞նչ եք դուք ինձ բերում,*
*գարնան անձրև՞, թե կարկուտ...*

*Հուսով-լուսով արտ եմ ցանել,*
*արյուն թափել ու քրտինք.*
*վա՜յ բալեքիս... Աստված չանի,*
*թե վոր անհաց մնացինք...*

*Ա՜յ սև ամպեր, ի՞նչ եք գոռում,*
*սիրտս պատեց սև ու մութ.*
*յարաբ ի՞նչ եք արտիս բերում,*
*գարնան անձրև՞, թե կարկուտ...*

---

— Ով է խոսում այս բանաստեղծության մեջ՝ հեղինակն ի՞նքը, թե մի ուրիշը։

— Արտահայտու՞մ է արդյոք այս բանաստեղծությունը չքավոր գյուղացու հիմնական տրամադրությունը հին գյուղում:

— Համապատասխանու՞մ է այս բանաստեղծության լեզուն՝ բովանդակությանը:

---

## ՅԵ՜Կ, ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ

*Յե՛կ, գարնան անձրև, թափվի՛ր հորդառատ*
*ցրտացած յերկրի սառը կրծքի վրա.*
*Թող նորից յերկիրը շունչ քաշի ազատ,*
*Թող նրա կրծքին ջերմ կյանքը յեռա։*
*Յերկար նա տանջվեց դառնաշունչ ձմռան*
*ցուրտ կապանքներում քեզ սպասելով.*
*Նա շա՜տ համբերեց... կենսատու գարնան*
*քաղցր կարոտը ջերմ փայփայելով։*



*Թափվի՛ր, ո՜վ անձրև, ինչպես մարգարիտ,*
*ինչպես յերկնառաք ցողը կենսաբեր,*
*վողողի՛ր դաշտեր, անտառ ու հովիտ*
*կանաչով պատի՛ր լեռներ ու ձորեր։*
*Թող հորդանալով ա՜ղբյուր ու գետակ*
*սառցե շղթաներն անահ խորտակեն.*
*դուրս գան ափերից, վազեն համարձակ*
*ազատ խոխոջեն, ազատ կարկաչեն։*
*Թող քեզ լույս-արև ժպտա սիրավառ,*
*և վորպես յերկնից հաշտության նշան,*
*քո կաթիլներում փայլուն ու պայծառ*
*նա սիրով կապե կարմիր ծիածան։*
*Յեկ, գարնան անձրև, թափվիր հորդառատ*
*ցրտացած յերկրի սառը կրծքի վրա.*
*Թող նորից յերկիր շունչ քաշի ազատ,*
*Թող նրա կրծքին ջերմ կյանքը յեռա։*

---

— Կարելի՞ չէ արդյոք «անձրև» «գարուն», «ձմեռ» և այլ բառերի ու պատկերների ներքո այլ բան հասկանալ:

— Պա՞րզ բանաստեղծություն է սա, թե բարդ (ըստ ձևի ու բովանդակության):

— Ի՞նչ պակասություններ ունի հեղինակի լեզուն, կա՞ն արդյոք նրա մեջ առանձին բառեր ու քերականական ձևեր, վոր այժմ գործածական չեն:

---

## ՅԵՐԿՐԻ ՄՇԱԿՆԵՐ

*Ո՛, ծանր հոգսերի խղճուկ զավակներ,*
*վորքան համբերող, քաջ է ձեր հոգին.*
*տանջվում եք անվերջ որեր, տարիներ,*
*կարծես, տանջանքն է միայն ձեր բաժին...*

*Մանուկ որերից ձեր մեջ ապրելով,*
*վկա յեմ յեղել ձեր շատ ցավերին:*
*տեսել եմ ինչպես տանջանքի գնով*
*դուք հաց եք տալիս հայրենի յերկրին։*

*Տեսել եմ ինչպես հուսալից, զվարթ*
*դուք մշակում եք անմշակ դաշտեր.*
*ինչպես տանջանքում անլաց, անվհատ*
*դուք յերգ եք յերգում—վաստակի՛ յերգեր։*

*Տեսել եմ ինչպես ամառվա շոգին,*
*յերբ կրակ է թափում արևառ յերկինք,*

*վոսկեշող արտում, մանգաղը ձեռքին*
*դուք մեջք խոնարհած, թափում եք քրտինք։*

*Տեսել եմ ինչպես գունաթափ աշնան*
*հայրենի յերկրի կուրծքը պատռելով,*
*այնտեղ թաղում եք գանձերի նման,*
*վոսկի հատիկներ, վոսկի հույսերով...*

*Տեսել եմ ինչպես և ցուրտ, տաղտկալի*
*ձմռան գիշերներ նստած խրճիթում*
*հոգնած ձեռներից դադար չեք տալի—*
*խոփն եք նորոգում, մանգաղը սրում...*

*Յեվ այսպես ազնիվ գործին անձնվեր*
*ապրում, տանջվում եք անբավ հոգսերում.*
*և ձեր սանջանքում, հերոս մշակներ,*
*արդար վաստակն է ձեզ վոգևորում։*

---

— Տալի՞ս է արդյոք այս բանաստեղծությունը հին գյուղի չքավոր գյուղացիության կենցաղի ու դրության ճիշտ պատկերը:

— Ի՞նչ վերաբերմունք ունի հեղինակը դեպի իր նկարագրած նյութը։

— Կարելի՞ յե արդյոք այդ վերաբերմունքից վորոշել նրա սոցիալական պատկանելիությունը:

— Սա չքավո՞ր, աշխատավո՞ր գյուղացու վերաբերմունք է դեպի իր դրությունը, թե նրա կյանքին դրսից նայող, սոցիալական այլ խավի ներկայացուցչի, վորի համակրանքը չքավոր մշակների կողմն է:

— Կարելի՞ յե այս բանաստեղծության լեզվից վորոշել, վոր նրա հեղինակը ժամանակակից գրող չէ:—Բանաստեղծությունից վերցրած ի՞նչ նմուշներով կարող եք դա ապացուցել:

---



## ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

*
* *

*Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,*
*որ ու արև չտեսանք,*
*վա՜խ, մեր կյանքը սևով անցավ.*
*աշխարհից բան չիմացանք։*

*Հարուստ մարդիկ կուտեն-խմեն*
*աշխարհի ճոխ սեղանից.*
*մենք աշխարհի խորթ տղերքն ենք,*
*մեզ փայ չկա աշխարհից։*

*Խեղճ աղքատի հոգին դուրս գա,*
*քարից-հողից հաց քամե,*
*բեռով հացը հարուստին տա.—*
*հարուստն իշխե, վայելե։*

*Խեղճ աղքատը դառը դատի*
*դատարկ նստի... Էյ, աշխա՜րհ,*
*ել ինչո՞ւ չես քարը թողնում*
*քարի վրա, քա՜ր-աշխարհ։*

*Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,*
*որ ու արև չտեսանք.*
*վա՜խ, մեր կյանքը սևով անցավ,*
*աշխարհից բան չիմացանք։*

---

— Վերլուծեցեք այս բանաստեղծությունը թե ըստ բովանդակության, թե ըստ ձևի:

— Գյուղացիության վո՞ր խավի տրտունջն է արտահայտված այս բանաստեղծության մեջ:

— Կա՞ն արդյոք ինչպես այս, այնպես էլ Ծատուրյանի բանաստեղծությունների մեջ պայքարի շեշտեր:

— Հոռետե՞ս է այս բանաստեղծության հեղինակը գյուղի չքավորության ապագայի նկատմամբ, թե՞ լավատես:

---

## ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

*
* *

*Կարծես թե դարձել եմ յես տուն.*
*բոլորն առաջվանն ե կրկին.*
*Նորից դու հին տեղը նստում,*
*շարժում ես իլիկը մեր հին.*

*Մանում ու հեքյաթ ես ասում,*
*մանում ես անվերջ ու արագ. -*
*սիրում եմ պարզկա քո լեզուն,*
*ձեռներդ մաշված ու բարակ։*

*Նայում եմ, մինչև վոր անզոր*
*գլուխս գլխիդ ե թեքվում.*
*Նորից յես մանուկ եմ այսոր,*
*դրախտ ե նորից իմ հոգում։*

*Արևը հանգչում ե հեռվում,*
*գետից բարձրանում ե մշուշ,*
*հեքյաթդ անվերջ օրորում,*
*իլիկդ խոսում ե անուշ...*

*
* *

*Հիշում եմ՝ ինչպես այն ուշ*
*աշունն եր վոսկեորվում,*
*մայրամուտն եր ժլատ վառվում,*
*բլուրը պատել եր մուժ...*

*Մեր գյուղն ե՝— սարերը մերկ,*
*մեր գետը՝ բարակ միգում,*
*զանգակը՝ մեղմ ու բեկուն,*
*թախծում են արտ ու հերկ...*

*Յեվ մայրս ահա հիվանդ*
*մրսում ե, արև ուզում,*
*նստած ե հերս դրսում*
*անխոս ու մեղմ հնազանդ։*



*Յեվ ծեր ե մայրս այնքան,*
*փոքրիկ ե - բարի մի մայր ..*
*ցոլում ե սարը սուրբայր,*
*յերգում ե զանգը լալկան...*

---

— Ի՞նչ տրամադրություն են ստեղծում ընթերցողի մեջ այս բանաստեղծությունները՝ կենսուրա՞խ, թե տխուր:

— Ինչո՞ւ:

— Միայն բանաստեղծությունների բովանդակությո՞ւնն ե այդպես ազդում, թե՞ ձևը յեվս:

— Վերլուծեցեք այս բանաստեղծությունների պատկերները. ի՞նչ ընդհանուր գույն ունին նրանք:

— Բառերի վրա նշանակեցեք շեշտերը յեվ վորոշեցեք, թե ի՞նչ չափով են գրված այս բանաստեղծությունները:

— Կա՞ն արդյոք այս բանաստեղծությունների մեջ լեզվական անհարթություններ:

---

— Կարելի՞ յե արդյոք այս բանաստեղծություններից վորոշել հեղինակի սոցիալական պատկանելիությունը:—Արդյոք չի՞ կարելի այդ մասին յեզրակացություններ հանել նույնիսկ նրա լեզվից, գործածած բառերից, պատկերներից յեվ այլն։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ ՈՒ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Վո՞ր շրջանի գյուղն է նկարագրված այս պատմվածքներում։
— Կա՞ արդյոք այս պատմվածքների մեջ բովանդակության նմանություն։
— Կա՞ նմանություն առանցքի, որի շուրջը դառնում են դեպքերը։
— Կա՞ն նման տիպեր։ Ինչո՞վ է պայմանավորված այդ նմանությունը։
— Փորձեցեք գրել մի շարադրություն «Չքավոր գյուղացիության դրությունը Փափազյանի, Շահնազարյանի յեվ Ձուղուրյանի գրվածքներում» նյութի մասին։
— Այս շարքի վո՞ր պատմվածքում կան չքավոր գյուղացիության պայքարի վառ շեշտեր։
— Վո՞ր պատմվածքներում են այդ շեշտերը միանգամայն բացակայում։
— Կարելի՞ է արդյոք այս պատմվածքների հիման վրա պատկերացնել՝ թե ովքե՞ր են տիրապետող դեր խաղում կապիտալիստական գյուղում։ Ի՞նչն է դրանց տիրապետության պատճառը։ Ի՞նչ միջոցներով են նրանք կախման մեջ պահում չքավոր գյուղացիներին։
— Ըստ Փափազյանի յեվ Շահնազարյանի պատմվածքների փորձեցեք բնորոշել չքավոր գյուղացիության հոգեբանության հիմնական գծերը կապիտալիստական կարգերի օրով։ Ինչի՞ հետևանք է այդ հոգեբանությունը։
— Գյուղական վո՞ր խավի հառաչանքն է լսվում Հով. Թումանյանի «Ծերունու Հառաչանքը» գրվածքում։ Համեմատեցեք այդ գրվածքն ըստ բովանդակության Վ.րթ. Փափազյանի «Զոչո-Բարը» պատմվածքի հետ։ Ի՞նչն է ընդհանուր այդ յերկու գրվածքներում։ Չկա՞ արդյոք նույնիսկ նկարագրված դեպքերի մեջ վառ նմանություն։
— Ի՞նչն է ընդհանուր Ծատուրյանի յեվ Իսահակյանի բանաստեղծություններում։ Վո՞րն է այդ բանաստեղծությունների հիմնական տրամադրությունը։ Համապատասխանո՞ւմ է այդ տրամադրությունը կապիտալիստական գյուղի չքավորության հիմնական տրամադրություններին։ Այս վերջին հարցին պատասխանելիս օգտվեցեք Փափազյանի յեվ Շահնազարյանի պատմվածքներից։

---

— Այս շարքում զետեղված պատմվածքներից վո՞րը ձեզ վրա թողեց ամենից ուժեղ տպավորություն։ Ինչո՞ւ
— Վո՞ր պատմվածքը ձեզ դուր չեկավ։ Ինչո՞ւ։
— Վո՞ր հեղինակի պատմելու յեղանակը հավանեցիք։ Ինչո՞ւ։
— Վո՞ր բանաստեղծությունը հավանեցիք ըստ ձևի։ Ի՞նչը ձեզ դուր յեկավ այդ ձևում՝ պատկերնե՞րը, տողերի դասավորությո՞ւնը, թե այլ բան։
— Տարբերվո՞ւմ է արդյոք Ալ. Ծատուրյանի լեզուն Վահան Տերյանի լեզվից. համեմատեցեք այստեղ զետեղված բանաստեղծությունները յեվ հանեք յեզրակացություններ։
— Իսկ տարբերվո՞ւմ են այդ բանաստեղծությունները ըստ տաղաչափության։ Վո՞րն է հիմնական տարբերությունը։

---

— Կարդացեք Վ.րթ. Փափազյանի «Պատմվածքներ գյուղից» գիրքը։
— Կարդացեք Հ. Ձուղուրյանի «Զատոյի բախտի անիվը» վիպակն ամբողջությամբ։
— Կարդացեք Ա. Շահնազարյանի «Խավար աշխարհում» պատմվածքների ժողովածուն։

---



## IV· ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՄԻՅԵՎՆՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ

# Վ. ՓԱՓԱԶՅԱՆ

## ՄՇՈՒՇ

### 1

— Վե՛ր կաց, Ստեփա՛ն, կես գիշեր յեղավ...

Ճրագի աղոտ ու ծխախառն լույսի մեջ, ավազոտ, սևացած, խոնավ տախտակների վրայից ծվեների մի կույտ սավերացավ, բացվեց, ու նրա միջից գլուխը դուրս հանեց մի այլանդակ արարած։

Փոշոտ, միմյանց կպած յուղոտ մազերը ցնցվեցին յերկար-յերկար ստվերով։ Դեղնած; մրոտ ու պատառոտուն ցնցոտիները պարզվեցին լույսի մեջ, և մի զույգ խամրած ու քնաթաթախ աչքեր, արևակեզ ճակատի, խիտ հոնքերի տակից սևեռվեցին ձայնողի վրա։

— Վե՛ր կաց, ժամանակն է։

Յեվ մինչ ցնցոտիները մի կողմ եյին նետվում, ձայնողը շտապով հանվեց ու գնաց կծկվելու մութ անկյունի սև խշտյակի վրա։

Մի ամբողջ խումբ եր այդտեղ, այդ գծուծ ու խարխուլ վորջի մեջ, յերկար սև թախտի վրա միմյանց կողքի շարված, անորոշ գույներով և կատարյալ յուղոտ վերմակների տակ կուչ յեկած։

Յած առաստաղի և հողե հատակի նեղ տարածության մեջ ճրագի լույսը, ծուխի և դրսից յեկած խոնավ գոլորշու հետ, գերեզմանական մռայլ մշուշ եր գոյացնում։ Անկյունում դրված կուժը, այս-այն կողմ յերևեցող աղտոտ սունդուկները լիովին ծածկվել եյին դեղին ավազով, նավթով ու ամեն կողմից ներս խուժող մուրի խոշոր, սևացնող հատիկներով։

Ստեփանը յելավ։ Կոճկեց հագուստը, անկյունից կուժը առավ, յերկու բուռ ջուր նետեց յերեսին, միքանի կում խմեց, հորանջեց, քորվեց, ապա դանդաղությամբ գնաց դեպի դուռը։

— Շո՛ւտ գնա,—լսվեց վերմակի տակից,—Մկրտիչը քեզ է սպասում, վոր գա քնի։

Յեվ խրճիթի դուռը ճռնչաց։

Ստեփանը դուրս յելավ փողոց։

Անձրև էր։ Շեշտակի, ծեծող ու խարազանող անձրև։

Անձրևն սկսել էր մութը ընկնելուց, այժմ ավելի սաստկացել՝ մղվում էր քամուց, բախվում նավթահորերի տախտակյա բուրգերին, ճղփում էր ամեն կողմ լճացած ջրի ու նավթի վրա, թրջում սև, թաց, լպրծուն ու նավթից ճահիճ չեղած գետինը։

Մեքենաներից դուրս պոռթկացող շոգին ծանրացել՝ խողովակներից վիժող մրալի ծխի հետ էր խառնվում և ճնշիչ ու հեղձուցիչ՝ սփռվում էր գետնի չերեսին։

Յեվ այդ տխուր, թաց ու մթին գիշերվա մեջ, կապտադույն-միաձույլ չերկնքի տակ, նավթահորերի ճախարակները դռնչում էին ադմուկով, նասոսներից նետվող շոգու սյունյակները պայթում էին, բուրգերի կատարներին պատող լիսեռները տխրագին սուլում։

Քիչ հեռու, հնոցները վիշապային բոցավառ աչքերով փռնչում էին կատաղի, ու սավերախառն լույսով ներկում նավթի փրփուրը, գորշ, թանձր հեղուկը։

Հեռավոր, մութի մեջ գտնվող հանքերի միջից, մի առ մի ոռնում էին պատառում շչակների ձայները։

Յեվ այդ բոլորը խռնավության մեջ խլանալով, անձրևի բախման, մեքենաների դղրդյունի, ճախարակների հնչեղ չերերման ընկերակցությամբ ծանրանում էին նորից Ստեփանի սրտի վրա։

Դեռ չեր վարժվել։ Մի ամբողջ տարի չեր արդեն, բայց դեռ չեր սովորել այդ սոսկալի կյանքին։

Անընդհատ աղոտ հագուստի մեջ, նավթով շաղախված քնել էր նա այն վորջում, ցրտի, անձրևի տակ ժամերով նստած մեքենայի փոխանցող շարժումն էր ղեկավարել, գետնի խորքից սև հեղուկը հանել, նրա մեջ թրջվել էր, բորբոսնել, վոչ կիրակի չեր իմացել, վոչ տոն, վոչ ազատություն, վոչ էլ կանոնավոր, կշտանալու չափ հանգիստ։

Մի տարի չեր այդ ամենը։ Դեռ չեր ընտելացել։

Այժմ էլ գնում էր նա նորից այն սև, վերևից սրտամաշուք կերպով ծորող նավթի տակ, մշուշոտ ու դաժի խեղդիչ օդով լեցուն բուրգի մեջ նստելու։

Յեվ վոտները լպրծուն գետնի վրայից քարշ տալով, թրջված ու խոնավացած, անցավ նա հին ու կոտրտված գործիքների կույտի մոտից, ուր հսկում էր գիշերապահը լուռ, կծկված մի աղոտ մուշտակի մեջ։

Անցավ ապա կաթսայատան մոտով։ Բաց լուսամուտից չերևաց հնոցավառը։ Նստել էր կրակի առաջ, աթոռի վրա և թեյ էր խմում։

Բարձր, հացիվ լուսավորված մի տարածություն էր այն մթին անկյուններով, ուր աղմկում էր մեքենան, հնչում էր ճախարակը և տաս րոպեն մի անգամ լսվում էր նավթահան գործիքից դատարկվող հեղուկի շառաչը։

Ճախարակի մոտ, տախտակյա բարձր ծածկոցի տակ չեր չերևում Մկրտիչը։

Լսվում էր միայն նրա չերգի խռպոտ, ժանգոտ ձայնը։

Ստեփանը կամացուկ վոտքը դրեց տախտակե աստիճանին ու բարձրացավ։

Հերթը իրենն է այժմ։ Մկրտչի տեղը պիտի բռներ։

Մկրտիչը տեսավ նրան և չերգը ընդհատեց։

— Յեկա՞ր,—ասաց նա.—սպասիր «ժալոնկան» հանեմ։ Մեկ տակից կքաշես, չերկու՝ վերևից։

Ճախարակն այժմ ծանրությամբ էր գործում։ Հևալով իր վրա չեր ժողովում նորից դուրս չեկող նավթոտ չվանը։ Ցայտող հեղուկի ցնցուղները վողողում էին նստողների հագուստն ու դեմքը։

— Քիչ այն կողմը նստիր, վոր շատ չթրջվես,—խրատեց Մկրտիչը.—գազը շատ է նեղացնում։ Դուրսը խոնավ է, չի ցրվում։

Խոսում էին գոռգոռալով։ Մեքենայի և ճախարակի աղմուկը խանգարում էր լսելու իրար։

— Ինչ էլ խորն է,—գոռաց նորից Մկրտիչը.—տակիցն եմ քաշում. կասես անտակ լինի… Զքնես, հա. թե չէ ժալոնկան վոր կնաց վերև—կառավարչի ձեռքից չես պրծնի։

— Չեմ քնի։

— Խաղ ասա, վոր չքնես։

Ժալոնկան դուրս է գալիս։

Մկրտիչը թողեց, վոր գործիքը հորի բերանից քիչ էլ բարձրանա, հետո չերկաթե չերկար ձողով մղեց նրան հեռու, իջեցրեց և չերբ լեզվակը տախտակին առավ՝ հեղուկն սկսեց շառաչյունով հոսել տախտակի մեջ։

— Դե՛հ, այժմ ա՛ռ,—նա Ստեփանին տվեց զսպիչ կոթը։ Ստեփանը տեղավորվեց։ Գործիքը շարժեց, մեքենայի կաշին կոթովը մի անիվից մյուսին անցկացրեց և թողեց, վոր ժալոնկան դղրդյունով իջներ հորը։

Ապա մեջքը տախտակին տվեց ու լուռ մնաց։

Քիչ հետո Մկրտիչը բերեց թիթեղյա թեյամանը, մի բաժակ, չերկու կտոր շաքար։ Հետո «բարի գիշեր» ասաց ու հեռացավ։

Մթին տարածության մեջ Ստեփանը մնաց մենակ։

2.

Ելեկտրական մի թույլ, շատ աղոտ ճրագ էր, վոր նշմարելի չեր դարձնում մեքենայի փայլող մասերն ու ճախարակի շարժուն կույտը։

Ստեփանը մի քանի անգամ ուշադրությունը կենտրոնացնել ճըգնեց նավթահան գործիքի յելևեջի վրա: Սպասեց իջնելուն, հաշվեց, թե մինչև քանի համրելը յելնում եր դուրս:

Բայց այդ յերկար չտևեց: Ուշադրությունը հեռացավ գործիքից, հորից, և Ստեփանն սկսեց լիովին այլ, այդտեղից ու ամբողջ հանքերից դուրս բաների մասին մտածել:

Կատարվեց այդ անզգալապես, ինքնիրեն:

Մտածեց նախ հետևյալ ազատ որվա մասին: Տեսնենք, ինչ եր անելու վաղը:

Նախ, ինարկե, մի կուշտ կքներ: Ո, շատ կուշտ:

Ապա անշուշտ կիջներ քաղաք: Ընկերներ կլինեյին: Գինետուն կմտներ իսկույն: Ել ուրիշ վորտեղ, կամ ինչ պիտի անեյին, յեթե յեղանակը մնար այդպես անձրևային ու խոնավ:

Գինետուն, խմել այս խանութից այն խանութ, հայրենակիցների խղճուկ տներ, դարձյալ խմել, թղթախաղ...

Յեվ վերջապես դարձյալ դեպի նավթի թացությունն եյին գալու, բուրգի ամայության, շրջապատող աղտ ու մուրի մեջ:

Ճախարակը հևում եր, գործիքը նավթով լի վեր եր յելնում: Հեղձուցիչ մի գազ մթնացնում եր լույսը: Բուրգի յուրաքանչյուր տախտակից, ամեն անկյունից նավթը կաթում եր, ծորում անընդհատ, ընկնում եր ու ճփփում լճացած կույտերի մեջ, լվանում ճախարակը, Ստեփանի նստարանը, խարխուլ ծածկոցը, վոտներն ու շորերը:

Մարդկային վոչ մի ձայն:

Մեքենան ու ճախարակը, անձրևի շառաչն ու լիսեռնի սուլումը, շոգու պոռթկոցը, հնոցի հեռավոր մռնչյունը... Դրանք եյին ձայները, ձայների մռայլ համերգը:

Յեվ դեռ վորքան յերկար, յերկար պիտի նստեր այդ ամենի մեջ: Ամբողջ վեց անընդհատ ժամեր անշարժ, բուրգի յերեք դռներից փչող քամիների տակ, անկողնից նոր յելած, դողալով ու սըրսրթալով:

Ատամները կարկափում եյին, թմբիր եր գալիս վրան, քնել եր ուզում:

Ու չքնելու համար սկսեց յերգել:

Յերգել ու մտածել:

Բերանը յերգում եր, իսկ միտքը գործում այլ ուղղությամբ: Ոստնում եր նա յերգից, նավթահանքերից, քաղաքից հեռու, շատ հեռու: Մի վայրկյանում անցնում եր լեռ ու ձոր, գնում և գնում...

Ու հալվում եյին, անհետանում մեքենաները, նրանց շունչը:



Չկար, նույնիսկ չեր զգում այլևս վոսկրների այն խուլ ու սոսկալի ցավը, վոր սաստկանում եր ամեն անգամ:

Այժմ սլացել, անցել եր նա տարածության մեջ և գնում եր հրճվանքով կանգ առնելու մի ծառալից հովտի խորքում:

Յեվ այն գարնանային շքեղ ու պայծառ որով, զով արևածագին, թռչունների զվարթ համերգի, առվակների հանգստաբեր խոխոջի և ծառերի մեղմ շշուկի գիրկը:

Գյուղն եր այն, իր գյուղը, ծանոթ ծառաստանն ու ջրերը, հոտն ու համերգը, դաշտն ու հովիտը:

Ծաղիկների, այն անհամար, գույնզգույն ծաղիկների բուրմունքը լցրել եր ոդը:

Բուրում եր հողը, բուրում յուրաքանչյուր ծիլ ու խոտ:

Այլևս նավթ չեր բուրողը: Գետինն այդտեղ զզվելի յուղոտ ու թաց չեր, սև նավթակույտեր, կամ աղաջրի բաց-արնեգույն լճակներ չեյին նրա շուրջը վխտում, այլ միմիայն ջինջ ու կարկաչուն առվակներ, պղպջուն, սառնորակ աղբյուրներ, ցոլուն ու վետ-վետ խայտանքներով ծփացող լճակներ և այդ ամենին սավերող շշուկալից ուռիներ, շքեղահասակ բարդիներ...

Ահա և ճռճռացող սայլեր, վորոնց քաշում են փնչալով քայլող գոմեշները: Հետո նախիրն ե գյուղի: Միմյանց են խառնվել բառաչ ու մայուն, շների հաչոցներ ու հովիվների, նախրապանների· կանչեր...

Քիչ հեռու առուն եր, վրան ջրաղացը: Գործում եր: Ջաղանակի չոր ու արագ ճաթռտոցների հետ խառն քարերի խուլ շփումը հասնում եր ականջին: Հասնում եր նաև աղացվող ցորենի հոտը· այն հատուկ ախորժալի բուրմունքը, վոր միշտ գալիս ե ջրաղացներից:

Առվից նա վոստնում եր աշխուժով: Մոտ եր այլևս իրենց տունը: Բայց նա առաջ մեկ կռանում եր, ձեռքերն ու յերեսը լվանում սառնորակ ջրի մեջ ու դառնում դեպի իրենց խրճիթը: Վորպիսի հաճույքով նայում եր նա յուրաքանչյուր քարին, գերանին, վոտք եր դնում հողոտ պատշգամբի վրա, ժպտում եր ոճորքից կախ ընկած խնոցուն, գգվում աղոտ ու քծնող գամփռին, նստում կոշտ նստարանի վրա, գիրկն առնում մեջքն ուռցնող ու քսմսվող կատվին...

Յեվ մայրը... Ահա իր պառավ, իր կորաքամակ մայրը միշտ գործունյա ու շարժուն, ձեռքերը կոշտացած, մրոտ ու այրոտ:

Նոր եր թոնիրը վառել, աչքերն եր տրորում ծխից, սևացել եյին ձեռքերը, բայց նա վորքան հրճվանքով վազում եր դեպի նրա

գիրկը, սիրով համբուրում ձեռքերը, գլուխը դնում նրա կրծքի վրա ու լալիս իր կրած տառապանքները։

Ահա նրան շրջապատում եյին նրա քույրերն ու յեղբայրը։ Ամենքն ուրախ եյին, ակներև ուրախ, վոր իրենց Ստեփանը յեկել եր առողջ, տուն վերադարձել ու պանդխտության մեջ չեր մնացել, կորել կամ մեռել։

Սառան, մեծ քույրը դուրս եր նետվում հորն իմաց տալու։ Գյուղացիները հավաքվում եյին. ներս եյին լցվում ազգականները, ծանոթ կանայք, գրեթե ամբողջ գյուղը։

Ու նա ամենքին բարևում եր, ամենքին ճանաչում։

Արտաքուստ վատ չե՞ր հագնվել։ Վո՛չ, ինչու՛,—վրան սև մետաքսե արխալուղ կար, մահուդե չուխա յել ուներ այժմ, արծաթի գոտի կապած, յերկար ու փայլուն կոշիկներ, մորթե նոր գլխարկ։

Ճշմարիտ ե, յերկար եր տառապել նավթի մեջ, գրեթե բորբոսնել եր խոնավությունից, սակայն նա այժմ պիտի ցույց տար գյուղացիներին, վոր ունի հագուստ և վոր չի վերադարձել ձեռնունայն…

Իրավ ե, գունատ եր մի քիչ, դուցե և նիհար, ադեղացած— բայց մի քանի ամիս միայն իրենց սքանչելի լեռների օդի ու ջրի մեջ, մի քանի ամիս միայն հեռու նավթից ու ծխից,—և նա, դաշտային աշխատանքով կազդուրված, կլիներ դարձյալ հուժկու, լայնաթանջ, առողջ Ստեփանը։

Այլևս նա չեր տեսնի նավթն ու մրոտ շրջապատը, մութ անձրևոտ յերկինքն ու ծուխի մեջ սևացած գինետունը. այլևս չեր քնի միշտ վախվխելով, թե ահա կզարթեցնեն, անկողնից դուրս կմղեն, կնետեն մազոտ անձրևի տակ ու կասեն։

— Վե՛ր կաց, Ստեփա՛ն, գնա գործելու։

Վո՛չ, այլևս չեր վերկենա նա անժամանակ, կես գիշերին։ Կքներ, կուշտ, շատ կուշտ. քունը չեյին խանգարի վոչ մեքենայի դանչյունը, վոչ ել անտանելի ճախարակի ճռինչը։

Հեռո՛ւ, հեռո՛ւ այլևս այդ ամենից։

Նա այժմ իր արտը կգնար, յեզները կլծեր, գութանի մաճը ձեռքը կառներ, հողը կակոսեր և լեռները կթնդացներ հնչեղ հորովելներով, զվարթ յերգերով…

3.

…Սոսկալի մի շռինդ եր, վոր լսվեց առաջ։ Հետո կարծես շենքը փուլ յեկավ ու բազմաթիվ ռումբեր պայթեցին միմյանց յետևից։

Ստեփանը ցնցվեց, գլուխն առավ տախտակե ծածկոցի պատին և նա վեր թռավ։



Սկզբում չհասկացավ, թե ինչ եր այն, վո՞րտեղ եր ինքը, ինչու պայթումները շարունակվում եյին կատաղի և տեղական հարվածների նման և ինչու շուրջը մութն եր, խոնավ։

Աչքերը տրորեց ու մի վայրկյանի շվարումից հետո՝ սկսեց ըմբռնել կատարվածը։

Բնազդաբար, արագ շարժումով դուրս մղեց ճախարակի կաշին, հետո ցած վոստնեց, վազեց դեպի մեքենան և շտապեց կանգնեցնել նրա տագնապալից պտույտները։

Յեվ յերբ վերջացրել եր այդ ամենը, վեր նայեց ու գունատվեց։

Ժայռնկան եր։ Բարձրացել եր վեր, անցել լիսեռներից ու փշրելով բուրգի կատարը՝ շառաչյունով նետվել նրա զառիվայրի վրա։

Քնել եր։ Մի րոպե յեր միայն քնել և այդ րոպեյի մեջ տեղի յեր ունեցել փորձանքը։

Ու գյուղ, լեռ և ձոր, կարկաչ, համերգ, սեր և հայրենի տան հրապույրը վայրկենապես ցնդեցին վորպես շոգի, հալվելով անհետացան, վորպես գեղեցիկ յերազ։

Նորից նա իրեն զգաց նավթի, խոնավ, մթին բուրգի միջավայրում։

Առաջին յեկողը գիշերապահը յեղավ։

Աղմուկը հանել եր նրան իր կծկված դրությունից։ Չեր հասկացել յեղածը, բայց աղմուկի մեծությունը յենթադրել եր տալիս, վոր փորձանք ե տեղի ունեցել ներսում։

Մեքենան կանգ եր առել։ Հաջորդել եր խորին լռությունը։ Խավարը, անսովոր լռության մեջ, կարծես ավելի յեր թանձրանում։ Հեռու անկյուններում մեկ-մեկ ցոլում եյին նավթի շիթեր, վորպես յերկաթե ձողի մի կող։ Անթափանց մութը ջնջում եր բուրգի պատերը և շրջապատն ամբողջ անհուն տարածության վերածում։

Ստեփանը գլխակոր մնացել եր կանգնած մեքենայի կողքին։ Վո՛չ իսկ մտածել եր կարողանում։ Մի տեսակ անտարբերություն համակել եր միտքը։ Խուլ կսկիծն եր միայն, վոր այրում եր վակըների ներսը, այլև քնելու անհելի փափագը։

Գիշերապահը մոտեցավ, զննեց նրան մոտից ու ճանաչեց։

— Դո՞ւ յես,—ասաց նա.—ինչ յեղավ, ինչ աղմուկ եր այն

Ստեփանը բութ հայացքն ուղղեց դեպի նա և անտարբերությամբ պատասխանեց.

— Ժայռնկան եր. Դուրս թռավ…

Ծերունին հասկացավ։ Վեր նայեց։

— Վա՜յ, - գոչեց նա, - քնե՞լ եյիր։

Մի րոպե Ստեփանը վոչինչ չխոսեց։ Հետո տրորեց ճակատն ու մռմռաց։

— Չգիտեմ... Մտածում էի...

— Մտածում էիր.. —զարմացավ գիշերապահը։

Հետո գլուխն օրորեց, նայեց նրան մի րոպե և խրատական ու հանդիմանական խառն շեշտով ասաց։

— Քեզ ի՞նչ կսազի ախր մտածելը, հը՞... Շատ հարուստ ես, վոր դեռ գործի ժամանակ մտածում էլ ես...

4.

Գործից դուրս հանեցին։ Ուրիշ վոչինչ։ Վոչ տուգանեցին, վոչ հանդիմանեցին։ Կառավարչի յերեսն անգամ չտեսավ։ Հաշվապահը կանչեց, հաշվեց ռոճիկի մնացորդը, պարզեց նրան ու ասաց.

— Ուրիշ տեղ գտիր քեզ համար։

— Դո՞ւրս եք անում։

— Այդպես է հրամայված։

Զարմացավ, վոր չհուզվեց անգամ։ Սպասածներից մեկն էր այդ։ Բացի այդ՝ ասես բթացել էին ջղերը։

Առհասարակ, առավոտյան զարթեցնելուց հետո, զգում էր իրեն շատ հոգնած, ջարդված ու թույլ։ Ուղեղը չէր գործում. մշուշի մեջ էր ամեն ինչ. կարծես միտքն էլ տկարացել էր, մյուս զգայարանքներն էլ։

Առավ փողն ու գնաց։

Յերբ ընկերները տեսան, - հասկացան։ Լուռ մնացին։ Վոչ վոք խորհուրդ չտվեց։ Ի՞նչ խորհուրդ։ Խորհուրդը չէր օգնի այդտեղ։ Մխիթարանքն անգամ ավելորդ կլիներ։

Ունեցածը հավաքեց Ստեփանը. տեղավորեց սնդուկում։

Կարծես մեքենա լիներ. անզգա, դանդաղ, անգիտակցորեն գործող ինքնաշարժ։

Հետո մի վայրկյան շվարած յելավ կանգնեց բնակարանի առաջ, գնաց, նայեց խանութներին, գրտի դեմ նստեց ինչ-վոր աղտոտ տախտակների վրա միչևիսկ մի ժամի չափ մնաց այնտեղ անձրևի տակ, թմրածի նման. . Յեվ վերջապես դարձյալ բնակարան մտավ ու քնեց։

— Հիվանդ է, - ասաց մեկը —պետք է հիվանդանոց ուղարկել։

Յերեկոյան դեմ, սակայն, Ստեփանը զարթնեց։ Հինգ րոպեի չափ անկողնի վրա նստած՝ անշարժ հայացքով նայեց տարածության մեջ։ Հետո իջավ, լվացվեց, հագավ մաքուր շորերն ու գնաց դեպի կայարան։



Տեսնող յեղավ, վոր սնդուկից թղթեր և ծրարներ էլ հանեց, չուխայի ծոցը կոխեց։

Ընկերներից մեկը փորձեց խոսեցնել նրան։

-- Գիտե՞ս, Ստեփա՛ն, հիվանդ ես յերևում, գույն չկա վրադ, գնա՛ բժշկի մոտ։

Ստեփանը կանգ առավ, լսեց ապուշի նման մի րոպե, նայեց խոսողին, հետո անխոս հեռացավ։

Սկսում էր մթնել։ Աշնանային թաց ու անձրևոտ կարճ օրեր էյին։ Փոքր ինչ ևս—ձմեռը բաղխելու յեր դռները։ Զգալի ցուրտ էր արդեն, մանավանդ խոնավ։

Բայց Ստեփանը վոչինչ չէր զգում։

Քայլում էր, բարակ չուխա յեր հագինը։ Առանց կրկնակոշիկի, ցեխերի ու նավթակույտների միջով, նեղ ու լպրծուն շավիղից էր գնում։

Կարճ ճանապարհ էր այդ։ Չէր շտապում։ Կհասներ միշտ վորևէ գնացքի։

Շուրջն էլ չէր նայում։ Մի տեսակ անզգայություն համակել էր նրան։

Սառն ու անտարբեր, թեթև ակնարկներ էր միայն նետում նավթահորերին, կաթսաների բոցավառ յերախներին ու անցնող աղտոտ-մրոտ բանվորներին։

Նույն անտարբերությամբ էլ տոմսակը գնեց, իսկույն վագոն մտավ և կծկվեց մի անկյունում։

Հոգնած էր, շատ հոգնած։ Կուզեր նստել, պառկել, վոչինչ չտեսնել ու վոչինչ չզգալ։ Թվում էր, թե յերազի մեջ էր կատարվում ամեն ինչ։ Գնացքը շարժվում էր, սլանում էին մութ տարածության մեջ ճրագներ, տների ստվերներ, հետո դաշտ, ինչ-վոր լճեր, ապա ծխի սյունյակներ, բազմաթիվ կայծեր, շենքեր։

Նույն տեսակ, յերազի մեջ յեղածի նման, իջավ գնացքից, անցավ բազմության միջով, յելավ ինչ-վոր փողոց ու քայլեց։

Գնում էր ստվերի պես, մշուշալից ուղեղով և մշուշոտ փողոցներից։

Միքանի անգամ կանգ առավ ամայի և մութ անկյուններում, ճակատը կնճռեց, ճիգ գործեց խորհելու, թե ո՞ւր էր գնում և ինչո՞ւ։

Ամեն անգամ սակայն մի բան արգելում էր մտքերի կապակցությանը։

Մտածությունները վոստոստում էին, թերատ պատկերների մի քաոս էր գոյանում։

Գնալ ծանոթների մոտ։ Որինակ՝ Կարապետենց տունը։ Ընտանիք ուներ։ Բանվոր էր Սև-քաղաքում։ Տանը չէր լինի, բայց կլ-

գար... Սակայն չխմե՞լ առաջ մի բաժակ ողի, մի տաք բան։ Մըրսում եր, խոնավությունը թափանցում եր կուրծքը։

Ու իրենց գյուղը վերադառնալու մի հանկարծակի կարոտ համակեց նրան։ Գնում եր կայարան։ Փողը մոտն եր։ Հարկավոր չեր վո՛չ աղտոտ անկողինը, վոչ ել հանքերի մեջ մնացած մյուս իրեղենները։ Վոչինչ չեր ուզում, միայն իր գյուղական տունը, իր գյուղի մաքուր ոդը, պայծառ յերկինքը։

Բայց վո՛չ, պետք եր ընծաներ քույրերին, յեղբայրներին, պետք եր դեռ հագուստ և մանավանդ փող, հոր պարտքը, իրենց պարտքը վճարելու փող։

Վո՛չ, դեռ պետք եր մնալ, դարձյալ մտնել նավթի մեջ, մուրի տակ, դարձյալ խոնավության մեջ բորբոսնել, անքուն մրսել քամիների տակ, տանջվել ու տանջվել։

Իսկ առ այժմ, այդ րոպեյին, նրան հարկավոր եր մի տաք տեղ, մի բաժակ թեյ և մի ծածկոց։

Անձրևը մաղում եր, խոնավությունը թափանցում եր մարմնի մեջ ամեն կողմից։

Հիվա՞նդ եր արդյոք։ Չլինի՞ իրավ մրսել եր գիշերը հակադարձ քամիներից։

Խեղդվում եր. կողքի սոսկալի մի խիթը շնչասպառ արավ նրան։

Ճիգ գործեց, կուրծքը ցցեց, ուզեց յելնել։

Բացեց բերանը, հուսահատ մի ճիչ արձակեց և թուլացած ընկավ...

Մութը թանձրանում եր հետզհետե. մառախուղը նստում եր փողոցներում։ Լապտերները աղոտ ու ցորնագույն լույս եյին տարածում փոքրիկ շրջանների մեջ։

Յեվ անձրևը մաղում եր սրտմաշուկ կերպով, մաղում անընդհատ, անվերջ։

5.

Վերջապես տաքանալ եր սկսում։ Դողն անցնում եր քիչ-քիչ։

Ավելի և ավելի փաթաթվեց մաքուր ծածկոցով ու կամեցավ քնել։

Հիվանդ եր։ Հաստատել եյին այդ և ընդունել հիվանդանոց։ Թեյ ել եյին տվել։ Խնդրել եր, բերել եյին։ Լավ եր, տաքացել եր բավական։ Մրսել եր անշուշտ. գուցե թեյը քրտնեցներ։ Գիտեր, վոր կարևոր եր քրտնելը։ Գյուղումն ել պատահել եր նման դեպք և մայրը վերմակների տակ դրած քրտնացրել եր նրան ու լավացրել։

Նա լավ եր հիշում այդ դեպքը։ Սիրելի պառավն անմիջապես հանվեցրել եր, կուրծքն ու մեջքը լավ շփել ճարպով, հետո վոտները տաք ջրի մեջ դրել, իրեն ել վերմակով փաթաթել, ստիպել



եր խմել յերկու բաժակ արքայամորու թեյ և այս ամենից հետո պառկեցրել եր, տան մեջ յեղած վերմակներով ծածկել վրան, ինքն ել սնարին նստել ու հսկել եր մինչև լույս։

Ո՞ւր եր այժմ այդպես բան։ Վո՛չ տաք ջուր, վո՛չ վերմակներ, վո՛չ հայրենի սենյակն ու ծխից սևացած գերաններով առաստաղը։

Ճերմակ պատեր եյին շուրջը։ Քիչ հեռուն — մահճակալներ։ Մարդիկ կային նրանց վրա։ Փաթաթվել եյին ու քնել։ Խորդում եյին, զանազան փշաքաղեցնող ձայներ հանում, տնքում, հառաչում։

Արդյոք կես գիշե՞ր եր, թե՞ ավելի ուշ։ Յերևի կես գիշեր, վորովհետև վոչ մի ձայն չկար. վոչ կառքի, վոչ խոսակցության։

Յեվ զգաց, վոր ավելի և ավելի յեր տաքանում։ Հնոց եր ամբողջովին։ Այրվում եյին այտերը, ձեռքերն ու շրթունքները։ Լեզուն չորանում եր, չեր շարժվում բերանի մեջ։

Իսկ քրտինք չկար։ Զարմանալի բան։ Այդքան տաքություն և քրտինքի վոչ մի նշան։ Գոնե քներ։ Բայց միթե քնած չեր արդեն։

Ահա զգում եր նա. վոտները գետնին չեյին առնում այլևս. թռչում եր վոչ թե փռված փորի վրա, ինչպես թռչուն, այլ ուղիղ կանգնած, առանց թևերի, առանց ձեռքերն իսկ տարածելու։

Իսկ տներն ու դաշտերը, լեռներն ու ձորերը վոտքի տակ հետևում եյին միմյանց, վազում, հետ գնում։

Ամենից առաջ գետի շռինդն եր, վոր հնչեց ականջին։ Այդ գռանչոցը չդադարեց։ Խլացնում եր ամեն ինչ։ Մի տասնյակ թմբուկներ լինեյին կարծես, վոր մռնչում եյին նրա ականջում։

Ահա և հսկայական ապառաժոտ կողեր, վիթխարի լերկ գանգերի նման փայլուն կատարներ...

Բայց վորքան տոթ եր այդտեղ, վորպիսի հեղձուցիչ ոդ, մեռելային անշարժություն... Շնչել չեր լինում։

Այնուամենայնիվ քիչ-քիչ դրանք ել հալվել սկսեցին։ Գետի ձայնն եր միայն, վոր թեև մեղմացած, բայց զնգում եր ականջին։ Իսկ ապառաժներն ու ձորերը խառնվում եյին իրար, միապաղաղ սև զանգված կազմում ու հոսում-անցնում։

Յեվ մոռացությունը հաջորդեց դրան։ Մի թանձր, ճնշող մոռացություն, վոր չնայելով նրա ճիգերին, հրեշի նման պարզեց ճանկերը, վար նետեց նրան և ծածկեց անթափանց խավարի տակ։

---

Տասներորդ որվա մթնաշաղին Ստեփանն իրեն լավ զգաց։ Չըկար այլևս մղձավանջը։ Բայց շնչել չեր կարողանում կարծես թոքերը հանել եյին կրծքից։

Դատարկություն եր այնտեղ։

Չնայելով դրան, մշուշոտ չեր ուղեղն այլևս։ Հասկանում եր ամեն ինչ. տեսնում եր, ճանաչում հիվանդապահին։

Ճանաչեց նաև մի մաշված աղջկա, վոր խնամում եր իրեն, իսկ այժմ իրեն շրթունքներին եր մոտեցնում բաժակը և մեղմ ասում։

— Խմիր, դեղ ե։

Հետո կամաց-կամաց տեսավ, վոր վառեցին լույսերը։ Աղոտ եյին ու կարծես փոշոտ։ Նարնջի գույն ունեյին, կարմիր ու դեղին

Գնացող-յեկողներ ել յեղան սենյակի մեջ։ Ինչ վոր մարդ մոտ յեկավ, բաժակը առաջ ձեռքի մեջ պահեց, հետո ցած թողեց, գնաց

Դրանից հետո քիչ-քիչ լույսերն սկսեցին աղոտանալ, կարծես հեռանում եյին արագ, մի առ մի մարում։ Հետո զգաց, վոր հետըզ հետե հալվում անհետանում եյին նույնպես պատերն ու առաստաղը, մահճակալները, ամեն ինչ։ Բայց յերկինքը, պայծառ արևով վողողուն յերկինքը, լողում, անցնում եր նրա գլխի վրայով։

Սիրտն ուռչում եր ուրախությունից, տրոփում եր պայթելու չափ։ Այնտեղ, իր շուրջն եյին նորից մայրն ու հայրը, քույրն ու յեղբայրները։

Յեվ ուրախ եյին. ավելի ուրախ, վոր իրենց Ստեփանը յեկել եր, առողջ տուն եր վերադարձել և պանդխտության մեջ չեր կորել, կամ մեռել..

Այնքան մեծ եր իր ուրախությունը, այնքան լի յեր կուրծքը բերկրությամբ վոր շունչը բռնվեց և թվաց, թե խեղդվում ե..

Դեմքը, սպիտակ այն դեմքը, այժմ սկսում եր ստանալ ծանր և լուրջ խաղաղություն։

Հարթվում, հղկվում եր ամեն կնճիռ։ Չկային այլևս վշտալից ակոսները։

Շրթունքների անկյուններում միայն սառել-մնում եյին ինչ վոր խորունկ, խորհրդավոր գծեր, վորոնք բողոքի զայրագին շեշտեր լինեյին կարծես՝ ուղղված մթնոլորտը չափազանց ճնշող անարդարությունների դեմ։

Դրսում մութը թանձրանում եր շարունակ, մառախուղը պատում եր փողոցները, լապտերների լույսերն այլևս ուժ չունեյին և անձրևը մաղում եր, սրտամաշուք կերպով մաղում անընդհատ...

---

— Ի՞նչ ժամանակաշրջան է ընդգրկում այս պատմվածքը:
— Որտեղի՞ց էր եկել Ստեփանը Բաքու և ի՞նչն էր դրդել նրան գալու:
— Իր ծագումով նա գյուղացի՞ էր, թե քաղաքի բանվոր:
— Ի՞նչպես էր նա զգում իրեն քաղաքում և մանավանդ նավթահանքում:
— Նավթահանքում աշխատելիս ինչո՞ւ էր նա միշտ երազում գյուղի



մասին և ինչո՞ւ էր այդ գյուղը, որից նա փախել էր ծայրահեղ չքավորության ճնշման, կրկին նրան թվում գեղեցիկ ու սիրելի:

— Վերջին վայրկյանին ինչո՞ւ նա փոխեց իր գյուղ վերադառնալու մտադրությունը՝ հիվանդությո՞ւնն էր պատճառը, թե մի այլ բան:

— Ի՞նչ պիտի գտներ նա գյուղում, եթե նույնիսկ չհիվանդանար և վերադառնար:

— Բնութագրեք Ստեփանին, որպես գյուղից նոր քաղաք եկած բանվորի. բնորոշեցեք նրա հոգեբանության հիմնական գծերը:

---

— Այս պատմվածքից ելնելով՝ բնորոշեցեք այն պայմանները, որոնց մեջ ապրում էին այն ժամանակվա բանվորները Բաքվում:

— Այս պատմվածքի համապատասխան տվյալների հիման վրա փորձեցեք պարզել, թե ի՞նչ էր դառնալու Ստեփանը, եթե չհիվանդանար և շարունակեր իր աշխատանքը նավթահանքում:

— Ինչո՞ւ է այս պատմվածքը կոչվում «Մշուշ»: Ի՞նչ է ուզեցել բնորոշել դրանով հեղինակը:

— Ի՞նչ է ուզեցել ասել հեղինակը՝ Ստեփանին այդպիսի մի վախճան տալով՝ արդյոք այս հանգամանքի մեջ չի՞ քողարկված հեղինակի վերաբերմունքը դեպի իր նյութը:

— Կարելի՞ է արդյոք Ստեփանի մահվան փաստից եզրակացություն հանել, որ ընդհանրապես բոլոր գյուղից եկած և բանվորության մտած չքավորների վախճանն այդ էր լինում: Ի՞նչ դրություն կստեղծվեր, եթե դա այդպես լիներ:

— Վերլուծեցեք այս պատմվածքի գլուխներն առանձին-առանձին և փորձեցեք պարզել, թե հեղինակի ոճի, պատկերների, նույնիսկ առանձին նախադասությունների և բառերի մեջ անգամ չի՞ երևում արդյոք հեղինակի կանխակալ վերաբերմունքը դեպի իր նկարագրած դեպքերը: Ուշադրություն դարձրեք մասնավորապես ածականների վրա, որոնցով նա բնորոշում է թե եղանակը, թե նավթահանքի զանազան իրերը, թե մարդկանց:

— Ո՞ւմ հոգեբանությամբ է նայում հեղինակն իր նկարագրած դեպքերին ու շրջապատին՝ իր սեփակա՞ն, թե՞ Ստեփանի:

---

— Ինչպիսի՞ գրող կարելի է անվանել Փափազյանին այս պատմվածքի հիման վրա՝ հոռետե՞ս, թե՞ լավատես: Ապացուցեք ձեր եզրակացությունը պատմվածքում նկարագրված փաստերով և համապատասխան մեջբերումներով:

# ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

## ՀՐԴԵՀԸ ՆԱՎԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

(Մի պատկեր Բաքվի մշակների կյանքից)

— Աղա, զավոդն այրվում է։

Իվան Գրիգորիչ Մարությանը մի միջահասակ, չաղ և բավական ջահել մարդ եր՝ յեվրոպական սև հագուստով։ Նրա լիքը, կլորակ և մաքուր սափրած յերեսի կարմիր գույնը մի վայրկյանում թռավ գժբաղդ լուրը լսելու ժամանակ։

— Յե՞րբ, վոր ժամին և զավոդի վո՞ր կողմից է սկսել հրդեհը, — վերին աստիճանի անհամբերությամբ և հրամայաբար հարցնում եր նա, յերկու փոքրիկ և խորամանկ աչքերի բիբերն արագությամբ շուռ տալով և ձեռքերը տարածելով դեպի առաջ։ Կարծես թե նա ուզում եր կատաղաբար հարձակվել չարագուշակ լրաբերի վրա և տեղն ու տեղը խեղդել նրան։

— Կրակը յերևացել է մոտավորապես յերեք քառորդ ժամ սրանից առաջ, — դողդոջուն ձայնով պատասխանեց լրաբերը, յերկյուղածությամբ յետ ու յետ քաշվելով։ — Յես նոր գործս վերջացրել և պատրաստվում եյի քնելու, յերբ ականջիս հասավ մի տրաքոցի ձայն։ Ձայնը սաստիկ եր, կարծես թե ամբողջ զավոդը քարուքանդ եր լինում... Յես մի քանի րոպե մնացի շվարած... չգիտեյի ինչ անել, ուր վազել։ Մի կերպ խելքս գլուխս հավաքեցի և դուրս թռա. հենց այն վայրկյանին, յերբ յես կամենում եյի առաջ վազել, մեկ էլ տեսնեմ աջ կողմից, կաթսաների բաժնից, բոցավառ ծուխը դուրս է փչում... Իսկույն հասկացա, վոր մեծ նավթակաթսաներից մեկը պատռվել է։ Կրակը դիմում եր դեպի յուղ մաքրելու բաժինը։ Մշակները զարթնել եյին և վորը տկլոր, վորը հագուստով, ամենքը դիմեցին կրակ յերևացող տեղը՝ հրդեհի առաջը կապելու, իսկ յես իսկույն, առանց գործակատարից թույլտվություն խնդրելու, վազեցի քաղաք, վոր ձեզ հայտնեմ.

Իվան Գրիգորիչի կուրծքն անհամբեր շնչառությունից արագությամբ բարձրանում և ցածրանում եր։ Մի քանի վայրկյան լուռ մտածելուց հետո, նա դիմեց ծառաներին, վորոնք բերանները բացած ուշադրությամբ լսում եյին լրաբերի խոսքերը։

— Այս վայրկյանիս լծվի իմ կառքը, յես առանց րոպե ուշանալու պիտի գործարան հասնեմ։

Ծառաները վազեցին աղայի հրամանը կատարելու։

— Վերջն իմ տունս կքանդեն, ինձ կսնանկացնեն, յետին աղքատության մեջ կգցեն, որվա հացին կարոտ կդարձնեն այս անիծվածները...

— Աստուծո կամքն է, աղա, մենք ինչ անենք. մենք խո դիտմամբ չենք կրակ գցում ու այրում ձեր գործարանը...

Լրաբերն այս ասելով գդակը ձեռին կանգնեց պատի տակ։ Ընդարձակ նախասենյակի պատից քարշ աված կանթեղի ճառագայթները, մի րոպե տարածվելով նրա նավթախառն մուրի մեջ կորած բարձր հասակի վրա, լուսավորեցին նրա սև և կեղտոտ դեմքը։

Խտաբույս հոնքերի տակից փայլեցին անսովոր վիշտ և հոգեկան տխուր տրամադրություն արտահայտող սև աչքերը։ Բայց գլխի ալեխառն մազերի բնական գույնը կորել եր թանձր կեղտի և նավթային մուրի տակ։

— Մշակն ով է, վոր նրա աստվածն ով լինի, — գոռում եր Իվան Գրիգորիչը կատաղի առյուծի նման։ — Մշակն աստված չունի, նրա աստվածը փայտն է։ Յեթե դուք աստված ունենայիք, մի տարվա մեջ իմ գործարանը յերկու անգամ չեր այրվի։ Յեթե դուք խիղճ և հոգի ունենայիք՝ ձեր կյանքը կզոհեյիք և չեյիք թողնի, վոր ձեր աղին, ձեզ կերակրողին վնաս հասներ։

— Աղա, ֆաետոնը պատրաստ է, ներս վազեց ծառան։

— Յես գնում եմ, դու յել վազիր այս րոպեյիս գործարան, — դարձավ աղան դեպի լրաբերը։

Միքանի րոպեյից հետո յերկու սևագույն նժույգներով լծած փառավոր կառքը թանգագին, տաք մուշտակի մեջ փաթաթված Իվան Գրիգորիչին տանում եր գործարան։

Այրվող գործարանը քաղաքից յերեք վերստաչափ հեռու յեր գտնվում։ Լրաբերը ճանապարհը կարճելու համար ծովի ափով եր գնում։ Լայնատարած ծովի ալիքների շփշփոցը, գիշերվա խավար մթնոլորտի մեջ տարածվելով, անախորժ, յերկյուղալի տպավորություն եր անում մարդու վրա։ Վոչ մի շնչավոր արարած, վոչ մի կենդանի առարկա չեր յերևում ծովափում, բացի այդ սև և վիթխարի մարդուց, վոր գիշերվա ուրվականի նման հսկայական քայլերով շտապում եր դեպի առաջ, խորն ավազի մեջ թաղելով իր վոտները։ Հանկարծ նա կանգնեց, կարծես թե մի բան մտաբերելով և

յերկու ձեռքը մեքենաբար խփելով ճակատին՝ մի րոպե անշարժ մնաց։

— Ո՛վ աստված, յեղբայրս և փոքր վորդիս հրդեհից քիչ առաջ պառկել եյին քնելու... բայց վորտե՞ղ եյին նրանք պառկել... այո, այո.. մտաբերում եմ, հենց այն կողմում, ուր կաթսան տրաքվել է... Նրանք, չդիմանալով մեր ընդհանուր սենյակի ցրտին, այս գիշեր տեղափոխվել եյին կաթսաների բաժինը՝ վառարանի մոտ քնելու։ Աստված իմ, ինչ կպատահի նրանց, յեթե ժամանակին չեն զարթնի.. այրվող նավթն ուղղակի նրանց կողմն եր ցատկում...Նրանք իմ աչքովս չնկան։

Յերկնակամարը կրակի լույսից շառագունել եր, քամու զորությունից բոցը կատաղաբար այս ու այն կողմ եր տարածվում։ Ամբողջ Սև-քաղաքը ծխի մեջ թաղվել եր Լրաբերն սկսեց իր հոգնած վառերին ուժ տալ։

Տեղ հասնելով, Իվան Գրիգորիչի առաջին հայացքը հազիվ կարողացավ ճանաչել կրակի և ծխի մեջ կորած գործարանը։ Սև-քաղաքի հասարակությունը պատել եր հրդեհի շուրջը, կազմելով մի ողաձև շրջան, վորի մեջտեղը այրվում եր մի ընդարձակ խարույկ։ Այս ու այն կողմերից վազում եյին մարդիկ, վորոնց դեմքերի վրա զարմացման նշաններ բոլորովին չեյին նկատվում։ Այսպիսի և սրանից ավելի զորեղ հրդեհները նրանց համար սովորական դեպքեր են։

— Աստված սիրեք... մոտեցեք... ոգնեցեք... մի վախենաք... յես փող կտամ, կվարձատրեմ ոգնողներին, – յեղավ Իվան Գրիգորիչի առաջին բացականչությունը Նա գլխակոր վազելով ամբոխի միջից՝ ձգտում եր դեպի կրակը։

— Մի մոտենաք, աղա... առաջ մի վազեք, վտանգալի յե, — գոչեցին այս ու այն կողմից, ամբոխի միջից յետ մղելով նրան։

Բոցը յերկու զորեղ մասերի յեր բաժանվել, վորոնցից մեկը դուրս եր գալիս միհարկանի տան փլատակված կտուրից, դռներից ու պատուհաններից.—այրվում եր յուղ մաքրելու բաժինը։ Իսկ տասն ու հինգ քայլ հեռավորության վրա, մի գետնափոր շինության միջից դուրս ձգվելով, բոցավառվել եր նավթային մնացորդի պահեստը։ Իսկ այդ յերկու բոցաշտարակների մեջտեղը ներկայացնում եր կատարյալ իրական դժոխք։ Այդ կաթսաների բաժիններ, վորտեղից առաջին անգամ կրակն սկսվելով՝ տարածվել եր յերկու կողմը։ Այստեղ արդեն ամեն ինչ վերջացած եր, վոչ մի առարկա կրակի ճանկերից չեր ազատվել։ Բացի մի քանի յերկաթե կաթսաներից, վորոնք իրանց միջի դյուրաբորբոք, կիսապատրաստ, ֆոտոգենի հանկարծակի բոցավառության ճայթումից պատռվելով, այս ու այն կողմ եյին գլորվել—ամեն ինչ մոխիր դառնալու վրա յեր։



Խորտակված պատերի ճեղքերից բոցավառ ծուխը դուրս գալով, վոլոր-մոլոր պտույտներով միանում եր բոցի լայնաշրջան աշտարակի հետ, ինչպես փոքրիկ գետակները հոսում են ընդարձակ գետի մեջ, զորացնելով նրա կատաղի ընթացքը։

Գործարանի բակը ծածկված եր խառնիճաղանչ ամբոխով։ Վոտ դնելու տեղ չկար։ Իվան Գրիգորիչը բազմության առաջ կանգնած կարգադրություններ եր անում։ Ամբոխի միջից մի քանիսը զանազան խորհուրդներ եյին տալիս նրան։

— Այդ միջոցներով անհնարին է բան առաջացնել. հարկավոր է Նոբելի գործարանից հրաշեջ նասոսներ բերել տալ,—ասում եր մեկը։

— Այո, այո, միայն Նոբելի գործիքները կարող են այդ կրակին հաղթել, – ավելացնում եր մի ուրիշը։

Սրանք հարևան գործարանատերեր եյին, վորոնք վոչ այնքան Իվան Գրիգորիչի մասին եյին հոգում, վորքան վախենում եյին, վոր մի գուցե հրդեհը մինչև իրանց գործարաններն հասնի։

Իվան Գրիգորիչը չեր լսում նրանց։

— Ոգնեցե՛ք . . շտապեցե՛ք... յես փո՛ղ կտամ... ջուր հասցրե՛ք, ի՞նչ եք սառել անպիտաննե՛ր... քանդեցեք դուք իմ տունը, սրիկանե՛ր... գողե՛ր... ավազակնե՛ր,— անդադար հայհոյում եր նա մշակներին, շվարած այս ու այն կողմ վազվզելով։

Հրդեհը շիջելուն՝ բացի Իվան Գրիգորիչի գործարանի մշակներից ոգնում եյին և ուրիշ գործարանների մշակներ ու կողմնակի մարդիկ։ Միայն առաջինները գործում եյին ուղղակի կրակի դեմ ու դեմ, ամենավտանգավոր տեղում, իսկ վերջիններն աշխատում եյին վորքան կարելի յե հեռվից գործել՝ խույս տալով կատաղի բոցի ալիքներից։ Առաջինները հրաշեջ նասոսների խողովակների ծայրից բռնած շփում եյին ջուրը դեպի կրակի զորեղ կենտրոնը, վորտեղից բոցը ջրի ամեն մի զարկին խուլ արձագանքներ եր տալիս, իսկ վերջինների մի մասը հեռվից նասոսների կռնակներն եր պտտացնում, յերրորդ մասը ջուր եր ավելացնում նասոսներին։ Մշակների մի ուրիշ խումբ թիերով հող եր սփռում յերկու կողմերից նավթային մնացորդների բոցավառված պահեստի վրա։

Մի քանիսն Իվան Գրիգորիչի մշակներից անգիտակցաբար այն աստիճան մոտեցել եյին կրակին, վոր ամբոխը նրանց փոխարեն սարսափում եր։ Տոթը խեղդում եր նրանց, կրակի տաքությունը կիզում եր նրանց կիսամերկ մարմինները, խոշոր կայծերն անձրևի նման հեղեղվում եյին նրանց գլխին, բայց խորասուզված իրանց գործի մեջ՝ կարծես նրանք վոչինչ չեյին զգում։

*Ամեն վայրկյան նրանց նավթաթաթախ ցնցոտիներն սպառնում եյին բոցավառվել թափվող կայծերից։ Մի քանի ուրիշ բանվորներ այդ թշվառներին վերջին վտանգից ապահովելու համար, բավական հեռվից մի փոքրիկ նասոսով ջուր եյին սրսկում նրանց վրա։*

*Բոցը զորանում եր... Ամբոխը չդիմանալով շոգին սկսեց աստիճանաբար խույս տալ։*

*— Փախե՛ք... փախե՛ք... հեռացե՛ք... պատը ջարդվում ե,— միաբերան գոռաց հանկարծ ամբոխը՝ սեղմելով և ավելի յետ մղվելով։*

*Բարձրացավ մի խուլ փորոտաձայն, մի ձայն, վոր նմանվում եր հարյուրավոր հրացանների միաժամանակ արձակման ձայնին։ Մի վայրկյանում մթնեց բոլորը և ամեն ինչ կորավ թանձր խավարի մեջ։ Բոցը, ծուխը, կրակը, մուրը և խորտակված պատի հողափոշին խառնվելով իրար՝ աներևույթացրին հրաշեջ մշակներին։*

*— Վա՜յ գլուխս... վա՜յ... վա՜յ մեջքս կոտրվեց... ո՜հ, աստված... ոգնեցե՛ք, - լսվում եր խավար գեհենի միջից։*

*— Վոտներս փշրվեցին... վա՜յ... վա՜յ... ա՜հ, խեղդվեցի, աստված... ոգնեցե՛ք... դո՛ւրս բերեք ինձ այստեղից, վոչինչ չեմ տեսնում,— գոռում եյին մի ուրիշ կողմից։*

*— Ձե՛ռքս... ձե՛ռքս... ա՜յ.. ա՜յ... ա՜յ.. մի՛ մոտենաք, աստված սիրե՛ք... այրվում ե ձեռքս... ո՜ւֆ... ո՜ւֆ...։*

*Իվան Գրիգորիչի բարկությունն ու շփոթությունը փոխվել եյին անորոշ սարսափի, մի վայրկյան առաջ նրա կատաղի դեմքն այժմ արտահայտում եր ներքին ահ ու դող։ Անշարժ, արձանի նման, նա մի տեղում սառել եր և չգիտեր, թե ինչ անի։ Նա կամեցավ առաջ վազել, բայց չկարողացավ, վորովհետև անհնարին եր։ Ծուխն ու փոշին, խառնվելով մրի, մոխրի և բոցի հետ, կազմել եյին նրա առաջ մի անթափանցելի խավար տարածություն։ Հանկարծ ամեն ինչ պարզվեց և նրա առաջ բացվեց մի վողբալի տեսարան։ Այս ու այն կողմ թավալվել եյին թվով վեց մշակների դիակներ։ Յերևում եյին և՛ վոտի վրա կանգնած մի քանի ուրվականանման պատկերներ, վորոնցից մեկը բոցավառված խելագարի պես այս ու այն կողմն եր վազվզում, բացականչելով.*

*— Ոգնեցե՛ք... ոգնեցե՛ք... խղճացե՛ք... մարմինս այրվում ե... շո՛ւտ, հող ածեցե՛ք վրաս... ջո՛ւր.. ջո՛ւր... ջո՛ւր...*

*Տեսարանը սոսկալի յեր։ Սա տարիքն անցկացրած մի ծերունի յեր, վորի դյուրաբորբոք ցնցոտիները բոցավառվել եյին և խաշում եյին նրա մարմինը կենդանի-կենդանի։*

*Իվան Գրիգորիչը յերեսը շուռ տվեց, նրա նրբացած ջղերն*



*անզոր եյին դիմանալ մի այդպիսի այլանդակ պատկերի։ Ամբոխի միջից շատերը սիրտ առնելով վազեցին առաջ։ Ուժեղներից մեկը մի զորեղ հարվածով բոցավառված ծերունուն գլորեց գետին, մնացյալներն սկսեցին այս ու այն կողմից հողով ծածկել նրա մարմինը, կիսակենդան թողելով վողորմելի զառամյալին։ Այդ միակ միջոցն եր, վորով հնարավոր եր հանգցնել նրա այրվող ցնցոտիները։*

*— Խաշվեցի՛... ո՜ւֆ.. ո՜ւֆ... այրվեցի՛,— խուլ ձայնով հառաչում եր ծերունին հողի տակից։ Նրա դեմքն այնչափ այլանդակվել եր, վոր ներկա յեղողներից շատերը կես սարսափով և կես զզվանքով ծածկում եյին իրենց աչքերը՝ նրան չտեսնելու համար։*

*Ինչպես դժոխային անդունդի հատակից, վեց այրված մշակների միջից լսվում եյին սիրտ պատառող մռմռոցներ վոր չեյին նմանում մարդկային ձայների, այլ մորթվող անասունների վերջին բառաչյունների և հուսահատ թառանչի։ Թավալվածներից յերկուսն արդեն անշնչացած եյին։ Նրանց այրված ու այլանդակված դեմքերն այլևս չեյին կրում իրենց վրա մարդկային դեմքի վո՛չ մի նշան։ Նրանց աչքերի բիբերը դուրս եյին ցցվել, ինչպես խորոված շագանակներ՝ մոխրի մեջ։ Գլխի ու յերեսի մազերի ու հոնքերի հետքերն անգամ չկային։ Նրանց գլուխները նմանվում եյին թեժ կրակի միջից դուրս բերված մսի կտորների։ Չորս մարդ աշխատում եյին սրանց դիակները մի կողմ քաշել։*

*Այդ դիակներից մի քանի քայլ հեռավորության վրա մի յերիտասարդ մշակ, նստած գետնի վրա, իր ձեռները հողի մեջ տրորելով, բացականչում եր.*

*— Ձեռքե՛րս... ո՜ւֆ... ո՜ւֆ... խաշվեցի՛ն... տապակվեցի՛ն...*

*Նրա թեժացած աչքերից գլորվեցին արտասուքի մի քանի կաթիլներ և նա, ձեռները տանելով դեպի աչքերը, թրջեց իր պլոկած մատների ծայրերը, կարծես թե այդ աղի կաթիլները կարող եյին զովացնել նրա սիրտը։*

*Սրանցից մի փոքր հեռու լսվում եյին խուլ աղոթքի ձայներ.*

*— Լայ.. լայ, Իլլա՜հ, լա՜հ, Մուհամմե՜դ, Ռասո՜ւլ, Ալլա՜հ... Ռուհի՜ջաննամ։*

*Այդ պարսիկ մշակներն եյին, վորոնցից մեկի գլուխը քարը յերկու պատառ եր արել. նա փչում եր իր վերջին շունչը, իսկ յերկուսի զանազան տեղերը նույնպես ջարդվել եյին մահացու վերքերով։*

*Ամբոխը խառնվել եր այնպես, վոր վոչ վոք այլևս ուշադրություն չեր դարձնում հրդեհի վրա, վորն այդ ժամանակ սկսել եր փոքր առ փոքր մեղմանալ։*

Իվան Գրիգորիչը գոռում եր. —Աստված սիրեք… ոգնեցեք… հրդեհը մի մոռանաք… այդ վիրավորվածներին հետո յել կարելի յե ժողովել, բայց գործարանս, գործարանս ձեռքից գնում ե։

Բայց Իվան Գրիգորիչի գոռոցների վրա ուշադրություն դարձնողներ քիչ յեղան. աշխատում եյին միայն նրա հարևան գործարանատերերի մշակները, վորոնց տերերն ստիպում եյին չհեռանալ գործելուց, մինչև վոր բոցը չի դադարի իրանց գործարաններին վտանգ սպառնալուց։

— Մենք չենք կարող այդ թշվառներին անտեր ու անոգնական թողնել ու հրդեհի մասին աշխատել,—գոռում եյին ամբոխի միջից դեպի Իվան Գրիգորիչը.—յեթե այդքան մարդիկ մի րոպեյում զոհ են դառնում հրդեհին, ուրեմն թո՛ղ նա անխնա լափի քո անիծյալ գործարանդ ել, քեզ ել, վոր այդ թշվառ զոհերի կորստյան պատճառն եք։

— Այո՛ այո՛։ Դու չես դրանց այրվելու պատճառը, յեթե դու ժամանակին քո անիծյալ նավթակաթսաները և վառարանը շինել տայիր, այդ դժբախտությունը չեր պատահի վո՛չ քեզ, վո՛չ ել այդ խեղճերին։

Գործակատարը, վոր Իվան Գրիգորիչին շվաքի նման հետևում եր, դարձավ դեպի նա և ասեց։

— Իվա՛ն Գրիգորիչ, խորհուրդ եմ տալիս հեռու կանգնել այդ չարամիտներից, ո՞վ գիտե, ձեզ ի՛նչ վնաս կհասցնեն, նրանք մեր մշակների ընկերակիցներն են, նրանք այժմ գազանացած են և, աստված գիտե, թե ինչեր չեն մտածում։

Բայց Իվան Գրիգորիչը բանի տեղ չեր դնում վոչ ամբոխի սպառնալիքը և վոչ ել գործակատարի խորհուրդը և նրա ուշքն ու միտքը կենտրոնացած եր միայն և միայն հրդեհի վրա։ Յեվ նա ամբողջ մարմնով դողում եր, թե ահա կրակը հասնելու յե փոտոգենով լիքը տակառների պահեստին, ուր հազար լիքը տակառներ կային։ Սակայն այդ յերկյուղն ավելորդ եր, վորովհետև հրդեհն այլևս այնպես սաստիկ չեր, ինչպես առաջ։

Քամին դադարել եր, բոցն այլևս կատաղաբար այս ու այն կողմ չեր տարածվում, այլ հանդարտ և ուղիղ գծով բարձրանալով վեր՝ լուսավորում եր ներկա յեղող ամբոխը, վորը գումարված թշվառների շուրջը, զանազան ոգնություն եր հասցնում այդ խեղճերին։

Այդ ժամանակ վազելով ամբոխին մոտեցավ հանկարծ մի բարձրահասակ մարդ, վորի դեմքի վրա նկատելի եյին խորին հուսահատության և անորոշ յերկյուղի նշաններ։ Նրա ծունկերը ծալվում



եյին և դժվարությամբ հնազանդվում նրա գնացքին։ Սա արդեն մեզ հայտնի լրաբերն եր։

— Թողեք…թողեք. տեսնեմ ու՞ր են…վորդիս, յեղբայրներս… աստված իմ… նրանք ու՞ր են… միթե՞ այրվել, վերջացել են նրանք…

Ամբոխը ճանապարհ տվեց նրան, և նա շտապով մտավ մեջտեղ։

—Ու՞ր եք, վորտե՞ղ եք, խոսեցեք… Սարգի՛ս, Գասպա՛ր… ա՛խ, այս Բեյրու՞թն ե, իմ յեղբոր վորդի՛ն… ա՛խ, միթե դո՞ւ յել, դո՞ւ յել ես այրվել, Բեյրո՛ւթ…

— Յես.. այո… բայց իմը վոչինչ, խեղճ հայրս, ծերունին… նա մեռավ… ահա նա… մեռավ նա, մինչև վերջը… իր ընտանիքի անունը հիշելով…

Մեհրաբը մոտեցավ իր վորդուն, բայց վերջինն արտասունքն աչքերում ցույց տվեց նրա յեղբոր՝ ծերունի Սարգսի դիակը։ Մի րոպե Մեհրաբը մնաց քարացած, նրա արտասուքից չոր, ցամաքած աչքերը մեքենաբար դառնում եյին կամ իր ծերունի յեղբոր, կամ վորդու՝ Գասպարի այրված ու կուչ յեկած ձեռքերի կամ իր յեղբոր վորդու՝ Բեյրութի կաշվից մերկացած աջ թևի վրա։ Իսկ ամբոխի զայրացած ուշադրությունը նրա վրա չեր։

— Ո՞ւմ մեղքն ե… ո՞վ ե պատճառն այս զոհերի… ումի՞ց կարող եմ առնել վրեժը…միթե՞ կրակից…—Այս ասելով նա յերկու ձեռներով սկսեց ուժգին հարվածներ տալ իր բաց, ալեխառն մազերով ծածկված, գլխին։

— Վա՛յ… յես ինչ պատասխան տանեմ քո զավակներին… յես ինչ պիտի ասեմ քո պառավ կնոջը, նրա աչքը ճանապարհին են մնացել… նա սպասում ե իր ծերունի մարդուն, վորը քաղաք ե գնացել փող վաստակելու։ Լա՛վ վաստակեցիր…

Իվան Գրիգորիչը լսելով այս գոռոցը, մոտեցավ մի րոպե ամբոխին։

— Ի՞նչ ես այստեղ գոռգոռոց բարձրացրել, խելագա՛ր… ինչ բղավելու ժամանակ ե… գործարանս ձեռից գնում ե, դու այստեղ գոռում ես, վազի՛ր, ասում եմ, ոգնիր…

Մեհրաբը վոչինչ չեր լսում, նա, յերեսն ի վար ընկած իր յեղբոր դիակի վրա, բառանչում եր։ Ամբոխը մնաց զայրացած Իվան Գրիգորիչի անտեղի հրամանի վրա։

— Նրա յեղբայրն այրվել, մոխիր ե դարձել, նրա վորդու ձեռները խորովվել են, նրա յեղբոր վորդու աջ թևը կուչ ե յեկել այրված, իսկ դու այժմ այդ դժբախտից ոգնությո՞ւն ես պահանջում։ Անխիղճ, անաստված, նա այդ թշվառության մեջ ինչպե՞ս կարող ե ոգնել քո անիծված գործարանին,— գոռացին ամբոխի միջից մի քանի տաք գլուխներ։

— Միևնույնն է, այսուհետև նրա գոռալն էլ ոգուտ չի տա, թող կրակը հանդարտվի, այնուհետև ինչքան կամենա՝ կարող է զըռ-զըռալ: Վե՛ր կաց, ասում եմ, - դարձավ նա Մեհրաբին ու կոշկի ծայրով մի հարված տվեց նրան։

Մեհրաբը մեքենաբար գլուխը բարձրացրեց, դառը տանջանքի կնիքը դրոշմվել էր նրա ճակատի վրա, աչքերը փայլում եյին, դեմքը արտահայտում էր խելագար բարկություն: Նա այդ դրության մեջ նմանվում էր մի կատաղի և հուսահատված առյուծի, վորը պատրաստվում է հարձակվել իր թշնամու վրա։

Մի վայրկյան նա այդ անշարժության մեջ մնաց։ Իվան Գրիգորիչը կես բարկացած և կես յերկյուղալի դեմքով շվարած նայում էր նրան:

Հանկարծ Մեհրաբը կայծակի արագությամբ վեր թռավ տեղից:

—Հա՜… հա՜…ճշմարիտ է ասում աղան…պետք է նրա հրամանը կատարել, պետք է ոգնել, յես պարտավոր եմ աշխատել…

Նա կամեցավ առաջ շարժվել, բայց ծունկերը չհնազանդվեցին, գլուխը ծանրացավ և նրա վիթխարի մարմինը կայծակնահարի նման անշնչացած թավալվեց Իվան Գրիգորիչի վոտների առաջ, իր յեղբոր սևացած դիակի վրա։

— Գործարան, գործարանս, աստված սիրեք, նա փչանում է… տունս քանդվեց,— բացականչում էր Իվան Գրիգորիչը:

---

— Ովքե՞ր էին այն բանվորները, վոր աշխատում էին Իվան Գրիգորիչի նավթահանքում:

— Ինչի՞ց է յերևում նրանց սոցիալական ծագումը:

— Կապվա՞ծ են նրանք դեռ իրենց նախկին միջավայրի հետ, թե վոչ:

— Ինչի՞ց է դա յերևում:

— Ի՞նչն է պայմանավորում այդ կապը:

— Ի՞նչ ազգության բանվորներ են նկարագրված այստեղ, բացի հայերից. տարբերվո՞ւմ է արդյոք նրանց դրությունը հայ բանվորների դրությունից:

— Բնորոշեցեք Իվան Գրիգորիչի հոգեբանությունը յեվ համեմատեցեք բանվորների հոգեբանության հետ:

— Պատահակա՞ն է նրանց մեջ յեղած հակադրությունը, թե ունի սոցիալական պատճառներ:

— Բնորոշեցեք այստեղ նկարագրված բանվորների դասակարգային գիտակցության աստիճանը:

---

— Վո՞ր տեսարանն է այս պատմվածքում ամենացնցողը:

— Հրդեհի նկարագրությունները տալի՞ս են արդյոք վառ պատկերացում հրդեհի մասին:—Ի՞նչ յեղանակներով է հասնում հեղինակն այդ նպատակին՝ միմիայն պատմելով նավթի այրվելու մասի՞ն, թե՞ նկարագրելով նայեվ այն տպավորությունը, վոր հրդեհն անում է շրջապատողների վրա:

---

— Համեմատեցեք այստեղ նկարագրված բանվորներին «Մշուշում» նկարագրված Ստեփանի հետ. ի՞նչ նմանություններ յեվ տարբերություններ կարող եք գտնել:



# ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ

## ՍԵՎ ՔԱՂԱՔՈՒՄ

Միմյանց նման ցած, խոնավ, կեղտոտ և մութ սենյակների մի ամբողջ շարք եր:

Բակում թափթփված եյին խողովակներ, մեծ կաթսաներ, վորոնք յերկար ժամանակ բացոթյա մնալով՝ ժանգոտել, անպետքության եյին հասել:

Կիսամերկ յերեխաներ՝ թաթախված նավթի մեջ, մրոտ, խաղում եյին ձյունախառն ջրի հետ, վորը լճացած եր բակի զանազան կողմերում։

Այստեղ ապրում եյին յերեք հարյուրից ավելի մարդիկ. մարդիկ, վորոնք մոռացած ամեն բան, տենդային թափով չարչարվում, տանջվում եյին, վոր պահպանեն իրենց վողորմելի գոյությունը:

Բակում յերբեմն յերևում եյին կանայք՝ մինչև սրունքները նավթի մեջ, շորերը կեղտոտ, դույլերը ուսերին շտապում եյին դատարկել և նորից նույն մեքենայական արագությամբ դիմում վորսի՝ հավաքելու այն փշրանքները, վոր պատահմամբ թափվել եյին փողոցով անցկացրած խողովակներից:

— Վո՞րքան եք կարողանում հավաքել:

— Յեթե ամբողջ որը աշխատել, կարելի յե ութից մինչև տասը դույլ,—պատասխանեց մի յերիտասարդ կին, վորի դեմքի գեղեցիկ գծերը կեղտի տակ թաքցրել եյին իրենց գրավչությունը:

— Ծախո՞ւմ եք:

— Այո:

— Քանիսո՞վ:

— Դույլը վեց կոպեկ:

— Վեց կոպե՞կ:

— Այո,—պատասխանեց նա և շարունակեց մզել բրդի կտորի վրա հավաքված նավթը, վոր անզգուշությամբ թափել եր տակառի մոտ:

---

Դռնապանն ինձ պետք է առաջնորդեր սենյակից սենյակ, վորոնց մուտքը խափանված եր միմյանցից տախտակի պատերով: Առա-

Չին դուռը բացվելուց՝ ապականված օդի մի գարշելի հոսանք դուրս խուժեց սենյակից. մի վայրկյան տատանվեցի և ապա ներս մտա։

Մեկը պառկած եր մի խարխուլ, մերկ թախտի վրա. մոտ քառասունուհինգ տարեկան, կարմիր դեմքով, ուռած շրթունքներով մի մարդ եր։ Բերանը կիսաբաց նա քնած եր։

Մյուս անկյունում, մերկ հատակի վրա պառկած եր մի կին, գլուխը սպիտակ, բայց կեղտոտ, սևացած թաշկինակով փաթաթված, ուռած աչքերով, ձախ աչքի տակը կապտած։

Յերբ յես ներս մտա նա բարձրացրեց գլուխը, մի ինչ-վոր բան փնթփնթաց քթի տակ և նորից փակեց աչքերը։

Պատառոտած զգեստներ, վոսկրներ, կեղտոտ ամաններ, փայտե գդալներ—բոլորը խառնիխուռը թափթփված եյին։

Թախտի մոտ լճացած եր մի գարշելի հեղուկ, վորին նայելիս մարդու ներսը տակն ու վրա յեր լինում, բերանը ջրակալվում։

Յես աշխատում եյի չնայել։

Խեղդելու չափ ծանր եր օդը։

— Ի՞նչպես ե ձեր ազգանունը։

Ինձ վոչ վոք չպատասխանեց։

— Ովքե՞ր են սրանք,—հարցրի դռնապանից, վոր լուռ կանգնած եր մոտս։

— Զ.....ով։

— Քանի՞ տղամարդ կա։

— Մեկ մարդ ե, մեկ կին։

Յես նշանակեցի և շտապեցի դուրս գալ։

— Լավ սլեսար ե, ամա ինչ անես, վոր խմում ե, մի որումը մի շաբաթվա աշխատածը փչացնում. են ել կինն ե. նա յել մարդուց պակաս չի խմում։

Բոլորն ել միմյանց նման, ամեն տեղ նույն կեղտոտությունը, նույն խոնավ, բորբոսնած պատերը։

44-րդ սենյակը քիչ եր տարբերվում մյուսներից։

Պատի տակ, ցնցոտիների մեջ փաթաթված, պառկած եր մի ծերունի, նիհար, քունքի վոսկրները դուրս ցցված։ Կուծքը անկանոն բարձր ու ցածր եր անում, քրտինքը ծածկել եր նրա դալկացած դեմքը։

— Ձեր ազգանո՞ւնը,—հարցրի մի յերիտասարդ կնոջից, վորը թողել եր կերակուրը,փայտե գդալը ձեռքին հարցական հայացք եր ձգել վրաս։

— Ձեր ազգանո՞ւնը.—կրկնեցի յես։

— Ինչի՞ համար ե։



Յես հանդստացրի։

— Կ...ով։

— Քանի՞ տղամարդ։

— Յերկու։

— Կի՞ն։

— Մեկ։

— Յերեխա՞։

— Չորս։

— Փոքր ե՞ն։

— Այո։

— Ո՞վ ե այս ծերունին։

— Ամուսնուս հայրը։

— Վաղո՞ւց ե հիվանդ։

— Վաղուց։

— Բժիշկ գալի՞ս ե։

— Բժշկի կարիք չկա... նա կմեռնի...

— Կամաց.—զգուշացրի յես։

— Նա չի լսում։

Յես շարունակում եյի մի սենյակից մյուսը մտնել. ամեն տեղ նույն ապականված օդը, մարդիկ թափթփված միմյանց վրա...

Դռնապանը չեր մոռանում ամենքին ել ասել, վոր վաղը վարձի օրն ե, թող պատրաստեն։

— Վո՞րքան են վճարում ամսական։

— Ենպեսը կա՝ հինգ, միքանիսը վեց մանեթ. ինչ զոռով, ինչ չարչարանքներով ենք փող առնում. աղքատ մարդիկ են, սաղ օրը չարչարվում են ու ելի են են ու ելի են։

Յես կանգ առա մի փակ դռան մոտ։

— Ո՞վ ե ապրում այստեղ։

— Տաս-տասներկու հոգի։

Նայեցի պատուհանից. մի փոքրիկ սենյակ եր, հատակի վրա թափթփված կեղտոտ անկողիններ։

— Տասներկու մա՞րդ ե ապրում այստեղ։

— Տասնուհինգ եյին, յերեքը հայրենիք են գնացել։

— Վոչ մեկի ազգը չգիտե՞ս։

— Կարապետով.—յերկար մտածելուց հետո ասաց դռնապանը։

Անցանք։

— Ձեր ազգանո՞ւնը.—հարցրի սենյակի դռանը նստած մոտ քսանուվեց տարեկան տղամարդուց, վորի ցանցառ, դեղնագույն մորուքը խառնվելով կեղտի, մրի հետ, մի անորոշ գույն եր ստա-

ցել։ Աչքերում ինչ-որ մի թախիծ կար, որ դժվար եր հոգնածության թե վշտի վերագրել։

Շորերը կեղտից փայլում եյին։

Նա մի բան եր շինում։

— Ձեր ազգանո՞ւնը.—կրկնեցի յես։

— Մ...յև.—պատասխանեց նա առանց ինձ նայելու։

— Քանի՞ տղամարդ կա։

— Մեկ։

— Կի՞ն։

— Մեկ։

— Յերեխա՞։

Նա բարձրացրեց գլուխը, նայեց ինձ. մի կաթիլ արցունք դողալով գլորվեց նրա հոգնած աչքերից։

— Մեկը կա... բայց այսոր ել չի լինիլ...

— Ի՞նչպես։

— Տեսնում ե՞ք... հավիտենական բնակարան եմ պատրաստում նրա համար.—Նա ցույց տվեց մի փոքրիկ, դեռ չվերջացրած դագաղ։

— Դագաղ եք շինո՞ւմ։

— Վորդուս համար ե։

Նա լուռ շարունակեց մեխել վարդագույն կտորը դագաղի վրա։

Յես շտապեցի հեռանալ։

---

## ՋՐԻ ԹԵՅԱՐԱՆ

Վորտեղ եր քնել, չգիտեմ։

Յես նրան պատահեցի արագ դեպի հրապարակ գնալիս, ուր X ընկերության թեյարանն եր, վորտեղ ամեն որ հավաքվում եյին անփող մարդիկ ու ձրի թեյ ու մի կտոր հաց եյին ստանում։

Արդեն յերեք ամիս եր, վոր խոլերայի պատճառով այդպիսի թեյարաններ գոյություն ունեյին։ Գնում եր ժպիտը դեմքին և գոհ, վոր այդ տարափոխիկ հիվանդությունը կա և, այդ հիվանդության շնորհիվ, ինքն ամեն որ կարողանում ե տաք թեյ խմել։ Քամին խաղում եր նրա պատառոտած զգեստների հետ, տեղ-տեղ մերկացնում նրա կեղտոտ մարմինը, թեև վոտներին կոշիկի նման ինչ-վոր բան կար, բայց համարյա բոբիկ եր. մազերը յերկայն, կեղտոտ ու գզգզված։ Նա այնպես լավ ե զգում իրեն թեյատանը։

Նա նստում ե թեյի սեղանի առաջ, և նրան ծառայում են։ Նա յերբեմն մինչև անգամ հրամայում եր, բարկանում, յերբ ուշացնում եյին, կամ թեյը շատ բաց եր լինում. ինչ անենք, վոր ձրի յե...



Նա արագացրեց քայլերը, վոր վորքան կարելի յե շուտ տեղ հասնի ու նստի իր սիրած տեղում։

Նա արդեն պատկերացնում եր իրեն նստած սեղանի մոտ, տաք թեյը հացի հետ առաջին։ Մի ակամա ժպիտ յերևաց նրա դեմքի վրա։

Արդեն յերևում եր թեյարանը, բայց նա չնկատեց սովորական աշխույժը, վոր միշտ այդ ժամին լինում եր թեյարանի շուրջը։ Դեռ հեռվից նա պարզ տեսնում եր փայտյա թեյարանը, բայց ինչ եր կատարվում թեյարանի ներսում, նա պարզ չեր վորոշում։ Քանի մոտենում եր նա, ավելի լավ եր տեսնում, վոր մի ինչ-վոր բան ե պատահել, վորն ինքը չգիտե։

Ամենից առաջ նա նկատեց, վոր չկա ջրի տակառը, վորն այդ ժամերին անպայման լինում եր թեյարանի առաջ... Նա սկսեց համարյա վազել...

— Գուցե մի բան ե պատահել...—Թե ինչ կարող ե պատահել, նա այդ չեր գիտակցում։

Բայց յեթե թեյարանին մի վտանգ ե սպառնում, նա պատրաստ ե իր կյանքը վտանգի յենթարկելով պաշտպանել։ Նա կանգ առավ թեյարանի առջև և վոչինչ չհասկացավ. ինքնայեռը չկա, չկան հաց, թեյ բաժանող մարդիկ, վոչինչ չկա, միմիայն տախտակե պատերն ու նստարաններն են մնացել։ Մի քանի մարդ նստած հողե հատակի վրա, լուռ, աննպատակ իրար եյին նայում։ Նա ճանաչում եր դրանց, թեև յերբեք չեր խոսել հետները, բայց համարյա ամեն որ տեսնում եր։ Միքանիսն ել թեյարանի պատերի տակ շինված տախտակե նստարանների վրա փռված քնել եյին։

Նրան թվաց, թե յերազում ե և աչքերին ե յերևում, նա չհասկացավ՝ ինչ ե նշանակում այդ փոփոխությունը, մոլորված այս ու այն կողմը նայեց ու մնաց անշարժ։ Նա յերբեք այդպիսի ծարավ չեր զգացել, յերբեք այդպիսի կարիք չեր զգացել տաք թեյի, այնքան տաք, վոր թոքերն այրվեյին, նա պատրաստ եր իրար յետևից 10 բաժակ դատարկել, մինչև հագեցնի ծարավը։

Նա լուռ կանգնած եր, հանկարծ աչքին ընկան մի քանի տեղ թեյարանի պատերին փակցրած թղթի կտորներ։ Նա թեև կարդալ համարյա չգիտեր, բայց արագ մոտեցավ և սկսեց տառերը կապելով կարդալ։

— Ուզո՞ւմ ես առնել,—քմծիծաղով դարձավ նստողներից մեկը նրան։

Նա վոչինչ չպատասխանեց, նայում եր՝ տառեր են և վոչինչ չեր հասկանում։ Նա չեր ուզում հավատալ աչքերին, վոչ ել լսածին։

— Ծախո՞ւմ են... ինչպես... ուրեմն պետք ե քանդեն... ինչո՞ւ... իսկ վո՞րտեղ պետք ե նա այսուհետև թեյ խմի։

— Շատ մի նայիր. աչքերդ կփչանան:

— Անցավ մեր յերկրային յերջանկությունը:

— Շուն շան որդիք, մեծ բան եր, մի բաժակ թեյ եյին տալիս, կատակեյին.— հայհոյեց մեկը, թեև չգիտեր ում ե ուղղված իր հայհոյանքը:

— Բայց ինչու յեն հավաքել... գոնե ասեյին, վոր հավաքելու յեն:

— Ինչու... հավաքել են, ել չեն ուզում ձրի հաց տան, թեյ տան, ասում են՝ աշխատեցեք ու կերեք:

— Բայց ինչո՞ւ:

— Սարսաղ... ինչու... ի՞նչ, կարծում եյիր՝ քեզ համար են մտածում, թե ինչ ե, կարծում ես, հորդ խերին եյին ձրի հաց ու թեյ տալիս: Վախենում եյին, վոր մենք հիվանդանանք ու իրանց ել վարակենք, դրա համար ել իբր թե մեզ համար սրտացավություն եյին անում... հիմա խոլերը վերջացավ, ել վախենալու բան չունեն, հավաքել են ու տախտակներն ել ծախում են. թե ուզում ես, առ:

Նա կամաց-կամաց հասկանում եր՝ խոլերան վերջացել ե, ել չեն վախենում... ել թեյ չեն տալու, ու տախտակներն ել ծախում են...

— Մենք ենք մեղավոր, վոր դրանց տված փողորմությունը ընդունում ենք. մենք կսատկոտենք, բայց իրենք ել հո չե՞ն ազատվի:

— Տղերք,— կանչեց հանկարծ մեկը, տեղից բարձրանալով,— յեկեք բունտ սարքենք:

— Վոր ինչ:

— Ասենք, թող թեյ տան... պահանջենք:

— Ումի՞ց:

Նա վոչինչ չպատասխանեց, քարշ գցեց գլուխը և կարծես մոռացավ և՛ իր առաջարկը և՛ ընկերոջ հարցը...

Նա գիտեր, վոր ինքը ծարավ ե ու քաղցած, բայց ումի՞ց պահանջել՝ նա այդ չգիտեր:

Կամաց-կամաց հավաքվում եյին և ուրիշները, սովորական հաճախորդները, և հայհոյելով կամ գնում եյին, կամ նստում թեյատան պատերի մոտ, իրենք ել չգիտեյին ինչու:

---

— Սոցիալական ի՞նչ միջավայրի մարդիկ են Մանվելյանի «Սեվ քաղաքը» յեվ «Ջրի բեյարանը» պատմվածքներում նկարագրված տիպերը: Կարելի՞ յե արդյոք նրանց անվանել գործարանային բանվորներ:

— Նկարագրեցեք նրանց տնտեսական կացությունը, ապրուստի միջոցները, կյանքի պայմանները յեվ այլն:



— Փորձեցեք բացատրել, թե որո՞նք են նրանց այդ կացության պատճառները. կա՞ն արդյոք հիշյալ պատմվածքներում այս հարցին պատասխանելու համար բավականաչափ տվյալներ:

— Դասակարգային գիտակցության ինչպիսի աստիճանի աշխատավորներ են նկարագրված «Ջրի բեյարան»-ում:

— Ի՞նչ իմաստ ու հետեվանք կունենար, յեթե անգամ այդ պատմվածքի հերոսները «բունտ» սարքեյին:

— Ինչո՞վ են տարբերվում այս յերկու պատմվածքում նկարագրված աշխատավորները Շիրվանզադեի նկարագրած մշակներից: Նշեցեք ամենահիմնական տարբերությունը:

# ՄԱԴԱԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՄԵՔԵՆԱՎԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

*Յեվ դու, հսկայական մեքենա, թափով դառնում ես առանցքիդ շուրջը տաղտուկ միօրինակությամբ. քո ամեն մի պտուտակը, ամեն մի անիվը շարժվում են նույն ճշտությամբ, նույն համաչափ զարկերով ու վոչ մի վայրկյան, վոչ մի ակնթարթ չեն շեղվում սահմանված ճանապարհից։ Վոլորվում ես դու խշխող ու կատաղի և՛ վաղը, և՛ մյուս որը, և՛ հավիտյան...*

*Ու յես, փոքրիկ մրջյունս, աշխատում եմ քեզ հետ զուգընթաց իբրև հարյուրավոր մասնիկներից մեկը, հնազանդ ու ստրուկ։*

*Բայց յես կարող եյի ջարդ ու փշուր անել քեզ, բավական է ժանիքներիդ մեջ մի փոքրիկ, մխած պողպատ ձգեմ, և դու կորտաս կատաղի ու կփշրվես։ Կլռեն միօրինակ զարկերդ, կընդհատվեն հսկայական անիվներիդ փառահեղ պտույտները, և տեղդ կմնա այլանդակ, անձև մի կույտ. ու խուլ հիշողություններ կմրմնջաս միայն անցած, գնացած օրերիդ համար։*

*Բայց ինչո՞ւ չեմ խորտակում քեզ. ինչո՞ւ աչալուրջ հսկում եմ, վոր պտուտակներիցդ և վոչ մեկը չփասվի... Յերբ ձայնդ ժամանակից շուտ կամ ուշ է լռվում, լեղապատառ պտտում եմ շուրջդ, յուղում հազարավոր շրթունքներդ, շոշափում ամեն մի մասնիկդ։ Իսկ դու հաղթական ելի դառնում ես, տրորելով անիվներիդ մեջ և՛ իմ զգացմունքները, և՛ իմ սիրած-փայփայած իղձերը, և՛ ինձ ամբողջովին...*

*Դու դարձրել ես ինձ քո կտորներից մեկը, թերևս քեզ համար ամենափոքրիկը։*

*Յեվ յես՝ իբրև մի կտոր մետաղ՝ ձուլվել եմ անիվներիդ մեջ, դառնում եմ առանցքիդ շուրջը նույնքան կատաղի, նույնքան մոլեգին։*

*Այն օրից, յերբ քեզ ճանաչեցի, այն օրից, յերբ ընկա քո դուռը, լսեցի մի սարսեցնող ձայն։ Հոգիս եր խոսում, բողոքում. ցնցվում եր տանջանքի ցավից. «Յես մարդ եմ ինչո՞ւ մեքենա դարձա»։*



*Բայց ինքս ինձ մխիթարում եյի. «Յերբ մեքենան կանգնի — չէ՞ վոր նա միշտ չի աշխատում — մենք դուրս կթռչենք, կզրկենք ոդը, յերկինքը, ազատությունը»...*

*Բայց անցան այն օրից շատ տարիներ, ու թռան իմ հոգուց այն սփոփիչ մանուկ տենչերը, ու ահա այսօր մազերս ճերմակել են, մեջքս կորացել, և յես գլխակոր յուղում եմ ու յուղում մեքենան։ Ու վաղը, գուցե և այսօր, նա իր ժանիքներով կզկտե, վերջ կդնե իմ փտած կյանքին և ինքը դարձյալ կմնա հսկա ու միշտ հաղթական, և իմ արյան այն սև բիծը դեռ յերկար կպահվի նրա պաղ պողպատի վրա...*

*Անցած գիշեր նյարդերս քնել, ու մի պահ քարացել եյին բիբերս։ Անցյալի հուշերը յեկել-պաշարել եյին ինձ։ Հիշեցի, յերբ դեռ քսան տարեկան, թարմ յերիտասարդ, նետվեցի աշխարհ և լի յեռանդով ձեռքս մեկնեցի այս նույն մեքենային, ամուր սղմեցի նրա ցուրտ լծակը և ասացի. «Մենք ընկերներ ենք այսուհետև»։ Ցուրտը անցնում եր յերակներիս մեջ և, թվում եր, մատներիս ծայրերից սկսում եր պողպատանալ ամբողջ մարմինս։*

*Յեվ յերբ առաջին անգամ իմ պողպատ ձեռքով քաշեցի լծակը, զգացի, վոր յես արդեն մետաղ եմ. միայն սիրտս եր, վոր այնտեղ, կրծքիս տակ՝ դալուկ և վհատ՝ դեռ բաբախում եր։*

*Քսան տարի չե անցել այն օրից, դու ելի փայլում ես, բայց իմ յերկաթ-նյարդերս արդեն քայքայվել, վոսկրներս փտել, մազերս գորշացել են, մեռել է իմ մեջ ամեն ինչ. ամեն ինչ... ու այդ ամենը դու խլեցիր ինձանից, տարար ու խեղդեցիր։*

*Յեվ ահա ծանր մուրճը ձեռքիս՝ ահարկու խողովակներիդ տակ պառկած՝ կապար եմ լցնում կյանքդ, մուրճի հարվածներով ամրացնում նրան. յերեսիս թափվում են ժանգոտ հյութերդ, լցվում աչքերիս մեջ, փույթ չէ սակայն. մուրճի մի ծայրով կոփեմ այն, իսկ մյուս ծայրով կապարդ կամրացնեմ, վոր վիթխարի ուժդ ավելի ուռճանա։*

*Դեռ ձեռքերս չեն դողում, դեռ կարողանում են նպատակին խփել, ու դեռ հանգիստ ես. բայց վաղը-մյուս որը, յերբ ձեռքերս դողան և մի անզգույշ հարված՝ կատաղի հոսանքդ ինձ դուրս կնետե, իսկ դու նորից կոլորվես՝ հզոր ու հաղթական, ու չես էլ հիշի քսան տարվա մեքենա-մարդ ընկերոջդ։ Յեվ քանի՜-քանի՜ թարմ ուժեր՝ լի բուռն յեռանդով, յեկել ու քայքայված կորել են անհետ։*

*Համր է իմ տունը, յերբ յես տանն եմ. մեքենայի ցրտությունն է փչում ինձանից. լռում են ամենքը... Ահա վերջացավ մեր ճաշը, յես կուշտ եմ, իսկ նրանք կիսաքաղցած. փույթ չե ինձ սակայն.— չէ՞ վոր յես եմ նրանց հաց բերողը...*

Յերեխաս հիվանդ է, նա պիտի մեռնի, բայց ուշանում է. հարկավոր է, վոր այսօր մեռնի. վաղը... վաղը յես չեմ կարող. վաղը յես մեքենա չեմ...

«Դու գնում ես, իսկ յերեխան»... լսվում է մոր ձայնը դռների միջից, սոսկալի ձայնը: «Յերեխան թող մեռնի, առանց հորը», ղողանջում է ականջիս մեքենայի սուլոցը. և յես փախչում եմ...

Յեվ այնտեղ, խրոխտ կամարների տակ, նրա համաչափ զարկերի հետ՝ մեռնում է մանուկը, ու յես դարձյալ յուղամանը ձեռքիս՝ յուղում եմ նրա հրեշավոր շրթունքները...

Տուր, տուր այն հզոր պողպատի կտորը: Նա իմ ձեռքիս է, իմ այս քայքայված նյարդերից ու թունավորված արյունից եմ ձուլել նրան. ու կնետեմ այդ նրա ագահ ժանիքների մեջ. թող խորտակվի նա ու նրա այլանդակ կույտի հետ խառնվեն իմ վաստակած վոսկրները...

---

— Ունի՞ արդյոք մեքենավարը իսկական գործարանային բանվորի հոգեբանություն:

— Կա՞ն արդյոք, թե միանգամայն բացակայում են նրա հոգեբանության մեջ գծեր, վորոնք հատուկ են գյուղից նոր յեկած յեվ գործարան մտած բանվորի հոգեբանությանը:

— Բնորոշեցեք մեքենավարի վերաբերմունքը դեպի իր մեքենան. ինչո՞ւ յե նա իրեն մեքենայի մի մասնիկն զգում, յեվ միյեվնույն ժամանակ ատում այդ մեքենան:

— Մեքենան ի՞նքն է նրա ծանր կացության պատճառը, թե մի այլ բան, վոր անկախ է մեքենայից:

— Ինչո՞ւ այնուամենայնիվ մեքենավարը փշրում է մեքենան. մեքենայի՞ց է նա վրեժ հանում, թե ուրիշից: Ումի՞ց:

---

— Համեմատեցեք մեքենավարի հոգեբանությունը «Մշուշում» նկարագրված Ստեփանի հոգեբանության հետ: Այնուամենայնիվ ի՞նչն է, վոր այդ յերկուսին էլ դարձնում է միյեվնույն դասակարգի անդամ:

---

— Ո՞վ է խոսում «Մեքենավարի հիշատակարանում». հեղինակը, թե հերոսը: Յերեվո՞ւմ է սակայն հեղինակի վերաբերմունքը դեպի մեքենավարը: Համաձա՞յն է նա արդյոք իր հերոսի հետ: Յեթե այո՝ ինչո՞ւ:

---

— Մանրամասն վերլուծեցեք «Մեքենավարի հիշատակարանի» լեզուն, պատկերները յեվ այլն յեվ վորոշեցեք, թե բնորո՞շ են արդյոք դրանք մեքենավարի համար:

— Տարբերվո՞ւմ են արդյոք այս գրվածքի լեզուն, վոճը յեվ պատկերները «Մշուշի» լեզվից, վոճից յեվ պատկերներից: Ինչի՞ց է բխում այդ տարբերությունը:



— Առանձնապես ուշադրություն դարձրեք, թե ի՞նչ բաների հետ է համեմատում Փափազյանը մեքենաները յեվ ի՞նչ բաների հետ Մ. Պետրոսյանը: Պատահակա՞ն է այդ համեմատությունների տարբերությունը, թե՞ բխում է նրանց ընտրած նյութից յեվ այդ նյութին տարբեր կերպ մոտենալուց:

— Ի՞նչ յեզրակացություն կարելի յե հանել այստեղից այդ յերկու հեղինակների դասակարգային պատկանելիության մասին. դրանցից վո՞րն է իր մտածելակերպով, պատկերացումներով յեվ հոգեբանությամբ ավելի մոտ բանվոր դասակարգին:

---

## ԿԱՊՈՒՅՏ ՇԱՊԻԿԸ

Տանը բոլորը հանգիստ քնած եյին, բացի ծերունի Բեսոյից, վորը խորասուզված սառը մտածմունքների մեջ՝ անհանգիստ անցուդարձ եր անում իր նեղլիկ սենյակում: Նա շուտ-շուտ կանգնում եր պատուհանի առաջ և իր պղտոր հայացքը գցում հեռուն, լայն ու մեծ քաղաքի ամենախուլ անկյուններին, ուր մշուշապատ խավարի մեջ դեռ նշմարվում եյին աղոտ լույսի ցոլքեր: Յեվ յերբ այդ լույսերն էլ մարեցին, ծերունու սիրտն ավելի անհանգիստ սկսեց բաբախել: Դրսի ամեն մի թեթև շշուկին վեր եր թռչում, գնում եր ճռճռացնելով բաց եր անում պարսպի մեծ դուռը, բայց Դաթոն չկար ու չկար: Նա հուսահատ դառնում եր տուն և նորից սիրտն ամրացնելով սպասում: Ահա շունը հաչեց. նա արագությամբ վազեց դուրս, բայց իզուր. խաբված եր. շան վրա բարկացած տուն մտավ:

— Ե՛յ, պառավ, դու ի՞նչ ես այդպես խռմփում, լուսացավ ախր, Դաթոն չի յեկել:

Պառավը չպատասխանեց, վորով ծերունու միտքն ավելի ևս պղտորեց:

Պառավ,—նորից դարձավ նա կնոջը.—այսօր ճաշին Դաթոն տո՞ւն յեկավ:

— Խելքդ կորցրել ես, ա՛յ մարդ, միասին չճաշեցի՞նք:

— Ե՜, դու ի՞նչ ես հասկանում:

Մի պահ չանցած, նա նորից դիմեց կնոջը.

— Լսի՛ր, կապույտ շապիկ հագա՞վ նա այսօր:

Բայց առանց կնոջից պատասխան սպասելու, նստեց աթոռին, գլուխն առավ ափերի մեջ, արմունկներով հենվեց սեղանին. խորասուզվեց մտածմունքների մեջ: Կինը, վոր արդեն քունը կորցրել եր և ինչ-վոր ժխորի մեջ եր զգում իրան, գլուխը կամաց բարձրացրեց և նայեց ամուսնուն:

Մարդու դեմքն արձանացած եր, աչքերը լայն ու ապշած:

— Բեսո, ցավդ տանեմ, ինչո՞ւ չես քնում, յես բաց կանեմ դուռը, հենց վոր Դաթոն գա, մի փոքր քնիր:

Բեսոն սթափվեց. կնոջ սիրալիր վերաբերմունքը մեղմացրեց նրան։

— Մեր տղան ջահել է, կին, դեռ շատ ջահել, իսկ ժամանակը գեշ, դու ոչինչ չես հասկանում։

Պառավը լռեց, յերկուսն էլ չքնեցին. յերկուսն էլ թեև անհանգիստ էին, բայց աշխատում էին միմյանց սիրտ տալ։ Մինչ այդ խավարը փարատվում էր, դուրսն աքաղաղները յեռանդով կանչում էին։

— Դժվար թե էլ Դաթոն գա,—խոսեց Բեսոն նայելով լուսանցքին։

Բայց նույն վայրկյանին թեթև շշուկ լսվեց. դուռը կամացուկ բաղխում էին։

— Դաթոն է,—միաձայն գոչեցին նրանք և շտապ բացին դուռը։ Պառավների ուրախությունն անչափ էր։

— Ցավդ տանեմ, Դաթո.—շուտ-շուտ կրկնում էր մայրը։

— Դեռ ջահել ես, որդի, չկարծես՝ հայրդ չի հասկանում, նա ամեն բան գիտե, մազերն սպիտակել են, և ինչե՜ր չի տեսել այս իմ տանջված գլուխը։

— Հայրդ, Դաթո ջան, ինձ այնպես վախեցրեց. ասում է՝ այնտեղից տանում են բանտ, տերը ով է, կախում են, ճանապարհին գնդակահար են անում, ասում է, թե նա իմ տղան է, յես գիտեմ, հանգիստ չի մնա։ Ցավդ տանեմ, Դաթո, ճի՞շտ է ասում հայրդ։

— Հիմար հիմար մի՛ խոսի. մի բան բեր, թող ուտի, չես տեսնում հոգնած է, հանգստանալ է հարկավոր։

Դավիթը մտազբաղ էր. մոր փաղաքշանքները, հոր թափանցող աչքերը նրա վրա ոչ մի ազդեցություն չարին։ Նա բան չկերավ, շորը զգուշությամբ հանեց, ծալեց և դրեց գլխի տակ. բարձերը զննեց, նայեց հորը, ապա վերմակը քաշեց մինչև գլուխը։

— Մի բան էլ ծածկե՞մ,—դողալով հարցրեց մայրը։

— Հարկավոր չէ, ժամի յոթին արթնացրու,

— Վաղը տոն է, Դաթո։

— Գիտեմ, հայրիկ, յես առանձին գործ ունեմ։

— Մարգոն չի՞ յեկել,—ավելի անտարբեր հարցրեց նա։

— Մինչև կես գիշեր սպասում էր խեղճը։

— Ե՞հ... արավ Դաթոն և ավելի կծկվեց տեղում։

Յերկու պառավները փսփսալով խոսում էին. մի բան նրանց սաստիկ զարմացնում էր։

Դաթոն ոչ մի անգամ հագուստն այդքան խնամքով հանած և գլխի տակ պահած չկար։ Այդ կետը հայրը չէր կարող նկատի չառնել, բայց մայրն ամեն կերպ աշխատում էր համոզել, թե դա այնպես, պատահական է։



Լուսացավ. հեշտայերը սովորականի նման ներս բերվեց։ Դաթոյի քույր Թամարան թեյ էր պատրաստում և շուտ-շուտ նայում ժամացույցին։

— Մայրիկ, ժամի յոթն է,—ասաց նա։

— Թո՛ղ քիչ էլ քնի, ուշ յեկավ յերեխան։

Բայց Դաթոն մորը զրկեց իր այդ մեծ բավականությունից. տեղից վեր թռավ, գլխի տակից խնամքով հանեց շորերը, դրեց առաջը. սկսեց որոնել գրպաններում մի ինչ-որ բան, ապա դառնալով քրոջը՝ ասաց.

— Թամարա՛, նոր գնած հագուստս բեր։

Մայրը և քույրն ուրախացած մոտեցան նրան։

— Դու այսոր կապույտ շապիկ չե՞ս հագնելու։

— Ո՛չ։

— Ա՜, վերջապես,—բացականչեց մայրը։—Միշտ ասում էի՝ որդի, թող այդ անիծված կապույտ շապիկներդ։ Յես բոլորն աղքատներին պիտի տամ։

— Տուր, մայրիկ. ով գիտե, յես կարելի յե էլ չեմ հագնի։

— Ճի՜շտ.—ուրախացած գոչեցին քույրն ու մայրը։ Այնինչ հայրը լուռ էր, նա իր սուր դիտող հայացքով զննում էր որդուն և ինչ-որ լավ բան չէր գուշակում դրանից։

Մայր ու աղջիկ զուգեցին տղային. ոսլայած շապիկը կարմիր փողպատով և մուգ շագանակագույն պիջակը, որ ամուր գրկում էր նրա իրանը, նրան ավելի գեղեցկացրին։ Կուրծքը դուրս ընկավ, և լայն թիկունքն ավելի շեշտվեց։ Յերկար սև մազերը թափված էին ճակատին. կրակոտ աչքերն սպասողական, անհանգիստ մի ինչ-որ տենդային բան ունեյին իրանց մեջ։

— Ա՜, ցավդ տանեմ, Դաթո՛,—բացականչում էր քույրը հիացած։

— Գիժոն որ տեսնի, հո կխելագարվի,—խոսեց մայրը յերջանիկ ժպիտը յերեսին։

— Դու յե՛լ քիչ է մնում, որ խելագարվես, պառավ. մի՛ վոգևորվիր այդպես. լավ կանես, որ մեզ միայնակ թողնես, յես Դաթոյի հետ առանձին գործ ունեմ։

— Բեսո, ինչ կլինի, որ մենք էլ իմանանք։

Բեսոն պատասխանի տեղ իր խորհրդավոր նայվածքով կնոջը և աղջկանը հասկացրեց, որ նրանց հեռանալն անհրաժեշտ է, և դա որդու օգուտն է պահանջում։ Նրանք խոնարհվեցին Բեսոյի կամքին։

— Այժմ մենակ ենք. հո գիտես դժբախտ գլուխս ինչեր է տեսել. ահա վիրավոր կուրծքս, ահա ճակատիս սպին: Սրանք կարող են վկայել, վոր հորիցդ ծածկելու վոչ մի վտանգ չունես:

Վորդին տատանման մեջ, գլուխը խոնարհել եր ցած:

— Վոր մի հանգուցն միտք կա գլխումդ,—շարունակեց հայրը,— յես գիտեմ, վոր դու մի ինչ-վոր բան ես վճռել. խոսիր, հավատա հորդ, նա քեզ արգելք չի լինի: Յերբ նայում եմ այդ կրակոտ աչքերիդ, իմ յերիտասարդության պատկերը գալիս առաջս կանգնում է, արյունս յեռում է, ուզում եմ նորից հրացանս կրծքիս սեղմած՝ մագլցել մեր հարազատ կիրճերում ու այն ազատ oդից մի անգամ ել շնչել:

— Յես միշտ քեզանով հպարտ եմ յեղել, հայր:

— Քեզ հանձնված է մի գործ:

— Այո:

— Յեվ հագուստդ փոխում ես, վոր...

— Վոր չճանաչվեմ և հնարավորություն ունենամ...

— Բավական է. այժմ ինձ բոլորը պարզ է:

— Սիրտս պատառ-պատառ է լինում, հայր, բայց այլ կերպ չեմ կարող. վճռված է:

— Վոչինչ, տղաս: Վճռված է, ուրեմն պետք է կատարես: Խեղճ մայրդ վորքան եր ուրախացել. նա չի հասկանում, վոր դժբախտությունը այդ կապույտ շապիկի մեջը չէ: Նա ուզում է աղքատներին տա. վոչ, դու այդ հագուստներն աղքատներին չես տա, դրանք կպահես ինձ համար, վոր իմ թշվառ աչքերը նրանցով սրբեմ, նրանցով...

Այդ խոսքերի հետ հայրը գրկեց վորդուն և իր դողդոջուն ձեռքով սեղմեց վորդու գլուխն իր կրծքին: Յեվ վորդին ամբողջ մարմնով զգում եր հոր անձայն ու անարտասուք հեկեկանքը:

Դուռը կամացուկ բաղխեցին:

— Դաթո, Դաթո,—լսվեց դռան յետևից մոր ձայնը - Տես ով է յեկել, չարաճճի Գիժոն է, է

Տղան վազեց բաց արավ դուռը.

— Վա՜հ, Դաթո,—բացականչեց կարմրած՝ դիտելով յերիտասարդին:

— Բեսո, ցավդ տանեմ, ինչ է պատահել,—կամաց հարցրեց պառավը՝ մարդու այլայլված դեմքին նայելով:

— Վոչինչ, գնա բանիդ, ինչ պիտի պատահի:

Յերբ կինը նորից դուրս յելավ, Բեսոն լուռ ու մտախոհ կանգնել եր դեռ մեկ նայում եր Դաթոյին, մեկ այդ թարմ ու աշխույժ



աղջկան, և կարծես վարանման մեջ եր՝ Հանկարծ ձեռքի մի տարորինակ շարժումով մոտ կանչեց Գիժոյին.

— Յե՛կ, աղջիկս: Դաթոն հեռու տեղ պիտի գնա, դու արժանի յես իմ Դաթոյին. յե՛կ, մի՛ քաշվիր, համբուրի՛ր նրան և մնաս բարև տաս, նա քո նշանածն է:

Մարգարիտը զարմացած նայեց Բեսոյին. նա մինչ այդ իրան տանու աղջիկ եր համարում և իբրև Թամարայի ընկերուհի ազատ մուտք ու յելք ուներ նրանց տանը. սիրում եյին նրան բոլորը, և վոչ վոքի համար գաղտնիք չեր, վոր նրանք խելագարի նման միմյանց սիրում եյին: Տանը շատ եր խոսվել, հանաք-շիտակ, բայց այդպես կտրուկ և լուրջ, այն ել Բեսոյի կողմից, միանգամայն անսպասելի չեր. Աղջիկը ապշած ու հուզված մի վայրկյան նայեց Դաթոյին, և յերբ նրան հանդիպեցին Դաթոյի վշտահար աչքերը, հանկարծ մի ներքին յերկյուղ զգաց:

— Գրկիր, Դաթո, նշանածիդ.—դարձավ ծերունին իր վորդուն մի տեսակ հրամայական ու խորհրդավոր շեշտով:

Յերիտասարդն անվստահ մոտ յեկավ, բռնեց քարացած աղջկա ձեռքից, թեթև քաշեց դեպի իրան, հետո հանկարծ փաթաթվեց, սեղմեց կրծքին ու մնացին անշարժ:

Մարգարիտն անսահման ուրախության մեջ վողբում եր, նա կամացուկ գլուխը բարձրացրեց և լի յերկյուղածությամբ նայեց Դաթոյին:

Դաթոյի վշտահար հայացքը գերել եր նրան—այդ տխուր հայացքի մեջ նա զգում եր անհուն յերջանկություն. նա այլևս չկարողացավ դիմանալ, ամբողջ հոգով ընկավ նորից Դաթոյի գիրկը և խորասուզվեց իր ծով յերջանկության մեջ:

Նա զգում եր իր շրթունքներին ջերմ համբույրներ, նրա հոգին կուռ շղթաներից ազատված՝ ապրում եր հեռու, մի սքանչելի յեթերային աշխարհում. «Դաթո», շշնջում եյին նրա շրթունքները, «Դաթո», խաղում եր նրա յերջանիկ ժպիտը:

Բեսոն տարորինակ եր, նրա ձեռքերը դողում եյին, այլայլված նայում եր շուրջը, կարծես նա շտապում եր, նրա խոսքերը կցկտուր եյին և անկապ. նա կարծես ավելի սրտի ցավից, հազիվ լսելի արտասանեց.—Դաթո, Մարգո:

Տղան մի կտրուկ շարժումով կամաց-կամաց հեռացրեց աղջկան իր գրկից. դարձավ հորը, լուռ սեղմեց նրա ձեռքն ու դուրս նետվեց տնակից խելագարի պես:

Յերբ նա սթափվեց, արդեն փողոցի մեջն եր, բավական հեռուն. մեն-մենակ դեռ գնում եր. կանգ առավ, ուժերը լարեց, ճա-

կատը սրբեց. անցածը շատ թարմ էր, իր վաղուց նշանածի պատկերն անգույն հեկեկանքի մեջ կենդանացավ նրա առաջ։

«Յետ դարձիր, յետ դարձիր»,—կրկնում էր նրան մի ներքին ձայն.

«Ո՞ւր ես գնում, ո՞ւր ես թողնում քո բախտը, քո երջանկությունը»։

– Յետ դարձիր, գոնե մի անգամ էլ. գոնե մի համբույր էլ։ Գնա, պարսպից նայիր. նա դեռ արտասվում է, նա քեզ փնտրում է, Դաթո։

Թարմ էր, շատ թարմ աղջկա պատկերը, որին այնքան երազուն սիրել էր իր սրտի խորքում. համբույրները դեռ դողում էին նրա շրթունքներին, նշանածի արցունքները նա դեռ զգում էր իր այտերի վրա…

«Մարգո՛» .. խոսեց նրա հոգին, և նա ակամա կանգ առավ, նայեց յետ, դեպի իրանց տան կողմը։

Լուռ էր, հանգիստ, մի թարմ ու ցողոտ առավոտ էր։

Գարնանային գեղեցիկ արևն ուղղակի շոյում էր։ Նորաբողբոջ ծառերը ճամփի յերկու կողմից, թարմ ծաղիկներն ու խոտերն ամեն կողմից «կյանք, կյանք» էին գոռում նրա յերեսին։

Ո՜, ինչ լավ է աշխարհը, բայց մարդիկ…

Յեվ նա հիշեց նախորդ գիշերվա ժողովը. և կարծես արյունը սառավ. այն ծխոտ սենյակը և այս մաքուր բնությունը, ինչ կապ կարող էր լինել։ Դա մի յերազ էր յերևի, բայց միտքն ընկավ, թե ինչպես էր ինքը խոսում, ինչպես պահանջում էր բոլորից, որ տուն, տեղ, կին, յերեխա պետք է մոռանալ… Բայց այսօր ինքն է տատանման մեջ։

«Դաթո, ամաչիր», լսելի կերպով արտասանեց նա, կարծես դրանով ուզեց խեղդել ներքին ձայնը ..

«Բայց չեմ կարող, չեմ կարող», դուրս թռավ նրա կոկորդից մի խեղդող ձայն։ Յեվ այդ ժամանակ նա զգաց, որ սիրտն արագ սկսեց բաբախել, զգաց մի ներքին քաղցր ջերմություն։

Նա քայլերն արագացրեց դեպի տուն. նորից կանգ առավ։

Ահա իրանց փողոցը, որքան սիրելի է նա այժմ. նա իր սուր հայացքով ուզում էր թափանցել պարիսպներից, տների հաստ պատերից այն կողմը և տեսնել այնտեղ իր նշանածին։ Մի քանի քայլ էլ, և դու այնտեղ ես։

Ամբողջ յերեսով կարմրած, ամոթխած, հայացքը գետին հառած՝ նա առաջ էր շարժվում։

«Մարգո», դողդողալով ասաց նա ավելի ցածր և մեղմ։



Յեվ վոչ վոք չլսեց նրա ձայնը. նա ձուլվեց իր հոգու խորքում, ուր այնքան փայփայած տեղ ուներ։

Նա պահվեց այնտեղ սուրբ, անբիծ, անարատ։

Մի անգամ էլ նայեց իրանց տան կողմը, ուր ծառերի միջից հազիվ տանիքի մի մասն էր նկատվում. արագ սրբեց ճակատը, շուռ յեկավ ու շարժվեց։

Նա չէր գնում. նա վազում էր, նա փախչում էր։

Նա փախչում էր իրանց տնից, իր Մարգոյից, նա փախչում էր բախտից ու կյանքից, նա փախչում էր ինքն իրանից։

Տանջված մարդկության ապագա բարօրությունը նոր զոհեր էր պահանջում։

---

— Ո՞վ էր Դաթոն:
— Ինչո՞ւ յէր նա կապույտ շապիկ հագնում:
— Ի՞նչ գործի համար նա հանեց իր կապույտ շապիկը:
— Հայրը, Բեսոն, հասկանո՞ւմ էր արդյոք որդու գործունեության իմաստը:
— Ի՞նչպես կարելի յե բնորոշել հոր վերաբերմունքը դեպի որդին:
— Բանվորական շարժման վո՞ր շրջանն է պատկերացված այստեղ:

---

— Համեմատեցեք Դաթոյին նախկին պատմվածքի մեքենավարի հետ. սրանցից վորի՞ պայքարն է ավելի նպատակահարմար յեվ բնդունելի:

---

— Նկարագրվա՞ծ է արդյոք այս պատմվածքում բանվորության պայքարը, թե՞ հեղինակը կողմնակի կերպով է հասկացնում ընթերցողին այդ մասին:
— Ի՞նչ հիմնական խնդիր է դրել իր առաջ հեղինակը՝ պայքարի նկարագրությո՞ւնը, թե՞ իր գլխավոր հերոսի հոգեբանության նկարագրությունը:
— Ավելի լավ չե՞ր լինի, յեթե նա այդ յերկու խնդիրը միացներ:

---

## ՊԱՀԱԿԸ

Զորանոցի նեղ սրահանցքում անհանգիստ անց ու դարձ էր անում պահակը։ Նա իր համաչափ քայլվածքի հետ նայում էր պատից կախված մեծ ժամացույցին և յերբեմն իր մոլոր հայացքն ուղղում էր հեռուն, խավարի մեջ նշմարվող սարերի կատարներին։

Գիշերը տարի յէր դառել. վո՛չ մի շշուկ, վո՛չ մի ձայն, վո՛չ մի կենդանի արարած չկար շուրջը. միայն մի հատիկ դժգույն լամպարն էր աղոտ ցոլք արձակում։

Նա ծոցից հանեց մաշված, դեղնած ծրարի մեջ պահված մի հին նամակ, մոտեցավ լամպարին և խնամքով սկսեց բաց անել նրա

ծալքերը. Նա կարդալու համար չհանեց նամակը, գրագետ չէր, բայց նամակի ամեն մի գիծը, ծուռ ու մուռ, յերկար տողերը նրան շատ բան եր ասում. Նա ծանոթ եր, հասկանում եր, ավելի շուտ զգում եր, վոր իրեն այդտեղ հարազատ, սրտակից շատ բան կար ասված։

Նրան պատկերացավ գյուղի փոքրիկ յեկեղեցին. ծերունի տեր Ուհանը հարթ գերեզմանաքարին նստած, կորացած մեջքով զանգակատան սյունին հենված՝ նամակ ե գրում. նրա վոտքերի մոտ, թեշին ամուր բռնած, գլուխը խոնարհել, կծկվել ե իր մայրը. փետուրե գրիչը դողում ե սպիտակ թղթի վրա. իսկ մոր աչքերից արցունքն այնպես հոսում ե։

«Սարեր, լեռներ ճեղքեց, ոտար աշխարհ հանեց. գյամին կրակի պես փախցրեց հեռու, հեռու, մեր աչքից, մեր կրծքից խլեց մեր վորդուն...», գրել եր մայրը։ Յերկար նայեց նա նամակին, թուղթը մոտեցրեց շրթունքներին և համր լռության մեջ ապրում եր մոր յուրաքանչյուր խոսքի, յուրաքանչյուր շեշտի հետ։ Սիրտը բաբախում եր, կարոտ եր զգում, անսահման կարոտ։ Նա հոգով թռել եր հայրենի աշխարհը. ահա իրենց գյուղը, ահա ճանապարհի խաչքարը, հարազատ տունը, ոջախը, ահա մեծ յեղբայրը, ծերունի հայրը, իր սիրասուն քույրը և պառավ տատը։ «Այնտեղ ինչ լավ եր, ոջախի շուրջը բոլորը շարված... Նա վորքան յերջանիկ եր, բայց այժմ, հրացանն ամուր գրկած՝ հսկում ե մարդկանց. ինչու... ինչու ..»։

Յերեկ նրանց յերդվեցրել եյին, մաղթանքով, խաչերով, ավետարանով. Նրանք համբուրել, յերդվել եյին, վոր իրենց գնդակը չի վրիպի, վոր իրենք առանց տատանվելու, լուռ ու մունջ կկատարեն իրենց վրա դրված սուրբ պարտքը, գնդակահար կանեն, յերբ... Նա հիշեց այդ բոլորը և սարսուռ զգաց։ Հիշեց. յերբ նա դողդողալով մոտեցնում եր շրթունքները՝ ավետարանը ցնցվեց, խաչը տերտերի ձեռքին դողաց, և զինվորին թվաց, վոր հանցանքի առաջին քայլն արել ե։ Սառեցնող ցուրտ անցավ նրա ամբողջ մարմնի միջով. ճակատը շփեց, մի քանի արագ շարժում արավ և տենդային դրության մեջ սկսեց նորից անց ու դարձ անել։

Հարևան սենյակում ընկերներն այնքան հանգիստ քնած եյին, այն ինչ ինքը տանջվում ե։ Միտքը պղտորվել եր, անդուլ մտածմունքները յեկել պաշարել եյին նրան. ինչու յե նա տանջվում, ինչու յե նա դատապարտված հրացանների սվիններին, խաչերին և ավետարանին։ Խաչով նա յերդվում ե, վոր սվիններով մարդիկ սպանի. վորպիսի՛ սերտ կապ այդ յերկու գործիքի մեջ... Մեկով նա յերդվում ե և մյուսով վճիռ գործում... Նրան այդ թմրությունից



հանեց մի շարք կալանավորների մոտենալը. Նա զգաստացավ, ուղղվեց, հրացանն առավ ուսին և սպասողական դիրք բռնեց։ Արդեն լուսացել եր և նա վորոշ կարողացավ տեսնել կալանավորների դեմքերը. սովորական հագուստով, բարի ու խելացի տեսքով մարդիկ եյին, նրանց մեջ կար մի դեռահաս կին, մնացածները, թվով 7—8 հոգի, յերիտասարդներ եյին։ Մի շարք զինվորներ հրացանների մեջ եյին առել, մյուսները մերկացրած սրերով շղթա եյին կապել նրանց շուրջը և դանդաղ քայլերով մոտենում եյին սրահանցքին։ Նա կարաուլ կանգնեց, պատշաճավոր պատվով ճանապարհ տվեց նրանց դեպի զորանոցի մուտքը։

— Ի՞նչ ե սրանց հանցանքը,— հարցրեց նա զինվորներից մեկին։

— Քաղաքական հանցավորներ են,— պատասխանեց սա ցածր։

— Ինչի՞ բերեցիք մեզ մոտ։

— Պիտի գնդակահարել,— ավելի ցածր ասաց նա։

— Մե՞նք. այդ բոլորի՞ն։

— Մի քանիսին այսոր, մյուսներին վաղը,— հազիվ լսելի ասաց նա և նույն ձևով հարցրեց.

— Դուք յերդվեցի՞ք։

— Այո։

— Խաչերո՞վ, ավետարաններո՞վ։

Պահակը գլխով դրական շարժում արավ։

— Իսկ դո՞ւք,— յերկյուղով հարցրեց նա։

Զինվորն առանց պատասխանելու հեռացավ, բայց պահակը նրա աչքերում նշմարեց դառը հեգնություն և վիշտ։

---

Թե ինչպես պատահեց և ճանապարհին վորպիսի դժվարություններ հանդիպեց, պահակն այդ չգիտեր։ Միայն մի բան նրա համար պարզ եր, վոր նա այժմ իր հայրենի գյուղումն ե։ Սրտապատառ նա տուն ընկավ, մոլոր, վշտահար, այլայլված. նրա դեմքը դալկացած եր, խոր ընկած աչքերը յերկյուղ, սարսափ եյին ազդում նայողին։

Մեծ յեղբայրը և ծերունի հայրը զարմացած նայում եյին։

Մայրն այնքան եր ահաբեկված, վոր լեզուն կապվել եր. ամբողջ տունը քարացել եր։

— Ի՞նչ ե պատահել, այդ դու յես,— ուժերը հավաքելով խոսեց հայրը։

— Դուռը փակի՛ր, փակի՛ր... գալիս են։

— Ո՞վ, վորտեղի՞ց, ո՞ւր եյիր գնում։

— Ահա այնտեղ, յերեք սև սյուն կա,—խոսեց կծկտուր պահակը։ Վազեցի յես, նորից կանգնեցի։ «Գնա, կապիր, թոկն առ, կապիր նրանց կոներն այն սյուներից»։

— Լսում եմ. ․ասացի, բայց ձեռքերս դողացին, գլուխս պտույտ յեկավ, ընկնում եյի։

— Շուտ, գոռացին վրաս. արդեն կապում եյի նրանց ձեռքերը. չեյի համարձակվում տեղից շարժվել, նայել նրան, և յերբ յետ եյի գալիս՝ սիրտս ամրացրի, նայեցի—մ, մ, այնտեղ ե, նա ինձ նայում ե, հեռու, ջուր ածա այդ կրակին, հանգցրու, յես վախենում եմ...

Նա յերկու ձեռքով ամուր ծածկեց յերեսը և կարծես յերազի մեջ խոսեց։

«... Սեվ, յերկար մազերը թափված կրակոտ աչքերին, նա ինձ այնպես նայեց վշտահար... մայրիկ»։ Վերջին բառը նա այնքան բարձր արտասանեց, որ տունը դողաց, մայրն ուշակորույս մոտեցավ նրան, ուզեց սփոփել, բան ասել որդուն, բայց տղան առանց ուշքի գալու շարունակեց.

«Անցեք տեղներդ, հրամայեցին մեզ»։

Կանգնած եյինք։

«Կր—րակ»...

Ձեռքերս դողացին, հրացանը վայր ընկավ. դողում եյի, ամբողջ մարմնով ցուրտ եյի զգում։ Մեր յետևից շարվեց մի այլ գունդ, լսվեց փամփուշտների շառաչյունը, փողերն ուղղվեցին դեպի մեզ, մեծ խարույկ պատրաստեցին մեր շուրջը. սարսափում եյինք։

«Նը—շան»,—գոռացին մեզ։

Վը՜ը՜ը՜շ,—թռավ գնդակը, աչքերս մթնեց։

Ընկած եր նա, թոկից կախված՝ ընկած, վիզը ծռվել, թեքվել եր կրծքին, ձախ ձեռքով նա ամուր սեղմել եր իր վոտքը, բայց աչքերը, յես նայեցի նրանց. նրանք վառվում եյին. մոտեցա նրան, ծնկաչոք ընկա նրա առաջ, կպա նրա վիրավոր կրծքին, արյունը պահեցի ներսը, լուռ վողբում եյի, այնքան տանջանք կար այնտեղ, վիշտ, ցավ կար այնտեղ, սիրտս ճմլվում եր. . Յես փախա։ Նրա կրծքի տակ խաչ եր պահված և այդ խաչը նրան սպանեց»։

Նա խենթացած նայում եր, մերթ ընկնում եր մոր գիրկը, մերթ հեռու յեր նետվում նրանից։ Վազում եր դեպի յեղբայրը. նորից իր հուսահատ, աղերսական հայացքը գցում եր մորը և կարծես ուզում եր հանգստանալ. վորոնում եր, բայց տեղ չեր գտնում... Հանկարծ նա մի ճիչ արձակեց.—«Թող ինձ աքսորեյին, թող տանջեյին տաժանակիր աշխատանքներում, թող մութ բանտերում քայքայեյին իմ ամբողջ կյանքը, բայց չասեյին, այդ սյունին կապած մարդուն սպանիր, չասեյին թոկ առ և...»



Նա կուչ յեկավ, կծկվեց և դառը կերպով սկսեց հեկեկալ։ Նրա դեմքը վշտահար եր, ճնշված ու հուսահատ, յերբեմն իր պղտոր հայացքը գցում եր հեռուն, ջղաձգական ցնցումներ եր անում, յերբեմն աչքերը փակում, կպչում եր մոր կրծքին և հազիվ լսելի արտասանում.

«... Յեվ կրակն այնպես բոցավառվում ե, յերկինքը կատաղի մրրիկ ե բարձրացրել՝ տանում ե մեզ. ու՜ր...»

---

— Ի՞նչ ժամանակաշրջան է ընդգրկում այս պատմվածքը:

— Ո՞վ էր պահակը:

— Նա համակրո՞ւմ էր արդյոք, թե ինչո՞ւ համար էին պայքարում «քաղաքական հանցավորները»:—Պա՞րզ էր նրա մեջ այդ գիտակցությունը, թե մշուշոտ:

— Ի՞նչ միջոցներով էր ցարական կառավարությունն ստիպում զինվորներին ծառայելու իր նպատակներին:

— Ինչո՞ւ չէր նա գնդակահարում «քաղաքականներին»:

— Ո՞ւմ տեսակետից էին նրանք «հանցավորներ»:

— Ի՞նչն էր պահակի խելագարվելու պատճառը՝ գնդակահարության ցնցող տեսարա՞նը, թե մի այլ բան:

— Բացատրեցեք այս պատմվածքի վերջին նախադասության իմաստը։

# Կ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

## ԿԵՑՑԵ՛Ն ՀԱՂԹՎԱԾՆԵՐԸ

Հրացանների զարկերով, թնդանոթների բոմբյուններով արյուն ու արցունք հեծեծող որը մոտենում եր իր վախճանին։ Արվարձանի շինությունները ձգում եյին լաստ-լաստ ստվերներ, վորոնք դեմ ու դեմ պատերի ու տների վրայով դեպի վեր եյին սողում, աշխատելով ընդգրկել գործարանների բարձր ու հոյակապ ծխնելույզները։

Այժմ ամեն ինչ հանդստացել եր, ամեն ինչ խաղաղվել։ Սարսափ-զարհուրանքի մի քար լռություն պատել եր շրջապատը…

Այո, պապանձվել եյին մահաշունչ փոթորկի դժոխային վոռնոցները..

Միայն այնտեղ, հրապարակի արևմտյան ճակատին գտնվող տունն եր, վորի սևացած պատերի արանքներից ու խորտակված տանիքից դեռ շարունակում եր մխալ մեղմիկ քուլաներով, վորոնք արեգակի վերջին ճառագայթների առաջ ձգում եյին հրապարակի վրա հսկա շղարշներ՝ քամու պես սահող և գոլորշու պես չքացող։ Այդտեղ միայն, յերբեմն, պահ մի խախտվում եր լռությունը, յերբ վորևե կիսավառ գերան կամ տախտակ պոկվում եր իր տեղից ու հիվանդոտ շառաչով գետնին փլվում։

Շատ բան եր պատմում այդ տունը։

Նրա մուտքի մոտ սևանում եյին կրակից ժեռված ու կծկված զանգվածներ, վորոնց, իրար դարձրած կլոր վերջավորությունների վրա տեղ գրավող, յերկ-յերկու շարք մարդկային ատամները հիշեցնում եյին դրանց մարդկային դիակ լինելը։ Կրակը լափել եր նրանց շրթունքներն և այնքան լայն բացել ծնոտները, վոր թվում եր, թե նրանք ծիծաղելիս ու հռհռալիս լինեյին, ծիծաղելիս դիվային խորհրդավորության կուշտ, բայց համր քրքիջով…

Ո՛ւմ վրա եյին ծիծաղում այդ խորոված մսային կածանները և ինչո՞ւ…

Հրապարակի մյուս ծայրին բարձրանում եյին գործարանական հաստակուռ շինություններն իրենց դեպ յերկինք խոյացող վիթխա-



րի ծխնելույզներով։ Այնտեղ, նրանց ստորոտում բաղխվել եյին դեպքի ամենատագնապալի րոպեները։ Այնտեղ նշմարվում եյին հողի թարմ թմբեր, ինչ-վոր ապրանքի հակեր, փայտերի ու գերանների կույտեր, վորոնց ուղղահայաց հենված եյին սայլակներ, փշրված վոտներով սեղաններ ու թախտեր…

Կրկին այն մարդկանցից… Բայց վոչ, սրանք չեն ծիծաղում առաջինների պես. սրանք լուրջ են, դիմագծերն անդորր, վորպես քնած մարդու։ Միայն այդ անդորրությունը շաղախված է կարմիր գույնով, արյան մեջ, վորի հետ նա մի վշտոտ ներդաշնակությամբ և՛ բողոք և՛ ներողություն է արտահայտում…

Գործարանական բազմաչյա շինություններն այժմ միակ սըրտացավ ականատեսներն են այդ ամենի։ Նրանք իրենց ծածկված պատերով, ճառագայթանման ջախջախված լուսամուտներով շարունակում եյին դիտել կույր հոր պես այդտեղ ընկածների տխուր, բայց հերոսական վախճանը։

Յեվ այդպես անցել եյին խելակորույս հերոսության ըմբոստ ժայթքումները, անհավասար կռվի մոլեգին բաղխումները։ Այժմ ամեն ինչ դադարել եր, ամեն ինչ խաղաղվել…

Հեռվից լսվեցին սմբակների դոփյուններ, վորոնք ցնցեցին լռությունը։ Ձայները մոտենում եյին հրապարակին։ Համազգեստների մեջ, զենքերով սպառազինված ձիավորների մի խմբակ եր։ Նրանք թույլ ու հոգնած շարժումներով օրորվում եյին ձիերի վրա, հազիվ իրենց պահելով թամբին։ Նրանց կարմիր դեմքերի վրա փոսացած պղտոր աչքերն ագահությամբ խաղում եյին իրենց մթրոտ խուռնների մեջ, մի ինչ-վոր բան փնտռելով։ Ահա մեկը, ավելի անհամգխար, իր հմտությունն ստուգել ուզեց և փորձեց ձիու վրա մի թռիչք գործել առաջին ընկած դիակի վրայով։ Նա մտրակեց ձիուն, ձին թռավ, փորձն հաջողվեց։ Բայց շփոթված կենդանին կարծես թռչելուց հետո միայն հասկացավ իր արածը և դիակից խրտնած՝ սկսեց տարօրինակ թռչկոտումներ անել։ Բոլորի տախտակ ու ձանձրացած դեմքերի վրա մի ժպիտ անցավ ձիու այդ վարմունքի առիթով. հնչեցին մի քանի փշրված քրքիջներ։ Մի ուրիշը, վոր այդ միջնադեպին վոչ մի կերպ չեր մասնակցել, բարձրացրած ողու շիշը անդադար գոչում եր.

— Տղերք, ձեր կենացը, տղերք, ձեր կենացը…

Ձայները նվաղեցին ու կամաց կամաց ձուլվեցին տների յետևում։

Կրկին տիրեց մահվան ու ավերակների հալածիչ լռությունը, վոր այս անգամ խախտեց հեռվից յեկող մի հատիկ, ամբողջ կըրծքով արտասանած, բացականչություն.

— Ամմա... հոպ.

Դրան հաջորդեց մարդկանց միաշարժ ու չափածո մի քայլվածք, որ քանի գնում ուժեղանում ու հրապարակին եր մոտենում։

— Հառթ-հիրթ, հառթ-հիրթ... սկսեցին արձագանգ տալ հրապարակի հեռավոր պատերը։

Հնչեց կրկին նույն ձայնը,— այժմ արդեն հրապարակում,— բայց մի ուրիշ վարիանտով.

— Ե՜եե... հոպ...

Յեվ զգաստ ու հնազանդ քայլվածքը մի վերջին զարկով կանգ առավ։

Պահակն եր։

Արեգակը վաղուց եր մայր մտել։ Հրդեհված տան փլատակների տակից, հում ու խանձված դիակների կողքերից ու արյան սև լճակներից ծնվում ու թևավորվում եր սովերախիտ մութը, ահ ու սարսափով հղի ցնորքներով լիքը։ Գործարանական շինությունները վերևից իրենց սև ու կույր աչքերը հառել եյին այդ անգամ հրապարակի մեջտեղը կանգ առած մարդկանց կենդանի խմբակին։

Պահակն եր, մոտեցող գիշերվա հսկիչն այդ սպանության հովտի։ Յերեսուն հոգի եյին նրանք, յերեսուն յերիտասարդ, ամրակուռ տղամարդիկ, յերեսունն ել հրացաններով ու փամփուշտներով սպառազինված։

Յերեք որ չկար նրանց այդ քաղաքը մտնելը։ Նրանց բերին հեռու տեղից. նրանք յերկար ճանապարհ կտրեցին. թե ուր եյին տանում և ինչու, իրենք ել չգիտեյին։ Վերջապես յերկու որ առաջ նրանք կանգ առան այդ քաղաքում—արդյոք յերկար ժամանակով, կրկին չգիտեն։ Այդպես են նրանք արդեն տարիներից ի վեր. ուրիշներն են նրանց ապագայի տերն ու կարգադրիչը, ուրիշների հաշվով են նրանք ապրում և ուրիշների համար։ Նրանց միայն ներկան ե պատկանում, այսորը...

Ո՜ւ, այդ «այսորը»...

Ի՞նչ որ եր այդ ինչու համար լուսացավ նա, ինչու տեղի ունեցան այդ բոլոր դեպքերը...

Յեվ ո՜րպես անսպասելի, ո՜րպես հանկարծակի, շուտափույթ...

Հենց այստեղ եր, այդ որը առավոտյան, նույն այդ հրապարակում, դեմ ու դեմ անկյունափողոցում։

Այն կողմն իրենք եյին կանգնած՝ ռազմական ամբողջ պատրաստականությամբ, այս կողմը՝ Grulf:

Վո՜րքան շատ եյին... Մեկն ինչ-որ բան եր ճառում։ Ահա նա վերջացրեց ու սուզվեց գլուխների ծովի մեջ, հնչեցին «ուռաներ», հնչեց մի յերգ...



— Փամփուշտները հրացանների... մեջ, որոտաց հանկարծ հրամանատարի ձայնը իրենց ականջների տակ։

Նրանք մեքենայորեն կատարեցին հրամանը։

Անսովոր յերգը շարունակում եր թնդալ հրապարակում, պարզվեցին դրոշակներ—բոլո՜րը կարմիր, ինչ-որ մակագրություններով։

— Հրացանը կրծ...քին,— շարունակեց հրամանատարը դայբուլթի շեշտով։

Նրանք կատարեցին հրամանը։

Յերգն ընդհատվեց, ամբոխն իրար անցավ, բարձրացավ մի տագնապալի աղմուկ, լսվեցին դեպի զինվորները սպառնալիքներ ու հայհոյանքներ...

— Կրա՜կ... լսվեց հրամանատարի ձայնը դողդոջույն վերջավորությամբ։

...Յեվ նրանք կատարեցին հրամանը։

Թե այնուհետև ինչ յեղավ, իրենք ել չիմացան։ Ո՜, նրանց աչքերը շաղվում եյին, գլուխները պտույտ գալիս առավոտյան անոթի փորով խմած ալկոհոլից, որ այնքան առատությամբ նրանց տրամադրության տակ դրին։ Նրանք ոչինչ չեյին զգում, բացի բնազդական գործողության մի ներքին պահանջից, այն ե՝ փամփուշտները հրացանների մեջ դնել և հակառակ կողմն արձակել։ Յեվ վո՜րքան շատ, վո՜րքան արագ, այնքան լավ։ Այդպես եր թելադրում նրանց տարիներով սաստած, տարիներով խնամքով ներշնչած բնազդը..

Վորտեղից որ եր՝ յերևան յեկավ թնդանոթը, որի բոմբյունները ցնցեցին շրջապատը, փողոցի լայնությամբ կառուցված ցանկապատը օդը ցնդեց։ Մարդիկ առաջներին,— ա՜յնքան անպաշտպան, բայց և ա՜յնքան հանդուգն,— ընկնում եյին, որոնց վրայով առաջ եյին սողում նորերը և նույնքան հեշտությամբ հրեղեն կարկուտ մյուսների վրա թափվում... Թնդանոթն արդեն հրապարակումն ե, այս անգամ մի տան վրա յե գործում, որտեղից հնչում են հատուկտոր,— յերևի պաշարվածների,— զարկերը... Փլվում են տան պատերը, ներսից ծուխ ե պոռթկում, կրակն ընդգրկում ե տունը, հրեղեն բոցերի մեջ մարդիկ են յերևում... Նորից գործում ե թնդանոթը, որի որոտների մեջ կուլ են գնում հրացանների համազարկերը և... Նորից գործում ե թնդանոթը. .

Ո՜, ինչու նրանց դիմադրությունն այնքան թույլ եր, ինչու նրանց գնդակներից ոչ ոք չվնասվեց։ Իսկ կռվի դաշտում, ընդհարումների հրատապ մոմենտներին, թույլը հզորի արհամարհանքն ե միայն շարժում, իսկ դիմադրությունը՝ ատելություն ե

գրգռում ու մի ցանկություն առաջացնում—վորքան կարելի յե շուտ և անխնա նրան վոչնչացնել։

Ինչո՞ւ նրանք ուժեղ չեյին։

Յեվ այդ բոլորը կատարվեց, այո, հանկարծակի, հենց այս հրապարակում, մի քանի ժամ առաջ։

Ինչպիսի՜ ժամեր եյին... իսկ այժմ, այսպես լուռ, այսպես խաղաղ...

Անհարկու յե կռվի դաշտի խաղաղությունը կռվից հետո։ Մանավանդ այս հրապարակում, ուր դեռ դիակներ են ընկած, ուր դեռ ավերակ տունն ե մխում. իսկ դեմ ու դեմի տունը, այն հսկայական շինությունը, վորտեղից կրկին զարկեր եյին տեղում, տե՜ս, տե՜ս, քանի աչքեր ունի, մութ, սև, խոր, բոլորն ել նրանց հառած...

Ահաբեկող, հալածող ե այդ ամենը։

Յեվ բոլորի մարմնով մի սարսուռ անցավ։

Նույնիսկ այն անվեհեր առաջնորդն անգամ, թվում եր, վոր նույնպես ընկճվում ե տեսարանից։ Նա լուռ ե, գլխակոր, նրա կուրծքը հազիվ ե բարձր ու ցածր լինում։

Յեվ բոլորն ել հազիվ եյին շնչում։ Նրանք, վորպես գերեզմանատան արձաններ, քարացել եյին տեղերն և վախենում եյին մի փոքրիկ շարժում անգամ անել։

Հանկարծ նրանց ականջին մի խշշոց հասավ, վորին հաջորդեց մի իսկ և իսկ մարդկային թնչոց։

Մի ցնցում անցավ բոլորի մարմնով։ Նրանք վայրկյանապես զսպեցին շնչառություններն ու սառն հրացանները իրենց մարմիններին սեղմեցին։

Ո՞վ եր այդպես հառաչողը։

Յերկար չտևեց, հնչեց մի ձայն, վոր, կասկած չկար, մարդու յեր։

— Ե՛յ քաջ մարդիկ, մեկին մոռացել եք,— լսվեց խորհրդավոր մթության միջից։

Զինվորները հրացանները մեքենայորեն կրծքերին դրին՝ պատրաստ կրակելու։

— Ո՜ւֆ, վե՛րքս... լսվեց նախկին հառաչը և կրկին նույն ձայնը, այս անգամ հանդիմանող ու ցավագին։—Անշնորհքներ, կարգին նշան դնել ել չգիտեք...

Ձայնը միաժամանակ լռեց։ Զինվորների կռներն սկսեցին դողդողալ. հրացանները ծանրացան ու կորցրին իրենց հավասարակշռությունը և, թվում եր, վոր նրանց ձեռքերից պիտի վայր թափվեյին։



Ո՛, ավերակների ու դիակների հիշաչար լեզու...

— Ե՛յ, հաղթողներ,— շարունակեց ձայնը վստահ ու խրոխտ տոնով,—ով ձեզանից ամենաքաջն ե, թող մոտս գա և վերջ տա կյանքիս թշվառ մնացորդին... Յես այլևս այսպես ապրել չեմ ուզում, յես միշտ ատել եմ կիսակենդան կյանքը... Յեկեք, յեկեք, բայց թող ամենաուժեղը գա՝ մի հարվածով ինձ վերջ տալու...

Նրանք բոլորը շարունակում եյին լուռ մնալ, վոչ մեկը տեղից չեր շարժվում։ Ամենից քաջին ու ուժեղին եր կանչում... Ո՞վ եր նրանց մեջ ամենաքաջն ու ամենաուժեղը՝ մի կիսամահ կյանքի վերջ տալու։

Դիակների միջի մի կիսակենդան դիակ։ Նրանց ձեռներն ավելի ես դողդողացին այդ մտապատկերից, իսկ հրացանները վայր իջան կրծքերից։

— Ե՛յ, չե՞ք լսում... Չե, լսում եք, բայց չեք ուզում... Գիտեմ, չեք կարող, հասկանում եմ, ձեր խիղճը հանգիստ չե, ձեր խիղճը ձեզ տանջում ե, վորովհետև այսոր դուք բոլորդ ել յեղբայրասպանություն գործեցիք...

Յեղբայրասպանությո՛ւն... Այդ բառից բոլորն ել սոսկացին։ Յեղբայրասպան... ի՜նչ նողկալի անուն ե այդ։

Ձայնը շարունակեց.

— Յեղբայրս զինվոր ե, ինձ հետ միասին արյուն-քրտինք թափած, միասին ապրած ու աշխատած։ Յեվ այսոր յես զինվորի գնդակից եմ ընկնում. ասացե՛ք, ի՞նչպես չհավատամ, վոր հենց յեղբորս գնդակից եմ ընկել... Յեղբա՜յր, զինվոր-յեղբա՜յր... Ա՜խ, յերանի թե մի նրան տեսնեյի, աչքերին մի խոր նայեյի... Անգութ, դաժան, նամարդ յեղբա՜յր. Հը՞մ,—այո, այսոր ձեզանից ամեն մեկն իր յեղբորը սպանեց, վորովհետև ձեզանից ամեն մեկն ինձ պես մի յեղբայր ունի...

— Ճի՛շտ ե, ճի՛շտ,—անցավ բոլորի մտքով։

Յեվ այնուհետև նրանց թվաց, վոր նույն րոպեյին շրջապատող բոլոր դիակները շունչ ու լեզու պիտի առնեն, շարժեն իրենց այլանդակ մարմիններն ու անեծքի խոսքերով նրանց վրա հարձակվեն. նրանց թվաց, վոր այդ շարժուն դիակների մեջ նրանք ծանոթ դեմքերի յեն հանդիպելու, իրենց ազգականներին ու իրենց յեղբայրներին են ճանաչելու...

«Գնա՛նք, գնա՛նք», անցնում եր բոլորի մտքով։ Նրանց հոգեկան աշխարհը հուզվում եր, վորպես մի անզուսպ փոթորիկ։ Նրանք, քիչ եր մնում, թափեյին զենքերը և փախուստ տային այդ սարսափելի հրապարակից։ Յեվ վախկոտ հայացքները հաճախ հրամանատարին

էյին ուղղում, վորը կանգնած եր նույնպես մտածկոտ ու գլխակոր։ Ի՞նչ եր մտածում նա՝ չիմացան զինվորները, միայն նրանք այն նկատեցին, վոր հրամանատարը շշուկով նրանց գնալու նշան արավ։ Նրանք շարժվեցին, բայց վոչ նախկին միաշարժ ու զգաստ քայլվածքով. Նրանք սրտաճաք, վորպես վերահաս վտանգից, քայլում էյին խճճված, համարյա վազում։

— Ո՞ւր եք գնում, ե՜յ, կացե՛ք, կացե՛ք, յես դեռ կենդանի յեմ,— կանչեց նրանց յետևից վիրավորը։

Պահակը շարունակում եր իր նահանջը։

Այն ժամանակ վիրավորը գործ դրեց իր վերջին ճիգը և խարխափելով վոտքի կանգնեց։

— Ո՞ւր եք փախչում, չե՛, չե՛, դուք աշխարհում, թեև կենդանի, բայց հանգիստ չեք գտնելու... Դո՛ւք, վա՛տ մարդիկ, դուք, յեղբայրասպաններ...

Պահակը յետ չեր նայում։

Բայց վիրավորը յերկար կանգնել չեր կարող. այդքան ուժ նրա արնաքամ մարմնի մեջ չկար։ Նա այդ զգաց, նա զգաց, վոր իսկույն գետին ե գլորվելու, այլևս չկանգնելու պայմանով, նա զգաց, վոր կյանքի վերջին վայրկյաններն ե ապրում։ Յեվ ուզեց միայն մի խոսք, մի նախադասություն ուղղել պահակի յետևից։ Մի նախադասություն միայն,—նա գիտեր, վոր յերկար խոսել չի կարող,— մի նախադասություն, վոր բովանդակեր այն ամենը, ինչ նա մտածում եր, ինչ նա տեսավ և ինչ նա զգում ե...

Յեվ նա սկսեց կիսալալկան ու զայրույթի ջեշտով, չիմանալով թե ինչ ինչ ասի.

— Դո՛ւք... դո՛ւք...

Գոչեց նա, բայց կիսատ թողեց, վորովհետև նա բառերը չգըտավ, վորոնք կարող լինեյին նրա սրտի ամբողջ մաղձը թափել։ Նրա գլուխը շաղվում ե, նա արդեն որորվում ե, նա շուտով վայր կընկնի։ Իսկ խոսել ուզում ե։ Յեվ նա մի վերջին ճիգ գործ դրեց, բռունցքներն ամուր սեղմեց, կարծես թե խոսքեր գտավ, և ամբողջ կրծքով վորոտաց պահակի յետևից.

— Կեցցե՛ն, կեցցե՛ն հաղթվածները...

Ու ամբողջ հասակով, վորպես մի ստվեր, գետին փռվեց։ Նա շնչասպառ սկսեց արյունոտ գետինը ճանկռտել, և վերջին ջղաձգության ժամանակ, մահվան խռկոցներով նա նույն նախադասությունը մի անգամ ել կրկնեց՝ վանկ-վանկ, շեշտադրությամբ.

— Կեցցե՛ն... հաղթ-ված-նե-րը...

Լռեց։ Զինվորների քայլվածքը խլացել եր հեռավոր տարածու-



թյան մեջ։ Հրապարակը պատեց մի մեռելային լռություն։ Մոտենում եր մի խորհրդավոր ու սև գիշեր, վոր իր անթափանցելի թևերի տակ պատսպարում եր ամեն բան։ Միայն մխացող տնից յերբեմն փչող ճենճային հոտը մատնում եր, վոր այդ խաղաղ հրապարակում կատարվել եր մի արտասովոր վոճիր։

---

## ՄԱՐՏԱԿՈՉ

### I

— Ո՜ւ, ո՜ւ, ո՜ւ...

Փչում եր մեքենատան կարից գործարանի շվին։ Փողանցքից դուրս եր պոռթկում, քուլա-քուլա, բամբակի նման գոլորշին, կախվում ամառվա տոթ օրվա կանգնած օդի մեջ ու մեղմիկ գզգզվում ու հալվում։

Կեսօրվա ժամի մեկն եր։ Ճաշի գնացած բանվորներին ճշտապահ շվին նորից գործի յեր կանչում.

— Ո՜ւ, ո՜ւ, ո՜ւ...

Բանվորները խումբ խումբ քայլում եյին դեպի գործարանը, մի պահ խռնվում դարպասի առաջ ու ներս մտնելով, ցրվում ամեն մեկն իր տեղը։

Ու գործարանը նորից կյանք առավ։

Դեպի յերկինք խոյացող ծխնելույզը վերև ծխի սև ամպեր արձակեց, իսկ ներքև, մեքենատանը, հսկա անիվները շարժվեցին իրենց բներում։ Յերկու հաստ գլանակներ սողացին ու պտույտ յեկան իրենց նավթոտ վորջերի մեջ, ու գարկվեցին մեծ ու փոքր մուրճերը, փռռացին յերկաթե պսպղուն գնդակիկները, վոլորվեցին պտուտակներն ու պտույտ տվին կաշվե լայն գոտիները, շարժեցին ու գործի դրին ամեն մի իր, ամեն մարդու։ Գործարանը շունչ ու կենդանություն ստացավ, բարձրացավ մի աղմկահույզ ժխոր, իր ինքնատիպ ներդաշնակությամբ։ Միայն քամին եր, վոր դժգոհ լալիս եր մերթ անիվների շառաչյունների մեջ, մերթ կաշվե գոտիների արանքում։

Ինքնաբավական ժպտում եր մեքենապետը։ Իր հմտության գիտակցությամբ հպարտ՝ յուղի սրվակը ձեռին, պտույտ եր գործում մեքենայի շուրջը ու յուղ կաթեցնում պտուտակների ականջները։

Ահա, գործարանի ընդարձակ բակում յերևացին և բեռնակիրները, ծանր բեռները շալակներին։

Յերեք ուժեղ, թիկնավետ տղամարդիկ եյին դրանք, յերեքն էլ յերիտասարդ ու պարթև։

Նրանք դուրս յեկան պահեստից ու, բեռների տակ կռացած, ուղտերի պես միմյանց յետևից շարված, առաջ շարժվեցին։

Սակայն նրանցից մեկը, վոր միշտ յետ եր մնում, չուներ առաջինների թափը։ Նրա քայլերը քանի գնում, մանրանում եյին, իսկ սրունքները դողդողում։

— Ձե՛, ախպեր, թա՛ն չի, ամեն մարդու բա՛ն չի,— հեգնեցին նրա ընկերները։

— Դեռ խամ ե, վոտների ջլերը դեռ չի պնդել, կսովորի,— ներողամտաբար վրա բերին մյուսները։

Վարդանը (այդպես եր նրա անունը) այդ խոսքերից ավելի ամաչեց, մի տեսակ վիրավորանք զգաց։ Ինչո՞վ եր ինքը պակաս նրանցից։

Վարդանը «նորեկ»-ներից եր։ Հազիվ մի ամիս լիներ, ինչ թողել եր գյուղը։ Մի համագյուղացի բանվորի բարեխոսությամբ նա տեղ գտավ այդ գործարանում։ Բայց վորովհետև վոչ մի մասնագիտության տեր չեր, կամ, ավելի ճիշտն ասած, վորովհետև կառավարիչը մի բեռնակրի կարիք ուներ,—նրան տվին ճարպկություն չպահանջող «փալանը»։ Նրա հաղթանդամ մարմինն ու լայն թիկունքը «փալան» կրելու բոլոր հարմարությունները ունեյին։

Ճիշտ ե, «փալանը» լավ եր նստում նրա մեջքին, բայց նրան դավաճանում եյին նրա վոտները։ Դեռ մինչև կեսօր վոչինչ. բայց հենց վոր թեքվում եր արևը, կարծես ուռչում, ծանրանում ու արճճով եյին լցվում նրանք։ Ու, չգիտեր ինչու, սկսում եյին դողալ բեռան տակ, իսկ գիշերները ցավել։ Ասում եյին՝ «խամությունից» ե, կվարժվի։

Կեսօր եր։ Արեգակը ջեռում եր յերկնքից։ Աշխարհը կարծես մի վառած հնոց լիներ, և մարդիկ տաքությունից մի հով անկյուն եյին փնտրում պառկելու համար։ Միայն գործարանի բեռնակիրներն եյին, վոր հանգիստ չպիտի ունենային։ Նրանք բեռնակիրներ եյին, պիտի աշխատեյին. միայն ծույլերն են փախչում աշխատանքից։ Աշխատանքն ե, վոր հաց ե տալիս մարդուն։ Այդպես եյին նրանց հասկացրել։ Վարդանը գիտեր այդ, և դրա համար էլ քրտինքը հոսում եր նրա դեմքից ու ծոծրակից։ Բայց այդ օրը կյանքի այդ իմաստությունը խանգարում եր մեքենատան կտրի վրա ընկած խոտը։

Ամեն անգամ, յերբ իր բեռը վերև տանելուց հետո իջնում եր սանդուղքներից, աչքերն ակամայից հառում եր այնտեղի խոտի դե-



զին, ուր նա այնպիսի՜ հաճույքով կպառկեր, գեթ մի ժամ, մի րոպե, ճիշտ այնպես, ինչպես այն փոքրիկ կատուն, վոր այնպես գալարվել ե այնտեղ...

Սակայն հենց վոր հասնում եր ներքնահարկի պահեստը, և չորս ուժեղ ձեռներ բարձում եյին նրա մեջքին ծանր հակը, նա ուշքի յեր գալիս, և այդ թովիչ հեշտանքը փախչում եր նրանից։

Բայց դա վերջին բեռն եր։ Նրան կանչում եյին այլ պահեստ։ Նա այլևս այդ խոտի կողքով չպիտի անցներ։ Ի՞նչ կլինի, վոր իսկապես անցնի կտուրն ու մի րոպե փարվի այդ խոտերին, ինչպես նա այդ անում եր իրենց գյուղում, յերբ հոգնած եր լինում. մի րոպե, միայն մի րոպե...

Ու նա չիմացավ, թե ինչպես անցավ կտուրն ու ընկավ խոտի վրա։ Չոր խոտի անուշ հոտը կարծես հարբեցրեց նրան։

— Ոխա՜յ, - դուրս թռավ նրա կրծքի խորքից,—քո անուշ հոտին մեռնեմ,— բայց իսկույն ինքն իրեն ավելացրեց։— Չե, յես չեմ պառկի յես չեմ քնի. յես բեռ պիտի կրեմ... Ես րոպեյիս վեր կկենամ, ես րոպեյիս...

Նրա հոգնած գլուխը կշռաքարի պես իջավ խոտի վրա, իսկ շրթունքները կծկտուր շշնջացին.

— Ես... րոպ...եյիս...ես...րոպ...

Ներքև, կտուրի տակ, ամեհի թափով պտտվում եյին մեքենայի անիվները ու ցնցում առաստաղը։ Վարդանը կարծես պառկել եր մի հսկայական թմբուկի կաշու վրա, ուր տեղում եյին թմբկահարի փայտի հարվածները։ Ստորերկրյա այդ դղրդյունը կարծես հանգիստ եր բերում նրա ուժաթափ վողնաշարին ու հոգնությունից դողացող սրունքներին։ Ու նա մոռանում եր, վոր ինքն ե իր հոգնատանջ մարմնի անդամների տերը, զգում եր միայն ձեռի ափը, վորի վրա կոթնել եր իր արճճի պես ծանր գլուխը...

Ու նա փակեց աչքերը...

Վորքան անցավ չիմացավ։ Չիմացավ անգամ՝ յերազ եր, թե արթմնի։

Նրան թվաց, թե իրենց գյուղումն եր։ Վողջ օրը հարևանի հանդում աշխատելուց հետո պառկել եր իրենց խրճիթում, խսրի վրա։

Օրը մթնում եր մի վորոտընդոստ յերկունքով։ Յերկինքը դղրդում եր ամպերի վորոտներից և դողդոջուն կայծակի կապույտ ալիքները լիզում եյին նրա խրճթի զույգ պատուհանները։

Կինը կողքին նստած, հրում եր նրան ու կանչում.

— Վարդա՛ն, վե՛ր կաց, վե՛ր կաց, քեզ կանչում են, ջաղաց պիտի գնաս։

— Անխի՜ղճ, անաստված,— փնթփնթում էր նա քթի տակ,— վողջ որը բանի էլի, թող չե՞ս անի, մի աչքս փակեմ…

-- Մի կտոր հող ունեյինք՝ ծախեցիր. ձմեռ է գալիս. հաց չունենք, թացան չունենք, վե՜ր, քառասուն կոպեկ փող են տալիս…

— Հրես, հրես քաղաք եմ գնում. կաշխատեմ, կհարստանամ, տունս կպահեմ, թո՛ղ, թող քնեմ։

Հանկարծ կռան վրա մի խիստ ցավ զգաց։

Մի՞թե կինն էր.

Նա զարմացած բացեց աչքերը։

Յեվ ի՜նչ տեսավ… Վորոտը փոխանակ յերկնքից, լսվում էր ներքևից, և մեկը գլխին կանգնած հայհոյում էր նրան։ Նրա դեմքը և՛ ծանոթ էր և՛ անծանոթ։

Հանկարծ նրա վոտը շարժվեց ու կրնկով իջավ նրա ուսին։ Ցավից նա ցատկեց ու քնաթաթախ աչքերը խոժոռեց նրա դեմքին։

Կառավարչի ոգնականն էր…

— Տո՛ անամոթ, արթնացի՛ր է՜, հերիք մրափես, տո՛, հաստագլուխ, քե՞զ չեմ ասում…

Վարդանը նոր միայն ջոկեց յերազն իրականությունից։ Առավ «փայանն» ու ցած իջավ։ Նրա վոտները դեռ դողում էյին, աչքերը մթնում։ Նա սանդուղքից իջնելիս այնպես էր նայում դեպի ցած, վոր կարծես այնտեղ գործարանի բակը չէր, այլ մի մութ անդունդ, ուր գնում էր նա կորչելու համար, վորովհետև այդպես էր նրա յետևից յեկողի կամքը։

Բայց ներքև, գործարանը մտած սայլի առաջ, նրան սպասում էյին ծանր հակերը։

Նրան կանչեցին, վոր բարձեն, բայց նա կարծես խլացել էր։ Նա շշմած կանգնել էր բակի մեջ ու իր արյունով լի աչքերն ուղղել գրասենյակի կողմը, ուր ծառի շվաքի տակ կանգնել էր գործարանատիրոջ կառքը։ Գլուխը կամարաձև բռնած նժույգը առջևի վոտներով փորում էր գետինը, բերանի մեջ խաղացնում յերախակալն ու սպիտակ փրփուրներ թքում գետնին։

Վարդանն ուշքի յեկավ միայն այն ժամանակ, յերբ նորից կառավարչի ոգնականի խռպոտ ձայնը հնչեց նրա ականջի տակ՝ նույն զայրույթի ու հայհոյանքի խոսքերով.

— Ի՞նչ ես եշի պես ցցվել։ Քո՞ռ ես, չե՞ս տեսնում արաբեն։ Թե յե՞ս պիտի գնամ կրեմ։ Բա եսպես էլ հաստագլուխ ժողովուրդ կլինի…

II

Ամռան շոգերի հետ անցնում էյին Վարդանի աշխատանքի դժնդակ որերը։



Նա սկսել էր վարժվել իր գործին. բեռները կարծես կորցրել էյին իրենց նախկին ծանրությունը։

Փոխվել էր և ինքը Վարդանը։ Նա սկսել էր իր վերաբերմունքն ունենալ դեպի շրջապատող կյանքը։

Կիրակի որերը նա իր ընկեր Արշակի հետ դուրս էր գալիս քաղաքում զբոսնելու։ Հետաքրքրությամբ դիտում էր իր շրջապատն ու զմայլվում այն ամենով, ինչ նոր էր նրա աչքերին, ինչ չկար իրենց գյուղում։

— Արշակ,— ասում էր նա,— մարդ պիտի քաղաքում ապրի, վոր իր ապրածն էլ մի բանի նմանի։

Արշակը, վոր ավելի յերկար էր ապրել քաղաքում, Վարդանի նաիվությունը չուներ։

— Հա,— առարկում էր Արշակը,— ճիշտ ես ասում, բայց թե մեզպեսների համար չի քաղաքը։ Վայելքը շա՜տ, վայելողը քիչ։ Ասա տեսնեմ, եսքան ամիս է եստեղ ես, ի՞նչ ես տեսել։ Թատրոն ես գնացել, թե կլո՞ւբ, կամ թե չէ կոնցե՞րտ։ Իսկ իմացե՞լ ես, թե ինչ կա էն պալատ-տներում, կամ թե չէ՝ վո՞նց են նստում էն ռեզինի փափուկ ֆայտոնները… Ե՛հ, յեղբայր, վո՞ր մեկն ասեմ։ Աշխարհիս վայելքը շա՜տ, բայց թե մե՞զ ինչ…

Յերկուսն էլ լռում էյին, յերկուսին էլ պատում էր մի անբացատրելի տխրություն։ Նրանք դուրս էյին գալիս քաղաքից, անցնում մոտակա դաշտը, ուր, թվում էր, թե մոռանում էյին աշխարհիս անարդարությունը։

Նրանք պառկում էյին կանաչ խոտի վրա, յերկա՜ր, շա՜տ յերկար դեպ յերկինք նայում ու լռում։ Դաշտի վրա յերկաթուղու գիծն էր ընկած։ Քամու արագությամբ գալիս ու անցնում էր սրընթաց գնացքը, կարծես թե նույն արագությամբ էլ բերում ու տանում հետը կյանքի հանելուկը, նրա գաղտնիքը, վորին հասնել ու լուծել էյին ուզում այդ յերկու ոտարական բեռնակիրները։ Յեվ խոսում էր կրկին նրանց բերանով կյանքի փիլիսոփայությունը։

— Ղո՛րթ ես ասում, Արշակ, մենք անբախտ մարդիկ ենք։ Աշխարհիս ամենածանր լուծը մեր վզին են դրել։ Բայց յես առաջ, քանի գեղումն էյի, հենց գիտեյի՝ մենակ գեղըցու որն է սև. հիմա տեսնում եմ, վոր քաղաքի բանվորի որն էլ մի գատ չի…

Նա լռում էր միքանի վայրկյան, կարծես մի բան միտքումը վորոճալու համար ու անվստահ կերպով հարցնում.

— Արշակ, խելքդ ի՞նչ է կտրում. հենց եսպես էլ պիտի մնա աշխարհիս բանը։

— Բա ի՞նչ ես կարծում, եսպես յեղել է, եսպես էլ պիտի գնա…

— Չե՛, լսի՛ր, տես ի՛նչ եմ ասում։ Դե վոր գեղցու խելքը չի՛ կտրում, հասկանալի յե. խեղճն ինչ ե տեսել, վոր ինչ իմանա։ Իսկ բանվորի բանը ջոկ ե. նա աչքաբաց ե, բա նրա խելքը չպիտի կըտրի՞ էս բաները...

— Ի՞նչ պիտի անի. չե՞ս լսել, վոնց ա տերտերն ասում. «Ծառայք, հնազանդ յեղերուք տերանց ձերոց»։ Մեր ճարն ել ինչ, հնազանդվում ենք։

Սակայն Վարդանին չեյին բավարարում Արշակի այդ բացատրությունները. նա մի աշխույժ շարժումով վեր եր կենում տեղից, կարծես թոթափելու համար այդ ծանր մտքերը, ու ասում.

— Վե՛ր, վեր կաց գնանք։ Հրես կմթնի, գավոդի դռները կփակեն։

Որերն անցնում եյին կամաց-կամաց, իրենց հետ բերելով ձանձրալի միակերպությամբ աշխատանքի նույն տաղտուկ ժամերը։

Սակայն այդ ժամերից դուրս Վարդանն սկսել եր նոր հորիզոններ թեւակոխել։ Նա այլևս չեր գնում իր ընկերոջ հետ գործարանից դուրս անտեղի թափառումներ կատարելու։ Նա ինչ-վոր այլ ընկերական շրջաններ եր ձեռք բերել և այդտեղ եր անցկացնում իր պարապ ժամերը։ Այնտեղ կարծես նա կամաց-կամաց սկսում եր ստանալ իրեն տանջող մտքերի պատասխանը։

Նոր մտքերի հետ թարմանում եր և նրա ճաշակը։ Նա այլևս չեր հավանում իր հագի գյուղական կապան։ Նա ուզում եր քաղաքի բանվորների պես հագնվել։ Յեվ այն որը, յերբ դեն ձգեց իր կապան ու հագավ նոր շորեր, հպարտությամբ մոտենում եր ընկերներին և ասում.

— Տղե՛րք, տեսեք, քաղաքի մարդ եմ դարձել, քաղաքի՛...

## III

Սկսվել եր անձրևային աշունը։ Բայց մոխրագույն մառախուղն այնպես եր կախվել գործարանի ու քաղաքի գլխին, վոր կարծես քաշվելու միտք չուներ. վերևից անվերջ մաղում եր անձրևը, իսկ ներքևը ջրի ու ցեխի ծով եր։

Ուշ յերեկոյան բանվորական նկուղներից մեկը շարունակում եր իր պատուհանից ձգել դեմ ու դեմ պատի վրա լույսի մի մշուշապատ խուրձ։ Պատուհանի վարագույրի յետևից լսվում եյին մարդկային ձայներ։ Մերթ խոսում եր մեկը, մերթ բոլորը միասին։ Յեվ այդ աղմուկի մեջ ինչ-վոր տարորինակ լըջություն կար։

Ահա, մթության մեջ, բացվեց նկուղի դուռը, և մեկը մյուսի յետևից դուրս յեկան մարդիկ խորհրդավոր լռությամբ և ցրվեցին աջ ու ձախ։



Նկուղը դատարկվեց, և այնտեղ տիրեց լռություն, ավերակների միջի մի մնայուն լռություն։

Կեսգիշերից անց եր, սակայն նկուղի ճրագը դեռ շարունակում եր աղոտ լույսով ուրվագծել փոքրիկ պատուհանը։

Այդտեղ յերեք հոգի, գալարված իրենց անշուք անկողինների մեջ, խոր քուն եյին մտել։ Միայն չորրորդն եր, վոր նստած թախտի վրա, նավթի ճրագի առաջ չեր կարողանում քնել։ Նա յերեկոյան հավաքույթի թարմ տպավորության տակ, հուզմունքի մեջ եր, և մտքերի անվերջ շարանը նրան հանգիստ չեր տալիս։

Նա նայեց իր շուրջը և առաջին անգամ քննական հայացքով տնտղեց իր բնակարանը։

Վերև, նրա գլխին ծանրանում եր մրից սևացած առաստաղը և, վորպես ջրաբաշխական մամուլ, սեղմում սենյակի չորս, կարճ պատերի մեջ խոնավ և գարշահոտ ոդը։

Խլուրդային վորջի սառնություն եր փչում այդ սենյակից։

Յեվ առաջին անգամ նրա մեջ ցոլաց զայրույթի և զզվանքի կայծը։ Նա ուզեց, վոր չքանա նրա տեսողությունից այդ տեսարանը, կռացավ ու փչեց ճրագը։

Վարդանն եր։

Նրա մոտ եյին հավաքվել այս անգամ ընկերները։ Խոսողը կրկին նա չեր։ Բայց նրա խոսքերը յերբեք այնքան պարզ, այնքան մատչելի չեյին թվացել նրան, վորքան այդ գիշեր։ Կյանքի հանելուկի այն խճճված կծիկը, վոր չկարողացան յետ տալ վոչ ինքը և վոչ ել Արշակը, նա յետ տվեց, նա լուծեց։ Յեվ գոհ եր Վարդանը։ Նա այժմ իրեն վերածնված եր համարում։

Յեվ զինված նոր մտքերով՝ թերթում եր մտքի մեջ իր անցյալի տխուր եջերը։

Ի՞նչ եյին ասում այդ եջերը։

Տանջա՛նք, քրտի՛նք ու զրկա՛նք...

Յեզան պես աշխատում եր նա, սակայն յեզան չափ անգամ չունեցավ ապրուստի ապահովություն կյանքի մեջ։

Անկշտում և հոգեհան «տուր»-ը միշտ չոքած տեսավ իր տան շեմքին։ Տո՛ւր... Ձմռան պարաքի տոկոսը տո՛ւր, գյուղի հարկը տո՛ւր, թագավորական տուրքը տո՛ւր, տերտերին, տիրացվին տո՛ւր, մելիքին, գզրին, պրիստավին տո՛ւր, տանդ պետքերին տո՛ւր, միշտ տո՛ւր, տո՛ւր... Իսկ ի՞նչ եր տալիս այդ բոլորի փոխարեն նրա ապրուստի միակ աղբյուրը՝ արտը։— Համարյա վոչինչ։ Վերջին տարվա կարկուտը տնորինեց նրա վիճակը, և հողը մնաց... պարտատիրոջ։

Ու նա բռնեց քաղաքի ճամփան։ Այդ ճամփան եյին բռնել

և նրանց գյուղից շատերը։ Գուցե այնտեղ փորձեր իր բախտը, բախտի արևը գուցե մի անգամ էլ նրա սև օրին ժպտար...

Իսկ ո՞ւր մնաց այդ արևը, նրա ժպիտը։

Վարդանը խոր հոգոց հանեց, նորից վերկացավ տեղից ու նստեց թախտի վրա։ Նրա քունը չէր տանում։ Առավ լուցկին ու, խարխափելով մթության մեջ, վառեց ճրագը։

Նրա ձայնից արթնացավ Արշակը։

— Ի՞նչ կա, Վարդա՛ն, հիվանդ խո չե՞ս։

— Չէ, հիվանդ չեմ... հենց էնպես...

— Բա ինչի՞ չես քնում,— հարցրեց Արշակը։

Վարդանը չլսեց նրա հարցը. նրա մտքերն այլ տեղեր էին դեգերում։ Ու պատասխանի փոխարեն ինքը հարցրեց.

— Արշակ, ասա տեսնեմ, հավանեցի՞ր, թե չէ։

— Ո՞ւմը, ինչի՞ն —հարցրեց Արշակը տարակուսած։

— Նրա խոսքերին... Եսոր, ցերեկոյան...

Արշակը նոր միայն գլխի ընկավ։ Նա մի փոքր լռելուց հետո պատասխանեց.

— Ի՞նչ ասեմ, Վարդա՛ն, որ լավ մտածես, նրա ասածները ճիշտ են։

Վարդանն ուրախացած, որ վերջապես կասկածամիտ Արշակն էլ նույն կարծիքին է, ասաց.

— Տեսնո՞ւմ ես, յես որ քեզ ասում էի, թե աշխարհիս կարգը էսպես չի՛ մնա...

— Հա՛, հետո ինչ պիտի լինի,— պատասխանեց Արշակը ավելի հեգնական, քան հարցական յեղանակով։

— Ա՜յ, էնպես, ինչպես նա ասաց։ Մի մտածիր, Արշակ։ Մենք գեղ տեղում չենք ապրում, ուր մի կողմից տերտերն է կանգնած իր խաչ ու ավետարանով, մյուս կողմից աղասախկալները՝ մեծ պառից յերկար խրատներով։ Կամ թե չէ մելիքը՝ իր մտրակով ու աղան՝ իր սպառնալիքով։ Ու դու մնում ես մենակ։ Ջոկ բան է քաղաքը։ Մի տե՛ս չորս կողմդ։ Տես քանի՜-քանիսը կան մեզ պես, որ դաղված տեղեր ունեն...

Բայց Արշակը կարծես նրան չէր լսում։ Վարդանը զարմացավ, որ իր խոսքերին նա արձագանք չի տալիս, ու անհամբեր հարցրեց.

— Էնպես չի՞, Արշակ։

Սակայն Արշակն այլ պատասխան տվեց.

— Չէ, Վարդա՛ն, խամ ես։ Ասածներիցդ խելքս բան չի կտրում։ Ղորթ ա, էստեղ տերտեր չկա, մելիք կամ աղասախկալ չկան, բայց, Վարդա՛ն, (այստեղ նա իջեցրեց իր ձայնը), դու մոռանում



ես, որ էստեղ զորք ու ղազախ կան, տերություն կա... ապա մի փորձի՝ հացի պես կփրթեն... Չէ, Վարդան, էդ գլուխ գալու բան չի...

Վերջին խոսքերը հնչեցին Վարդանի ականջներին իբրև մահվան դատավճիռ։ Նա կուչ յեկավ, կարծես փոքրացավ։ Նա այդ բաների մասին չէր մտածել։ Նա լռեց։ Մի ծանր ու անհաճո զգացմունք պատեց նրա սիրտը։ Մտքերի նոր շարան յեկավ տանջելու նրա ուղեղը, ուր անվերջ կերպով պտտում էր նույն մտատանջ հարցը.

— Տեսնես գլուխ գալու բան է դա, թե չէ...

Դուրսը մութն էր։

Անձրևի մանրիկ հյուլեները լիզում էին նրա նկուղի պատուհանի ապակիները, ու պատի տակ լսվում էր տանիքից ընկնող ջրի կաթիլների ձայնը։ Ու այդ կաթիլների հետ, ամեն անգամ, մուրճի հարվածների պես զարկվում էր նրա ուղեղում նույն չարատանջ հարցը.

— Հա՞, թե չէ. . հա՞, թե չէ...

## IV

. . . . . . . . . . . .

Վերջապես հնչեց նա, ամենի սպասածը։

Գործարանի շվին։

Հնչեց աղեկտուր, զուժկան, որպես վտանգված գազանի բառաչ։

Այդպես նա փչում է միայն հրդեհի ժամանակ։

Դուրսը, վազվզուն քամին առավ նրա արտասովոր հնչյունները, բարձեց իր՝ այս ու այն ծառից հափշտակած տերևների վրա ու տարավ, զարկեց գործարանի պատուհաններին ու բանվորներին դեպի փողոց կանչեց։

Իբրև ահազանգ, մեկը գործարանում լիաբերան գոռաց.

— Գործադո՜ւլ...

Ու յերկնքում գործարանի ծխնելույզը դադարեց մխել, մեքենատան մեջ ամեհի անիվները ծանր տնքոցով կանգ առան, մուրճերը պապանձվեցին, կաշե գոտիները թնչալով անշարժացան, և գործարանում դադարեց, մեռավ կյանքը։ Մեքենաների գղրդյունը տեղի տվեց ամբոխի հուզված աղմուկին։ Հանդիսավոր ժպիտը դեմքերին, հաղթական քայլվածքով ամբոխը դեպի փողոցն էր շարժվում, իր յետևից թողնելով մեռած գործարանը։

Այդպես էր նրա կամքը...

Ահա դուրս յեկան Վարդանն ու Արշակը։ Նրանք այժմ այլևս հասարակ բեռնակիրներ չէին։ Միքանի շաբաթ կար, ինչ նրանց

«գործի եյին դրել», կարծես նրանց մինչ որս կատարած աշխատանքը «գործ» չեր:

— Արշա՛կ,— դիմեց ժպտերես Վարդանն իր ընկերոջ.— հիմա հավատո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես՝ ինչ համերաշխություն կա:

— Հա՛, ճիշտ է,— պատասխանեց նույն կասկածոտ Արշակը.— բայց վայ թե մենք մենակ մնացինք:

— Լսի՛ր, Արշակ, լսի՛ր, տես, քանի՛ գործարանի շվի չէ փչում մերի պես...

Գործարանի առաջ, հրապարակի վրա ամբոխը կանգ առավ: Գլուխների ովկիանի միջից վեր բարձրացավ մի բանվոր ու սկսեց խոսել: Զուրկ հռետորական ձևերից, նա խոսում եր բռունցքները սեղմած, մի սպառնական դիրքով, կարծես իր առաջին իր վոխերիմ թշնամուն եր տեսնում, վորի վրա պիտի հարձակվեր ու կոկորդը սեղմեր:

Նա ամբոխին դեպի կռիվ եր կանչում:

Ու լսում եր նրան ամբոխը զսպված շնչով ու կլանում նրա բերանից դուրս յեկած ամեն մի խոսք:

— Ով մեզ հետ չէ, նա մեր թշնամին է, գնանք. գնանք դեպ առաջ, այս հպարտ ծածանվող կարմիր դրոշը թող մեր ուղեցույցը լինի...

Նա վերջացրեց իր ճառը. օդը թնդաց կեցցեների վորոտով: Ամբոխը նորից շարժվեց, իսկ առաջից ծածանվում եր մի կարմիր դրոշակ, վորի ծալքերի մեջ Վարդանը ջոկեց յերկու բառ...

— Բանվորներ... միացեք...

Նա հափշտակված նայում եր այդ բոլորին: Դրոշակի բառերը խոսեցրին նրան:

— Արշակ,— դիմեց նա իր ընկերոջը,— մի տես է, մեր դրոշակն է, մի տես՝ ինչ տեղին խոսքեր է գրված վրան: Բանվորնե՛ր, միացե՛ք, ել ավելի մեզ ինչ է պետք...

— Գալիս են, գալի՛ս,— անցավ մի շշուկ բերանից բերան:

Դեմ ու դեմ փողոցից յերևացող հարևան գործարանների բանվորներն եյին: Գալիս եյին նույն հաղթական քայլվածքով, նույն ինքնավստահ ժպիտը դեմքներին:

— Արշակ,— գոչեց Վարդանը,— հիմի հավատում ե՞ս:

— Հիմի հավատացի, Վարդան,— ասաց Արշակը հուզված ձայնով.— Չէ, հիմի տեսնում եմ, վոր յեթե մենք ուզենանք, մենք անպատճառ կհաղթենք...

Ու նրա աչքերն ուրախությունից կարծես խոնավացան:

— Ուռա՛,— թնդաց դեմ ու դեմ փողոցը մոտեցող ամբոխից.



— Ուռա՛,— արձագանքեց այս փողոցը նրան իբրև պատասխան:

Ու խառնվեցին նրանք միմյանց հետ ու առաջ անցան:

Ու հնչեց մի յերգ, բողոքի ու կռվի մի մարտակոչ, վոր վորպես ահեղ վորոտ պոկվում եր հազարավոր կրծքերից:

Ցավում եր Վարդանը, վոր ինքն ել չգիտեր յերգել. Բայց նա չեր ուզում նրանցից յետ մնալ: Ու չգիտեր ինչ աներ: Հանկարծ մի միտք հղացավ նրա գլխում, ու նա ճեղքելով ամբոխը՝ դեպ առաջ նետվեց: Նա մոտեցավ դրոշակին, բռնեց նրա փայտից ու ասաց դրոշակակրին.

— Տո՛ւր ինձ, ընկեր, հիմի յել յես տանեմ: Մինչ որս յես բեռնակիր եյի, թող այժմ ել դրոշակակիր դառնամ...

Ու խլելով դրոշակն ընկերոջ ձեռքից՝ հաղթական քայլվածքով դեպ առաջ շարժվեց: Ու ծածանվում, փողփողում եր դրոշակն օդի մեջ, ու հնչում եր քայլերգը հազարավոր կծքերից:

«Դեպ շարքերը խեղճ յեղբայրների—
քաղցած մարդկության կերթանք այցի,
կանիծենք միատեղ չարագործին,
դեպի մարտ կընթանանք միասին»:

. . . . . . . . . . . .

Նրանք գնում եյին, գնում եյին փարթամության ու հղփանքի մեջ թաղված քաղաքը. գնում եյին գիշերային հանդեսներն ու խրախճանքները հաճախողների առավոտյան հոգնած քունը խանգարելու. գնում եյին իրենց տերերին ու թշնամիներին, աշխարհիս բոլոր կեղեքիչներին ու բռնակալներին իրենց անդրանիկ, իրենց բողոքի ու մարտի խոսքն ասելու...

---

— Մանրամասն վերլուծեցեք Կ. Միքայելյանի այս յերկու պատմվածքները յեվ պարզեք հետեվյալ հարցերը.—

— Վո՞ր դասակարգի պայքարն է նա նկարագրում:

— Այդ պայքարի վո՞ր շրջանը:

— Ի՞նչ իմաստ ունի «Փառք հաղթվածներին» խոսքը:

— Ի՞նչ մարտի յեր կանչում «Մարտակոչը» բանվորներին:

---

— Ի՞նչ վերաբերմունք ունի հեղինակը դեպի իր նկարագրած պայքարը:

— Ինչի՞ց է յերեվում այդ վերաբերմունքը:

— Կա՞ն արդյոք այս պատմվածքներում մթութ, վոչ պարզ տեղեր:

— Ի՞նչ տրամադրություն է ձեր մեջ առաջանում այս պատմվածքների ընթերցումից:

---

# ԱՐԱԶԻ

## ԱՐԵՎԸ

Լսո՞ւմ եք. սպասե՛ք մի փոքր, յես ձեզ կպատմեմ բոլորը սկզբից։

Գնո՞ւմ եք. լա՛վ, յես կպատմեմ ծաղիկներին ու խոտերին.

— Սիրուն կակաչնե՛ր. դե, լա՛վ լսեցեք արևի պատմությունը։

Աղջիկս հիվանդ եր···

Գիտե՞ք, նա յել ձեզ նման մի ծաղիկ եր, նախշունիկ դեմքով, վոսկեգանգուր մազերով։

Աղջիկս հիվանդ եր···

Բժիշկը յեկավ, իջավ մեր բնակարանը։ Նա տխուր եր։ Ինչո՞ւ···
Հա՛, հիշում եմ, նա չեր սիրում ներքևի հարկերը։

Նա իջավ ներքև, նայեց իմ աղջկան, նայեց սենյակի պատերին.

— Խոնավ ե, ասաց, պիտի փոխեք բնակարանը, պիտի արևկող սենյակ ճարեք։

— Քանի՞ յերեխա ունեք, հարցրեց։

— Յերեքն եյին. յերկուսը մեռան··· Մնաց այս մեկը··· Ազատե՛ք իմ աղջկան, նա մեր տան վոգին ե։

Նա ինչ-վոր դեղ գրեց ու տխուր դեմքով դուրս գնաց։

— Հայրի՛կ, ի՞նչ գրեց բժիշկը, հարցրեց աղջիկս։

— Արև գրեց, սի՛րելի՛ս, արև գրեց, վոր քեզ վրա փայլի և դու առողջանաս։

Ու յես որը գնացի արև փնտռելու. գնացի շա՛տ հեռու և վերջապես գտա արևկող մի բնակարան։

— Սիրուն կակաչնե՛ր, արևի կարմիր զավակնե՛ր, ավելի լավ չե՞ր՝ ձեզ մոտ բերեյի իմ վոսկեծամիկ աղջկան։

Դուք նրան կզուգեյիք կարմիր ու կանաչ···

Բայց, հա՛, գիտեմ, դուք հաց չեյիք տա իմ աղջկան՝ դուք սնվում եք վաղորդյան ցողով։

Լսե՛ք, յես դեռ չեմ վերջացրել։



Մյուս առավոտ պիտի տանեյի Լուսիկին արևի տուն, բայց յերբ լուսացավ, նա ինձ կանչեց, ձեռքս բռնեց ու փակեց աչքերը։

Հետո յեկան մարդիկ ու տարան···

Ու յերբ վոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեզնից, մեր տան վոգին ել նրա հետ գնաց։

Մենք բոլորս այրվեցինք լալուց, ու յես դարձա արևի հիվանդ.

Յես գնում եյի, նստում փոքրիկ գերեզմանի մոտ և սպասում արևածագին։

Ու միշտ տեսնում եյի Լուսիկին արևը գրկած և իր մազերը փռած նրա վրա···

Բայց յերբ պատմում եյի արևի մասին, կինս ու մայրս չեյին հավատում. նրանք կարծում եյին, թե խելագար եմ և վողբում եյին այրված ցամաքած աչքերով։

Ու մի որ ել յես դիմեցի արևին.

— Հզո՛ր արև, ասացի, մի մեծ գանգատ ունեմ քեզանից. ինչո՞ւ դու մի հատ շողքդ խնայեցիր իմ աղջկան, ինչո՞ւ սպանեցիր ու տարար իմ Լուսիկին։

Նա տխրեց ու մթնեց։

— Գնա՛, ասաց, գնա հայտնիր աշխարհին, ասա, վոր վերևի հա՛րկը արևի շողքերը խլեց, ստվեր գցեց ներքևի հարկին ու սպանեց իմ վոսկեհեր աղջկան։

---

## ԽԱԼԻՋԱՅԻ ՅԵՐԳԸ

Ամեն որ բանուկ փողոցում անցորդները լսում եյին Մահմեդի ձայնը՝ նրա սրտմաշուկ խալիչայի յերգը։

Ձայնը մղկտում եր, պատերը կրծում, այրվում եր, բողոքում, նորից նահանջում ու մնում անդարման, վորպես ամեն ինչ արևելյան քաղաքում։

Յերգին ձայնակցում եր վոխտ մի սազ, վոր Մահմեդի մատների տակ հառաչում եր խուլ ու ճնշված նվագով, ասես կրկնում եր հինավուրց մի յերգ, վոր յերկու բառ ուներ միայն.

— Իզո՛ւր են, իզո՛ւր···

Ձայնակցում եր Մահմեդին և իր փոքրիկ տղան, վոր թեր կոտրած ճուտիկի նման սմքել, կծկվել ու վոսկրացավով բռնված՝ մեխվել եր գետնին։ Իր խավարած, հողագույն դեմքով, վորպես մի արձան ցավի ու տանջանքի, նա որորվելով յերգում եր ակամա, կրկնում հոր խոսքերը.

— Խալիչա՜, խալիչա՜…

Յերգում եր Մանմեդը, դիմում եր անցորդներին վաղ առավոտից մինչև յերեկո։ Նրա դեմքը քամուց ու փոշուց ծեծված՝ խիտ, գզգզված մորուքով ասես այրվում, հանգչում եր անընդհատ։ Հազար տեղից պատառոտված մի ձորձ վրան, մաշված Թաղիքի Թասակը գլխին, նա իր սիրտն եր բանում քաղաքի առաջ, վոր սովի մեջ գալարվող ընտանիքը պահի։

Անցնում եր աշխատավորը, լսում յերգը, րոպեյապես կանգ եր առնում, խորհում հարվածող բաղդի մասին, հիշում են օրերը, յերբ Մանմեդի աչքերը տեսնում եյին արևի լույսը, յերբ նրա շարմաղ յերեխան խաղում եր, վազվզում։

Մոտենում, ձգում եր իր պղնձե լուման, տխուր մտածելով, վոր իրեն էլ է սպասում Մանմեդի սև օրը…

Մոտենում եր յերբեմն նաև կուշտ, յեղակալած վաճառականը, շտապով ձգում յերգչին մի մաշված շահի ու խնդրում ալլահից, վոր հեռու պահի իրեն կույր Մանմեդի բաղդից, ու ղսմաթից…

* * *

Յերեք տարի առաջ եր, յերբ Մանմեդն ամեն առավոտ դեռ լույսը չբացված, շալակում եր իր տղային ու շտապում դեպի քաղաքի ծայրը՝ խալիչայի արհեստանոցը։ Փողոցում նա պատահում եր իր նմաններին։ Ստրուկների շարանն անցնում եր պատառոտած շորերով, վոտաբոբիկ, խարխափելով ու կկծալով վոսկրացավից, ծանր գլուխներով ու քաղցած փորով։ Շատերը Մանմեդի պես վոսկրացավով հիվանդ յերեխաներին շալակած տանում եյին՝ իրենց ոգնելու, վոր փոքր ինչ ավելի ստանան, քաղցից չմեռնեն. . Անիծում եյին ու գնում. ինչ վոր ստանում եյին, հացի փող էլ չեր դառնում. գնում եյին մեռնելու՝ ապրելու համար։

Քաղաքի ծայրին, խոնավ կիսավեր դարբասում լույսը բացվելուն պես սկսվում եր տաժանակիր գործը։ Ամենքը բռնում եյին իրենց տեղերը դազգյահների մոտ և Մանմեդը՝ նկարն առաջին, իր անուշ ձայնով յերգում, Թելադրում եր՝ Թե վո՛ր Թելը վո՛րին կցեն։ Բանվորները խումբ-խումբ կրկնում եյին նրա յերգը.

— Կարմիր Թելը կանաչին,
Կարմիր Թելը կապույտին…

Կրկնում եյին ու դազգյահները շարժում. չը՛րխկ… չը՛րխկ, աղմկում եյին դազգյահներն ու նախշուն Թելերը շարվում եյին խալիչայի մեջ։

Ամեն կեսօրին նամազից հետո՝ գալիս եր արհեստանոցի տերը,



լուռ ընդունում իր ստրուկների խոնարհ բարևը, խեԹ հայացքով շփում եր իր մորուքը, վորի ամեն մի մազի վրա մի դավ կար նըստած ու գիշատիչ հայացքով դիտում իր հերԹական զոհին՝ վորին պիտի հայհոյի և սպառնա, վորին ծեծի ու վռնդի՝ նրա տեղը մի ուրիշ, ավելի արժանի բանվոր գտնելու համար։

Նա ամեն ինչ գիտե, նույնիսկ ճանճերի շարժումը։ Արհեստանոցի պահապան Ալին, վորին «անոԹի Ալի» եյին կոչում, իր չիլ աչքերով ամեն ինչ դիտում եր, լրտեսում, շատ անգամ ստիպված հնարում եր ու պատմում տիրոջը։

Հավատարիմ Ալին, տկլոր ու քաղցած, միայն տիրոջ անունով եր կշտանում. այդպես եր արևելյան վաճառականի օրենքը.

— Պահապան շունը յերբեք չպիտի կշտանա, վոր ծառայի անձնվեր ու հավատարիմ։

* * *

Վոսկրացավի բույն եր խոնավ արհեստանոցը։ Հիվանդ եր Մանմեդը, հիվանդ եր տղան ու վողջ արհեստանոցը։ Բայց քանի վոտքի վրա յեր, քանի յերեխային կարող եր շալակով գործի տանել, նա հիվանդուԹյուն չեր անվանում այդ, այլ աղքատուԹյուն։

Բայց մի օր ճակատագիրը նրան հարվածեց ընդմիշտ ու անդարձ։

Մի առավոտ, յերբ նա շալակած իր յերեխային արհեստանոց եր գնում, տղան հանկարծ հառաչեց ու ասաց խորհրդավոր, մեծի ձայնով.

— Բաբա՛ յես քո զավակն եմ. դու ինձ սիրում ես, չե՞… տա՛ր ինձ, փորիր գերեզմանը, մե՛ջը դիր… մի՛ տանի ինձ են խալիչայի արհեստանոցը։

Մանմեդի ծնկները Թուլացան. հանկարծ զգաց, վոր կյանքը միջից Թռավ ու էլ վոչ մի հաշիվ չունի էս աշխարհում։

Հետևյալ օրը նա մենակ գնաց գործի. յերեխան արդեն կոնդացել եր և չեր կարողանում շարժել նույնիսկ ձեռները։

Յերգում եր, Թելադրում Մանմեդը, բայց ծանր դարդը իր սրտում, ցրված, մտազբաղ, յերբեմն նույնիսկ մոռանում եր ու «կարմիր-կապույտ Թելերի» տեղ տխուր բայաԹի եր մռմռում։ Աչքերն արդեն սկսել եյին այրվել, պղտորվել. մի քանի անգամ խալիչայի նկարը խառնվել եր նրա աչքերին ու Թելերը շփոԹել եր։

Իսկ տերն ամեն ինչ գիտե ու գիշատիչ բազեյի նման ամեն անգամ իր մաղձոտ աչքերով պտտվում է Մանմեդի շուրջը, խորամանկուԹյամբ մորուքը շփելով։

Ու մի օր էլ նա կատաղած, փրփրած հարձակվեց Մահմեդի վրա ու ծեծելով, թքելով դուրս շպրտեց փողոց, լավ հիշելով իր վաշխառու հոր խրատը.

— Մի մարդու վոր քամեցիր ու խսպառ մզեցիր դո՛ւրս շպըրտիր փողոց։

*
* *

Ամեն առավոտ չերեք սովերներ՝ մահվան դատապարտվածների դալկությամբ ծանր անցնում եյին փողոցով։ Փոքրիկ աղջիկը չարսավի ծակոտիներով ծածկված՝ առաջնորդում եր կույր հորը դեպի շուկա։ Հոր շալակին իր կոնդ տղան եր, իսկ ձեռքին իր տխուր սազը։ Բերում ե դրանց փոքրիկ աղջիկը, հասցնում փողոցի մի անկյուն ու ամոթխածությամբ յետ փախչում շտապով։

Հայրը տնքալով ու հառաչելով վայր ե դնում տղային, լարում իր վտիտ սազն ու սկսում յերգել իր մեծ դարդը, իր «խալիչան».

յերկար ու բարակ հյուսում եր, շարում իր յերգն ու սպասում անցորդների ողորմության։

— Կարմիր Թելը կանաչին,
Կարմիր Թելը կապույտին,
Հե՜յ, խալիչա՜, խալիչա՜...
Ուրիշի վոտքերը փափկացրիր,
Յերեխիս վոտքերը տարար,
Հե՜յ, խալիչա, խալիչա՜...

Ձայնը մղկտում եր, պատերը կրծում, այրվում եր, բողոքում ու մնում անդարման, վորպես ամեն ինչ արևելյան են քաղաքում...

---

## ՄԵԾ ՓԱԿԱՆՔԸ

(Բանտարկյալի հուշատետրից)

*190...թ. Մայիսի 1*

Ամեն տեղ գարուն ե, նույնիսկ բանտում։

Արևն սկսել ե այցելել իմ պատուհանը։ Աղավնիներն աշխույժ դես-դեն են թռչում։ Բակում զբոսնող բանտարկյալները հաճախ են նայում յերկինքին, չերևի ինձ նման վերհիշելով այն ազատ գարունը ծառ ու ծաղկով, դաշտ ու հովտով...

Այսոր դիտում եյի բանտի գավիթը իմ բարձր պատուհանից. վորքան նոր մարդիկ եյին չերևում մենակ զբոսնողների վանդակներում։ Յեվ օրեցօր ավելանում են։ Ի՞նչ ե կատարվում դուրսը։



Զարմանքով նկատեցի, վոր զբոսնողներին հսկող պահապանն էլ նոր մարդ ե։ Յերևում ե՝ սովոր չե պտտվելուն, այն էլ այդպիսի փոքր շրջանում՝ վանդակների վերևը։ Հաճախ կանգ ե առնում, կարծես մտածում, ինքն իրեն խոսում։

Տարօրինակ մարդ ե. Նրա նիհար, դալուկ դեմքին նշմարվում ե մեղմ հիվանդոտ ժպիտ, իսկ խոր, վառվող աչքերը տանջանք են արտահայտում։ Բանտային զգեստն ու զրահը նրան չեն սազում. ինքն էլ չի սազում բանտին, այդ պատճառով էլ գրավում ե իմ ուշադրությունը։

*
* *

*Մայիսի 3*

Հենց առաջին տեսնելուց մեր մեջ ինչ-վոր կապ ե ստեղծվել. շարունակ նայում ենք իրար և կարծես աչքերով խոսում։ Յերբ ինձ դուրս են բերում զբոսնելու, քաշվում եմ վանդակիս ծայրը, վորտեղից վերահսկիչը լավ չերևում ե, ու դիտում եմ նրան։ Յես ժըպտում եմ ու ասում աչքերով.

— Դու պտտվում ես վերևում, իսկ յես կանգնած դիտում եմ. այժմ յես պահապան եմ, իսկ դու բանտարկյալ. հասկանո՞ւմ ես... բանտարկյա՜լ...

Նա կարծես զայրանում ե, խուսափում հայացքիցս, արագացնում ե քայլերը բայց յերբեմն էլ Թվում ե, Թե համաձայնվում ե ու ընկճված նայում ինձ, ասելով.

— Այո, յես էլ քեզ նման բանտարկված եմ. այո՛, այո՛...

*
* *

*Մայիսի 5*

Այսօր հայտնեցի, վոր հիվանդ եմ։

Բժիշկը յեկավ և ըստ սովորության անտարբեր քննելով, ասաց՝ «վոչինչ չունեք»։ Բայց և այնպես պատվիրեց ֆելդշերին, վոր տաքությունս չափի։

Յերեկոյան ինձ տարան ֆելդշերի ընդունարանը։ Նա մենակ եր ու ձեռքերը գրպանում անցուդարձ եր անում սենյակում։

— Հը՞, վո՞նց եք, դիմեց նա ինձ. բան չկա, մի քիչ էլ դիմացեք. ամեն ինչ կանցնի։

Ջերմաչափը հանձնեց ինձ՝ վոր դնեմ Թևիս տակ. իսկ ինքը շարունակում եր յետ ու առաջ քայլել, գանգատվելով իր սուղ վիճակից։

Այս անգամ նա փնթփնթում եր բանտի քահանայի վրա, վոր

չնայած իր մեծ յեկամուտներին, ձեռք եր քցել և գրադարանապետի պաշտոնը։

Այդ ժամանակ ներս յեկավ մի խիստ գունատ մարդ, նման ռուսական սրբերի պատկերներին, և մոլորված աչքերը հառեց փելդշերի վրա։ Հազիվ կարողացա ճանաչել. նոր վերահսկիչն եր։

— Հ՞ը, Սիմո՛ն, դու յել հիվանդացար, —հարցրեց փելդշերը։

— Գլուխս պտտվում ե, սիրտս խառնում... Աչքերիս մարդիկ են յերևում։

Բժշկի ոգնականի խոսելուց յեզրակացրի, վոր այսոր նա ուշաթափվել եր, մի քանի ժամ պառկել հիվանդանոցում և այժմ յեկել եր դեղեր ստանալու։

— Դե՛, նստի՛ր, հանի՛ր թևդ և ջերմաչափը դի՛ր այստեղ. չշարժվես. ե՜հ, վոչինչ, կանցնի, անսովոր լինելուցդ ե։ Քո պարոնն ել իբր թե լավություն արավ, տեղ գտավ քեզ համար. թողներ հանգիստ գոնապանություն աներ իր տանը և հոգեշահ գրքերդ կարդայիր։

Միջանցքից լսվեց քահանայի կոշիկների ճռճռոցը։ Նա ներս յեկավ իր գեր մարմինը որորելով։

— Հ՞ը, Ֆյոդո՛ր, վո՞նց ես,—դիմեց նա փելդշերին։

— Ե՜հ, քարշ ենք գալիս, ելի՛, ինչպես վիճակված ե խեղճ մարդկանց. աղքատ մարդը միևնույն ե թե բանտումն ե։

— Ո՛ւղիղ ե, հանկարծ ճչաց վերահսկիչը։

Քահանան ոտարոտի, խեթ նայեց նրա կողմը, ապա դառնալով փելդշերին, դաստիարակչական տոնով ասաց.

— Նո՛ւ, Ֆյոդո՛ր, մի՛ մեղանչիր. չգիտես, վոր մարդս պետի ապրի ճակատի քրտինքով, քանզի նա արտաքսված ե դրախտից իր մեղքերի համար։

— Հենց բանն ել եդ ե, վոր բոլորին ել չեն արտաքսել դրախտից, և շատերն ապրում են, բայց վոչ ճակատի քրտինքով,—ասաց փելդշերը ցածր ձայնով, ինքն ել զարմանալով իր հանկարծակի յեկած մտքից։

— Եդ ինչ եք փնտռում,—դիմեց նա քահանային.հա՛, ձեր գիրքը մոռացել եք այստեղ. մյուս սենյակումն ե, գնանք տամ։

Յերկուսով դուրս յեկան։

Սենյակում մնացինք յես ու վերահսկիչը։

ւծ, անթարթ նայում եր ինձ, կարծես ճգնելով մտա-
մոռացած բան։

վեր թռավ, մոտեցավ ինձ և շեշտակի նայելով աչ-
ավոր ձայնով ասաց.

— Ինչո՞ւ յեն գիտուն մարդիկ բանտ ընկնում. ինչ գաղտնիք կա, վոր դուք մեզնից ծածկում եք... Ո՜հ, մեղք բան ե, մեղք բան, մեղք բան ե և ես մեր կյանքը... Գլուխս պտտվում ե, ամեն ինչ պտտվում ե աչքիս առաջ. ասա՝ ինչո՞ւ յե ես մեր կյանքն եսպես ծանրացել, բանտ դարձել։ Վո՞րտեղ ե են մեծ բանտի դռները, են մեծ փականքը, վոր գնամ միանգամից բաց անեմ. վո՞րտեղ ե, ասա՛, դու գիտուն ես, են լավ կյանքի դռները։

Նա սկսեց թևիցս քաշել. ջերմաչափն ընկավ ու կոտրվեց։

Աղմուկի վրա ներս յեկավ փելդշերն ու ապշած նայելով վերահսկիչին, ասաց.

— Սիմո՛ն, գժվե՞լ ես, ինչ ե։

*
* *

Մայիսի 10

Քանի որ ե տխուր իջնում եմ ներքև զբոսնելու։

Սիմոնը՝ վերահսկիչն այլևս չկա. նրա տեղ մի ուրիշն ե՝ դաժան, խավար դեմքով։

Ամեն դուրս գնալիս աչքս փնտռում ե նրան։ Գուցե հանկարծ հայտնվի։

Սիմո՛ն,վո՞րտեղ ես...արդյոք գնացի՞ր կյանքի դռները բանալու։

---

## ԿԱՐՄԻՐ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ

Պատմում են, վոր են մեծ կռվի գիշերը, յերբ վողջ քաղաքն ասես յեռում եր ու գորշ ալիքներով հոսում դեպի դիրքերը, այն տենդոտ փողոցներով մեծերի հետ քայլում եր նորաբողբոջ մի զույգ։

*
* *

Աղջիկն ու տղան գնում եյին ձեռք ձեռքի տված և նոր զարթած թռչունների նման խոսում, ճկճկում եյին։

Նրանք թողել եյին տանն իրենց մայրերի խրատները՝ չմասնակցել մեծերի կռվին, և թիթեռների նման ձգտում եյին դեպի կրակը, դեպի վտանգը։

Նրանք անցնում եյին են մեծ թաղերով, մրոտ դեմքերի ու ջլուտ բազուկների են թաղերով, ուր հսկա ծխնելույզները՝ նոթերը կիտած, խորհրդավոր լռությամբ դիտում եյին ամեն ինչ։

Ուր խոնավ, մութ նկուղներում վաղուց կուտակվել եր հսկայական մի բողոք, վոր հրդեհի նման բռնկել եր վողջ քաղաքը։

Ամբոխի հետ նրանք հասան լայնատարած մի հրապարակ, ուր

խմբվել եյին հազար-հազարներ և անհանգիստ ծփում, սպասում եյին…

Վերջապես ձայն յեկավ վերևից:

Ո՞վ եր խոսողը, մթնում չեր յերևում. միայն նրա կողմը նշմարվում եր փոքրիկ լապտերի առկայծող լույսը:

Աղջիկն ու տղան նայում եյին, ականջներն լարում: Նրանց թըվում եր, թե խոսողն են կայծն ե, թե շուտով կիջնեն յերկրի վրա բազմաթիվ կայծեր, և կիջնի լուսեղեն յերջանկությունը:

— Լսո՞ւմ եք են ահեղ ձայնը. դարերով ճնշված ձայնն ե, վոր զարթնել ե հիմա:

Նա կանչում եր իր հերոսներին՝ քանդելու և ստեղծելու:

Ով զգում ե նոր կյանքի շունչը, նա պիտի գա դեպի հաղթություն:

Հանկարծ ամբոխն իրար անցավ:

— Գալիս են… անցավ բերանից բերան: Յեվ բոլորը շարժվեցին առաջ:

* * *

Գետնի վրա գալարվում եյին վիրավորները…

Վիրավորների հետ մի աղջիկ եր ընկած ու նրա մոտ ել մի տղա, վոր կարծես իր շնչով ուզում եր կենդանացնել ընկերուհուն:

— Յես շուտով կմեռնեմ, — ասում եր աղջիկը, — բայց կուզեյի յերկա՛ր ապրել են կռվողների հետ: Յերբ յես մեռնեմ… տար ինձ, կանգնեցրու կռվողների առաջին շարքում և թող արևի շողքերը դեռ ելի փայլեն ինձ վրա:

* * *

Առավոտ եր:

Են մեծ փողոցում, հզոր բարիկադի վրայից նայում եր արևին կարմիր շորերով մի աղջիկ:

Կատաղի կռիվ եր:

Քանի՛ անգամ թշնամին հարձակվեց այդ դիրքի վրա, բայց աղջիկը դեռ կար իր տեղում:

Նրա շուրջն ընկնում եյին հերոսները, նորերը գալիս նրանց տեղերը բռնում, բայց աղջիկը մնում եր անսասան իր դիրքում:

— Ո՞վ ե են անհաղթ աղջիկը… Այս ի՞նչ հրաշք ե, — ասում եր թշնամին ու յետ նահանջում «Կարմիր աղջկա» բարիկադից:

* * *

Պատմում են, վոր են մութ գիշերներին, յերբ հույսերը մարում են, կարմիր հերոսուհին իջնում, պտըտում ե փողոցները:



Նա յերկաթե մուրճով բաղխում ե դռներն ու դուրս կանչում իր հերոսներին:

Կանչում ե նորից դեպի մեծ կռիվ, դեպի վերջին հաղթություն…

---

— Ինքներդ նշանակեցեք կետեր և վերլուծեցեք Արազիի փոքրիկ պատմվածքները թե ըստ բովանդակության, թե ըստ ձևի:

— Պարզեք, թե յուրաքանչյուր պատմվածքն ի՞նչ ժամանակաշրջան է ընդգրկում:

— Ո՞ր պատմվածքն ամենից շատ հավանեցիք:

— Ինչո՞ւ:

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՆՈՐ ԱՌԱՎՈՏ

*(Հատվածներ)*

*...Յեթե իրավ ե, նազելի սիրուն,*
*վոր քո աչերը կյանքի ջերմ կարոտ*
*մի նոր, իրական աշխարհ են փնտռում*
*և ինձ խոստանում մի նոր առավոտ՝*
*արի տանեմ քեզ իմ սիրածի մոտ.*
*— դեպի գործարա՛ն։*
*Արի տանեմ քեզ, ուր մարդիկ այնտեղ*
*չեն ապրում միայն ցավով անձնական,*
*այլ ցավը քաշում հանուր մարդկության.*
*ուր գործ և կռվի մեջ են վորոնում*
*հմայք-բանալին բախտավորության։*
*Այնտեղ միասին և ընկերովի*
*իրար թև կտանք, նեցուկ կլինենք,*
*վոր ցավ ու զրկանք հեշտությամբ տանենք.*
*վոր դու ավելի լինես դիմացկուն ,*
*այս դաժան կյանքում։*
*Գնանք գործարան...*
*Բայց լսիր, ասեմ, սիրելի՛ ընկեր,*
*վոր չկան այնտեղ ծառ ու ծաղիկներ,*
*բաղեր ու խոտեր,*
*հավքերի նվագ, գուլ-գուլ աղբյուրներ,*
*յեվ վո՛չ ալ վարդեր.*
*չես տեսնիլ այնտեղ լուսնյակ գիշերի*
*լուսաշաղ ամպեր,*
*վո՛չ ել սիրահար ջահել արևի*
*կրքոտ համբույրներ։*
*Այնտեղ ծառի տեղ ցցված են խրոխտ*
*յերկաթի սյուներ,*
*բաղեր խոտի տեղ՝ ցանցերի փշոտ*
*պողպատի լարեր.*
*գեղախոս թռչնոց յերգի փոխարեն*
*կլսես այնտեղ*



*ճախարակների ռնգային վորոտ*
*և խենթ փոկերի համերգը ահեղ։*
*Այնտեղ խեղդվում են շոգու ամպերեն.*
*պաղ աղբյուրի տեղ՝ քրտինք ամեն որ,*
*վարդի փոխարեն*
*ծորում, քամվում ե արյուն սրտերեն,*
*և շուրջդ բոլոր*
*շրի՛նդ ու ժխո՛ր...*
*Կտեսնես՝ ինչպե՛ս թանձրացած մխով*
*ծխնելույզները*
*յերկինք են կառչել ագահ յերախով*
*մրոտ պնչերը՝*
*կարծես հրաշունչ վիշապի նման*
*ուզում են շնչել*
*ու իրենց քաշել*
*անհուն բարձունքից փայլուն աստղերը,*
*վոր նրանց թաղեն մշուշ ծխի մեջ.*
*կտեսնես շարված սգավոր ու խեղճ*
*արհեստանոցի աղյուս-պատերը՝*
*խոնավ ու թաց-թաց,*
*կարծես բանվորի քրտինքով թրջված...*

*

*Յեվ դու կմտնես այն գործարանի*
*կամարների տակ,*
*վորտեղ յեռում ե թափով աշխատանք.*
*կտեսնես այնտեղ արհեստանոցի*
*հարազատ զավակ կաղնի-բանվորին,*
*կարծես Բահալը նստել ե նրա*
*կորացած մեջքին։*
*Ա՜խ, շա՜տ եմ տեսել նրան, իմ ընկեր,*
*սևացած յերես, ծխի մեջ կորած,*
*ու դեռ հասակը յերեսուն չառած՝*
*կամ մեքենան ե ճխլում իր թաթում—*
*վոտքերը փշրում, բազուկը հատում,*
*կամ ալ հեղուկը այրում, փոթոթում...*
*Յես տեսա նրան, սիրելի՛ ընկեր,*
*մի մթին գիշեր*
*քուրան եր վառվում, փչում կատաղած.*
*ամեն անկյունից վորպես վիշապներ,*
*կարմիր կրակը լեզուներ հանած՝*
*ոդը լիզելով յերկաթն եր ծամում—*
*ծուփ-ծուփ շրխկանում,*
*և նրա դիմաց դարբինը կանգնած,*
*ալ բոցի գույնից թափ, յեռանդ առած՝*
*չորցած մատներով յերկաթն եր կռում*

և պողպատ մեջքով համառին ծռում,
կռում ու կռվում—
և մինչ մի նոր ձև, մի կյանք չեր տալիս
անշունչ մետաղին—չեր հանգստանում:
Յեվ խորհում եյի... ահա թե ուր է
ձգտում բանվորի ստեղծող վոգին,
ահա թե ինչո՞ւ կարմիր ալ գույնը
նա սիրեց այնպե՛ս խանդաղատագին.
ու թեև կաթ-կաթ քրտինք է ծորում
մրոտ ճակատից,
բայց եյի մի իր, մի գործ է ձուլում
անշունչ յերկաթից,
մի գործ հոյակապ,
վորով կոփվում է իր կամքը յերկաթ,
սնվում ու բովվում հավատն անհաղթ:
Մի ուրիշ անգամ այս տիտաններին
յես տեսա, ընկեր, մեծ ձուլարանում,
դույլեր ու ձողեր ձեռքերին առած՝
յեռուն հնոցի շուրջը բոլորած՝
թուջ եյին հալում:
Կաթսան ամեհի կարմրել էր, փափկել,
ուզում էր պայթել...
Յեվ ահա մեկը անվեհերներից
սուր ձողը ձեռքում
կաթսայի կուրծքն է զայրույթով մխում,
յերակը խայթում.
(կարիքն է կռել զայրույթ ու վրեժ
նրա մեծ սրտում).
կարմիր հալոցը արյունի նման
վիժում է ուժգին,
կարծես հոխորտում կլանել նրան,
ով վոր խիզախեց վերք տալ իր կրծքին.
բայց բանվորը քաջ սովոր է նրան,
ծաղրում է, հեգնում յեռուն հեղուկին,
հալոցքի մեջ է սնվել, մեծացել
նրա հաղթ հոգին:

*

Այդպես շարժվելու նրանք միշտ սովոր,
այդպես անհանգիստ, յեռուն ամեն որ
գալիս են անվերջ՝
հազարը մեկի պես, մեկը՝ հազարի—
մի ալիքից յետ՝ բյուրավոր ալիք,
ձուլվում է յես-ը հզոր մենք-ի մեջ
և մեռած կյանքի հուզում փոթորիկ:
Նրանք գալիս են արդարությունը
վոտքի հանելու,



Նրանք պայքարում վողջ մարդկությանը
հանգիստ բերելու.
Նրանք տանջվում են վո՛չ ինձ, քեզ, մյուսի,
չորրորդի համար.
Նրանք մեռնում են ինձ, քեզ, յերրորդի—
շատերի համար.
և հսկայական մի ցավով տարված՝
ձգտում են առաջ, անցնում խութերից,
և սիրտն է թնդում այդ միությունից:
Տես, այդ նրանք են, ուր ամեն մեկը
մի քար է քաշում մրջյունի նման՝
ապագա շենքի կռելու հիմքը.
և յերբ տեսնում է՝ պատերը յելան,
յելան բարձրացան, և գործն է կենդան՝
վոգևորվում է առյուծի նման:
Գնանք գործարան,
դեպի կարիքի, քաղց ու տանջանքի
այն յեռուն քուրան.
այնտեղ կտեսնես գրկանքի վորդուն,
ուր ինքն աշխատում, ուրիշն է ուտում.
այնտեղ կարող ես հասկանալ մարդուն,
լվանալ վերքեր սրտիդ արյունով,
հրեշտակային այդ բարի դեմքով,
քնքուշ, նրբազգաց կանացի հոգով
այնտեղ կարող ես ցավեր ամոքել
և վհատյալի սիրտը բորբոքել,
վոր լքման ժամին
վշտին դիմանալ նա կարողանա,
մինչ մի լավ որի նա կմոտենա...
Մոտեցիր նրան, այ իմ սիրելի,
տանջվիր նույն ցավով.
Նա՛, ով շատ է տանջվում՝
ամենից լավ է կյանքը հասկանում:

---

— Ի՞նչ հասարակակարգում գտնվող գործարանն է նկարագրում այստեղ բանաստեղծը:

— Տալի՞ս է նա արդյոք այդ գործարանի ցայտուն պատկերը:

— Ի՞նչ վերաբերմունք ունի նա դեպի այդ գործարանը յեվ նրանում աշխատող բանվորները:

— Կա՞ն արդյոք այս պոեմում պայքարի շեշտեր:

— Լավատե՞ս է հեղինակը բանվոր դասակարգի ապագայի նկատմամբ, թե՞ հոռետես:

— Ինչի՞ց է բղխում նրա այդ տրամադրությունը:

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

# ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

*Այդ մենք ենք գալիս—*
*մաշված բաճկոններ, յուղոտ ու մրոտ,*
*տրորված գդակ, աղտոտ մազերով,*
*մեծ մասամբ դեղնած, գծուծ ու բոկոտ,*
*յերբեմն դժգույն, յերբեմն անխռով,*
*յերբեմն քաղցի, լուռ տառապանքի*
*ու կնճիռների անջինջ կնիքով,*
*յերբեմն ըմբոստ արհամարանքի,*
*անզուսպ զայրույթի, վրեժի թույնով...*
*Մենք, բանվորներս՝ վշտի, արցունքի,*
*կիսաքաղց կյանքի, բանտի, աքսորի—*
*անբաժան ընկեր...*

*Մենք, բանվորներս՝ ապրելու ահից՝*
*կյանքի շուկայում սառր վաճառքից—*
*էժան ծախվածներ...*

*Ո, մեծ տզրուկներ, մարդկային կյանքի*
*ստեղծագործության անարգ խեղդիչներ.*
*դուք՝ փարթամության, անառակ տենչի*
*քնած խիղճերով թմրած խլուրդներ.*
*դուք՝ ամոթապարտ գերեզման փորող*
*գարշ դահիճներդ սուրբ ազատության.*
*ձեր նմանների արյունը լափող,*
*բոլոր հույսերի դևեր հոգեհան,*
*գուցե չե՞նք շոյում մեր տանջված դեմքով*
*ձեր նուրբ ջղերը—հոգով քաղցածներ,*
*դուք՝ կուշտ մարմիններ։*

*Չէ՞ որ մեր արյան մի-մի կաթիլով,*
*աղի ու լեղի թափած քրտինքի,*
*դառն արցունքների անվերջ հեղեղով,*
*մեր բազուկների հուժկու, ժրաջան,*
*կոր թիկունքների, հոգու տագնապով,*
*մեր գլխին պատրաստ ամեն մի վայրկյան*
*չարաբաստ մահվան անլուր սարսափով*
*սնունդ եք առնում,*
*ապրում, յուղ կապում...*



*Յեվ վաստակներիս չնչին փշրանքներ*
*դժգոհ շպրտում քաղցած ամբոխիս.*
*կասես մարդկության, մենք խորթ զավակներ—*
*դուք վայելչության, անարդար կյանքի*
*ընտիր ըմբիշներ...*

*Հա, մենք ենք գալիս—*
*դարավոր վշտի, զրկանքի բովից,*
*հալածանքների, գարշ ստրկության*
*մոռացված խավից—*
*կրծքով փշրելու փառքը տիրողին,—*
*գահը բռնության—ստրուկի շղթան,—*
*նոր ուղի հարթել մեր նմաններին,*
*արժանի կոչման—հավասարության՝*
*այդպես ենք գալիս...*

**ԱԼ. ԾԱՏՈՒՐՅԱՆ**

## ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՈՐՈՐԸ

(Կարմիր օրերից)

*Մի՛ լար, վորդիս, վոր չես լսում*
*ել մայրական քաղցր որոր.*
*յես մեծ կռվի յերգ եմ հյուսում*
*որոցքիդ մոտ ամեն որ:*

*Կուզեմ յերգս աղոթք դառած՝*
*հավերժ հուզե քո հոգին.*
*աչքդ անխուփ, ուշքդ լարած՝*
*ականջ արա իմ յերգին:*

*Դու լսո՞ւմ ես՝ այնտեղ, դրսում*
*շա՜չ ու շառաչ, լա՜ց ու կո՜ծ.—*
*մեր արյունն է այնտեղ հոսում,*
*ներկած և՛ տուն, և՛ փողոց...*

*Այնտեղ գնդեր խառն ու ցրիվ,*
*բանվոր գնդեր ահարկու,*
*քաջ մղում են մի մեծ կռիվ—*
*աշխատանքի և վոսկու...*

*Այնտեղ վոսկին տեր-տիրական,*
*վորպես դահիճ դժնադեմ,*
*սուր է պարզում մեր որական*
*թույնով շաղախ հացի դեմ...*

*Այնտեղ հայրեր, այնտեղ վորդիք*
*մի նոր կյանքի յեզերքում,*
*վորպես մի մի հերոս-մարտիկ*
*մահն են գրկում ու յերգում...*

*Յեվ թնդում է յերգը ահեղ*
*պատնեշների շարքերում,*
*վորպես լեռնից վազող հեղեղ,*
*վորպես վորոտն ամպերում:*



*Այնտեղ է և մեր աչքի լույս,*
*մեր ոջախի վառ ճրագ—*
*հայրդ կռվում՝ սիրտն ալեհույզ,*
*սրտում և՛ թույն, և՛ կրակ:*

*Մի՛ լար, վորդիս, վոր չես լսում*
*ել մայրական քաղցր որոր.*
*յես մեծ կռվի յերգ եմ հյուսում*
*որոցքիդ մոտ ամեն որ...*

---

— Բանվորական շարժման վո՞ր շրջանի արտահայտություններ են Ծատուրյանի յեվ Կուրղինյանի այս յերկու բանաստեղծությունը:
— Նրանցից վո՞րն է ավելի ազդու:—Ի՞նչու:
— Վո՞րն է ըստ ձևի ավելի մշակված:—Ինչո՞ւ:

## ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

# ԼՈՒՍԱԲԱՑԻՆ ՆԱ ԲԱՐՁՐԱՑԱՎ ԿԱԽԱՂԱՆ

Լուսաբացին նա բարձրացավ կախաղան—
(այևածագ, ո՜, արշալույս արյունոտ).
կանգնած էյին զինվորներն ու քահանան,
գունատ ու լուռ կանգնած էյին նրա մոտ…

Ծեր քահանան վոչ մի աղոթք չէր հիշում
(սիրտը նրան շշնջում էր՝ անիծի՜ր).
լուսածագի ծիրանավառ մշուշում
ցայտում էյին ճաճանչները ցան ու ցիր…

Մռայլ սպան լուռ նայում էր աջ ու ձախ
(արդյոք հիշե՞ց նա իր մորը սգավոր).
գունատվում էր մութ գիշերը, և ուրախ
արեգակն էր վոսկեզօծում սար ու ձոր…

Լուսաբացին նա բարձրացավ կախաղան—
(արևածագ, ո՜, արշալույս արյունոտ).
կանգնած էյին զինվորներն ու քահանան,
գունատ ու լուռ կանգնած էյին նրա մոտ…

---

# ԱՐԵՎԱԾԱԳ

Յես կանգնած եմ վայրի ժայռի կատարին,
բա՜րձր, բա՜րձր,—հեռավոր ու մենավոր.
այնտեղ ցածում դեռ նիրհում են դաշտ ու ձոր,
դեռ խավար է այնտեղ դաժան ու լռին։
Սակայն շուտով կատարներից հեռանիստ՝
արևն այնտեղ հուր կթափե և վոսկի,
և կցնծան դաշտերը լուռ ու հանգիստ,
յերկիրն անհուն՝ կարոտ կյանքի ու խոսքի։
Յեվ դու կերգես, զարթնած աշխարհ, իմ առաջ,
կարձագանգես իմ վողջույնին սիրառատ,
կլսեմ յես զարձյալ աղմուկ ու շառաչ
ու կսիրեմ հեքիաթային առօրյադ։



Լռություն է, մութ և այնտեղ, սակայն իմ
սրտում արդեն արշալույս է՝ հարությո՜ւն.—
վողջույն ձեզ մութ ուղիներում յերկրային,
իմ յեղբայրնե՜ր, հեռուներում ու բանտում։

---

# ՎԵՐԱԴԱՐՁ

1.

Մենության խավար զնդանից կրկին
յես վերադարձա հզոր ու հպարտ,
և ինձ վողջունեց աղմուկը զվարթ
ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին…

Անխոս տանջանքիս գիշերում անքուն
իր հուրը վառեց մի պայծառ կարոտ,—
նոր սիրով լեցուն՝ դարձա յես ձեզ մոտ,
և նոր յերգեր են հնչում իմ հոգում։

Յեկա, վոր այստեղ ձեզ համար այսօր
հրեղեն խոսքեր կռեմ և խնդում,
լսեմ հաղթական մարտի ցնծություն,
տեսնեմ շարքերը ձեր հզորազոր։

Յեվ լուսաբացին, յերբ հոգնած լինեք,
յերբ քնած լինեք՝ թշնամուց խաբված,
արևածագի ցնծությամբ արբած՝
կանչեմ ձեզ, ճչամ՝ յեղբայրնե՜ր, յելե՜ք…

2.

Միշտ նույն խոհերի շշուկին հլու,
միշտ նույն կարոտի կսկիծը պահած՝
յես դուրս եմ գալիս նորից շրջելու
նեղ փողոցներն ու կրկեսները բաց։

Շփոթ նվագով աղմուկ ու սուլոց
շարժում են առաջ որը ժրաջան—
բոցոտ խնջույքում, ձուլված խինդ ու կոծ—
հյուսել են կյանքի կախարդված շրջան։
Հապճեպ հոսանքում և՛ մարդ և՛ անիվ
ալեկոծությամբ մի խայտանկար
խենթ փողոցների բավիղներն անթիվ
ջրերի նման խառնվում են իրար։
Ամենի ձայնով յերկաթն է խոսում,
պողպատն է ճչում շաչյունով դողդոջ—
և բազմաղաղակ որերի լեզուն
հնչում է այստեղ, վորպես մարտակոչ։

Այս աղմկահույս կյանքի խենթ բոցում
այրում է սիրտս սրբազան մի դող,
հուզում է հոգիս մի վեհ հիացում,
և սարսափելին թվում է դյութող...
Մաշված է կյանքս վշտում անաղարտ
և տառապանքի որերում համառ,
բայց ցաված սիրտս բացել եմ հպարտ
նորից ու նորից սիրելու համար:
Ուզում եմ, վաղվա ցնծության գուշակ,
կարոտս նետած լուսեղեն հեռուն,
վառել յերգերս, վորպես դրոշակ,
ու մեռնել՝ վորպես հերոսն է մեռնում...

Զարթնե՛ք. յերգեր իմ, ժամ է հնչելու,
զինելու նորից գնդերը ցրիվ,
մեռած սրտերը կյանքի կոչելու
և բորբոքելու զայրույթ ու կռիվ...

---

—Վերլուծեցեք Տերյանի այս բանաստեղծությունները ըստ բովանդակության և փորձեցեք վորոշել, թե հեղափոխական շարժման վո՞ր շրջանի արտահայտություն են դրանք:

— Կարելի՞ յե արդյոք այս բանաստեղծություններից վորոշել հեղինակի տեղն այդ շարժման մեջ. նա ինքը շարժման մե՞ջ է գտնվում, թե դրսից է գալիս դեպի այդ շարժումը:

---

— Վերլուծեցեք այս բանաստեղծությունները ըստ ձևի.—տաղաչափություն, պատկերներ, լեզուն:

— Կա՞ն արդյոք դրանց մեջ ձևական թերություններ:







# ՅԵՐԳ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

*(Հատված)*

...Եսպես յերկար տարիներ ժողովուրդը տառապեց
և որերը նրան նոր առավոտներ չբացին,
մինչ բացվեցին ամենուր գործարաններ մեծամեծ
ու խուլ, խավար գյուղերից քաղաք յեկավ գյուղացին:
Յեկան, լցրին քաղաքներն հազարանուն խմբերով,
խուլ գյուղերից անոթի բազմություններ յեկան մեծ,
հավաքվեցին յերկաթե աշխատանքի տներում
ու վաճառքի հանեցին հաղթ մկանները իրենց:
Նրանք վոչինչ չունեյին ու էլ վոչինչ չունեցան,
նույն անոթի մնացին քաղաքների մշուշում,
բայց սրտերը վառվեցին ու մկաններն ամրացան—
չեյին նման էլ նրանք են ծանրանիստ գյուղացուն:
Քաղաքների անողոք աշխատանքի հնոցում
շշակները ճչացին աշխարհների մասին նոր,
ու յերկաթե յերկնահուպ ծխնելույզի փնչոցում
բոլորն հանկարծ լսեցին մի ազդակ ահավոր:
Մեքենաները նրանց ըմբոստ յերգեր յերգեցին
և աշխատանքը հոգու մի նոր թռիչք ստեղծեց.
Ջղուտ բանվոր եր արդեն ստեպների գյուղացին
և ընկերներ ուներ բյուր և յերազներ ուներ մեծ:
Եսպես յեղավ: Յեվ ահա քաղաքներում ամրակուռ
մի առավոտ յերգեցին ծխնելույզները բոլոր—
բանվորների մասին մերկ, տառապանքի մասին լուռ
ու բովանդակ աշխարհի մեծ պայքարի մասին նոր:
Ասին՝ համայն աշխարհում յերկու բանակ միայն կա՝
մեկը—խարդախ տերերի, հարուստների անկշտում,
վոր լիանում են առատ, վայելում են անխնա,
նստում են շեն տներում և յերբեք չեն աշխատում:
Նրանք, վոր տաք են հագնում, ու միշտ մաքուր, ու միշտ նոր:
գլխի տեղ վիհ ունեն մի ու անկշտում մի բերան,
վոր հարբում են ու փխսում, վոր կերակուր ուտեն նոր,
վոր ափսոսում են միայն, վոր աշխարհը չկերան:
Նրանք, վոր տերն են հիմա քաղաքների, գյուղերի,
պալատների, բերդերի, բարիքների մեծ—
նրանք, վոր հացն են ուտում կիսաքաղցած բանվորի,
գո՛ւրկ թողնելով միշտ նրան, վոր եդ բարիքն ստեղծեց:
Սակայն բանակը մյուս, մյուս բանակը են մեծ
աշխատավոր բյուրերի բանակն է են անսասան,
նրանց, վոր բյուր դարերի աշխատանքը ստեղծեց.

*վոր աշխատանքն յեղան մեծ, բայց բարիքներ չտեսան։*
*Նրանց, վոր բյուր են հիմա, անհաշիվ ու անհամար,*
*վոր մկաններ ունեն կուռ ու յերակներ վիթխարի—*
*ու հոգիներ ունեն մեծ՝ արևների նման վառ,*
*և ստեղծում են բոլոր հրաշալիքներն աշխարհի։*
*Նրանք, վոր հողն են փորում, ճեղքում են կուրծքը հողի,*
*ու վիթխարի գետերին հոսանքներ են տալիս նոր—*
*կուրծք են տալիս ծովերի հորձանքներին կատաղի,*
*գնացքներ են շարժում բյուր ու հանքեր են փորում խոր։*
*Նրանք, վոր ուժն են կյանքի, կյանքի բազուկն ստեղծող,*
*վոր շինել են, ինչ վոր կա, ինչ վոր դեռ պետք է լինի.*
*ասին՝ամբողջ աշխարհում ինչքան հանք կա, ինչքան հող,*
*ինչքան բերք կա ու բարիք—պետք է նրանցը լինի։*
*Եսպիսի վառ յերազներ մեքենաները ասին,*
*ու յերկաթե անողոք շշուկներով ահարկու*
*մեքենաները մի որ ահադղորդ ճչացին,*
*վոր պիտ կռվի յելնեն մեծ եդ բանակները յերկու։*
*Ու տարածվեց վիթխարի քաղաքներից հեռավոր*
*ըմբոստ մի ճիչ հրեղեն—մի աղաղակ հրաշեկ—*
*քաղաքներից յերկաթե մի աղաղակ թռավ նոր.*
*—Պրոլետարնե՛ր աշխարհի, համաքվեցե՛ք, միացե՛ք։*
*Ու միացան, ամրացան նրանց շարքերը փշուր,*
*ու սրտերին նրանց կուռ մեքենաները ասին,*
*վոր պայքարի համար մեծ ու հաղթության համար նոր*
*պետք է բոլորը յելնեն ու պայքարեն—միասին։*
*Ու պայքարի յելան մեծ նրանք մի մութ իրիկուն,*
*յերբ պատերազմ եր յերկրի սահմաններում հեռակա,*
*յելան բանվոր մարտիկներ խենթությունով ահարկու*
*ու բանակներ հանեցին արիասիրտ ու հսկա։*
*Քաղաքներում կարմրավառ դրոշակներ պարզեցին—*
*կուրծք տվեցին զորքերին արյունարբու արքայի,—*
*սակայն չոգնեց բանվորին ստեպների գյուղացին,*
*անշարժ մնաց, ահաբեկ՝ աչքը ահի ու մահի։*
*Ինչքա՛ն արյուն հոսեց վառ, ի՛նչ ընկերներ վիթխարի*
*կազակների թրերից, տապալվեցին ու կորան,*
*և ի՛նչ ահեղ ցասումով բազմություններ բանվորի*
*արյունոտած ձեռքերով վերադարձան գործարան...*
*Նրանք, տխուր, քաշվեցին, բայց պայքարի համար նոր*
*գնդաններում, բանտերում նրանց հոգին ամրացավ,*
*ու տառապանքը անհուն նրանց հոգին կրեց լուռ,*
*մինչև աղետ յեղավ մեծ ու ժողովուրդն արթնացավ...*

---

— Հեղափոխական շարժման վո՞ր շրջանն է նկարագրված այստեղ:

— Վերլուծեցեք այս հատվածը թե ըստ բովանդակության յեվ թե ըստ ձևի ու փորձեցեք, թե վորքա՞ն դրանք համապատասխանում են իրար:



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ ՈՒ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Ի՞նչ ժամանակաշրջան են ընդգրկում այս բաժնի պատմվածքներն ու բանաստեղծությունները:

— Ի՞նչն է նրանց մեջ ընդհանուր յեվ ինչո՞ւ յե ընդհանուր:

— Ի՞նչ միջավայրից է վերցված դրանց նյութը:

— Վորպիսի՞ բանվոր է նկարագրված Վ. Փափազյանի «Մշուշ»-ում: Վո՞րն է այդ բանվորի հոգեբանության հիմնական գիծը: Կարելի՞ յե այդ հոգեբանությունն համարել գործարանային բանվորի հոգեբանություն: Յեթե վոչ՝ ինչո՞ւ:

— Ինչո՞վ է նման այդ բանվորը Շիրվանզադեի «Հրդեհ»-ում նկարագրված մշակներին: Ի՞նչն է նրանց հոգեբանության մեջ ընդհանուր: Ինչո՞վ է պայմանավորված այդ ընդհանրությունը:

— Այս բաժնի վո՞ր պատմվածքում է նկարագրված իսկական գործարանային մի բանվոր: Վո՞րն է այդ բանվորի հոգեբանության հատկանշական կողմը: Տարբերվո՞ւմ է նրա հոգեբանությունը Փափազյանի յեվ Շիրվանզադեի նկարագրած մշակների հոգեբանությունից: Վո՞րն է նրանց մեջ յեղած հիմնական տարբերությունը:

— Կա՞ն արդյոք այս բաժնում պատմվածքներ, վորոնց մեջ նկարագրված է բանվոր դասակարգի պայքարի առաջին շրջանը:

— Փորձեցեք գրել մի շարադրություն «Բանվոր դասակարգի պայքարի առաջին քայլերը Մ. Պետրոսյանի յեվ Կարեն Միքայելյանի պատմվածքներում» նյութի մասին:

— Վո՞ր դասակարգի կենցաղն է նկարագրել իր պատմվածքներում Արազին, Նկարագրե՞լ է արդյոք նա նայեվ այդ դասակարգի պայքարը: Վո՞ր գրվածքներում:

— Ի՞նչ միջավայր է նկարագրել Հ. Հակոբյանը «Նոր առավոտ» պոեմում, Տալի՞ս է արդյոք այդ պոեմը գործարանային կյանքի ցայտուն պատկեր: Տարբերվո՞ւմ է արդյոք Հակոբյանի վերաբերմունքը դեպի գործարանը Փափազյանի վերաբերմունքից: Վորի՞ վերաբերմունքը կարելի յե համարել դասակարգային գիտակցության հասած բանվորի վերաբերմունք: Ինչո՞ւ: Բացատրեցեք մեջբերումներով:

---

— Այս բաժնի վո՞ր պատմվածքն ամենից շատ հավանեցիք:

— Վո՞ր բանաստեղծությունը: Ինչո՞ւ:

— Համեմատեցեք Մաղաք Պետրոսյանի «Մեքենավարի հիշատակարանը» Փափազյանի «Մշուշի» հետ. կա՞ արդյոք տարբերություն պատմելու յեղանակի, լեզվի, ոճի յեվ պատկերների մեջ: Բնորոշո՞ւմ է արդյոք այդ տարբերությունը դրանց հեղինակների վերաբերմունքը դեպի իրենց նյութը:

— Ի՞նչ նոր պատկերներ է մտցրել Հ. Հակոբյանը «Նոր առավոտ» պոեմում. ինչո՞ւ չեն այդ պատկերները նոր. ինչի՞ց է բխում այդ նորությունը:

---

— Կարդացեք Մ. Պետրոսյանի «Պատմվածքներ»-ը:
— Կարդացեք Հակ. Հակոբյանի «Բանաստեղծություններ»-ը:
— Կարդացեք Արազիի «Պատմվածքներ»-ը:
— Կարդացեք Յե. Չարենցի «Յերգ ժողովրդի մասին» պոեմն ամբողջությամբ:

---

— Կարդացեք Արտեմ Գիոյի «Շիրաշխանի Դարչո»-ն յեվ «Մի հեղափոխականի կյանքը»:



# «ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ»-Ի ԱՌԹԻՎ

(Դասատուներին)

*Մայրենի լեզվի նկատմամբ բարձր տիպի (V—VII) դպրոցի նպատակներից են՝ բացի զուտ լեզվական ունակությունների (գրավոր և բանավոր) զարգացումից՝ տեղեկություններ տալ աշակերտներին XIX և XX դարի գրականության մասին՝ տվյալ ժամանակաշրջանի հեղինակների այնպիսի գրվածքների միջոցով, վորոնք՝ ա) մատչելի յեն տվյալ տարիքին, բ) զուրկ չեն գեղարվեստական արժեքից, գ) բնորոշում են տվյալ հեղինակի սոցիալական դեմքը և գրական առանձնահատկությունները:*

*Գրականության ուսուցման հիմնական մեթոդն է մարքսիստական սոցիոլոգիական մոտեցումը, վոր հնարավորություն է տալիս պարզել գրական յերկերի թե սոցիալական պայմանականությունն ու արժեքը, և՛ թե գրական-գեղարվեստական առանձնահատկությունները: Այս տեսակետից VI խմբակը միայն նախապատրաստական նյութ է տրամադրելու հետագա աշխատանքների համար:*

*Պարզ է, վոր այժմյան դպրոցն իր ակտիվ մեթոդներով աշխատանքի գրքի պահանջ է առաջադրում, սակայն, մյուս կողմից, աշակերտներին անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ տվյալ շրջանի հեղինակների համապատասխան գրվածքները. այս իսկ պատճառով ներկա գիրքն իր մեջ յերկուստեք ամփոփելու յե այս նպատակները՝ հանդիսանալով թե՛ իբրև աշխատանքի գիրք և թե՛ գրական քրեստոմատիա:*

*Տվյալ դասընթացը կազմված է ըստ Պետգիտխորհի ծրագրերի և ընդգրկում է հետևյալ հիմնական թեմաները.—*

*1) Նոր կենցաղը ժամանակակից հեղինակների գրվածքներում.*

*2) Բուրժուազիան և քաղաքային մանր բուրժուազիան XIX դարի վերջի և XX դարի առաջին քառորդի հեղինակների գրվածքներում.*

*3) Գյուղացիությունը միևնույն ժամանակաշրջանի հեղինակների գրվածքներում.*

*4) Բանվոր դասակարգը և նրա պայքարի առաջին քայլերը միևնույն ժամանակաշրջանի հեղինակների գրվածքներում:*

*Յելակետ ընդունելով այս ծրագիրը՝ նյութերի ընտրությունը կատարված է այնպես, վորպեսզի ընտրված նյութերը համապատասխանեն վերոհիշյալ հիմնական նկատառումներին, այն է՝ ա) մատչելի լինեն տվյալ տարիքին, բ) զուրկ չլինեն գեղարվեստական արժեքից, գ) բնորոշեն տվյալ հեղինակին գրական-հասարակական տեսակետից և դ) նյութերի ամբողջ շարքը (ցիկլը) վորոշ գաղափար տա հայ գրականության զարգացման վորոշ*

*նտապի մասին։ Պարզ է, վոր այս վերջին կետի մասին VI խմբակին տրվելու չեն միմիայն համառոտ, վոչ սիստեմատիկ, ընդհանուր տեղեկություններ՝ գրականության զարգացման սիստեմատիկ դասընթացը թողնելով ավելի բարձր դասարաններին, իսկ լիակատար դասընթացը՝ բարձրագույն դպրոցին։*

*Նյութերի ընտրության ժամանակ առանձնապես ուշադրություն է դարձված այն հանգամանքի վրա, վորպեսզի առանձին հեղինակներից չվերցվեն նյութեր, վորոնք թեպետ և վերաբերում են գրքի հիմնական թեմաներին, բայց բնորոշ չեն տվյալ հեղինակի համար* **ընդհանրապես** *(որինակ Ահարոնյանի պատմվածքները բանվորական կյանքից) և կարող են սխալ գաղափար տալ աշակերտին հեղինակների գրական-հասարակական դեմքի մասին։*

*Ցերկերի գրական-հասարակական վերլուծությունը դյուրացնելու նպատակով հոդվածների վերջում զետեղված են հարցեր, վորոնք դասատուի համար ծառայելու յեն իբրև թեզիսներ՝ տվյալ յերկը բացատրելիս։ Հարցերի առաջին խումբը վերաբերում է գրվածքների բովանդակությանը, այսինքն հասարակական արժեքին, իսկ յերկրորդ խումբը՝ գեղարվեստական առանձնահատկություններին, ըստ վորում այս վերջին խմբի հարցերին պատասխանելիս դասատուն պետք է տա տարրական տեղեկություններ գրական սեռերի, հեղինակների վոճային առանձնահատկությունների, տաղաչափական վորոշ կանոնների և լեզվի մասին։ Հարցերի յերրորդ խումբը տրված է ցիկլերի վերջում. այս հարցերի նպատակն է՝ անցած նյութերի համեմատության միջոցով հանգել գրական-հասարակական ամփոփումների։*

*Քանի վոր այս դասընթացը ծրագրվել է իբրև* **հայ** *գրականության դասընթաց, ուստի և աննպատակահարմար է համարվել սրա մեջ զետեղել թարգմանական նյութեր։ Այդ նյութերը նախ կխախտեյին դասընթացի մեթոդական ամբողջականությունը, և ապա՝ չափից շատ կնդարձակեյին դասագրքի ծավալը։ Ուստի ավելի նպատակահարմար է համարվել թարգմանական նյութերն առանձնացնել մի յերկրորդ քրեստոմատիայում, վորի մեջ, միևնույն ծրագրով և մեթոդական մշակումով, զետեղված են նյութեր ռուսական, անդրկովկասյան և յեվրոպական գրականություններից։ Գրականության դասատուն իր աշխատանքների տարեկան ծրագիրը մշակելիս պետք է* **անպայման** *ինկատի ունենա և այդ յերկրորդ դասագիրքը, վորպեսզի տարվա ընթացքում՝ հայ գրականության դասընթացին զուգընթաց աշակերտներին վորոշ գաղափար տա նաև ինչպես հարևան ժողովուրդների, այնպես էլ յեվրոպական գրականության մասին։*

*ԿԱԶՄՈՂ*

Гос. Библиотека
Арм.ССР
им. А. Мясникяна



# ՑԱՆԿ

## I. Նոր կենցաղը ժամանակակից հեղինակների գրվածքներում


| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ալազան | *Դասալիքը* | 3 |
| 2. | Մկրտիչ Արմեն | *Յեվրոպացին* | 28 |
| 3. | » » | *Արևը, հուրհրան արևը* | 39 |
| 4. | Ակսել Բակունց | *Ծառուն տղան* | 45 |
| 5. | » » | *Տրախտորի մաշին* | 50 |
| 6. | Արաքս | *Նոր հորիզոն* | 56 |
| 7. | Հակ. Հակոբյան | *Բալշևիկ և Շիր-Կանալը* | 67 |
| 8. | Ալազան | *Առավոտ* | 70 |
| 9. | Եղ. Չարենց | *Այս գարունը* | 71 |
| 10. | Գ. Աբով | *Շիր-Ջրանցքի բանվորներին* | 72 |
| 11. | Մկրտիչ Արմեն | *Մորս կարոտը* | 75 |
| 12. | » » | *Ջրանցքների յերկաթե յերգը* | 80 |
| 13. | » » | *Կայարանից շչակների ձայնը* | 81 |
| 14. | Նայիրի Զարյան | *Հնձվորը* | 84 |
| 15. | Խորեն Ռադիո | *Ամառնամուտ* | 85 |
| 16. | Վ. Գրիգորյան | *Անիվի յերգը* | 88 |


## II. Բուրժուազիան յեվ քաղաքային մանր-բուրժուազիան XIX դարի վերջի յեվ XX դարի սկզբի հեղինակների գրվածքներում


| | | | |
|---|---|---|---|
| 17. | Շիրվանզադե | *Վարդան Ահրումյան* | 93 |
| 18. | » | *Մարկոս Ալիմյանի մահը* | 109 |
| 19. | » | *Ալիմյանի ընտանիքը* | 131 |
| 20. | Նար-Դոս | *Աննա Սարոյան* | 142 |
| 21. | » | *Նեղ որերից մեկը* | 162 |
| 22. | » | *Թե ինչ յեղավ հետո* | 173 |
| 23. | Եղ. Չարենց | *Քաղաքը և բնակիչները* | 183 |
| 24. | Հովհ. Թումանյան | *Պոետն ու Մուսան* | 195 |


## III. Գյուղացիությունը միյեվնույն ժամանակաշրջանի հեղինակների գրվածքներում


| | | | |
|---|---|---|---|
| 25. | Վրթ. Փափազյան | *Զոչո քար* | 207 |
| 26. | » » | *Հողի աշխատավորը* | 214 |
| 27. | » » | *Սերմնացանը* | 221 |

| | | | |
|---|---|---|---|
| 28. | Արշ. Շահնազարյան | Ախպեր Զոմարդը | 227 |
| 29. | » » | Կարմիր ճիպոտը | 238 |
| 30. | Հ. Ծուղուրյան | Զատոյի բախտի անիվը | 250 |
| 31. | Մ. Պետրոսյան | Հոփիսի | 268 |
| 32. | Ստ. Զորյան | Անհայտ թելեր | 272 |
| 33. | Արագի | Կիսատ տունը | 279 |
| 34. | Հովհ. Թումանյան | Ծերունու հառաչանքը | 281 |
| 35. | Ալ. Ծատուրյան | Այ, սև ամպեր | 286 |
| 36. | » » | Յել, գարնան անձրև | 286 |
| 37. | » » | Յերկրի մշակներ | 287 |
| 38. | Ավ. Իսահակյան | Ախ, մեր սիրտը | 289 |
| 39. | Վահան Տերյան | Կարծես թե դարձել եմ | 290 |
| 40. | » » | Հիշում եմ, ինչպես այն ուշ | 290 |


## IV. Բանվոր դասակարգի դրությունը յեվ պայքարի առաջին քայլերը միյեվնույն ժամանակաշրջանի հեղինակների գրվածքներում


| | | | |
|---|---|---|---|
| 41. | Վ. Փափազյան | Մշուշ | 295 |
| 42. | Շիրվանզադե | Հրդեհը նավթագործարանում | 308 |
| 43. | Միք. Մանվելյան | Սև քաղաքում | 317 |
| 44. | » » | Ջրի թեյարան | 320 |
| 45. | Մ. Պետրոսյան | Մեքենավարի հիշատակարանից | 324 |
| 46. | » » | Կապույտ շապիկը | 327 |
| 47. | » » | Պահակը | 333 |
| 48. | Կ. Միքայելյան | Կեցցեն հաղթվածները | 338 |
| 49. | » » | Մարտակոչ | 345 |
| 50. | Արագի | Արևը | 356 |
| 51. | » | Խալիչայի յերգը | 357 |
| 52. | » | Մեծ փականքը | 360 |
| 53. | » | Կարմիր հերոսուհին | 363 |
| 54. | Հ. Հակոբյան | Նոր առավոտ | 366 |
| 55. | Շ. Կուրղինյան | Բանվորները | 370 |
| 56. | Ալ. Ծատուրյան | Բանվորուհու օրորը | 372 |
| 57. | Վահան Տերյան | Լուսաբացին նա բարձրացավ | 374 |
| 58. | » » | Արևածագ | 374 |
| 59. | » » | Վերադարձ | 375 |
| 60. | Յե. Չարենց | Յերգ ժողովրդի մասին | 377 |

ՀՀ Ազգային գրադարան
NL0367626

62470